Մեսրոպ քահանայ Արամեան

Աշխատութիւններ

Հատոր Ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաւանութիւն հաւատոյ 7
Confession of Faith 15
Исповедание веры 20
Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր 25
Մուտք 25
Ա. Սկիզբ (Դ-Ե դդ.) 29
Բ. Ընտրութիւն 33
Գ. Անապականութիւն 43
Դ. Երեւութականութիւն 48
Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը 58
Մուտք 58
Մեր Մկրտութեան արարողութեան ընդհանուր ուրուագծերը 64
Պատրաստութիւն 66
Սկիզբ 72
Հրաժարում 76
Հաւատքի խոստովանութիւն 78
Ջրի օրհնութիւնը 83
Մկրտութիւն 89
Դրոշմ 95
Խաղաղութեան ողջոյն 107
Ձգեստաւորում 109
Սեղանի երկրպագութիւն եւ հաղորդութիւն 110
Արձակում 113
Յաւելուած: Ութ օր յետոյ 116
Ուղղափառ հաւատքի դաւանութիւնը որպէս հոգեւոր կեանքի հիմք 120
Մարդու հոգեւոր փնտրումների մասին 120
Քրիստոնէական ճանապարհի իսկութիւնը 122
Հաւատքի մասին 124
Ուղղափառ դաւանութեան մասին 136
Հայ Եկեղեցու դաւանութեան սկզբնաղբիւրները 139
Հայ Եկեղեցու դաւանութեան կառոյցը 141
Քրիստոսի Պայծառակերպութիւնը եկեղեցական աստուածաբանութեան մէջ 145
Սուրբ Աթանաս Ալեքսանդրացի 156
Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ սուրբ Աթանասի թուղթը Որդու մարդեղութեան եւ Սուրբ Երրորդութեան մասին (թարգմ. Մ. քհն. Արամեան եւ Սահակ սրկ. Ղազարեան) 160

Սբ Եւագր Պոնտացի, Աղօթքի մասին (թարգմանութիւն) 182

Սբ Յովհաննէս Օձնեցի 202

Սբ Յովհաննէս Օձնեցի, Ընդդէմ երեւութականների (թարգմանութիւն) 207

Պողոս Տարօնացու «Հաւատքի խօսքն ընդդէմ հերձուածողների» 240

Երիցս երանեալ սուրբ վարդապետին Պաւղոսի Տարաւնացւոյ ասացեալ
բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց (քննական բնագիր) 247

Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ
նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովածուն 275

Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի> հաւատոյ
նիկիականն ՅԺԸ-իցն (քննական բնագիր)

<Ա> Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի>
հաւատոյ նիկիականն ՅԺԸ-իցն 309

<Բ> Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ
կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականացն գլուխ ԺԸ 327

<Գ> Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն
պատկերաց դարձեալ 336

<Դ> Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս
վարկանին եւ զանձինս ոչ արգելուն 343

<Ե> Նորին յաղագս, եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել
զաստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի եւ ոչ զ'առ ի յինքենէ գործս կամ կիրս 367

<Զ> Յաղագս, եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս
ի Քրիստոս, ի հարկէ հետեւին նեստորականաց մտաց 378

<Է> Թէ զիմ՚ոդ չարչարեալ Բանն մարմին եղեալ եւ անչարչարելի
մնացեալ, եւ կամ որպէ՞ս դարձեալ ձայնակցեն չարափառքն 382

<Ը> Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի 387

<Թ> Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ
անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայաւդ
ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ
պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց 391

<Ժ> Նորին յաղագս բնութեանն Բանի եւ միաւորութեան 400

<ԺԱ> Նորին, եթէ զիմ՚ոդ ասի մի բնութիւնն Բանին Աստուծոյ
մարմնացելոյ ըստ ճշմարտութեան 403

<ԺԲ> Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց
յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց 419

<ԺԳ> Նորին դարձեալ 438

<ԺԴ> Վկայութիւնք սրբոցն, եթէ մի բնութիւն է
Բանին Աստուծոյ մարմնացելոյ 449

Տարընթերցումներ 463

Նուիրում եմ փիկնոջս՝ Իրինային,
եւ զաւակներիս՝
Ներսէսին, Մարիամին, Մարթային,
Գայիանէին, Միքայէլին, Սոֆիային
եւ Յովհաննէսին

Մեսրոպ քահանայ Արամեան

Աշխատութիւններ

Հատոր Ա

կրթական հիմնադրամ
Երևան 2016

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Մ 648

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ՝
ՏԻԱՐ ԱՐՍԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Մ 648 Աշխատութիւններ/ Մեսրոպ քահանայ Արամեան: — Եր.: «Այբ» կրթական հիմնադրամ, 2016. Հատոր Ա. — 472 էջ:

Աստուածաբանական յօդուածներ, մատենագիտական ուսումնասիրութիւններ, բնագրեր եւ թարգմանութիւններ:
Նրանց համար, ովքեր ցանկանում են ծանօթանալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր ժառանգութեանը եւ դաւանական մտքի օրինաչափութիւններին:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-1-0385-3
© «Այբ» կրթական հիմնադրամ, 2016

ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՒ

Հոգեւորի նկատմամբ իմ հետաքրքրութիւնը սկսուել է դեռեւս վաղ տարիքից: Սակայն համայնավարութեան տարիներին հոգեւոր փնտրտուքների պատասխաններ գտնելը դիւրին գործ չէր: Հոգեւոր գիտելիքը արգելքի տակ էր, խզուած էին աւանդութիւնները, գրեթէ չկային կենդանի օրինակներ: Բացի դրանից, գրաբարից կամ օտար լեզուներից արդի հայերէն թարգմանուած հոգեւոր նիւթերը չափազանց սակաւաթիւ էին: Մեր հետաքրքրութիւնները բաւարարելու համար հիմնականում կարդում էինք գաղտնի պատրաստուած օտարալեզու գրքեր: Իսկ թէ ո՞րն էր մեր հոգեւոր ճանապարհը եւ մեր ինքնութեան առանձնայատկութիւնը, անորոշութեան մշուշի մէջ էր: Ո՛չ իմացողն էր յայտնի, ո՛չ էլ աղբիւրը: Իրավիճակը բարդ էր նաեւ նրանով, որ օտար եկեղեցական շրջանակներից մեր մասին հնչող մեղադրանքների պատասխանները կամ՛ չկային, կամ՛ էլ թոյլ ու անբաւարար էին: ԺԹ-Ի դդ. գրուած դաւանաբանական-ջատագովական բնոյթի մի քանի գործերը ոչ միայն դիպուկ չէին, այլեւ խիստ անհամոզիչ: Դրանք հիմնուած չէին մեր ժառանգութեան (որ մեծաւ մասամբ անտիպ էր) խոր իմացութեան վրայ:

Այս ամէնն ինձ մղեց սեփական հոգեւոր ինքնութեան խորքային փնտրտուքների: Դեռ ուսանողական տարիներից տարուեցի հայրաբանական գրականութեան թարգմանութիւններով: Ի վերջոյ, հոգուս մէջ բռնկուած կրակը այնքան բորբոքուեց, որ ճշգրիտ գիտութիւնների ոլորտից Տիրոջ կանչով տեղափոխուեցի եկեղեցական ասպարէզ: Որպէս հոգեւորական, իհարկէ, ես հնարաւորութիւն ստացայ աւելի համապարփակ եւ հիմնարար կերպով ուսումնասիրելու մեր ժառանգութիւնը: Փառք եմ տալիս Աստծուն, որ ինձ թոյլ տուեց բացայայտելու մի աննկարագրելի վեհութիւն եւ գեղեցկութիւն ունեցող գանձարան: Յայտնաբերուածն օրինական ժառանգորդներին վերադարձնելը եւ այդ մասին աշխարհին ազդարարելը դարձան իմ գործն ու առաքելութիւնը: Այլեւս անթոյլատրելի էր անգիտութեան խաւարում խարխափելը եւ մեր հասցէին հնչող անհեթեթ մեղադրանքներն անպատասխան թողնելը: Բացուեց աշխատանքի մի մեծ ասպարէզ, որի գլխաւոր նպատակն էր՝ հայ մարդուն լիարժէք հնարաւորութիւն ընձեռել՝ իր ներքին հոգեկերտուածքին հարազատ կերպով ընկալելու հոգեւոր գի-

տելիքը: Իմ ուսումնասիրութիւնների կենտրոնում է եղել յատկապէս դաւանաբանութիւնը, որը հոգեւոր կեանքի եւ աստուածաբանութեան հիմքն է: Կեանքում ամէն բան կախուած է նրանից, թէ ինչպէս ես հաւատում: Եւ ինչպէս հաւատում ես, այնպէս էլ ապրում ես: Մեր ամբողջ պատմութիւնը գրուած է հաւատքով, եւ որպէսզի հասկանանք, թէ ով ենք, պիտի ճանաչենք սեփական հաւատքը:

Այս երկհատորեակը ըստ էութեան արգասիքն է իմ հոգեւոր փնտրտուքների եւ քսանհինգամեայ քահանայական սպասաւորութեան: Հատորներում անթեղուած է իմ աշխատութիւնների ընտրանին: Դրանք հիմնականում նուիրուած են մեր աստուածաբանական ժառանգութեան վերհանմանը եւ յատկապէս հայ դաւանական մտքի օրինաչափութիւնների բացայայտմանը: Ա հատորում ներկայացուած են «Գանձասար» աստուածաբանական հանդէսի հատորներում լոյս տեսած աստուածաբանական յօդուածներ, մատենագիտական ուսումնասիրութիւններ, բնագրեր եւ թարգմանութիւններ: Բ հատորում ներկայացուած են «Գանձասար» մատենաշարի առանձին հրատարակութիւններ, հրապարակախօսական բնոյթի հրապարակումներ՝ հոգեւոր եւ կրթական հիմնախնդիրների վերաբերեալ, եւ «Արարատից Սիոն» վաւերագրական ֆիլմի սցենարը (որպէս գրական ստեղծագործութիւն՝ լոյս է տեսնում առաջին անգամ): Աշխատութիւնների զգալի մասը ներկայացում է անհնչան խմբագրական փոփոխութիւններով, սակայն վաղ շրջանի որոշ գործեր զգալի վերանայման են ենթարկուել. դրանք են՝ «Հայ քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.)», «Երգ երգոց՝ հանդերձ մեկնութեամբ նախնեաց» ուսումնասիրութեան ներածութիւնը եւ սբ Եւագր Պոնտացու «Աղօթքի մասին» գործը:

Յուսով եմ, որ այս նիւթերն օգտակար կը լինեն բոլոր նրանց, ովքեր փնտրում են ճշմարտութիւնը եւ կամենում հաղորդակից լինել սեփական հոգեւոր ակունքներին: Իսկ եթէ սերմանածս պտղաբերի մէկի հոգում, ուրախ կը լինեմ, յատկապէս եթէ նրա աղօթքներից անմասն չմնամ:

Առանձնայատուկ շնորհակալութիւն եմ յայտնում հրատարակութեան խմբագիր Սեդա Ստամբոլցեանին իր արժէքաւոր դիտողութիւնների եւ կատարած մեծ աշխատանքի համար: Շնորհակալութիւն եմ յայտնում նաեւ Աշոտ Մովսիսեանին, Աննա Յովակիմեանին եւ Աստղիկ Կարապետեանին, ովքեր հսկայական աշխատանք կատարեցին այս հատորները հրատարակութեան պատրաստելու համար: Վերջապէս շնորհակալ եմ Արմէն Քիւրքչեանին շապիկի գեղեցիկ ձեւաւորման համար:

Մեսրոպ քահանայ Արամեան

«Զի հաւատք ձեր մի՛ իցեն
իմաստութեամբ մարդկան,
այլ զօրութեամբ Աստուծոյ»:
[Ա Կոր. Բ 5]

ԴԱՒԱՆՈՒԹԻՆ ՀԱՒԱՏՈՅ

Ամէն բանից վեր եւ ամէն բանից առաջ[1] *հաւատում ենք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու Ամենասուրբ Երրորդութեանը եւ Մէկ Աստուածութեանը, որ միակ եւ կատարեալ բարին է, անճառելի էութիւնը, անժամանակ գոյութիւնը եւ անփոփոխելի իսկութիւնը, արարիչը եւ կեցուցիչը երեւելիների եւ աներեւոյթների*[2]*: Մէկն են Ամենասուրբ Երրորդութեան բնութիւնը, տէրութիւնը, զօրութիւնը եւ կամքը՝ Երեք Աստուածային Անձերով անբաժանաբար եւ անիմանալիօրէն առատացած*[3]*:*

Լի է եւ կատարեալ, «որ ամէն ինչ լցնում է ամէն ինչի մէջ» [Եփես. Ա 23], եւ Ինքը չի թերանում, որ ո՛չ նորոգւում է եւ ո՛չ հնանում, ո՛չ լցւում է եւ ո՛չ պակասում, որ նոյնն է միշտ Իր լիութեան եւ անբաւութեան մէջ: Եւ այլ տեղից չկայ օտարամուտ կամ յաւելուած բան Երրեակ Աստուածութեան անհաս, անբաւ, անսահման եւ ամենակատար բնութեան մէջ[4]*:*

Հայրն անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդեամբ եւ Սուրբ Հոգու՝ բխմամբ[5]*: Սակայն Ամենասուրբ Երրորդութեան մէջ չկան մեծութիւն կամ փոքրութիւն, խոնարհութիւն կամ բարձրութիւն*[6]*, այլ մէկ անբաժանելի Աստուածութիւն եւ Զօրութիւն՝ Երեք Անձե-*

---

1 *Սբ Գրիգոր Աստուածաբան, Յերախայից վարդապետութիւն, ԿՀ, էջ 34*
2 *Յաճախապատում, էջ 9–10*
3 *Սարկաւագ, Ա I 2*
4 *Յաճախապատում, էջ 9–10*
5 *Յաճախապատում, էջ 9. Սարկաւագ, Ա I 4, Արեւելցի, II 1*
6 *Յովհան Մայրավանեցի (Մայրագոմեցի), ԿՀ, էջ 52, Շնորհալի, էջ 88, Արեւելցի, II 2*

րի զուգափառ, հաւասարապատիւ եւ անշփոթ միութեամբ՝ առանց առաւելութեան, գերազանցութեան կամ ենթակայութեան: Բոլոր կողմերից որպէս երկնային մէկ գեղեցկութիւն եւ երեք անբաւների մեծութեան անբաւ բնակցութիւն. Աստուած՝ Իւրաքանչիւրն ըստ Իրեն եւ Իր առանձնաւորութեամբ՝ որպէս Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի[7]*:*

Եւ չկայ այլ Արարիչ, բայց միայն՝ Ամենասուրբ Երրորդութիւնը եւ ամենազօր Տէրութիւնը, որ Իր ամենաբարի կամքով, արարչական զօրութեամբ եւ անհաս իմաստութեամբ արարեց բոլոր արարածներին ոչնչից եւ անգոյութիւնից: Որ նստում է երկինքների երկնքում եւ խնամում բոլոր արարածներին, որ կանխատես գիտութեամբ եւ անբաւ իմաստութեամբ մատակարարում է երկնաւորներին եւ երկրաւորներին, կեանք է ու կեցուցիչ բոլորի համար եւ ամէն ինչում՝ անբաւ, անհաս եւ անճառ[8]*:*

Որ արարեց մարդուն Իր պատկերով եւ նմանութեամբ՝ որպէս թագ եւ պսակ ողջ արարչութեան՝ շնորհելով նրան Իր հետ լինելու եւ Իր անճառելի խորհուրդներին հաղորդակից եւ մասնակից լինելու կատարեալ երանութիւնը: Որ պատուիրանազանցութեամբ Իրենից հեռացած մարդկութեանը չզրկեց Իր արարչական խնամքից, չլքեց մահուան ստուերում եւ երկրաւոր կեանքի տրամութիւնների մէջ՝ խոստանալով փրկել մարդուն եւ ազատել մեղքի ու մահուան իշխանութիւնից[9]*:*

Ժամանակների լրումին Աստուած բացեց Իր անհամեմատ սիրոյ եւ անհուն ողորմութեան դռները եւ այս ընկած աշխարհում ծագեցրեց Իր փրկութեան լոյսը: Մէկը Սուրբ Երրորդութիւնից՝ Աստուծոյ Միածին Որդին՝ նախայաւիտեան Բանը, մեր փրկութեան համար խոնարհուեց Իր Աստուածութեան անհասանելիութիւնից եւ Սուրբ Հոգով կատարելապէս մարդացաւ սբ Կոյս Մարիամից[10]*: Ոչ թէ նախ ստեղծեց մարդուն եւ ապա բնակուեց նրա մէջ՝ որպէս տաճարում. այլ Ինքը՝ Բանը, ճշմարտապէս մարդ եղաւ, այսինքն՝ Իրեն միացրեց մարդկային կատարեալ բնութիւն՝ մտքով, հոգով եւ մարմնով*[11]*: Ոչ*

---

7 *Սբ Գրիգոր Աստուածաբան, Յերախայից վարդապետութիւն, ԿՀ, էջ 35*

8 *Յաճախապատում, էջ 10. Արեւելցի, III 1*

9 *Արեւելցի, III 3–13*

10 *Արեւելցի, III 15–16*

11 *Սարկաւագ, Ա V 3, Արեւելցի, III 19*

թէ Բանը փոխարկուեց մարմնի, կամ մարմինը՝ Աստուածութեան, ոչ թէ աստուածայինը եւ մարդկայինը միաւորուելիս բնութեամբ փոփոխուեցին կամ այլայլուեցին կամ չփոթուեցին, այլ կատարեալ Աստուած Իրեն միաւորեց անթերի մարդկութիւն՝ առանց փոփոխութեան, առանց այլայլութեան, առանց չփոթութեան. այսինքն՝ Աստուած մնաց Աստուած, եւ մարդը՝ մարդ[12]: Երկու կատարեալները եղան մէկ կատարեալ՝ նոր եւ սքանչելի միութեամբ[13]: Յղութեան պահից Աստուածութիւնը եւ մարդկութիւնը անբաժանելիօրէն միաւորուած են մէկ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ, եւ Բանի մարդեղութեան փրկագործ տնօրէնութեան մէջ, սուրբ Յղութիւնից սկսած, որեւէ գործի մասին չի կարելի խօսել որպէս սոսկ աստուածայինի կամ սոսկ մարդկայինի[14]: Քրիստոսի մէջ աստուածմարդկային միութիւնը ոչ թէ բնութիւնների յարակցութիւն կամ կապակցութիւն կամ վերաբերութիւն է, այլ էական, գոյաբանական եւ բնութենական միութիւն, որի մէջ հնարաւոր չէ ներմուծել որեւէ բաժանում կամ լուծարում[15]: Աստուածայինը եւ մարդկայինը անձով, բնութեամբ, կամքով եւ ներգործութեամբ անբաժանելիօրէն միաւորուած են մէկ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ: Ուստի մէկն են մարդացած Բանն Աստուծոյ անձը, բնութիւնը, կամքը եւ ներգործութիւնը, եւ մերժելի է մեր փրկութեան իսկութիւնը սասանող որեւէ բաժանութիւն կամ երկուութիւն մեր Տէր Յիսուս Քրիստոսի մէջ[16]: Միութեան մէջ պէտք չէ ուրանալ իւրաքանչիւրի կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարուել մէկ կատարելութիւնից՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ: Ուրեմն մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի Քրիստոս ոչ թէ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անճառ միաւորութեան[17]: Աշխարհի որեւէ օրի-

12 Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Առ Սեկունդոս, ԳՊ, էջ 200–201, Սարկաւագ, Ա V 3, Ա VI 1, Շնորհալի, էջ 124–125, Օրբելեան, էջ 8–9

13 Սբ Գրիգոր Աստուածաբան (տես Օրբելեան, էջ 10)

14 Սարկաւագ, Ա XI 3–12

15 Սարկաւագ, Է I 2, Ժ II 2, Է I 9

16 Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 34 (նոյն հատուածը տես Նչեցի, 31ա), Թուղթ Սահակայ..., ԳԹ, էջ 535–539

17 Օձնեցի, էջ 51–52

նակով հնարաւոր չէ հասկանալ, նկարագրել կամ բացատրել Աստուծոյ մարդեղութեան անհուն խորհուրդը, որը հաւատքի խորհուրդ է եւ դաւանական ճշմարտութիւն. ուստի խուսափելով Բանի ներմարդութիւնը մարդկային մտքով ընկալելու գայթակղութիւնից՝ հաւատում ենք, որ Բանն Աստուած անճառաբար, անպարիմանալիօրէն, մտքի համար անհասութեամբ, ինչպէս որ Ինքը գիտի, մարդացաւ՝ Իրենից օտարացած մարդկութեանը փրկագործելու համար[18]*:*

Նա, որ համագոյակից էր Հօրն ըստ Աստուածութեան, համագոյակից դարձաւ մեզ ըստ մարդկութեան, դարձաւ ճշմարիտ եւ կատարեալ մարդ՝ ամէն ինչում նման մեզ՝ բացի մեղքից: Քրիստոս փրկական տնօրինութեամբ կրեց բոլոր մարդկային տկարութիւնները, ազատօրէն անցաւ մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մէջ մեղքի թթխմորը եւ ազատագրելով մեզ մեղքի դատապարտուածութիւնից: Հետեւաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստուածավայելուչ հրաշքները՝ ջրի վրայով քայլելը, մեռելներին յարութիւն տալը, հացի բազմացումը եւն, այլ նաեւ՝ մարդավայելուչ տկարութիւնները՝ ծարաւը, յոգնութիւնը, արտասուելը եւն: Երբ Տէրն աստուածային հրաշք էր գործում, գործում էր որպէս Աստուած եւ մարդ, որպէսզի մարդը նոյնպէս կարողանայ աստուածային գործերին մասնակից դառնալ. իսկ երբ մարդկային տկարութիւնների միջով էր անցնում, ապա անցնում էր ոչ թէ դատապարտուածութեամբ՝ սովորական մարդկանց պէս, այլ որպէս Աստուած եւ մարդ, որպէս հզօր եւ ազատարար, եւ ազատում էր մեզ չարի կապանքներից: Քրիստոսի երկրաւոր կեանքի ամէն մի պահ, սկսած սուրբ Յղութիւնից մինչեւ հրաշափառ Յարութիւն, փրկական տնտեսութիւն է եւ զերծ է պատահականութիւններից[19]*:*

Քրիստոս կամաւորապէս կամ անապականաբար, ո՛չ ի հարկէ կամ բնութեան բռնադատուածութեամբ կրեց բոլոր մարդկային անմեղ կամ անպարսաւ կրքերը[20]*: Բանն Աստուած ոչ թէ առաւ*

---

18 Աթանաս, էջ 59, սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, ԳՊ, էջ 29–30, Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 143, Սարկաւագ, Ա V 4, Ա VIII 2, Ա IX 2, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 43–46, Ստեփանոս Սիւնեցի, ԳԹ, էջ 445, Սամուէլ Կամրջաձորեցի, ԳԹ, էջ 566, Օրբելեան, էջ 10

19 Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 143–146, 363–364, Սարկաւագ, Ա VII 7–25, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 57–61, 129–133, Սասնեցի, Ե, էջ 56–63

20 Մանազկերտի ժողովի նզովք Ը, Ժ, տես այս հատորում, էջ 54–55:

Ադամի նախաստեղծ բնութիւնը, այլ մեր ապականացու բնութիւնը[21]՝ *ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին ու միտքը եւ, միաւորելով Իրեն, զատեց ապականութիւնը մարմնից եւ մեղքը՝ հոգուց ու մտքից: Ուստի խոստովանում ենք, որ տէրունական մարմինն անապական է ոչ թէ ըստ բնութեան, այլ ըստ անճառ միաւորութեան: Նոյնպէս խոստովանում ենք, որ Քրիստոսի մարմինն ըստ բնութեան չարչարելի է եւ մահկանացու, սակայն ըստ միաւորութեան տնօրէնութեան՝ անչարչարելի եւ անմահ*[22]*:*

Խոստովանում ենք, որ Քրիստոս՝ Նոր Ադամը, աշխարհ եկաւ, որպէսզի բոլորին կեանք տայ եւ նորոգի մարդկութիւնը, որ հին Ադամով դատապարտուած էր ապականութեան, մեղքի եւ մահուան: Նա, որ անբովանդակելի եւ անժամանակ էր բնութեամբ, Իր տեսչութեամբ եւ Հօր կամքով մտաւ աշխարհի չափաւորութեան եւ ժամանակի մէջ՝ իբրեւ մէկը աշխարհից, որ փրկի նրանց, որոնք աշխարհում էին, եւ որ չարի խաբէութեան պատրանքներով բռնադատուածները Քրիստոսի միջոցով գան առ Հայր Աստուած[23]*: «Քանզի ինչ որ անհնար էր օրէնքի համար, որը տկարանում էր մարմնի պատճառով, Աստուած առաքեց Իր Որդուն մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար եւ մարմնի մէջ դատապարտեց մեղքը» [Հռոմ. Ը 3]: Ի լրումն այսր ամենայնի Ինքը՝ մեր խոստովանութեան Առաքեալը եւ Քահանայապետը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս, Իրեն հաշտութեան պատարագ մատուցեց Հայր Աստծուն, որպէսզի Իր արեամբ գնի բոլորին՝ ողջերին եւ մեռեալներին [Եբր. Թ 14, 28]*[24]*: Նա, որ կենդանի է եւ կենդանարար, բոլորի համար խաչուեց եւ ճաշակեց մահը, Աստուածութեան հետ միաւորուած մարմնով դրուեց գերեզմանի մէջ եւ Աստուածութիւնից անբաժան հոգով իջաւ դժոխք, քարոզեց չարից բանտարգելուած հոգիներին, ցոյց տուեց փրկութեան նորոգումն ու լոյսը, աւերեց դժոխքը*

21 *Մանազկերտի ժողովի նզովք Գ, տես այս հատորում, էջ 54, Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն, որ ի Հաղբատ եւ Սանահին, առ պատուական կաթողիկոսն տէր Գրիգորիս, Շնորհալի, էջ 310–311*

22 *Սբ Բարսեղ Կեսարացի, Ընդդէմ Ապողինարի, ԿՀ, էջ 86–87, Մանազկերտի ժողովի նզովք Է, տես այս հատորում, էջ 54:*

23 *Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Յորժամ միւսանգամ ածցէ զանդրանիկն աշխարհ, ԿՀ, էջ 160–161*

24 *Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Նզովք Ժ, ԿՀ, էջ 239*

եւ ազատեց հոգիներին, ապա երրորդ օրը Իր հրաշափառ յարութեամբ անդրանիկը եղաւ մեռելներից[25]*:*

Հաւատում ենք, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս նոյն մարմնով աստուածապէս համբարձուեց երկինքների երկինք, նստեց Իր յաւիտենական փառքի աթոռի վրայ՝ Հօր աջ կողմում, Որից միշտ անբաժանելի էր Իր Աստուածութեամբ: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ բոլորին արդարապէս դատելու եւ հատուցելու[26]*:*

Հաւատում ենք Սուրբ Հոգուն՝ Հօր եւ Որդու համագոյակցին եւ արարչակցին, որ անպարագիր զօրութեամբ շրջեց ջրերի վրայ եւ կենդանածնեց բոլոր արարածներին[27]*, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում, աղաւնակերպ իջաւ Յորդանան՝ փառաւորելու Իր Էակցին, հրաշափայլեց տէրունական փրկագործ տնօրինութիւնների մէջ, Միածնի փչմամբ տպաւորուեց առաքեալների մէջ, ապա Տիրոջ յարութեան յիսուներորդ օրը հրէ լեզուների տեսքով տնօրինաբար իջաւ առաքեալների վրայ եւ Իր անճառելի ու անբաւելի ներկայութեամբ լցրեց Բանի մարդեղութեամբ փրկագնուած արարչութիւնը: Քարոզեց առաքեալների բերանով, Իր աստուածային գիտութեամբ եւ հանճարով պայծառացրեց վարդապետներին, բնակուեց սուրբերի մէջ*[28]*:*

Հաւատում ենք միայն մէկ Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու[29]*, որ Քրիստոսի խորհրդական մարմինն է [Եփես. Ա 23, Կող. Ա 24] եւ Նրա կենդանի թագաւորութիւնը երկնքում եւ երկրի վրայ [Ղուկ. Ա 33, Յովհ. ԺԸ 36, Յայտ. Ի 1–6], որի գլուխը Ինքը Քրիստոսն է [Եփես. Ե 23, Կող. Ա 18], հիմքը՝ ուղղափառ հաւատքի դաւանութիւնը [Մատթ. ԺԶ 16–19], իսկ անդամները [Ա Կոր. Զ 15, Եփես. Ե 30] եւ քարերը՝ Աստծուն հոգով եւ ճշմարտութեամբ դաւանողները [Յովհ. Դ 23–24, Ա Պետ. Բ 4–10]: Հաւատում ենք Եկեղեցու սրբազան խորհուրդներին, մեռելների յարութեանը, գործերի հատուցմանը եւ յաւիտենական կեանքին*[30]*:*

---

25 *Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Նզովք ԺԲ, ԿՀ, էջ 241, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 64–65. Նարեկացի ԼԴ էջ 387*

26 *Հաւատոյ հանգանակ, Նարեկացի ԼԴ, էջ 387–388, Արեւելցի IV 52*

27 *Նարեկացի ԼԳ, էջ 382*

28 *Յովհան Մայրավանեցի, ԿՀ, էջ 55, Նարեկացի ԼԴ, էջ 388*

29 *Հաւատոյ հանգանակ*

30 *Հաւատոյ հանգանակ*

Այս ամէնը գրեցինք՝ հետեւելով մեր հայրերին եւ հաւատքի ուսուցիչներին, որոնց միջոցով՝ որպէս պատուհանով, ծագել է Ամենասուրբ Երրորդութեան հաւատքի գիտութեան ճշմարիտ լոյսը: Աստուած Ինքն է յայտնել Իրեն. Հայրը՝ Որդուն եւ Հոգուն, Որդին՝ Հօրը եւ Հոգուն, եւ Հոգին՝ Որդուն եւ Հօրը: Եւ Երրեակ Աստուածութեան կենսաբեր հաւատքով ենք ապրում, շարժւում եւ կանք [Գործք ԺԷ 28]՝ յուսալով արժանանալ հոգիների փրկութեանը եւ յաւիտենական կեանքին[31]*:*

Աղբիւրներ

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Ս. Ղազար, 1954 (= Յաճախապատում)

Սբ Աթանաս Աղեքսանդրացի, ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899 (= Աթանաս)

Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, 1717 թ. (= ԳՊ)

Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, Սբ Էջմիածին, 1908 թ.

Կնիք հաւատոյ, Սբ Էջմիածին, 1914 (= ԿՀ)

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901 (= ԳԹ)

Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833 (=Օձնեցի)

Խոսրովիկ Թարգմանիչ (աշխատ. Գարեգին վարդապետ Յովսէփեան), Վաղարշապատ, 1899 (= Խոսրովիկ Թարգմանիչ)

Սբ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985 թ. (= Նարեկացի)

Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա–Գ

Յովհաննէս Սարկաւագ, Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-իցն, Վենետիկ N 504 (= Սարկաւագ. հրատ. սոյն հատորում)

Պօղոս Տարօնացի, Ընդդէմ հերձուածողաց, ՄՄ N 6907 (հրատ. սոյն հատորում)

Սբ Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղէմ, 1871 (= Շնորհալի)

Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, «Գանձասար» Զ (= Մխիթար Գոշ)

Վարդան Արեւելցի, Դաւանութիւն հաւատոյ, «Գանձասար» Է (= Արեւելցի)

Mxit‘ar Sasnec‘i. *Theological Discourses*. Edited by S. Peter Cowe, Lovanii, 1993 *(= Սասնեցի)*

31 Արեւելցի II 4–5

Կիրակոս Երզնկացի, Թուղթ առ կարնեցիս, «Գանձասար» Զ, Թուղթ առ ուղղափառ հաւատացեալսն, ՄՄ N 2542

Ստեփանոս Օրբելեան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756 (= Օրբելեան)

Եսայի Նչեցի, Դաւանութիւն եւ խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն՝ ասացեալ Եսայի Վարդապետի ի յԵզր Վիրապին ի հաստատութիւն ուղղափառաց եւ ի յանդիմանութիւն չարափառաց, ՄՄ N 614 (= Եսայի Նչեցի)

Սբ Յովհան Որոտնեցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 557

Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729 (= ԳՀ)

Հաւատոյ հանգանակ, Աղօթագիրք, Վէմ, Երեւան, 2000, էջ 232–235 (= Հաւատոյ հանգանակ)

Մանազկերտի ժողովի նզովքներ, այս հատորում, էջ 54–55

"That your faith should not be
according to the wisdom of man,
but by the power of God."
I Cor. 2:5

CONFESSION OF FAITH

Above and before all things, we believe in the All-Holy Trinity, the Father, Son and Holy Spirit and one Godhead, which is the one and perfect good, ineffable essence, timeless existence, and unchangeable quintessence, creator and life-giver of all things visible and invisible. One is the nature of the All-Holy Trinity, one dominion, one kingdom, and one will, inseparable and incomprehensibly abundant in Three Divine Persons.

Full and perfect is He, "who fills all and is in all" (Eph. 1:23), and He lacks nothing, who is not renewed and does not age old and does not wax and wane, who is always the same in His plenitude and infinity. And in the Triune Godhead's incomprehensible infinite, boundless, and completely perfect nature, there is nothing alien or additional.

The Father is the timeless cause of the Son by birth and of the Holy Spirit by procession. However, in the All-Holy Trinity there is neither greater nor lesser, lower nor higher, but rather one indivisible Godhead and Power, Three Persons in coequally glorified, honored and unconfused unity, without advantage, superiority or subordination. From all sides as a heavenly beautiful oneness and an infinite habitation of the greatness of the Three infinities: Each one in Himself, as the Father and Son and Holy Spirit, each with His own identity.

There is no other Creator, except only the All-Holy Trinity and the Almighty Dominion, which with its all-good will, creative power, and incomprehensible wisdom made all the visible and invisible creatures out of nothing, from non-existence. Who sits in the heaven of heavens and cares for all creatures, with providential

knowledge and with infinite wisdom provides for the heavenly and the earthly, is life and the giver of life to everyone and in all things infinite, incomprehensible, ineffable.

Who made man in His image and likeness, as the crowning glory of all creation, granting him the perfect beatitude of being with Him, sharing and partaking in His ineffable mysteries. Who did not deprive mankind, who strayed from Him by disobeying His commandment, of His creative care, did not abandon mankind in the shadow of death and in the travails of earthly life, promising to save man and free him from the realm of sin and death.

In the fullness of time, God opened the doors of His incomparable love and boundless mercy and caused His light of salvation to dawn in this fallen world. One of the Holy Trinity, the Only Begotten Son of God, the Word before eternity, for our salvation humbled Himself from His unreachable Divinity and through the Holy Spirit perfectly became a man by the Holy Virgin Mary. He did not create the man first, then dwell in him as in a temple, rather He, the Word, truly became a man, that is He united in himself a perfect human nature, with mind, soul and body. Neither was the Word exchanged for body, nor the body for Divinity, nor while being united did the divine or human change their nature or become altered or confused, but rather perfect Divinity joined to him flawless humanity, without change, without alteration, without confusion: that is God remained God and man remained man. Two perfections became one perfection, in a new and wondrous union. From the moment of conception, the Divine and Human were inseparably united in one Lord Jesus Christ, and in the salvific economy (divine plan of salvation) of the Word become man starting from the holy Conception, it is not possible to speak of any action as solely divine or solely human. In Christ the unity of the God-man is not a conjoining of natures or linking or relating, but rather an essential, existential and substantial unity, in which it is not possible to introduce any division or separation. The divine and human in person, nature, will and action are indivisibly united in one Lord Jesus Christ. Therefore, one is the person, nature, will and action of the Word of God become man, and any division or duality in our Lord Jesus Christ that might undermine the truth of

our salvation is to be rejected. In this unity one should not deny the perfection of each, nor reject on account of the perfection of each that one perfection, but should profess unity in the absence of any alteration and the absence of any alternation in the unity. In other words, Christ has one nature and one countenance (*prosopon)* not in respect of the sameness of nature or in respect of having a single person, for these two concepts together nearly preclude God from becoming man, or man from becoming god, but in respect of the ineffable unity of the Word in His body. It is not possible by any worldly example to understand, describe or explain the boundless mystery of God's manhood, which is a mystery of faith and a dogmatic truth; therefore, avoiding the offence of attempting to comprehend with the human mind the incarnation of the Word, we believe that God the Word became man for the salvation of alienated mankind in a way that cannot be expressed and is beyond our understanding, and beyond the reach of our minds, that only He can comprehend.

He who is consubstantial with the Father in his Divinity, became consubstantial with us in our humanity, became a true and perfect man, in all things like us, except for sin. Christ bore, as part of the divine plan of salvation (economy of salvation), all human weaknesses, voluntarily bearing our human passions, condemning in them the yeast of sin and freeing us from the condemnation of sin. Consequently works of economy are not only the miracles fitting to God — walking on the water, raising the dead, multiplying loaves, etc. — but also human frailties — thirst, fatigue, weeping, etc. When the Lord performed a divine miracle, he performed it as God and man, so that humans might likewise become a participant in those Divine works. And when He bore human weaknesses, He went through them not as one condemned, like ordinary mortals, but rather as God and man, with a liberating strength, and freed us from the bonds of evil. Every moment of Christ's life on earth, beginning from the Holy Conception through the glorious and miraculous Resurrection, is the economy of salvation and is not accidental.

Christ willingly, without being corrupted, and without being forced or compelled by nature, experienced all the innocent or irre-

proachable human passions. The Word God did not take the nature of Adam as originally created, but our fallen nature, our corrupted body and our sinful soul and mind, and uniting them with Him, He separated corruption from the body and sin from the soul and mind. Therefore we confess that the Lord's body is incorruptible, not by nature, but by this ineffable union. Likewise, we confess that Christ's body was by nature subject to suffering and mortality, however, because of the economy of union, it was not subject to suffering and was immortal.

We confess that Christ, the New Adam, came into the world, so that He might give life to all and renew mankind which through the old Adam had been condemned to corruption, sin and death. He, who is uncircumscribed by space and time, by His nature, in His providence and the Father's will entered into the finitude and time of this world, as one from this world, so that He might give life to those who were in this world and so that those ensnared by the deceitful devices of evil through Christ might come to God the Father. "For what the law could not do, in that it was weak through the flesh, God sending his own Son in the likeness of sinful flesh, and for sin, condemned sin in the flesh (Rom. 8:3)." In fulfillment of all this, He, the Apostle and High Priest of our confession, our Lord Jesus Christ, offered Himself as the sacrifice of reconciliation to God the Father, so that by His blood He might redeem all, the living and the dead (Heb. 9:14, 28). He, who is Living and Life-Giver, was crucified and tasted death for all, with body united with His Divinity was placed in the tomb, and with soul inseparable from His Divinity descended into Hell, preached to the spirits imprisoned by the evil one, showing the renewal and light of salvation, destroyed hell and freed the spirits. Then on the third day, through His miraculous and glorious resurrection, He became the first-born of the dead.

We believe that our Lord Jesus Christ with the same body divinely ascended into the heaven of heavens, sat on the throne of His eternal glory, at the right hand of the Father, from Whom is always indivisible in His Divinity. He shall come with the same body and with the Glory of the Father, to judge and requite all justly.

We believe in the Holy Spirit, consubstantial and co-creator with the Father and Son, Who with uncircumscribable power moved upon the waters and bore life to all creatures, Who spoke in the Law, the Prophets and the Gospels, descended as a dove upon the Jordan, to give glory to His Co-being, miraculously showed forth in the Lord's divine plan for salvation (economy of salvaton), was imprinted upon the Apostles by the breath of the Only-Begotten Son, then on the fiftieth day of the Resurrection of the Lord in the form of fiery tongues He descended upon the apostles by His economy and filled the creation, redeemed by the incarnate Word. He preached through the mouths of the apostles, He made the teachers of the Church, brilliant with His divine knowledge and genius, and dwelt in the saints.

We believe in only one Universal and Apostolic Holy Church, which is the mystical body of Christ (Eph. 1:23, Col. 1:24) and His living kingdom in heaven and on earth (Luke 1:33, John 18:36, Rev. 20:1–6), whose head is He, Christ (Eph. 5:23, Col. 1:18), and whose foundation is the confession of orthodox faith (Matt. 16: 16–19), and whose members (I Cor. 6:15, Eph. 5:30) and stones are those who confess God in spirit and truth (John 4:23–24, I Peter 2:4–10). We believe in the sacred mysteries of the Church, the resurrection of the dead, the reward and punishment of works, and the life everlasting.

We wrote all this, following the teachers of our faith and of our fathers, through whom, as through a window, the true light of the knowledge of our belief in the All-Holy Trinity dawns. It is God who revealed Himself: the Father revealed the Son and the Holy Spirit; the Son — the Father and the Holy Spirit; and the Holy Spirit — the Son and the Father. And it is with life-giving belief in the Triune Divinity we live, move and exist (Acts 17:28), hoping to be worthy of the salvation of our souls and life everlasting.

Чтобы вера ваша утверждалась
не на мудрости человеческой,
но на силе Божией.
I Кор. 2:5.

ИСПОВЕДАНИЕ ВЕРЫ

Превыше всего и прежде всего веруем в Отца и Сына и Духа Святого — Троицу Пресвятую и Бога Единого, Единственно Совершеннейшего и Благого, неисповедимо Сущего, вневременного Бытия и неизменную Истину, Зиждителя всего видимого и невидимого. Едина Природа, Держава, Царство и Воля Трех Божественных Ипостасей Пресвятой Троицы, преизбыточествующих в своих щедротах, нераздельно и непостижимо.

Преисполнен и совершенен, «наполняющий все во всем» (Еф. 1:23). Он не умаляется и не обновляется, не устаревает и не наполняется и не иссякает, и всегда Тот же в своей полноте и необъятности. И нет ничего инородного или прибавленного в Его недосягаемой, безмерной, безграничной и наисовершеннейшей природе.

Отец есть безвременная Причина рождения Сына и исхождения Духа Святого. И в Троице Пресвятой нет ни величия, ни умаления, ни уничижения, ни возвышения, но одно неразделимое Божество и Держава в единстве равнославных, равночестных и несмешиваемых Трех Ипостасей без прибавления, превосходства или подчинения. Всецелое небесное велелепие и безмерное единосущие величия Трех Безмерных, Бог Каждый по своей сущности и в своей ипостаси, Отец и Сын и Дух Святой.

И нет иного Творца кроме Пресвятой Троицы и всемогущей Державы, Кто по Своему всеблаговолению, зиждительной мощью и непостижимой премудростью создал всю тварь из ничего и небытия. Кто восседает на небесах небес и опекает все созда-

ния, Кто с предзнанием и безмерной премудростью печется о небесных и земных творениях, Жизнь и Зиждитель для всех и во всем — Безмерный, Непостижимый и Неисповедимый.

Кто сотворил по образу и подобию Своему человека, как венец творения, даровав ему совершенное блаженство пребывания в Боге и возможность быть сопричастником и споспешником Его неизреченных таинств. Кто не лишил преступившее Закон и отдалившееся от Него человечество Своего милосердного попечительства, не оставил его в тени смертной и скорбях земной жизни, даровав обетование спасения и избавления от греха и власти смерти.

К исполнению времен Бог открыл врата Своей несравненной любви и безмерного милосердия и возжег Свой свет спасения в этом падшем мире. Один из Троицы Пресвятой — Единородный Сын Божий, Слово Предвечное, снизошел из Своей Божественной недосягаемости и Духом Святым совершеннейшим образом вочеловечился от Пресвятой Девы Марии. Не так, что прежде сотворил человека, а после вселился в него как в храм, но Он Сам, Слово, воистину стал Человеком, то есть присоединил к себе человеческую совершенную природу — дух, душу и тело. Не то, чтобы Слово превратилось в тело или тело — в Божество, и не то, чтобы, соединяясь, божественное и человеческое изменили, или преобразовали, или смешали свою природу, но совершенный Бог присоединил к Себе совершенную человечность без изменения, без преобразования, без смешения, то есть Бог остался Богом и человек — человеком. Два совершенных стали одним совершенным, в новом и изумительном соединении. С момента Зачатия Божественное и человеческое нераздельно соединились в Едином Господе Иисусе Христе, и потому в спасительном домостроительстве вочеловечения Слова, начиная со святого Зачатия, нельзя говорить о каком-либо действии, как о только лишь божественном или сугубо человеческом. Богочеловеческое соединение во Христе не есть ни сочетание, ни присоединение или соотношение, но соединение — сущностное, бытийное и природное, в которое невозможно внести разделение или рассоединение. Божественное и человеческое лицом, природой, волей и действием нераздельно соединены в Еди-

ном Господе Иисусе Христе. Следовательно, едина Личность, природа, воля и действие вочеловечившегося Слова Божия и неприемлемы какие-либо разделения или раздвоения в нашем Господе Иисусе Христе, сотрясающие подлинность нашего спасения. В соединении нельзя отрицать совершенство каждого из них, и по причине совершенства каждого нельзя отрекаться от Единого совершенства, исповедуя соединение в неизменности и неизменность в соединении. Итак, Христос имеет одну природу и одно Лицо не по тождеству природы или по единоличию, ибо эти два понятия в совокупности лишают Бога вочеловечения, и человека — обожения, а по неизреченному единению Слова со своим телом. Никаким примером мира сего невозможно понять, описать или объяснить безграничное таинство вочеловечения Бога, что является таинством веры и догматической истиной, поэтому избегая соблазна постигнуть человеческим умом воплощение Слова, веруем, что Слово Божие неизреченно, немыслеобъятно и умонепостижимо, как ведомо лишь Ему Одному, вочеловечился для спасения отчужденного от Него человечества.

Тот, кто единосущен Отцу по Божеству, стал единосущным нам по человечеству, стал истинным и совершенным Человеком, во всем подобным нам, кроме греха. Христос спасительным домостроительством понес все человеческие немощи, свободно пройдя сквозь человеческие страсти, осудив в них закваску греха и освободив нас от проклятия греха. Следовательно, домостроительными делами являются не только богоприсущие чудеса — хождение по водам, воскрешение мертвых, умножение хлебов и прочее, но также присущие человеку немощи: жажда, изнеможение, проливание слез и прочее. Когда Господь совершал божественное чудо, Он действовал как Бог и Человек, чтобы человек также мог стать сопричастником Божественных деяний, а когда Он брал на Себя человеческие немощи, то нес их не по проклятию подобно простым смертным, но как Бог и Человек, как Всемогущий и Избавитель, дабы освободить нас от оков зла. Каждое мгновение земной жизни Христа, начиная со святого Зачатия до дивнославного Воскресения, есть спасительное домостроительство, в котором нет ничего случайного.

Христос добровольно или нетленно, не по необходимости или по понуждению естества, понес все человеческие невинные или непорицаемые страсти. Бог Слово взял не первозданное естество Адама, а наше тленное естество — подверженную тленности плоть и грешную душу и дух, и, соединив с Собой, отделил тленность от плоти и грех от души и духа. Следовательно, мы исповедуем, что Тело Господне нетленно не по природе, а по неисповедимому соединению. Также исповедуем, что тело Христово по природе подвержено страданиям и смерти, однако по домостроительству соединения — бессмертно и не подвержено страданиям.

Исповедуем, что Христос — Новый Адам — снизошел в мир, дабы даровать всем жизнь и обновить человечество, осужденное ветхим Адамом на грех и смерть. Он, Который необъятен и вневременен по Своей природе, Своим попечительством и волею Отца снизошел в предельность и во временность мира яко один из мира, дабы спасти тех, которые в миру, и чтобы осужденные прелестями духа лукавого смогли со Христом придти к Богу Отцу. «Как закон, ослабленный плотию, был бессилен, то Бог послал Сына Своего в подобии плоти греховной в жертву за грех и осудил грех во плоти» (Рим. 8:3). Во исполнение всего этого Он — наш Апостол Обетования и Первосвященник, Господь наш Иисус Христос — принес Себя в жертву примирения Богу Отцу, дабы искупить Своей кровью всех — и живых, и мертвых (Евр. 9:14, 28). Он, Кто есть Жизнь и Жизнедатель, ради всех принял Крест и вкусил смерть, с Божеством соединенным телом был положен во гроб и от Божества неотделимым духом снизошел во Ад, проповедовал духам, заключенным дьяволом, явив свет и спасительное обновление, разрушил ад и освободил плененные духи. На третий же день Он дивнославным Воскресением Своим стал первенцем из мертвых.

Мы веруем, что Господь наш Иисус Христос тем же телом божественным образом вознесся на небо небес и воссел на своем Престоле вечной славы, одесную Отца, от Кого всегда неотделим Божественностью Своей. И грядет Он в том же теле и в Отчей славе для справедливого Суда и возмездия.

Веруем в Духа Святого, Единосущного и Сотворца Отцу и Сыну, Кто непостижимим всемогуществом носился над водами и живопородил все создания, Кто провозвестил в Законе, Пророках и Евангелиях, в образе голубя сошел на Иордан восславить Единосущего Себе, дивновоссиял в спасительных домостроительствах Господних, дуновением Единородного запечатлелся в апостолах, на пятидесятый день Воскресения Господа в облике огненных языков по домостроительству почил на каждом из апостолов и своим неизреченным и необъятным присутствием преисполнил все творение, искупленное воплотившимся Словом. Проповедовал Он устами апостолов, просветлил учителей Своей божественной премудростью и гением и пребывал во святых.

Веруем в одну Кафолическую и Апостольскую Святую Церковь, которая есть Мистическое Тело Христово (Еф. 1:23, Кол. 1:24) и живое Царство Его на небесах и на земле (Лк. 1:33, Ин. 18:36, Откр. 20:1–6), чьей Главой является Сам Христос (Еф. 5:23, Кол. 1:18), а основанием — исповедание православной веры (Мф. 16: 16–19); члены же (1 Кор. 6:15, Еф. 5:30) и камни Церкви — исповедующие Бога в духе и истине (Ин. 4:23–24, 1 Пет. 2:4–10). Веруем в священные таинства Церкви, в воскресение мертвых, в воздаяние за деяния и в вечную жизнь.

Все это написали мы, следуя Отцам нашим и Учителям веры, благодаря которым, как через окно, засиял истинный свет познания веры в Пресвятую Троицу. Бог Сам явил Себя: Отец, — Сына и Духа, Сын — Отца и Духа, и Дух — Отца и Сына. И благодаря животворной вере в Божественную Троицу мы живем, движемся и существуем (Деян. 17:28), уповая удостоиться спасения наших душ и вечной жизни.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ (Դ-Ը դդ.)[1]

(Դասանաբանական ակնարկ)

«Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերի համար...»:

Սբ Գրիգոր Լուսաւորիչ,
«Յաճախապատում»

ՄՈՒՏՔ

Հաւատքը հոգեւոր կեանքի առանցքն է. այսպէս են տեղեկացնում մեզ Սուրբ Գիրքը եւ Եկեղեցու հայրերի գրուածքները: Հաւատքով ոչ միայն սկզբնաւորւում է Աստուծոյ եւ մարդու յարաբերութիւնը, այլեւ պայմանաւորւում հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հաւատքով է առհասարակ բնորոշւում քրիստոնէական կրօնը. այստեղից էլ «քրիստոնէական հաւատք» եւ «հաւատացեալ» արտայայտութիւնները: Ըստ Եկեղեցու վարդապետների՝ հաւատքն Աստծուց պարգեււող շնորհ է, որը զօրացնում է հոգին՝ ճանաչելու Աստծուն. հաւատքով մենք յարաբերութեան մէջ ենք մտնում Աստուծոյ հետ, ճանաչում Նրան, որ վեր է ամէն տեսակ ճանաչողութիւնից եւ անհասանելի՝ մարդկային բնութեան համար: Հաւատքը, լինելով հոգեւոր կեանքի էական յատկանիշը, աստիճանական բնոյթ ունի. հաւատքի առաջին աստիճանը կամ տեսակը դաւանական հաւատքն է կամ հաւատքի դաւանութիւնը: Այս ուղղակիօրէն հաստատում է սբ Աթանաս Ալեքսանդրացին. «Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»[2]:

---

1 *Լոյս է տեսել 1992 թ. «Գանձասար» հանդէսի Բ հատորում (էջ 86–122): Ընթերցողի ուշադրութեանն է ներկայացւում վերանայուած տարբերակը:*

2 *Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, «Երանելւոյն Աթանասի ասացեալ յԱմենասուրբ Երրորդութիւնն», Վենետիկ, 1899, էջ 239*

Դաւանել նշանակում է ընդունել, խոստովանել եւ վկայել որպէս ճշմարտութիւն, հաստատել եւ հաւատարմութիւն խոստանալ նրան, ինչին հաւատում ես: Իսկ դաւանութիւնը հաւատքի հիմնադրոյթների ամբողջութիւնն է, որին պէտք է ամբողջ սրտով հաւատայ ամէն մի քրիստոնեայ: «Դաւանել» բառն ունի նաեւ մէկ այլ կարեւոր իմաստ՝ նշանակում է խոստովանել եւ վկայել բերանով: Բերանի վկայութիւնը կարեւոր է. «Քանի որ սրտով հաւատում էք արդարանալու համար եւ բերանով խոստովանում՝ փրկուելու համար. քանզի այս է ասում Գիրքը. «Ամէն ոք, ով հաւատայ Նրան, չի ամաչի» [Հռոմ. Ժ 10]. ահա թէ ինչու Եկեղեցու սուրբ Մկրտութեան կարգի, սրբազան Պատարագի արարողութեան եւ ամենօրեայ ժամակարգութեան մէջ առանձնայատուկ տեղ է յատկացուած Հաւատոյ հանգանակի հանդիսաւոր խոստովանութեանը: Դաւանական մաքրութեան հարցերը մշտապէս եղել են Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում. Եկեղեցու հայրերը, պայքարելով զանազան հերձուածների եւ աղանդների դէմ, աստուածաբանական կուռ կաղապարների միջոցով աշխատել են թրծել հաւատացեալ գիտակցութիւնը եւ ապահովել վտանգաւոր շեղումներից: Դաւանական մաքրութիւնը նրանց կողմից դիտարկուել է որպէս քրիստոնեայ լինելու անհրաժեշտ պայման: Այսպէս. հաւատքի մաքրութիւն է պահանջւում իւրաքանչիւր մկրտուող մեծահասակից (փոքրի դէպքում՝ կնքահօրից) եւ առաւելապէս՝ մկրտող հոգեւորականից, որը պէտք է ուսուցանի եւ նախապատրաստի մկրտուողին: Ահա՛ «Մաշտոց» ծիսարանում մկրտութիւնից առաջ քահանային ուղղուած խրատը. «Մինչեւ [չափահասի] մկրտութիւնը, որը կամենում է քրիստոնեայ լինել, պէտք է նրան ուսուցանել սուրբ Եկեղեցու հաւատքը եւ վարդապետութիւնը, այսինքն՝ Աստուածային Անձերի Երրորդութիւնը, աշխարհի արարչագործութիւնը, սուրբ այրերի ընտրութիւնը, Քրիստոսի ծնունդը եւ Նրա բոլոր փրկարար տնօրէնութիւնները՝ մկրտութիւնը Յովհաննէսից, քարոզութիւնը, հրաշագործութիւնը, մատնութիւնը, խաչելութիւնը, մահը, թաղումը, յարութիւնը, համբարձումը, Սուրբ Հոգու գալուստը, Յիսուսի Երկրորդ Գալուստը, համընդհանուր յարութիւնը, գործերի հատուցումը եւ սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները...»[3]:

Հոգեւոր ճանապարհով ընթանալիս մարդն անընդհատ ենթարկւում է դիւային փորձութիւնների եւ յարձակումների: Ըստ անապա-

---

3 *«Մաշտոց», Սբ Էջմիածին, 2001 թ., էջ 3*

տական հայրերի՝ ճշմարիտ դաւանութիւնը հզօր զէնք է չարի դէմ մղուող պայքարում: Եւագր Պոնտացին գրում է. «Պատրաստի՛ր քո անձը ինչպէս հմուտ ձգնող եւ, եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ շփոթուիր. եթէ տեսնես քեզ վրայ բարձրացած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր. եթէ տեսնես որեւէ տհաճ եւ արիւնատես կերպարանք, ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ դաւանումը, եւ դիւրութեամբ կը տեսնես քո թշնամիների կործանումը»[4]: *Այսպիսով՝ հաւատքը հոգեւոր առաջնութեան եւ չարի որոգայթներից խուսափելու կարեւորագոյն գործօն է. եւ պատահական չէ, որ Եկեղեցու հայրերի կողմից մշակուել եւ սերունդներին է աւանդուել մեծածաւալ դաւանական գրականութիւն:*

Ըստ Եկեղեցու հայրերի՝ դաւանաբանութեան եւ հետեւաբար փրկաբանութեան հիմքը մարդացած Բան Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոսի մասին աստուածաբանական ուսմունքն է, որը կոչւում է քրիստոսաբանութիւն: Յիսուս Քրիստոսին ճշմարտապէս դաւանելը Եկեղեցու հայրերի կողմից դիտուել է որպէս հաւատքի եւ փրկութեան կարեւորագոյն նախապայման. «Քրիստոնէութեան անունը Քրիստոսին ճշմարիտ դաւանելն է, եւ քրիստոնեայ է անուանւում նա, ով ունի ճշմարիտ դաւանութիւնը»[5]: *Եւ, բնականաբար, Եկեղեցու դաւանական ժառանգութեան մէջ քրիստոսաբանութիւնը ճնշող մաս է կազմում:*

Թէ՛ Ընդհանրական Եկեղեցու, թէ՛ Հայ Եկեղեցու համար Դ–Ը դարերն առանձնանում են որպէս քրիստոսաբանական մտքի ձեւաւորման ժամանակաշրջան. եթէ Դ դարի երկրորդ կէսին ամենայն սրութեամբ առաջ են քաշւում քրիստոսաբանական հարցերը, ապա Ը դարում բիւրեղանում եւ ամբողջական տեսք է ստանում Եկեղեցու քրիստոսաբանութիւնը: Հայ Եկեղեցու պատմութեան մէջ այս ժամա-

---

4 *«Աղօթքի մասին», խօսք 92. տես «Գանձասար» Ա, էջ 190: «Աղօթքի մասին» գործը դարերով վերագրուել է սբ Նեղոս Սինայեցուն, որի անունով էլ հրատարակել ենք առաջին աշխարհաբար թարգմանութիւնը (Գանձասար Ա, 1991 թ.): Սակայն այսօր հայրաբանների մեծ մասը, յենուելով Ի. Հաուսհերի մատենագիտական հետազօտութիւնների վրայ, ընդունում է, որ այս գործի հեղինակը սբ Եւագր Պոնտացին է: Սոյն հատորում ներկայացուած է թարգմանութեան վերանայուած տարբերակը:*

5 *Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, «Երանելւոյն Աթանասի ասացեալ յԱմենասուրբ Երրորդութիւնն», Վենետիկ, 1899, էջ 240*

նակաշրջանը նշանաւորւում է դաւանական մտքի մեծ վերելքով, սուրբ հայրերի ջանքերի շնորհիւ յղկւում եւ ամրանում է ազգային դաւանական գիտակցութիւնը: Սակայն այս վերելքը եղել է դժուարին եւ խռովայոյզ. հաւատքի մաքրութեան համար պահանջուել է անընդհատ պայքար թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին թշնամիների դէմ: Եւ այս ամէնը կատարուել է երկերեսանիութիւնների, նենգութիւնների ու չարախօսութիւնների, քաղաքական ճնշման եւ բռնութիւնների ներքոյ: Այսուհանդերձ, մեր Եկեղեցին կարողացել է անաղարտ պահել իր առաքելական դէմքը, հարազատ մնալ սրբազան աւանդութեանը եւ այն՝ որպէս Սուրբ Հոգու կենդանի ժառանգութիւն, մատուցել Եկեղեցու մանկանց:

Հայ Եկեղեցու դաւանութեան մասին շատ է գրուել օտար հեղինակների կողմից: Ցաւօք, այդ գրականութեան մէջ զգալի տեղ են զբաղեցնում այնպիսի աշխատութիւններ, որոնք փորձում են աղարտել Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու դէմքը, իբրեւ հերետիկոսական (որոշ «խորատեսներ» գործածում են «թաքնուած հերետիկոսութիւն» բառակապակցութիւնը) ներկայացնել մեր դաւանութիւնը՝ յենուելով բազմադարեան բամբասանքի եւ սուտ մեղադրանքների վրայ (այս գործին «նպաստել» են ԺԹ–Ի դդ. որոշ հայ հեղինակներ եւս)... Ուշագրաւ է, որ այդ հեղինակների զգալի մասը չափազանց թոյլ պատկերացում ունի կամ գրեթէ չունի հայ դաւանական գրականութեան մասին: Նպատակ չունենալով ընդդիմախօսել այս կամ այն հեղինակին՝ մենք կը շարժուենք ճշմարտութեան լոյսի բացայայտման ճանապարհով՝ համոզուած լինելով, որ լոյսի յայտնուելուն պէս կը ցրուի անգիտութեան մէգը, եւ կը վերանայ կասկածանքի խաւարը: Այդ ճշմարտութիւնը նախ եւ առաջ կայանում է նրանում, որ Հայոց Եկեղեցին պահպանել է առաքելական աւանդութիւնը եւ հաւատքի ուղղափառ դաւանութիւնը, ունեցել ինքնուրոյն աստուածաբանական միտք եւ ճանապարհ, որն այսօր ունի համաքրիստոնէական նշանակութիւն եւ արժէք:

Մեր օրերում դաւանական հարցերը հասարակութեան ուշադրութեան կենտրոնում չեն: Այն, ինչը եղել է մեր հայրերի մշտաջան հոգածութեան առարկան, ինչի համար մշտապէս նահատակուել եւ արիւնով է վճարել մեր ժողովուրդը, այսօր մատնուած է վտանգաւոր անհոգութեան եւ անտարբերութեան: Եւ սրա հետ մէկտեղ մենք ազգային գիտակցութեան եւ գաղափարախօսութեան ընդունայն

փնտրտուքների մէջ ենք՝ կտրուած սեփական արմատներից եւ հմայուած օտարամուտ ուսմունքներով ու գաղափարներով: Հաւատքը մեր ինքնութեան, գոյութեան եւ շարունակականութեան հիմքն է: Եթէ ուզում ենք հասկանալ, թէ ո՛վ ենք մենք եւ ո՛րն է մեր առաքելութիւնը, պէտք է ճանաչենք մեր հաւատքը, որը մեր ժառանգած ամենամեծ հարստութիւնն է:

Ա. ՍԿԻԶԲ *(ԴԵ դդ.)*

Քրիստոսաբանական հարցերը միշտ էլ ուղեկցել են Եկեղեցու պատմութեանը: Սակայն քրիստոսաբանական շարժումները յատկապէս աշխուժացան Դ դարում Արիոսի կեղծ ուսմունքի պատճառով: Եկեղեցին արիոսականութեանը պատասխանեց 325 թ. գումարուած Նիկիոյ Ա տիեզերաժողովով: Նիկիական հայրերի սահմանած «Հաւատոյ հանգանակի» գլխաւոր եզրը՝ «համագոյութիւն» (ὁμοούσια)՝ որպէս աստուածաբանական «բանալի», քրիստոսաբանական մտքի համար բացեց իսկապէս նոր դարաշրջան: Համագոյութիւնը բացայայտում էր մի կողմից Քրիստոսի Աստուածութեան կատարելութիւնը եւ միւս կողմից՝ Նրա մարդկութեան ամբողջութիւնը եւ իսկութիւնը. Յիսուս Քրիստոս կատարեալ Աստուած է (համագոյ է Հայր Աստծուն) եւ կատարեալ մարդ (համագոյ է մեզ՝ մարդկանց): Դ դարի երկրորդ կէսին եւ Ե դարի առաջին կէսին երեւան են գալիս Ապողինարի եւ Նեստորի հակադիր հերձուածները. մէկը ժխտում էր Փրկչի մարդկային կատարելութիւնը, իսկ միւսը՝ ընդհակառակը՝ մարդկային ճիգերից բացի ոչինչ չէր տեսնում Քրիստոսի մէջ: Այս երկու ծայրայեղութիւններն էլ առաջ եկան Աստուծոյ մարդեղութեան խորհրդի սխալ ընկալումից, Աստուծոյ եւ մարդու միաւորման մասին սխալ ենթադրութիւններից: Յուցաբերելով աստուածաբանական մտքի մեծ զգուշութիւն ու սթափութիւն եւ հարազատ մնալով նիկիական աւանդութեանը՝ Եկեղեցու հայրերը բացայայտում էին ուղղափառ հաւատքի սկզբունքները. նրանք մշտապէս շեշտում էին, որ փրկագործութեան միակ եւ իրական հիմքը Աստուծոյ եւ մարդու միութեան կատարելութիւնն է Քրիստոսի մէջ: Այդ միութիւնը նրանք ընդունում էին որպէս անբաժանելի, անփոփոխելի եւ անշփոթելի՝ իրենց բնական յատկութիւնների մէջ. միեւնոյն ժամանակ նրանք անընդհատ նշում էին, որ Քրիստոս-Աստուածամարդու միութիւնն

անճառելի եւ անհասանելի է մարդկային մտքի համար. «Բանը մարմին եղաւ...», սակայն ինչպէ՞ս. բոլոր մտքերից եւ խօսքերից վեր՝ անճառելիօրէն եւ անհասութեամբ: Այս սկզբունքային պնդումը Եկեղեցու աստուածաբանական համակարգը գերծ էր պահում մարդկային մտաբանութիւններից:

Քրիստոսաբանական շարժումներն իրենց արձագանքները գտան նաեւ Հայոց աշխարհում: Երեք տիեզերաժողովների[6] *բարեբար ազդեցութեան տակ ձեւաւորւում եւ ամրանում է ազգային դաւանական գիտակցութիւնը, ստեղծւում ինքնուրոյն աստուածաբանական գրականութիւն, երեւան են գալիս որոշակի առանձնայատկութիւններ: Այս տեսանկիւնից ուշագրաւ են սբ Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը» եւ «Վարդապետութիւնը», «Գիրք թղթոց» եւ «Կնիք հաւատոյ» դաւանական ժողովածուների շնորհիւ՝ սբ Սահակ Պարթեւի, սբ Մեսրոպ Մաշտոցի եւ սբ Եղնիկ Կողբացու անուններով մեզ հասած դաւանական թղթերը, սբ Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը, սբ Եղիշէի եւ սբ Մովսէս Խորենացու անուններով մեզ հասած դաւանական երկերը:*

Սբ Գրիգոր Լուսաւորչի «Յաճախապատումը» եւ «Վարդապետութիւնը» մեր աստուածաբանական մտքի անդրանիկներն են: Սբ Գրիգորի քրիստոսաբանական խորհրդածութիւնները հիմնականում փրկաբանական բնոյթ ունեն: Կատարեալ Աստուած մեր փրկութեան համար դարձաւ ճշմարիտ մարդ, որպէսզի փրկագործի մարդկային ընկած բնութիւնը: «Սակայն երբ կամեցաւ,— *գրում է սբ Գրիգորը,—* մարդկային կերպարանք առաւ, մարմին հագաւ եւ իջաւ մեր նմանութեան մէջ: Նա, Ով Իր լիակատար աստուածութեամբ անբաւ էր եւ անհաս, մեզ համար իջաւ չափաւորութեան մէջ եւ ամփոփուեց մարմնում, ճշմարտապէս բովանդակուեց մարմնում, ճշմարիտ մարդ դարձաւ եւ իջաւ անարգութեան մէջ, որպէսզի մեզ բարձրացնի: Սակայն Իր Աստուածութեամբ երկնքում էր, երկրի վրայ լինելով՝ Հօր մօտ էր եւ Հօր հետ էր, եւ բոլոր արարածները Նրա հրամանով են շարժւում»[7]: *Անժամանակ Աստուածը՝ Հինաւուրցը, մտաւ ժամանակի մէջ եւ մանկացաւ, Ամենազօրը վերցրեց մարդկային տկար*

---

6 *Երեք տիեզերաժողովների հետ կապուած քրիստոսաբանական շարժումների մասին աւելի մանրամասն տես Մեսրոպ քահանայ Արամեան, «Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը», «Գանձասար» Ա, 1992, էջ 110–140:*

7 *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909, էջ 188*

մարմնի կերպարանքը, որպէսզի մեզ վերափոխի անմահութեան[8]*: Աստուծոյ խոնարհումը, ըստ սբ Գրիգորի, մարդուն աստուածային կեանքի ժառանգորդ դարձնելու համար է:* «Ճշմարիտ հաւատքը սա է.— *ուսուցանում է նա,*— խոնարհուեց եւ միաւորեց Աստուածութիւնը մարդկութեան հետ, անմահ բնութիւնը՝ մահկանացուի հետ, որպէսզի ամբողջ մարդկային բնութիւնը անբաժանելի դարձնի Իր Աստուածութեան անմահութիւնից»[9]: *Քրիստոնեայ լինել, ըստ սբ Գրիգորի, նշանակում է քրիստոսանման լինել: «Եւ ինչպէս Աստուծոյ Որդին դարձաւ մարդու որդի, հագաւ մեր բնութիւնը եւ կատարեց ամբողջ արդարութիւնը հոգով եւ մարմնով, այնպէս էլ մենք զգեստաւորուենք ուղիղ վարքով եւ կատարենք ամբողջ արդարութիւնը Քրիստոսով, որպէսզի Աստուծոյ որդիներ լինենք եւ աստուածներ՝ սիրով»*[10]*: Քրիստոս առանց մեղքի կրում է մեր մարդկային կրքերը եւ մարդկային կեանքը ազատագրում չարի կապանքներից,* «որպէսզի մենք էլ աստուածային զօրութեամբ առանց մեղքի անցնենք բոլոր կրքերի միջով»[11]:

Մեր հայրերը միշտ շեշտել են մարդկային բնութեան ամբողջականութիւնը Քրիստոսի մէջ. Քրիստոս կատարեալ մարդ է. «Կատարեալ Աստուած դարձաւ կատարեալ մարդ՝ հոգով, մտքով եւ մարմնով՝ մէկ անձ, մէկ դէմք եւ միաւորուած մէկ բնութիւն»[12]: *Նա ճշմարտապէս կրում է մեր բնութեան կրքերը, ճշմարտապէս չարչարւում: Եթէ Քրիստոսի մարդկութիւնը թերի է կամ առհասարակ թուացեալ, ինչպէս պնդում էին գնոստիկական ակունքներից սերող որոշ ծայրայեղ աղանդներ, ապա փրկագործութիւնն անիրական է եւ կեղծ: Քանզի փրկութեան համար ինքնագոյ կեանքը պէտք է կատարելապէս Իրեն միաւորէր մեր ապականացու եւ մահկանացու բնութիւնը եւ կենսագործէր այն: Սբ Եղնիկ Կողբացին գրում է.* «Եթէ սոսկ նմանութեամբ մարդ դարձաւ եւ սոսկ թուացեալ էին խաչը, չարչարանքները եւ մահը, ապա ոչ մի փրկութիւն չկատարուեց»[13]: *Ըստ սբ Եղիշէ վարդապետի՝ Քրիստոսի*

---

8 Նոյն, էջ 189

9 Նոյն, էջ 192

10 Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, Սբ Էջմիածին, 1894, էջ 18–19

11 Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, էջ 18–19

12 Ժամագիրք Հայաստանեայց Սբ Եկեղեցւոյ, «Դաւանութիւն Հաւատոյ», էջ 3–4

13 Եղնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 184

մէջ Աստուծոյ եւ մարդու միութիւնը անշփոթելի է եւ անփոփոխելի. «Ճշմարիտ Աստուած էր եւ դարձաւ ճշմարիտ մարդ. մարդանալով՝ չկորցրեց Աստուածութիւնը, ոչ էլ, մնալով Աստուած, աղաւաղեց մարդկութիւնը»[14]:

Ե դարի սկզբին՝ 30-ական թուականներին, սբ Սահակ Պարթեւի եւ սբ Մեսրոպ Մաշտոցի գլխաւորութեամբ սուր պայքար է ծաւալւում Նեստորականութեան դէմ: Նեստորի մարդաբանական ծայրայեղութիւնների մէջ նրանք տեսնում էին փրկութեան իսկութիւնը փլուզող շեղումներ: Աստուած ճշմարտապէս մարդացել է, այսինքն՝ Բանը միաւորել է Իրեն անթերի մարդկութիւն, որպէսզի մարդուն տայ լիարժէք փրկութեան հնարաւորութիւն: Պրոկղ հայրապետին ուղղուած պատասխան թղթում սբ Սահակը եւ սբ Մեսրոպը ասում են. «Որդու մարմնազգեցութեան մասին այսպէս ենք հաւատում. որ յանձն առաւ կատարեալ մարդ լինել Աստուածածին Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով առնելով շունչ եւ մարմին, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Քանզի այսպէս եկաւ կատարելու մեր մարդկութեան փրկութիւնը եւ ճշմարտապէս չարչարուեց: Ոչ թէ Ինքը պարտական էր չարչարանքների, այլ մեզ համար յանձն առաւ չարչարանքները, երրորդ օրը յարութիւն առաւ, համբարձուեց երկինք եւ նստեց Հօր աջ կողմում. նաեւ գալու է դատելու կենդանիներին եւ մեռեալներին»[15]: *Միայն ճշմարտապէս մարդացած Բանը, եւ ոչ թէ «աստուածակիր մարդը», կարող է լինել ճշմարիտ Փրկիչ եւ Քաւիչ: Քրիստոսի աստուածային եւ մարդկային կատարելութիւնը փրկագործութեան հիմքն է. Քրիստոս ապրեց, չարչարուեց եւ մեռաւ ինչպէս մարմնացեալ Աստուած եւ ոչ թէ որպէս մարդ: Սուրբ Կոյսից ծնուեց մարմնաւորուած Աստուած եւ ոչ թէ լոկ մարդ, ուստի սուրբ Կոյս Մարիամին պէտք է կոչել Աստուածածին եւ Տիրածին: Այս է հաստատում սբ Եղնիկ Կողբացին սբ Մեսրոպ Մաշտոցին ուղղուած թղթում.* «Պէտք է խոտովանել այսպէս. Քրիստոս ճշմարիտ Աստուած է, Աստուծոյ Որդի եւ Միածին՝ յաւիտեաններից առաջ ծնուած Հայր Աստծուց եւ Տէր Արարիչ բոլոր արարածների: Նոյն Բանն Աստուած ժամանակների լրումին մարմին հագաւ եւ մարդ դարձաւ առանց փոխուելու եւ զրկուելու Իր աստուածային բնութիւնից: Սբ Կոյսից ծնուելով՝ Աստուած դարձաւ

---

14 Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երեւան 1989, էջ 78

15 Կնիք հաւատոյ, «Սրբոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի եւ սուրբ վարդապետին Մեսրոբայ՝ ի թղթոյն որ առ երանելին Պրոկղ պատասխանի», Սբ Էջմիածին, 1914, էջ 129

կատարեալ մարդ ըստ մարմնաւոր ծնունդեան, եւ Կոյսը կոչւում է եւ է Տիրածին եւ Աստուածածին, իսկ Ծնուածը Աստուած է եւ կատարեալ մարդ»[16]:

Դ–Ե դարերը հայ աստուածաբանական մտքի սկզբնաւորման (սբ Գրիգոր Լուսաւորիչ), հոգեւոր ակունքների յստակեցման, սեփական ինքնութեան եւ ասելիքի բիւրեղացման ժամանակաշրջան էին: Գրերի գիւտը եւ ազգային դպրոցի հիմնումը, անշուշտ, բեկումնային էին սեփական աստուածաբանական միտքը զարգացնելու եւ հոգեւոր մշակոյթի փոխանցականութիւնը ապահովելու տեսանկիւնից: Այսուհանդերձ, այս ժամանակաշրջանի հայ քրիստոսաբանական միտքը հիմնականում արտացոլում է Ընդհանրական Եկեղեցում ծաւալուած բուռն աստուածաբանական շարժումները: Զգացւում է Հայ Եկեղեցու առանձնայատուկ հոգեհարազատութիւնն Ալեքսանդրեան աստուածաբանական դպրոցին: Սակայն հայերը չէին պատրաստւում հոգեւոր ճշմարտութիւնների կրաւորական կրիչներ լինել: Բայց նախ պէտք էր հերկել սեփական անդաստանը, զատել ճշմարիտ սերմը գայթակղութեան որոմից, սերմանել եւ պատրաստ լինել մեծ տառապանքներով ոռոգելու այդ անդաստանը: Եւ արդիւնքը եղաւ դաւանական ժառանգութեան այն մեծ հունձքը, որի վրայ խարսխուած է հայ ինքնութիւնը եւ որը համաշխարհային հոգեւոր գանձարանի ամենաթանկարժէք գանձերից մէկն է:

Բ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ե դարի աստուածաբանական շարժումների մէջ նկատւում է քրիստոսաբանական մտքի հետզհետէ սրուող բեւեռացում, որին նպաստում էին աստուածաբանական դպրոցների միջեւ ծաւալուած մրցակցութիւնը, աթոռների՝ իրենց ազդեցութեան ոլորտները լայնացնելու նկրտումները, քաղաքական ճնշումը: Այս բեւեռացումը սկսում է ընդգրկել կարեւոր աշխարհագրական տարածքներ եւ ստանալ ազգային-քաղաքակրթական երանգներ: Մթնոլորտը յատկապէս շիկացաւ սբ

16 *Կնիք հաւատոյ, «Ի թղթոյն Եղնկայ Կողբացւոյ թարգմանչի, զոր գրեաց ի Կոստանդնուպոլիս՝ առ երանելին Մաշտոց վարդապետ, յետ առաջնոյ ժողովոյն Եփեսոսի, յորում լուծին ի պատուոյ զՆեստոր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս», էջ 130*

Կիւրեղ Ալեքսանդրացու մահից (444 թ.) յետոյ, որի հեղինակութիւնը կենդանութեան օրօք որոշակիօրէն կայունացնում էր իրավիճակը:

Նեստորականութեան դէմ պայքարելիս սբ Կիւրեղը յենւում էր սբ Աթանաս Ալեքսանդրացու «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» բանաձեւի վրայ, որը գործածելիս պէտք էր պահպանել աստուածաբանական սթափութիւն եւ զգուշութիւն: Քրիստոսի միութեան սխալ ընկալումը կարող էր յանգեցնել մարդաբանական նոր ծայրայեղութիւնների: 40-ական թուականներին նորից աշխուժացած նեստորականութեան դէմ պայքարողների մէջ աչքի է ընկնում Եւտիքէսը՝ Կոստանդնուպոլսին յարակից մի վանքի ծերունի առաջնորդը: Եւտիքէսը չունէր համակարգուած աստուածաբանական հայեացքներ: Նա ծայրայեղօրէն շեշտում էր Քրիստոսի միութիւնը եւ «մէկ բնութիւն» բանաձեւի նախանձայոյզ ջատագովներից էր: Սակայն, տառացիօրէն կրկնելով սբ Աթանասին եւ սբ Կիւրեղին, նա հեռանում է «մէկ բնութիւն» եզրի ուղղափառ ըմբռնումից եւ արդիւնքում յայտնւում մի իւրատեսակ շփոթի մէջ: Նա քարոզում էր Աստուածութեան եւ մարդկութեան մի խառնուրդ, որում մարդկութիւնն ընկղմուած եւ գրեթէ ոչնչացած է Աստուածութեան մէջ, ինչպէս մի կաթիլ մեղրը՝ ծովում, կամ շիւղը՝ բոցում: Նա այնքան հեռու գնաց, որ մինչեւ իսկ երկնային ծագում վերագրեց Քրիստոսի մարմնին: Եւ, ի վերջոյ, պատահական չէր Եւտիքէսի կողմից Քրիստոսի մարդկային համագոյութեան ժխտումը: Եւտիքէսը վախենում էր Քրիստոսին չափից աւելի մօտեցնել սովորական մարդկանց: Նրա համար Քրիստոս Աստուած է, եւ «մէկ բնութիւն» բանաձեւում նա «մէկ»-ն ընկալում էր որպէս պարզ եզակիութիւն եւ այն վերագրում միայն աստուածութեանը: Ըստ Եւտիքէսի՝ Քրիստոսի մէջ «մարդկայինի» մասին կարելի է խօսել միայն յատուկ եւ ոչ թէ ուղիղ իմաստով: Նա զանազանում էր «մարդու մարմինը» «մարդկային մարմնից» եւ համաձայնում էր ասել, որ Քրիստոսի մարմինը «մարդկային» է, եւ Նա մարմնաւորուել է Կոյսից, բայց Նրա մարմինը «մարդու մարմին» չէ: Եթէ Ապողինարի ուսմունքը փրկութիւնը սասանող մարդաբանական առնուազութիւն էր, ապա Եւտիքէսի ուսմունքը, ըստ էութեան, ժխտումն էր փրկագործութեան: Եթէ Քրիստոսի մարդկութիւնն իրական չէ, ապա իրական չէ մարդու փրկութիւնը:

448 թ. տեղական ժողովում՝ Կ. Պոլսի Փլաբիանոս պատրիարքի գլխաւորութեամբ, Եւտիքէսը դատապարտւում է, եւ առաջ է քաշւում

«երկու բնութիւն» բանաձեւը: 449 թ. մի նոր ժողով է հրաւիրւում, այս անգամ՝ Ալեքսանդրիայի Դիոսկորոս պատրիարքի գլխաւորութեամբ: Այդ ժողովում Եւտիքէսը ներկայացնում է նախընթաց ժողովներին համաձայն մի դաւանութիւն եւ արդարացւում, իսկ Փլաբիանոսը դատապարտւում է: 449 թ. ժողովին Հռոմի Լեւոն պապը Փլաբիանոսին է ուղարկում մի թուղթ՝ այսպէս կոչուած «Լեւոնի տումարը»:

Այս թուղթն արեւելեան վարդապետութեան համար անընդունելի կէտեր էր պարունակում: Լեւոնը, Քրիստոսին բաժանելով երկու բնութիւնների (in duabus naturis), միացնում էր դէմքի միութեամբ (in unam coeunte personam): Նկատւում է որոշակի հոգեհարազատութիւն նեստորական πρόσωπον τῆς ἑνώσεος-ի (միացութեան դէմք) հետ: Երկու բնութիւնների բաժանելը սկզբունքային է Լեւոնի համար. նա Քրիստոսի մէջ ամէն ինչ փորձում էր տեսնել բաշխուած ըստ մարդկութեան եւ աստուածութեան՝ «Կարող է մեռնել ըստ մէկի եւ չի կարող մեռնել ըստ միւսի»[17], «Բանը ներգործում է այն, ինչ Բանինն է, իսկ մարմինը կատարում է այն, ինչ մարմնինն է»[18], «Թէպէտեւ Տէր Յիսուս Քրիստոսի մէջ մէկ անձ է, սակայն այլ է այն, որտեղից անարգանքն է, եւ այլ է այն, որտեղից փառքն է»[19]: Լեւոնը վախենում էր շփոթել աստուածութիւնը մարդկութեան հետ: Նա «մէկ բնութիւն» խոստովանութեան մէջ եւտիքեան շփոթից կամ քօղարկուած ապողինարականութիւնից բացի ուրիշ ոչինչ չէր տեսնում: Քրիստոսին բաղդատելով ըստ աստուածութեան եւ մարդկութեան՝ միաժամանակ փորձում էր խոյս տալ ծայրայեղութիւններից եւ պահպանել աստուածութեան եւ մարդկութեան ամբողջականութիւնը Քրիստոսի մէջ: Ինչ-որ իմաստով սա նրան յաջողւում է, սակայն լուրջ զոհողութեան գնով: Նրա քրիստոսաբանութեան մէջ առկայ է նոյն «անտիոքեան» անլուծելի երկւութիւնը. աւելին՝ Լեւոնը ոչ միայն չի փորձում յաղթահարել այդ երկւութիւնը, այլ այն ընդունում է որպէս հաւատքի խոստովանութեան հիմք: Լեւոնի աստուածաբանական ընկալումներն իրենց որոշակիութեանը եւ ամբողջականութեանը հասան Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումներում:

---

17 «Սկզբնագիրք տումարի ս. Լեւոնի». աշխատութեամբ աշակերտաց Մխիթարայ աբբահօր, Վենետիկ, 1905, 12

18 Նոյն, 16

19 Նոյն, 20

451 թ. մայիսի 17-ին Մարկիանոս կայսեր եւ Հռոմի Լեւոն պապի կողմից նոր ժողով գումարելու հրովարտակ է արձակւում: Ժողովը սկսուեց հոկտեմբերի 8-ին Բիւթանիայի Քաղկեդոն քաղաքում: Յիշենք, որ Հայաստանն այս ընթացքում գտնւում էր աղէտալի քաղաքական պայմաններում: Սասանեան Պարսկաստանը, ստանալով Բիւզանդիայի չմիջամտելու հաւաստիացումը, փորձում էր հայերին հաւատափոխ անել: 451 թ. մայիսի 26-ին Աւարայրի ճակատամարտում ողջ հայ ժողովուրդը վկայական արեամբ հաստատեց, որ իր քրիստոնէական հաւատքը ոչ ոք չի կարող խախտել՝ «ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ կրակը, ո՛չ ջուրը, ո՛չ բոլոր դառը հարուածները»[20]: Այս ընթացքում Արեւմուտքը, իր կրտսեր եղբօրը մահուան վտանգի մէջ թողնելով, զբաղուած էր ժողով հրաւիրելու իրարանցմամբ:

Ժողովին ժամանած եպիսկոպոսները բազմաշատ էին՝ 636 հոգի, բայց գրեթէ բոլորը Կ. Պոլսի եւ Անտիոքի սահմաններից: Ժողովը վարում էին Մարկիանոս կայսեր եւ Պուլքերիա կայսրուհու նշանակած պաշտօնեաները. Ալեքսանդրիայի կողմից բարձրացուող ամէն մի դիտողութիւն ճնշւում էր արտաքին ուժի միջոցով, իսկ Արեւմուտքը բացարձակապէս բացակայում էր: Ժողովի օրերին Հայոց Յովսէփ կաթողիկոսը, նշանաւոր եպիսկոպոսներ, երէցներ եւ գլխաւոր նախարարներ դատւում էին Տիզբոնում, իսկ Հայոց Եկեղեցին եւ երկիրն անգլուխ հեծում էին:

Քաղկեդոնի ժողովի ընդունած հանգանակն իր կառուցուածքով շատ նման է «Լեւոնի տումարին», սակայն վերջինիս բառացի կրկնութիւնը չէ: Այս անգամ, Քրիստոսին ընդունելով երկու բնութիւնների մէջ (ἐν δύο φύσεσιν) ճանաչելի, ժողովականները Նրան միաւորում են ոչ միայն դէմքով (ἐν πρόσωπον), այլեւ մէկ անձով (μία ὑπόστασις): Քաղկեդոնի լեզուն աստուածաբանական նորամուծութիւն էր. այն պարտադիր էր դարձնում եզրաբանական որոշակի համակարգ եւ արգելում ցանկացած այլ համակարգ: Եւ նախ եւ առաջ արգելում էր սբ Կիւրեղի լեզուն: Սակայն Քաղկեդոնի ձեւակերպումները աչքի են ընկնում ոչ միայն լեզուական նորամուծութիւններով, այլեւ Աստուածամարդու խորհուրդի այլ ընկալմամբ, որը խորթ է Ալեքսանդրեան դպրոցի աւանդութեանը: Քաղկեդոնական համակարգում ոչ միայն առկայ է, այլեւ յատկապէս շեշտւում է նոյն ան-

20 Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երեւան, 1989, էջ 80

տիոքեան անլուծելի երկուութիւնը. Քրիստոսի միութիւնն ընդամէնը գործառոյթներով եւ յատկութիւններով զատորոշուած բնութիւնների գոյակցութիւն կամ բաղադրութիւն է: Այս երկու մասից կազմուած բաղադրեալ գոյակցութիւնը բնորոշւում է հետեւեալ չորս ժխտական սահմանումներով՝ ἀσυγχύτως, ἀτρέπτως, ἀδιαιρέτως, ἀχωρίστως (անշփոթելի, անփոփոխելի, անբաժանելի, անքակտելի):

Քաղկեդոնի ժողովը Եկեղեցու ողբերգական պառակտման պատճառ դարձաւ: Այն չընդունեցին Ալեքսանդրեան դպրոցը եւ նրա աւանդութեանը հարազատ մի շարք եկեղեցիներ (այդ թւում նաեւ՝ Հայոց Եկեղեցին): Դարեր շարունակ կայսրերի եկեղեցական քաղաքականութիւնը եւ Եկեղեցու ներքին յարաբերութիւնները պտտւում էին մէկ հարցի շուրջ՝ ընդունե՞լ Քաղկեդոնի ժողովը, թէ ոչ: Այս հարցը մասնաւորաբար կայսրութեան ամբողջութեան պահպանման տեսանկիւնից ունէր շատ կարեւոր նշանակութիւն: Եթէ արիոսական վէճերի դարաշրջանում կայսրերը դաւանական վէճերի մէջ էին մտնում ըստ իրենց ցանկութեան, ապա Ե–Ը դդ. կայսրերը գրեթէ ստիպուած կամ ըստ տխուր անհրաժեշտութեան էին ներքաշւում քաղկեդոնական վէճերի մէջ. աստուածաբանութիւնը դարձել էր «պալատական» հոգածութեան առարկայ: «Կայսերական աստուածաբանութեան» անյաջող փորձերից էր նաեւ Միակամեաց վարդապետութիւնը, որը մերժուեց մեր Եկեղեցու կողմից: Քաղկեդոնի ժողովի մերժումը չի կարելի բացատրել միայն քաղաքական պատճառներով եւ աթոռների մրցակցութեամբ: Այս մերժումը նախ եւ առաջ կապուած է աստուածաբանական համակարգերի այլութեամբ, քրիստոսաբանական խոստովանութիւնների անհամընկելիութեամբ, առաքելական աւանդութեան իրարամերժ ընկալմամբ:

Պահպանելով Կիւրեղի հաւատքի խոստովանութիւնը (այսինքն՝ հարազատ մնալով ալեքսանդրեան դպրոցի աւանդութեանը)՝ մեր վարդապետները զգուշանում էին քաղկեդոնական ձեւակերպման վտանգներից: Հայ Եկեղեցու քրիստոսաբանական կառոյցը շատ պարզ է: Այն չունի մտաբանական խճողումներ եւ հաւատքի խորհուրդը մտքի համար դիւրընկալելի դարձնելու հակումներ: Քրիստոս կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ: Աստուածութիւնը եւ մարդկութիւնն անփոփոխելի, անշփոթելի եւ անբաժանելի կերպով միացած են մի բնութեան մէջ: Այս միութիւնն էական եւ բնական միութիւն է եւ միեւնոյն ժամանակ՝ անճառելի եւ անհասանելի՝ մտքի համար: Հայ

Եկեղեցու աստուածաբանությունը մերժում է ցանկացած բաժանություն եւ երկուություն Քրիստոսի մէջ: Մէկ է Քրիստոս՝ մարմնացեալ Բանը. մէկ աստուածմարդկային բնություն, մէկ անձ, մէկ դէմք, մէկ կամք, մէկ ներգործություն: Երկու բնությունների տրոհումը եւ անձով ու դէմքով միաւորումը մեր վարդապետների կողմից դիտարկւում էր որպէս Աստուածամարդու անճառ խորհրդի նսեմացում, հաւատքի հայեցողական խոստովանությունը մտքով ըմբռնելի մեխանիզմի վերածելու փորձ: «Իսկ ժամանակների լրումին,— *գրում է սբ Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսը,*— Աստուծոյ Բանը, Աստուած լինելով, դարձաւ կատարեալ մարդ առանց փոփոխուելու. անձառաբար մարմնացաւ սուրբ Կոյսից՝ չհեռանալով Իր բնութիւնից եւ չքայքայուելով մարմնաւորուելիս, այլ Անփոփոխելին եւ Անայլայլելին եկաւ ու մնաց նոյնը: Աստուած մարմնացաւ ոչ թէ մասամբ, այլ ամբողջութեամբ, ոչ թէ պակասութեամբ, այլ լիութեամբ. [ուստի մարմնաւորուած Բանի մէջ] չկայ երկուութիւն, այլ անբաժանելի միութիւն»[21]:

Անհնար է անաչառ դիտարկել Քաղկեդոնի ժողովն առանց Ալեքսանդրեան եւ Անտիոքեան աստուածաբանական դպրոցների պայքարի առանձնայատկություններն ըմբռնելու: Նեստորի պարտությամբ նսեմացել էր Անտիոքի երբեմնի «փառքը», սակայն շուտով (Ե դարի 40-ական թուականներին) այն վերականգնելու լուրջ նախադրեալներ են ի յայտ գալիս. 440 թ. Հռոմի աթոռին է բարձրանում Լեւոն Ա պապը, 441-ին՝ Անտիոքի աթոռին՝ Դոմնուսը, 446-ին՝ Կ. Պոլսի աթոռին՝ Փլաբիանոսը. բոլորն էլ Անտիոքեան դպրոցի ներկայացուցիչներ: Այս ամէնին նպաստում է նաեւ Կիւրեղ Ալեքսանդրացու մահը (444 թ.). նա, անկասկած, Ե դարի ամենապայծառ աստուածաբանական դէմքն էր: Ալեքսանդրիայի աթոռին է բարձրանում Դիոսկորոսը, որը չէր փայլում իր փառաւոր նախորդի աստուածաբանական հանճարով, այլ աչքի էր ընկնում անհամբերությամբ եւ կոպտությամբ: Վիճակը ծայրաստիճան սրւում եւ անկայուն է դառնում: Շուտով այն խախտւում է յօգուտ անտիոքեան աստուածաբանության՝ շնորհիւ Եւտիքէսի կեղծ վարդապետության: Հռոմի եւ Կ. Պոլսի հովանաւորությամբ՝ Անտիոքը չափազանց բարենպաստ առիթ է ստանում՝ Ալեքսանդրիայի հետ «հաշիւները մաքրելու»: Որոշւում է վերջ տալ «մի բնութիւն Բանին Աս-

---

21 *Գիրք թղթոց, «Թուղթ զոր տէր Յովհաննէս կաթուղիկոս եւ այլ եպիսկոպոսունք....», Թիֆլիս, 1901, էջ 82*

տուծոյ մարմնացելոյ» ալէքսանդրեան «անհանգիստ» բանաձեւին, քանի որ այն շահարկել էին Ապողինարը եւ Եւտիքէսն իրենց հերձուածողական ուսմունքներում: Յամենայն դէպս, Քաղկեդոնի ժողովականները «մէկ բնութիւն» բանաձեւի մէջ, շփոթից եւ մարդաբանական թերացումից բացի, ուրիշ ոչինչ տեսնել չէին ուզում: Նրանք գտնում էին, որ միակ ճիշտ քրիստոսաբանական կառոյցը կարելի է ստեղծել անտիոքեան «երկու բնութիւն» բանաձեւի հիման վրայ: Սակայն անտիոքեան քրիստոսաբանութիւնն ունէր յայտնի թոյլ կողմեր, որոնք ամենայն սրութեամբ երեւան էին եկել Նեստորի քրիստոսաբանական համակարգում (ուշագրաւ է, որ Քաղկեդոնի ժողովը ոչ մի քննադատական խօսք չասաց Նեստորի մասին): Որո՞նք էին Անտիոքեան դպրոցի թոյլ կողմերը, որոնք անընդհատ նշում էր սբ Կիւրեղն իր քննադատական գրուածքներում: Ըստ Անտիոքեան դպրոցի՝ Քրիստոս ունի «երկու բնութիւն», եւ Քրիստոսի մէջ ամէն ինչ որոշակիօրէն բաշխուած եւ բաղդատուած է ըստ աստուածութեան եւ մարդկութեան բնական յատկութիւնների: «Երկու բնութիւնների» ընդունումը սպառնում էր «երկու կենտրոնների» եւ «երկու անձերի» վտանգով: Այս «ճեղքուածքը» յաղթահարելու համար Նեստորը շարժուեց հետեւեալ ճանապարհով. «երկու բնութիւնները» կարող են միաւորուել վերբնութենական կամ միջբնութենական ինչ-որ կապով, որը նա արտայայտեց «միացութեան դէմք» եզրով: Նեստորի մօտ երկու բնութիւններն անձնաւոր եւ ինքնուրոյն են, որոնք, սակայն, միացած են խոնարհման մէջ՝ «միացութեան դէմքով»: Ակնյայտ էր, որ այս արհեստական համակարգում խախտուած է փրկաբանական իդէալը, այսինքն՝ Աստուածամարդու էական եւ գոյաբանական միութիւնը: Նեստորական հերձուածի բացայատումն Ալէքսանդրեան դպրոցի փայլուն նուաճումներից էր:

Քաղկեդոնականները շարժուեցին մէկ այլ ճանապարհով: Նրանք «երկու բնութիւնները» միաւորում են ոչ միայն դէմքով, այլեւ անձով. բնութագրական «դէմքը» ամրապնդւում է գոյաբանական «անձով»: Այսուհանդերձ, դեռեւս այս վիճակով քաղկեդոնական միաւորումը հեռու չէր Նեստորից. տակաւին անորոշ էր միութեան պահը: Եթէ ընդունւում են բնութիւնների անձնականութիւնը եւ ինքնակենտրոնութիւնը, ապա նորից խախտւում է Աստուածամարդու միութիւնը: Այս հարցն այնքան էլ պարզ չէր Քաղկեդոնի ժողովականների համար. այն իր «լուծումը» գտաւ աւելի ուշ՝ Ղեւոնդիոս Բիւզանդա-

ցու, Մաքսիմոս Խոստովանողի, Յովհաննէս Դամասկացու աշխատութիւններում: Ղեւոնդիոս Բիւզանդացին առաջինն էր, որ փորձեց փիլիսոփայական «նորարարութեամբ» հանգուցալուծել քաղկեդոնական միութեան անորոշութիւնը եւ ասել այն, ինչ իբրեւ թէ «ուզում էին ասել» Քաղկեդոնի ժողովականները: Յամենայն դէպս յետագայում Քաղկեդոնի ընդդիմախօսները վիճարկում էին ոչ այնքան ժողովի ընդունած հանգանակը, որքան Ղեւոնդիոսի եւ նրա յաջորդների քրիստոսաբանական հայեացքները: Ըստ Ղեւոնդիոսի՝ բնութիւնը կարող է իրականանալ կամ անձնաւորուել մէկ այլ բնութեան անձով, այսինքն՝ հնարաւոր են մէկ անձով անձնաւորուած եւ կայացած բազմակի բնութիւններ: Սակայն սա ոչ թէ օրինակներով ապացուցուած ընդհանուր փիլիսոփայական դրոյթ է, այլ մէկ դէպքի բացատրաբանութիւն, եւ այդ մէկ դէպքը Աստուծոյ մարդեղութիւնն է: Նա յստակօրէն պնդում էր, որ Բանը մարմնաւորուելիս վերցրել է անանձ մարդկային բնութիւն եւ Իր Անձով անձնաւորել այն: Այսպիսով՝ եթէ Նեստորը երկու անձնաւոր բնութիւնները փորձում էր միաւորել վերբնութենական կամ միջբնութենական կապակցումով, ապա Ղեւոնդիոսի հիմնադրած յետքաղկեդոնական համակարգում մէկ անձնաւոր բնութիւնը սերտաճում է միւս անանձ բնութեան հետ կամ մէկ անձնաւոր բնութիւնն իր անձով անձնաւորում եւ գոյութեան է կոչում միւս բնութեանը:

Բնութիւնների այս արհեստական կապակցումը սուր քննադատութեան է ենթարկւում հայ վարդապետների կողմից: «Բոլորովին անհնար է բնութիւնն առանց դէմքի ճանաչել կամ ասել, ուստի ըստ երկու բնութիւնների դու պէտք է երկու դէմք ասես կամ ըստ մէկ դէմքի ասես եւ մէկ բնութիւն»[22],— *գրում է Խոսրովիկ Թարգմանիչը: Բանն Աստուած սուրբ Կոյսից վերցնում է անձնաւոր եւ դիմաւոր բնութիւնը, եւ ինչպէս խոստովանում ենք մէկ աստուածմարդկային բնութիւն, այնպէս էլ՝ մէկ աստուածմարդկային անձ եւ դէմք:* «Ինչպէս մարդկային բնութիւն, նոյնպէս էլ մարդկային դէմք է առնում Բանը Կոյսից, եւ ինչպէս Բանի դէմքը եւ Նրա մարմնի դէմքը միաւորութեամբ մէկ դէմք են խոստովանում, այնպէս էլ աստուածային եւ մարդկային բնութիւնները պէտք է մէկ դաւանել՝ ըստ անձառ միաւորութեան»[23]: *Եթէ Քրիստոսի մէջ*

---

22 Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899, էջ 10
23 Նոյն, էջ 12

մարդկային բնութիւնն անձ չունի, ապա Քրիստոսի մէջ ոչնչանում է մարդկային անհատականութիւնն ու ինքնութիւնը (մարդաբանական աղէտ), եւ բոլոր մարդիկ, Քրիստոսի մէջ լինելով, խաչւում են Նրա հետ, թաղւում, յարութիւն առնում (առանց անհատականօրէն եւ կամաւոր ընտրութեամբ այդ ամէնին մասնակցելու): «Դու, որ ասում էիր՝ մարդկային դէմք չկայ Քրիստոսի մէջ, ուրեմն ասացիր, որ բոլոր մարդիկ կան Քրիստոսի մէջ... եւ ողջ մարդկութիւնը Յիսուս է. որից հետեւում է՝ կամ բոլորը Քրիստոս են եւ մեռնում են խաչով, եւ կամ ոչ ոք Քրիստոս չէ եւ չի մեռնում, որոնք երկուսն էլ անվայել է [ասել]»[24]: *Եթէ մարդկային բնութիւնը գոյութեան է կոչւում (կայանում է) աստուածային Անձով, ապա մարդկայինը Քրիստոսի մէջ ազատ ու ինքնաշարժ չէ եւ կրաւորապէս ենթարկուած է Աստուածութեանը: Անանձ մարդկային բնութիւնն անգոյ է եւ ընդամէնը տեսական հասկացութիւն է, որը բնորոշում է մարդկութիւնն ընդհանրապէս, եւ եթէ Քրիստոս միաւորուել է անանձ մարդկութեան հետ, ապա Նա որոշակի մարդ չէ, Նրա մարդեղութիւնն ուղղակի մի աստուածային «հրաշք» է, «հնարամտութիւն»: Նման համակարգը յղի է փրկաբանական իդէալի խախտմամբ, քանզի, եթէ Քրիստոս որպէս կատարեալ մարդ չի գործում ազատ եւ ինքնիշխան կերպով, ապա փրկութիւնը դառնում է «գերբնական երեւոյթ» մարդկութեան համար:* «Աստուծոյ Բանը չի վերցրել անգոյ եւ անդէմ մարդկային բնութիւն, այլ մանաւանդ մեր ընդհանուր մարդկային բնութիւնից առանձնացնելով Իրեն է միացրել մարմին՝ բանական անձով, եւ նոյն մարմնով յաղթեց մեղքին, մահուանը, դժոխքին եւ ապականութեանը»[25]: *Մարդկային բնութեան կատարելութիւնը Քրիստոսի մէջ որեւէ կերպ չի վտանգում աստուածմարդկային միութիւնը: Մարմնացեալ Բանը մէկ կատարելութիւն է երկու կատարելութիւնից, եւ որեւէ մէկի կատարելութեան ժխտումը վտանգում է միութեան իսկութիւնը: Մարդեղութիւնը ոչ թէ կցորդութիւն է կամ կապակցում կամ համադրութիւն, այլ էական, բնութենական եւ անձնաւոր միութիւն:* «Բոլոր յաւիտեաններից առաջ Հայր Աստծուց ծնուած եւ Աստուծոյ Որդի, ապա ժամանակին Նոյնը նաեւ ծնուած Մօրից ըստ մարմնի եւ Մարդու Որդի, եւ սակայն ո՛չ երկու որդիներ, այլ միայն մէկ մարմնացած, մարդացած Աստուծոյ Որդի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոս: Նա, Ով Հօրից անժամանակաբար ունէր ընդհանուր բնութիւն եւ

24 Նոյն, էջ 19–20
25 Նոյն, էջ 25

առանձնական ու յատկական դէմք, նոյն Ինքը ըստ ժամանակի նաեւ մարդ դարձաւ բնութեամբ, դէմքով եւ անձնաւորութեամբ: Սակայն այս պատճառով ոչ թէ պէտք է բաժանել Քրիստոսին երկու բնութիւնների կամ Նրան երկու դէմք եւ երկու անձնաւորութիւն ասել, այլ միայն մէկ եւ նոյն մարմնաւորուած Բան Աստուած՝ բնութեամբ, դէմքով եւ անձնաւորութեամբ: Եւ Քրիստոսի մէջ մէկ ասելով ամէն ինչ՝ բնութիւնը, դէմքը եւ անձնաւորութիւնը՝ չեմ ուրանում այն, ինչ ունէր Հօրից, եւ այն, ինչ դարձաւ կամ առաւ մարդկութիւնից՝ բնութիւնը, դէմքը եւ անձնաւորութիւնը»[26]: ***Այսպէս է ուսուցանում նաեւ սբ Յովհաննէս Օձնեցին իր «Ընդդէմ երեւութականների» նշանաւոր ճառում՝ կատարելով կարեւոր շեշտադրումներ.*** «Քանզի [Նա], որ անմարմին Բանն էր Հօրից, մարմին հագաւ սուրբ Կոյս Մարիամից, այսինքն՝ մարդկային բնութիւնից, եւ նոյնը միաւորելով Իր դէմքի եւ բնութեան հետ՝ մի դէմք եւ մի բնութիւն է ասում եւ մարմնով հանդերձ է [ասում]: Հօրից [ծնուած] Բանը ոչ թէ անգոյ եւ կամ առանց մտքի եւ անձի եւ առանց բնութեան վերցրեց մերը կնոջից, այլ ըստ ամենայնի կատարելապէս առնելով՝ միաւորեց Իր կատարելութեանը. եւ այսպէս մի կատարեալ է ասում՝ մի կենդանութիւն եւ դէմք ունենալով: Ոչ միութեան մէջ ուրանում եմ իւրաքանչիւրի կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարւում եմ ասել մի կատարելութիւնը՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ: Այլ ուրեմն մի բնութիւն եւ մի դէմք ունի Քրիստոս, եթէ հարկ է համառօտ ասել, ոչ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ միանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում է Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ, ինչպէս բազում անգամ ասացի, ըստ Բանի անձառ միաւորութեան Իր մարմնի հետ»[27]:

Գ. ԱՆԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դեռեւս Դ դարից, երբ քրիստոնէութիւնը դարձաւ պետական կրօն մի շարք երկրներում եւ Բիւզանդական կայսրութիւնում, պետական ազդեցութեան չարաշահումը հոգեւոր գործերում դարձաւ

26 *Նոյն, էջ 34: Նոյն հատուածը մէջբերում է Եսայի Նչեցին իր դաւանութեան մէջ, ՄՄ ձեռագիր N 614, 31ա:*

27 *Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, «Ընդդէմ երեւութականաց», Վենետիկ, 1833, էջ 51–52*

սպառնալիք: Կայսերական իշխանութիւնն անմիջական եւ որոշիչ մասնակցութիւն էր ցուցաբերում Եկեղեցու ներքին կեանքում: Կայսերական իշխանութեան նմանօրինակ ներթափանցումը Եկեղեցու մէջ ամրապնդուեց եւ «աւանդական» դարձաւ՝ սկսած Քաղկեդոնի ժողովից: Կայսրերը մասնակցում էին եկեղեցական ժողովներին, գրում դաւանական երկեր, արձակում կրօնական պարտադրանքներով լի հրամանագրեր, դաժանօրէն վարւում ընդդիմախօսների հետ:

Այս առումով բացառութիւն չէր Յուստինոս Ա (518–527) կայսրը, որի օրօք նորից բորբոքուեցին հալածանքները Քաղկեդոնի ժողովը մերժողների դէմ: Հալածուողների մէջ էին Հալիկառնասի Յուլիանոս եպիսկոպոսը եւ Անտիոքի Սեւերոս պատրիարքը: Նրանք երկուսն էլ 518-ին աքսորուեցին Ալեքսանդրիա: Ալեքսանդրիայում մի վանական հարց է տալիս Սեւերոսին, թէ Քրիստոսի մարմինը պէտք է համարել անապակա՞ն, թէ՞ ապականացու: Սեւերոսը պատասխանում է. «Ըստ սուրբ հայրերի գրուածքների՝ այն ապականացու է»: Երբ նոյն հարցը տալիս են Յուլիանոսին, նա հակառակ պատասխանն է տալիս. «Ըստ սուրբ հայրերի գրուածքների՝ այն անապական է»: Այստեղից նրանց միջեւ սկիզբ է առնում վիճաբանութիւն Տիրոջ մարմնի անապականութեան շուրջ:

Ապականութիւն (φθορά) կամ անապականութիւն (ἀφθαρσία) եզրերը սոյն վիճաբանութեան մէջ բնորոշում էին ոչ թէ Տիրոջ մարմնի քայքայելի կամ ոչ քայքայելի լինելը (այս առումով բոլորն էլ համաձայն էին, որ Տիրոջ մարմինը ենթակայ չէ մեղքի եւ քայքայման պրոցեսների), այլ Փրկչի մարդկային կիրընդունակութեան ակամայ կամ կամաւոր լինելը: Հարցն այն մասին էր, թէ որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային կրքերը (ἀνθρώπινα πάθη), աւելի ստոյգ՝ այսպէս կոչուած անմեղ կամ անանդոսնելի կամ անպարսաւ կրքերը (ἀδίαβλητα πάθη)՝ տխրութիւնը, երկիւղը, սովը, ծարաւը եւ այլն, որոնք դիտարկւում են որպէս մեղքի հետեւանքային վիճակներ:

Սեւերոսն, անկասկած, Զ դարի խոշորագոյն աստուածաբանն էր եւ հակաքաղկեդոնական պայքարի առաջամարտիկը: Սակայն նրա հայեացքները Տիրոջ մարմնի կիրընդունակութեան վերաբերեալ, ըստ էութեան, շատ մօտ էին քաղկեդոնական պատկերացումներին: Աւելի ստոյգ՝ քաղկեդոնականները, չունենալով որեւէ համակարգուած մօտեցում այս խնդրին, սկզբում դրան նայում էին «կողքից», յետոյ՝ «վերեւից»՝ իբրեւ՝ «միաբնակների» ներ-

քին մի խնդրի, սակայն, ի վերջոյ գիտակցելով խնդրի կարեւորութիւնը, արդիւնքում որդեգրեցին նոյն Սեւերոսի մօտեցումը: Անապականութեան վէճը առաջ էր քաշել կարեւորագոյն փրկաբանական խնդիր. որքանով են մարդկային կրքերը եւ գործերը Քրիստոսի մէջ ազատ: Սեւերոսը պնդում էր, թէ Քրիստոսի մարդկութիւնը Ծնունդից մինչեւ Յարութիւն ապականացու է եւ Նա սովորական մարդկանց պէս ենթակայ է մարմնական կրքերի: Նրա մարդաբանական ջատագովութիւնը, սակայն, յղի էր վտանգներով: Իրականում Յուլիանոսը սկզբում փորձում էր լրացնել Սեւերոսի ուսմունքի ակնյայտ բացերը, սակայն արդիւնքում սկսեց մեղադրել նրան քօղարկուած երկաբնակութեան եւ նոյնիսկ նեստորականութեան մէջ: Սա լցրեց պատրիարքի համբերութեան բաժակը, քանի որ Նրա համար աւելի մեծ վիրաւորանք չէր կարող լինել, քան նեստորականութեան կամ երկաբնակութեան մէջ մեղադրուելը: Սեւերոսն իր հերթին սկսեց մեղադրել Յուլիանոսին քօղարկուած «երեւութականութեան» մէջ: Անշուշտ, պէտք է նշել, որ երկու կողմն էլ ակնյայտօրէն ծայրայեղացնում էին դիմացինի հայեացքների պոտենցիալ վտանգները: Միւս կողմից՝ այս պայքարի դրական արդիւնքն այն էր, որ երկու կողմերի քրիստոսաբանական համակարգերը բաւականին յղկուեցին եւ բիւրեղացան: Սակայն յետագայ դարերում շատ յաճախ Սեւերոսին եւ Յուլիանոսին վերագրել են սխալներ, որոնք մի կողմից բնորոշ էին այս պայքարի սկզբին եւ միւս կողմից՝ նրանց ծայրայեղ հետեւորդներին, որոնք չունէին իրենց ուսուցիչների աստուածաբանական դատողութիւնների նրբութիւնը:

Մեր Եկեղեցու հայրերը կտրականապէս մերժել են «ապականութեան» ուսմունքը: Զ–Ը դդ. սուր պայքար է ծաւալւում «ապականութեան» հետեւորդների դէմ: Ըստ Հայ Եկեղեցու հայրերի՝ Քրիստոսի մարմինը չարչարելի է եւ մահկանացու, սակայն ո՛չ ապականացու (ապականութիւնն այստեղ դիտւում է որպէս մեղքին (մեղանչմանը) զուգակցուած մարմնական վիճակ, որը հակաբնական է, քայքայում է բնութիւնը): Տիրոջ մարմինն անապական է մինչեւ յարութիւն. «Նրա մարմինն ապականութիւն չտեսաւ» [Սաղ. ԺԵ 10, Գործք Բ 31]: Այս է հաստատում Ինքը Տէրը. «Տեսէ՛ք Իմ ձեռքերը եւ ոտքերը, քանզի ես նոյնն եմ» [Ղուկ. ԻԴ 39], այսինքն՝ չփոխուեցի ու չանցայ ապականութիւնից անապականութեան, անփառութիւնից

փառքի, անկատարութիւնից կատարելութեան: Նոյնն է վկայում նաեւ Պողոս առաքեալը. «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» [Եբր. ԺԳ 8]: Եթէ, ըստ Սեւերոսի պնդման, Տիրոջ մարմինն ապականացու էր մինչեւ յարութիւն, ապա վերնատանն աշակերտները չճաշակեցին կենդանարար եւ մեղսաքաւիչ մարմինը, այլ անկատար, անփառ եւ ապականացու մարմին: Բանն Աստուած առաւ ոչ թէ Ադամի նախաստեղծ բնութիւնը, այլ մեր ապականացու բնութիւնը՝ ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին ու միտքը եւ, միաւորելով Իրեն, զատեց մեղքը հոգուց եւ ապականութիւնը՝ մարմնից: Տիրոջ մարմնի աճն ու զարգացումը վկայում են ոչ թէ ապականացու լինելը, այլ՝ ընդհակառակը, քանզի սրանք կատարելագործում են մարմնի զգայական համակարգը, իսկ ապականութիւնը՝ քայքայում: Տիրոջ մարմնի կիրընդունակութիւնը դիտարկելիս մեր հայրերը կրքերը դասակարգում էին հետեւեալ կերպ՝ կամաւոր եւ ակամայ կրքեր, անգոսնելի (մեղանչական, դէպի մեղք տանող) եւ անանգոսնելի (անմեղ) կրքեր: Տէրը կրեց կամաւոր եւ անանգոսնելի կրքերը եւ ոչ թէ ակամաները եւ անգոսնելիները, որոնք հարկադիր են, ծառայական եւ մեղանչական: Սրանով չեն թուլանում Տիրոջ մարդկութեան կատարելութիւնը եւ համագոյութիւնը մեզ հետ, քանզի բանական մարդը կամաւոր կրքերով եւ անմեղութեամբ է մարդ: Այն, ինչ ակամայ է եւ մեղանչական, գործում է ոչ թէ ըստ բնութեան, այլ հակառակ բնութեան եւ բնութեան մէջ օտար եւ ներմուծուած բան է:

Քրիստոս կամաւորապէս եւ ազատ անցնում է մարդկային բնութեան անմեղ կրքերի միջով՝ դատապարտելով նրանցում արմատացած մեղքի զօրութիւնը եւ ազատագրելով մեզ մեղքի ծառայութիւնից: Խոսրովիկ Թարգմանիչը գրում է. «Որպէս մարդ՝ չգիտէր վախճանի օրն ու ժամը, իսկ որպէս ժամանակների Արարիչ՝ ստուգապէս գիտէր, թէ ինչ է այնժամ լինելու. յոգնում էր ուղեգնացութիւնից, սակայն թեթեւօրէն քայլում էր ծովի վրայով... Ցածրագոյնները նշելով՝ բարձագոյնները մի՛ անտեսիր: Խոստովանի՛ր, որ [Քրիստոս] կրել է մարդկայինները, սակայն աւելացրու, որ դա կամօք է կատարել. եւ կամաւոր կրքերը մի՛ հասկացիր որպէս ապականութիւն Նրա մէջ, այլ մարդասիրութեան կարեկցութիւն»[28]: *Խոսրովիկ վարդապետն ուսուցանում է, որ Քրիստոսի մարդկային*

28 *Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 129–130*

կիրընդունակութիւնը փրկական տնօրինութիւն է եւ գերծ է ապականութիւնից: Քրիստոս անապականաբար եւ առանց մեղքի կրում է մեր կրքերը, որպէսզի մեզ ազատի մեղքից եւ ապականութիւնից: Միաժամանակ Փրկչի մարդկային կրքերը ճշմարիտ եւ իրական են, որպէսզի մենք ստանանք փրկութեան ստոյգ եւ հաւաստի հնարաւորութիւն: «Ճշմարտապէս մարդ դարձաւ,— *գրում է Խոսրովիկ վարդապետը,*— սակայն ոչ՝ ապականութեան միջոցով... Տէրն արժանի չհամարեց Իր մարմնի մէջ ընդունել ապականութիւնը եւ մեղքը, որոնք յանցանքից յետոյ յարուցուեցին մեր բնութեան մէջ: Ճշմարտապէս մեռաւ մեր բնական մահով, այսինքն՝ շունչը բաժանուեց մարմնից, մարմինը անշնչացաւ եւ խոնարհուեց անզգայութեան վիճակի մէջ, եւ նոյն անզգայացած մարմնով խափանեց մեր ապականութիւնը գերեզմանում, մարմնից մերկացած շնչով իջաւ դժոխք, կործանեց այն՝ գերելով այնտեղ գերուած հոգիներին, եւ [Իր] մահուամբ սպանեց մահը: Ուստի պէտք է եւ արժան, որ աստուածային սքանչելիքներով զուարճացածները ճշմարիտ համարեն Նրա կամաւոր մահը մեզ համար եւ չդրդուեն ու չընկնեն ապականութեան կարծիքի խորխորատը»[29]:

Մեր Եկեղեցու հայրերը որքան որ խորշում էին Սեւերոսի «ապականութեան» վարդապետութիւնից, նոյնքան էլ զգուշանում էին Յուլիանոսի անապականութեան մէջ քօղարկուած երեւութականութիւնից (դոկետիզմ): Հարկ է նշել, որ Յուլիանոսի գրուածքներում չկայ այն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսում էին նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ-որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երեւութականներ» անունը): Իրականում Յուլիանոսի ուսմունքի մասին ոչ ստոյգ պատկերացումները ձեւաւորուել են հէնց Սեւերոսի քննադատութիւնների հիման վրայ, որոնք ակնյայտօրէն լի էին չափազանցութիւններով: Սակայն, իրաւացիօրէն, Յուլիանոսի ուսմունքը յղի էր որոշակի վտանգներով, որոնք ամենայն սրութեամբ ի յայտ եկան նրա ծայրայեղ հետեւորդների հայեացքներում: Եւ մեր հայրերը վիճում էին ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղ հետեւորդների հետ: Յուլիանոսի անապականութեան համակարգը կապուած է ոչ այնքան նրա աստուածմարդկային միութեան ըմբռնման հետ, որքան ադա-

29 *Նոյն, էջ 174–175*

մական մեղքի նրա պատկերացումների եւ մարդաբանական ենթադրութիւնների հետ: Մարդու նախաստեղծ բնութիւնը Յուլիանոսը համարում է անապական եւ անմահ, այսպէս կոչուած «անդոսնելի կրքերից» ազատ: Մեղանչումն էապէս եւ ժառանգականօրէն վնասում է մարդկային բնութեանը, որը դառնում է տկար, մահկանացու եւ ապականացու... Մարմնաւորման ժամանակ Բանն Աստուած վերցնում է Ադամի նախաստեղծ «անապական» բնութիւնը եւ դառնում Նոր Ադամ: Ուստի Քրիստոս չարչարուեց եւ մեռաւ ոչ թէ «ըստ բնութեան անհրաժեշտութեան» (ἐξ ἀνάγκες φυσικές), այլ կամովին, «ըստ տնօրինութեան» (λόγω ὀικονομίας): Այսուհանդերձ, Քրիստոսի չարչարանքները եւ մահը իրական եւ ճշմարտացի են, ոչ թէ «կարծեօք» կամ «երեւութական»: Սակայն նրանք կատարելապէս ազատ են, որովհետեւ դա «ապականացու» եւ «չարչարելի» մարդու մահ չէ, քանզի նրանցում չկայ (նախաստեղծների անկման հետեւանքով) մեղքի ճակատագրական դատապարտուածութիւնը: Աստուածմարդկային միութիւնը Յուլիանոսի մօտ աւելի համաձուած եւ սերտ է, քան Սեւերոսի մօտ: Քրիստոսի մարմնաւոր կրքերը կատարւում են ոչ թէ «բնութեան անհրաժշտութեամբ», այլ աստուածային «տնօրինական հաճութեամբ»: Ըստ Յուլիանոսի՝ դա չի խախտում Փրկչի մարդկային համագոյութիւնը: Բայց, յամենայն դէպս, նա ակնյայտօրէն թուլացնում է մարդկութեան դերը փրկագործութեան մէջ: Քրիստոսի մէջ մարդկութիւնը կրաւորապէս պայծառակերպւում է: Հէնց այս մարդաբանական «առնուազութեամբ» եւ «կրաւորականութեամբ» էլ խախտւում է հաւասարակշռութիւնը Յուլիանոսի համակարգում: Յուլիանոսի հետեւորդներն աւելի հեռու գնացին. նրանց անուանում էին «աֆտարդոկետներ» (անապական-երեւութականներ) եւ «ֆանտագիստներ». այս անունները լաւագոյնս ցոյց են տալիս նրանց մտածելակերպի մէջ բոյն դրած երեւութականութիւնը: Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներից ոմանց թւում էր, թէ աստուածմարդկային միութեան մէջ պայծառակերպուած եւ աստուածացած մարդկութիւնը չի կարելի անուանել «արարչական». այսպէս առաջացաւ «անարարչականների» աղանդը:

Դ. ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներ (երեւութականներ) յայտնուեցին նաեւ Հայոց աշխարհում: Դատելով նրանց դէմ ծաւալուած պայքարի չափերից՝ «երեւութականութիւնը» բաւականին խոր արմատներ էր գցել մեզ մօտ: «Երեւութականութիւնը» մեր պատմութեան մէջ յիշատակւում է նաեւ «Մայրագոմեցւոյ աղանդ» անունով. սա կապուած է Հայ Եկեղեցու նշանաւոր հայր Յովհան Մայրագոմեցու աշակերտ Սարգիս Մայրագոմեցու անուան հետ: Եկեղեցական աւանդութիւնը Յովհան Մայրագոմեցուն հռչակում է որպէս ուղղափառ վարդապետ, խոստովանող ճգնաւոր եւ երանելի հայր՝ փիլիսոփայ կատարեալ եւ աստուածային Գրոց գիտութեան բանիբուն[30], կատարեալն աստուածային գիտութեամբ[31]: Այս երանելի հօր աշակերտ Սարգիսը, ում, ըստ պատմիչի վկայութեան, «Յովհան ի բաց յիւրմէ հալածեաց», յայտնւում է երեւութական սխալ վարդապետութեան մէջ եւ ապա դառնում երեւութականների պարագլուխ Հայոց աշխարհում: Ինչպէս արդէն նշուեց, «երեւութականութեան» աղբիւրը Փրկչի աստուածմարդկային միութեան ծայրայեղ ընկալումն է, որն էլ յանգեցնում է մարդաբանական վտանգաւոր շեղումների (խախտւում էր փրկաբանական իդէալը): Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու միութիւնը երեւութականութեան հետեւորդները այնքան էին չափազանցնում, որ մարդկայինն Աստուածութեան մէջ ընկղմուած եւ գրեթէ ոչնչացուած էին համարում: Ըստ երեւութականների՝ Քրիստոսի մէջ մարդկայինն իրական չէ, այլ առաչօք, թուացեալ երեւոյթ: Ակնյայտ հոգեհարազատութիւն է զգացւում Ապողինարի, Եւտիքէսի քրիստոսաբանական ընկալումների հետ (մարդաբանական առնուազութիւն): Երեւութականներին թւում էր, թէ Քրիստոս չէր կարող իսկապէս ծարաւել, քաղցել, յոգնել, չարչարուել... Քրիստոս մարմնաւորուել է ոչ թէ Կոյսի՛ց, այլ Կոյսի մէ՛ջ... Աստուածամարդու մարդկութիւնը նրանց համար մի «դիմակ» էր, որով հանդէս էր գալիս Բանն Աստուած:

---

30 *Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղէմ, 1867, էջ 99*

31 *Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ, Փարիզ, 1859, էջ 88*

Մայրագոմեցու հետեւորդների կամ հայ երեւութականների դէմ անգիջում պայքար է ծաւալում Թէոդորոս Քռթենաւոր խարազնազգեստ ճգնաւոր վարդապետը: Այդ պայքարի արդասիքն է նրանից մեզ հասած «Ընդդէմ Մայրագումացւոցն» գրուածքը[32]: *Երեւութականների դէմ պայքարը յաջողութեամբ շարունակւում եւ իր գաղափարական ամբողջականութեանն է հասնում Քռթենաւորի աշակերտ սբ Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի կաթողիկոսի եւ մեծ գիտնական վարդապետ Խոսրովիկ Թարգմանչի գրուածքներում: Նկատի ունենալով Խոսրովիկ Թարգմանչի եւ Յովհաննէս Օձնեցու յայտնի ընդհանրութիւնները երեւութականների քննադատութեան գործում՝ երեւութականութեան հերձուածի բացայայտման համար հետեւենք Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» աշխատութեանը: Ըստ Օձնեցու՝ նրանց քրիստոսաբանական սխալ ընկալումների աղբիւրը «մէկ բնութիւն» ձեւակերպման ծայրայեղ ըմբռնման եւ «երկու բնութիւն» ասելը ծայրայեղօրէն ժխտելու մէջ է: Օձնեցին, բացայայտելով «մէկ բնութիւն» խոստովանութեան ներքին դինամիզմը, ցոյց է տալիս, որ Քրիստոս «մէկ բնութիւն» ունի ո՛չ թէ ըստ մարդկային եւ աստուածային բնութիւնների նոյնութեան կամ նրանց շփոթման, ո՛չ թէ ըստ դրանց՝ միմեանց բացառման կամ իրարից բաժանման, այլ ըստ կատարեալ աստուածութեան եւ կատարեալ մարդկութեան անճառ եւ անպարիմանալի միութեան: «Մէկ» ասելով՝ ոչ թէ պէտք է բացառել որեւէ մէկը կամ դրանք իրար հետ շփոթել, այլ անայլայլ պահել դրանց ամբողջականութիւնը՝ յիշելով, որ Քրիստոս «երկուսից» է:*«Քանզի բոլոր քրիստոսասէրների մտքի աչքերը,— *գրում է սբ Յովհաննէս Օձնեցին,*— լուսաւորուած են սրա վերաբերեալ, որ մարմնի եւ Բանի բնութիւնը մէկ է ոչ ըստ բնութեան նոյնութեան, որովհետեւ երկուսն էլ մարդկային կամ երկուսն էլ աստուածային չեն: Մարմինը երկնքից իջած չէ, ինչպէս առաջին Եւտիքէսն էր ցնորաբանում, ոչ էլ Բանն Աստուած սկիզբ է առել Մարիամից, ինչպէս Փոտինոսին էր թւում, այլ անեղ Բանը, ի բնէ անեղ Հօրից իջնելով, արարչական մարմին առաւ Կոյսի արգանդից: Ուրեմն՝ մէկ բնութիւն է՝ ոչ ըստ բնութեան նոյնութեան, քանզի թէեւ ասում ենք՝ մէկ է բնութիւնը մարմնացեալ Բանի, սակայն ո՛չ այդպիսի խելայեղ եւ ստայօդ իմաստով, իբրեւ թէ մէկը միւսի կողմից ջնջուած է կամ հեղուկների պէս լուծուած են իրար մէջ,

32 *Թէոդորոս Քռթենաւոր, Ընդդէմ Մայրագումացւոյն. տես Յովհաննու Իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ 1833, էջ 150:*

ինչից եւ ոչ մի բնութիւն չի լինում: Այլ առանց թողնելու այն, ինչ էր, դարձաւ այն, ինչ չէր: Այսպէս յայտնի դարձաւ Բարձրագոյնի խոնարհութիւնը. մնալով [Իր] բարձրութեան վրայ՝ Նոյն Ինքը խոնարհութեան մէջ յայտնուեց...»[33]: ***Աստուածմարդկային անճառելի միութեան վերաբերեալ Օձնեցու խորհրդածութիւններն ունեն բացառիկ խորութիւն: Քրիստոսի մէջ բնութիւնների միութիւնը եւ զանազանութիւնը չեն բացառում միմեանց, այլ գործում են միաժամանակ. պէտք է միութեան մէջ տեսնել զանազանութիւնը եւ զանազանութիւնից միտքն անընդհատ բարձրացնել դէպի միութիւն:*** «Ապա ուրեմն Քրիստոս մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի,— շարունակում է նա,— եթէ հարկ է աւելի համառօտ ասել, ոչ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ, ինչպէս բազում անգամ ասացի, ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անձառ միաւորութեան...«Մէկ» ասելով՝ չխեղաթիւրենք՝ խցանելով բնութիւնների աղբիւրները, եւ «երկու» ասելով՝ չկամենանք պատռել միաւորութեան պատմուճանը, այլ գիտենալով բարեպաշտաբար մօտենալ երկուսին էլ՝ միութեամբ ճանաչենք բնութիւնները եւ բնութիւններից գնանք դէպի միաւորութիւն»[34]:

Օձնեցին երեւութականներին քննադատում է սուր հեգնանքով՝ վեր հանելով նրանց մակերեսային եւ աղճատ ընկալումները Քրիստոսի փրկական տնօրինութեան վերաբերեալ: «Դարձեալ, փախչելով սնոտի երկիւղից,— *ասում է նա,*— աւելի մեծ չարիքի մէջ ես ընկնում: Եթէ չես կամենում «մէկը» ասել «երկուսից» ըստ բնութեան, ապա շատ աւելի չարաչար կերպով ըստ բնութեան ասած կը լինես «մէկ բնութիւնը»: Սակայն Բանի անմարմին աստուածային բնութիւնը, մարմնեղէն բնութիւն ընդունելով Կոյսից, միաւորեց Իրեն, որ ըստ բնութեան երկուսից է՝ աստուածային եւ մարդկային, իսկ ըստ միաւորութեան մէկ է: Քանզի եթէ հաւատքի այս երկու գեղեցիկ ոտքերի վրայ կանգնելով չհաստատուես ճշմարտութեան մէջ, դրանցից որ մէկին էլ յենուես, կաղ կը լինես ճշմարիտ խոստովանութեան մէջ, այլ [պէտք է] երկուսն ըստ իւրաքանչիւրի [յատկութեան] կատարեալ ընդունել եւ ըստ միաւորութեան՝ մէկ կատարեալ, մէկ դէմք եւ մէկ Որդի Աստուծոյ խոստովանել,

---

33 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, «Ընդդէմ երեւութականաց», էջ 50

34 Նոյն, էջ 52

ինչպէս սուրբ Բարսեղն է ասում. «Երկու կատարեալ գոյացութիւնների միաւորութիւն»[35]:

Երեւութականութիւնն ըստ էութեան Քրիստոսի մարդեղութեան ժխտումն էր, որի ակունքը «մէկ բնութիւն» բանաձեւի չարաշահումն էր: Օձնեցին ուսուցանում է, որ Քրիստոս «մէկ» է եւ «երկուսից» է. սակայն հաւատքի խոստովանութեան մէջ պէտք է պահպանել դաւանական սթափութիւնը եւ հաւասարակշռութիւնը: «Իսկ դու, որ ասում ես. «Բանը, որ Հօրից էր, ճշմարտապէս մարդ դարձաւ մարդկանցից», ինչո՞ւ ես վարանում դաւանել մարդկային բնութիւնը Քրիստոսի մէջ եւ ծոմուում խօսքերիդ մէջ՝ ցատկոտելով մի սնոտի մտածութիւնից միւսը: Վախենում ես ասել «երկու բնութիւն». մեծ երկիւղ կայ նաեւ, երբ Քրիստոսի «մէկ բնութիւնը» արժանավայել կերպով չի խոստովանւում: Իսկ եթէ ստուգութեամբ եւ բարեպաշտօրէն հասկանաս երկուսն էլ, ոչ մի արգելք չկայ՝ «մէկն» ասելով՝ յիշելու նաեւ «երկուսիցը», եւ դարձեալ՝ «երկուսիցը» չմոռանալով՝ խոստովանելու նաեւ «մէկը»»[36]: *Երեւութականների մոլորութիւնների հիմքը նրանց մարդաբանական պատկերացումներն էին կամ, աւելի ստոյգ, համակարգուած մարդաբանութեան բացակայութիւնը: Պատահական չէ, որ ի վերջոյ նրանք սկսեցին ժխտել Քրիստոսի մարդկութեան ճշմարիտ լինելը, ինչպէս վաղ շրջանի գնոստիկական ուսմունքների հետեւորդները:* «Որ յոյժ պնդում ես «մէկ բնութիւնը»,— *շարունակում է Օձնեցին,*— սակայն ասածիդ իմաստը յանգում է վաղենտիանոսականների եւ մանիքէականների զառանցանքներին, իսկ երբ ասում է «երկու բնութիւններից», ոչ միայն լսել չես կարողանում, այլեւ աւելի վատթար մի օրինակ ես բերում. ինչպիսին քո աստուածխօսութիւնն է, այնպիսին եւ քո օրինակն է: Եւ վախենալով, թէ միգուցէ ստիպուած լինես ասելու, որ Փրկչի մարմինը մեր՝ մարդկային բնութիւնից է, առհասարակ բոլոր էակներից մերժեցիր բնութեան անունը՝ ասելով. «Բնութիւն է կոչւում միայն աստուածայինը, որը եւ նրանից ստեղծուած բոլոր արարածների բնութիւնն է»: Որպէսզի, ըստ քեզ, գոնէ երկուսից մէկը յարմարուի. կամ Արարչին դասել արարածների հետ, որն անաստուածութիւն է, կամ աստուածութիւն վերագրել արարածներին, որը բազմաստուածութիւն է, եւ երկուսն էլ անաստուածութիւն են: Այս է քո պանծալի «աստուածաբանութիւնը», բայց մանաւանդ՝ յիմարու-

35 *Նոյն, էջ 54–55*
36 *Նոյն, էջ 56*

թեանդ ապացոյցը, որ նիւթը կոչում ես յաւերժակից արարչական զօրութեանը եւ ո՛չ թէ Աստծուց ստեղծուած խոստովանում»[37]:

Սբ Յովհաննէս Օձնեցին անընդհատ անդրադառնում է Քրիստոսի մարդկային կիրընդունակութեան փրկական իսկութեանը: Քրիստոս կատարեալ մարդ է… Նա կամովին յանձն է առնում կրել մեր մարդկային կրքերն ու կարիքները, սակայն ո՛չ ըստ Աստուածութեան, ինչպէս պնդում էին երեւութականները: «Արդ՝ քանի որ տեսանք, որ մեր հոգու եւ մարմնի կրքերը ո՛չ մեղք են, ո՛չ էլ ապականութիւն, այլ մեր մարդկային բնութեանը պատշաճող որոշակի որակներ ու յատկութիւններ, [ուրեմն] մի՞թէ զարմանալի է, որ Փրկիչը նոյնպէս, երբ ապրում էր մարդկանց մէջ, գործադրեց դրանք, որտեղ, երբ եւ որքան կամեցաւ՝ ոչ ինչ-որ օտար կամ ստուերակերպ եղանակով, այլ ճշմարտութեամբ եւ մեր իսկ բնաւորական [կրքերը] գործադրելով ու թոյլ տալով, որ մարմինը կրի իրենը»[38]: ***Մարմնաւորուելիս Քրիստոս չի լուծարում մարմնի օրէնքը, այլ ճշմարիտ մարդկութիւն է միացնում Իրեն՝ գատելով մարմինը մեղքի եւ ապականութեան օրէնքից: Ուրեմն Աստուած ճշմարտապէս մտնում է մարդկային բնութեան տկար օրէնքի մէջ, սակայն ո՛չ մեղքի օրէնքի մէջ, որպէսզի մեզ ազատի մեղքից ու ապականութիւնից եւ բարձրացնի դէպի հոգու օրէնքը: Աստուած կարող էր հրաշքով կրել մարդկային կրքերը, սակայն այդ դէպքում փրկութիւնը մեզ համար կը դառնար անհասանելի հրաշք:*** «Ապա ուրեմն՝ ըստ մեզանից վերցրած Իր մարմնի օրէնքի՛ կրեց մեր կրքերը եւ ոչ թէ ըստ Աստուածութեան, ինչպէս դու ես կարծում: Քանզի եթէ հնարաւոր լինէր, որ Քրիստոս ըստ Աստուածութեան կրէր մարդկային կրքերը, ապա թերեւս մարմին չէր առնի Կոյսից, [այսինքն]՝ մեր բնութիւնից, այլ կը շարունակէր նախահայրերին յայտնուելու նոյն երեւութական կերպը, ինչպէս կերաւ Աբրահամի մօտ [Ծնն. ԺԸ 8], մարտնչեց Յակոբի հետ [Ծնն. ԼԲ 24], անգիտաբար հարցրեց Ադամին ու Կայէնին [Ծնն. Դ 9]: Իսկ եթէ դրանք ճշմարտութեան նմանութիւն ու օրինակ էին, եւ Սա նոյն ինքը ճշմարտութիւնն է եւ ոչ թէ օրինակը, ապա ուրեմն պարզ է, որ ճշմարտութիւն էին եւ՛ երեւումը, եւ՛ երեւածը, եւ՛ կրելը, եւ՛ կիրքը: Արդ՝ ինչպէս որ իրողութիւն էր կնոջից ծնուելը, այդպէս էլ իրողութիւն էին Նրա ներգործութիւնները եւ կրքերը: Եւ ինչպէս Բանի մարմինը ուրիշ մէկից չձանաչեցինք, այլ Կոյսից, այսինքն՝ մարդկային [բնութեան] զանգուածից, այդպէս էլ Քրիստոս ըստ

37 Նոյն, էջ 65
38 Նոյն, էջ 70–71

մե՛զ կրեց մեր իսկ մարդկային կրքերը եւ ո՛չ թէ ըստ Աստուածութեան կամ այլ կերպ...»[39]: *Մարդկային ազատութիւնը Քրիստոսի մէջ մեր փրկութեան հիմքն է: Որպէս Աստուծոյ պատկերով եւ ինքնիշխան կամքով օժտուած արարած՝ մարդը պէտք է հնարաւորութիւն ստանար ազատօրէն ընտրելու փրկութեան ճանապարհը:* «Այստեղից պարզ է,— *գրում է սբ Յովհաննէս հայրապետը,*— որ երբ կամեցաւ, ինքնիշխան կամքով թոյլ տուեց, որ բնական կրքերից իւրաքանչիւրը ճշմարտապէս եւ անապականաբար ներգործի իր մարմնի ու հոգու վրայ, ոչ թէ սոսկ անուամբ եւ նմանութեամբ, այլ առաւելապէս՝ ըստ էութեան, որից է նաեւ անունը, համբերելով դրանցից իւրաքանչիւրի մէջ, եւ այս պատճառով է ասում, որ ընդունեց մեր կրքերը: Այլեւ ըստ մեզ [կրեց], եթէ շատ չես գայթակղուի խօսքիցս՝ խորհելով ապականութեան մասին, քանզի ես ասում եմ, որ Քրիստոս յանձն առաւ բնական կրքերը, իսկ դու ներմուծում ես անբնականը, որն ապականութիւն է եւ փոփոխելիութիւն: Սոսկ մարդ չէր, բայց լոկ Աստուած էլ չէր, այլ մանաւանդ՝ եւ Աստուած, եւ մարդ էր միաժամանակ: Տէրն Իր մէջ ցոյց տուեց այն, ինչն ըստ մեզ է, եւ այն, ինչն ըստ մեզ չէ. քաղցեց ըստ մեզ եւ քաղցելով ոչ ըստ մեզ՝ տարաւ մեզ դէպի երկնային բարիքների վայելումը: Եթէ սոսկ մարդ էր, կրելով չէր կարող նաեւ ներգործել, եւ եթէ սոսկ Աստուած էր, ներգործելով հանդերձ չէր կարող կրել: Սակայն, արդ, միաժամանակ լինելով երկուսն էլ՝ կրեց մեր տկարութիւնները եւ ըստ մեզ եղաւ, իսկ մենք Նրա զօրութեան հետ միաւորուեցինք եւ ըստ Նրա եղանք»[40]:

* * *

Ը դարը հայ քրիստոսաբանական մտքի ամբողջացման եւ բիւրեղացման ժամանակաշրջանն էր: Աստուածաբանական մտքի ասպարէզ էին իջել այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք էին Յովհաննէս Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչը, Ստեփանոս Սիւնեցին... Եւ ահա տեղի ունեցաւ այն իրադարձութիւնը, որը պէտք է ամբողջացնէր եւ վերջնական տեսքի հասցնէր Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը. դա Մանազկերտի ժողովն էր (726 թ.):

39 Նոյն, էջ 70–71
40 Նոյն, էջ 73–74

Մեզ են հասել Մանազկերտի ժողովի նզովքները[41]***, որոնք խտացրած կերպով եզրագծում են մեր Եկեղեցու քրիստոսաբանական կառույցը: Նզովքների ձեւակերպումներում, անշուշտ, զգացւում է Օձնեցու եւ Խոսրովիկի շունչը. չէ՞ որ նրանք էին Մանազկերտի ժողովի գլխաւոր դէմքերը: Ահա՛ այդ նզովքները:***

Ա. Եթէ մէկը չի խոստովանում, որ Սուրբ Երրորդութիւնը մէկ բնութիւն է եւ մէկ Աստուածութիւն՝ երեք կատարեալ եւ հաւասար դէմքերով ու անձնաւորութիւններով, նզովուա՛ծ լինի:

Բ. Եթէ մէկը չի խոստովանում, որ Բանն Աստուած ճշմարտապէս մարմնացել է սբ Կոյսից, այսինքն՝ նրանից վերցրել է մեր բնութիւնը՝ հոգին, մարմինը եւ միտքը՝ առանց ապականութեան, եւ ասի, թէ կարծեօք եւ նմանութեամբ է երեւացել Քրիստոս, նզովուա՛ծ լինի:

Գ. Եթէ մէկն ասի, որ Բանն Աստուած մարմին է առել ոչ թէ մեր մեղանչական եւ մահկանացու բնութիւնից, այլ անմեղ, անմահ եւ անապական բնութիւնից, որ ունէր նախաստեղծը նախքան մեղանչելը, նզովուա՛ծ լինի:

Դ. Եթէ մէկը չի խոստովանում, որ մարմնաւորուած Բանն ըստ աստուածային անաճառ միաւորութեան մէկ բնութիւն է՝ Աստուածութիւնից եւ մարդկութիւնից, այլ ասի, թէ մէկ բնութիւն է ըստ բնութեան կամ ըստ շփոթութեան եւ ըստ փոփոխման, նզովուա՛ծ լինի:

Ե. Եթէ մէկը չխոստովանի մէկ եւ նոյն [Քրիստոսին] Աստուած եւ մարդ միաժամանակ, այլ ասի, թէ մէկն Աստուած է, միւսը՝ մարդ, նզովուա՛ծ լինի:

Զ. Եթէ մէկը չասի, որ Քրիստոսի՝ Կոյսից վերցրած մարմինը անապական է ծնունդից մինչեւ յաւիտեան՝ ոչ թէ ըստ բնութեան, այլ ըստ անաճառ միաւորութեան, այլ ասի, թէ մինչեւ յարութիւնը ապականացու, անփառաւոր ու անկատար է եւ ապա յարութիւնից յետոյ դարձաւ անապական, փառաւոր եւ կատարեալ, նզովուա՛ծ լինի:

Է. Եթէ մէկը չասի, որ Տերունական մարմինը չարչարելի ու մահկանացու է՝ ըստ բնութեան, եւ անչարչարելի ու անմահ՝ ըստ Բանի Աստուածութեան հետ միաւորութեան, այլ ասի, թէ ըստ բնութեան է անչարչարելի ու անմահ եւ կամ ըստ անաճառ միաւորութեան է չարչարելի եւ մահկանացու, նզովուա՛ծ լինի:

Ը. Եթէ մէկն ասի, թէ Քրիստոս ոչ թէ մարմնով է կրել բոլոր մարդկային կրքերը առանց մեղքի, այլ ըստ Աստուածութեան է մտել մարդկային կրքերի

---

41 Տես Գարեգին վարդապետ Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899. Նախաբան, էջ 77–79:

տակ կամ ըստ տնօրէնութեան անհաղորդ է եղել Նա մարդկային կրքերին, նզովուած լինի։

Թ. Եթէ մէկը չխոստովանի, որ անձառ տնօրէնութիւնից յետոյ Քրիստոս ճշմարիտ Աստուած է՝ հաւասար Հօրը եւ Հոգուն, նոյնպէս եւ կատարեալ եւ ճշմարիտ մարդ է՝ հաւասար Մօրը եւ մեզ՝ բացի մեղքից, նզովուած լինի։

Ժ. Եթէ մէկը չխոստովանի, որ Քրիստոս անապականաբար, [այսինքն]՝ կամովին է կրել բոլոր մարդկային կրքերը, այլ ասի, թէ ապականութեամբ է կրել դրանք կամ կրքերն ինքնին ապականութիւն համարի Նրա մէջ եւ չխոստովանի ըստ առաքեալների, մարգարէների եւ ուղղափառ վարդապետների խոստովանութեան, նզովուած լինի։

Քրիստոս կատարեալ մարդ է. ոչ թէ առաջօք եւ նմանութեամբ է երեւացել մարդկանց. Նա սուրբ Կոյսից առանց ապականութեան եւ մեղքի վերցրել է մարդկային բնութեան ամբողջականութիւնը՝ հոգին, միտքը եւ մարմինը։ Երկրորդ նզովքով մերժւում է մարդաբանական ցանկացած անկատարութիւն, վերացականութիւն եւ վնասուածութիւն (այսինքն՝ մեղքի եւ ապականութեան առկայութիւն)։ Քրիստոս անճառ տնօրէնութիւնից յետոյ կատարեալ Աստուած է (համագոյ է Հօրը եւ Սուրբ Հոգուն) եւ կատարեալ մարդ է (համագոյ է մեզ՝ մարդկանց)՝ ամէն ինչում հաւասար մեզ՝ բացի մեղքից (Թ նգ.)։

Մարմնացեալ Բանն ունի մի աստուածմարդկային բնութիւն՝ ըստ աստուածային եւ մարդկային բնութիւնների անճառ միաւորութեան՝ անբաժանելի, անփոփոխելի եւ անշփոթելի (Դ նգ.)։ Մի է Քրիստոս, եւ անընդունելի է բնութիւնների, անձերի, կամքերի, ներգործութիւնների որեւէ ածանցում կամ բաշխում կամ թերացում Քրիստոսի մէջ (Ե նգ.)։

Բանն Աստուած մարմին է առել մեր մահկանացու եւ մեղանչական բնութիւնից, ոչ թէ նախաստեղծի անմահ եւ անապական բնութիւնից (ինչպէս ասում էր Յուլիանոսը) (Գ նգ.), այսուհանդերձ, Քրիստոսի մարմինն անապական է, ոչ թէ ըստ բնութեան, այլ ըստ անճառ միաւորութեան (Զ նգ.)։ Այսպիսով՝ Տերունական մարմինը չարչարելի եւ մահկանացու է ըստ բնութեան եւ անչարչարելի ու անմահ՝ ըստ միաւորութեան (Է նգ.), Քրիստոս ճշմարտապէս եւ ազատօրէն կրում է բոլոր մարդկային կրքերը՝ բացի մեղքից (Ը նգ.). կրքերը Նա կրում է կամովին եւ անապականաբար եւ հետեւաբար՝ բնականօրէն եւ ոչ թէ հակաբնական եւ ակամայ կերպով (Ժ նգ.)։

* * *

Քրիստոսաբանութիւնն իմաստասիրական ձեւակերպումների համակարգ չէ, այլ բացայայտումն է մարդկութեան մէջ բնաւորուած քրիստոսաբանական իդէալի, որն ըստ էութեան փրկաբանական է... Իւրաքանչիւր ժողովուրդ իր մէջ կրում է Քրիստոսի՝ իրեն իւրայատուկ քրիստոսաբանական տիպը՝ որպէս փրկութեան եւ աստուածացման ներքին հնարաւորութիւն. որքանով մաքուր եւ առաքելական աւանդութեանը հարազատ է տուեալ ժողովրդի դաւանութիւնը, այնքանով էլ անաղարտ է նրա քրիստոսաբանական իդէալը:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Տփխիս, 1900

Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեայց Եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892

Կնիք հաւատոյ, Սբ Էջմիածին, 1914

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Պէյրութ, 1959

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Սբ Էջմիածին, 1908

Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833

Գարեգին վարդապետ Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899

Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914

Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ.Պոլիս, 1729

Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տփխիս, 1909

Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք, Սբ Էջմիածին, 1894

Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երեւան, 1989

Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899

Մաշտոց՝ յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս հայոց՝ ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյ Հայոց, Վաղարշապատ, 1905

Ժամագիրք Հայաստանեայց Սբ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1903

Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղէմ, 1867

Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ, Փարիզ, 1859

Սկզբնագիրք տումարի ս. Լեւոնի. աշխատութեամբ աշակերտաց Մխիթարայ Աբբահօր, Վենետիկ, 1905

G. V. Florovsky. *Byzantine Fathers of the V–VII [Centuries].*

The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite. Edited by Robert W. Thomson. Lovanii, 1987.

J-P. Migne. *Patrologiae Cursus Completus*. Series Graeca. T.t. 86, 86 bis, 89

Aloys Grillmeier SJ, *Christ in Christian Tradition*, Volume 2, Part 2, London, 1995

М. Э. Поснов, История Христианской Церкви, Брюссель, 1964

Вл. Лосский, Богословские труды, т. 8, Очерк Мистического Богословия Восточной Церкви, Москва, 1972

Вл. Лосский, Богословские труды, т. 8, Догматическое Богословие, Москва, 1972

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՏՔ

Աստուածճանաչողութեան անկման հետեւանքով հոգեւոր ժառանգութեան մի շարք կարեւոր ոլորտներ ենթարկւում են վտանգաւոր աղաւաղումների եւ առժամանակեայ, անպատշաճ բնորոշումների: Այդպիսի ոլորտներից է եկեղեցական ծէսը[1]*: Արդի իրականութեան մէջ ծէսը գրեթէ կորցնում է իր բուն փրկաբանական նշանակութիւնը, մեր ծիսական ըմբռնումները դառնում են խիստ կրաւորական (passive) եւ պատահմունքային, ծէսի «տպաւորիչ» եւ «անհասկանալի» արարողականութիւնը տեղի է տալիս հակասական զգացողութիւնների: Ծէսի ներքին զօրութիւնը, տպաւորականութիւնը, խորհրդաւոր անըմբռնելիութիւնը, բարձր նշանականութիւնը (սիմվոլիզմ) անկենդան մակերեսային հաւատքի դէպքում առիթ են դառնում զանազան խաբուսիկ ներգործութիւնների, իսկ հաւատքի բացակայութեան դէպքում՝ բազմապլիսի վաղակարծ եզրայանգումների: Եկեղեցին մշտապէս մերժել է նմանօրինակ արտաքին, օտար մօտեցումները ծէսին՝ բացայայտելով նրա շնորհական-խորհրդական էութիւնը եւ փրկաբանական ուղղորդուածութիւնը*[2]*, որն արգասաւորւում է կենդանի հաւատք ունեցող հոգիներում:*

---

1 Ծէս ենք անուանում Եկեղեցու արարողութիւնների ամբողջութիւնը՝ խորհուրդներ, բարեպաշտական արարողութիւններ, ժամերգութիւն:

2 Ըստ սբ Դիոնեսիոս Արիսպագացու՝ քահանայապետական կարգը երկնային քահանայապետութեան արտապատկերն է մարդկային բնութեան վրայ եւ աստուածային բարերարութեամբ հաստատուած է «առ փրկութիւն եւ առ ի յաստուածանալ ամենայն բանականաց եւ իմանալեաց էութեանց» (տես սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite; edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, *էջ 58):*

Ծէսի ճիշտ ըմբռնումը պահանջում է թէ՛ դաւանական մաքրութիւն եւ թէ՛ ներանձնական աստուածպաշտութեան արթնութիւն, որոնց առկայութեան դէպքում կարելի է կենդանի կերպով առնչուել ծէսի վերին, երկնային իրականութեանը: Ծէսն այն ասպարէզն է, ուր հոգեւոր ժառանգութեան տեսական եւ գործնական սկզբունքները ներդաշնակւում են փրկութեան համար անհրաժեշտ ծաւալումներով եւ խտութեամբ: Տեսականի եւ բարոյականի այս ծիսական առնչումն արտայայտուած է աստուածաբանութեան մէջ ընդունուած եռակարգութեամբ՝ տեսական կամ դաւանական, բարոյական կամ գործնական, ծիսական կամ աստուածպաշտական:

Ծէսի ծալքերում անթեղուած աստուածաբանական իմաստների բացայայտումը յատկապէս կարեւոր է մեր օրերի համար: Եթէ մի ժամանակ ծէսի շնորհական իւրացումը զուգակցւում էր հայրերի հոգեշունչ բացատրութիւններով, վարդապետական գրուածքներով, ապա մեր օրերում թէ՛ շնորհի նուազումը, թէ՛ վարդապետական խօսքի սակաւութիւնը, թէ՛ հայրերի գրուածքներին անտեղեակ լինելը յանգեցնում են ուղղակի ծիսաբանական աղէտի:

Ծիսականը պէտք է ուղեկցուի անհրաժեշտ աստուածաբանական զուգակշռով, այլապէս ծէսը վերածւում է թատերական անախրոնիզմի կամ անհոգի պարտադրանքի՝ կորցնելով իր փրկական նշանակութիւնը. խօսքը վերաբերում է թէ՛ անհարկի ճոխացումներին եւ օտար, խորթ տարրերի ներմուծմանը, թէ՛ յանդուգն, կոպիտ կրճատումներին: Ծէսն իր էութեամբ անկրճատելի է, քանզի ծէսի իւրաքանչիւր տարր հոգեւոր օրինաչափութեան արտայայտութիւն է:

Աստուծոյ գոյութեան անդրանցականութիւնը, իմանալի եւ զգալի աշխարհների ոչ միարժէք հայեցացումը, աստուածգիտութեան շնորհական բնոյթն ինքնին ակնարկում են աստուածպաշտութեան որոշակի զգայական-նշանական ծիսականութիւն: Ծէսն արարչագիր է, «քանզի էութիւն մերոյս քահանայապետութեան է աստուածաւանդն ասացեալք»[3]*: Այն ունի իր հինկտակարանեան զարգացման ստուերակերպ ընթացքը, սակայն իր տնօրինական ամբողջութեանն ու կատարելութեանն է հասնում Բան Աստուծոյ մարմնաւորումով. Քրիստոսի մարդեղութիւնը ծէսի սրբազան հիմքն է. «Առէ՛ք, կերա՛յք, այս է Մարմին Իմ...» [Մատթ. ԻԶ 26]:*

---

3 *Սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 58*

Ծէսը խորհրդական հանդիպում է Աստուծոյ հետ... Այդ հանդիպմանը պէտք է նախապատրաստուել, այլապէս Աստուծոյ սրբարար զօրութիւնը, որ սրբացնում եւ կատարեալ է դարձնում մարդուն, կարող է դատապարտել [տես Մատթ. ԻԲ 11–14]: Առանձնական նախապատրաստութիւնը ծէսի շնորհական իւրացման նախադրեալն է: Ծէսը հեռու է ամէն տեսակ մոգականութիւնից եւ ճակատագրական անխուսափելիութիւնից. ընդհակառակը՝ նրա փրկաբանական զօրութիւնը գործում է կամքի ազատութեանը ներդաշնակ: Սակայն որոշակի անդէպ, կեղակարծ հոգեվիճակներում ծէսի զօրութիւնը, տպաւորութիւնը, վայելչութիւնը կարող են կարծուել մոգական ներգործութիւններ, ինչը խորապէս բացասում է եկեղեցական ծէսի էութիւնը:

Երկնային վայելչութիւնը ներյատուկ է ծէսին. աստուածային իրականութեան անիմանալի գեղեցկութիւնը, սուրբերի ժառանգութեան յարազուարճ բերկրանքը, իմանալի զուարթունների վեհութիւնը խորապէս ներթափանցուած են եկեղեցական արարողութեան մէջ: Ուստի ծէսի ժամանակ մեր հոգին տպաւորւում է երկնայինով՝ թօթափուելով աշխարհիկ, մեղսահակ տպաւորութիւններից: Մեր հոգու բոլոր զօրութիւնները համակւում են աղօթական զուարթութեամբ եւ երկնային սիրոյ բաղձանքով, մեր մտքի շարժումները՝ աստուածային երկիւղով եւ շնորհական ուշադրութեամբ: Մեր զգայարանները կնքւում են աստուածային տպաւորութիւններով. տեսողութիւնը՝ սրբազան արարողութեան վայելչութեամբ, լսողութիւնն՝ աղօթքով, սաղմոսներով եւ երաժշտութեամբ, հոտոտելիքը՝ խունկի բուրմունքով, շօշափելիքը՝ խաչ, Աւետարան, սրբութիւններ համբուրելով, ճաշակելիքը՝ կենդանարար Հաղորդութեան ճաշակմամբ:

Յաղթանակած եւ մարտնչող Եկեղեցիները կենդանի մասնակիցներն են ծիսական իրականութեան, որը մեծ հոգեկան զգուշութիւն եւ զգաստութիւն է պահանջում ծէսի իւրաքանչիւր երկրաւոր մասնակցից եւ յատկապէս սպասաւորող հոգեւորականից: Վերջինիս սրբակենցաղութիւնը եւ աստուածսիրութիւնը ծէսի շնորհառատութեան նախապայմանն են. առհասարակ, ծիսական նոմինալիզմը (ըստ որի՝ ծէսը գործում է անկախ հոգեւորականի ներքին վիճակից) հասարակական կեանքում վտանգաւոր հետեւանքների կարող է յանգեցնել, քանզի հոգեւորականի սրբութիւնն ամենեւին էլ անկարեւոր մի գործօն չէ: Ծէսը վերելք է դէպի երկինք, դէպի Աստուծոյ սուրբերի քաղաք. հոգեւորականն այդ երկնային վերընթացի ուղեկցողն է...

Աստուածպաշտութիւնը նուիրական գաղտնիք է: Այն պէտք է ծածկուած, դրսի համար պաշտպանուած լինի եւ ապահով փոխանցականութիւն ունենայ: Հոգեւոր ժառանգութեան ծիսական ծրարումն ապահովում է սրբութիւնն անարժանութիւնից, «զի վրագուրաւ ծածկեսցի յանարժանիցն ծածուկ խորհուրդն ի նոսա: Զի որք անարժան են հաւատով եւ մտօք եւ վարուք, ոչ տեսցեն՝ ըստ այնմ՝ «Մի՛ տայք զսրբութիւն չանց...» [Մատթ. Է 6]»[4]: Առհասարակ, ծիսական զգուշութիւնը պէտք է լինի հոգեւորականի մշտական ուղեկիցը, որպէսզի նա դատապարտութեան տակ չյայտնուի: Նման զգուշաւորութեան կոչով է սբ Դիոնեսիոսը դիմում նրանց. «Այլ տե՛ս, որպէս զի մի՛ արտաքս կաքաւեցուսցես զսրբութիւն սրբութեանցն, այլ երկիւղի եւ զթաքնութեան Աստուծոյ իմանալեաւք եւ աներեւութիւք գիտութեամբք պատուեսցես անհաղորդս եւ անարատս զնոսա պահեալ յանկատարիցն. զի սրբազանիցն միայն է սրբազան վայելչութեամբ առ սրբազանսն կցորդութիւն»[5]:

Այսօր աւելի քան երբեւէ մեզ պէտք են ծիսական-աստուածպաշտական արթնութիւն, նախապատրաստութիւն, երկիւղած ներկայութիւն, իրագործում կեանքում: Ծէսի էութիւնն աստուածպաշտութիւնն է. այն սկսւում է մեր ներսում՝ ապաշխարութեամբ Աստուծոյ առաջ մեր սիրտը փշրելով, սեփական մեղքի խոր գիտակցումով, կամքը հնազանդեցնելով, մտքերի եւ խորհուրդների զգուշութեամբ, հոգեւոր խոնարհութեամբ... Ծէսի ժամանակ հաւաքում են պտուղները, ծէսն ամբողջացնում է նախապատրաստութեան արդիւնքը... Սակայն ծէսը, սկիզբ առնելով մարդու հոգու խորքում եւ խորհրդականօրէն կնքուելով արարողութեան կատարմամբ, չի վերջանում: Այն պէտք է իրագործուի կեանքում, ծիսական իրականութիւնը պէտք է տեղափոխուի կեանք եւ պայծառակերպի այդ կեանքը: Քրիստոնեան Քրիստոսի Խորհուրդի կրողն է այս աշխարհում, նրա կեանքը պէտք է լինի վկայութիւն ուրիշների համար եւ խորհրդաբար այնպէս լուսաւորի մարդկանց, ինչպէս Քրիստոսի փրկութեան լոյսը՝ Եկեղեցու սրբազան արարողութիւնների միջոցով:

---

4 *Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, «Վասն է խորհրդոյ Եկեղեցւոյ», Կ. Պոլիս, 1741, էջ 144*

5 *Սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ գիտումն», էջ 54*

* * *

Ծիսական ժառանգութեան մէջ առանձնակի տեղ են գրաւում Եկեղեցու եօթ խորհուրդներն[6] իրենց բացառիկ քրիստոսաւանդ ակունքներով եւ փրկաբանական նշանակութեամբ: Եկեղեցու խորհուրդների մասին մեր ըմբռնումները յաճախ սահմանափակւում են բարոյա-ներածական եւ տեսական դիտարկումներով: Որքան էլ նման մօտեցումները կարեւոր են, այսուհանդերձ բերում են սահմանափակ ճանաչողութեան (եւ յաճախ՝ սխալ շեշտադրումների): Այնինչ ամբողջական ներթափանցման համար խորհուրդներին պէտք է մօտենալ ծիսական տեսանկիւնից, որովհետեւ ծէսն է մարմնաւորում աստուածային խորհուրդները, ծէսն է խորհուրդների կրիչը... Երբեմն խորհուրդների վրայ կառուցւում է այնպիսի տեսութիւն, որն, աստուածաբանական լուրջ խմորումներ ունենալով հանդերձ, հեռու է լինում արարողական ներքին իրականութիւնից. երբեմն այդ տեսական կառոյցները ոչ ցանկալի ազդեցութիւններ են ունենում ծէսի վրայ եւ խեղաթիւրում են սրբազան կարգը: Պէտք է յիշել, որ սրբազան աւանդութիւնը նախ եւ առաջ ծիսականն է: Քրիստոս, ասելով՝ «զայս արասջիք առ Իմոյ յիշատակի» [Ղուկ. ԻԲ 19], ծիսականօրէն աւանդեց Իր փրկութեան ժառանգութիւնը:

Խորհուրդի եւ արարողութեան միջեւ գոյութիւն ունի ներքին խոր համաձայնութիւն եւ խորհրդանշանական ներդաշնակութիւն, որը մենք կանուանենք աստուածաբանական-ծիսական հաւասարակշռութիւն: Այդ հաւասարակշռութեան խախտումը սասանում է աստուածպաշտութեան հիմքերը: Ծէսի չափազանց ծանրաբեռնումը եւ ճոխացումը դժուարացնում են նրա իւրացումը, իսկ կրճատումները նուազեցնում, թերացնում են խորհուրդի սրբազան ներգործութիւնը եւ կրաւորացնում մեր կրօնական գիտակցութիւնը: Տեսութիւնը նոյնպէս պէտք է զուգահեռուի ծէսին, տեսութիւնը պիտի նախապատրաստի մեր հոգին՝ աւանդուած սրբազան նշանների[7] եւ խօսքերի միջոցով հաղորդակցուելու Աստուծոյ փրկաբեր խորհուրդներին:

Ժամանակները բերում են իրենց հրամայականները, բայց որքան էլ այդ հրամայականները ճնշեն մեր կրօնական գիտակցութիւնը,

6 Եկեղեցու եօթ խորհուրդներն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Վերջին օծում, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ, Քահանայական ձեռնադրութիւն:

7 Տես սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 58

այսուհանդերձ պարտաւոր ենք պահպանել սրբազան կարգ ու կանոնն իր աստուածաբանական հիմքերով: Երբ ծիսական բարեկարգութեան հարց է առաջանում, հարկ է ուսումնասիրել ծէսի զարգացման հետագիծը, կատարել բոլոր անհրաժեշտ աստուածաբանական պնդումները, ապա անցնել նորոգման... Նորոգում նշանակում է հնի, աւանդականի նորովի բացայայտում եւ ոչ թէ աւերում: Երբ եկեղեցու շինութիւն է վերականգնւում, նախ ուսումնասիրում են կառոյցի ճարտարապետութիւնը, ապա զգուշութեամբ վերականգնում, որպէսզի չաղաւաղեն հնի վեհութիւնը եւ գեղեցկութիւնը: Որքա՜ն աւելի կարեւոր է Եկեղեցու ներքին-աստուածպաշտական շինութիւնը, որքա՜ն աւելի մեծ զգուշութիւն է մեզ պէտք...

Այս տեսանկիւնից առանձնայատուկ ուշադրութիւն է պահանջում Մկրտութեան խորհուրդը: Մկրտութիւնն այսօր ամենից կիրառական ծէսերից է մեր իրականութեան մէջ, սակայն պէտք է ցաւով նշել, որ շատ քչերն են ճշմարիտ գիտակցումով մօտենում այդ մեծ աստուածային խորհուրդին: Եւ պատճառը ոչ միայն անտեղեակութեան մէջ է, այլեւ առաւելապէս նրանում, որ խախտուած է խորհուրդի ծիսական-աստուածաբանական հաւասարակշռութիւնը, խորհուրդը խիստ անպաշտպան է դարձել արտաքին աշխարհի նկատմամբ... Այսօր որեւէ մէկը կարող է մտնել եկեղեցի եւ անարգել մկրտուել (ինչը բացառուած էր հին Եկեղեցում)՝ առանց նախապատրաստութեան, առանց գիտակցելու, որ Մկրտութիւնը վերստին ծնունդ եւ տնկակցութիւն է Քրիստոսի չարչարանքներին, մահուանը եւ հետեւաբար՝ յարութեանը, որ Մկրտութեամբ մարդը մուտք է գործում Քրիստոսի Եկեղեցի, դառնում Քրիստոսի փրկագործութեան անմիջական հաղորդակիցը եւ երկնքի արքայութեան ժառանգորդը... Մարդը մտնում է եկեղեցի, եւ նրա վրայ ահեղ խորհուրդ է կատարւում, սակայն նա, ոչ մի հոգեւոր ապրում չունենալով, դուրս է գալիս՝ շարունակելով իր՝ Աստծուց կտրուած գոյութեան ընթացքը: Ոչ մի հոգ չի տարւում մկրտուածի յետագայ հոգեւոր կեանքի կազմակերպման համար... Եւ սա նախ եւ առաջ տեղի է ունենում ծէսի անհրաժեշտ մասերի բացակայութեան եւ, առհասարակ, ծէսի ոչ ճիշտ մատուցման պատճառով: Մի բան է պարզ, որ Մկրտութեան արարողութեան բարեկարգման հարցն այսօրուայ հրատապ պահանջներից է, եւ պէտք է վերջապէս մէկ հաստատագրուած եւ սրբագրուած ծէս գործի բոլոր հայ եկեղեցիներում: Անշուշտ, անցեալ դարի եւ դարասկզբի տպագիր մաշտոցների արարողութիւն-

ները խիստ ծանրաբեռնուած են օտար տարրերով եւ յենուած չեն որեւէ գիտական ուսումնասիրութեան վրայ[8] *(խօսքը վերաբերում է նաեւ խիստ կրճատուած վերջին հրատարակութիւններին*[9]*), այլ լի են հրատարակիչների կամայականութիւններով: Այսօր մենք ունենք մեր ձեռագիր մաշտոցների Մկրտութեան արարողութեան քննական բնագրերը*[10]*, եւ արդէն լոյս է տեսել Gabriele Winkler-ի "Das armenische Initiationsritualle. Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Quellen des 3. bis 10. Jahrhunderts" աշխատութիւնը: Սրա շնորհիւ կարող ենք որոշակի պատկերացում ձեռք բերել հայկական ծէսի զարգացման օրինաչափութիւնների մասին: Այսուհանդերձ, սա դեռ բաւարար չէ բարեկարգութեան համար. անհրաժեշտ է տալ ծէսի աստուածաբանական հիմնաւորումները, որից յետոյ միայն կարելի է զատել կարեւորն անկարեւորից եւ ընդունել ծէսի այն տարբերակը, որն աւանդական է, աստուածաբանական տեսանկիւնից՝ կուռ եւ համապատասխանում է արդի ծիսական հոգեբանութեանը:*

ՄԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՈՒԱԳԾԵՐԸ

Մեր ուշադրութիւնն անմիջապէս գրաւեց մեր զոյգ երկաթագիր մաշտոցների[11] *Մկրտութեան արարողութիւնը*[12]*, որը յոյժ պատշաճ նկատուեց սոյն ուսումնասիրութեան համար: Այդ արարողութիւնը գրեթէ անաղարտօրէն պարունակում է դասական ծէսի հիմնական կառոյցը, զերծ է խճողումներից եւ յետսամուտ տարրերից, արտացոլում է մեր հնագոյն աւանդութիւնը եւ զգալիօրէն կարճ տեւողութիւն ունի*

---

8 Տես Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», Վենետիկ, 1971, հ. 1–2, էջ 26:

9 Տես «Մաշտոց, յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ Եկեղեցւոյս Հայոց», Երուսաղէմ, 1977. նոյն վերատառութեամբ, Անթիլիաս, 1988:

10 Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», 1971, 1972

11 Ձեռ. N 457 (Սբ Ղազար (=ՍՂ)), N 1001 (Սբ Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարան, Երեւան(=ՄՄ))

12 Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», 1971, հ. 1–2, էջ 36–46. 1972, հ. 2–3, էջ 211–231

տպագիր (նկատի չունենք վերջին խիստ կրճատուած մաշտոցները) մաշտոցների համեմատութեամբ: Ծէսն ունի հետեւեալ կառուցուածքը.

Կանոն երախայութեան

ա) երախայութեան սկիզբ կամ երախաների[13] *ձեռնադրութիւն*

բ) նախապատրաստական աղօթքներ (եկեղեցուց դուրս)

գ) հանդիսաւոր խոստումներ (հրաժարում սատանայից եւ հաւատքի խոստովանութիւն)

Կանոն մկրտութեան

ա) մուտք եկեղեցի

բ) իւղի օրհնութիւն

գ) ջրի օրհնութիւն

դ) բուն Մկրտութիւն

Կանոն դրոշմի

ա) օծում

բ) զգեստաւորում

գ) երկրպագութիւն Սեղանին

Հաղորդութիւն եւ արձակում

Ութ օր յետոյ

Հայկական ծէսը բաղդատելով վաղքրիստոնէական արարողութիւնների հետ[14]*՝ կարելի է եզրակացնել, որ այն, իր մէջ ամփոփելով եւ բիւրեղացնելով Մկրտութեան խորհուրդի շուրջ ծաւալուած աստուածաբանական շարժումները, մի ինքնատիպ արարողութիւն է եւ արտայայտութիւն է հնագոյն աւանդութեան, որը, հաւանաբար, Հայաստան է բերուել սբ Գրիգոր Լուսաւորչի կողմից: Մենք սոյն աշխատութեան մէջ յաջորդաբար կը բացայայտենք Մկրտութեան արարողութեան առանձին մասերի աստուածաբանական իմաստները եւ պատմական զարգացման նախընթացը եւ կը տեսնենք, որ Մկրտութիւնն առանձին արարողութիւնների անբաժանելի եւ անկրճատելի միասնութիւն է, եւ որեւէ մասի աղաւաղումը կամ դուրսմղումը ծէսից*

---

13 Բնագրերում հանդիպում է նաեւ երեխայ ձեւը:

14 J. G. Davies, *The Early Christian Church,* Michigan, 1987, pp. 102–104, 148–150, 200–203, 262–266.

ծանր հետեւանքների առիթ է դառնում թէ՛ մարդու ներանձնական, թէ՛ հասարակական կեանքում: Այսուհանդերձ, այս տեսքով, թերեւս, այն անհնար լինի գործածել այսօր, սակայն աննշան յաւելումներով (նարօտի օրհնութիւն, մի քանի շարականներ) կարելի է վերադառնալ մեր հայկական ծէսի պարզ եւ աստուածաբանական տեսանկիւնից կուռ վեհութեանը՝ թօթափելով յետագայ դարերի օտարամուտ, անհարկի խճողումները: Մէկ կարեւոր նկատառում եւս. բնիկ հայկական ծէսում խստօրէն ընդգծուած է մկրտուողի անհատական դարձը, եւ բոլոր հարց ու պատասխաններում, հանդիսաւոր խոստումներում մենք տեսնում ենք մկրտողի կողմից արտասանուող եզակի ձեւեր՝ ի տարբերութիւն հոգեւորականի կողմից այսօր արտասանուող յոգնակի ձեւերի, ուր անհատի մասնակցութիւնը հասած է նուազագոյնի: Ուրեմն՝ մեր հայրերին մտահոգել է մարդու փրկութիւնը, որը սկսւում է Մկրտութեամբ, եւ ցանկալի է, որ այդ մտահոգութեամբ այսօր էլ համակուած լիննենք: Հոգեւոր կեանքի մէջ Մկրտութիւնն էական սկիզբ է, եւ այդ սկզբով են մեծապէս պայմանաւորուած մարդու յետագայ ողջ կեանքն ու գործունէութիւնը:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Պատրաստութիւնն աստուածմարդկային յարաբերութեան անհրաժեշտ նախապայմանն է: Հնուց սկսած՝ մարդ մինչեւ Աստծուն կամ սրբութիւններին մերձենալը պէտք է անցնէր մարմնական եւ հոգեկան պատրաստութեան երկարատեւ շրջան, որպէսզի լիապէս արժանանար Աստուծոյ հետ հաղորդակցման:

Մկրտութիւնը, լինելով Եկեղեցու աստուածպաշտական համակարգի սկզբնարար հիմքը, նոյնպէս պահանջում է լուրջ պատրաստութիւն: Հին Եկեղեցում գոյութիւն ունէր բաւականին երկար նախապատրաստական շրջան՝ մէկից երեք տարի: Մկրտութեանը նախապատրաստուողները, որոնց անուանում էին ընծայութեան կոչուածներ[15], *աստիճանաբար ներածւում էին Եկեղեցու մէջ: Նրանց*

---

15 *Նրանց նաեւ անուանում էին պարզապէս կոչուածներ կամ երախաներ: Սբ Դիոնեսիոս Արիսպագացին նրանց անուանում է զգաստացածներ: Արեւելքում նրանց անուանում էին լուսաւորուողներ կամ մկրտուողներ, Արեւմուտքում՝ խնդրողներ կամ ընտրեալներ, Երուսաղէմում՝ ուղղակի՝ հաւատարիմներ կամ*

վրայ կատարւում էին երդմնեցուցչութեան[16] մասնաւոր արարողութիւններ, նրանց մանրագնին կերպով ուսուցանում էին հաւատքի տեսական (Սուրբ Գիրք, դաւանութիւն) եւ գործնական (աղօթք, պահք, ճգնութիւններ) սկզբունքները: Այս երկար նախապատրաստութեանն անմիջապէս յաջորդում էր համեմատաբար աւելի կարճ շրջան, որը տեւում էր 40 օր մինչեւ Զատիկ[17], երբ կոչուածները լարուած աղօթքով ու պահքով պատրաստւում էին սուրբ Գիշերուան[18]: Այդ գիշեր Քրիստոսի Յարութեան տօնին նրանք մկրտւում էին եւ այդպիսով ստանում նոր կեանքի փրկութիւնը եւ Քրիստոսի լոյսը:

Յետագայում Մկրտութեան նախապատրաստութեան այս ընթացքը փոփոխութիւններ է կրում՝ մնալով, սակայն, որպէս Մկրտութեան անքակտելի մաս: Այն դառնում է Զատկից անկախ՝ պահպանելով իր զատկական իմաստն ու էութիւնը: Ինչպէ՞ս է այս մեծ խորհուրդի

հաւատացեալներ (տես Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան, ճառ Ե (=Կոչումն ընծայութեան), Վիեննա, 1832, էջ 74–75):

16 Երդմնեցուցչութիւնը դեւերի հալածման (exorcism) արարողութիւն է, որը հնում մեծ կիրառութիւն ունէր: Մասնաւորաբար, յաճախ կատարւում էր երախաների վրայ, որոնց պատրաստում էին Մկրտութեան: Երդմնեցուցչութեան արարողութեան մէջ մտնում էին յատուկ աղօթքներ՝ սուրբգրային դրուագների յիշատակմամբ, տեառնագրումներ, փչումներ: Երախայի երեսը ծածկում էին, որպէսզի միտքը եւ տեսողութիւնը զերծ պահէին թափառումներից: Փչումը նշանակն էր մեղքերից մաքրման եւ անամօթ ու նախաչար սատանայի հալածման: Միաժամանակ փչումը ցոյց էր տալիս Սուրբ Հոգու ներգործութիւնը, որի պատճառով էլ մեծ զօրութիւն ունէր անտեսանելի թշնամիների դէմ: Երդմնեցուցչութեան արարողութիւնը հնում անհրաժեշտ մաս էր կազմում Մկրտութեան նախապատրաստութեան. այն այսօր էլ որոշ եկեղեցիներում Մկրտութեան արարողութեան բաղկացուցիչ մասերից է: Մեզ մօտ երդմնեցուցչութիւնը դարձել է առանձին արարողութիւն, որը կոչւում է «Կանոն վասն այսահարաց եւ լուսնոտից» (տես «Մաշտոց», Վաղարշապատ, 1905, էջ 281–310):

17 Իրականում հէնց Մկրտութեան նախապատրաստութեան շրջանից էլ առաջացել է Մեծ պահքը:

18 «Իսկ եթէ եղիցի աւր տաւնին, հարազատագոյն է առ ի Մկրտութիւնն: Քանզի աւրն այն յիշատակ է յարութեան, իսկ Մկրտութիւն զաւրութիւն է առ ի յարութիւն: Ի Յարութեան զյարութեան շնորհ ընկալցուք: Յաղագս այսորիկ ի հեռուստ Եկեղեցի զյինքենէ սնեալն քարոզութեամբ կոչէ, զի զորս կանխաւն երկնէր, ծնցի յայնժամ եւ, զատուցեալ ի կաթանէ, զնոսա բանիւ խորհրդեանն ճաշակեսցէ զհաստատուն աւանդիցն կերակուր» (սբ Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, «Խաւսք յորդորականք ի Մկրտութիւն», Սբ Էջմիածին, 2008, էջ 422):

նախապատրաստութիւնն արտացոլուած հայկական ծէսում, ինչպիսի՞ն է եղել մեր Եկեղեցու վերաբերմունքը... Մեր Մկրտութեան արարողութիւնը սկսւում է մի խրատով (այն աննշան զանազանութիւններով առկայ է բոլոր թէ՛ տպագիր, թէ՛ ձեռագիր մաշտոցներում), որն այսօր գրեթէ կատարեալ անտեսման է մատնուած, սակայն հէնց այս խրատով է սկսւում Մկրտութեան խորհուրդը, եւ նրանում յստակօրէն սահմանագծուած է մեր Եկեղեցու վերաբերմունքը վերստին ծննդեան խորհուրդին մերձենալ կամեցողների նկատմամբ:

Յորժամ քրիստոնեայ առնեն, նախ չէ պարտ յեկեղեցին թողուլ, այլ ձեռնադրեսցէ յառաջ երիս շաբաթօք կամ աւելի նախ քան զՄկրտութիւնն, որով եւ զհաւատս եւ զՄկրտութիւնն Եկեղեցւոյն բաւականացի ուսանել ի վարդապետէն. յառաջ՝ նախ զԱստուածութիւն Սրբոյ Երրորդութեանն եւ զարարչութեան եւ զլինելութեան արարածոց եւ ապա՝ զընտրութիւն արանց արդարոց. յետոյ՝ զԾնունդն Քրիստոսի եւ կարգաւ զամենայն տնտեսութեանն եւ զխաչին մեծ խորհուրդն եւ զթաղումն եւ զՅարութիւնն եւ առ Հայր զՀամբարձումն եւ զմիւսանգամ զԳալուստն եւ զյարութիւնն ամենայն մարմնոց եւ զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց: Զայս ուսուցանելով՝ խրատեսցէ աղօթից ստէպ կալ: Այս կարգաւորութիւն չափահասակացն է: Նախ՝ երախայ ձեռնադրեսցի զկատարեալ հասակն եւ զտղայսն:

Երբ [մէկին] քրիստոնեայ են դարձնում, նախ պէտք չէ թողնել՝ եկեղեցի [մտնի], այլ պէտք է ձեռնադրուի Մկրտութիւնից երեք շաբաթ առաջ կամ աւելի վաղ, եւ այս ընթացքում էլ հասցնի վարդապետից ուսանել Եկեղեցու հաւատքը եւ Մկրտութիւնը. սկզբից նախ՝ Սուրբ Երրորդութեան Աստուածութիւնը, արարածների արարչութիւնը եւ լինելութիւնը, ապա՝ արդար այրերի ընտրութիւնը, յետոյ՝ Քրիստոսի Ծնունդը եւ, ըստ կարգի, [փրկագործութեան] տնտեսութեան ողջ [ընթացքը]՝ խաչի մեծ խորհուրդը, Թաղումը, Յարութիւնը, առ Հայր Համբարձումը, միւս Գալուստը, բոլոր մարմինների յարութիւնը եւ հատուցումն ըստ իւրաքանչիւր գործի: Այս ուսուցանելով՝ պէտք է խրատի ստէպ աղօթել: Այս կարգաւորութիւնը չափահասակների համար է: Նախ պէտք է չափահասներին եւ մանուկներին երախայ ձեռնադրել[19]*:*

---

19 Արարողութիւնը ներկայացւում է ըստ ՍՂ N 457 ձեռագրի: Թարգմանելիս հարկ եղած դէպքում կը հետեւենք ՄՄ N 1001 ձեռագրին կամ այլ ձեռագրերի, ինչը ցոյց կը տանք տողատակում:

Այս խրատից երեւում է, որ մկրտուել ցանկացողն անհրաժեշտաբար պէտք է անցնի երախայութեան շրջան, որի ընթացքում կարողանայ ձեռք բերել դաւանական մաքրութիւն եւ ներքին կեանքի հաստատութիւն: Միայն այս նախադրեալների դէպքում նա կարող է ճշմարտապէս ընդառաջ գնալ Աստուծոյ մեծ շնորհներին...

Հին Եկեղեցում մկրտուել ցանկացողին բերում էին տեղական եկեղեցու եպիսկոպոսի մօտ, որը քահանայ էր, հովիւ եւ տեղական համայնքի վարդապետ: Այսպէս կոչուած հաւատարիմները կամ խորհրդագրածները պէտք է վկայէին թեկնածուի դարձի լուրջ բնոյթի մասին[20]: Վստահանալով դարձի եկածի մտադրութեան լրջութեան մէջ՝ եպիսկոպոսը նրա անունը մտցնում էր ընծայութեան կոչուածների ցուցակի մէջ: Ապա երեք անգամ նորադարձի դէմքը տեառնագրում էր եւ ձեռքը դնում նրա գլխին: Այս սկզբնական արարողութիւնը նշանակում էր, որ Քրիստոս ընդունել է այս մարդուն Իր ժառանգութեան մէջ եւ նրա անունը մտցնում է Կենաց գրքի մէջ[21]: Յովհան Ոսկեբերանի ժամանակ սա կատարւում էր անմիջապէս Մեծ պահքից առաջ[22]:

Այս գործողութիւնները Մկրտութեան կարգաւորութեան առաջին աստիճանն են, եւ նրանց իմաստը բացայայտւում է կոչուածների վրայ կատարուող առաջին (կամ քրիստոնէական ձեռնադրութեան) աղօթքով:

---

20 *Այս ամէնին, ըստ Դիոնեսիոսի, նախորդում է Աստուծոյ փրկութեան քարոզութիւնը քահանայապետի (եպիսկոպոսի) կողմից. այն, ընկնելով ոմանց սրտերը, փրկութեան փափագ է առաջացնում եւ զգաստացնում: Զգաստացածը դիմում է խորհրդագրածներից մէկին՝ խնդրելով իրեն առաջնորդել քահանայապետի մօտ: «Եւ ինքն բոլորովիմբ զհետեւելն խոստացի աւանդեցելոցն եւ աղաչեսցէ զմատչելն իւր եւ ամենեւին զնոյն հետայն կենացն զվերակացութիւնն ընդունել: Իսկ նորա թէ եւ է ընդ նորա փրկութիւնն սրբազնաբար հաճեալ, սակայն առ իրին բարձրութիւն ընդդիմադրեալ զմարդկաւրէնն, սոսկմամբ մեծաւ եւ դժուարին կայիւք: Սակայն կատարել զարարողութիւն խնդրոյն բարետեսակութեամբ խոստացեալ եւ առեալ ածէ զնա առ քահանայապետութեանն մականուն» (սբ Դիոնեսիոս Արիսպագացի, Խորհուրդ Մկրտութեան, էջ 61):*

21 *Տես սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 66:*

22 T. M. Finn, *The Liturgy of Baptism in the Baptismal Instructions of St. John Chrysostom,* Washington, 1967, pp. 50–51.

Ասի սաղմոս ի թիւ.

ՃԼ. «Տէ՛ր, ոչ բարձրացաւ սիրտ իմ»:

Աղօթք ի վերայ երաւիային նախ քան զՄկրտութիւնն: Այս է Մկրտութեան սկիզբն.

Տէ՛ր Աստուած մեր, Աստուա՛ծ բարերար, որ զվրիպեալս եւ զհեռացեալս ի Քէն զազգս մարդկան՝ զմերժեալս եւ զանկեալս ի դրախտէն փափկութեան, զոր ոչ կարացեր անտես առնել, այլ գթացեալ խոնարհեցար ի Քումմէ բարձրութենէդ ի մեր նուաստ բնութիւնս եւ, առնլով զբոլորս մեր բայց ի մեղաց, չարչարանօք մահու, խաչի զփրկութիւն եւ զդարձ մեր գնեալ, վերստին շնորհեցեր մեզ զկենդանութիւն: Ընկա՛լ եւ այժմ, բարերա՛ր Տէր, զբարս յօժարութեան ստեղծուածոյս Քո, որ դիմեաց մերձենալ ի սուրբ եւ ի միայն ճշմարիտ Աստուածութիւն Քո՝ քրիստոնեայ անուն յանձին կրելով: Եւ տո՛ւր զօրութիւն եւ օգնութիւն եւ արժանաւորիլ եւ հասանել ի մաքրութիւն սուրբ Աւազանին ամբիծ կենացդ եւ ի ժառանգութիւնն որդեգրութեան արքայութեանդ երկնից Քրիստոսիւ Յիսուսիւ՝ Տերամբ մերով, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Թիւ[23] սաւում է սաղմոս.

ՃԼ. «Տէ՛ր, չբարձրացաւ իմ սիրտը»:

Աղօթք երաւիայի վրայ մինչեւ Մկրտութիւնը: Այս է Մկրտութեան սկիզբը.

Տէ՛ր Աստուած մեր, բարերա՛ր Աստուած, որ Քեզանից վրիպած եւ հեռացած մարդկութեանը՝ մերժուած եւ ընկած դրախտի փափկութիւնից, չկարողացար անտեսել, այլ գթալով խոնարհուեցիր Քո բարձրութիւնից դէպի մեր նուաստ բնութիւնը եւ, ամբողջապէս վերցնելով մեր [բնութիւնն] առանց մեղքի, խաչի եւ մահուան չարչարանքներով գնելով մեր փրկութիւնը եւ դարձը, վերստին մեզ կենդանութիւն շնորհեցիր: Ընդունի՛ր եւ այժմ, բարերա՛ր Տէր, Քո այս ստեղծուածի բարեյօժարութիւնը, որ որոշեց մերձենալ Քո սուրբ եւ միայն ճշմարիտ Աստուածութեանը՝ քրիստոնեայ անուանուելով[24]: Եւ տո՛ւր զօրութիւն եւ օգնութիւն եւ արժանաւոր լինել ու հասնել անբիծ կեանքիդ սուրբ Աւազանի մաքրութեանը եւ երկնքի արքայութեանդ որդեգրութեան ժառանգութեանը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

23 Այսինքն՝ առանց երգելու, արտասանելով:

24 Ըստ ՄՄ N 1001 ձեռագրի:

Ձեռնադրումով մարդը դառնում է քրիստոնեայ, սակայն քրիստոնեան դեռեւս հաւատարիմ չէ: Հնում երախայութեան կարգ մտածները գտնւում էին եկեղեցական հսկողութեան տակ. նրանք պէտք է յաճախէին աստուածպաշտական հաւաքներին, ուր նրանց համար յատուկ աղօթքներ էին կատարւում, ապաշխարութեան գործերով եւ առհասարակ իրենց ողջ վարքագծով վկայէին իրենց փրկուելու անկեղծ մտադրութեան մասին: Մկրտուողները պէտք է լինէին խիստ պահքի եւ ժուժկալութեան մէջ, նրանց թէ՛ խօսքերը, թէ՛ գործերը պէտք է ներծծուած լինէին ապաշխարական փշրուածութեամբ... Քառասնորդական պահքի նախապատրաստական շրջանը նրանց համար խոստովանութեան շրջան էր. «Ժամանակ խոստովանութեան է ժամանակս, որ հասեալ կայ. ե՛կ, լե՛ր խոստովան զինչ գործեալ է ինչ՝ որ բանիւք, որ գործովք, որ ի տուէ, որ ի գիշերի: Եւ լե՛ր խոստովան ի ժամանակի ընդունելութեան, զի յաւուրն փրկութեան ընդունել մարթասցես զգանձն երկնաւոր»[25]: Ընծայութեան կոչուածը պէտք է ուշադրութեամբ հետեւէր քարոզուող խօսքերին, ուսուցանուածը զգուշութեամբ ծրարէր իր սրտում, հեռանար աշխարհիկ հոգսերից՝ ստանալու փրկութեան շնորհը. «Տո՛ւր պարապ անձին քում՝ կանխեալ ընդ ձեռնադրութեամբքն: Դեգերեա՛ց, կա՛ց ի կոչմունս ընծայութեան, եւ յո՛ւշ լիցին քեզ բանքն ամենայն, զոր խօսիցին: Ասեն նոքա՝ ո՛չ միայն զի լսելով լուիցես, այլ զի հաւատովք կնքիցես՝ ծրարեալ ի սրտի քում: Զամենայն հոգս մարդկան ի բա՛ց ջնջեա ի քէն, զի վասն ոգւոց ընթանաս: Զիրս աշխարհիս ապաքէն ցապաք թողլոց ես. փոքր է այս, որ լքեալս լինի, եւ մեծամեծ է այն, որ ի Տեառնէն շնորհի: Թո՛ղ, լի՛ք ի բաց զառժամայնս եւ հաւատա՛ դու ի պատրաստեալն: Զայնչափ բոլորեալ թիւս տարերց տարեկանաց անցեր՝ զաշխարհաւ զուր տարապարտուց զբաղեալ. արդ զայս քառասնօրեայ ժամանակ ո՞չ եկեսցես՝ կանխեալ յաճախութեամբ, վասն քոյին ոգւոյդ փրկութեան»[26]: Մկրտութեան նախապատրաստուողը չպէտք է քննէր որեւէ մէկի, այլ աղօթական ներհայեցողութեամբ պատրաստէր իր անձը Սուրբ Հոգու շնորհների համար... Նա պէտք է ներէր իր նկատմամբ բոլոր յանցաւորներին, որպէսզի ինքն էլ Աստծուց ներում ստանար, պէտք է իր անձը պարարէր Սուրբ Գրքի կենարար խօսքերով, իր ողջ էութեամբ դառնար առ

---

25 Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, ճառ Ա, էջ 5
26 Նոյն, էջ 5–6

Աստուած, «եւ Ինքն Քրիստոս՝ մեծ Քահանայապետն, զձերոցն բարուց նպաստ ընկալեալ, մատուցանիցէ զձեզ զամենեսեան առաջի Հօր եւ ասիցէ. «Ահաւասի՛կ ես եւ մանկունք իմ, զոր ետ Ինձ Աստուած» [ես. Ը 18]»[27]*:*

ՍԿԻԶԲ

Եւ ապա յաւուրս Մկրտութեան առ դուռն եկեղեցւոյն կապարելոց է քահանայն զայս կարգ՝ հանդերձ միաբան ոիպտիւն, ի վերայ տղայոց եւ չափահասակաց:

Ասի սաղմոս ի թիւ Գ.

ԻԴ. «Առ Քեզ, Տէ՛ր, համբարձի զանձն իմ»:

ԻԵ. «Դա՛տ արա ինձ, Տէ՛ր»:

Ծ. «Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան Քում»:

Սարկաւագն քարոզէ.

Եւ եւս վասն երախայիս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, զի ողորմեսցի սմա ըստ մեծի ողորմութեանն Իւրում եւ արժանի արասցէ լուացման վերստին ծննդեան եւ զգեստու անապականութեան եւ զուգաթուեսցէ ընդ հաւատացեալս անուան Իւրոյ եւ կեցուսցէ ողորմութեամբ Իւրով շնորհիւ: Ամենակալ եւ արարիչ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Գ «Տէր, ողորմեա»:

Եւ ապա Մկրտութեան օրը քահանան միաբան ուիպտով հանդերձ եկեղեցու դռան առջեւ կապարելու է հետեւեալ կարգը մանուկների եւ չափահասների վրայ:

Ապա թիւ սաւում է երեք սաղմոս.

ԻԴ. «Տէ՛ր, դէպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը»:

ԻԵ. «Դա՛տ արա ինձ, Տէր»:

Ծ. «Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան»:

Սարկաւագը քարոզում է.

Եւ դարձեալ այս երախայի համար աղաչենք մարդասէր Աստծուն, որպէսզի ողորմի սրան ըստ իր մեծ ողորմութեան ու արժանի անի վերստին ծննդեան լուացման եւ անապականութեան զգեստի, կարգի իր անուան հաւատացեալների հետ եւ ապրեցնի իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ եւ Արարիչ Տէ՛ր Աստուած մեր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

Երեք «Տէր, ողորմեա»:

27 Նոյն, էջ 7

Քահանայն ասէ զաղօթս զայս ի վերայ.

Ընկա՛լ, մարդասէ՛ր Տէր, զընծայեալս ի Քեզ զերախայս, սրբեա՛ զմիտս եւ զխորհուրդ սորա յամենայն նենգութեանց հակառակորդին եւ արժանի՛ արա զսա ի ձեռն Աւազանին լուանալ զհնութիւն մեղաց իւրոց եւ նորոգել լուսով շնորհաց Քրիստոսի Քո: Որպէս զի եւ սա մեօք հանդերձ փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզէ սարկաւագն.

Եւ եւս վասն քաւութեան մեղաց, իջանելով ողորմութեանց Աստուծոյ ի վերայ երախայիս, զՏէր աղաչեսցուք:

Գ «Տէր, ողորմեա»:

Քահանայն ասէ զաղօթս.

Տէ՛ր Աստուած՝ մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց, ի Քո ահաւոր անունդ ապաւինելով՝ ծառայս Քո խոնարհեցոյց զգլուխս իւր անունդ Քո սրբոյ, որում կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց, եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: Յայդմ ահաւոր անուանէդ հաղորդութիւն ընկալցի սա, որ հալածեաց

Քահանան ասում է այս աղօթքը [մկրտուողի] վրայ.

Ընդունի՛ր, մարդասէ՛ր Տէր, Քեզ ընծայուող այս երախային, սրբի՛ր սրա միտքը եւ խորհուրդը հակառակորդի բոլոր նենգութիւններից եւ արժանացրո՛ւ սրան Աւազանի միջոցով լուացուելու իր մեղքերի հնութիւնից եւ նորոգուելու Քո Քրիստոսի շնորհների լոյսով: Որպէսզի սա էլ մեզ հետ փառաւորի Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սարկաւագը քարոզում է.

Եւ դարձեալ մեղքերի քաւութեան, այս երախայի վրայ Աստուծոյ ողորմութիւնների իջնելու համար աղաչենք Տիրոջը:

Երեք «Տէր, ողորմեա»:

Քահանան ասում է այս աղօթքը:

Տէ՛ր Աստուած՝ մեծ եւ փառաւորուած բոլոր արարածներից, Քո այս ծառան, ապաւինելով Քո ահաւոր անուանդ, խոնարհեցրեց իր գլուխը Քո սուրբ անուան առջեւ, որին ծունր են մատուցում բոլոր երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականները, եւ ամէն լեզու թող խոստովանի, որ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Հայր Աստուծոյ: Թո՛ղ հաղորդուի սա այդ ահաւոր անուանդ, որ հալածեց

զխաբէութիւն դիւաց եւ զկռապաշտութիւն մոլորութեան եւ զամենայն սատանայական որոգայթս խափանեաց: Հայեա՛ց, Տէ՛ր, ողորմութեամբ Քո ի սա. մերժեա՛ եւ հեռացո՛ ի սմանէ՝ ամենայաղթ կոչմամբ անուան Քո ի վերայ սորա, զողեալ յայսոց պղծոց զխորհուրդս, զբանս եւ զգործս եւ զամենայն խարդախութիւնս, որովք սովոր են խաբել եւ կորուսանել զմարդիկ չար դեւք: Որպէսզի, զարհուրեալ ի յաղթող անուանէդ, տագնապեսցի եւ տանջեսցի աներեւոյթ տանջանօք, երդմամբ հեռացեալ ի սմանէ՝ եւ այլ մի՛ եւս դարձցի ի սա: Լցո՛ երկնային շնորհօք եւ զուարճացո՛ ամենաբարի կոչմամբդ՝ քրիստոնեայ անուանելով: Եւ արժանի լիցի ի դէպ ժամանակի Մկրտութեան վերստին ծննդեան եւ, ընդունելով զՀոգիդ Սուրբ, մարմին եւ անդամ եղիցի Եկեղեցւոյ Քում սրբոյ. եւ անարատ քրիստոնէութեամբ կրօնաւորեալ յայսմ աշխարհիս՝ եւ հանդերձելոց բարեացդ հասցուք ընդ ամենայն սիրեցողս անուանդ Քո՝ փառաւորելով զանփոփոխելի Տէրութիւնդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

դեւերի խաբէութիւնն ու կռապաշտութեան մոլորութիւնը եւ խափանեց բոլոր սատանայական որոգայթները: Տէ՛ր, նայի՛ր Քո ողորմութեամբ սրան, Քո անուան ամենայաղթ կոչմամբ սրա վրայ՝ մերժի՛ր եւ հեռացրու սրանից պիղծ այսերի թաքցրած խորհուրդները, խօսքերը, գործերը եւ բոլոր խարդախութիւնները, որոնցով չար դեւերը սովոր են խաբել եւ կործանել մարդկանց: Որպէսզի, զարհուրելով Քո յաղթող անունից, տագնապի եւ տանջուի աներեւոյթ տանջանքով՝ երդմամբ հեռանալով սրանից, եւ այլեւս չդառնայ սրա մէջ: Լցրո՛ւ երկնային շնորհներովդ եւ զուարճացրո՛ւ ամենաբարի կոչմամբդ՝ քրիստոնեայ անուանելով: Եւ թող արժանի լինի ժամանակի յարմարութեամբ վերստին ծննդեան Մկրտութեանը եւ, ընդունելով Սուրբ Հոգիդ, թող լինի Քո սուրբ Եկեղեցու մարմին եւ անդամ: Եւ, անարատ քրիստոնէութեամբ կրօնաւորելով այս աշխարհում, նաեւ հանդերձեալ բարիքներիդ հասնենք բոլոր նրանց հետ, որ սիրում են Քո անունը, եւ փառաւորենք Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անփոփոխելի Տէրութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Չարի[28] *իշխանութիւնը մարդկային բնութեան մէջ հաստատուեց նախաստեղծների պատուիրանազանցութեամբ: Մարդը, լսելով սատանային, մերժեց Աստուծոյ սէրը եւ բարիքները, խախտեց պատուիրանը, զրկուեց հայրենի դրախտի փափկութիւնից եւ արժանացաւ այս տխրական երկրի պանդխտութեանը. մարդը, որ ստեղծուած էր Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ՝ վայելելու աստուածային բարիքների ամբողջութիւնը, յափշտակուեց չարի պատրանքներով... Չարն իր նենգութիւններով, մոլորութիւններով, որոգայթներով առգոյացաւ եւ արմատացաւ մարդկային բնութեան մէջ՝ իր խաբէութիւնների մէջ ստրկացնելով մարդկային ինքնութիւնը, խափանելով մարդկային կամքի աստուածադիր ազատութիւնը:*

Քրիստոսի փրկագործութեամբ մարդկային բնութիւնն ազատագրուել է չարի իշխանութիւնից: Բանն Աստուած ճշմարտապէս մարդացաւ եւ, առանց մեղքի անցնելով մարդկային բնութեան կրքերի միջով, դատապարտեց մեղքը մարմնի մէջ... Քրիստոսի յարութեամբ մարդը ձեռք է բերել կատարեալ հոգեւոր ազատութիւն եւ ազատուել մահուան դատապարտութիւններից: Նրան ծունր են մատուցում բոլոր երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականները. Յիսուս Քրիստոս Տէր է ի փառս Հայր Աստուծոյ. ամէն: Նրա ամենայաղթ եւ ահաւոր անուան հաղորդակցութիւնը սրբում է հակառակորդի բոլոր նենգութիւններից, հալածում դեւերի խաբէութիւնը եւ կռապաշտութեան մոլորութիւնը...

Սակայն Աստուծոյ փրկութեանը պէտք է ընդառաջ գնալ, մարդը չի կարող կրաւորապէս, առանց Աստուծոյ լոյսի առջեւ բացուելու, առանց սեփական կամքն Աստուծոյ կամքին ներդաշնակելու հաղորդակից դառնալ Քրիստոսի բերած հոգեւոր ազատութեանը: Մկրտութեան արարողութեան այս հանդիսաւոր սկիզբն արդէն

---

28 *Մինչեւ զգալի աշխարհ ներթափանցելը չարը սկիզբ էր առել իմանալի աշխարհում, սակայն ոչ թէ Աստուծոյ արարչութեամբ, որն ըստ ամենայնի բարի է, այլ որոշ հրեշտակների անձնիշխան կամքով... Վերջիններիս կողմից տեղի է ունենում խռովութիւն, նրանք ատելութեամբ են համակւում Աստուծոյ եւ Նրա արարչութեան նկատմամբ, նրանց կամքը սկսում է մերժել աստուածային բարութիւնը, ժխտել էն, կուրօրէն ձգտել դէպի ոչէն... Դառնալով խաւարի ոգիներ՝ ընկած հրեշտակները մնում են որպէս Աստուծոյ արարածներ, այսինքն՝ լուսեղէն, հրեշտակային բնութիւն ունեն:*

իսկ ուրուագծում է մարդու փրկաբանական նախընթացը: Մարդը դեռ մուտք չի գործել Քրիստոսի Եկեղեցին: Նա կամովին եկել է եկեղեցու դռան առջեւ եւ իր գլուխը խոնարհեցրել Աստուծոյ փրկութեան առջեւ. այսուհանդերձ, նա դեռեւս իրաւունք չունի մուտք գործելու Աստուծոյ Եկեղեցի... Նրան ընդառաջ են ելել եկեղեցու սպասաւորները՝ զօրացնելու եւ նախապատրաստելու իրենց աղօթքներով, հաւաստիանալու նրա՝ առ Աստուած դարձի ճշմարտացիութեան մէջ եւ ապա ուղեկցելու նրան դէպի Եկեղեցի: Նրանք քահանայի միջոցով խնդրում են մարդասէր Տիրոջը ընծայեալին արժանացնել Աւազանի Մկրտութեանը, լցնել երկնային շնորհներով եւ զուարճացնել երկնային կոչմամբ, որպէսզի իրենց հետ ի զօրու լինի ***փառաւորելու Ամենասուրբ Երրորդութեանը***:

Այս աղօթքներին յաջորդող հարցերն ու պատասխանները ցոյց են տալիս հոգու այն անհրաժեշտ նախապատրաստուածութիւնը, որից յետոյ նա կարող է ճշմարտացիօրէն մուտք գործել Քրիստոսի ժառանգութեան մէջ:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Եւ ապա հրամայէ երախային դառնալ յարեւմուտս եւ երդմնեցուցանէ երիցս անգամ՝ ասելով այսպէս.

Հրաժարիմք ի քէն, սատանա՛յ, եւ յամենայն խաբէութենէ քումմէ եւ ի պատրանաց քոց եւ ի պաշտամանէ քումմէ եւ ի գնացից քոց եւ ի հրեշտակաց քոց:

Եւ դարձեալ հարցանէ քահանայն.

Հրաժարե՞ս, հրաժարե՞ս, հրաժարե՞ս:

Եւ ըստ մին մին հարցմանն ասասցէ.

Հրաժարեմ:

Ապա հրամայում է երախային դառնալ արեւմուտք եւ երդուեցնում է երեք անգամ՝ ասելով այսպէս.

Հրաժարւում ենք քեզանից, սատանա՛յ, քո ողջ խաբէութիւնից, քո պատրանքներից, քո պաշտամունքից, քո ընթացքից եւ քո հրեշտակներից:

Եւ դարձեալ քահանան հարցնում է.

Հրաժարւո՞ւմ ես, հրաժարւո՞ւմ ես, հրաժարւո՞ւմ ես:

Եւ իւրաքանչիւր հարցումին պիտի պատասխանի.

Հրաժարւում եմ:

Այսօրուայ Մկրտութեան արարողութեան մէջ գործածուող անուղղակի, անդէմ, ընդհանուր ձեւն ուղիղ արտայայտութիւնն է մեր կրօնական գիտակցութեան անկման: Բնիկ հայկական ծէսում առկայ հրաժարման արարողութիւնը զերծ է չարը մերժելու այժմեան անորոշ ձեւակերպումներից, երբ մկրտուողի փոխարէն ամէն ինչ յոգնակիաբար ասւում է քահանայի կողմից: Քահանայի եւ մկրտուողի հարց ու պատասխանը ստեղծում են այն հոգեբանական միջավայրը, ուր առաւելագոյնս դրսեւորւում է մկրտուողի կամաւոր դարձը սատանայից, նրա ողջ խաբէութիւնից, պաշտամունքից, ընթացքից եւ հրեշտակներից:

Արեւմուտքը նշանակն է խաւարի, սատանայի բնակավայրի: Մկրտուողը չի երկնչում դէմ առ դէմ կանգնել սատանայի առաջ. նա անցել է պատրաստութեան երկարատեւ շրջան: Սակայն նրան առաւելապէս զօրացրել են քահանայի քիչ առաջ կարդացած աղօթքները:

Չարի մերժումը մարդու կամքի ազատութեան վկայութիւնն է: Այս մերժումը նախ եւ առաջ մարդու ներքին նախապատրաստութեան արտայայտութիւնն է. մարդը երկարատեւ նախապատրաստութեամբ ներքնապէս հեռացել է չարից, որը կոչւում է մեռելութիւն այս աշխարհի[29] նկատմամբ, այսինքն՝ սեփական մարմնի անդամների, զգայութիւնների, հոգու շարժումների, մտքի զօրութիւնների անկենդանութիւն մեղքի նկատմամբ: Մերժումը միաժամանակ հոգեւոր զգուշութեան եւ շրջահայեցութեան սկիզբ է մեր ներսում. մեր գործերում հրաժարուելով չարից՝ մենք պէտք է զգուշանանք նրա հրապոյրներից. «Հրապուրեալ հրապուրէ նա, այլ ոչ եթէ բռնութեամբ յաղթահարեալ կարէ որ ոչն անսան նմա»[30]: Յատկապէս պէտք է մտքերի մեծ զգօնութիւն, որոնց միջոցով չարը սովորաբար ախտաւոր ցանկութիւններ է սերմանում մեր մէջ. «Ապա եթէ անխտիր ցանկութեան զմտաւ ածիցես, քո իսկ խորհրդովքն արմատս չարեաց ի քեզ տնկէ եւ, թակարթապատ արարեալ զքեզ, քոյին խորհրդովքն

---

29 *«Այս աշխարհ» արտայայտութիւնը Նոր Կտակարանի եւ սբ հայրերի գրուածքների ամենակիրառական արտայայտութիւններից է, որով բնորոշւում է մեղքի ոլորտն ընդհանրապէս: Այս աշխարհը հաւաքական անուն է, որն իր մէջ է ներառում բոլոր մեղքերն իրենց տարատեսակներով:*

30 *Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, ճառ Բ, էջ 11*

չաղեալ պատեալ, ի խորխորատն չարեաց կործանեսցէ զքեզ»[31]: Զարն ատելը ինքնանպատակ չէ, այլ բարին սիրելու սկիզբն է: Անհրաժեշտ է կամաւոր դարձ առ Աստուած, հրաժարում մեր մեղսահակ-մարմնահակ կամքից, եթէ պատրաստւում ենք դառնալ երկնքի արքայութեան ժառանգորդներ. «Եւ որք հրաժարին ի պատիր խաբէութենէ մարմնաւոր վարուցս՝ լուացեալ զմիտս շնորհօք ի խղճէ չարեաց ստոյգ զղջմամբ, ապաշխարութեամբ եւ արտասուօք, ատել զչարն եւ սիրել զբարին, խափան լինել մոլար խաբէութեան ուսման եւ ընծայաբեր լինել ճշմարիտ հաւատով Ամենասուրբ Երրորդութեանն, որք այսմ արժանի լինին, առնուն զանուն առաքելութեան աւետեաց Նորոց Կտակարանաց եւ ժառանգաւոր լինին արքայութեանն երկնից»[32]: Այսպիսով՝ հրաժարման համար պէտք է՝ ա) նախապատրաստութիւն, այսինքն՝ գործնական մեռելութիւն այս աշխարհի նկատմամբ եւ տեսական ճանաչողութիւն մեղքի ոլորտի, բ) ներանձնական կեանքի հաստատութիւն եւ որոշակի փորձառութիւն՝ զգուշանալու համար առաջիկայ փորձութիւններից, գ) վճռական պատրաստակամութիւն՝ Քրիստոսի փրկութեան առջեւ բացուելու եւ շնորհական ներհաստատման:

ՀԱՒԱՏՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Ապա դարձուցանէ յարեւելս՝ խոստովանելով զՄի Աստուածութիւն Սրբոյ Երրորդութեանն երիցս անգամ այսպէս.

Հաւատա՞ս յԱմենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ:

Ապա դարձնում է դէպի արեւելք՝ երեք անգամ այսպէս խոստովան[եցն]ելով Սուրբ Երրորդութեան Մի Աստուածութիւնը.

Հաւատո՞ւմ ես Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն:

[Երեսիւն երեք անգամ պատասխանում է՝ հաւատում եմ][33]:

---

31 Նոյն

32 «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի վարդապետութեան ճառք յաճախապատումք եւ լուսաւորք», Ճառ Ե, Կ. Պոլիս, 1824, էջ 44

33 Դրեցինք ըստ տարբերութիւնների (տես Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», 1972, հ. 2–3, էջ 192–193):

Հարցանէ քահանայն այսպէս.

Հաւատա՞ս ի Հայր, հաւատա՞ս յՈրդին, հաւատա՞ս ի Սուրբ Հոգին:

Քահանան հարցնում է այսպէս.

Հաւատո՞ւմ ես Հօրը, հաւատո՞ւմ ես Որդուն, հաւատո՞ւմ ես Սուրբ Հոգուն:

Եւ ըստ միոյ միոյ ասասցէ երախայն.

Հաւատամ, հաւատամ, հաւատամ:

Եւ երախան մէկ առ մէկ պիտի ասի.

Հաւատում եմ, հաւատում եմ, հաւատում եմ:

Եւ դարձեալ հարցանէ երիցս անգամ.

Հաւատա՞ս, հաւատա՞ս, հաւատա՞ս:

Եւ դարձեալ երեք անգամ հարցնում է.

Հաւատո՞ւմ ես, հաւատո՞ւմ ես, հաւատո՞ւմ ես:

Եւ առ միոյ միոյ ասասցէ երախայն.

Հաւատամ:

Եւ երախան մէկ առ մէկ պիտի ասի.

Հաւատում եմ:

Եւ պաշտեն զՀաւատամն Նիկիայ ի բուն:

Ապա ամբողջապէս երգում են Նիկիոյ «Հաւատամ»-ը:

Դէպի արեւելք դառնալը խորհրդանշում է մեր հոգու դարձը դէպի Քրիստոս, դէպի Լոյս: Արեւելքից ծագող զգալի արեգակի լոյսը խորհրդանշում է հոգեւոր արեւելքից ծագած իմանալի Արեգակի՝ Քրիստոսի փրկութեան լոյսը:

Նորից մենք տեսնում ենք, որ բնիկ հայկական ծէսում առկայ է հաւատքի խոստովանութեան անհատական ձեւ: Հարց ու պատասխանին յաջորդում է Նիկիական հանգանակի արտասանութիւնը: Բոլոր հին ձեռագրերում, ի տարբերութիւն յոգնակի «Հաւատամքի», արտասանւում էր «Հաւատում եմ Մի Աստուծոյ...»՝ դարձեալ ի տարբերութիւն յոգնակի, անհատական ձայնը խլացնող, անհատի կամաւոր դարձը չչեշտադրող կերպերի:

Հաւատքի խոստովանութիւնը նախապատրաստութեան կամ երախայութեան կարգի գլխաւոր եւ եզրափակիչ արարողութիւնն է. երկարատեւ նախապատրաստութիւնից յետոյ մարդը պատրաստ է սուրբ Դաւանութեան խոստովանութեան: Նա ուսանել է հաւատքի տեսական եւ գործնական սկզբունքները, սրտով հաստատուել-հաւատացել է Քրիստոսի Աւետարանին, սակայն փրկութեան ժառանգու-

թիւն մուտք գործելու համար պէտք է բերանի խոստովանութիւն. «Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն» [Հռոմ. Ժ 10]:

Եկեղեցու հայրերը դաւանական հաւատքը[34] *կամ հաւատքի դաւանութիւնը (խոստովանութիւնը) դիտել են որպէս հաւատքի առաջին տեսակ կամ աստիճան. «Զի առաջին տեսակ ճանաչելոյ զԱստուած ուղիղ հաւատոցն խոստովանութիւնն է...»*[35]*: Հաւատքի խոստովանութիւնը Քրիստոսի Եկեղեցի մուտք գործելու խորհրդական դուռն է: Միայն նա կարող է մուտք գործել Քրիստոսի Եկեղեցի, ով ունի ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը. «...զի անուն քրիստոնէութեան զՔրիստոս ճշմարիտ խոստովանելն է, եւ քրիստոնեայ անուանի, որ զճշմարիտ խոստովանութիւնն ստացեալ ունի»*[36]*:*

Ապա ասեն սաղմոս ի թիւ ՃԺԷ՝

«Խոստովա՛ն եղերուք Տեառն, զի բարի է», *մինչեւ ցայն վայրն՝* **«Բացէ՛ք ինձ զդրունս»**:

Եւ, բացեալ զեկեղեցին, մտանեն ի ներքս՝ երթալով առաջի Աւագանին, պատրաստ ունելով զիւղն սորբ:

Քարոզէ սարկաւագն.

Եւ եւս վասն իջանելոյ ի յիւղս յայս շնորհք Ամենասուրբ Հոգւոյդ զՏէր աղաչեսցուք:

Գ «Տէր, ողորմեա»:

Ապա թիւ ասում են ՃԺԷ սաղմոսը՝

«Խոստովանեցէ՛ք Տիրոջը, որովհետեւ բարի է», *մինչեւ այն տեղը՝* **«Բացէ՛ք իմ առջեւ դռները»**:

Եւ, բացելով եկեղեցին, ներս են մտնում՝ գնալով Աւազանի առաջ, պատրաստ ունենալով սորբ իւղը:

Սարկաւագը քարոզում է.

Եւ դարձեալ այս իւղի վրայ Ամենասուրբ Հոգու շնորհների իջնելու համար աղաչենք Տիրոջը:

Երեք «Տէր, ողորմեա»:

---

34 *Այս մասին աւելի մանրամասն տես Մեսրոպ քահանայ Արամեան, «Երեք Տիեզերական Ժողովների դաւանութիւնը», «Գանձասար», հ. Ա, 1992, էջ 110. «Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.)», սոյն հատորում, էջ 25:*

35 *Սբ Աթանաս Աղեքսանդրացի, Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, «Յամենասուրբ Երրորդութիւն», Վենետիկ, 1899, էջ 239*

36 *Նոյն, էջ 240*

Քահանայն ասէ զաղօթս զայս.

Օրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ ընտրեցեր Քեզ ժողովուրդ ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն, յազգ սուրբ եւ ի ժողովուրդ սեպհական. ըստ որում եւ յառաջագոյն իսկ օծեր զքահանայս եւ զթագաւորս եւ զմարգարէս՝ այսպիսի ամենասուրբ իւղով: Եւ այժմ աղաչեմք զՔեզ, Տէ՛ր բարերար, առաքեա՛ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ ի յիւղս յայս, զի որ օծցի սովաւ, եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան, ի նահատակութիւն եւ յաղթութիւն հակառակամարտին, ի զօրութիւն պատուիրանապահութեան, առաքինի գործոց եւ յամենակատար հրահանգս եւ ի կրթութիւնս աստուածպաշտութեան: Որպէսզի լուսաւորեալ մտօք կեցցէ յայսմ աշխարհիս՝ ի փրկութիւն անձին իւրոյ, ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն, արժանաւորիլ եւ հասանել վիճակի ժառանգութեան սիրելեաց անուան Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ, ընդ Որում Քեզ Հօր եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանան ասում է այս աղօթքը.

Օրհնեալ ես, Տէ՛ր Աստուած մեր, որ Քեզ ժողովուրդ ընտրեցիր՝ քահանայութեան եւ թագաւորութեան, սուրբ ազգ եւ սեփական ժողովուրդ [լինելու համար], ըստ որի էլ նախապէս իսկ օծեցիր քահանաներին, թագաւորներին, մարգարէներին այսպիսի ամենասուրբ իւղով: Եւ այժմ աղաչում ենք Քեզ, բարերա՛ր Տէր, այս իւղի վրայ առաքի՛ր Սուրբ Հոգուդ շնորհները, որպէսզի, ով օծուի սրանով, նրա համար լինի որպէս հոգեւոր իմաստութեան սրբութիւն, նահատակութիւն եւ յաղթութիւն հակառակամարտ [չարի] նկատմամբ, պատուիրանապահութեան եւ առաքինի գործերի զօրութիւն, ամենակատար հրահանգներ եւ աստուածպաշտութեան կրթութիւն: Որպէսզի լուսաւորուած մտքով ապրի այս աշխարհում՝ ի փրկութիւն իր անձի եւ ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան՝ արժանաւոր լինելու եւ հասնելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան սիրելիների ժառանգութեան վիճակին. Նրա հետ Քեզ՝ Հօրդ, եւ Սուրբ Հոգուն, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եկեղեցի մտնելով՝ գնում են դէպի Աւազան: Ջեռագիր մաշտոցները միաբերան պատուիրում են պատրաստ ունենալ սուրբ իւղը. որոշ հին ձեռագրերում սուրբ իւղի փոխարէն օծութեան իւղ է: Տպաւորութիւնն այնպիսին է, որ խօսքը Միւռոնի մասին է, սակայն թէ՛ սարկաւագի քարոզում եւ թէ՛ քահանայի աղօթքում խնդրւում է նրա վրայ առաքել Սուրբ Հոգու շնորհները, ինչն անիմաստ կը լինէր օրհնուած սուրբ Միւռոնի դէպքում: Անկասկած, այս քարոզն ու աղօթքը երախաների օծութեան իւղի օրհնութեան հետքերն են: Այս մասին է որոշակիօրէն խօսում սբ Յովհաննէս Օձնեցու Ժ կանոնը. «Պարտ եւ արժան է զՄկրտութեան ձէթ քահանային օրհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից. եւ նոյնժամայն, առ մկրտեալսն մերձեցուցանելով, զօրհնեալն սպառել եւ մի՛ իշխել զմիանգամ օրհնեալն բազում անգամ օրհնել. եւ միայն օծանել նովաւ զերեխայսն եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յԱւազանին, եւ յայլ խորհուրդ օծման մի՛ իշխեսցէ մատուցանել զնա»[37]:

Այսուհանդերձ, երախաների օծումն անհետացել է Մկրտութեան արարողութիւնից. բացառութեամբ իւղի օրհնութեան քարոզի եւ աղօթքի՝ ոչ մի հետք կամ խորագիր չի պահպանուել: Տպագիր մաշտոցները երախաների օծութեան այս խնդիրը լուծել են՝ ձեւափոխելով քարոզի եւ աղօթքի իմաստը:

Սբ Գրիգոր Տաթեւացու հետեւեալ արտայայտութիւնից՝ «...զի մի՛ համարձակեսցին քահանայք եւ զձէթ օրհնէքն վերստին մուծցեն յեկեղեցի»[38], ակներեւ է, որ ձէթի օրհնութեան դէմ պայքար է եղել, եւ այն դուրս է մղուել մեր Եկեղեցու ծիսական-բարեպաշտական կիրառումից... Հիմնական պատճառն այն էր, որ օրհնուած ձէթի գործածումը հիւանդների եւ տկարների վրայ խափանում էր խոստովանութիւնը[39]: Սակայն թէ ինչու է երախաների օծումն[40] անհետացել Մկրտութեան ծէսից, տակաւին մնում է անորոշ:

---

37 «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 26

38 Սբ Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, «Վասն է խորհրդոյ Եկեղեցւոյ», էջ 148

39 Տես նոյն, էջ 148:

40 Իւղի, միւռոնի խորհրդաբանութեան եւ օծման հարցերի մասին աւելի մանրամասն ուսումնասիրութիւն կը լինի յաջորդիւ՝ Դրոշմի արարողութեան մասին բաժնում:

ՋՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Եւ ապա զջուրն յԱւազանն արկանէ իսաչանման:

Սաղմոս ԻԸ. «*Ձայն Տեառն ի վերայ ջրոց*»:

Ընթերցուած յեզեկիելէ մարգարէէ *[Եզեկ. ԼԶ 25–28]:*

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս *[Գաղ. Գ 24–29]:*

Ալէլու: Սաղմոս ԻԲ. «*Տէր հովուեսցէ զիս...*»:

Աւետարան ըստ Յովհաննու *[Յովհ. Գ 1–8]:*

Եւ ապա ջուրը իսաչանման լցնում է Աւազանի մէջ:

Սաղմոս ԻԸ. «*Աստուծոյ ձայնը ջրերի վրայ է*»:

Ընթերցուած Եզեկիէլ մարգարէից *[Եզեկ. ԼԶ 25–28]:*

Պօղոս առաքեալի՝ Գաղատացիներին ուղղուած թղթից է ընթերցուածը *[Գաղ. Գ 24–29]:*

Ալէլու. Սաղմոս ԻԲ. «*Տէրը կը հովուի ինձ...*»:

Աւետարան ըստ Յովհաննու *[Յովհ. Գ 1–8]:*

Քարոզութիւն ի վերայ Մկրտութեան ջրոյն.

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք:

Վասն հայրապետին մերոյ կենաց եւ հաւատոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն զի Տէր ուղղեսցէ զգործս ձեռաց քահանայիս, որ առնէ զՄկրտութիւնս, զՏէր աղաչեսցուք:

Վասն սրբելոյ առաջիկայ ջրոյս եւ գալ գործակցութեանն Հոգւոյն Սրբոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնսն Յորդանանու զՏէր աղաչեսցուք:

Քարոզութիւն Մկրտութեան ջրի վրայ.

Ողջ աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցու հաստատութեան համար աղաչենք Տիրոջը:

Ի վերուստ խաղաղութեան եւ մեր անձերի փրկութեան համար աղաչենք Տիրոջը:

Մեր հայրապետի կեանքի եւ հաւատքի համար աղաչենք Տիրոջը:

Որպէսզի Տէրն ուղղի այս Մկրտութիւնը կատարող քահանայի ձեռքի գործը, աղաչենք Տիրոջը:

Առաջիկայ ջուրը սրբելու եւ Սուրբ Հոգու գործակցութեան գալու համար աղաչենք Տիրոջը:

Որպէսզի սա ընդունի Յորդանանի օրհնութիւնները, աղաչենք Տիրոջը:

Վասն լինելոյ սմա բժշկութիւն հոգւոց եւ մարմնոց զՏէր աղաչեսցուք:

Վասն վերածնելոց, որք ի սմա մկրտին, լինել որդիս Լուսոյ եւ Ճշմարտութեան, զՏէր աղաչեսցուք:

Յիշելով զԱստուածածինն եւ զմիշտ Կոյսն Մարիամ եւ զՄկրտիչն Յովհաննէս եւ զամենայն սուրբս՝ եւ նոքօք զՏէր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Եւ կացուցէ զնորընծայն մօտ յԱւազանն եւ ասէ զաղօթս զայս.

Դո՛ւ, Տէ՛ր, զօրութեամբ Քով մեծաւ արարեր զծով եւ զցամաք եւ զամենայն որ ի նոսա արարածք իցեն: Որոշեցեր եւ կացուցեր զջուրս ի վերայ քան զերկինս եւ ի բնակութիւնս լուսեղէն զօրաց, որք կան յանդադար փառաբանութեան Քում: Առաքեցեր զսուրբ առաքեալսն Քո՝ հրաման տալով քարոզել եւ մկրտել յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ զամենայն

Որպէսզի սա հոգիների եւ մարմինների բժշկութիւն լինի, աղաչենք Տիրոջը:

Որպէսզի սրանով մկրտուող վերածնուածները լինեն Լոյսի եւ Ճշմարտութեան որդիներ, աղաչենք Տիրոջը:

Յիշելով Աստուածածնին եւ միշտ Կոյս Մարիամին, Յովհաննէս Մկրտչին եւ բոլոր սուրբերին՝ նրանցով աղաչենք Տիրոջը:

Եւ դարձեալ մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար միաբան աղաչենք Տիրոջը:

Մեր անձերը եւ միմեանց ամենակալ Տէր Աստծուն յանձնենք:

Ողորմի՛ր մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ Քո մեծ ողորմութեան. բոլորս միաբան ասենք:

Եւ նորընծային կանգնեցնում է Աւազանի մօտ եւ ասում այս աղօթքը.

Դո՛ւ, Տէր, Քո մեծ զօրութեամբ արարեցիր ծովը, ցամաքը եւ նրանց միջի բոլոր արարածներին: Բաժանեցիր եւ հաստատեցիր ջրերը երկնքի վերեւում եւ բնակավայրերում լուսեղէն զօրքերի, որոնք անդադար փառաբանում են Քեզ: Առաքեցիր Քո սուրբ առաքեալներին՝ հրաման տալով քարոզել եւ մկրտել բոլոր հեթանոսներին Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Այլեւ անսուտ խօսքովդ սահմանեցիր՝

հեթանոսս: Այլ եւ սահմանեցեր անսուտ բանիւդ՝ ոչ ծնեցելոցն ջրով եւ Հոգւով ոչ մտանել յարքայութիւնն: Յորմէ բանէ զարհուրեալ ծառայս Քո, ցանկանալով մշտնջենաւոր կենացդ, եկն կամաւ ի Մկրտութիւն հոգեւոր ջրոյս այսորիկ: Աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, առաքեա՛ զՀոգիդ Սուրբ ի ջուրս յայս եւ սրբեա՛ զսա, որպէս սրբեցեր զՅորդանան՝ իջանելով ի նմա, Ամենասո՛ւրբդ ի մեղաց, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, յօրինակ յայսմ Աւազանի Մկրտութեան վերստին ծննդեան ամենայն մարդկան: Եւ շնորհեա՛ սմա զջուրս զայս, յորում մկրտի այժմիկ, ի թողութիւն մեղաց, յընդունելութիւն Հոգւոյդ Սրբոյ, զորդեգրութիւնն Հօրդ երկնաւորի, ի ժառանգութիւն արքայութեանդ երկնից: Որպէսզի, սրբեալ ի մեղաց, ի հաճոյս կամաց Քոց կեցցէ ի յայսմ աշխարհիս եւ ի հանդերձեալսդ զանսպառ բարիսդ ընդ ամենայն սուրբս Քո ընկալցի եւ գոհութեամբ փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա ածէ ի սորբ յիւղոյն յԱւազանն հաչանման՝ ասելով ալէլու:

ջրով եւ հոգով չծնուածին չմտնել արքայութիւն: Այդ խօսքից զարհուրած Քո այս ծառան, ցանկանալով մշտնջենաւոր կեանքիդ [հաղորդակցութիւնը], կամովին եկաւ՝ այս հոգեւոր ջրով մկրտուելու: Աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, առաքի՛ր Սուրբ Հոգիդ այս ջրի վրայ եւ սրբի՛ր այն, ինչպէս սրբեցիր Յորդանանը՝ նրա մէջ իջնելով, ամենասո՛ւրբդ մեղքերից, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որպէս օրինակ այս Աւազանի Մկրտութեան, բոլոր մարդկանց վերստին ծննդեան [համար]: Եւ շնորհի՛ր սրան այս ջուրը, որով մկրտւում է, որպէս մեղքերի թողութիւն, Սուրբ Հոգուդ ընդունելութիւն, որդեգրութիւն[41] *երկնաւոր Հօրդ, ժառանգութիւն երկնքի արքայութեանդ: Որպէսզի, սրբուելով մեղքերից, Քո կամքին հաճելի կերպով ապրի այս աշխարհում, քո հանդերձեալ [կեանքում] Քո բոլոր սուրբերի հետ ստանայ անսպառ բարիքներդ եւ գոհութեամբ փառաւորի Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Ապա սորբ իւղից հաչանման թող լցնի Աւազանի մէջ՝ ասելով «ալէլուիա»:

---

41 Ըստ ՄՄ N 1001 ձեռագրի:

Ջուրը[42]՝ *որպէս մաքրագործման եւ ազատութեան նիւթական նշանակ, բնաւորուած է մարդու ներաշխարհում... Հին Կտակարանում հանդիպում ենք ջրով լուացման արարողութիւնների, որոնք մարմնական մաքրագործման օրինակով յայտակերպում են հոգու՝ Աստուծոյ զօրութեամբ ազատագրումը մեղքի աղտերից. «Եւ մատուսցես զԱհարոն եւ զորդիս նորա ի դուռն խորանին վկայութեան եւ լուասցես զնոսա ջրով» [Ելք Խ 12], «Եւ մատոյց Մովսէս զԱհարոն եւ զորդիս նորա եւ լուաց զնոսա ջրով» [Ղեւտ. Ը 6]*[43]*: Ջրի՝ որպէս Աստուծոյ սրբարար ներգործութեան նիւթական միջոցի հոգեւոր նշանակութիւնը յատկապէս մեծ խորութեամբ է արտացոլուած Եզեկ. ԼԶ 25–28 տեղիքում*[44]*, ուր մարդու վրայ սուրբ ջրի ցօղումը խորհրդանշում է մեղքերից ազատագրումը, հոգեւոր նորոգութիւնը, նոր սրտի հաստատումը: Սակայն պէտք չէ ջուրը դիտել որպէս սոսկ սրբազան նշան, որը գործում է անկախ մարդու կամքից, այլ ջրի սրբացնող զօրութիւնը գործում է միայն համապատասխան հոգեվիճակների առկայութեան դէպքում: Առհասարակ, սրբազան նշաններն իրենց մէջ հանգուցում են աստուածաբանական (ի վերուստ, շնորհական) եւ մարդաբանական (ի ներքուստ, գործնական) գործոններ: Այսինքն՝ սրբազան նշանն ունի իր սրբարար զօրութիւնը, որը կենդանագործում է միայն նախապատրաստուած հոգիներում: Եթէ աստուածային նշանը չարից ազատագրման համար է, ապա մարդը պէտք է կամովին չարից հրաժարուի խոր զղջումով եւ ապաշխարութեամբ, պէտք է դարձի գայ առ Աստուած:*

Ներքին մարդուն ուղղուած հզօր կոչով նշանաւորուեց Յովհաննէս Մկրտչի ապաշխարութեան մկրտութիւնը, ուր ջրով մկրտուելը խորհրդանշում էր հրաժարումն այս աշխարհից, դարձն առ Աստուած,

---

42 Այստեղ մենք չենք անդրադառնում ջրի բազմանշանակ խորհուրդներին, այլ միայն դիտարկում ենք Մկրտութեան ջրի աստուածաբանութիւնը:

43 Տես նաեւ Ղեւտ. ԺԳ 6, ԺԴ 4–9, ԺԶ 4, 24:

44 Այս հատուածն ընթերցւում է ջրի օրհնութեան սկզբում. «Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց, եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ: Եւ տաց ձեզ սիրտ նոր եւ ոգի նոր նորոգեցից ի ձեզ. եւ հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն. եւ զՈգի իմ տաց ձեզ: Եւ արարից, զի յարդարութիւնս իմ գնասջիք եւ զիրաւունս իմ պահիցէք եւ առնիցէք զնոսա. եւ բնակիցէք յերկրին, զոր ետու հարցն ձերոց, եւ եղիջիք ինձ ի ժողովուրդ, եւ ես եղէց ձեզ յԱստուած»:

հոգու նախապատրաստութիւնը մօտեցող աստուածային Լոյսին: Յովհաննու մկրտութեան մէջ յատկապէս ընդգծուած է Աստուծոյ փրկութեան հինկտակարանեան սպասումը. «Ապաշխարեցէ՛ք, քանզի մերձեցել է երկնքի արքայութիւնը» [Մատթ. Գ 2]: Յովհաննէսն ինքը վկայում է, որ իր մկրտութիւնը (հետեւաբար նաեւ՝ հինկտակարանեան ջրի լուացումները) դեռեւս կատարեալ չէ: Ոչ մի նիւթական նշան դեռեւս կատարեալ չէ. աշխարհն առեւանգուած է չարի կողմից... Կատարեալ մկրտութիւնը լինելու է Քրիստոսով. «Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր» [Մատթ. Գ 11]: Այսպիսով՝ Հին Կտակարանում ջրի խորհուրդը խարսխուած է երկու կարեւոր հանգոյցների վրայ՝ սրբագործում եւ ապաշխարութիւն:

Բանի մարդեղութեամբ ամբողջանում են բոլոր հինկտակարանեան կերպերը, եւ նիւթը ձեռք է բերում էապէս նոր հոգեւոր արժէքներ: Ջուրը դառնում է փրկութեան, վերստին ծննդեան, Աստուծոյ ժառանգութիւն մուտք գործելու սրբազան նշանակ: Ջուրն էափոխւում է նոր վիճակի, որն, ինչպէս շուտով կը տեսնենք, կայանում է Քրիստոսի մահով եւ յարութեամբ...

Սակայն մենք նորից վերադառնանք ծիսական իրականութեանը: Ջուրը խաչանման, այսինքն՝ Քրիստոսի փրկագործութեան կերպաւորումով, լցւում է Աւազանի մէջ. այսպիսի խորհրդական գործողութեամբ անմիջապէս ցոյց է տրւում քրիստոնէական Մկրտութեան ջրի նուիրական էութիւնը. այն այլեւս սոսկ Հին Կտակարանի մաքրագործման ջուրը չէ, այլ Քրիստոսի փրկութեանը տնկակցուելու սրբազան նշան է: Հինկտակարանեան ընթերցուածները ներածում են մեզ աւետարանական իրականութեան մէջ: Աւետարանի ընթերցուածի եւ աղօթքի մէջ սկզբունքային նշանակութիւն ունի տէրունական խօսքը. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոց եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» [Յովհ. Գ 3]: Ջրից եւ Հոգուց ծնուելը անխուսափելի է դառնում նրանց համար, ովքեր կամենում են ազատագրուել մեղքի բռնութիւններից, մտնել Աստուծոյ արքայութիւն եւ փրկուել:

Քրիստոնէական Մկրտութեան ջրին զուգակցուած է Սուրբ Հոգու զօրութիւնը, որը ջրի վրայ է հրաւիրւում քահանայի աղօթքով... Բան Աստուծոյ մարմնաւորումով արարածն ի զօրու է դարձել կրելու Աստծուն, եւ Սուրբ Հոգին Իր անձնական գալստեամբ լցնում է Աստուծոյ արարչութիւնը, զօրացնում նիւթը եւ փրկութեան

առիթ դարձնում: Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու աղաւնակերպ էջքը, Հայր Աստուծոյ ձայնը, այսինքն՝ Եռանձնեայ Աստուածութեան յայտնութիւնը եւ Նրա զօրութեան ընդխառնումը ջրերին, իրենց տնօրինական ամբողջութեանն են հասնում Հոգեգալուստով...

Ջրի օրհնութեան արարողութիւնն աւարտւում է սբ Միւռոնի խաչանման հեղումով Աւազանի մէջ (սբ Միւռոնն այստեղ խորհրդանշում է աննիւթական Աստուածութիւնը): Խաչը մեր փրկութեան ճանապարհն է. միայն Քրիստոսի Խաչելութիւնից, Մահուանից եւ Հրաշափառ Յարութիւնից յետոյ արարածը կարող է արժանանալ աստուածային իրականութեան ամբողջութեանը՝ Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ: Սուրբ Հոգին հեղւում է ջրի մէջ, աստուածային անեղ լոյսն իջնում է եղական նիւթի մէջ, հոգեղինացնում եւ վերնիւթացնում այն՝ դարձնելով փրկութեան նշան եւ խորհուրդ: Այժմ ջուրը եւ Սուրբ Հոգին պիտի գործեն միեղէն զօրութեամբ...

Մկրտութեան ջրի աստուածաբանութիւնը խորապէս բացայայտուած է սբ Կիւրեղ Երուսաղեմացու «Ընծայութեան կոչման» երրորդ ճառում. «Մի՛ լոկ ի ջուր կամ ի դատարկ հայիցիս յԱւազան անդր, այլ՝ ջրովն եւ շնորհօքն խառն ի Հոգին Սուրբ կենդանի»: «Արդ, յորժամ իջանիցես ի ջուր անդր, մի՛ իբրեւ ի թեթեւ ի դատարկ ջուր ինչ հայիցես, այլ ի զօրութենէ Ոգւոյ անտի փրկութեան սպասեսջիր»[45]*:*

Ըստ սբ Կիւրեղի՝ ջրով Մկրտութիւնն անհրաժեշտ է փրկութեան համար: Եւ միայն մարտիրոսները, որոնք մկրտւում էին սեփական արեամբ, կարող են փրկուել եւ ստանալ արքայութիւնը. «Եթէ ոք ոչ ընկալցի զՄկրտութիւն, փրկութիւն ո՛չ գոյ նորա, բայց միայն մարտիրոսաց, որք եւ առանց ջուրց առնուն զքաւութիւն»[46]*: Տիրոջ խոցուած կողից հոսող արիւնը եւ ջուրը սբ Կիւրեղը դիտում է որպէս ջրի Մկրտութեան եւ մարտիրոսական Մկրտութեան խորհրդանիշներ*[47]*:*

---

45 Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, ճառ Գ, էջ 31, 32

46 Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, ճառ Գ, էջ 38

47 Տես նոյն, էջ 38:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եւ հրամայէ մերկանալ զերահայական զգեստն եւ լինել կազմ ի լուացումն սուրբ:
Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ի վերայ.

Որ կոչեցեր զծառայս Քո, Տէ՛ր, ի լուսաւորութիւն Մկրտութեան, աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, արա՛ զսա արժանի մեծի շնորհաց. մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց եւ նորոգեա՛ ի կեանս նորս եւ լցո՛ զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ որդեգրութիւն կենաց Քրիստոսի Քո, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ հրամայում է մերկանալ երահայական զգեստից եւ պատրաստ լինել սուրբ լուացման:
Եւ քահանան [մկրտուողի] վրայ ասում է այս աղօթքը.

Տէ՛ր, որ կոչեցիր Քո ծառային Մկրտութեան լուսաւորութեան, աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, արժանի՛ արա սրան մեծ շնորհների, մերկացրո՛ւ սրանից մեղքի հնութիւնը, նորոգի՛ր նոր կեանքով եւ լցրո՛ւ Սուրբ Հոգուդ զօրութեամբ՝ յորդեգրութիւն Քրիստոսիդ [յաւիտենական] կեանքի. Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ իջուցանէ յԱւազանն եւ խնդրեացէ քահանայն զանունն:
Եւ արկեալ ի սուրբ ջրոյն ի վերայ գագաթանն Գ անգամ՝ ասելով այսպէս.

Այս անուն *մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ գնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունելով զազատութիւն որդեգրութեան Հօրդ երկնաւորի, լեալ ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Եւ քահանան իջեցնում է Աւազանի մէջ եւ հարցնում է անունը:
Եւ երեք անգամ սուրբ ջրից լցնում է գլխին՝ ասելով այսպէս.

Այս անունը *մկրտւում է Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով՝ Քրիստոսի Արեամբ գնուելով մեղքի ծառայութիւնից, ընդունելով երկնաւոր Հօրդ որդեգրութեան ազատութիւնը, լինելով ժառանգակից Քրիստոսի եւ Սուրբ Հոգու տաճար այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Զայս Գ անգամ ասելով՝ Գ անգամ ընկղմեցուցանէ ջրովն, որ նշանա-

Երեք անգամ այսպէս ասելով՝ նաեւ երեք անգամ ընկղմում է ջրի մէջ,

կէ զերեքօրեայ թաղումն Քրիստոսի եւ կցորդութիւն: Եւ լուանալով զբաւանդակ մարմինն՝ ասելով այսպէս.

Որք ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. ալէլուիա:

Սաղմոս ԼԳ. *«Բազում նեղութիւնք են արդարոց»:*

Որք ի Հայր լուսաւորեցարուք, Սուրբ Հոգին բերկրեսցի ձեօք. ալէլուիա:

Տուն առ տուն սաղմոսեն սաղմոս նոյն եւ փառս տան նովին կցորդիւն: Եւ հանէ յԱւազանէն եւ տայ ցկնքահայրն: Եւ ընթեռնու Աւետարան ըստ Մատթէոսի [Մատթ. Գ 13–17]:

Հայր մեր, որ յերկինս ես:

որ նշանակում է Քրիստոսի երեքօրեայ թաղումը եւ կցորդութիւնը [Նրա մահուանը]: Եւ լուանում է ողջ մարմինը՝ ասելով այսպէս.

Ովքեր մկրտուեցիք Քրիստոսով, հագել էք Քրիստոսին. ալէլուիա:

Սաղմոս ԼԳ. *«Բազում նեղութիւններ ունեն արդարները»:*

Ովքեր լուսաւորուեցիք Հայր [Աստուածով], թող Սուրբ Հոգին բերկրի ձեզանով. ալէլուիա:

Տուն առ տուն ասում են նոյն սաղմոսը եւ փառք տալիս նոյն կցորդով: Եւ հանում է Աւազանից եւ տալիս կնքահօրը: Եւ ընթերցում է Աւետարան ըստ Մատթէոսի [Մատթ. Գ 13–17]:

Հա՛յր մեր, որ երկնքում ես:

***Մենք մօտեցանք Մկրտութեան խորհուրդի կենտրոնական արարողութեանը, որն իրենից ներկայացնում է ջրով լուացում՝ որոշակի խօսքերի արտասանութեամբ [տես Եփես. Ե 26]: Սակայն մինչեւ բուն Մկրտութիւնը քահանան հրամայում է մերկանալ երախայական զգեստից ու պատրաստ լինել սուրբ լուացման եւ մկրտուողի վրայ ասում նախապատրաստող աղօթք: Այս փոքրիկ նախապատրաստութիւնն անմիջապէս Մկրտութիւնից առաջ ամփոփում է բոլոր նախորդ արարողութիւնները: Քիչ յետոյ ընծայեալը պէտք է արժանանայ Մկրտութեան լուսաւորութեանը՝ մեծ շնորհների, մեղքերից ազատագրման, նոր կեանքի: Նա խկապէս պէտք է «ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոյ, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց» [տես Եբր. Ժ 22], մօտենայ սրբութեան ջրի Մկրտութեանը, որպէսզի արժանանայ շնորհական որդեգրութեանը եւ հոգու ազատագրութեանը...*

***Քահանան երեք անգամ ընկղմում է սուրբ ջրի մէջ, որն ուղեկցւում է աստուածային անունների արտասանութեամբ** (epiclesis):*

Մկրտութեան բանաձեւին յաջորդող հակիրճ բացատրութիւնը՝ «որ նշանակում է Քրիստոսի երեքօրեայ թաղումը եւ կցորդութիւնը», ներածում է մեզ Մկրտութեան էութեան մէջ: Մկրտութիւնն իրական մուտք է Քրիստոսի մահուան մէջ եւ հետեւաբար՝ Նրա յարութեան: Մկրտութիւն նշանակում է մեռնել եւ յարութիւն առնել Քրիստոսի հետ. այն այլեւս սոսկ լուացում կամ մաքրագործում չէ, այլ մահ է, որին յաջորդում է սքանչելի յարութիւնը. «Թաղեալք ընդ նմին ի Մկրտութիւն, որով եւ ընդ նմին յարեայք հաւատովք...» [Կող. Բ 12]: Սակայն ի՞նչ է նշանակում մեռնել եւ յարութիւն առնել Քրիստոսի հետ կամ, այլ կերպ ասած, տնկակից (հաղորդակից, կցորդ) լինել Նրա մահուանը եւ յարութեանը... «Մեղօքն հանդերձ մեռեալ իջանես դու ի ջուրն եւ ելանես անտի կենդանացեալ արդարութեամբ: Զի եթէ տնկակից եղեր դու նմանութեան մահու Փրկչին, եւ յարութեան Նորա արժանի լիցիս»[48]*: Ուրեմն՝ պէտք է նախապէս մեռնել այս աշխարհի համար, կատարելապէս հրաժարում ունենալ մեղքից՝ ըստ գործերի (ճգնաւորական մահ). մկրտուողը պէտք է գործնականօրէն մեռած լինի այս աշխարհի համար, ապա մուտք գործի Քրիստոսի խորհրդական մահուան մէջ: Մկրտութիւնը մոգական նշան չէ, որ գործում է անկախ մկրտուողի կամքից, այլ խորհրդական ամբողջացումն է գործնական մահուան կամ շնորհական կնքումն է այս աշխարհի նկատմամբ ներանձնական մեռելութեան: Ահա այս է ճշմարիտ չափանիշը բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մասն ունենալ այս աստուածային ոգեծնութեան շնորհների մէջ, Քրիստոսի յարութեան յաւիտենական ժառանգութեան մէջ. այս է ողջ նախապատրաստութեան իմաստը: Սա նշանակում է, որ Մկրտութեանը պէտք է մօտենալ ծայրագոյն զգուշութեամբ քննելով սեփական անձն այս աշխարհի հրապոյրների եւ հաճոյքների նկատմամբ. արդեո՞ք պատրաստ ենք վերցնել մեր խաչը, այսինքն՝ մեռնել մեղքերի համար եւ գնալ Քրիստոսի յետեւից, այսինքն՝ յարութիւն առնել Նրա հետ. արդեո՞ք պատրաստ ենք մուտք գործել կատարելապէս նոր աշխարհ, որն օտար է, խորթ է, ծածուկ է այս աշխարհի նկատմամբ. «Արդ, զսրբազնաբար մկրտեալն նշանականն վարդապետութիւնն խորհրդագէտ առնէ երիւք ընկղմմամբք եւ վերացմամբք ի ջուրն զաստուածպետականն երեք տիւ եւ գիշերն թաղումն կենսատուն Յիսուսի նմանել մահ, որպէս հասանելի է արանց յաստուածանմանութիւն, յորում, ըստ խորհրդականի եւ*

48 Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, ճառ Գ, էջ 39

թաքուն աւանդութեան բանիս, ոչ ինչ եգիտ աշխարհիս իշխանն»[49]*: Ուրեմն՝ Մկրտութեամբ մարդը վերջնականապէս մեռնում է հին-ընկած աշխարհի համար եւ ծնւում նոր-յարուցեալ կեանքի համար. Մկրտութիւնը վերստին ծնունդ է, ծնունդ, որն անտեսանելի է այս աշխարհի համար: Այն, ինչ մի անգամ կայացել է Քրիստոսի հետ տնօրինաբար՝ մեր փրկութեան համար, այժմ պատահում է մեզ հետ շնորհականօրէն՝ Սուրբ Հոգու գործակցութեամբ: Մկրտութիւնը շնորհական ծնունդ է, որով մենք* ***որդեգրւում ենք երկնաւոր Հօրը, դառնում Քրիստոսի ժառանգակից եւ Սուրբ Հոգու տաճար****:*

Մկրտութեամբ, ճշմարտապէս տնկակցուելով Քրիստոսի յարութեանը՝ Նրա Առաջին Գալստեան տնօրինական առանցքին, մենք մուտք ենք գործում Քրիստոսի Երկրորդ Գալստեան մէջ. վախճանաբանական եզրափակումը՝ համընդհանուր յարութիւնը, ահեղ Դատաստանը, դժոխքը եւ արքայութիւնը, դառնում է քրիստոնէական կեանքի կենդանի գործօնը՝ բացառելով անպտուղ-արտաքին սպասումները: Քրիստոնեան՝ Քրիստոսի Յարութեամբ ծնուածը, ներքին իմացում ունի Երկրորդ Գալստեան մասին եւ արդէն իսկ Նրա մէջ է: Ուրեմն՝ Մկրտութեամբ մենք մուտք ենք գործում մի նոր գոյավիճակի մէջ, որի նուիրական սպասումը վախճանաբանական եզրափակումն է, երբ պիտի գայ Քրիստոս Հօր փառքով...

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Մկրտութիւնը հաւատքի խորհուրդ է (sacramentum fidei), որը հաստատուած եւ հիմնուած է Քրիստոսով. եւ մեր փրկագործութեան այս նուիրական գործը, որը բաղկացած է նիւթական տարրից (նիւթ) եւ սրբազան բառերից (տեսակ), ներկայացնում է մեր Մկրտութիւնը եռաստիճան կարգով. ա) Նրա նախապատճառը՝ Քրիստոսի Զարչարանքները, Մահը, Յարութիւնը (որը պատկանում է պատմական անցեալին, բայց կենդանի է այսօր), բ) Նրա շնորհի գոյութիւնը (որը գոյութիւն ունի ներկայում, սակայն իր նախագոյութիւնն ունի Քրիստոսի մէջ), գ) Նրա վախճանաբանական եզրափակումը (որը դեռ պիտի լինի եւ կատարելապէս համապատասխանեցնի մեզ Քրիստոսի կերպարին):

Մկրտութեան միւս կարեւոր նիստը սրբագործումն է. ինչպէս ջուրը մաքրում է մարմինը, այնպէս էլ Մկրտութիւնը մաքրում է հո-

---

49 Սբ Դիոնեսիոս Արիսպագացի, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 68–69

գին չարի խղճմտանքից [տես Եբր. Դ 22]: Մասնակից լինելով Քրիստոսի մահուանը, սրբագործելով Քրիստոսի կողից բխող սրբազան ջրերով՝ անձն ընկերակից է դառնում Քրիստոսի նոր կեանքին, դառնում նոր արարած, վերստին ծնւում՝ ժառանգակից դառնալով Նրա Յարութեան պտուղներին, որն իր կատարելութեանը պիտի հասնի վախճանաբանական ապագայում, երբ պիտի վերադառնայ Տէրը: Մկրտուողից պահանջւում է հոգեւոր վերափոխում: Մկրտութիւնը նրան տալիս է կատարելապէս նոր գոյավիճակ, եւ նա պէտք է իր կեանքը ներդաշնակի Քրիստոսի Յարութեանը: Հին Եկեղեցին շատ լուրջ էր վերաբերւում այս խորհուրդին, «քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն եւ հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակսն ճաշակեցին եւ զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին եւ կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարութիւն...» [Եբր. Զ 4–6]:

Այսօր մեզ զարմացնում է սուրբերի այն համաստեղութիւնը, որ կար Հին Եկեղեցում. սրբութեան եւ հոգեւոր շնորհների առատութեան պատճառը նախ եւ առաջ նրանում էր, որ այն ժամանակ ամէն մէկը չէր կարող մօտենալ Մկրտութեան սրբութեանը: Միայն արժանաւորներին էին թոյլ տալիս մերձենալ ***վերստին ծննդեան*** *խորհուրդին, որն, ըստ սբ Բարսեղ Կեսարացու, գերելոց փրկանք է, պարտաւորութեանց թողութիւն, մահ մեղաց, դարձեալ ծնունդ ոգւոց, զգեստ լուսաւոր, կնիք անձեռակերտելի, կառք առ ի յերկինս, թագաւորական գրաւական, որդեգրութեան շնորհ*[50]*:*

Եւ ապա ասէ զաղօթս զայս.

Որ լուսաւորեցեր զարարածս Քո, Քրիստո՛ս Աստուած, ծագելով զլոյս Աստուածութեան Քո ի ծառայս Քո, ազատեցեր զսա եւ սրբեցեր եւ արդարացուցեր եւ եառուր զորդեգրութիւն, շնորհեա

Ապա ասում է այս աղօթքը.

Որ լուսաւորեցիր Քո արարածներին, Քրիստո՛ս Աստուած՝ Քո Աստուածութեան լոյսը ծագեցնելով Քո ծառայի վրայ, ազատեցիր սրան, սրբեցիր, արդարացրիր եւ շնորհեցիր որդեգրութիւնը, շնոր-

50 Տես սբ Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, «Խաւսք յորդորականք ի Մկրտութիւն», էջ 428:

եւ զկենաց հաւասարութիւն, պարգեւեա զհանապազորդ զանապականութիւն՝ խառնելով յարդարս Քո, ի թիւ սիրելեաց Քոց: Ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութի՛ւն ամենեցուն: Աստուծոյ երկրպագեսցուք:

Աստուած, որ մեծդ ես եւ մշտնջենաւոր եւ ամենայն գաղտնեաց գիտակ, որ սուրբ ես եւ ի սուրբս բնակեալ, փրկիչ ամենայն մարդկան. որ շնորհես զգիտութիւն Քո՝ հաւատացելոց Քոց եւ ետուր իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել ի ձեռն վերստին ծննդեան ջրոյ եւ Հոգւոյ, որով եւ զայս անուն նորացուցեր մաքրութեամբ Աւազանի Քո, սո՛ւրբ արա զսա ճշմարտութեամբ Քո, լցո՛ շնորհօք Հոգւոյդ Սրբոյ, զի եղիցի տաճար բնակութեան անուանդ Քո սրբոյ եւ կարասցէ գնալ յամենայն ճանապարհս արդարութեան եւ կալ համարձակութեամբ եւ աչալրջութեամբ առաջի ահաւոր Բեմի Միածնի Քո՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հի՛ր նաեւ կեանքի հաստատութիւն, պարգեւի՛ր հանապազորդ անապականութիւնը՝ միակցելով Քո արդարների եւ Քո սիրելիների շարքերին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով, Որի հետ Քեզ՝ Հօրդ եւ Սուրբ Հոգուդ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութի՛ւն ամէնքին: Երկրպագե՛նք Աստծուն:

Աստուած, որ մեծ ես եւ մշտնջենաւոր եւ բոլոր գաղտնիքներին գիտակ. որ սուրբ ես եւ բնակւում ես սուրբերի մէջ, փրկիչ բոլոր մարդկանց, որ Քո գիտութիւնը շնորհում ես Քո հաւատացեալներին եւ իշխանութիւն տուեցիր՝ Աստուծոյ որդիներ լինելու Հոգու եւ ջրի վերստին ծննդեան միջոցով, որով եւ այս անունին նորացրիր Քո Աւազանի մաքրութեամբ, սո՛ւրբ արա սրան Քո ճշմարտութեամբ, լցրո՛ւ Սուրբ Հոգուդ շնորհներով, որպէսզի Քո սուրբ անուան բնակութեան տաճար լինի եւ կարողանայ գնալ արդարութեան բոլոր ճանապարհներով եւ համարձակութեամբ ու աչալրջութեամբ կանգնել Քո Միածնի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի բեմի առաջ. Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մարդն ազատագրուած է, լուսաւորուած է Քրիստոսի լոյսով. նա արժանացել է երկնային որդեգրութեան: Փրկագործուելով մարմնաւորուած Բան Աստուծոյ յարութեամբ՝ արարածը գոյեղէն-անբաժանելի մերձաւորութիւն է ձեռք բերել Աստուծոյ հետ: Մարդը դարձել է Աստուծոյ բնակութեան տաճար, նա պէտք է ամենայն զգուշութեամբ եւ սթափութեամբ վարի իր առաջիկայ կեանքը, որպէսզի կարողանայ ընթանալ արդարութեան շաւիղներով եւ համարձակութեամբ կանգնել Տիրոջ ահեղ Դատաստանի առջեւ... Սկսւում է էապէս նոր կեանք, մեծ պայքար՝ ընդդիմամարտ ուժերի դէմ, դժուարին վերընթաց՝ նեղ եւ անձուկ ճանապարհով: Այս ամէնի համար մարդուն պէտք են աստուածային սպառազինութիւն, շնորհական հաստատութիւն, Սուրբ Հոգու կնիքներ, որոնք տրւում են անմիջապէս յաջորդող Դրոշմի արարողութեամբ:

ԴՐՈՇՄ

Ձեռագրերում Դրոշմի արարողութիւնը ոչ մի խորագրով բաժանուած չէ Ջրի մկրտութեան արարողութիւնից: Արդէն իսկ Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդների առանձնացումը յատուկ է աւելի ուշ շրջանի դպրոցական (scholastic) մտայնութեանը եւ չունի որեւէ ծիսական հէնք, ընդհակառակը՝ ծէսը պահանջում է այս երկու խորհուրդների միեղէն-համածական դիտարկում՝ փրկութեան համար անհրաժեշտ տնօրինական հերթականութեան ծաւալումով: Այստեղ հարկ է նշել, որ ծիսական աստուածաբանութեան համար ելակէտային է սրբազան ծէսը, եւ որեւէ աստուածաբանական կամ վարդապետական կառոյց պէտք է անհրաժեշտաբար կառուցուած լինի ծիսական իրականութեան վրայ: Իւրաքանչիւր ծիսական երեւոյթի դիտարկման համար սկզբունքային է նրա սրբազան տարրերի փրկաբանական միասնութիւնը, եւ վտանգաւոր են մեկուսացուած, բեկորային մօտեցումները, երբ ծիսական որեւէ բաղադրամաս չափազանց տարանջատւում է որոշակի ուրոյն, սոսկական իմաստով եւ նշանակութեամբ: Ջրի լուացման եւ Միւռոնի օծման խորհուրդները խորապէս փոխներթափանցուած են. չէ՞ որ օծումը կատարւում է այն իւղով, որը նախապէս հեղուել է ջրի մէջ... Այս առումով անհրաժեշտ է չեշտել, որ Մկրտութիւնը Դրոշմի արարողութեամբ հանդերձ մէկ

միասնական ծէս է, որի իւրաքանչիւր տարր բացայայտւում է իր տեղում՝ ծէսի օրինաչափ ընթացքի մէջ:

Այս երկու խորհուրդների լծորդուածութիւնը պատահական չէ, այլ ունի իր աւետարանական նախահիմքը, որը Քրիստոսի Մկրտութիւնն է: Այն, ինչ մէկ անգամ տնօրինաբար կայացել է Քրիստոսի հետ, մեզ համար հնարաւոր է դառնում Նրա հրաշափառ Յարութիւնից եւ Հոգեգալուստից յետոյ, որոնց վրայ է խարխսուած մեր փրկութեան ողջ տնտեսութիւնը: Քրիստոսի Մկրտութիւնը մեզ համար փրկական խորհուրդ է դառնում Տիրոջ Մահով եւ Յարութեամբ. նոյնպէս էլ Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու աղաւնակերպ էջքը մեզ համար հնարաւոր է դառնում միայն Սուրբ Հոգու տնօրինական յայտնութեամբ՝ Հոգեգալուստով: Ուրեմն՝ ծէսի հիմքը աւետարանական իրողութիւնն է, որն իր մէջ հանգուցում է երկու կարեւորագոյն խորհուրդներ՝ Քրիստոսի Յարութեանը տնկակցուելու եւ Սուրբ Հոգու ստացման:

Դրոշմի արարողութիւնը միանշանակ չի եղել հին Եկեղեցում. գոյութիւն են ունեցել զանազան աւանդութիւններ եւ ծիսական բազմակերպութիւններ: Այսպէս օրինակ՝ վաղ ասորական ծէսում բացակայում է Դրոշմը. օծման արարողութիւն կատարւում է մինչեւ ջրի լուացումը, որն իր բնոյթով դիւահալածութեան (exorcism) եւ նախապատրաստական արարողութիւն է: Ասորական ծէսի մասին տեղեկութիւններ պարունակող հնագոյն բնագրերի[51] *համաձայն՝ Ջրի մկրտութեան եւ Հաղորդութեան միջեւ որեւէ արարողութիւն չկայ: Մկրտութիւնից յետոյ Դրոշմի արարողութեան մասին առաջին յիշատակութիւններն արեւմտեան աղբիւրներից են*[52]*, եւ իրաւացի է ենթադրել, որ Դրոշմն Արեւելք է մուտք գործել Արեւմուտքից, ինչպէս օրինակ սբ Կիւրեղ Երուսաղեմացու խորհրդական (mystagogical)*

51 "The Acts of Judas Thomas"; in: *Documents of the Baptismal Liturgy,* edited by E. C. Whitaker, London, 1979, pp. 13–16; "The History of John the Son of Zebedee", *նոյն*, pp. 21–23.

52 "The Apostolic Tradition of Hippolytus", *նոյն*, pp. 2–7; Tertullian, "De Baptismo", *նոյն*, pp. 7–10.

ճառերում[53] *կամ «Առաքելական հրահանգներում»*[54] *նկարագրուած արարողութիւններում է:*

Հայկական ծէսը ձեւաւորուել է արեւելեան եւ արեւմտեան աւանդութիւնների խաչաձեւումով. աւելի հին ասորական ազդեցութիւններն ընդխառնուել են յետագայ բիւզանդական (արեւմտեան) ներմուծութիւններին[55]*: Մկրտութեան արարողութեան մէկ ուշագրաւ աւանդութիւն է եղել մեզ մօտ, որի մասին տեղեկանում ենք Ագաթանգեղոսի վկայութիւնից, ըստ որի՝ օծումը կատարւում էր ուղղակի ջրում՝ մկրտուողների*[56] *վրայ սուրբ իւղի հեղմամբ...*

Սուրբ Իւղի հեղումը նշանակն էր Սուրբ Հոգու էջքի եւ հայելացւում էր Քրիստոսի Մկրտութեան հետ, երբ Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ Տիրոջ վրայ. «Եւ իւղն օծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարգկանն, շրջան առեալ ի մէջ գետոյն, շուրջ զմարգկաւն խաղայր»[57]*:*

Դրոշմի արարողութիւնը, ըստ իր ընդհանրացած ձեւի, ունի ինն օծումներ, որոնցից իւրաքանչիւրն ուղեկցւում է իրեն յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Բացի այս ինն օծումներից՝ եղել են այլ օծումներ, որոնք չեն ընդհանրացել. այսպէս օրինակ՝ ՄՄ թիւ 1001 երկաթագիր մաշտոցն ունի նաեւ թիկունքի օծում. «Եւ ապա զթիկնամէջն [օծանէ]՝ ասելով. «Կնիքս, որ յանուն Քրիստոսի եղիցի քեզ պարիսպ ամուր շուրջ պատեալ զթիկունս քո Հոգին ճշմարտութեան, յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»»: Թիկունքի

---

53 Migne, PG, 33, 331–1180; R. M. Woolley, *Instructions on the Mysteries of St. Cyril of Jerusalem,* London, 1930: *Տակաւին անորոշ է՝ այս ճառերը թարգմանուե՞լ են հայերէն, թէ ոչ:*

54 "The Apostolic Constitution", *Documents of the Baptismal...,* pp. 30–35: *Այս անվաւեր կանոնախումբը գրուել է մօտ 375 թ.: Հայերէն թարգմանութեամբ չկայ:*

55 *Այս մասին աւելի մանրամասն տես* Gabriele Winkler, "The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", Roma, 1978 *եւ* Das Armenische lnitiationsrituale, Roma, 1982: *Վերջինս ծաւալուն աշխատութիւն է, ուր նաեւ ներկայացուած է մեր Մկրտութեան արարողութեան քննական բնագիրը Սբ Ղազարի թիւ 457 հնագոյն ձեռագրի հիման վրայ:*

56 *Այստեղից հարց է առաջանում, թէ որ իւղն է՝ հեղւում ջրի մէջ յետագայ դարերում, երբ մեր ծէսում դեռեւս առկայ էր երախայութեան օծումը (մինչեւ Ը դար):*

57 *«Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», Երեւան, 1983, էջ 464, ՃԺԸ*

օծում ունեն նաեւ, օրինակ, Սբ Ղազարի թիւ 1429, 487, ՄՄ թիւ 3822 մաշտոցները, սակայն՝ այլ բանաձեւերով: Սբ Ղազարի թիւ 182 մաշտոցն ունի երեսի օծում՝ հետեւեալ բանաձեւով. «Լոյս աստուածային ծագելով ի վերայ երեսաց քոց»: ՄՄ թիւ 3822 մաշտոցում առկայ է ծնկների օծում՝ այսպիսի բանաձեւով. «Կնիքս Քրիստոսի ուղղեսցէ զծունկսդ տկարացեալ, զի գնասցես սրբութեամբ ի տան Տեառն ըստ հաճոյից Աստուծոյ»[58]: Ինն օծումները կատարւում են հետեւեալ յաջորդականութեամբ[59].

Յետ այսորիկ օծանէ սուրբ իւղովն նախ զմակայսն՝ ասելով.

Իւղ անոյշ՝ հեղեալ յանուն Քրիստոսի ի վերայ քո, կնիքն երկնաւոր պարգեւացն:

Սրանից յետոյ սուրբ Իւղով նախ օծում է մակայսը՝ ասելով.

Քրիստոսի անունով քեզ վրայ հեղուած անուշ Իւղը երկնաւոր պարգեւների կնիքն է»:

Զաչսն.

Կնիքս, որ յանուն Քրիստոսի, լուսաւորեսցէ զաչս քո, զի մի՛ երբէք ննջեսցես ի մահ:

Ապա աչքերը.

Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբեք չննջես մահով:

Եւ զականջսն.

Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելութիւն աստուածային պատուիրանացն:

Եւ ականջները.

Այս սուրբ օծումը թող քեզ լսել տայ աստուածային պատուիրանները:

Զհոտոտելիսն.

Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի հոտ անուշութեան ի կենաց ի կեանս:

Հոտոտելիքը.

Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ անուշահոտութիւն կեանքից կեանք:

Զբերանն՝ ասելով.

Բերանը՝ ասելով.

---

58 *Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», Վենետիկ, 1972, հ. 4, էջ 386:*

59 *Այս հերթականութիւնը միանշանակ չէ ձեռագրերում. բացի դրանից, որոշ ձեռագրերում զանց է առնուած այս կամ այն օծումը:*

Կնիքս այս եղիցի քեզ ի պահ-պանութիւն եւ դուռն ամրութեան շրթանց քոց:

Զափսն՝ կիցս ունելով.

Կնիքս Քրիստոսի եղիցի քեզ ի պատճառս բարեգործութեան, առաքինի գործոց եւ վարուց:

Զսիրտն.

Կնիքս աստուածային սրբութեան սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ եւ զհոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում:

Զքամակն.

Կնիքս այս որ յանուն Քրիստոսի՝ եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցես զամենայն նետս մուխս չարին շիջուցանել:

Եւ զոտսն.

Կնիքս աստուածային ուղղեսցէ զգնացս քո ի յաւիտենից:

Այս կնիքը թող լինի քեզ պահ-պանութիւն եւ ամուր դուռ քո շուրթերին:

Ձեռքերը՝ կից պահած.

Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ պատճառ բարեգործութեան, առաքինի գործերի եւ վարքի:

Սիրտը.

Աստուածային սրբութեան այս կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մէջ եւ ուղիղ հոգի նորոգի քո ներսում:

Մէջքը.

Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ համար ամրութեան վահան, որով կարողանաս չարի բոլոր այրող նետերը հանգցնել:

Եւ ոտքերը.

Այս աստուածային կնիքը թող ուղղի քո ընթացքը դէպի յաւիտենական կեանք:

Օծութեան Իւղի կամ Միւռոնի խորհրդաբանութիւնը նոյնքան բազմանշանակ է, որքան ջրինը: Օծումը[60] *վաղնջական ժամանակներից ծառայել է որպէս սրբագործման նուիրագործման միջոց [տես Ծնունդ. ԻԸ 18, ԼԵ 14]. իւղերը յանուն Աստուծոյ հեղւում էին որոշակի իրերի վրայ եւ սրբութիւն ու նուիրականութիւն հաղորդում նրանց: Սուրբ Օծութեան Իւղը, որի արարչագիր բաղադրութիւնը յայտնուեց Մովսէսին [տես Ելք Լ 22/24], պէտք է գործածուէր միայն որոշակի պաշտամունքային առարկաների եւ ընտրեալ այրերի օծման համար. նրա*

60 *Օծումը նաեւ եղել է անուշահոտութեան եւ համեմունքի միջոց, ինչպէս նաեւ ծառայել է բժշկական եւ այլ նպատակների համար, որը դուրս է մեր քննութեան շրջանակներից:*

գործածութիւնը խստօրէն սահմանափակուած էր տաճարային, քահանայական շրջանակներով, այն անմատչելի էր սովորական մարդկանց համար... Սուրբ Օծութեան Իւղով օծուած առարկաները սուրբ եւ նուիրական էին, որովհետեւ նրանց վրայ դրուած էին անեղեւոյթ Աստուածութեան կնիքները, նրանց վրայ էր կենդանի Աստուծոյ սրբարար զօրութիւնը, իսկ օծեալները կամ քահանաները Տիրոջ սպասաւորներն ու ներկայացուցիչներն էին, նրանց չնորհուած էր բացառիկ աստուածային պատիւ, նրանք Աստուծոյ ներկայացուցիչներն էին երկրի վրայ:

Աստուածային օծման պատուի էին արժանանում նաեւ թագաւորները [տես Ա Թագ. Ժ 1, Ա Թագ. ԺԶ 13, Գ Թագ. Ա 39], սակայն ո՛չ Սուրբ Օծութեան Իւղով[61]*:*

Հնուց ի վեր օծում էին նաեւ ննջեցեալների մարմինները՝ նրանց ապականութիւնից զերծ պահելու համար: Բեթանիայում՝ Սիմոն բորոտի տանը, օծուեց նաեւ Տիրոջ Մարմինը (մինչեւ մահը), որն, ըստ տէրունական վկայութեան, խորհրդանշում էր Նրա թաղումը [տես Մատթ. ԻԶ 7, Մարկ. ԺԴ 3 Յովհ. ԺԲ 3]: Ուրեմն՝ օծումը նաեւ վախճանաբանական իմաստ է կրում, օծումով մարդկային մարմինը ներծծւում է աստուածային անապականութեամբ եւ կատարելապէս պիտի նորոգուի մեռելների յարութեան ժամանակ: Յիշատակութիւններ կան սրբոց վարքերից, որոնք վկայում են, որ Աստուած որոշ սուրբերի բացառիկ պատուի էր արժանացնում՝ նրանց մարմնին անապականելիութեան յատկութիւններ չնորհելով, ոմանց մարմնից նոյնիսկ միւռոն է արտաբխել նրանց մահից յետոյ[62]*, եւ այդպիսով*

61 *Թագաւորական օծման իւղի մասին որեւէ տեղեկութիւն չկայ Սուրբ Գրքում. հաւանաբար գործածուել է ինչ-որ թանկարժէք իւղ:*

62 *Օրինակ՝ այդպէս է փառաւորուել սբ Նիկողայոսի մարմինը. «Իսկ զպատուական մարմինն նորա՝ զզարդարեալն ամենայն առաքինութեամբ, տարեալ ամփոփեցին պատուով յեկեղեցին, յորում պահու յանկարծակի բուրեաց անուշահոտութիւն բազում, եւ բխէին այնուհետեւ զօրութիւնք ի տապանէ սքանչելագործ հայրապետին՝ ի բժշկութիւն հիւանդաց եւ ամենայն ախտացելոց, որպէս եւ աւիշկ անպակաս ի սուրբ մարմնոյ նորա՝ որպէս միւռոն կամ իւղ անոյշ...» («Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», «Վարք սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին Զմիւռնոյ, այսինքն՝ Միւռայ», Վենետիկ, 1810, էջ 913): Տես նաեւ «Պատմութիւն վասն Պաւղոսի Լուստրացւոյ» («Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին», հատոր Ա, Վենետիկ, 1855, էջ 323–324):*

Աստուած զարմանալի կերպով փառաւորել է նրանց մինչեւ Երկրորդ Գալուստ:

Այսպիսով՝ հինկտակարանեան օծումները կարելի է դասակարգել հետեւեալ կերպ.

ա. սրբագործական,

բ. քահանայական,

գ. թագաւորական,

դ. վախճանաբանական:

*Հին Կտակարանում որեւէ նիւթական կամ զգայական նշանակ անկատար էր, քանզի այն կատարւում էր Նրա անունով, Ով պիտի գար եւ Իր անընդմիջելի մերձաւորութեամբ վերնիւթացնէր նիւթը, զգայականի հետ Իր գոյաբանական միաւորմամբ աստուածացնէր եւ փրկութեան առիթ դարձնէր այն... Օծութեան Իւղի աստուածաբանական իմաստը խորապէս արտայայտուած է «Երգ Երգոց»-ում, որ հինկտակարանեան բարձրագոյն մարգարէութիւնն է Քրիստոսի մասին: Հարսը Փեսային ասում է. «**Քո անունը հեղուած անուշ իւղ է...**» [Երգ Ա 2]: Ըստ Եկեղեցու հայրերի՝ **հեղուած անուշ իւղը** Քրիստոսն է՝ Օծեալը: Աստուածութեան իւղը հեղւում է մեր բնութեան մէջ, անբաժանելիօրէն միաւորւում նրա հետ, օծում եւ աստուածացնում այն: Նախայաւիտեան Բանը հեղւում է մեր բնութեան մէջ՝ ճշմարտապէս մարդանում սուրբ Կոյսից (Նիւսացի-Տաթեւացի)*[63]*: Ուրեմն՝ մարմնացեալ Բանի անունով էին օծւում մինչեւ Քրիստոս, այդ օծումը կատարեալ չէր, այն ստուերակերպ էր, որովհետեւ դեռ չէր եկել Օծեալը, Որով պիտի ամբողջանային բոլոր հինկտակարանեան կերպերը, եւ Իւղի հեղումը կատարեալ իմաստ եւ աստուածային խորհուրդ պիտի ստանար:*

Քրիստոնէական սբ Միւռոնն ամբողջացումն է բոլոր ստուերակերպ օծութեան իւղերի: Միւռոնի աստուածաբանութիւնը ներհուն ընդգրկմամբ բացայայտուած է սրբալոյս Միւռոնի օրհնութեան կանոնի աղօթքներում: Աստուծոյ Ամենասուրբ Հոգու զօրութեամբ այն դառնում է իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, շնորհք հոգեւորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող՝ ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին, ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից,

---

63 Տես «Երգ Երգոց հանդերձ մեկնութեամբ նախնեաց», «Գանձասար», Երեւան, 1993, էջ 23–24:

ուրախութիւն յաւիտենական[64]*: Եպիսկոպոսապետը մաղթում է, որ այս վերստին ծննդեան իւղով օծուածները երկիւղած լինեն Աստծուց եւ աներկիւղ՝ հակառակորդից եւ Դատաստանի օրը երկնքի աստղերի պէս փայլեն սուրբերի պայծառութեամբ*[65]*: Սուրբ Երրորդութիւնը* ***Ճշմարիտ Օծեալով*** *միաւորւում է այս անուշ իւղի հետ եւ դարձնում այն* ***Իւղ զուարթ ամբիծ դաւանման***[66]*՝ շնորհելով մեզ ճառագայթ հոգւոց, լուսաւորութիւն մտաց, տեառնագրութիւն երեսաց, պահապան շրթանց, զօրութիւն անձանց, ախոյեան ընդդէմ դիւաց, փարատիչ ցաւոց, պահպանումն կուսից, աճեցումն տղայոց, պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց եւ պսակ թագաւորաց*[67]*:*

Բանի մարդեղութեամբ արարածն ի զօրու է դառնում կրելու Աստծուն, ինչն իրականացաւ Հոգեգալստին՝ Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ: Քրիստոսի փրկագործութեամբ մենք ստանում ենք Սուրբ Հոգին՝ էապէս հաստատուելով Աստուծոյ թագաւորութեան կատարեալ իրականութեան մէջ. ահա ա՛յս փրկաւէտ հանգուցման վրայ է հիմնուած Մկրտութեան օծումը. «Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս եւ օծ զմեզ, Աստուած է, որ կնքեացն զմեզ եւ ետ զառհաւատչեայ Հոգւոյն ի սիրտս մեր» [Բ Կոր. Ա 21–22]:

Քրիստոսի անունով մենք ստանում ենք նոր կեանքի սուրբ եւ աստուածային կնիքներ, այսինքն՝ հաստատւում ենք նոր կեանքով եւ ստանում կատարելապէս նոր գոյավիճակ, որն օտար եւ անհասանելի է այս աշխարհի համար: Մխիթարիչը՝ Աստուծոյ Սուրբ Հոգին, եկել է Քրիստոս Օծեալի անունով եւ օծել մեզ անախտութեան, սրբութեան, յաւիտենական կեանքի կնիքներով: Մենք դարձել ենք Աստուծոյ որդիներ եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ:

Հոգեգալուստն Աստուծոյ արարչութեան վերջնակէտն է. Բանի մարդեղութեամբ արարածը կարողութիւն է ստացել կրելու Սուրբ Հոգին... Սուրբ Հոգին Իր տնօրինական գալստեամբ հիմնում է Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութիւնը երկրի վրայ, եւ արարածը կարողութիւն է ստանում գոյաբանօրէն հաղորդակցուելու Աստուծոյ

---

64 Տես «Կանոն օրհնութեան սրբալոյս Մեռոնին», Վաղարշապատ, 1876, էջ 16–17:

65 Տես նոյն, էջ 17:

66 Տես նոյն, էջ 28:

67 Տես նոյն, էջ 30:

անճառելի խորհուրդներին: Հետեւաբար, Օծումը Մկրտութեան ամբողջացումն է, ինչպէս Հաղորդութիւնը՝ Օծման. այսպիսին է Մկրտութեան արարողութեան ամբողջական եւ անբաժանելի շղթան՝ իր աւետարանական անդրադարձումով եւ արտապատկերումով...

Այսպիսով՝ Դրոշմը Սուրբ Հոգու ստացման սրբազան նշանակն է. «Իսկ Միւռոնին կատարողականն աւծումն անուշահոտ առնէ զկատարեալն, քանզի սրբազանն կատարումն աստուածայնոյն ծննդեան միաւորէ զկատարեալն Աստուածպետականին Հոգւոյ»[68]: Ուր Սուրբ Հոգին է, այնտեղ աստուածային իրականութեան ամբողջութիւնն է, Նա գալիս է Քրիստոսի անունով եւ լցնում արարչութիւնն Իր սրբարար ներկայութեամբ: Դրոշմը Սուրբ Հոգու խորհուրդն է, եւ երբ ասում է, որ Դրոշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգու շնորհները, նկատի չպէտք է ունենալ շնորհների որեւէ մասնակիութիւն, այլ՝ յատկապէս աստուածային շնորհների ամբողջութիւնը[69], որն արարածը ստանում է Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ եւ Աստուծոյ արարչութեան կատարեալ եզրափակմամբ...

Արարածը կնքւում է Քրիստոսի կնիքներով, մենք մտնում ենք Քրիստոսի ժառանգութեան մէջ, մարդկային բնութիւնը Քրիստոսի անունով ստանում է աստուածային կնիքներ եւ պայծառակերպւում ու աստուածանում... Մենք մուտք ենք գործում Քրիստոսի Եկեղեցու կատարեալ իրականութեան մէջ, որը երկինք է երկրի վրայ, իր էութեամբ դուրս է այս աշխարհից:

Ըստ սբ Գրիգոր Նարեկացու՝ սուրբ Աւազանի լուացմամբ ստացած սրբութիւնն ամբողջանում է Իւղի օծումով, որով մենք ստանում ենք Սուրբ Հոգու զօրութիւնը. «Զի որպէս յիջումն լուսարանի սուրբ Աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամք առնուլ սրբութիւն, սոյնպէս ի յաւծումն Իւղոյն պարարեալ յուսով՝ զՀոգւոյն զաւրութիւն սովիմբ եւ ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի»[70]: Այս փրկութեան լոյսով լի Իւղը, հեղուելով արտաքին մարդու

---

68 *Սբ Դիոնիսիոս Արեոպագացի, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69*

69 *Այդ ամբողջութիւնն անուանուել է* ***շնորհք Հոգւոյն Սրբոյ,*** *ինչպէս գրում է սբ Գրիգոր Տաթեւացին. «...Իւղովն ի շնորհք Հոգւոյն Սրբոյ միաւորիմք»: Տես «Գիրք հարցմանց», էջ 593:*

70 *Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985, Բան Ղ.Գ, տ. 50–53*

վրայ, ծածկապէս կենդանածնում է ներքին մարդուն. «... սոյնպէս Իւղս այս՝ փրկութեան լուսով կատարեալ, հեղեալ ի մեզ, աւծանէ զարտաքին խորանս, իսկ զներքին մարդս, անեղեւակ ծածկապէս մտեալ, նոր կենդանածնէ»[71]*, քանզի նրանում բնակւում է Տէր Յիսուս Քրիստոսի կենդանի զօրութիւնը*[72]*: Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու տնօրինական յայտնութիւնը մեր շնորհական օծութեան նախահիմքն է. այն, ինչ տեղի ունեցաւ Տիրոջ հետ յայտնաբար, մեզ հետ լինում է խորհուրդով, որն ուղեկցւում է սրբազնագործուած գգայական նշանակի կիրառմամբ. «... զմերս՝ կաթուածով ինչ շնորհազարդեալ, եւ զՔոյդ՝ իսկութեամբ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ հաւասարութեամբ թարգմանեալ»*[73]*: Քրիստոսի անուամբ կնքուելով՝ մենք դառնում ենք* ***քրիստոսեաններ*** *կամ* ***քրիստոնեաներ****, այսինքն՝* ***օծուածներ****, ընծայւում Սուրբ Հոգուն եւ որդեգրւում երկնաւոր Հօրը*[74]*: Դրոշմով նաեւ մենք նախապատրաստւում ենք յաւիտենական կեանքի. մեզ վրայ հեղուած սուրբ Իւղը լուսաւորութեան աղբիւր է լինելու հանդերձեալում. «Քանզի զոր աւրինակ պատրոյդ, թացեալ ի ճարպում, ոչ երեւեցուցանէ ինչ նշոյլ, մինչեւ հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս եւ այս աւծութեան լուսոյ, առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն ջահաւորի»*[75]*:*

Դրոշմի արարողութեան զանազան աւանդութիւնները, որոնք գոյութիւն են ունեցել հին Եկեղեցում, իրենց պատմական օրինաչափ փոփոխութիւններով առկայ են Արեւելեան Եկեղեցիների ծէսում[76]*: Թերեւս ոչ մի արարողութեան շուրջ այնքան վէճեր չեն եղել, որքան Դրոշմի: Արդեո՞ք ջուրը բաւարար չէ Սուրբ Հոգին ստանալու համար. ո՞րն է Սուրբ Հոգու ստացման նշանակը՝ Դրո՞շմը, թէ՞ ձեռնադրութիւնը*[77]*. անհրաժե՞շտ է արդեօք, որ Մկրտութիւնը եւ*

---

71 Նոյն, տ. 57–59

72 Տես նոյն, տ. 295–296:

73 Նոյն, տ. 140–143

74 Տես նոյն, տ. 278–279:

75 Նոյն, տ. 400–403

76 Տես "Documents of the Baptismal...". բիւզանդական ծէսի մասին՝ էջ 69–82, դպտական ծէսի մասին՝ էջ 91–98:

77 Այս կապակցութեամբ շահեկան անդրադարձ ունի Օրմանեանը. «Առաջին խնդիրը այն կրնայ լինիլ, թէ ո՞րն է այս խորհուրդին էական նիւթը՝ ձեռաց դրութի՞ւնը, թէ՞ իւղով օծումը: Զորս կարծիքներ կան այդ մասին. առաջինը այն է, որ ձեռք դնելը կը համարի էական. երկրորդը իւղով օծութիւնը կը

Դրոշմը միասնաբար կատարուեն... Ահա՛ հարցադրումներից մի քանիսը, որոնք առաջ էին քաշւում հիմնականում բողոքական աստուածաբանութեան կողմից: Այս տեսական ճնշումը Արեւմուտքում պատճառ է դարձել անցանկալի ծիսական փոփոխութիւնների: Կաթոլիկ Եկեղեցում տեղի է ունեցել ծիսական խզում՝ Մկրտութեան եւ Դրոշմի[78] *արարողութիւնները բաժանուել են միմեանցից, իսկ բողոքականներն ուղղակի մերժում են Դրոշմի խորհուրդը: Սակայն Արեւելեան Եկեղեցիները, հարազատ մնալով դարերով ձեւաւորուած ծիսական աւանդութեանը, շեշտադրում են այս երկու խորհուրդների անհրաժեշտութիւնը փրկութեան համար եւ նրանց ծիսական անբաժանելիութիւնն ու փոխադարձ ներթափանցուածութիւնը:*

Ինչ վերաբերում է կնիքների թուին եւ յաջորդականութեանը, ապա այստեղ նոյնպէս կան զանազան տարբերակներ. ամէն Եկեղեցի ունի իր յատուկ աւանդութիւնը: Հայկական աւանդութիւնը ձեւաւորուել է երախայութեան օծման եւ բուն Դրոշմի միաւորումով՝ մէկ միասնական արարողութեան մէջ: Երախայութեան օծման հետքերի հարցը մեր Դրոշմի արարողութեան մէջ առանձին ուսումնասիրութեան կարիք է զգում. Տաթեւացու հետեւեալ արտայայտութիւնը շատ առաձգական է. «Եւ գիտելի է զի որ ի ճակատն եւ ի սիրտն եւ ի թիկնամէջն օծանէ այն Դրոշմ է. եւ որ զհինգ զգայութիւնսն օծանէ, այն ի խորհուրդ օծմանն է ծածկապէս: Եւ որ զայլ մասունս օծանէ, յայնմ խորհրդոյ է, որ յառաջ քան զՄկրտութիւնն օծանեն այլ ազգք քրիստոնէից»[79]*: «Զայլ մասունս» ասուածը փաստօրէն ձեռքերի եւ ոտքերի մասին է, մինչ նրանց օծումը մեծ մասամբ կցուած է եղել զգայարանների*

համարի էական. երրորդը բաւական կը համարի երկուքն ալ՝ անխտիր եւ առանձնակի առնելով. իսկ չորրորդը էական կը համարէ երկուքն ալ՝ միասին առնուած՝ իբրեւ իրարու ամբողջացուցիչ խորհուրդին լրումի համար: ... Մեր կարծիքը այն է, թէ օծումին մէջ է խորհուրդին իսկութիւնը: Իսկ եթէ ըսել ուզուի, թէ կարելի չէ կորսուած եւ խափանուած համարել ձեռաց դրութիւնը, որ սկիզբէն էական էր, այդպիսիները ձեռաց դրութիւնը կրնան տեսնել նոյնիսկ օծումին մէջ իբրեւ երկու նիւթերը խառնուած ըսելով մի միակ օծողական եւ հպողական գործողութեան մէջ» (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Տեղիք աստուածաբանութեան, «Յաղագս Դրոշմի», Երուսաղէմ, 1985, էջ 249):

78 *Այս խորհուրդը Կաթոլիկ Եկեղեցում անուանւում է Հաստատութեան խորհուրդ:*

79 *«Գիրք հարցմանց...», էջ 593*

օծմանը: Սրտի եւ մէջքի օծումներ կան նաեւ երախայութեան օծումի արարողութիւններում[80], *ուստի այնքան էլ ճիշտ չէ դրանք վերագրել միայն Դրոշմին: Զգայարանների օծումը որոշ աւանդութիւններում երախայութեան օծման մաս է կազմում, սակայն նաեւ անբաժանելի մասն է Դրոշմի արարողութեան եւ լծորդուած է ճակատի օծմանը: Այս օծումների աստուածաբանական իմաստները հակիրճ բացայայտուած են իրենց բանաձեւերում: Այս մասին Տաթեւացին ունի ուշագրաւ բացատրութիւններ, որոնք հիմնականում ճակատի գլխաւոր օծման մասին են. «Եւ նախ՝ ի ճակատն. այն է խորհուրդն, զի ճակատն է տեղի, ուր հասարակ զգայութիւնն ժողովի. ի յեկեղեցիս ճակատ եւ տեսողք են մարգարէքն եւ առաքեալքն: Նախ նոքա ընկալան զՀոգին Սուրբ, եւ ապա՝ այլ հաւատացեալք, որք անդամ են Քրիստոսի: Վասն որոյ նախ զճակատն դրոշմեմք եւ ապա՝ զհասարակ անդամսն: Դարձեալ՝ Քրիստոս Քահանայ էր եւ Թագաւոր. զկնիք քահանայութեան շնորհին ընդունիմք Մկրտութեամբն եւ զկնիք թագաւորութեանն՝ դրոշմելով ի ճակատն:*

Դարձեալ՝ Մկրտութեամբն ծնանիմք ի յեկեղեցիս որպէս որդիս Աստուծոյ եւ դրոշմելովն լինիմք զինուոր Քրիստոսի՝ ընդդէմ թշնամւոյն սատանայի: Եւ նախ զճակատն դրոշմեմք, զի առանց երկիւղի զինեսցին, եւ ապա զբոլոր անդամսն սպառազինեսցուք: Դարձեալ՝ ճակատն ցուցանէ, թէ առանց ամօթոյ յայտնի եւ համարձակ պարտ է, որ ցուցանեն զդաւանութիւն հաւատոյն առաջի մարդկան եւ ոչ ծածկել եւ թաքուցանել. «Զի սրտիւ հաւատալն արդարութիւն է, այլ բերանով խոստովանիլն փրկութիւն է հոգւոյ» [տես Հռոմ. Ժ 10]: Եւ ապա յետ այնորիկ զբոլոր մարմինն օծանելն նշանակէ զբոլոր առաքինութիւնն ծածուկ ունիլ»[81]*: «Օծանելն զգագաթն ցուցանէ, զի շնորհք Հոգւոյն տուեալ լինի ի հոգի եւ ի միտսն խոկալ զԱստուած»*[82]*:*

---

80 *Այս մասին տես "Documents of the Baptismal...". բիւզանդական ծէս՝ էջ 81, դպտական ծէս՝ էջ 92, 95:*

81 *Սբ Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, էջ 151*

82 *Սբ Գրիգոր Տաթեւացի, Ձմեռան հատոր, էջ 61*

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Եւ յետ այսորիկ ասասցէ.
Խաղաղութի՛ւն ընդ քեզ,
փրկեալդ Աստուծոյ:

Եւ մկրտեալն ասէ.
Ընդ հոգւոյդ քում:

Եւ սրանից յետոյ թող ասի.
Խաղաղութի՛ւն քեզ,
փրկուա՛ծդ Աստուծոյ:

Եւ մկրտուածն ասում է.
[Եւ] քո հոգուն:

***Դրոշմին** անմիջապէս յաջորդում է **Խաղաղութեան ողջոյնը**, որը եկեղեցական պաշտամունքի բարձրագոյն արտայայտութիւններից մէկն է: Ի՞նչն է պատճառը, որ Եկեղեցին այսպիսի մեծ ուշադրութիւն է ցուցաբերում այս խորհրդական գործողութեան նկատմամբ, եւ նրանով ուղղակի ներծծուած են Եկեղեցու բոլոր ծէսերը... Խաղաղութիւնը, լինելով Ամենասուրբ Երրորդութեան Անձերի փոխյարաբերութեան եւ Աստուծոյ բնութեան էական յատկանիշը*[83]*, ունէր իր արարչական արտապատկերը: Այս արարչագիր շնորհը խախտուեց չարի խռովութեամբ նախ իմանալի աշխարհում, ապա ներմուծուեց զգալի աշխարհ՝ մարդու կամքով... Մարդկային բնութիւնը կորցրեց աստուածապարգեւ խաղաղութիւնը՝ լցուելով խռովութեամբ, անհանգստութեամբ, շփոթով... Քրիստոսով խաղաղութիւն է հաստատւում երկնքի եւ երկրի միջեւ, մարդը ոչ միայն վերստանում է կորցրած խաղաղութիւնը, այլեւ գոյաբանօրէն ներածւում աստուածային խաղաղութեան մէջ՝ մի բան, որը դեռեւս անհասանելի էր առաջին արարչութեան համար: Այս աշխարհը չունի Քրիստոսի խաղաղութիւնը, այն օտար է այս աշխարհի համար. այն Բանի մարդեղութեամբ էացած նոր արարչութեան ներքին անբացատրելի օրինաչափութիւնն է. «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ո՛չ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ...» [Յովհ. ԺԴ 27]:*

---

83 Այս խաղաղութիւնը սբ Ներսէս Շնորհալին անուանում է ծայրագոյն խաղաղութիւն. «Առաջին ծայրագոյն խաղաղութիւն է բնաւորեալ առ Սուրբ Երրորդութիւնն՝ յաղագս Երից Անձնաւորութեանցն՝ մի կամք ունելով եւ իշխանութիւն, ուր ո՛չ խռովութիւն եւ ո՛չ պատերազմ, այլ՝ միշտ խաղաղութիւն» (Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի՝ արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ, Կ. Պոլիս, 1825, էջ 97):

Այդ խաղաղութիւնը վեր է ամէն տեսակ մարդկային մտքից եւ իմացումից [տես Փլպ. Դ 7]:

Իւրաքանչիւր աստուածային յատկանիշ, անհասանելի լինելով մարդկային բնութեան համար, մարդու համար հնարաւոր է դառնում շնորհով. Քրիստոսի խաղաղութիւնը բարձրագոյն շնորհ է, որին անմիջականօրէն հաղորդակցւում ենք Սուրբ Հոգու տնօրինական ներկայութեամբ: Սուրբ Հոգով լի է Քրիստոսի Եկեղեցին, որը Քրիստոսի խաղաղութեան թագաւորութիւնն է այս աշխարհում:

Այդ թագաւորութիւնը ծածուկ է այս աշխարհի համար, այդ խաղաղութիւնը խորթ է աշխարհիկ ցանկութիւնների կապանքներով ստրկացած հոգիների համար... Սակայն այդ խաղաղութիւնն ամէն օր բաշխւում է Եկեղեցում՝ երկնային սիրոյ բաղձանքով եւ յաւիտենական բարիքների փափագով համակելով մեր հոգիները: Նրանով հաստատուած՝ մենք ի զօրու ենք յաղթահարելու ամէն տեսակ սատանայական խռովութիւն ու փորձութիւն եւ հասնելու Տիրոջ խաղաղութեան Նաւահանգիստը: Կատարեալ խաղաղութիւնը լինելու է Քրիստոսի Երկրորդ Գալուստով, երբ Ահեղ Դատաստանին խաղաղութեան որդիները զատուեն խռովութեան որդիներից եւ ժառանգեն Աստուծոյ յաւիտենական արքայութիւնը: Ահա թէ ինչու Եկեղեցում ***խաղաղութեան ողջոյնն*** *ամենակիրառական ծիսական տարրերից է. այդ ողջոյնով մեր սրտերը հաստատւում են Քրիստոսի խաղաղութեամբ [տես Կող. Գ 15], մենք կարող ենք անվրդով եւ աներկիւղ մարտնչել սատանայական փորձութիւնների դէմ, մենք դառնում ենք աստուածային խաղաղութեան կրիչներ եւ բաշխողներ՝ Աստուծոյ խաղաղարար որդիներ՝ այս կեանքում վայելելով Աստուծոյ արքայութեան ամբողջութիւնը մեր ներսում եւ դառնալով նրա վկան այս աշխարհում:*

Առաքելական թղթերում Աստուած յաճախ անուանւում է ***խաղաղութեան Աստուած*** *[տես Հռոմ. ԺԵ 33, Ա Կոր. ԺԴ 33, Բ Կոր. ԺԳ 11, Փլպ. Դ 9]: Այս առումով խաղաղութիւնը ոչ թէ սոսկ մասնաւոր մի շնորհ է, այլ աստուածային գոյութեան ամենաբնորոշիչ եզրը:* ***Խաղաղութիւնն աստուածային խորհուրդ*** *է, մարդկութեանը պարգեււում է Բանի մարդեղութեամբ եւ անմիջական արգասիքն է Սուրբ Հոգու տնօրինական գործունէութեան [տես Հռոմ. Ը 6, Գաղ. Ե 22]:*

ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒՄ

Ապա զգեցուցանէ եւ ասէ զաղօթս զայս.

Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ զգեցուցանես ծառայի Քում հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան եւ եդիր սաղաւարտ փրկութեան եւ պսակ շնորհաց ի գլուխ սորա, զէն անվթար ընդդէմ հակառակորդին: Վասն որոյ եւ մեք գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդին եւ զՍուրբ Հոգի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա զգեստաւորում է եւ ասում աղօթքը.

Օրհնեալ ես, բարեխնամո՛ղ Աստուած, որ Քո ծառային հագցնում ես փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան եւ դրեցիր սրա գլխին փրկութեան սաղաւարտ եւ շնորհների պսակ՝ [որպէս] անվթար զէնք ընդդէմ հակառակորդի: Որի համար գոհանալով փառաւորենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հնագոյն մաշտոցների զգեստաւորման արարողութիւնն ամբողջանում է քահանային ուղղուած պարզ ցուցումով եւ աղօթքով: Այս համառօտ ցուցումը յետագայ դարերի ձեռագրերում հետզհետէ բեռնաւորւում է. զգեցուցանէ պարզ բառին աւելանում են՝ եւ թագ կապէ կամ պսակէ կամ զգեցուցանէ սպիտակ հանդերձ եւ այլն: Որոշ մաշտոցներում առկայ են չընդհանրացած աւելի ճոխ տարբերակներ: Զգեստաւորման արարողութիւնն իր ճոխացման գագաթնակէտին է հասնում Գէորգ Երզնկացու խմբագրութեան ձեռագրերում, ուր զգեստաւորումը թատերական տեսք է ստանում՝ զգեստի իւրաքանչիւր կտորի վրայ յատուկ բանաձեւի արտասանութեամբ: Զգեստաւորման աղօթքը, բացառութեամբ մի քանի չընդհանրացած ձեռագրերի, գրեթէ նոյնաբար պահպանուած է բոլոր մաշտոցներում:

Զգեստաւորման արարողութիւնը Մկրտութեան ծէսի կարեւոր հանգոյցներից է. արարածը վերստացել է իր արարաչակերտ գեղեցկութիւնը, որ կորցրել էր մեղքի անկումով. «Իսկ յետ օծանելոյն զգեցուցանեն հանդերձս պայծառս, որ զլուսաւոր վարս եւ զպայծառ հաւատս եւ զանմեղութիւնն նշանակէ»[84], ինչպէս նաեւ՝ «զսուրբ եւ

84 Սբ Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, էջ 148

զնոր կեանս»[85]: Սպիտակ[86] զգեստը խորհրդանշում է այն հոգեւոր իրողութիւնը, որ տեղի է ունեցել Մկրտութեամբ. նիւթական նշանակը յայտնում է արարչութեան փրկութեան, աստուածացման վերնիւթական խորհուրդը: Մարդկային բնութիւնը Բանի մարդեղութեամբ հագնում է փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան: Այդ զգեստը խորհրդանշում է արարածի յարութիւնը եւ անապականութիւնը՝ Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ պարգեւուած, եւ ներածում մեզ Քրիստոսի Երկրորդ Գալստեան խորհուրդի մէջ, երբ մարմինները պիտի յարութիւն առնեն եւ նոր անապականացու գոյավիճակ ստանան: Այս իմաստով սպիտակ հանդերձը վախճանաբանական խորհուրդ է կրում. արդարներն այդպիսի զգեստով պիտի սպասեն Տիրոջը եւ մտնեն Նրա յաւիտենական ժառանգութեան մէջ:

Ըստ սբ Դիոնեսիոս Արեոպագացու՝ զգեստաւորումը կատարւում է մինչեւ Դրոշմը՝ Մկրտութիւնից անմիջապէս յետոյ. «Եւ զնոյն հետայն լուսատեսակս հանդերձս արկանեն ի վերայ նուիրելոյն: Քանզի այրականիւ եւ աստուածատեսակաւ անախտութեամբ ի հակառակիցն եւ որով առ մի յարաձգութիւնն եւ հետեւումն, անզարդ զարդարի եւ անտեսակն տեսականայ՝ բոլորովիմբ լուսատեսակ կենաւք պայծառացեալ»[87]: Այս հերթոյթը պահպանուած է բիւզանդական ծէսում:

ՍԵՂԱՆԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Յետ այսորիկ հանէ ի բեմն եւ երկրպագեցուցանէ առաջի սրբոյ Սեղանոյն եւ երիցս անգամ համբուրիւ յերեսին կողմանսն. եւ ասէ զաղօթս.

Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Քեզ խոնարհեցուցանեն Սրանից յետոյ բարձրացնում է բեմ եւ երկրպագեցնում սուրբ Սեղանի առջեւ. եւ երեք անգամ համբոյրով՝ երեք կողմերը: Եւ ասում է այս աղօթքը.

Տէ՛ր Աստուած ամենակալ, Հա՛յր մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Քեզ են խոնարհեցնում հաւա-

85 Տես սբ Գրիգոր Տաթեւացի, Զմեռան հատոր, էջ 61:

86 Սպիտակ գոյնի խորհրդաբանութեան մասին տես «Երգ Երգոց հանդերձ...», էջ 37–38, 92–93, 127:

87 Սբ Դիոնեսիոս Արեոպագացի, "The Armenian...", «Յաղագս ի մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 69

հաւատացեալք զգլուխս իւրեանց: Զգեա՛ զաներեւոյթ աչ Քո եւ օրհնեա՛ զսա: Զգործս ձեռաց սոցա յաջողեա՛: Որք ի կուսութեան են, ամրացո՛. եւ զամենեսեան զօրացո՛ ժուժկալութեամբ յամենայն աստուածպաշտութիւն: Պահեա՛ խաղաղութեամբ զաղայս զայս, սնո՛ եւ ա՛ծ ի չափ հասակի. պարսպեցո՛ զամենեսեան իւրաքանչիւր յարկս՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, ընդ Որում Քեզ Հօր փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ հաղորդեցուցանէ սուրբ Խորհրդոյն:

տացեալներն իրենց գլուխները: Մեկնի՛ր Քո աներեւոյթ աչը եւ օրհնի՛ր սրան: Սրա ձեռքի գործերն առաջնորդի՛ր: Ովքեր կուսութեան մէջ են, ամրացրո՛ւ եւ բոլորին զօրացրո՛ւ ժուժկալութեամբ աստուածպաշտութեան բոլոր [գործերում]: Խաղաղութեա՛մբ պահիր այս մանուկին, սնի՛ր եւ հասցրո՛ւ չափահաս տարիքի, բոլորին պարսպի՛ր իւրաքանչիւր յարկի տակ՝ հանդերձ ամենայն ուրախութեամբ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, Որի հետ Քե՛զ, Հա՛յր, փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ հաղորդեցնում է սուրբ Խորհուրդին:

Մկրտութեան արարողութիւնը բաղկացած է երեք հիմնական փուլերից՝ ***Ջրի մկրտութիւն***, ***Դրոշմ եւ Հաղորդութիւն***: *Այս երեք խորհուրդների ծիսական միասնութիւնը վերստին ակնարկում է Մկրտութեան գաղափարական իմաստն ու ծագումը՝ եռաստիճան կարգաւորումով ներկայացնելով մեր փրկութեան տնօրինական ընթացքը՝* ***Քրիստոս - Սուրբ Հոգի - Եկեղեցի***: *Արարածը Քրիստոսով ի զօրու է դարձել կրելու Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին, գալով Քրիստոսի անունով, լցնում է արարչութիւնն աստուածային ներկայութեամբ եւ առաջնորդում դէպի Քրիստոսի հիմնած Եկեղեցու նոր եւ կատարեալ իրականութիւնը: Տիրոջ Արեամբ փրկագնուած նորընծան լի է Սուրբ Հոգով. քահանան նրան բարձրացնում է խորան, այսինքն՝ հոգեւոր երկինք, սրբութիւն սրբոց՝ երկրպագելու Աստծուն՝ այդպիսով նախապատրաստելով սբ Հաղորդութեան: Հաղորդութիւնը եկեղեցական աստուածապաշտութեան կիզակէտն է. հաղորդուելով Քրիստոսի փրկագործ Մարմնին եւ Արեանը՝ մարդը դառնում է Քրիստոսի*

խորհրդական Մարմնի՝ Եկեղեցու անդամ: Եւ ինչպէս փոքրիկ թթխմորն է խմորում ողջ զանգուածը, այնպէս էլ Տիրոջ մարմինը եւ Արիւնը, ընդխառնուելով մարդկային բնութեան հետ, աստուածացնում է այն:

Այսպիսով՝ ա) Ջրի մկրտութեամբ մենք խորհրդաբար մուտք ենք գործում Քրիստոսի մահուան մէջ, այսինքն՝ մենք մեռնում եւ յարութիւն ենք առնում Քրիստոսի հետ, դառնում նոր արարած եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ. բ) փրկագնուելով Քրիստոսի զոհաբերութեամբ՝ մենք պատրաստ ենք կրելու Աստծուն. Դրոշմով մենք ստանում ենք Սուրբ Հոգին. գ) Սուրբ Հոգու տնօրինական ներհաստատմամբ մենք առաջնորդւում ենք դէպի Սուրբ Եկեղեցի՝ գոյաբանօրէն դառնալու Քրիստոսի խորհրդական Մարմնի անդամներ. սբ Հաղորդութիւնը լրումն է իւրաքանչիւր խորհուրդի, այն խորհուրդների խորհուրդն է, որովհետեւ նրանով է տեղի ունենում կատարեալ եկեղեցացումը եւ աստուածացումը, որն արարածի փրկագործման վերջնական նպատակն է: Այս է պատճառը, որ Հին Եկեղեցում իւրաքանչիւր խորհրդակատարութիւն ծիսապէս լծորդուած է եղել Հաղորդութեան հետ: Յետագայ դարերում եկեղեցական կարգերի հետզհետէ ածանցման հետեւանքով տեղի են ունեցել ծիսական խզումներ. Հաղորդութիւնը, որը իւրաքանչիւր խորհուրդի անհրաժեշտ եզրափակումն է, դուրս է մղուել խորհրդակատարութեան կառոյցից: Այսօր այդպէս է, օրինակ, Պսակի խորհուրդի դէպքում:

Մենք պէտք է նկատի ունենանք, որ Տիրոջ Մարմնի եւ Արեան Հաղորդութիւնը Եկեղեցու սիրտն է, այն պէտք է ունենայ բնական ներթափանցուածութիւնը իւրաքանչիւր խորհուրդի մէջ, քանզի մարմնաւորուած Բանի զոհաբերութեան կենտրոնական գործողութիւնն է եւ ոչ միայն ծիսական, այլեւ առհասարակ եկեղեցական կեանքի շնորհական եւ խորհրդական աղբիւրն է: Մուտք դէպի Եկեղեցի, մուտք դէպի Քրիստոսի թագաւորութիւն՝ նշանակում է մուտք դէպի հաղորդական կեանք, մուտք դէպի շարունակական աստուածացման վերընթաց: Հաղորդութեամբ մենք միաւորւում ենք մի մարմնի մէջ, մի ենք դառնում ի Քրիստոս Յիսուս: Հետեւաբար, հէնց Տիրոջ Մարմնի եւ Արեան բաշխման միջոցով է կայանում Եկեղեցու հաւաքական միութիւնը եւ եկեղեցացումը, եւ իւրաքանչիւր ծիսակարգ՝ որպէս Եկեղեցու սրբազան գործողութիւն, իր փրկաբանական նշանակութեամբ անհրաժեշտաբար պէտք է ունենայ հաղորդական ուղղորդուածութիւն:

ԱՐՁԱԿՈՒՄ

Եւ յղարկեն մինչեւ ի դռան եկեղեցւոյն՝ սաղմոսելով.

«Երանի՛, որում թողութիւն եղեւ մեղաց» *[Սաղմ. ԼԱ 1]:*

Քարոզէ սարկաւագն.

Վասն ի վերուստ օգնականութեան եւ փրկութեան եւ հաստատութեան նորակնքիս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Գ «Տէր, ողորմեա»:

Եւ ասէ զաղօթս զայս.

***Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաւիտենական, որ աճեցուցանես եւ լցուցանես սուրբ զԵկեղեցի Քո լուսով հաւատոյ անհամար փրկելոց՝ ի ձեռն ճշմարիտ աստուածածանօթութեան Քրիստոսի Քո, զորս հոգեւորական վերածնութեամբ արժանի արարեր որդեգրութեան Քեզ՝ հաղորդելով արժանաւորութեամբ Մարմնոյ եւ Արեան Միածնի Քո: Եւ արդ, Տէ՛ր, պահեա՛ զսա սրբութեամբ Հոգւոյդ Սրբոյ՝ առնել անարատութեամբ զկամս Քո եւ անմեղութեամբ ժամանել ի կեանսդ յաւիտենից: Եւ զամենեսեան զմեզ՝ զմերձաւորքս, օրհնեա՛ շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ*

Եւ ուղեկցում են մինչեւ եկեղեցու դուռը՝ սաղմոսելով.

«Երանի՛ [նրան], ում մեղքերը ներուեցին...» *[Սաղմ. ԼԱ 1]:*

Սարկաւագը քարոզում է.

Մեր այս նորակնունքին ի վերուստ օգնականութիւն, փրկութիւն եւ հաստատութիւն [պարգեւելու] համար աղաչենք Տիրոջը»:

Երեք «Տէր, ողորմեա»:

Եւ ասում է այս աղօթքը.

Փա՛ռք Քեզ, Թագաւո՛ր յաւիտենական, որ աճեցնում եւ լցնում ես Քո սուրբ Եկեղեցին, Քո Քրիստոսի ճշմարիտ աստուածածանօթութեան միջոցով, անհամար փրկուածների հաւատքի լոյսով, որոնց հոգեւորական վերածնութեամբ արժանացրիր Քեզ որդեգրութեան՝ արժանաւորութեամբ հաղորդելով Քո միածնի Մարմնին եւ Արեանը: Եւ արդ, Տէ՛ր, պահի՛ր սրան Սուրբ Հոգուդ սրբութեամբ՝ անարատութեամբ կատարելու Քո կամքը եւ անմեղութեամբ հասնելու յաւիտենական կեանքիդ: Եւ մեզ՝ բոլոր մերձաւորներիս, օրհնի՛ր մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ. Նրան վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ

եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ, ողջունեալք ի ժողովրդոցն, յուղարկին ի տունս իւրեանց: Եւ ութ օր յեկեղեցւոջն կացցէ, սպիտակազգեստ լիցի եւ զգլուխն ծածկեսցէ սպիտակ փակեղամբք: Զգոյշ կացցէ՝ աղօթից եկեղեցւոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդուելով Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի:

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ողջոյն առնելով ժողովրդից՝ ուղարկում են իրենց տները: Եւ ութ օր թող եկեղեցում մնայ, սպիտակազգեստ լինի եւ գլուխը ծածկի սպիտակ փակեղով: Զգոյշ լինի եկեղեցու աղօթքներում՝ ամէն ժամ պարապելով, հաղորդուելով Քրիստոսի Մարմնին եւ Արեանը:

Հաղորդութիւնից յետոյ սաղմոսելով գնում են դէպի եկեղեցու դուռը, եւ Մկրտութեան արարողութիւնը եզրափակւում է քարոզով եւ աղօթքով, որով քահանան խնդրում է Սուրբ Հոգու պահպանութիւնը, որպէսզի մկրտեալն այս կեանքում անարատ կենցաղավարի եւ անմեղութեամբ հասնի յաւիտենական կեանքին:

Եզրափակիչ աղօթքին յաջորդում է յոյժ ուշագրաւ մի խրատ, որն արտամղուած է այսօրուայ ծիսական իրականութիւնից, սակայն բացառիկ նշանակութիւն ունի եկեղեցական կեանքի համար, եւ նրան պատշաճում է անհրաժեշտ ուշադրութիւն: Նոր մկրտուածն ութ օր[88] պէտք

88 *Ութն, ըստ Եկեղեցու հայրերի, Քրիստոսի թիւն է կամ Յարութեան թիւը: Եօթը խորհրդանշում է հինկտակարանեան եւ առհասարակ երկրաւոր կամ արարչական կատարելութիւնները, որոնք մաթեմատիկական օբյեկտներ են, այսինքն՝ հասանելի են յաջորդականութիւնների շնորհիւ: Քրիստոսի բերած փրկութիւնը դուրս է այս աշխարհի կատարելութիւններից, ուստի այն դուրս է եօթնեակների փակ պարբերութիւններից: Քրիստոս բերեց նոր կեանք, նոր օրինաչափութիւն, նոր ժամանակ, որն անուանւում է Առաջին Օր կամ Ութերորդ Օր: Սակայն այստեղ մէկը եւ ութը ոչ թէ թուային, այլ խորհրդական եւ անդրանցական օրինաչափութիւններ են, նրանք դուրս են յաջորդականութիւնների իշխանութիւնից եւ միաժամանակ նոր կեանք են հաղորդում եօթնեակներին: Ութը յարութիւն առած եօթն է. ութնեակը կատարեալ հոգեւոր պարբերութիւն կամ յաւիտեան (էոն) է: Նաեւ՝ Ութերորդ Օրը պիտի դայ Տէրը՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին. այդ օրն անուանւում է Վերջին Օր կամ Տիրոջ Օր կամ Դատաստանի Օր: Այսպիսով՝ ութը միաժամանակ խորհրդանշում է ե՛ւ հոգեւոր յարութիւնը (Քրիստոսի*

է սպիտակ զգեստներով, այսինքն՝ յարութիւնը խորհրդանշող զգեստներով լինի եկեղեցում՝ ութ օր ապրելով Յարութեան խորհուրդով: Դա նրա կեանքի առաջին կատարեալ փուլն է կամ յաւիտեանը (էոն), որով նա նախապատրաստւում է քրիստոնէական կեանքի՝ Քրիստոսի Յարութեամբ ապրելու եւ Նրա վկան լինելու այս աշխարհում: Սպիտակ փակեղով գլխի ծածկուածութիւնն, ըստ երեւոյթին, հոգեւոր զգուշութեան համար է, ինչն ակնարկւում է խրատի շարունակութեան մէջ: Այդ ութ օրերը նրա համար աղօթքի եւ հոգեւոր վարժանքի օրեր են. նոր մկրտուածը ճգնաւորական կենցաղավարութեամբ եւ կրօնական պարկեշտութեամբ պէտք է անցկացնի այդ ժամանակը՝ վերապրելու իր հետ կատարուածը, սովորելու իր նոր գոյավիճակին. Մկրտութեան մեծ խորհուրդով ստացած շնորհները պէտք է ամրացուեն հոգեւոր հմտութեամբ եւ շրջահայեցութեամբ:

Հին Եկեղեցում այս օրերի ընթացքում նոր մկրտուածին ներածում էին հաղորդական կեանքի մէջ, որովհետեւ մինչեւ Մկրտութիւնը երախաները կամ Մկրտութեան նախապատրաստուողները չգիտէին, թէ ինչ է կատարւում Պատարագի վերջաւորութեանը. սբ Հաղորդութիւնը գաղտնիք էր նրանց համար: Խրատի վերջաւորութիւնը՝ պարապելով յամենայն ժամ, հաղորդելով Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի, հէնց այդ մասին է: Ուրեմն՝ Մկրտութեան ութօրէքը եկեղեցացման՝ Եկեղեցու խորհրդական կեանքի մէջ հաստատման համար է. Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը, որ բաշխւում է Եկեղեցում, պէտք է դառնայ քրիստոնեայի հոգեւոր կեանքի աղբիւրը եւ Աստուծոյ հետ շնորհական-խորհրդական փոխյարաբերութեան կիզակէտը:

Այսօր, երբ եկեղեցական կեանքն աննախադէպ աղաւաղման է հասել, երբ մկրտուածի քրիստոնէական կեանքի կազմակերպման հարցը մատնուած է կատարեալ անուշադրութեան, ցանկալի է անդրադառնալ անցեալի այս գեղեցիկ աւանդութեանը եւ իրագործել այն մեր կեանքում, եթէ մենք կամենում ենք մեր ծիսական կեանքին փրկաբանական լիցք հաղորդել: Ծէսի բուն նպատակը պէտք է լինի

Առաջին Գալուստ)՝ անուանուելով առաջին, ե՛ւ մարմինների յարութիւնը (Երկրորդ Գալուստ)՝ անուանուելով վերջին: Քրիստոնեաները գտնւում են Ութերորդ Օրուայ մէջ. նրանք, արժանացած լինելով Քրիստոսի բերած հոգեւոր յարութեանը, նաեւ մուտք են գործել Երկրորդ Գալստեան մէջ (վախճանաբանական սպասում):

մարդուն քրիստոնեայ դարձնելը. լինել քրիստոնեայ՝ նշանակում է Քրիստոսի բերած կեանքով ապրել, մշտապէս առնչուել Տիրոջ հետ, եւ սրա խորհրդական աղբիւրը սբ Հաղորդութիւնն է:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՈՒԹ ՕՐ ՅԵՏՈՅ

Եւ յետ ութ աւուր վերացուցանէ քահանայն զպսակն՝ ասելով զաղօթս զայս ի վերայ նորա.

Որք մկրտեցան եւ լուսաւորեցան, եւ ետուր զսրբութիւն Քո, Տէ՛ր, տո՛ւր եւ հաստատուն կալ ի սրբութեան Քում՝ պայծառացուցանելով ի լոյս Աստուածութեան Քո: Տէ՛ր, պահեա՛ հաստատութեամբ ի շնորհս, զորս ետուր: Հեռացո՛ ի մոլորութենէ թշնամւոյն եւ ի պատրանաց նորա եւ ի գործոց անօրէնութեան, զի լուսով գիտութեամբ գնասցէ ի ճանապարհս Քո եւ ուղիղ վարուք հասցէ ի խոստացեալ հանգիստ Քո: Զհրեշտակ խաղաղութեան Քո առաքեա՛, որ եկեալ պահեսցէ զսա: Եւ ամենեքեան արժանի լիցուք յուսով Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Հօր միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ութ օր յետոյ քահանան վերցնում է պսակը՝ այս աղօթքն ասելով նրա վրայ.

Ովքեր մկրտուեցին եւ լուսաւորուեցին, եւ [նրանց] տուեցիր Քո սրբութիւնը, Տէ՛ր, տո՛ւր նաեւ հաստատուն մնալ Քո սրբութեան մէջ՝ պայծառացնելով Քո Աստուածութեան լոյսով: Տէ՛ր, հաստատո՛ւն պահիր այն շնորհների մէջ, որ տուեցիր [նրան]: Հեռացրո՛ թշնամու մոլորութիւնից, նրա պատրանքներից եւ անօրէն գործերից, որպէսզի գիտութեան լոյսով գնայ Քո ճանապարհներով եւ ուղիղ վարքով հասնի Քո խոստացած հանգիստը: Առաքի՛ր Քո խաղաղութեան հրեշտակին, որ գալով պահի սրան: Եւ բոլորս արժանի լինենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յայտնութեան յոյսով: Նրա հետ Հօրը, միաժամանակ եւ Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս արարողութիւնը թէպէտ առանձին ծիսական միաւոր է, սակայն բնական շարունակութիւնն է Մկրտութեան արարողութեան եւ ձեռագրերում անմիջապէս յաջորդում է նրան: Ութ օր յետոյ քահանան վերցնում է պսակը (որոշ յետագայ ձեռագրերում՝ նարօտը կամ թագը)՝ բնականաբար Միւռոնից հանելով կամ դրոշմուած տեղերի վրայից լուանալով Միւռոնը: Ութ օր յետոյ նորակնունքը պէտք է մտնի այս աշխարհ որպէս կայացած, եկեղեցացած քրիստոնեայ, որպէս Քրիստոսի վկայ... Մէկ կատարեալ յաւիտենականութիւն՝ ութ օր ապրելով Յարութեան կեանքով՝ նա պէտք է մտնի աշխարհ որպէս նոր արարած, որը կրում է Քրիստոսի Յարութեան լոյսը: Այս աշխարհը չի ճանաչելու նրան, այս աշխարհում նա լինելու է նեղ եւ անճուկ ճանապարհով Տիրոջն ընդառաջ ընթացող անցուոր եւ օտարական. նրան սպասում են փորձութիւններ եւ մեծ պայքար ընդդիմամարտ ուժերի հետ: Խաւարի կրիչները ձգտելու են ունայնացնել Յարութեան լոյսը, սակայն նրանց խարդաւանքներն անզօր պիտի լինեն Եկեղեցու ներսում (ոչ թէ տարածքային, այլ հոգեւոր) գտնուողների համար: Եկեղեցին, հաստատուած լինելով այս աշխարհում, այս աշխարհինը չէ. նրա ներսը դուրս է այս աշխարհից... Մկրտութեամբ մարդը մուտք է գործել Եկեղեցու խորհրդական ներսը, դարձել Անմահ Գառի զոհաբերութեամբ հաստատուած յաւիտենական թագաւորութեան ժառանգորդ. «Եւ շնորհօք թագաւորեցին հաւատովք որ ի Սուրբ Երրորդութիւնն եւ գտեալք զթողութիւն լուսաւոր Աւազանաւն եւ Մարմնով եւ Արեամբ Քրիստոսի, ընդունելութեամբ Հոգւոյն Սրբոյ, որ աղբիւրարար բաշխեաց զշնորհս յարարածս: Զի, արդարացեալք ի հաւատոց անտի, զխաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի առ հաւատչեայ ժառանգութիւնն. զի նորոգեաց ի փառս անեղծութեան կամաւոր խաչելութեամբն Իւրով եւ մահուամբ ելոյծ զմահ եւ Յարութեամբն Իւրով զմեզ ի մեռելութենէ մեղաց յարոյց, զի մեք ի նորոգումն կենաց կացցուք եւ մնասցուք յուսով Յարութեանն ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից»[89]:

Սակայն Քրիստոսի ժառանգութեան մէջ մնալու համար մարդուց պահանջւում են աստուածպաշտական ճիգեր՝ մշտապէս արտորոշելու

---

89 «Սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Սբ էջմիածին, 1894, ճառ Բ, տ. 490–502

չարի հրապոյրները եւ բացազատուելու աստուածային շնորհի առջեւ: Այս հոգեւոր ներընթացը հունաւորուել է երախայութեան կարգով, խորհրդականացել Մկրտութեամբ, ապա եկեղեցացել ուխտի ներկրութեամբ... Մկրտութեամբ մարդը ոչ միայն ստացել է աստուածային շնորհներ, այլեւ ձեռք բերել անհրաժեշտ ներանձնական հմտութիւն՝ այդ շնորհները պահելու համար. նա էապէս հաստատուել է հոգեւոր կեանքի ամբողջութեան մէջ, որպէսզի անկորուստ ընթացքով հասնի փրկութեան նաւահանգիստ եւ մասնակից դառնայ Աստուծոյ սուրբերի անեզրական ուրախութեանն ի Քրիստոս Յիսուս:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741

Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740

Սբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729

Սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչի վարդապետութեան ճառք յաճախապատումք եւ լուսաւորք, Կ. Պոլիս, 1824

Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899

Սբ Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց, աշխատասիրութեամբ Կ. Մուրադեանի, Սբ Էջմիածին, 2008

Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 74–75

Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833

Հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», «Բազմավէպ», Վենետիկ, 1971, հ. 1–2, 1972, հ. 2–3

Մեսրոպ քահանայ Արամեան, «Երեք Տիեզերական ժողովների դաւանութիւնը», «Գանձասար», հ. Ա, 1992. «Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.)», հ. Բ, 1992

Արշակ Տէր-Միքելեան, Հայաստանեաց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Տփխիս, 1900

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1985

Գիրք՝ Մեծ Մաշտոց կոչեցեալ, Կ. Պոլիս, 1807

Մաշտոց, յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ Եկեղեցւոյս Հայոց, Վաղարշապատ, 1905

Մաշտոց, յորում...., Երուսաղէմ, 1977

Մաշտոց, յորում...., Անթիլիաս, 1988

Կանոն օրհնութեան սրբալոյս Մեռոնին, Վաղարշապատ, 1876

Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց, Վենետիկ, 1810

Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին, հատոր Ա, Վենետիկ, 1855

The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite. Edited by Robert W. Thomson. Lovanii, 1987.

Documents of the Baptismal Liturgy. Edited by E. C. Whitaker. London 1979.

Gabriele Winkler. "The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources". *Orientalia Christiana Analecta* 205, Symposium Syriacum 1976, Roma, 1978.

J. G. Davies. *The Early Christian Church*. Michigan, 1987.

J. G. Davies. *The New Westminster Dictionary of Liturgy and Worship*. Philadelphia, 1986

Sacramentum Mundi, *Encyclopedia of Theology*. New York, 1968.

T. M. Finn. *The Liturgy of Baptism in the Baptismal Instructions of St. John Chrysostom*. Washington, 1967.

R. M. Woolley. *Instructions on the Mysteries of St. Cyril of Jerusalem*. London, 1930.

Протопресвитер А. Шмеман, Водою и Духом. О Таинстве Крещения. Издание Московской Патриархии, 1986.

Г. В. Флоровский, Восточные Отцы IV века. Париж, 1931.

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՔԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՀԻՄՔ

Մարդու հոգեւոր փնտրումների մասին

Աստուծոյ հետ լինելը, Նրա հետ հաղորդակցութիւն հաստատելը մարդու սրտում հաստատուած հիմնարար ձգտում է: Մարդը, արարուած լինելով Աստուծոյ պատկերով ու նմանութեամբ եւ կոչուած լինելով ապրել Աստուծոյ համար, գիտակցաբար կամ անգիտակցաբար փնտրում է իր Արարչին, որովհետեւ միայն Աստուծոյ հետ միաւորուելով է մարդը վերստանում մեղքի հետեւանքով կորցրած երջանկութիւնը եւ վերահաստատում իր գոյութեան նպատակը: Մարդն իր էութեամբ կրօնական արարած է, եւ նրա կեանքը նպատակաուղղուած է դէպի երկինք: Այս նպատակաուղղուածութիւնը դէպի հոգեւոր ոլորտ ոչ միայն արարչագործութեամբ մարդու մէջ հաստատուած իրողութիւն է, այլեւ պայմանաւորուած է նրանով, որ Աստուած անընդհատ Իր անսահման սիրով ձգում է մեզ դէպի Իրեն:

Մարդու կեանքի նպատակը չի կարելի բացատրել որեւէ նիւթական օրինաչափութեամբ կամ պատճառականութեամբ: Մարդու կեանքի նպատակը դուրս է նրանից եւ արարչական սահմաններից: Մարդը ստեղծուած է Աստուծոյ կողմից եւ Աստուծոյ համար: Մարդկային կեանքի մեծագոյն ողբերգութիւնը Աստծուց դուրս, առանց հոգեւոր գիտակցութեան ապրելն է: Առանց հոգեւորի մարդու կեանքն անիմաստ ու դատարկ է: Մարդիկ, կտրուած լինելով հոգեւոր գիտակցութիւնից, յաճախ ճիգեր են գործադրում եւ ժամանակ վատնում՝ ոչ հոգեւոր կամ կեղծ հոգեւոր ճանապարհներով իրենց կեանքին իմաստ հաղորդելու կամ իրենց հոգեւոր դատարկութիւնը լցնելու համար: Սակայն այս աշխարհի որեւէ տեսութեամբ կամ

նիւթական բարիքով, մարդու հնարած որեւէ գաղափարով կամ արժէքով մարդը չի կարող իրեն երջանիկ զգալ: Ամէն բան այս աշխարհում անցնում է՝ նիւթական գեղեցկութիւն, հարստութիւն, զգացականութիւն եւն, միայն ճշմարիտ հոգեւոր արժէքներն են անանց եւ յաւիտենական, որոնցո՛վ միայն մարդու հոգին կարող է գոհանալ:

Ըստ Սուրբ Գրքի եւ Եկեղեցու հայրերի՝ հոգեւոր ապրումներն անհամեմատելի են ամէն տեսակ աշխարհիկ զգացումների հետ: Աստուծոյ հետ լինելու երանութիւնը վեր է ամէն տեսակ զգայական ուրախութիւններից: Ոչ մի աշխարհիկ գեղեցկութիւն չի կարող համեմատուել երկնաւոր անանց գեղեցկութեան հետ, որ հնարաւոր չէ նկարագրել մարդկային լեզուով: Զգացական ոչ մի սէր չի կարող համեմատուել աստուածային գերագանց եւ անսահման սիրոյ հետ: Այս աշխարհի բոլոր փափկութիւններն ու հանգստութիւնները չեն կարող համեմատուել այն երանութեան եւ խաղաղութեան հետ, որ Աստուած է տալիս մարդկանց հոգիներին:

Ժամանակաւորով եւ անցողիկով չի կարելի ձեռք բերել այս, մարդուց պահանջւում են հոգեւոր ճիգեր: Իսկ հոգեւոր արժէքները, որոնք ըստ Տիրոջ՝ երկնաւոր, անանց հարստութիւններ են, դիւրութեամբ չեն տրւում, այլ մարդուց պահանջում են հետեւողական ջանքեր եւ լուրջ զոհողութիւններ: Եթէ աշխարհիկ մի դիրք կամ նիւթական արժէք հեշտութեամբ ձեռք չի բերւում, ապա որքան առաւել՝ հոգեւորը: Մեր Տէր Յիսուս Քրիստոս Երկնքի արքայութիւնը, այսինքն՝ հոգեւոր բարիքների ամբողջութիւնը, նմանեցրեց մեծարժէք քարի, որ վաճառւում էր (այսինքն՝ ձրի չէր տրւում): Մի հարուստ մարդ, որ ճոխացած էր այս աշխարհի բարիքներով, տեսաւ այդ գեղեցիկ քարը, զգաց, որ ինքը չունի այդպիսի պատուական հարստութիւն, եւ ցանկացաւ գնել այն: Սակայն պարզուեց, որ ինքը պէտք է վաճառի իր ողջ ունեցածը՝ այն ձեռք բերելու համար: Եւ ըստ Տիրոջ խօսքի՝ հարուստը վաճառում է իր ողջ ունեցուածքը եւ ձեռք բերում այդ պատուական քարը, այսինքն՝ հրաժարւում իր ողջ փարթամութիւնից՝ հոգեւորը ձեռք բերելու համար [Մատթ. ԺԳ 45–47]:

Ըստ հոգու ընթանալը, հոգեւոր արժէքների գերակայութեան գիտակցումը մարդկային կեանքի անհրաժեշտ նախապայմանն են: Աշխարհիկ-նիւթական բաղձանքները ստրկացնում են մարդու հո-

գին, եւ մարդը կորցնում է ազատութիւնը, որի մէջ արարուել էր Աստուծոյ կողմից: «Ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահի եւ հոգին վնասի» [Մատթ. ԺԶ 26, Մարկ. Ը 36],— ասում է Տէրը: Հոգին կորցնելու վտանգը բաւականին մեծ է, որովհետեւ ըստ Եկեղեցու հայրերի՝ ծառայական մարմինը լիովին իշխում է իշխանական հոգու վրայ, եւ մարդկային կեանքը դարձել է խիստ մարմնահակ, այսինքն՝ ուղղորդւում է մարմնաւոր ցանկութիւններով եւ շարժումներով: Մեղքի անկման հետեւանքով խախտուած է մարդկային կեանքի օրէնքը, որն է՝ ըստ հոգու ապրելը: Քրիստոնէական կրօնը կոչուած է ազատելու մարդուն մեղքի կապանքներից եւ վերահաստատելու մարդկային կեանքի հոգեւոր նպատակը:

Քրիստոնէական ճանապարհի իսկութիւնը

Մարդկային էութեանը յատուկ երկնային փնտրումները միշտ չէ, որ ճիշտ հունով են ընթանում: Ժամանակակից աշխարհում հոգեւոր գիտակցութիւնը մեծ անկում է ապրում: Աղանդաւորական շարժումների աշխուժացման հետեւանքով հոգեւորի ընկալումը դարձել է խիստ մակերեսային եւ յաճախ նենգափոխուած: Միւս կողմից մարդու հոգեւոր փնտրումներին արձագանքող տարբեր կրօնական ուղղութիւններ փորձում են ցոյց տալ ճշմարտութեան ճանապարհը՝ չփոթութեան մէջ գցելով դիմացինին: Առաջարկւում են ամենատարբեր կրօնական գիտելիքներ ու փորձառական վարժանքներ, որոնք մարդու մէջ իբրեւ թէ պիտի բացեն հոգեւորը եւ աստուածային ոլորտի ճանաչողութիւնը: Սակայն իսկապէ՞ս վստահելի է այդ գիտելիքը: Ի՞նչ աղբիւրից է: Կա՞յ այդ գիտելիքի իրագործուած պատմական փորձ: Ո՞ւր են հասել մարդիկ դրանով: Ինչպէ՞ս կարելի է մարդկային վերջաւոր կերպերով հասնել անվերջին, ինչպէ՞ս սահմանափակի մէջ բովանդակել անբաւելին: Ինչպէ՞ս զերծ մնալ մարդկային ճիգերի չափազանցումից: Ահա այսպիսի իրավիճակում մարդը պէտք է կողմնորոշուի եւ կատարի ճիշտ ընտրութիւն:

Կայ մէկ շատ կարեւոր առանձնայատկութիւն, որով քրիստոնէութիւնը տարբերւում է մնացած կրոններից եւ կրոնական համակարգերից: Միայն քրիստոնէութեան մէջ է Աստուած մարնաւորւում մարդու փրկագործութեան համար. Աստուած մարդացաւ, որպէսզի

մարդն աստուածանայ: Աստուածայինը դարձաւ շօշափելի իրակա-նութիւն մարդու համար: Յիսուս Քրիստոսով մարդն ազատագրուեց թէ՛ աստուածայինի ընկալման աղաւաղումներից, թէ՛ մարդկային ճիգերի չափազանցումներից: Քրիստոնէական կրօնը մարդուն տալիս է ոչ միայն արժէքների որոշակի համակարգ, այլեւ դրանց հասնելու, Աստուծոյ հետ հաղորդակցութիւն հաստատելու յստակ ճանապարհ: Այս ճանապարհն էապէս տարբերւում է միւս կրօնների եւ աղանդների առաջարկած ճանապարհներից, որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոս ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» [Յովհ. ԺԴ 6]: Այսինքն՝ կայ մէկ եւ միակ ճշմարիտ կեանքի ճանապարհ, որ հաստատուած է Աստուծոյ Միածին Որդու փրկագործութեամբ: Եւ այդ ճանապարհը երկրից դէպի երկինք չէ, այսինքն՝ հնարուած չէ մարդու կողմից, այլ երկնքից դէպի երկիր է, այսինքն՝ Աստուծով է տրուած: Ճանապարհ՝ ոչ թէ թուացեալ, վերացական եւ անորոշ, այլ իրական, շօշափելի եւ յստակ: Քանզի «Բանը մարմին եղաւ... եւ մեր ձեռքերը շօշափեցին Կենաց Բանը» [Յովհ. Ա 1, Ա Յովհ. Ա 1],— ասում է Յովհաննէս աւետարանիչը: Նա, որ վեր է ամենայն իմաստութիւնից ու մտքից եւ մարդկային որեւէ ճիգով կամ վարժանքով անհասանելի, անընդմիջելիօրէն մեր-ձենում է մեզ եւ հնարաւորութիւն տալիս Իրեն հաղորդակից լինել մտքի համար անհասանելի կերպով:

Իւրաքանչիւր կրօնական համակարգի խկութիւնը ստուգւում է այդ համակարգով իրագործուած պատմական փորձառութեամբ: Քրիստոնէական Եկեղեցին այս առումով ունի հսկայական եւ անգե-րազանցելի պատմական ժառանգութիւն. իրագործուած գիտելիք՝ Եկեղեցու հայրերի, սուրբերի, վկաների փորձառութեամբ եւ կենդա-նի բարեխօսութեամբ հաստատուած ու նուիրականացած: Իւրաքան-չիւր ոք կարող է իր ապրումները համեմատել այդ փորձառութեան հետ՝ տեսնելու համար՝ ճի՞շտ է ընթանում արդեօք, չի՞ շեղուել եւն: Այս տեսանկիւնից քրիստոնէութիւնը եզակի ճանապարհ է. եւ այս ճանապարհի մասին խօսելիս նկատի չունենք աղանդաւորների կողմից քրիստոնէութեան խեղաթիւրումները, այլ միայն ուղղափառ ճանապարհը, այսինքն՝ այն, ինչ աւանդուել է Աստուծոյ կողմից կենդանի առաքելական յաջորդականութեամբ, այն, ինչ քարոզում է միայն մէկ առաքելական, ընդհանրական, ուղղափառ սուրբ Եկե-ղեցին, այն, ինչ ուսուցանում են մեր հայրերը:

Հաւատքի մասին

Քրիստոնէական ճանապարհը սկսւում է հաւատքով: Հաւատքով ոչ միայն սկզբնաւորւում է հոգեւոր կեանքը, այլեւ հաւատքով են պայմանաւորուած հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, նրա վերելքն ու զարգացումը: Հաւատքը գաղափարական համոզմունք կամ Աստուծոյ գոյութեան փաստի սոսկ ընդունում չէ, այլ մարդուն տրուած ամենապատուական կարողութիւնը եւ պարգեւը՝ իր Արարչի հետ հաղորդակցութիւն հաստատելու համար: Հաւատքի մեծութիւնը եւ զօրութիւնը արդէն ներկայացնում է Հին Ուխտի պատմութիւնը: Աստուծոյ ընտրեալ այրերի, մարգարէների եւ արդարների համար հաւատքը եղել է հոգեւոր կեանքի եւ սրբութեան առաջնային գործօն: Նրանց համար հաւատքը եղել է մեծագոյն արդարութիւն, ներքին ուխտ Աստուծոյ հետ, աստուածսիրութեան գրաւական, հզօր պաշտպանութիւն, աստուածային սքանչելիքների կատարման նախապայման, աստուածտեսութեան շնորհ եւն: Առ Աստուած հաւատքի այս զարմանալի որակների մասին է գրում սբ Յակոբ Մծբնեցին.

«Եւ Աբէլի հաւատքի համար ընդունելի եղաւ նրա պատարագը: Ենոքը, որովհետեւ հաճելի եղաւ իր հաւատքով, մահուանից դէպի կեանք փոխուեց: Նոյը նոյն հաւատքով փրկուեց ջրհեղեղից: Աբրահամն իր հաւատքի համար արդարացաւ, եւ նրա հաւատքը արդարութիւն համարուեց նրա համար: Իսահակը նոյն հաւատքով սիրելի եղաւ: Յակոբն իր հաւատքով պահուեց: Յովսէփն իր հաւատքի համար փորձուեց հակառակութեան ջրով, ազատուեց փորձութիւնից, եւ ուխտ կնքուեց նրա հետ, ինչպէս եւ Դաւիթն է ասում. «Յովսէփի հետ ուխտ կնքեց Աստուած» [Ծնն.դ. ԼԸ 3]: Մովսէսն իր հաւատքով սքանչելի զօրութիւններ գործեց, իր հաւատքով սպանեց եգիպտացիներին գաւազանի տասը հարուածներով, հաւատքով ճեղքեց բաժանեց ծովը եւ անցկացրեց իր ժողովրդին, հաւատքով փայտը գցեց դառնահամ աղբիւրի մէջ, եւ ջուրը քաղցրացաւ: Հաւատքով մանանայ իջեցրեց՝ իր ժողովրդին լիացնելու, հաւատքով տարածեց իր բազուկները եւ յաղթեց Ամաղէկին: Ինչպէս գրուած է. «Մինչեւ արեւամուտ հաւատքով տարածուած մնացին Մովսէսի բազուկները» [Ելք ԺԷ 12]: Հաւատքով նա երկու անգամ բարձրացաւ Սինա լեռան վրայ՝ քառասունական օր պահք պահելով: Դարձեալ՝

նոյն հաւատքով հարուածեց, սպանեց Սեհոնին եւ Զովգին՝ ամորհացիների թագաւորին:

Զարմանալի է, սիրելի՛, եւ մեծ է այն սքանչելիքը, որ արեց Մովսէսը Կարմիր ծովում. երբ հաւատքով բաժանուեցին ջրերը, բարձր լեռների, քարեղէն պարիսպների նման ամուր մնացին բարձունքներում, կակուղ ջրերը քարացան, սահմանը չէին անցնում եւ փոխեցին իրենց բնոյթը, ոչ բանական արարածները լսեցին հրամանը, չանցան սահմանը. ալիքները սաստուելով՝ մնացին կանգնած եւ պատրաստ վրէժը հատուցելու՝ զարմացած սպասելով Աստուծոյ հրամանին, մինչեւ անցաւ ժողովուրդը: Երեւացին յաւիտեանների հիմքերը, անդունդների խորքերը, որ հաստատուել էին ի սկզբանէ, շուտափոյթ ցամաքեցին, եւ վեր բարձրացան յաւիտեանների դռները: Եւ եկաւ մտաւ ամպի սիւնը եւ լուսատու եղաւ ամբողջ բանակի համար: Ժողովուրդը հաւատքով անցաւ, եւ ճշմարիտ դատաստան եղաւ փարաւոնի եւ նրա զօրքերի, կառքերի ու երիվարների հետ:

Նաւէի որդի Յեսուն նոյնպէս հաւատքով բաժանեց Յորդանան գետը եւ անցկացրեց Իսրայէլի որդիներին, ինչպէս Մովսէսի օրերին եղաւ:

Այս իմացիր, սիրելի՛, որ Յորդանան գետի հունը երեք անգամ բաժանուեց. նախ՝ Նաւէի որդի Յեսուի, երկրորդ՝ Եղիայի եւ ապա՝ Եղիսէի ձեռքով: Գրուած է, որ Երիքով քաղաքի մօտ գտնուող հունի տեղից Եղիան երկինք բարձրացաւ: Եւ երբ Եղիսէն բաժանուեց նրանից, զարկեց, բաժանեց Յորդանանը եւ անցաւ: Եւ Երիքով քաղաքի մարգարէների որդիներն ընդառաջ ելան Եղիսէին եւ ասացին. «Արդարեւ Եղիայի հոգին իջաւ Եղիսէի վրայ» [Դ Թագ. Բ 15]: Եւ երբ ժողովուրդը Նաւէի որդի Յեսուի օրօք անցաւ Յորդանանը, հաւատքով կործանեց Երիքովի պարիսպները, եւ դրանք առանց ջանքերի ընկան կործանուեցին: Դարձեալ նոյն հաւատքով կոտորեց սպանեց երեսունմէկ թագաւորներին եւ Իսրայէլի երկիրը նրա որդիներին ժառանգութիւն տուեց: Հաւատքով իր ձեռքերը դէպի երկինք տարածեց եւ կանգնեցրեց արեգակը Գաբաւոնում, իսկ լուսինը՝ ելոնացիների դաշտում, որոնք դադարեցրին իրենց ընթացքը: Եւ մեր բոլոր արդար հայրերն ամէն բան հաւատքով արեցին, իրենց հաւատով առաքինացան: Երանելի առաքեալը բոլորի մասին վկայում է, թէ հաւատով առաքինացան [Եբր. ԺԱ 1–40]: Եւ Սողոմոնն ասում է. «Շատերն են, որ ողորմած անուանուեցին,

բայց հաւատացեալ մարդ որտե՞ղ կը գտնուի» [Հմմտ. Առակ. Ի 6], եւ Յոբն ասում է. «Զեմ փոխի իմ անմեղութիւնը եւ իմ հաւատքի ճշմարտութեան մէջ հաստատ կը մնամ» [Յոբ Իէ 5]»[1]:

Ինքը՝ Յիսուս Քրիստոս, բազմիցս մեծարեց եւ դրուատեց հաւատքը՝ որպէս մարդու հոգեւոր կեանքի էական յատկանիշ: Տիրոջ կողմից կատարուած հրաշագործ բժշկութիւնները զուգորդուած են հաւատքով, Իր աստուածային սրբարար ներգործութեան համար Տէրը մարդուց պահանջում է հաւատք: Հաւատքով մարդը մասնակից է դառնում աստուածային գործերին, որ անճառելի են եւ վեր մտքից ու իմացումից, եւ ո՛չ միայն այս. հաւատքով կարելի է խնդրել ու ստանալ ամէն բան եւ նոյնիսկ գործել այն, ինչ հնարաւոր չէ մարդկային բնութեանը: Աւետարանում ոչ մի բանի վրայ Տէրը չզարմացաւ, այլ միայն մարդու զօրաւոր հաւատքի: Ըստ Աւետարանի՝ միայն հաւատքով է հնարաւոր մտնել յաւիտենական կեանքի ժառանգութեան մէջ: Հաւատքը մուտք է դէպի երկնքի արքայութիւն եւ հոգեւոր բարիքներ, հաւատքով է տեղի ունենում մարդու ներքին վերափոխման հրաշքը: Սբ Յակոբ Մծբնեցին գրում է.

«Եւ մեր կենարար Տէրն այսպէս էր ասում նրանց, ովքեր մօտենում էին Իրեն՝ բժշկութիւն ստանալու. «Թող ըստ քո հաւատքի՛ լինի քեզ» [Մատթ. Թ 29]: Եւ երբ կոյրը մօտեցաւ Նրան, Յիսուս հարցրեց նրան. «Հաւատո՞ւմ ես, որ կարող եմ բժշկել քեզ»: Ասաց նրան. «Այո՛, Տէ՛ր, հաւատում եմ» [Մատթ. Թ 28]: Եւ նրա հաւատքը բացեց նրա աչքերը: Եւ այն մարդուն, ում որդին հիւանդ էր, Յիսուս ասաց. «Դու հաւատա՛, եւ քո որդին կ՚ապրի՛»: Եւ մարդը Նրան ասաց. «Հաւատո՛ւմ եմ, Տէ՛ր, օգնի՛ր իմ թերահաւատութեանը» [Մատթ. Թ 23]: Եւ նրա հաւատալու շնորհիւ ողջացաւ նրա որդին: Եւ թագաւորազնի հաւատքով բժշկուեց նրա որդին, երբ մօտեցաւ Յիսուսին եւ ասաց. «Ասա՛ դու խօսքով, եւ իմ զաւակը կը բժշկուի» [Ղուկ. Է 7]: Մեր Տէրը զարմացաւ նրա հաւատքի վրայ, եւ ըստ նրա հաւատքի եղաւ նրան: Եւ երբ ժողովրդապետը մեր Տիրոջն աղաչեց իր դստեր համար, Յիսուս այսպէս ասաց նրան. «Միայն հաւատա՛, եւ կ՚ապրի քո դուստրը» [Ղուկ. Ը 50]: Նա հաւատաց, եւ նրա դուստրը

1 Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ սրբոյն Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի՝ ի խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիմոնի, Կ. Պոլիս, 1824, էջ 16–18

յարութիւն առաւ: Իսկ երբ մեռաւ Ղազարոսը, մեր Տէրը Մարթային ասաց. «Եթէ դու հաւատաս, քո եղբայրը յարութիւն կ՚առնի» [Յովհ. ԺԱ 25]: Մարթան Նրան ասաց. «Այո՛, Տէ՛ր, ես հաւատում եմ» [Յովհ. ԺԱ 27]: Եւ մեր Տէրը յարութիւն տուեց չորսօրեայ մեռեալ Ղազարոսին: Շմաւոնն իր հաւատքի համար ճշմարիտ վէմ անուանուեց: Երբ մեր Տէրն առաքեալներին Աւազանի մկրտութեան խորհուրդը տուեց, այսպէս ասաց նրանց. «Ամէն ոք, ով հաւատայ եւ մկրտուի, կ՚ապրի, իսկ ով չհաւատայ, կը դատապարտուի» [Մարկ. ԺԶ 16]: Դարձեալ ասաց առաքեալներին. «Եթէ հաւատաք եւ չերկմտէք, չկայ այնպիսի բան, որ չկարողանաք անել» [Մարկ. ԺԱ 23]: Եւ երբ մեր Տէրը քայլում էր ծովի ալիքների վրայով, Պետրոսն էլ հաւատքով դէպի Նա էր գնում ծովի ջրերի վրայով, իսկ երբ երկմտեց իր հաւատքի մէջ, սկսեց ընկղմուել, եւ մեր Տէրը նրան «թերահաւատ» անուանեց: Եւ առաքեալները այլ բան չէին խնդրում Տիրոջից, այլ միայն. «Աւելացրո՛ւ մեր հաւատքը» [Ղուկ. ԺԷ 5]: Եւ Տէրն ասում է նրանց. «Եթէ [մանանեխի հատիկի չափ] հաւատք ունենաք, լեռները կը շարժէք իրենց տեղերից» [Մարկ. ԺԱ 23]. եւ՝ «Մի՛ երկմտէք ձեր հաւատքի մէջ» [Մատթ. ԻԱ 21]՝ ակնարկելով, որ հակառակ դէպքում նրանք կ՚ընկղմուեն աշխարհի մէջ, ինչպէս Շմաւոնը՝ ծովի ջրերի մէջ: Եւ դարձեալ ասում է. «Ձեր հաւատքի նշանը այս կը լինի. նոր լեզուներով կը խօսէք, դեւերին կը հանէք, ձեր ձեռքը կը դնէք հիւանդների վրայ, եւ նրանք կը բժշկուեն» [Մարկ. ԺԶ 17]:

Սիրելի՛, այսուհետ մօտենա՛նք հաւատքին, քանի որ այսպիսի բազում զօրութիւններ ունի այն: Հաւատը ոմանց երկինք բարձրացրեց, հաւատքով յաղթեցին ջրհեղեղին, հաւատքով ամուլները զաւակներ ծնեցին, փրկուեցին սրից, ազատուեցին կապանքներից, ելան գբից, աղքատները բարձրացան, հալածուողները փրկուեցին, երկնքից հուր իջեցրին, բաժանեցին ծովը, վէմը պատռեցին, ծարաւներին ջուր խմեցրին, քաղցածներին յագեցրին, մեռեալներին կենդանացրին, դժոխքից փրկեցին, ալիքները կանգնեցրին, հիւանդներին բժշկեցին, յաղթեցին զօրութիւններին, պարիսպները կործանեցին, առիւծների բերանը փակեցին, կրակի բոցը հանգցրին, ամբարտա-

---

2 Նոյն, էջ 19–21

ւանների խոնարհեցրին, խոնարհների փառքի ու պատիւների հասցրին. այս բոլոր զօրութիւնները հաւատքո՛վ գործուեցին»[2]:

Սակայն ի՞նչ է հաւատքը, եւ ինչպէ՞ս ձեռք բերել այն: Ըստ Եկեղեցու հայրերի՝ հոգեւորի հետ հաղորդակցութիւն հաստատելը մարդկային հոգու որոշակի կարողութիւն եւ օժտուածութիւն է, որը գործում է աստուածային շնորհի լուսաւորութեան պայմաններում: Ինչպէս մարմնաւոր տեսողութիւնը գործում է զգայական լոյսի ներգործութեամբ, այնպէս էլ հոգեւոր տեսողութիւնը գործում է Աստուծոյ շնորհական լոյսի հետ միաւորուելով: Մարդկային հոգու՝ Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ մտնելու այս շնորհական կարողութիւնը կոչւում է հաւատք: Սբ Գրիգոր Լուսաւորիչն իր «Հաւատքի միտքը» ճառում ասում է. «Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի աչքերի համար... Սուրբ Հոգու շնորհի իմաստութեամբ եւ գիտութեամբ լուսաւորուած... Քանզի աննման եւ անհամեմատ է, անպատում եւ անսահման, անհաս եւ անբաւ, սակայն հաւատով տեսնւում, իմացւում եւ օրհնւում է արարածներից...»[3]: Իսկ սբ Գրիգոր Տաթեւացին հաւատքն այսպէս է սահմանում. «Հաւատքը [Աստուծոյ] առաջնային լոյսից բանական հոգու մէջ հեղուած մտքի լուսաւորութիւնն է՝ հոգեւոր բարիքների ճանաչողութեան համար»[4]: Այսպիսով հաւատքը հոգու որոշակի լուսաւորուածութիւն եւ պայծառութիւն է, որոշակի գերագոյն վիճակ կամ գերկարողութիւն, որ թոյլ է տալիս առնչուել մարդու համար անհասանելի եւ անճառելի ոլորտի հետ:

Պօղոս առաքեալն ասում է. «Հաւատքը յուսացած բաների հաստատումն է եւ աներեւոյթների ապացոյցը» [Եբր. ԺԱ 1]: Այս սահմանումը ցոյց է տալիս, որ հաւատքի բուն նպատակը դուրս է այս աշխարհից, եւ հաւատքով են աղերսուած հոգեւոր եւ նիւթական ոլորտները: Այս ընկալմանը էապէս խորթ է «մարդը ինչ-որ բանի պէտք է հաւատայ» աշխարհիկ արտայայտութիւնը: Հաւատքի առարկան մէկ եւ միակ Աստուածն է: Եւ հաւատքն այդ Աստուծոյ

---

3 Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Սբ Ղազար, 1954, էջ 28

4 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 571

հետ անձնական փոխյարաբերութիւն հաստատելու ճանապարհն է, որը հաստատուել է Յիսուս Քրիստոսի փրկագործութեամբ եւ դարձել մարդկային բնութեան սեփականութիւնը: Զկայ այլ հաւատք կամ փրկութիւն, այլ միայն այն, որ տրուած է Քրիստոսով:

Առաքեալի այս սահմանումը նաեւ ակնարկում է այն մասին, որ հաւատքը որոշակի անցում է այս կեանքից դէպի վախճանաբանական ապագայ: Հաւատքով վայելում եւ ճաշակում ենք այն, ինչ տրուելու է ապագայում: Հաւատքը մեզ հաստատում է այն բաների մէջ, որ յոյս ունենք ստանալու գալիքում, ապացուցում է այն բաները, որոնց կատարեալ տեսութիւնը լինելու է գալիքում: Այս մասին որոշակիօրէն նշում է սբ Բարսեղ Կեսարացին «Հաւատքի մասին» իր ճառում. «Աստուծոյ մեծութիւնը եւ փառքը, որ անընդգրկելի են խօսքով եւ անըմբռնելի են մտքով, հնարաւոր չէ ո՛չ կերպաւորել, ո՛չ էլ ներկայացնել մէկ խօսքով կամ գաղափարով: Իսկ Աստուածաշունչ գիրքը մեր կողմից գործածուող բազում խօսքերի միջոցով հազիւ մօտեցնում է աստուածայինը սրտով մաքուրների ըմբռնմանը եւ այն էլ՝ ներկայացնելով որպէս թէ հայելու մէջ: Քանզի դէմյանդիման հայեցողութիւնը եւ կատարեալ ճանաչողութիւնը կը տրուի միայն գալիքում»[5]:

Ըստ սբ Եւագր Պոնտացու՝ հաւատքը հայեցողական ճշմարտութիւն է եւ երկնքի արքայութեան նախաճաշակումը. հաւատքի հայեցողութիւնը եւ հոգեւոր ճանաչողութիւնը մարդկային հոգու բնական կարողութիւններ են, միայն մարդը ճշմարիտ կեանքով պէտք է ապրի եւ հոգ տանի ուղղափառ հաւատքի մասին: «Հաւատքի մասին» խօսքում նա գրում է. «Երկնքի արքայութիւնը, ո՛վ եղբայրներ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ էերին ճշմարտապէս հասնելը, որն Աստուածային Գիրը «երանութիւն» է անուանում: Քանի որ եթէ Երկնքի արքայութիւնը «ներսում՝ ձեր մէջ է» [Ղուկ. ԺԷ 21], իսկ ներքին մարդու մէջ բացի հայեցողութիւնից ուրիշ ոչինչ չի գոյանում, ապա Երկնքի արքայութիւնը հայեցողութիւն է: Այժմ այդ Արքայութեան ստուերներն ենք միայն տեսնում, ինչպէս հայելու մէջ [Ա Կորնթ. ԺԳ 12], իսկ յետոյ, ազատուելով այս երկրաւոր մարմնից եւ հագնելով անապականն ու անմահը [Բ Կոր. Ե 1–4], կը

5 Творения иже во святых отца нашего Василия Великого, Москва, 1991, т. 5, ст. 24

տեսնենք Երկնքի արքայութեան նախատիպերը: Կը տեսնենք, եթէ, իհարկէ, մեր կեանքը ուղղենք ուղիղ ճանապարհով եւ հոգ տանենք ուղղափառ հաւատքի համար, առանց որի չենք տեսնի Տիրոջը [Եբր. ԺԲ 14]: Զէ՞ որ ասուեց. «Իմաստութիւն չի մտնի չարանենգ անձի մէջ, որ մեղք է գործում» [Առակ. Ա 4]:

Եւ թող չառարկեն ինձ՝ ասելով. «Դու չգիտես, թէ ինչ է գտնւում ոտքերիդ տակ, սակայն յանձն ես առնում իմաստասիրել մեզ հետ անմարմին եւ ամբողջութեամբ աննիւթական էութեան մասին»: Ես կարծում եմ՝ անհեթեթ է թոյլ տալ զգայութիւններին՝ անարգել համակուել զգայականով եւ արգելել մտքի բուն գործունէութիւնը: Քանի որ ինչպէս զգայութիւնն է ընկալում զգայականը, այնպէս էլ միտքը՝ իմանալին: Սրա հետ մէկտեղ հարկ է նշել, որ Աստուած, երբ սկզբից ստեղծեց մարդուն, նրա մէջ դրեց բնական բնածին չափանիշներ: Զէ՞ որ ոչ ոք չի սովորեցնում տեսողութեանը՝ ընկալելու գոյներն ու ձեւերը, լսողութեանը՝ աղմուկներն ու ձայները, հոտառութեանը՝ անուշահոտութիւնն ու գարշահոտութիւնը, համի զգայարանին՝ տարբեր համային զգացողութիւնները, շօշափելիքներին՝ փափուկն ու չորը, սառն ու տաքը: Այդպէս էլ ոչ ոք չի կարող սովորեցնել մտքին՝ ընդունելու իմանալին: Եւ ինչպէս զգայարանները, երբ հիւանդ են, պահանջում են միայն հոգատար խնամատարութիւն եւ ապա վերստին դիւրութեամբ սկսում կատարել իրենց առանձնայատուկ գործունէութիւնը, այդպէս էլ միտքը, գամուած լինելով մարմնին եւ լցուած լինելով մարմնական պատկերացումներով, կարիք ունի միայն հաւատքի եւ ճշմարիտ վարքի, որոնք ոտքերը կատարելագործում են, ինչպէս եղնիկինը, եւ նրան հասցնում բարձունքներ [Սաղմ. ԺԷ 34]»[6]:

Մարդկային կեանքի ողջ անկատարութիւնը, ըստ Տիրոջ, գալիս է հաւատքի պակասութիւնից: Մարդիկ փորձում են հաւատքը փոխարինել ամենազանազան բաներով՝ մեծ տեղ տալով իրենց գիտելիքներին, սովորութիւններին, զգացմունքներին, երեւակայութեանը եւն: Արդիւնքում մարդը յայտնւում է հոգեկործան շեղումների մէջ: Սբ Յովհան Ոսկեբերանը «Յովհաննու Աւետարանի մեկնութեան» մէջ գրում է. «Սիրելինե՛ր, ամենուր մեզ պէտք է հաւատք. հաւատքը բարիքների մայրն է եւ փրկութեան դեղը, առանց սրա մարդ չի

6 Творения аввы Евагрия, Москва, 1994, с. 155–156

կարող ունենալ որեւէ բան մեծամեծ աւանդութիւններից. այլ կը նմանուի անգէտ մարդկանց, որոնք անմտաբար կամենում են ծովն առանց նաւի անցնել, սակայն ձեռքերը եւ ոտքերը բռնւում են մի փոքր լողալուց յետոյ, եւ չկարողանալով առաջ ընթանալ՝ անմիջապէս ընկղմւում են ջրերի մէջ: Նոյնպէս էլ նրանք, ովքեր առանց հաւատքի, միայն իրենց մտքով են ընթանում, նաւաբեկութեան են ենթարկւում: Ինչպէս Պողոսն է ասում ոմանց մասին, թէ «հաւատքի մէջ նաւաբեկ եղան» [Ա Տիմ. Ա 19]: Արդ՝ որպէսզի նոյն ալիքները մեզ էլ չկործանեն, բռնենք [հաւատքի] այս սուրբ խարսխից»[7]*:*

Հաւատքն աւելին է, քան մտքի իմացումը, զգացական ներթափանցութիւնը կամ երեւակայութեան թռիչքը: Մարդկային որեւէ ճանաչողութիւն չի կարող համեմատուել հաւատքի ճանաչողութեան հետ, որ Աստուծոյ լոյսի առաջնորդութեամբ տանում է մարդուն դէպի հոգեւոր ոլորտ: Սբ Գրիգոր Տաթեւացին ասում է. «Մարդու բնական տեսութիւնը ունի երեք յատկութիւն: Առաջին՝ նախ ճանաչմամբ խոնարհւում է դէպի իր առջեւ դրուած ճանաչելին: Երկրորդ՝ խառնւում է ճանաչելիների հետ: Երրորդ՝ բաժանւում եւ զանազանւում է շատ բաների մէջ. եւ այդպէս փնտրելով՝ գտնում է ճշմարիտը: Այսպիսին է իմաստասէրների բնական քննութիւնը: Իսկ շնորհականը հակառակ է սրանց: Քանզի պարզ եւ միեղէն ճանաչողութեամբ բարձրանում է դէպի աստուածային գիտութիւնը եւ նոյնի տեսութեամբ յափշտակւում: Այսպիսին է մարգարէների, առաքեալների եւ հաւատքի տեսութիւնը»[8]*: Համեմատելով բանական քննութիւնը հաւատքի տեսութեան հետ՝ սբ Գրիգոր Տաթեւացին շարունակում է. «Բանական քննութիւնը եւ հաւատքի տեսութիւնը նման են, որովհետեւ երկուսն էլ ուղղուած են դէպի ճշմարտութիւնը: Սակայն զանազանւում են հետեւեալ կերպ: Նախ՝ բանականն ուղղուած է դէպի երկրաւորները եւ ամբողջանում է ճշմարտութեան բազմակի քննութեամբ, իսկ հաւատքն ուղղուած է դէպի Մէկը եւ աստուածային ճշմարտութիւնը: Երկրորդ՝ բանականը երբեմն մոլորւում է ճշմարտութիւնից եւ տարակուսում, իսկ հաւատքն*

---

7 Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Յովհաննու, ՃառԼԲ, Կ. Պոլիս, 1717, էջ 325

8 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 120

անտարակոյս եւ անմոլար է ճշմարտութիւնից: Երրորդ՝ բանական քննութեանը հետեւում է հերձուածողութիւն, իսկ հաւատքի տեսութեանը՝ ուղղափառութիւն: Չորրորդ՝ բանական քննութիւնը ճշմարիտը քաշում է դէպի միտքը, իսկ հաւատքի տեսութեան դէպքում միտքը հետեւում է ճշմարտութեանը: Հինգերորդ՝ բանական քննութիւնն անվարձատրելի է, իսկ հաւատքի տեսութիւնը վարձքի եւ փառքի է արժանանում»[9]:

Հոգեւոր կեանքը սկսւում է այնժամ, երբ մարդը սկսում է ըստ հաւատքի ապրել, որ նշանակում է ամէն ինչում կատարելապէս վստահել Աստծուն եւ ամէն բան յանձնել Նրա խնամքին: Աստուած Իր անսահման սիրով հոգ է տանում մարդու մասին եւ մեզանից աւելի լաւ գիտի, թէ ինչ է պէտք մեզ: Մեզ միայն մնում է աներկբայ սրտով, լիակատար վստահութեամբ հաւատալ Աստծուն, եւ Նա կը տայ մեզ ճշմարիտ կեանքի գիտութիւնը: Միայն չկասկածենք եւ չկեղծաւորենք, այլ ուղիղ մտքով եւ անկեղծ սրտով ապաւինենք Աստուծոյ խնամակալութեանը:

«Քանզի հաւատքով ենք ընթանում եւ ոչ թէ կարծիքով» [Բ Կոր. Ե 7],— ասում է առաքեալը: Հաւատքը մեր կեանքի ուղեկիցն ու պաշտպանն է: Նա, ով ունի ի Քրիստոս ճշմարիտ հաւատքը, լոյսի մէջ է քայլում եւ պաշտպանուած է խաւարի ուժերից: Առաքեալն ասում է. «Եւ այս բոլորի վրայ վերցրէք հաւատքի վահանը, որպէսզի կարողանաք հանգցնել չարի բոլոր այրող նետերը» [Եփես. Զ 16]: Հոգեւոր ճանապարհով ընթանալիս մարդն անընդհատ ենթարկւում է դիւային փորձութիւնների եւ յարձակումների: Ըստ անապատական հայրերի՝ ճշմարիտ դաւանութիւնը հզօր զէնք է չարի դէմ մղուող պայքարում: Սբ Եւագր Պոնտացին գրում է. «Պատրաստի՛ր քո անձը ինչպէս հմուտ ճգնող եւ, եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ շփոթուիր. եթէ տեսնես քեզ վրայ բարձրացած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր. եթէ տեսնես որեւէ տհաճ եւ արիւնատես կերպարանք, ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ դաւանումը, եւ դիւրութեամբ

9 Նոյն, էջ 121–122

կը տեսնես քո թշնամիների կործանումը»[10]: Այսպիսով՝ հաւատքը նաեւ չարի որոգայթներից խուսափելու կարեւորագոյն գործօն է:

Հաւատքը, յոյսը եւ սէրը քրիստոնէական աստուածաբանութեան մէջ կոչւում են աստուածային առաքինութիւններ: Ինչո՞ւ են այս առաքինութիւնները կոչւում աստուածային: Սբ Գրիգոր Տաթեւացին բացատրում է. «Նախ աստուածային են կոչւում, որովհետեւ այս երեքը վերուղղուած են առ Աստուած: Քանզի հաւատքով է տեսնւում ծայրագոյն Բարին, յոյսով սպասում ենք գերագոյն Բարուն, սիրով ցանկանում ենք վերնային Բարին: Եւ այս ամէնն առ Աստուած է: Դարձեալ՝ հաւատքով ընդունակ են դառնում, յոյսով հաղորդակից լինում եւ սիրով միաւորւում Աստուծոյ հետ: Դարձեալ՝ հաւատքով հաւատում ենք, որ միայն Իր բարութեամբ եւ ոչ հարկադրուածութեամբ ստեղծեց եւ վերստին փրկեց մեզ: Յոյսով սպասում ենք Նրա խոստացած ողորմութեանը, քանզի գթած եւ ճշմարիտ է: Սիրով սիրում ենք Նրան, քանզի Ինքն Իրենով բարի է: Եւ այն պատճառով ենք սիրում ընկերոջը, որ Աստուծոյ պատկերն ու արարածն է»[11]:

Հաւատքը առաջինն է, որովհետեւ նախորդում է միւս բոլորին, եւ հաւատքով է սկսւում հոգեւոր կեանքն առհասարակ: Հաւատքը սկիզբն ու արմատն է բոլոր առաքինութիւնների եւ հոգեւոր բարիքների: Դա տեղի է ունենում աստուածային շնորհի լուսաւորութեամբ եւ լուսաւորում մարդկային ողջ էութիւնը:

«Ինչպէս աչքի լոյսը միաւորւում է արեգակի լոյսի հետ եւ ապա կարողանում է տեսնել դրա ե՛ւ ձեւը, ե՛ւ չափը, այնպէս էլ Աստուծոյ իմացական լոյսը միաւորւում է մտքի բանական լոյսի հետ, եւ նրանով տեսնում ենք երկնաւոր եւ երկրաւոր գիտութիւն-

10 Աղօթքի մասին, պարբ. 92 (տես այս հատորում, էջ 193): Աղօթքի մասին այս նշանաւոր գործը մեզ է հասել սբ Նեղոս Սինայեցու անուամբ: Սակայն նոր աղբիւրագիտական տուեալները եւ, մասնաւորապէս, վերջերս յայտնաբերուած ասորերէն ներածութիւնը աներկբայօրէն ցոյց են տալիս, որ այս երկի հեղինակը սբ Եւագր Պոնտացին է: Մեծանուն սուրբի շատ ստեղծագործութիւններ նոյն ճակատագրին են արժանացել՝ այլ անունների տակ յայտնուելով, որի պատճառ են եղել որոգինէական վէճերը եւ նրա որոշ հայեացքների միակողմանի մեկնաբանութիւնները:

11 Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729, էջ 571

ների զանազանութիւնը, հաւատում Աստծուն եւ յոյսով ու սիրով հաստատւում առ Աստուած: Այս է հաւատքի լոյսը, որ Աստուծոյ իմացական շնորհը հեղւում է մեր բանական մտքի մէջ եւ կայանում հաւատքով»[12]*:*

Իսկ ինչպէ՞ս ձեռք բերել այս հաւատքը: Կա՞յ արդեօք ճանապարհ՝ բացելու մեր հոգում այս յիրաւի անհուն զօրութիւնը: Առաքեալն ասում է. «Հաւատքը լսելուց է, իսկ լուրը՝ Քրիստոսի խօսքից» [Հռոմ. Ժ 17]: Այսինքն՝ հաւատքը սկսւում է Քրիստոսի կենդանարար խօսքից, որ Սուրբ Գրքով եւ Եկեղեցու հայրերի ուղղափառ վարդապետութեամբ փոխանցուած է մեզ, որպէսզի մեր հաւատքը չլինի «մարդկային իմաստութեամբ, այլ Աստուծոյ զօրութեամբ» [Ա Կոր. Բ 5]: Հաւատքի ճիշտ ընկալումը պահանջում է հաւատքի ուղղափառ վարդապետութիւն կամ ուսուցում: Քրիստոնէական վարդապետութիւնը Սուրբ Հոգու սրբազան աւանդութեան անբաժանելի մասն է. Աստուծոյ Հոգին մշտապէս ներգործում է Եկեղեցում՝ որպէս կենդանի ուսուցիչ եւ առաջնորդ հոգեւոր կեանքի: Ճշմարիտ վարդապետութիւնը հաստատւում եւ վաւերացւում է Եկեղեցու փորձառութեամբ: Եկեղեցին ոչ միայն կենդանի կրիչն է Աստծուց շարունակաբար տրուող յայտնութենական ճշմարտութիւնների, այլեւ այդ ճշմարտութիւնները վարդապետական ուղիներով փոխանցողն է: Վարդապետութեան պատմական փոխանցումը տեղի է ունենում Աստուծոյ «սրբազան անօթների»՝ Եկեղեցու սուրբ հայրերի եւ վարդապետների միջոցով, որոնց տրուած է առանձնայատուկ վարդապետական շնորհ: Վարդապետական գիտելիքի արգասաւորման համար անհրաժեշտ է, որ այն իրագործուի սեփական փորձառութեամբ՝ թէ՛ ուսուցանողի եւ թէ՛ ուսուցանուողի կողմից:

Քրիստոնէական վարդապետութիւնը փիլիսոփայական համակարգ չէ, այլ ճշմարիտ Վարդապետի՝ Յիսուս Քրիստոսի փրկագործութեամբ հաստատուած կեանքի գիտութիւն, որ տանում է մարդուն դէպի յաւիտենական կեանք: Քրիստոնէական վարդապետութիւնը մշտապէս նորոգւում է Սուրբ Հոգու շարունակական ուսուցմամբ. «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Որին Հայրը կ՚առաքի Իմ անունով, Նա ձեզ ամէն բան կ՚ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ

---

12 Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1741, էջ 83

ես ասացի ձեզ» [Յովհ. 26]: Քրիստոնէական վարդապետութիւնն անհրաժեշտ է հաւատացեալ գիտակցութիւնը զանազան դիւային շեղումներից զերծ պահելու համար: Այս մասին խիստ զգուշացումներ է կատարում սբ Կիւրեղ Երուսաղեմացին. «Ուսմամբ եւ պատմութեամբ ստացի՛ր հաւատքը եւ պահիր միայն ա՛յն հաւատքը, որ այստեղ վարդապետուած է սուրբ Եկեղեցուց եւ հաստատուած բոլոր Սուրբ Գրքերով: Արդ՝ որովհետեւ ոչ բոլորը կարող են կարդալ Գիրքը՝ ոմանք տգիտութեան պատճառով, ոմանք էլ իրենց ներսի տգիտութիւնը խափանել չՁանալու պատճառով, արդ, որպէսզի տգիտութիւնից հոգիները չկործանուեն, մենք հակիրճ կարգաւորութեամբ ամփոփեցինք հաւատքի ուսուցումը: Փութալով կամենում եմ աւելի ուսուցանել՝ ոչ թէ նամակներ գրելով, այլ մեծ ուշադրութեամբ սրտերի մէջ արձանագրելով: Զգո՛յշ եղէք՝ դրա մէջ կանխապէս հաստատուելով... ամո՛ւր պահէք սա՝ որպէս պաշար դարձնելով ձեր կեանքի ողջ ընթացքում, եւ սրանից բացի այլ բան չընդունէք. նոյնիսկ եթէ մենք ինքներս, մեր խօսքերը փոփոխելով, հակառակն ուսուցանենք, կամ թէ մի թշնամի հրեշտակ, լուսոյ կերպարանք առնելով, կամենայ խաբել ձեզ. [ինչպէս ասում է առաքեալը]. «Եթէ մենք կամ երկնքից իջած հրեշտակ աւետարանի աւելին, քան այն, որ մեզանից ստացաք, նզովեալ լինի» [Գաղ. Ա 8–9]: Եւ նախ նոյն խօսքերի վրայ իսկ ամրանալով՝ պահիր մտքումդ հաւատքի համար, սակայն իր ժամանակին այդ խօսքերի ապացոյցը սպասիր Սուրբ Գրքից ստանալ: Քանզի հաւատքի հաստատութիւնը դրուեց ոչ թէ այնպէս, ինչպէս հաճոյ էր մարդկանց, այլ ամբողջ Գրքից ամենայարմար խօսքերը հաւաքուած լինելով՝ ամբողջանում են հաւատքի հաստատութեան մէկ վարդապետութեան մէջ»[13]:

Կորնթացիներին ուղղուած երկրորդ թղթում Պօղոս առաքեալը խօսում է նաեւ հաւատքի աճի մասին [Բ Կոր. Ժ 15]: Հաւատքի աճի համար անհրաժեշտ են հաւատքի գործեր: «Հաւատքն առանց գործերի մեռած է» [Յակ. Բ 26], ասում է Յակոբոս առաքեալը: Հաւատքի աճի կամ հոգեւոր կեանքի զարգացման համար մարդուց

---

13 Սբ Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 84–85

14 Սբ Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 239

պահանջում են հոգեւոր ճիգեր եւ առաքինութեան գործեր: Առանց լուրջ զոհողութիւնների եւ ճգնակեցութեան հնարաւոր չէ հասնել հաւատքի այնպիսի աստիճանների, որ ձեռք են բերել Աստուծոյ սուրբերը: Այսպիսով՝ հաւատքն ունի սկիզբ, որ Աստուծոյ կենարար խօսքով է սերմանւում մարդկային հոգիների մէջ, հաւատն ունի առաջընթաց եւ զարգացում, հաւատքն ունի նաեւ կատարելութեան աստիճաններ, եւ նրա լիութիւնը սուրբերը վայելելու են Երկնքի արքայութեան մէջ:

Ուղղափառ դաւանութեան մասին

Եկեղեցու հայրերը եւ վարդապետները ուսուցանում են, որ հաւատքի առաջին աստիճանը կամ տեսակը դաւանական հաւատքն է կամ հաւատքի դաւանութիւնը: Այս է հաստատում սբ Աթանաս Աղեքսանդրացին. «Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ճշմարիտ հաւատքի դաւանութիւնն է»[14]:

«Դաւանել» նշանակում է ընդունել, հաւատարմութիւն խոստանալ, խոստովանել, վկայել որպէս ճշմարտութիւն եւ հաստատել այն, ինչին հաւատում ես: Իսկ դաւանութիւնը հաւատքի հիմնական սկզբունքների ամբողջութիւնն է, որին պէտք է ամբողջ սրտով հաւատայ ամէն մի քրիստոնեայ: «Դաւանել» նաեւ նշանակում է խոստովանել եւ վկայել բերանով. «Քանի որ սրտով հաւատում էք արդարանալու համար եւ բերանով խոստովանում փրկուելու համար. քանզի այս է Գիրքն [ասում]. «Ամէն ոք, ով հաւատայ Նրան, չի ամաչի» [Հռոմ. Ժ 10],— ասում է Պօղոս առաքեալը: Ահա թէ ինչու ամէն օր եկեղեցում բարձրաձայն արտասանւում է Հաւատոյ հանգանակը: Դաւանական մաքրութեան հարցերը մշտապէս եղել են Եկեղեցու ուշադրութեան կենտրոնում. Եկեղեցու հայրերը, պայքարելով զանազան հերձուածների եւ աղանդների դէմ, իրենց աստուածաբանական գրուածքներով մշտապէս կրթել եւ լուսաւորել են հաւատացեալների հոգիները եւ զերծ պահել վտանգաւոր շեղումներից: Դաւանական մաքրութիւնը նրանց կողմից համարուել է քրիստոնէական կեանքի գլխաւոր նախապայման: Հաւատքի մաքրութիւն է պահանջում իւրաքանչիւր մկրտուող մեծահասակից (փոքրի դէպքում՝ կնքահօրից) եւ առաւելապէս՝ մկրտող հոգեւորա-

կանից, որը պէտք է ուսուցանի եւ նախապատրաստի մկրտուողին: «Մաշտոց» ծիսարանում մկրտութիւնից առաջ գետեղուած խրատը քահանայից պահանջում է մինչեւ [չափահասին] մկրտելը նրան ուսուցանել սուրբ Եկեղեցու հաւատքը եւ վարդապետութիւնը՝ Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը, աշխարհի արարչագործութիւնը, Հին ուխտի պատմութիւնը, Քրիստոսի ծնունդը եւ Նրա բոլոր փրկարար տնօրէնութիւնները՝ Սուրբ Ծնունդից մինչեւ Հրաշափառ Յարութիւն եւ Համբարձում, Սուրբ Հոգու տնօրինական գալուստը, Յիսուսի Երկրորդ Գալուստը, համընդհանուր յարութիւնը, գործերի հատուցումը եւ սուրբ Եկեղեցու եօթ խորհուրդները:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ հաւատքի սկիզբը եւ հիմքը ուղղափառ դաւանութիւնն է, որով էլ սկսւում է քրիստոնէական կեանքը՝ ըստ եկեղեցական վարդապետութեան:

Դաւանութեան մասին խօսելիս հարկ է նկատի ունենալ երկու կարեւոր հանգամանք. ա) դաւանական ճշմարտութիւնները յայտնութենական բնոյթ ունեն, այսինքն՝ տրուած են աստուածային յայտնութեամբ, բ) դրանք սահմանուած եւ եզրագծուած են Եկեղեցու կողմից՝ որպէս քրիստոնէական կրօնի էական դրոյթներ, որ անհրաժեշտ են փրկութեան համար: Իսկ դաւանութիւնը կամ դաւանանքը աստուածային յայտնութեամբ տրուած եւ Եկեղեցու կողմից սահմանուած կրօնական ճշմարտութիւնների ամբողջութիւն է: Հայերէնում «դաւանութիւն» եզրը որոշ իմաստով համապատասխանում է յունարէն դոգմա (δόγμα) *բառի յոգնակի ձեւին, որը սկզբնապէս գործածուել է որպէս այն, ինչ ճիշտ (լաւ) է թւում կամ կարծւում, սակայն հետզհետէ եկեղեցական աստուածաբանութեան մէջ բիւրեղացել է որպէս դաւանական դրոյթ կամ հաւատքի ճշմարտութիւն: Հայերէն եզրն, ի տարբերութիւն յունարէնի, գործածւում է միայն հաւաքական իմաստով: Դաւանական խնդիրների հետ առնչուող աստուածաբանական ոլորտը կոչւում է դաւանական աստուածաբանութիւն (Dogmatic Theology):*

Ըստ քրիստոնէական վարդապետութեան՝ դաւանութիւնն այն անսասան վէմն է, որի վրայ կառուցւում է հոգեւոր կեանքի շինութիւնը: Համաձայն Տիրոջ խօսքի՝ ուղղափառ դաւանութիւնն այն վէմն է կամ ամուր հիմքը, որի վրայ կառուցուած է Եկեղեցին (Մատթ. ԺԶ 18): Այդ Վէմը նաեւ Ինքը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսն է, որով մարդկութեանը բացուեց աստուածգիտութեան եւ հաւատքի

ճանապարհը [Ա Պետ. Բ 4–8]: Ուղղափառ դաւանութեանը (տեսական հաւատք) պէտք է անպայմանօրէն զուգակցել ուղղափառ կենցաղավարութիւն եւ աստուածպաշտական ճիգեր (գործնական հաւատք). տեսական եւ գործնական հաւատքի ճիշտ համադրութիւնը, ըստ Եկեղեցու հայրերի, հոգեւոր կեանքի եւ փրկութեան անհրաժեշտ նախապայմանն է:

«Ա՛յս է հաւատքը. որ մարդը հաւատայ ամենակալ Աստծուն, Ով արարեց երկինքն ու երկիրը, ծովը եւ այն ամէնը, ինչ նրանցում կայ: Ով արարեց Ադամին Իր պատկերով ու նմանութեամբ եւ տուեց Մովսէսի Օրէնքը, Իր Հոգուց առաքեց մարգարէների վրայ եւ յետոյ աշխարհ ուղարկեց Քրիստոսին: Որ մարդը հաւատայ մեռելների յարութեանը, հաւատայ Աւազանի մկրտութեան խորհուրդին. ա՛յս է Եկեղեցու հաւատքը: Որ մարդը հեռո՛ւ մնայ ժամանակները քննելուց, շաբաթապահ կրօններից եւ ամսագլուխ ու տարեկան տօներից[15], թովչութիւնից, աստղագուշակութիւնից, հմայութիւնից, կախարդութիւնից, հերձուածողական աղանդներից, չարի մեքենայութիւններից, խաբէական չար խօսքերից, հայհոյութիւնից, վաւաշոտ շնութիւնից, պիղծ երգերից, սուտ վկայութիւն տալուց եւ սուտ խօսելուց: Սրա՛նք են հաւատքի գործերը, որոնք գրուած են Վէմի վրայ, Որն Ինքը Քրիստոսն է, եւ Նրա վրայ են շինւում բոլոր շինուածքները:

Եւ հաւատքի մասին, սիրելի՛, այլ շատ խօսքեր կան Սուրբ Գրքում, որի մասին շատից քիչը գրեցի քո սիրոյ յիշատակի համար, որպէսզի իմանաս եւ սովորեցնես, հաւատաս եւ հաւատացնես: Իսկ երբ կարդաս եւ ուսուցանես, կը նմանուես բարի հողին, որի մէջ բարի սերմեր ընկան, եւ նա պտղաբերեց հարիւրաւոր, վաթսունաւոր եւ երեսնաւոր արդիւնքով: Իսկ երբ գնաս քո Տիրոջ մօտ, Նա

---

15 Նկատի ունի հրէական ոչ աստուածահաճոյ պահքը, ամսական ու տարեկան զոհաբերութիւնները եւ տօնակատարութիւնները, ինչի մասին յաճախ խօսւում է մարգարէութիւնների մէջ [Ես. Ա 14, Եզեկ. ԻԳ 34, Ամովս Ե 21, Ողբք Բ 6]: Այս երեւոյթը որոշակիօրէն բնորոշ է եղել հեթանոսութեանը եւ ամենայն հաւանականութեամբ արմատացել է որոշ գնոստիկական եւ աղանդաւորական շարժումների մէջ, որոնց դէմ սուր պայքար է ծաւալել քրիստոնէութիւնը: Այս մասին է յիշատակում նաեւ սբ Կիւրեղ Երուսաղեմացին («Կոչումն ընծայութեան», Ա եւ ԺԵ ճառեր):

քեզ «լաւ եւ առաքինի ծառայ» կ՚անուանի քո պտղաբերած մեծ հաւատքի պատճառով, եւ կը մտնես քո Տէր Յիսուս Քրիստոսի արքայութեան մէջ»[16]:

Հայ Եկեղեցու դաւանութեան սկզբնաղբիւրները

Դաւանութեան աղբիւրը Եկեղեցու Սրբազան Աւանդութիւնն է, որի հեղինակն Աստուծոյ Սուրբ Հոգին է: Աստուած Ինքն է յայտնել Իրեն Իր Հոգու կենդանի ներգործութեամբ, եւ այդ յայտնութիւնն արտայայտուած է Աստուածաշունչ գրքերով, Առաքելական Աւանդութեամբ, Սրբազան ծէսով, Եկեղեցու հայրերի եւ վարդապետների հոգեշունչ գրուածքներով, Տիեզերական ժողովների սահմանումներով եւն: Այդ յայտնութիւնը շարունակական է եւ ոչ թէ մէկ անգամ կատարուած իրողութիւն, որի մէջ մուտք գործելու (Եկեղեցի մտնելու) համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու հետ կենդանի եւ գոյաբանական հաղորդակցութիւն, որի նախահիմքն ուղղափառ դաւանութիւնն է:

Դաւանաբանութեան մէջ բարձրագոյն հեղինակութիւնը վերապահուած է տիեզերական ժողովներին, որոնք Սուրբ Հոգու բացառիկ ներգործութեամբ սահմանել են Քրիստոսի Եկեղեցու ուղղափառ հաւատքը: Տիեզերական ժողովների կողմից ընդունուել են այսպէս կոչուած հաւատոյ հանգանակներ կամ նշանակներ, որոնք դաւանութեան հակիրճ ձեւակերպումներ են: Հաւատոյ հանգանակը նաեւ կոչւում է «Հաւատամք» կամ «Խոստովանութիւն հաւատոյ» կամ «Դաւանութիւն հաւատոյ»: Այս իմաստով դաւանութիւնը ուղղափառ հաւատքի խոստովանութիւնն է, իսկ «դաւանել» նշանակում է ընդունել, խոստովանել եւ վկայել որպէս ճշմարտութիւն:

Պայքարելով զանազան աղանդաւորական շարժումների դէմ՝ Եկեղեցին մշտապէս կարիք է ունեցել նորոգելու եւ հաստատելու հաւատացեալ գիտակցութիւնը: Եկեղեցու հայրերի եւ վարդապետների կողմից աւանդուել է մեծածածաւալ դաւանական ժառանգութիւն՝ ուղղափառ հաւատքն ուսուցանելու, բացատրելու, լուսաբանելու

---

16 *Գիրք, որ կոչի Զգօն՝ արարեալ սրբոյն Յակոբայ երիցս երանեալ հայրապետին Մծբին քաղաքի՝ ի խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս Սիովնի, Կ. Պոլիս, 1824, էջ 21–22*

եւ մեկնելու համար: Այս ժառանգութիւնը Սուրբ Հոգով տրուած Սրբազան Աւանդութեան անբաժանելի մասն է:

Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին (նաեւ Հին Արեւելեան միւս ուղղափառ եկեղեցիները)[17] որպէս տիեզերական է ճանաչում միայն Նիկիոյ (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) եկեղեցական ժողովները, որոնք կոչւում են տիեզերական ժողովներ կամ տիեզերաժողովներ: Այսինքն՝ ուղղափառ հաւատքի գլխաւոր սահմանումները տրուած են միայն երեք տիեզերաժողովների միջոցով, որոնց դաւանական որոշումների վրայ է կառուցուած Հայ Եկեղեցու դաւանական համակարգը:

Հայ Եկեղեցու դաւանաբանութեան կարեւորագոյն աղբիւրներից են մեծ տիեզերական սուրբերի՝ Դիոնեսիոս Արեոպագացու, Աթանաս Մեծի, Եփրեմ Ասորու, Կիւրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի, Գրիգոր Նիւսացու, Եպիփան Կիպրացու, Յովհան Ոսկեբերանի, Կիւրեղ Ալեքսանդրացու դաւանական երկերը, որոնց աւանդների հիման վրայ զարգացել եւ ձեւաւորուել է հայ դաւանական միտքը: Կարեւոր աղբիւր է նաեւ Տիմոթէոս Կուզի հակաճառութիւնը, որը զգալի ազդեցութիւն է թողել հայ դաւանական մտքի ձեւաւորման վրայ: Նշանաւոր են «Կնիք հաւատոյ» եւ «Գիրք թղթոց» ժողովածուները: Հայ Եկեղեցու դաւանական համակարգը վերջնականապէս բիւրեղացաւ Յովհաննէս Օձնեցու, Խոսրովիկ Թարգմանչի, Գրիգոր Նարեկացու, Անանիա Սանահնեցու, Պօղոս Տարօնացու, Յովհաննէս Սարկաւագի, Ներսէս Շնորհալու, Մխիթար Գոշի, Վարդան Արեւելցու, Մխիթար Սասնեցու, Կիրակոս Երզնկացու, Ստեփանոս Օրբելեանի, Եսայի Նչեցու, Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու աշխատութիւնների շնորհիւ:

Հայ դաւանական մտքի զարգացման պատմութեան մէջ առանձնայատուկ դեր է ունեցել Մանազկերտի ժողովը (726 թ.), որի ընդունած նզովքները ուղղափառ հաւատքի ժխտական սահմանումներ են:

Հայ Եկեղեցում ծիսական կիրառութիւն ունի երեք հանգանակ, որոնք հակիրճ ներկայացնում են հայ հաւատքի կարեւորագոյն

17 Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների (Oriental Orthodox Churches) ընտանիքը ներառում է Հայ, Ղպտի, Ասորական (ներառեալ Հնդիկ Մալանկարա) եւ Եթովպական Եկեղեցիները, որոնք վերը նշուած միասնական անուան տակ հանդէս են գալիս միջազգային ժողովներում:

սկզբունքները: Առաջինը կոչւում է Նիկիական, սակայն իրենից ներկայացնում է Նիկիո-կոստանդնուպոլսեան մի խմբագրութիւն: Երկրորդը Գրիգոր Տաթեւացու խմբագրած հաւատքի խոստովանութիւնն է: Երրորդը Մկրտութեան արարողութեան մէջ գործածուող հակիրճ տարբերակն է: Դաւանական աղերսներով լի են նաեւ Հայ Եկեղեցու ծիսական մատեանները՝ «Շարակնոցը», «Ժամագիրքը», «Մաշտոցը» եւ «Պատարագամատոյցը»:

Հայ Եկեղեցու դաւանութեան կառոյցը

Հայ Եկեղեցու դաւանութիւնն ունի հետեւեալ կառոյցը.

Ա. Աստուած

Բ. Արարչագործութիւն

Գ. Փրկագործութիւն

ա) Քրիստոսաբանութիւն

բ) Սուրբ Հոգու տնօրինութիւն եւ Եկեղեցի

գ) Վախճանաբանութիւն

Դաւանութեան առաջին մասն Աստուծոյ, Նրա գոյութեան, ինքնութեան եւ ստորոգելիների մասին է: Երկրորդ մասն Աստուծոյ կողմից աշխարհի արարչագործութեան մասին է: Երրորդ մասն Աստուծոյ Միածին Որդու մարդեղութեան միջոցով մարդկանց փրկագործելու մասին է: Փրկագործութիւնն իր հերթին եւս բաժանւում է երեք մասի: Փրկագործութեան, ինչպէս նաեւ դաւանութեան գլխաւոր թեման քրիստոսաբանութիւնն է, այսինքն՝ թէ ինչպէս պէտք է խոստովանել մարմնաւորուած Աստուծոյ Որդուն՝ Յիսուս Քրիստոսին: Այս մասին որոշակիօրէն ասում է սբ Աթանասը. «Քրիստոնէութեան անունը Քրիստոսին ճշմարիտ դաւանելն է, եւ քրիստոնեայ է անուանւում նա, ով ունի ճշմարիտ դաւանութիւնը»[18]: Փրկագործութեան երկրորդ մասը, որ կոչւում է Սուրբ Հոգու տնօրինութիւն եւ Եկեղեցի, Յիսուս Քրիստոսի փրկագործութեան շարունակութեան մասին է Հոգեգալուստից մինչեւ շարունակական ներկայ: Իսկ երրորդ մասը՝ վախճանաբանութիւնը, գալիք իրադարձութիւնների մասին է:

18 Սբ Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 240

Դաւանաբանութեան առանձին մասեր են նաեւ Սուրբ Հոգու տնօրինութեան եւ եկեղեցաբանութեան մաս կազմող մի շարք կարեւոր խնդիրներ, ինչպիսիք են շնորհը, Եկեղեցու սրբազան խորհուրդները, ծիսական աստուածպաշտութիւնը, աղօթքը եւն:

Հայ դաւանական գրականութեան անբաժանելի մաս են կազմում այսպէս կոչուած «դաւանութիւն հաւատոյ» կամ «խոստովանութիւն հաւատոյ» ժանրի գործերը: Սրանք ունեն որոշակի ամփոփ խոստովանական ոճ եւ հաւատքի հիմնական դրոյթների դրական, ոչ հակաճառական շարադրանք են: Սակայն գրեթէ իւրաքանչիւր դաւանական երկ, լինի հակաճառութիւն, թուղթ կամ մեկնութիւն, ունի այս բնոյթի ժանրային հատուածներ: Ժամանակ առ ժամանակ հարկ է եղել ամփոփ կերպով ի մի բերել հաւատքի դաւանութեան բոլոր հիմնական սկզբունքները որոշակի անհրաժեշտ ծաւալումներով: Այսպիսի երկերն ի յայտ են եկել ոչ միայն ուղղափառ գիտակցութեան հաստատման համար, այլեւ պատասխանելու մեր դէմ ուղղուած դաւանական ոտնձգութիւններին եւ մեղադրանքներին: Իւրաքանչիւր ժամանակաշրջան ունեցել է իր հարցադրումները, եւ հարկ է եղել պատասխանել այդ հարցերին:

Նկատի ունենալով, որ այսօր նոյնպէս մեծ անհրաժեշտութիւն կայ վերահաստատուելու մեր հայրերի ուղղափառ վարդապետութեան մէջ եւ պաշտպանելու մեր լուսաւոր հաւատքի ճշմարտութիւնը՝ 2000 թ., անսալով Կ. Պոլսոյ Ն.Ա.Տ. Մեսրոպ Բ հայոց պատրիարքի յորդորին, ձեռնամուխ եղանք կազմելու հաւատքի դաւանութեան մի ամփոփ խոստովանութիւն, որը կոչեցինք «Դաւանութիւն հաւատոյ»: Այս խոստովանութիւնը մեր հայրերի դաւանական խօսքերի ուղղակի եւ անուղղակի վերաշարադրանք է՝ անհրաժեշտ նուազագոյն շաղկապումներով: Մեր նպատակն է եղել անաղարտօրէն ներկայացնել Հայ Եկեղեցու ուղղափառ հաւատքի իսկութիւնը՝ ըստ մեր հայրերի լուսաւոր ուսուցումների: Հաւատքի այս խոստովանութիւնը ներկայացուած է սոյն հատորի սկզբում անգլերէն եւ ռուսերէն թարգմանութիւններով հանդերձ:

Աղբիւրներ

The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite. ed. by Robert W. Thomson. Lovanii, 1984

J. P. Migne, PG, t. 7

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք, Սբ Ղազար, 1954

Սբ Աթանաս Աղեքսանդրացի, Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899

Սբ Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Յովհաննու, Կ. Պոլիս, 1717

Սբ Կիւրեղ Աղեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, 1717

Տիմոթէոս Կուզ, Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, Սբ Էջմիածին, 1908

Կնիք հաւատոյ, Սբ Էջմիածին, 1914

Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901

Յովհաննու Իմաստասիրի Աւանդեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833

Խոսրովիկ Թարգմանիչ (աշխատ. Գարեգին վարդապետ Յովսէփեան), Վաղարշապատ, 1899

Սբ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Երեւան, 1985

Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա–Զ

Յովհաննէս Սարկաւագ, Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն, Վենետիկ N 504

Պօղոս Տարօնացի, Ընդդէմ հերձուածողաց, ՄՄ N 6907

Սբ Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, Երուսաղէմ, 1871

Մխիթար Գոշ, Թուղթ առ վրացիսն, «Գանձասար» Զ

Վարդան Արեւելցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 8132

Mxit‘ar Sasnec‘i. *Theological Discourses*. Edited by S. Peter Cowe. Lovanii, 1993

Կիրակոս Երզնկացի, Թուղթ առ կարնեցիս, Գանձասար Զ. Թուղթ առ ուղղափառ հաւատացեալսն, ՄՄ N 2542

Ստեփանոս Օրբելեան, Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756

Եսայի Նչեցի, Դաւանութիւն եւ խոստովանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն՝ ասացեալ Եսայի Վարդապետի ի յեղբ Վիրապին ի հաստատութիւն ուղղափառաց եւ ի յանդիմանութիւն չարափառաց, ՄՄ N 614

Սբ Յովհան Որոտնեցի, Դաւանութիւն հաւատոյ, ՄՄ N 557

Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1729

Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1740

Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր՝ արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն, Կ. Պոլիս, 1741

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աւետարանի սրբազան պատմութեան մէջ կայ մի խորհրդական դրուագ, որն առանձնայատուկ տեղ է գրաւում փրկական իրադարձութիւնների շղթայում: Ըստ Մատթէոս, Մարկոս եւ Ղուկաս աւետարանիչների՝ Քրիստոսը, իր աշակերտներից ընտրելով երեք հոգու՝ Պետրոսին, Յակոբոսին եւ Յովհաննէսին, բարձրանում է մի բարձր լեռան վրայ, որը եկեղեցական աւանդութեան մէջ նոյնացւում է Թաբոր[1] լեռան հետ: Եւ յանկարծ Քրիստոսը պայծառակերպւում է աննկարագրելի աստուածային լոյսով, Նրա երեսը սկսում է փայլել արեգակի պէս, իսկ հանդերձները դառնում են ճերմակ եւ լուսեղէն: Նրա երկու կողմում յայտնւում են Հին Կտակարանի երկու մեծագոյն մարգարէները՝ Մովսէսը եւ Եղիան, որոնց հետ, համաձայն աւետարանական վկայութեան, Փրկիչը զրուցում է Իր երկրաւոր կեանքի վերջին իրադարձութիւնների մասին, որ տեղի էին ունենալու Երուսաղէմում: Առաքեալների վրայ մեծ սարսափ է իջնում, եւ Պետրոսն ասում է. «Ռաբբի՛, բարւոք է մեզ աստ լինել, արասցուք զերիս տաղաւարս. մի՝ Քեզ, մի՝ Մովսիսի եւ մի՝ Եղիայի» (Մարկ. Թ 4): Իսկ վերեւից մի ամպ հովանի է լի-

---

1 *Իրականում աւետարանիչներից ոչ մէկը չի յիշատակում Թաբոր լեռը Փրկչի պայծառակերպութեան հետ կապուած պատմութեան մէջ: Թաբոր լեռը յաճախ յիշատակւում է Հին Կտակարանում որպէս սրբազան լեռ: Յատկանշական են Դաւիթ մարգարէի յաւիտենական խօսքերը. «Թաբոր եւ Հերմոն յանուն Քո ցնծասցեն» (Սաղմ. ՁԸ 13): Սկսած առաքելական շրջանից՝ եկեղեցական աւանդութեան մէջ ընդունուած է այն կարծիքը, որ Տիրոջ պայծառակերպութիւնը տեղի է ունեցել հէնց Թաբոր լեռան վրայ: Սակայն կան կարծիքներ, թէ այդ իրադարձութիւնը կարող է պատահած լինել Հերմոնի, Քորէբի կամ նոյնիսկ Զիթենեաց լեռան վրայ: Տես The Westminster Dictionary of Christian Theology, Transfiguration, Philadelphia 1983, էջ 578–579. The Oxford Dictionary of the Christian Church, Transfiguration, Oxford, 1993, էջ 1390. Библейская энциклопедия, Фавор гора, Москва, 1990, էջ 819–821:*

նում, որի միջից լսւում է Հայր Աստուծոյ ձայնը. «Դա է Որդի Իմ սիրելի, ընդ Որ հաճեցայ, Դմա՛ լուարուք» (Մատթ. ԺԷ 5): Եւ երբ այս ամէնից յետոյ նրանք իջնում են ներքեւ, Յիսուսը երեք առաքեալներին պատուիրում է ոչ մէկի չյայտնել տեղի ունեցածի մասին մինչեւ Իր յարութիւնը մեռելներից:

Առաջին հայեացքից այս իրադարձութիւնը կարծես դուրս է աւետարանական պատմութեան ենթատեքստից, կարծես չի բխում Աւետարանի դէպքերի ընդհանուր յաջորդականութեան տրամաբանութիւնից: Այն կարծես ներդրուած է Աւետարանի մէջ, ինչպէս յայտնութիւնը՝ յայտնութեան մէջ, լոյսը՝ լոյսի մէջ, խորհուրդը՝ խորհուրդի մէջ: Աշակերտներից միայն երեքին ընտրելը, լեռան վրայ բարձրանալը, Հին Կտակարանի երկու մեծագոյն մարգարէների ներկայութիւնը արդէն իսկ ակնարկում են այն բացառիկ յայտնութեան մասին, որ տեղի պիտի ունենար Թաբոր լեռան վրայ: Ըստ Եկեղեցու հայրերի՝ Տիրոջ պայծառակերպութիւնը բարձրագոյն յայտնութիւնն է մինչեւ Քրիստոսի յարութիւն եւ իր մէջ խտացնում է մարդկութեան փրկաբանական անցեալը (Հին Կտակարան), ներկան (Նոր Կտակարան) եւ ապագան (Երկրորդ գալուստ): Ահա թէ ինչու այն մշտապէս եղել է Եկեղեցու աստուածաբանական մտքի ուշադրութեան կենտրոնում:

Եթէ Պայծառակերպութիւնը արեւմտեան աստուածաբանութեան մէջ (հիմնականում Օգոստինոս, Լեւոն պապ) դիտուել է որպէս Սուրբ Երրորդութեան յայտնութեան մի իրադարձութիւն, ապա արեւելեան աստուածաբանութեան մէջ այն աւելի մեծ եւ համակողմանի ուշադրութեան է արժանացել:

Վաղ շրջանի Եկեղեցում առաջին անգամ այն մեկնաբանուել է Իրենէոսի կողմից՝ որպէս փրկաբանական եւ վախճանաբանական ուղղորդուածութիւն ունեցող իրադարձութիւն: Կղեմէս Ալեքսանդրացին Պայծառակերպութեան լոյսը մեկնաբանում է որպէս հոգեւոր լոյս, որը յայտնուեց առաքեալներին ըստ նրանց ընդունելու կարողութեան: Որոգինէսը Մատթէոսի իր մեկնութեան մէջ այդ լոյսը դիտում է վախճանաբանական ենթատեքստում: Ըստ նրա՝ պայծառակերպուած Քրիստոսի լոյսին հաղորդակից են նրանք, ովքեր վեր են այս աշխարհի «վեց օրերից» եւ գտնւում են նոր «շաբաթի» մէջ:

Ընդհանուր առմամբ բիւզանդական հայրերի կողմից Այլակերպութիւնը դիտուել է որպէս Քրիստոսի աստուածային բնութեան յայտնութիւն, Նրա Երկրորդ գալստեան աւետիս եւ արքայութեան լրում: «Բայց

մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝ ի նոյն պատկեր նորոգիմք...» [Բ Կոր. Գ 18] պօղոսեան բնորոշումը դառնում է մեկնաբանական օրինակ աւելի ուշ շրջանի յոյն հայրերի համար (Պրոկղ, Աթանաս Սինայեցի, Մաքսիմոս Խոստովանող, Անդրէաս Կրետացի եւ յատկապէս՝ Գրիգոր Պալամաս): Այս աստուածաբաններին համար Թաբոր լեռան վրայ յայտնուած լոյսն իրականում Աստուած ինքն է իր աստուածային զօրութիւններով, որոնք առաքեալների կողմից որպէս ֆիզիկական լոյս են ընկալուել ըստ նրանց հաւատքի եւ լուսաւորուածութեան աստիճանի[2]:

Այլակերպութեան լոյսի բնոյթի շուրջ ԺԴ դ.-ում աստուածաբանական վէճեր բռնկուեցին յունական աստուածաբանական դպրոցի եւ Թովմա Աքուինացու հետեւորդների միջեւ: Այս վէճերը ծնունդ էին այն հակասութեան, որ ընդհանրապէս առկայ է խորհրդական աստուածաբանութեան եւ կրօնական փիլիսոփայութեան միջեւ, յայտնութեան Աստուծոյ եւ փիլիսոփայութեան կողմից ներկայացուող Աստուծոյ գաղափարի միջեւ: Այս հակաճառութեան մէջ առաջ քաշուեցին այնպիսի կարեւոր աստուածաբանական խնդիրներ, ինչպիսիք են խորհրդական-ներանձնական փորձառութեան եւ Աստուծոյ հետ հաղորդակցութեան հնարաւորութեան իրականութիւնը, շնորհի եղական կամ անեղ լինելու, մարդու վերջնական կոչման եւ արարածի աստուածացման հիմնահարցերը[3]:

Յատկապէս Գրիգոր Պալամասի աշխատանքների շնորհիւ յունական աստուածաբանութեան մէջ վերջապէս բիւրեղանում է այն գաղափարը, որ Պայծառակերպութեան լոյսն անեղ եւ աստուածային բնոյթ ունի, որը յայտնւում եւ հաղորդւում է նրանց, ովքեր ձգտում են միաւորուել նրա հետ: Սակայն այդ նախայաւիտեան, անժամանակ եւ անբովանդակելի լոյսը Հին Կտակարանում յայտնւում է որպէս Աստուծոյ փառք, քանի որ մինչեւ Բան Աստուծոյ մարմնաւորումը արարածը չէր կարող կրել այդ լոյսը: Ահա թէ ինչու Պօղոսը կուրացաւ այդ

2 *Peter A. Chamberas, "The Transfiguration of Christ: Study in the Patristic Exegesis of Scripture", St. Vladimir's Theological Quarterly, v. 14, 1970, էջ 48–65. The Westminster Dictionary of Christian Theology, Transfiguration, Philadelphia 1983, էջ 579*

3 *Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви, Москва, 1991, էջ 165–167*

լոյսի յայտնութիւնից Դամասկոսի ճանապարհին, որովհետեւ դեռ չունէր հաւատք ի Քրիստոս[4]: Ընդհակառակը՝ Մարիամ Մագդաղենացին կարող էր տեսնել յարութեան լոյսը, որը լցնում էր Տիրոջ գերեզմանը եւ տեսանելի դարձնում ամէն ինչ[5]:

Բան Աստուծոյ մարմնաւորումով աստուածային լոյսը թանձրանում է, անբովանդակելին բովանդակւում է... Կատարեալ Լոյսը յայտնւում է ծառայի կերպարանքով՝ անտեսանելի մնալով շատերի համար: Քրիստոսի աստուածմարդկային միութեան մէջ ամէն ինչ պայծառակերպուած է աստուածային լոյսով: Եւ Պայծառակերպութիւնն այս առումով անժամանակ իրադարձութիւն է. Քրիստոսի համար այդ պահին ոչինչ չի փոխւում, փոփոխութիւնը տեղի է ունենում առաքեալների մօտ, ովքեր միառժամանակ կարողութիւն ստացան տեսնելու իրենց Վարդապետին այնպէս, ինչպիսին էր Նա միշտ՝ Իր նախայաւիտեան Լոյսի մէջ: Առաքեալների համար սա յաւիտենականութիւնից եկող, ժամանակից եւ պատմութիւնից դուրս ընկալում էր[6]: Գրիգոր Պալամասը Պայծառակերպութեան մասին իր ճառում գրում է. «Տիրոջ պայծառակերպութեան լոյսը չի սկսուել եւ չի վերջացել. այն դուրս է ժամանակից ու տարածութիւնից եւ անզննելի է արտաքին զգայարանների համար, թէպէտեւ տեսանելի է դարձել մարմնաւոր աչքերի համար...»[7]:

Պայծառակերպութեանն առանձնայատուկ կարեւորութիւն է ընծայուած Հայ Եկեղեցու ծիսական եւ աստուածաբանական աւանդութեան մէջ: Պայծառակերպութիւնը Հայ Եկեղեցու հինգ գլխաւոր տաղաւար տօներից[8] մէկն է: Այս տօնին նախորդում է մէկշաբաթեայ պահք, ինչպէս Սբ Ծննդեան[9], Վերափոխման եւ Խաչվերացի տօներին: Վար-

---

4 Գրիգոր Պալամաս, PG, t. 150, 1169 A

5 նոյն, PG, t. 151, 268 AB

6 Вл. Лосский, Очерк мистического богословия Восточной Церкви, Москва, 1991, էջ 168:

7 PG, t. 150, 1232C

8 Հայ Եկեղեցու տօնակարգում հինգ գլխաւոր տաղաւար տօներ կան. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն, Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն սբ Աստուածածնի, Խաչվերաց:

9 Նախկինում Հայ Եկեղեցու աւանդութեան մէջ Սբ Ծննդեան տօնից առաջ նոյնպէս եղել է յիսնօրեայ պահեցողութեան շրջան (ինչպէս Զատիկից առաջ), որը կոչուել է Յիսնակաց պահք:

դավառի տօնակատարութիւնը տեւում է երեք օր, որոնցից իւրաքանչիւրն ունի իր յատուկ շարականի կանոնը[10]: Ըստ Շարակնոցի ներածական ծանուցման՝ Վարդավառի կանոնը յօրինուել է մասամբ Մովսէս Քերթողի եւ մասամբ սբ Ներսէս Շնորհալու կողմից[11]: Բացի կիրակի երեկոյեան ժամերգութեան ժամանակ ընթերցուող սբ Եղիշէ վարդապետի աղօթքից[12], Վարդավառի տօնակարգը չունի որեւէ առանձնայատկութիւն. միւս տաղաւար տօների պէս ունի գիշերային հսկում, անդաստան եւ երկրորդ օրը՝ մեռելոցի պատարագ:

Հայ Եկեղեցու աստուածաբանական աւանդութեան մէջ Պայծառակերպութիւնը դիտուել է որպէս մեր փրկական տնտեսութեան եւ աստուածային յայտնութեան կարեւորագոյն իրադարձութիւններից մէկը: Սկսած Ե դարից՝ հայ հայրերի եւ նշանաւոր վարդապետների կողմից գրուել են Պայծառակերպութեանը նուիրուած բազմաթիւ մեկնաբանական եւ տօնախօսական երկեր, որոնք որոշակիօրէն ազդուած լինելով Տիեզերական Եկեղեցու հայրերի գրուածքներից[13]՝ սոսկաբար չեն կրկնել իրենց նախորդներին, այլ յաւելել եւ էապէս հարստացրել են իրենց ժառանգութիւնը բազմաթիւ նոր եւ խոր մեկնաբանական[14] մտքերով: Փորձենք համառօտ ներկայացնել Տիրոջ պայծառակերպութեան մեկնաբանական պատկերը՝ ըստ Հայ Եկեղեցու աւանդութեան:

---

10 *Կանոն Վարդավառի, Շարական, Վաղարշապատ, 1888, էջ 336–347 (= Կանոն Վարդավառի)*

11 *նոյն, էջ 3*

12 *Աղօթք սրբոյն Եղիշէի վարդապետի արարեալ վասն այլակերպութեանն Քրիստոսի, Ճաշոց, Վաղարշապատ, 1872, էջ 549–556 (= Եղիշէ (Ճաշոց))*

13 *Հայ մեկնաբանական միտքը ձեւաւորուել է ալեքսանդրեան եւ անտիոքեան դպրոցների ազդեցութեան ներքոյ: Վարդավառի հետ առնչուած կարելի է առանձնացնել Յովհան Ոսկեբերանի եւ Կիւրեղ Ալեքսանդրացու մեկնութիւնները: Տես St. John Chrysostom, Homilies on Matthew, Nicean and Post-Nicean Fathers, First Series, Vol. 10 (= Ոսկեբերան). Cyril of Alexandria, Commentary on the Gospel of St. Luke, trans. R. Payne Smith (Long Island, N.Y.: Studion, 1983):*

14 *Առհասարակ պէտք է նկատել, որ հայ մեկնաբանական միտքն ունեցել է ինքնուրոյն զարգացում եւ հասել է իւրայատուկ խորութիւնների: Մեզ հասել են Ս. Գրքի, Եկեղեցու հայրերի առանձին գրքերի, արտաքին իմաստասիրական գրուածքների՝ հայ հեղինակների կողմից գրուած բազմաթիւ մեկնողական երկեր, որոնք համաշխարհային մեկնաբանական ժառանգութեան մէկ կարեւոր մասն են կազմում:*

Նախեւառաջ՝ վեց եւ ութ օրերի մասին. Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչները յիշատակում են «յետ վեց աւուր», իսկ Ղուկասը՝ «իբրեւ աւուրք ութ»: Այստեղ հաշուարկը սկսւում է Պետրոսի դաւանութեան օրուանից, աւելի ստոյգ՝ այն պահից, երբ Քրիստոսն ասում է հետեւեալ խօսքը. «Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ մինչեւ տեսանիցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ Իւրով» (Մատթ. ԺԶ 28): Եւ հէնց այս խօսքն է, որ հայրաբանական գրականութեան մէջ յաճախ գործածուել է որպէս բնաբան՝ Այլակերպութեանը նուիրուած ճառերի եւ քարոզների համար: Հայրերն այս խօսքը դիտել են որպէս բանալի-մուտք դէպի Պայծառակերպութեան խորհուրդ: Իսկ Պայծառակերպութիւնն այս խօսքերի կատարումն է, որին անհրաժեշտաբար պէտք է նախորդէր ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը: Վեց եւ ութ օրերի միջեւ իրականում չկայ ոչ մի հակասութիւն: Սա արդէն նկատուել էր Յերոնիմոսի[15] եւ Յովհան Ոսկեբերանի[16] կողմից եւ ընդհանրացել մեկնաբանական գրականութեան մէջ. վեցը միջանկեալ օրերն են, իսկ ութը՝ Պետրոսի դաւանութեան եւ Պայծառակերպութեան օրերը՝ միասին հաշուած[17]: Այս միտքը երկրորդում է սբ Եղիշէ վարդապետը. «Մատթէոս, ասեն, զաստի անտիսն եթող եւ միայն զմիջոցն առ ի համար, իսկ երկուքն եւ զխոստանալն եւ զերեւելն հանդերձ միջաւն. եւ հաճոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս...»[18]: Որոշ մեկնիչներ վեց եւ ութ թուերի այս զուգակցման (լծակցման) մէջ տեսնում են խորհրդական առնչութիւն եւ իմաստ: Ըստ սբ Գրիգոր Տաթեւացու՝ վեցը խորհրդանշում է Առաջին գալուստը (առաջին արարչութիւն), իսկ ութը՝ Երկրորդ գալուստը (երկրորդ արարչութիւն)[19]:

Ութը, ըստ Եկեղեցու հայրերի, Քրիստոսի կամ Յարութեան թիւն է: Եօթը խորհրդանշում է հինկտակարանեան եւ առհասարակ երկ-

---

15 Евангеліе отъ Матѳея, Толковая Біблія, т. 3, Петербургъ, 1911, էջ 283

16 Ոսկեբերան, էջ 345

17 Պէտք է նկատել, որ Ղուկաս աւետարանիչը ստոյգ ութ օր չի ասում, այլ գործածում է «իբրեւ» (ὡσεί) բառը, այսինքն՝ շուրջ ութ օր:

18 Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի մատենագրութիւնք (= Եղիշէ), էջ 214

19 Սբ Գրիգոր Տաթեւացի, «Քարոզ Վարդավառի տօնին», Ամառան հտ., Կ. Պոլիս, 1741 թ. (= Տաթեւացի), էջ 481–482

բաւոր կամ արարչական կատարելութիւնները, որոնք մաթեմատիկական օբիեկտներ են, այսինքն՝ հասանելի են յաջորդականութիւնների շնորհիւ: Քրիստոսի բերած փրկութիւնը դուրս է այս աշխարհի կատարելութիւններից, ուստի այն դուրս է եօթնեակների փակ պարբերութիւններից: Քրիստոսը բերեց նոր կեանք, նոր օրինաչափութիւն, նոր ժամանակ, որն անուանւում է Առաջին Օր կամ Ութերորդ Օր: Սակայն այստեղ մէկը եւ ութը ոչ թէ թուային, այլ խորհրդական եւ անդրանցական օրինաչափութիւններ են. նրանք դուրս են յաջորդականութիւնների իշխանութիւնից եւ միաժամանակ նոր կեանք են հաղորդում եօթնեակներին: Ութը յարութիւն առած եօթն է, ութեակը՝ կատարեալ հոգեւոր պարբերութիւնը կամ յաւիտեանը (էոն): Նաեւ՝ Ութերորդ Օրը պիտի գայ Տէրը՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին. այդ օրն անուանւում է Վերջին Օր կամ Տիրոջ Օր կամ Դատաստանի Օր: Այսպիսով՝ ութը միաժամանակ խորհրդանշում է ե՛ւ հոգեւոր յարութիւնը (Քրիստոսի Առաջին գալուստը)՝ անուանուելով առաջին, ե՛ւ մարմինների յարութիւնը (Երկրորդ գալուստ)՝ անուանուելով վերջին: Քրիստոնեաները գտնւում են Ութերորդ Օրուայ խորհուրդի մէջ. նրանք, արժանացած լինելով Քրիստոսի բերած հոգեւոր յարութեանը, նաեւ մուտք են գործել Երկրորդ գալստեան մէջ (վախճանաբանական սպասում)[20]:

Այսպիսով՝ Պայծառակերպութիւնն անցում է վեցից դէպի ութ, հին արարչութիւնից՝ դէպի նոր արարչութիւն, դէպի աստուածացում եւ Երկրորդ գալուստ: Այս մասին է գրում Մովսէս Խորենացին. «Սա է, արդարեւ, ցնծութեան եւ ուրախութեան օրը, որ Տէրն արարեց, սա է Աստուծոյ մեծ փառքի ծագման օրը, որը նոր արքայութեան սկիզբն է եւ էական լոյսի յայտնութիւնը եւ յաւիտենական լոյսի նկարագիրը»[21]: Խորենացին այս օրն անուանում է միաժամանակ Առաջին Օր եւ Ութերորդ Օր[22]:

Մեկնիչներն առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել այն հանգամանքին, որ Քրիստոսը մինչեւ Թաբոր լեռան վրայ բարձրանալն

---

20 Մեսրոպ քահանայ Արամեան, Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը, տես այս հատորում՝ էջ 114–115

21 Սբ Մովսէս Խորենացի, Վարդավառի խորհրդի մասին, «Գանձասար» Բ (= Խորենացի), էջ 21

22 նոյն

ընտրութիւն է կատարում Իր աշակերտների միջեւ: Առհասարակ մեծ եւ աստուածային յայտնութիւնները տրուել են սակաւաթիւ մարդկանց կամ այսպէս կոչուած ընտրեալ անօթների, որոնք այնուհետեւ եղել են այդ յայտնութեան փոխանցողները մնացած ժողովրդին: Հին Կտակարանում դրանք հիմնականում եղել են մարգարէները, որոնք փոխանցել են Աստուծոյ պատգամները ժողովրդին: Սակայն որքան էլ մարգարէներին տրւում էր այդ աստուածային յայտնութիւնը, այսուհանդերձ նրանց համար աստուածային իրականութիւնը մնում էր անբացայայտ եւ ժամանակ առ ժամանակ այցելող: Բան Աստուծոյ մարմնաւորումով աստուածայինը թանձրանում է եւ դառնում շօշափելի իրականութիւն, որը սկսում է գործել ոչ թէ դրսից, այլ ներսից: Այդ պատճառով Հին Կտակարանն անուանւում է ստուերակերպ պատմութիւն, որովհետեւ դեռ ճշմարիտ Լոյսը չէր յայտնուել: Քրիստոսով սկսւում է մարդկային փրկագործութեան նոր պատմութիւնը, սակայն Քրիստոսը նոյնպէս Իր փրկութեան խորհուրդները մարդկանց փոխանցելու համար ընտրեց յատուկ մարդկանց, որոնք կոչւում են առաքեալներ: Առաքեալներին Նա յայտնում էր ամենածածուկ խորհուրդները եւ առաքեալներով պիտի հաստատէր Իր փրկութեան Եկեղեցին այս աշխարհում՝ առաջնորդելու մարդկանց դէպի յաւիտենական կեանք եւ կատարեալ, անստուեր լոյս:

Եւ ահա Քրիստոսը մինչեւ լեռը բարձրանալը ընտրութիւն է կատարում Իր արդէն իսկ ընտրեալ աշակերտների մէջ՝ ցոյց տալով, որ այն, ինչ պիտի յայտնի, բացառիկ յայտնութիւն է լինելու ոչ միայն մարդկային բնութեան համար, այլեւ իմանալի աշխարհների համար: Երեք առաքեալները, ըստ Եկեղեցու հայրերի, խորհրդանշում են Երրորդութեան արտապատկերը արարչութեան մէջ, միաժամանակ վախճանաբանական հունձքի հարիւրաւորները, վաթսունաւորները եւ երեսնաւորները: Երեք առաքեալներն իրենց հոգեւոր տեսողութեամբ առաւել էին միւսներից[23]*: Եւ այսպէս՝ ընտրելով երեք աշակերտների՝ Քրիստոսը բարձրանում է Թաբոր լեռ:*

Մարդկութեան բոլոր կարեւորագոյն յայտնութիւնները տրուել են լեռների վրայ, եւ որոշ լեռներ ուղղակի եղել են Աստուծոյ առանձնա-

23 *Ոսկեբերան, էջ 345, Յովհաննէս Երզնկացի, «Յաղագս Վարդավառի տօնին», ՄՄ N 2173 (= Երզնկացի), 17ա–31բ, Տաթեւացի, էջ 482*

յատուկ այցելութիւնների եւ աստուածային պատգամների յայտնութեան վայրեր, ինչպէս օրինակ՝ Սինա եւ Քորէբ լեռները:

Ըստ Յովհաննէս Երզնկացու՝ Թաբորը խորհրդանշում է անցումը հինկտակարանեան յայտնութիւնից դէպի նորկտակարանեան յայտնութիւն. Աստուած Սինայի վրայ Մովսէսին յայտնեց հին օրէնքը՝ քարէ տախտակների վրայ գրելով, իսկ այստեղ յայտնեց նոր օրէնքը՝ Սուրբ Հոգով գրելով սրտի մարմնեղէն տախտակների վրայ[24]: Հետեւաբար Թաբորը ոչ միայն աստուածգիտութեան վայր[25] է, այլեւ երկնքի արքայութեան, նոր երկնքի[26] խորհրդանիշ, որովհետեւ Քրիստոսն Իր աստուածային լոյսով այլակերպել էր նիւթական լեռը եւ դարձրել երկինք[27]: Ահա թէ ինչու որոշ մեկնիչներ Թաբորի խորհուրդի մէջ տեսնում են նաեւ եկեղեցաբանական երանգ: Թաբորը հաւատքի բարձրացրած խորանն է[28], ուր կարող են բարձրանալ միայն արժանաւորները[29]:

Թաբոր լեռան վրայ Եղիային եւ Մովսէսին կանչելը, ըստ Յովհան Ոսկեբերանի, ցոյց է տալիս, որ Քրիստոսը կենաց եւ մահուան զօրութիւն ունի: Հնարաւոր է դառնում այն, ինչ հնարաւոր չեղաւ Սինայի եւ Քորէբի վրայ: Ըստ Մովսէս Խորենացու՝ Մովսէսը խորհրդանշում է մեռելների յարութիւնը, իսկ Եղիան՝ յարութեան ժամանակ առանց մահուան երկինք յափշտակուելը: Եղիան երկնքից է, իսկ Մովսէսը՝ երկրից, որովհետեւ Քրիստոսը տէր է երկնքի (իմանալի աշխարհ) եւ երկրի (զգալի աշխարհ), եւ նրանք յարութեան աւետիսը պէտք է փոխանցէին իմանալի եւ զգալի աշխարհներին (հոգիներին), որոնց այն դեռեւս յայտնի չէր[30]:

Պայծառակերպութիւնը, ըստ մեկնիչների, Ամենասուրբ Երրորդութեան կարեւորագոյն յայտնութիւններից մէկն է[31], որը հնարաւոր է դարձել Աստուծոյ Որդու փրկագործ մարդեղութեամբ: Քրիստոսի մարդեղութեամբ Աստուածութեան անպարագրելի եւ անտեսանելի լոյսը

---

24 Երզնկացի, 29բ
25 Խորենացի, էջ 21
26 Խորենացի, էջ 19–22
27 Եղիշէ, էջ 227–228
28 Խորենացի, էջ 19
29 Երզնկացի, 30ա
30 Տաթեւացի, էջ 489
31 Եղիշէ (ձաշոց). Կանոն Վարդավառի, էջ 339, 346

բովանդակուել է ծառայի կերպի մէջ. «Ճառագայթ փառաց Հօր՝ Որդիդ Միածին, որ զլոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ այսօր ի Թաբոր փառօք փայլեցեր»[32]: «...Ծառայի կերպիւ պարածածկեալ զլոյսդ անստուեր, այսօր ի Թաբոր փառօք փայլեցեր»[33]:

Աստուած անմատոյց լոյս է, որը հնարաւոր չէ տեսնել մարմնաւոր աչքերով, եւ առաքեալները հաղորդակցուեցին աստուածային լոյսին ըստ իրենց ընդունելու կարողութեան[34]: Աշակերտների տեսողութիւնը պայծառանում է, եւ նրանք սկսում են տեսնել «զանապական Լուսոյն ծաւալումն»[35]: Առաքեալներին նախապէս յայտնի է դառնում այն իրականութիւնը, որը հնարաւոր է լինելու միայն յարութիւնից յետոյ. Պայծառակերպութեամբ նրանց բացայայտւում է մարդկութեան փրկաբանական ապագան՝ մարդկային բնութեան աստուածացման խորհուրդը[36]: Ըստ շարականագրի՝ առաքեալները նախաճաշակում են անմահութեան եւ փրկութեան պտուղը. «Եւ զԵրրեակ միութեան զանտանելի զլոյսն տեսանելով՝ կենդանւոյն անմահացան»[37]: Եւ երեք տաղաւարների յօրինման միտքը եւ լեռան վրայ մնալու ցանկութիւնը պայմանաւորուած էին յարութեան յայտնութեամբ: Պետրոսը ցանկանում է տաղաւարել յարութիւնը եւ մնալ յարութեան վայրում[38]:

Պայծառակերպութեան իրադարձութիւնը մեկնիչների համար ունի վախճանաբանական ուղղորդուածութիւն: Պայծառակերպութեամբ յայտնւում է այն, ինչ լինելու է գալիքում՝ վախճանաբանական ապագայում: Սակայն դա ոչ թէ լինելու է անվերջ եւ անորոշ մի սպասում, այլ հաստատուելու է Քրիստոսի յարութեամբ[39]: Մահուան իշխանութեամբ արարածը հագել էր սգոյ խաւարային զգեստ: Քրիստոսի մահուամբ արարածը վերազգեստաւորւում է յարութեան եւ յաւիտենական կեանքի զգեստներով[40]: Համընդհանուր յարութիւնը եւ արարա-

32 Կանոն Վարդավառի, էջ 340

33 Նոյն

34 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վենետիկ, 1832 թ., Ճառ տասներորդ, էջ 165

35 Կանոն Վարդավառի, էջ 339

36 Երզնկացի, 31ա

37 Կանոն Վարդավառի, էջ 336

38 Եղիշէ, էջ 223

39 Երզնկացի, 31ա

40 Եղիշէ, էջ 221–222

ծի նորոգումը քրիստոնէական աստուածաբանութեան հիմնական թեմաներից մէկն է, որովհետեւ այն մեր փրկութեան վերջնական նպատակն է: Պայծառակերպութեամբ յայտնուեց այն, ինչ լինելու է մարդկային բնութեան հետ, ինչպիսին լինելու է պայծառակերպուած, այլակերպուած, յարութիւն առած նոր արարչութիւնը[41]*. «Այսօր զծագումն արդարոցն արեգակնակերպ փայլմամբ ծանուցեր ծագմամբ փառաց Քոց, Տէ՛ր, յարքայութեանն...»*[42]*:*

41 Տաթեւացի, էջ 482

42 Կանոն Վարդավառի, էջ 347

ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ

Սբ Աթանաս Ալեքսանդրացին Քրիստոսի Եկեղեցու մեծագոյն հայրերից մէկն է: Նա ոչ միայն եղել է այն սրբազան անօթը, որով մեզ տրուեցին Նիկիոյ սուրբ հաւատքի դաւանական սահմանումները, այլեւ եղել է այդ դաւանութիւնն իր ողջ խորութեամբ բացայայտողը: Նա օժտուած է եղել Սուրբ Գրքի դաւանաբանական իմաստները տեսնելու հանճարեղ կարողութեամբ: Նրա գրուածքներում աստուածաբանական ճշմարտութիւններն ի յայտ են գալիս զարմանալի կենդանի զօրութեամբ. դրանք ոչ միայն հաստատում են քրիստոնէական դաւանութեան տեսական դրոյթները, այլեւ քրիստոնէական հաւատքի ողջ իսկութիւնը: Ինչ որ իմաստով սբ Աթանասն ուղղափառ դաւանութեան կամ ուղղափառութեան հիմնադիրն է. եւ պատահական չէ, որ եկեղեցական աւանդութեան մէջ սբ Աթանասն անուանուել է «Ուղղափառութեան հայր», «Ուղղափառ հաւատքի սիւն», «Եկեղեցու սիւն» եւն: Նրա ամբողջ կեանքը եղել է նաեւ ուղղափառ հաւատքի պաշտպանութեան իւրօրինակ վկայութիւն, եւ յանուն սուրբ հաւատքի՝ նա արիաբար կրել է բազմաթիւ հալածանքներ: Արիոսականները նրան համարում էին իրենց գլխաւոր թշնամին եւ դիմում էին ամէն տեսակ խարդաւանքների՝ նրանից ձերբազատուելու համար: Նրանք աշխարհիկ իշխանութիւնների աջակցութեամբ Աթանասին հինգ անգամ վտարել են Ալեքսանդրիայի աթոռից, եւ նա աւելի քան տասնեօթ տարի անցկացրել է աքսորում՝ երբեմն նոյնիսկ լքուած մնալով իր իսկ հաւատակից եղբայրների կողմից: Այս բոլոր տառապանքների եւ վշտերի մէջ նա շարունակել է անդիջում պայքարը ճշմարիտ հաւատքի համար եւ ամէն գնով բացայայտել ճշմարտութեան հակառակորդների վտանգաւոր մոլորութիւնները: Սակայն նոյնիսկ պայքարի ամենաթեժ պահերին սբ Աթանասը լի է եղել մոլորեալների նկատմամբ իւրօրինակ համբերութեամբ եւ ներողամտութեամբ եւ ջանացել ամէն կերպ նրանց վերադարձնել դէպի ուղղափառ հաւատք: Նրան շատ բարձր է գնահատել անապատականների նախահայր սբ Անտոնիոսը: Եգիպտական ճգնաւորութեան

մեծագոյն հեղինակութիւններից մէկը՝ սբ Պափնոտիոսը, գրում է. «Երբ սբ Աթանասը եպիսկոպոս ձեռնադրուեց, այնժամ չար մարդիկ... փորձեցին պառակտել Աստուծոյ Եկեղեցին: Սակայն ինձ Սուրբ Հոգին ասաց. «Ես նրան կանգնեցրի որպէս Եկեղեցու սիւն եւ լուսատու: Բազում վշտեր եւ մարդկային չարախօսութիւններ են սպասում նրան՝ Քրիստոսի նկատմամբ բարեպաշտ հաւատք ունենալու պատճառով: Բայց նա յաղթահարելով բոլոր փորձութիւնները... կ՚ազդարարի Եկեղեցիներին աւետարանական ճշմարտութիւնը»[1]: Իսկ սբ Գրիգոր Աստուածաբանը նրա մասին գրում է. «Մեզ՝ դեռնին նեռուածներիս համար, փրկութեան եղջիւր բարձրացուեց, ճիշտ ժամանակին շնորհուեց անկիւնաքար, որ մեզ շաղկապում է ինքներս մեզ եւ միմեանց հետ, կամ՝ հուր, որ մաքրագործում է փտած եւ վնասակար զանգուածը... կամ՝ սուր, որ հատում է չարութեան արմատները: Եւ Բանը գտաւ Իր առաջամարտիկին, եւ Հոգին ստացաւ մէկին, ով յանուն Նրա պիտի ունենար նախանձախնդրութեան շունչը»[2]:

Սբ Աթանաս Ալեքսանդրացին թէպէտ մշտապէս հալածանքների մէջ է եղել, սակայն թողել է զարմանալի մեծ գրական ժառանգութիւն: Նրա գործերի մեծ մասն ունի դաւանաբանական եւ ջատագովական բնոյթ եւ նուիրուած է Նիկիական հաւատքի պաշտպանութեանը: Սբ Աթանասը յստակօրէն տեսնում էր Նիկիոյ ձեւակերպմանը հակառակուելու վտանգը: Հին եւ հնանման աստուածաբանական համակարգերը երկիմաստ էին: Նոր եւ ամուր համակարգը կարելի էր կառուցել Նիկիոյ հիմքի վրայ, այսինքն՝ ելնելով «համագոյութիւն» (ὁμοούσια) հասկացողութիւնից, ըստ որի պէտք էր կառուցել եւ յղկել ուղղափառ հաւատքի ողջ աստուածաբանական կառոյցը: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին համագոյակից (էակից) են, այսինքն՝ ունեն նոյն աստուածային բնութիւնը եւ էութիւնը: Համագոյութիւնը նշանաւորեց քրիստոնէութեան յաղթանակը հրէական եւ միջին-պլատոնական մտքի վրայ՝ ցոյց տալով, որ հին կրօնախմաստասիրական համակարգերն ի վիճակի չէին ընկալելու եւ եզրակերպելու Բանի ներմարդութեան (մարդեղութեան) խորհուրդը: Քրիստոնէութիւնը պահանջում էր հաւատքի սահմանման նոր եւ ստոյգ եզրաբանական

1 Святитель Афанасий Великий, Творения, т. 1, с. 49

2 Святитель Григорий Богослов, Собрание творений, том 1, Слово 21, Похвальное Афанасию Великому, архиеп. Александрийскому, с. 308–309

համակարգ, որն ամրագրուեց Նիկիոյ Ա տիեզերաժողովով: Նիկիական հաւատքի հետեւողական բացայայտման մէջ է Մեծն Աթանասի մեծագոյն ներդրումն աստուածաբանական մտքի պատմութեան մէջ:

Սբ Աթանասի ջատագովական գործունէութեան հիմնական նպատակն է եղել պաշտպանել քրիստոնէութիւնը հելլենականացման վտանգից, որը թաքնուած էր Արիոսի եւ նրա հետեւորդների հերետիկոսութեան մէջ: Լայնօրէն գործածելով յունական մտածողութեան կերպերը եւ գաղափարները՝ յայտնութենական ճշմարտութիւնները դասակարգելու եւ համադրելու համար, նա գիտէր ինչպէս առանձնացնել յունական մտածողութիւնը քրիստոնէական յայտնութիւնից, որպէսզի Աւետարանի ճշմարտութիւնը չաղճատուէր: Եթէ Աթանասն օգտւում էր փիլիսոփայութիւնից, ապա դա անում էր Եկեղեցու վարդապետութեան փրկաբանական իսկութիւնը հաստատելու համար: Նրա բոլոր ջանքերն ուղղուած էին հիմնաւորելու Եկեղեցու սրբազան աւանդութիւնը, վարդապետութիւնը եւ հաւատքը, որը տուեց Տէրը, քարոզեցին առաքեալները եւ պահպանեցին հայրերը:

Սբ Աթանասը ոչ միայն սահմանեց եւ յստակեցրեց Ամենասուրբ Երրորդութեան դաւանութեան կարեւորագոյն սկզբունքները, այլեւ ըստ էութեան նախանշեց Եկեղեցու քրիստոսաբանական մտքի զարգացման հիմնական ուղիները: Նրա գրուածքներում Բանի մարդեղութեան խորհուրդը բացայայտուած է զարմանալի խորութեամբ: Սբ Աթանասի՝ «Նա մարդացաւ, որպէսզի մենք աստուածանանք» նշանաւոր արտայայտութիւնը լաւագոյն բանալին է Եկեղեցու փրկաբանական ուսուցման: Մենք չէինք փրկուի, եթէ Աստուած Ինքը չմարդանար, եւ եթէ Քրիստոս Աստուած չլինէր: Բանն Աստուած, առնելով մարդկային բնութիւնը, աստուածացրեց այն: Եթէ Քրիստոս Աստուած չլինէր, չէր կարող աստուածացնել մեզ:

Բացի դաւանական եւ ջատագովական բնոյթի երկերից՝ սբ Աթանասի աստուածաբանական ժառանգութիւնը ներառում է նաեւ բազմաթիւ մեկնողական, ճգնաւորական-ներանձնական, տօնախօսական ճառեր, քարոզներ եւ նամակներ: Թէպէտ սբ Աթանասն ամէնից շատ վկայակոչուող հայրերից է հայ դաւանաբանական եւ հակաճառական բնոյթի աղբիւրներում, այսուհանդերձ նրա երկերի մեծ մասի հայերէն թարգմանութեան բնագրերը մեզ յայտնի չեն: Մասամբ դրանք հրատարակուած են «Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասութիւնք» (Վենետիկ, 1899 թ.) ժողովածուով:

«Գանձասար» հանդէսի է հատորում առաջին անգամ արեւելահայերէն թարգմանութեամբ ներկայացրինք եւ այժմ վերահրատարակում ենք սբ Աթանասի ամենակարեւոր դաւանաբանական երկերից մէկը, որը վերնագրուած է այսպէս՝ «Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ սբ Աթանասի թուղթը Որդու մարդեղութեան եւ Սուրբ Երրորդութեան մասին»:

Այս բացառիկ հոգեշունչ գրուածքը, լինելով սուրբ հայրապետի ուշ շրջանի գործ, ամփոփ եւ առաւել համակարգուած կերպով է ներկայացնում նրա դաւանական հայեացքները: Քրիստոնէական հաւատքի հիմնական սկզբունքները՝ Ամենասուրբ Երրորդութեան Անձերի համագոյութեան, ինչպէս նաեւ Յիսուս Քրիստոսի մարդեղութեան խորհուրդի մասին, բացայայտուած են իրենց փրկաբանական խոր աղերսներով եւ սուրբգրային կուռ հիմնաւորումներով: Այստեղ դաւանական ճշմարտութիւններն առաջնորդում են մարդուն դէպի հոգեւոր վերափոխութիւն եւ հաւատքի էական ճանաչողութիւն, որի հիմքը, ըստ սբ Աթանասի, ուղղափառ դաւանութեան խոստովանութիւնն է:

Գրաբար թարգմանութիւնը ակնյայտօրէն կատարուած է Ե դարում եւ զերծ է յունաբան դպրոցի թարգմանական խրթնաբանութիւններից: Գրաբար բնագրի դժուարահաս մասերը մանրազնին բաղդատուել են մեր ձեռքի տակ եղած յունարէն բնագրի, ինչպէս նաեւ ռուսերէն թարգմանութեան հետ:

Աղբիւրներ

Սբ Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասութիւնք, Վենետիկ, 1899 թ.

Johannes Quasten. *Patrology*. Volume III. Christian Classics, Inc. Westminster, Maryland, 1986.

Alvyn Pettersen. *Athanasius*. London: Geoffrey Chapman, 1995.

Святитель Афанасий Великий, Творения, т. 1–4, 2-е изд., Сергиева Лавра, 1902–1903.

Святитель Григорий Богослов, Собрание творений, том 1, Свято-Троицкая Сергиева лавра, 1994. Слово 21, Похвальное Афанасию Великому, архиеп. Александрийскому.

Μέγας Αθανάσιος, Περὶ τῆς ἐνσάρκου ἐπιφανείας τοῦ Θεοῦ Λόγου καὶ κατὰ Ἀρειανων, Βιβλιοθήκη Ἑλλήνων Πατέρων καὶ Ἐκκλησιαστικῶν Συγγραφέων, Αθῆναι 1963, Τόμος 33, Σελ. 221–238

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍԻ ԹՈՒՂԹԸ ՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ովքեր ցանկանում են չարարուեստաբար հասկանալ աստուածային Գիրքը, իրենց հայհոյութիւնը հաստատելու համար վկայակոչում են մարդուն վերաբերող խօսքերը Աստուծոյ Որդու աղքատութեան մասին. սակայն այս նուաստ խօսքերի եւ գործերի մէջ է քրիստոնէութեան ողջ իսկութիւնը:

Արդ՝ եթէ կարողանային լսել երանելի Պօղոսի՝ կորնթացիներին գրածները. «Քանզի գիտէք շնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացաւ, Նա, որ հարուստ էր, որպէսզի դուք Նրա աղքատութեամբ հարստանաք» [Բ Կոր. Ը 9], ապա երբեք չէին համարձակուի ասել՝ Որդին նման չէ Հօրը, յատկապէս իմանալով, թէ ինչ է Նրա աղքատութեան զօրութիւնը, եւ ինչ է Նրա խաչի զօրութիւնը: Ուստիեւ մէկ այլ տեղ նոյն Պօղոս [առաքեալն] ասում է. «Որ կարողանաք հասու լինել բոլոր սուրբերի հետ՝ ինչ է լայնութիւնը, երկարութիւնը, [բարձրութիւնը] եւ խորութիւնը, ճանաչէք Քրիստոսի՝ գիտութեանը գերազանցող սէրը, որպէսզի լցուէք Աստուծոյ ամբողջութեամբ» [Եփես. Գ 18–19]: Այս պատճառով Նրա աղքատութեան եւ չարչարանքների մասին համարձակւում է գրել. «Քա՛ւ լիցի ինձ պարծենալ, բայց միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչուած է ինձ համար, ես՝ աշխարհի» [Գաղ. Զ 14], «Որովհետեւ իմ մտքում չեմ դրել իմանալ ձեր մէջ այլ բան, բայց միայն՝ Յիսուս Քրիստոսին եւ նոյն Իրեն՝ խաչուածին» [Ա Կոր. Բ 2]. «Եւ եթէ ճանաչուած լինէր, արդարեւ փառքի Տիրոջը չէին խաչի» [Ա Կոր. Բ 8]: Եւ այժմ, եթէ սրանք հասկանային աստուածային Գիրքը, արդարեւ չէին համարձակուի ամէնքի Ստեղծողին հայհոյել՝ Նրան ստեղծուած կամ արարուած կոչելով:

Վկայակոչում են՝ ասելով մեզ. «Ինչպէ՞ս կարող է Որդին Հօր նման կամ Հօր էութիւնից լինել, երբ գրուած է. «Ինչպէս Հայրն Ինքն Իր մէջ կեանք ունի, նոյնպէս եւ Որդուն տուեց Ինքն Իր մէջ կեանք ունենալ» [Յովհ. Ե 26]: Ըստ նրանց՝ տուողը գերազանց է վերցնողից: Նաեւ [գրուած] է. «Մի՛ կոչիր Ինձ բարի, բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստուած» [Մարկ. Ժ 18], դարձեալ՝ «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» [Մատթ. ԻԷ 46], դարձեալ՝ «Այդ օրուայ մասին ոչ ոք չգիտի... եւ ոչ էլ Որդին, այլ միայն՝ Հայրը» [Մարկ. ԺԳ 32], դարձեալ՝ «Ում Հայրը սրբացրեց եւ աշխարհ ուղարկեց» [Յովհ. Ժ 36], դարձեալ՝ «[Հայր] Աստուած, որ յարութիւն տուեց Նրան մեռելներից» [Գաղ. Ա 1]: Արդ՝ ինչպէ՞ս կարող է, ասում են, մեռելներից յարութիւն առնողը նման լինել Իրեն յարութիւն տուողին:

Այս վկայութիւնների շատից քիչը ներկայացրինք, որպէսզի սրանք մեկնելով՝ միւսները հեշտութեամբ հասկացուեն: Արդ՝ ըստ մեր կարողութեան մենք պէտք է պատմենք դրանց զօրութեան մասին:

Երբ երանելի Պօղոսն ասում է. «Հայրը յարութիւն տուեց Իր Որդուն մեռելներից» [տես Հռոմ. Ժ 9], ապա Յովհաննէսն ասում է մեզ, թէ՝ «Ասաց Յիսուս. «Քանդեցէ՛ք այդ տաճարը, եւ երեք օրուայ ընթացքում այն կը վերականգնեմ»: Եւ ասում էր Իր մարմնի տաճարի մասին» [Յովհ. Բ 19–21]: Արդ՝ յայտնի է նրանց, ովքեր արթուն են, թէ մարմնի յարութեամբ նկատի ունի Որդու յարութիւնը մեռելներից, որովհետեւ ինչ որ Նրա մարմնի մասին են ասում, ի դէմս Նրա են ասում, այսպէս՝ երբ ասում է, որ Հայրը կեանք տուեց Որդուն, պէտք է իմանալ մարմնին կեանք տալը, քանի որ եթէ Ինքն է կեանքը, ապա ինչպէ՞ս է կեանքը կեանք վերցնում, երբ Ինքը խոստանում է՝ ասելով, թէ՝ «Իմ ոչխարներն Իմ ձայնը լսում են, եւ Ես ճանաչում եմ նրանց, նրանք գալու են Իմ յետեւից, եւ Ես նրանց կը տամ յաւիտենական կեանքը, եւ նրանք չեն կորչի յաւիտեան» [Յովհ. Ժ 27]: Եւ արդ՝ եթէ Ինքն է Աստուծոյ իմաստութիւնը, եւ ամէն հասակ Իրենից է, ապա ինչո՞ւ ասաց. «Յիսուս զարգանում էր իմաստութեամբ եւ հասակով» [Ղուկ. Բ 52]: Եւ եթէ Հայրն Իր Բանի եւ Որդու միջոցով է ստեղծել ամէն ինչ, ապա պարզ է, որ Նրա մարմնին էլ է յարութիւն տուել Նրա միջոցով: Արդ՝ Նրա ձեռքով յարութիւն տուեց Նրան եւ Նրա ձեռքով կեանք տուեց Նրան: Մարմնով յարութիւն է առնում որպէս մարդ եւ կեանք է ստանում որպէս մարդ՝ «կերպարանքով որպէս մարդ լինելով» [Փիլ. Բ 7]. եւ

Ինքը որպէս Աստուած յարութիւն է տալիս Իր տաճարին եւ կեանք՝ Իր մարմնին: Եւ դարձեալ երբ ասում է. «Ում Հայրը սրբացրեց եւ աշխարհ ուղարկեց» [Յովհ. Ժ 36], ապա մէկ այլ տեղ Նրա մասին ասում է. «Եւ ես ինձ սրբացնում եմ, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Իսկ երբ ասում է. «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» [Մատթ. ԻԷ 46], ապա դա մեր անունից է ասում, որովհետեւ [Նրա մասին ասուեց]. «Ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման դառնալով եւ կերպարանքով որպէս մարդ լինելով» [Փլպ. Բ 7], եւ՝ «Հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ՝ մահուան՝ խաչի վրայ» [Փլպ. Բ 8]: Նոյնպէս էլ Եսային է ասում. «Նա մեր մեղքերն է վերցնում եւ մեզ համար չարչարւում» [Ես. ԾԳ 4], քանի որ Իր համար չի չարչարւում, այլ մեզ համար, եւ Աստուած Իրե՛ն չթողեց, այլ մեզ, եւ մեզ՝ թողնուածներիս համար եկաւ աշխարհ: Եւ երբ ասում է. «Դրա համար էլ Աստուած Նրան առաւել բարձրացրեց եւ Նրան շնորհեց մի անուն, որ ամէն անունից վեր է» [Փլպ. Բ 8], եւ ինչ որ սրանից յետոյ է ասում, տաճարի մասին է ասում, որն Իր մարմինն է:

Որովհետեւ ոչ թէ Բարձրեալն է բարձրանում, այլ Բարձրեալի մարմինը, եւ Բարձրեալի մարմնին անուն շնորհեց, որ ամէն անունից վեր է, եւ ոչ թէ Աստուծոյ Բանն ըստ շնորհի կոչուեց Աստուած, այլ Նրա մարմինը Նրա հետ Աստուած ասուեց: Որովհետեւ չասաց՝ Բանն Աստուած եղաւ, այլ «Բանն Աստուած էր» [Յովհ. Ա 1], այսինքն՝ միշտ կար Բանն Աստուած, եւ այս նոյն Աստուած մարմին եղաւ, որպէսզի Նրա մարմինը լինի Բանն Աստուած, ինչպէս որ Թովմասը, շօշափելով Նրա մարմինը, գոչեց. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ» [Յովհ. Ի 28]՝ երկուսը միասին Աստուած կոչելով: [Այս մասին] Յովհաննէսը նոյնպէս գրեց. «Կենաց Բանի մասին, որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ականատես եղանք, եւ որին շօշափեցին մեր ձեռքերը» [Ա Յովհ. Ա 1]: Արդ՝ այս ամէնից յայտնի է, որ մարմնի մէջ շօշափուեց Որդին եւ Աստուծոյ Բանը, եւ երկու դէպքում էլ, ըստ աստուածային Գրքի, շօշափուողը Կենաց Բանն է: Եւ երբ ասում է. «Քանի որ Սուրբ Հոգին դեռեւս չկար, որովհետեւ Յիսուս դեռ փառաւորուած չէր» [Յովհ. Է 39], նկատի ունի Նրա մարմինը, որ դեռ փառաւորուած չէր: Որովհետեւ ոչ թէ փառքի Տէրն է փառաւորւում, այլ փառքի Տիրոջ մարմինը: Այն փառաւորւում է՝ Նրա հետ երկինք բարձրանալով: Ուստիեւ որդեգրութեան Հոգին էլ

դեռ մարդկանց մէջ չէր, որովհետեւ նախապէս մարդուց մարմին առնելով՝ դեռ երկինք չէր բարձրացել:

Արդ՝ որքան որ Գիրքն ասում է, թէ Որդին վերցրեց, Նրա մարդկութեան համար է ասում, ոչ թէ Աստուածութեան: Եւ երբ առաքեալն ասում է, թէ՝ «Քրիստոսի մէջ է բնակւում Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս» [Կող. Բ 9], պէտք է հասկանալ, որ Աստուածութեան ամբողջ լիութիւնը բնակւում է Նրա մարմնի մէջ: Երբ ասում է. «Որ իր Որդուն իսկ չխնայեց, այլ մեր բոլորի համար [մահուան] մատնեց նրան» [Հռոմ. Ը 32], մէկ ուրիշ տեղ էլ ասում է. «Ինչպէս որ Քրիստոս սիրեց Եկեղեցին եւ Իր անձը մատնեց նրա համար» [Եփես. Ե 25]:

Որովհետեւ Որդին չեկաւ Ինքն Իրեն փրկելու մահից, այլ մեզ՝ մեռեալներիս. եւ ոչ թէ Իր համար մեռաւ, այլ մեզ համար. քանի որ դրա համար էլ Ինքն ընդունեց մեր աղքատութիւնն ու անարգանքը, որպէսզի Իր ամբողջ հարստութիւնը մեզ շնորհի, որովհետեւ Նրա չարչարանքները մեր անչարչարութիւնն են, Նրա մահը՝ մեր անմահութիւնը, եւ Նրա արտասուքը՝ մեր խնդութիւնը, Նրա թաղուելը՝ մեր յարութիւնը, Նրա մկրտութիւնը՝ մեր սրբութիւնը: Քանզի ասում է. «Ինձ սրբացնում եմ նրանց համար, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Եւ Նրա վէրքերը մեր բժշկութիւնն են, որովհետեւ ասում է. «Նրա վէրքերով մենք բժշկուեցինք» [Ես. ԾԳ 5]: Նրա պատիժը մեր խաղաղութիւնն է, որովհետեւ [ասում է]. «Մեր խաղաղութեան համար Նա պատիժ կրեց» [Ես. ԾԳ 5], այսինքն՝ մեր խաղաղութեան համար Նա է պատժւում: Եւ Նրա անփառութիւնը մեր փառքն է. ուստի մեզ համար փառք էր խնդրում՝ ասելով. «Փառաւորի՛ր ինձ, Հա՛յր, Քեզ մօտ եղող այն փառքով, որ ունէի Քեզ մօտ նախքան աշխարհի լինելը» [Յովհ. ԺԷ 5]. որովհետեւ Նրանով ենք փառաւորուած: Նրա էջքը մեզ համար բարձրանալ է՝ ըստ գրուածի՝ «Եւ նրա հետ յարութիւն տուեց մեզ եւ նրա հետ նստեցրեց երկնքում ի Քրիստոս Յիսուս, որպէսզի գալիք յաւիտեաններում Իր շնորհի անչափելի մեծութիւնը քաղցրութեամբ ցոյց տայ մեր նկատմամբ ի Քրիստոս Յիսուս» [Եփես. Բ 6]: Եւ որ խաչի վրայ ասաց. «Հա՛յր, քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին» [Ղուկ. ԻԳ 46], այսինքն՝ Իր միջոցով Հօրն է աւանդում Իրենով կենդանութիւն տուած բոլոր մարդկանց, որովհետեւ Նրա անդամներն ենք, եւ այդ բոլոր անդամները մի մարմին են, որը Եկեղեցին է. ինչպէս երանելի Պօղոսը գրում

է գաղատացիներին. «Որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ 28]: Արդ՝ Իրենով յանձնում է բոլորին:

Այսպէս էլ երբ ասում է. «Տէրն Ինձ ստեղծեց Իր ճանապարհի սկզբին՝ Իր գործերի համար» [Առակ. Ը 22], ասում է Իրենով կառուցուած Եկեղեցու մասին: Քանզի ամէն ինչի Արարիչը ստեղծուած կամ արարած չէ, այլ Արարչով է նորոգւում արարածը՝ ըստ Պողոսի խօսքի՝ «Որովհետեւ Նրա արարածներն ենք՝ ստեղծուած ի Քրիստոս Յիսուս բարի գործերի համար» [Եփես. Բ 10], եւ դարձեալ ասում է. «Որպէսզի Եկեղեցու միջոցով յայտնի լինի այժմ երկնային իշխանութիւններին եւ պետութիւններին Աստուծոյ բազմազան իմաստութիւնը, Նրա յաւիտենական նախասահմանութեան համաձայն, որ Նա կատարեց մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որով համարձակութիւն եւ վստահելի հաղորդակցութիւն ունենք՝ Նրա նկատմամբ հաւատքի միջոցով» [Եփես. Գ 10–12]. եւ կրկին ասում է. «Քանի որ Նա ընտրեց մեզ Քրիստոսով նախքան աշխարհի արարումը, որպէսզի մենք սուրբ եւ անարատ լինենք Նրա առաջ սիրով, մեզ որդեգրութեան նախասահմանեց Յիսուս Քրիստոսի միջոցով» [Եփես. Ա 4–5]: Եւ դարձեալ՝ երկու ժողովուրդների համար ասում է. «Որպէսզի Իրենով երկուսին դարձնի մէկ նոր մարդ, խաղաղութիւն հաստատի եւ Իր խաչի միջոցով Աստուծոյ հետ հաշտեցնի երկուսին մէկ մարմնի մէջ՝ Իր խաչով սպանելով թշնամութիւնը» [Եփես. Բ 15–16]:

Եւ երբ ասում է. «Մի՛ կոչիր Ինձ բարի. բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստուած» [Մարկ. Ժ 18], ասում է սա՝ ըստ մարմնի Իրեն մարդկանց հետ դասակցելով եւ ըստ Իրեն մօտեցած [երիտասարդի] ըմբռնելու չափի. որովհետեւ երիտասարդը միայն մարդ էր համարում Նրան եւ ոչ թէ Աստուած: Եւ սա է [Տիրոջ] պատասխանի իմաստը, որ եթէ Ինձ միայն մարդ ես կարծում եւ ոչ Աստուած, ապա մի՛ կոչիր Ինձ բարի, որովհետեւ մարդկային բնութիւնը չի կարող բարի լինել, այլ միայն Աստուած: Եւ այնուհետեւ աւելացնում է. «Պատուիրանները գիտես» [Մարկ. Ժ 19], եւ նրա հարցին՝ որո՞նք, պատասխանում է. «Մի՛ շնանար, մի՛ սպանիր» [Մարկ. Ժ 19] եւ մնացածները: Պատասխանում է եւ ասում. «Այդ բոլորը իմ մանկութիւնից ի վեր արել եմ, արդ՝ ի՞նչ եմ պակաս թողել» [Մարկ. Ժ 20]: Ասում է նրան. «Ցանկանո՞ւմ ես կատարեալ լինել. գնա վաճառի՛ր ինչ որ ունես, աղքատների՛ն տուր եւ երկնքում գանձեր կ՚ունենաս. եւ վերցրո՛ւ խաչդ եւ արի՛ Իմ յետեւից» [Մատթ. ԺԹ 20]: Արդ՝ այսպէս Տէրը ցոյց տուեց, որ բարին

Իրեն էլ է յատուկ, որովհետեւ ոչ ոք չի կարող չարիքին հետեւելով յաւիտենական կեանք ժառանգել: Եւ երբ վերջին օրերի մասին ասում է, թէ՝ «Ոչ ոք չգիտի... եւ ոչ էլ՝ Որդին, այլ միայն Հայրը» [Մարկ. ԺԳ 32], մարդկօրէն է ասում, որովհետեւ եթէ Հօրը գիտի, ապա ինչպէ՞ս չգիտի, թէ երբ է վերջին օրը, քանզի ասում է. «Ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ՝ Որդին եւ ում Որդին կամենայ յայտնել» [Մատթ. ԺԱ 28]: Եւ եթէ Սուրբ Հոգին գիտի բոլոր աստուածային բաները, [ապա] Որդին ինչպէ՞ս չգիտի օրը, որն Ինքն է ստեղծել: Եւ եթէ յաւիտեաններն ու դարերը Նրանով եղան, ակնյայտ է, որ վերջին օրը նոյնպէս յաւիտեանների ու ժամանակների մէջ է, որի մասին չէր կարող չիմանալ:

Արդ՝ Տիրոջ ասած բոլոր նուաստ խօսքերը վերաբերում են Նրա աղքատութեանը, որպէսզի մենք դրանցով հարստանանք եւ ոչ թէ դրանցով հայհոյենք Աստուծոյ Որդուն: Այս իսկ պատճառով Աստուծոյ Որդին մարդու որդի եղաւ, որպէսզի մարդկանց, այսինքն՝ Ադամի որդիները, Աստուծոյ որդիներ դառնան: Որովհետեւ անճառաբար, անպատմելիօրէն, անհաս մշտնջենաւորութեամբ Հօրից ի վերուստ ծնուածը ժամանակի մէջ Կոյս Մարիամից եղաւ ներքեւից, որպէսզի սկզբնապէս ներքեւից ծնուածներս երկրորդ անգամ ի վերուստ ծնունենք, այսինքն՝ Աստծուց: Արդ՝ Նա երկրից միայն մայր ունի, իսկ մենք երկնքում՝ միայն Հայր: Այս պատճառով էլ Ինքն Իրեն մարդու որդի է կոչում, որպէսզի մարդիկ էլ հայր կոչեն Աստծուն. «Հա՛յր մեր, որ երկնքում ես» [Մատթ. Զ 9]: Արդ՝ ինչպէս մենք՝ ծառաներս, Աստուծոյ որդիներ եղանք, այնպէս էլ երկնքի Տէրն Իր ծառայի որդին եղաւ, այսինքն՝ Ադամի, որովհետեւ վերցնելով մարդկանց մահկանացու հօրը՝ մարդկանց տուեց Իր անմահ Հօրը՝ համաձայն ասածի, թէ՝ «Նրանց իշխանութիւն տուեց լինելու Աստուծոյ որդիներ» [Յովհ. Ա 12]: Ուստի Աստուծոյ Որդին մարմնով ճաշակեց մահը Իր մարմնական մօր համար, որպէսզի մարմնական որդիներն էլ Նրա կեանքին հաղորդակից լինեն իրենց հոգեւոր Հայր Աստուծոյ համար: Արդ՝ Նա Աստուծոյ Որդի է ըստ բնութեան, իսկ մենք՝ ըստ շնորհի: Եւ դարձեալ, Նա ըստ տնօրէնութեան եւ մեզ համար Ադամի որդի դարձաւ, իսկ մենք բնութեամբ ենք Ադամի որդիներ: Ուստի ասում է. «Գնում եմ դէպի իմ Հայրը եւ ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը» [Յովհ. Ի 17], որովհետեւ Աստուած, ինչպէս նախապէս ասացի, Նրա Հայրն է ըստ բնութեան, իսկ մերը՝ ըստ շնորհի:

Եւ Նրան Աստուած եղաւ ըստ տնօրէնութեան, որովհետեւ մարդ է, իսկ մեզ համար Տէր է եւ Աստուած ըստ բնութեան: Եւ այս պատճառով Հօր Բանը եւ Որդին, միանալով մարմնի հետ, մարմին եղաւ, որպէսզի եւ մարդիկ, միանալով Հոգու հետ, լինեն մէկ Հոգի: Արդ՝ Նա Աստուած է մարմնազգեստ, իսկ մենք՝ մարդիկս՝ հոգեզգեստ. որովհետեւ մարդկանց էութիւնից պտուղ առնելով, այսինքն՝ Աբրահամի զաւակներից, այսինքն՝ «ծառայի կերպարանքով եւ մարդկանց նման լինելով» [Փլպ. Բ 7]՝ Աստուծոյ էութիւնից մեզ տուեց Սուրբ Հոգու պտուղը, որպէսզի բոլորն էլ Աստուծոյ որդիներ դառնան՝ Աստուծոյ Որդու նմանութեամբ: Ինքը՝ Աստուծոյ ճշմարիտ Որդին, հագաւ մեզ բոլորիս, որպէսզի մենք բոլորս հագնենք մէկ Աստծուն:

Արդ՝ ամբարշտութիւն է ասելը, որ Աստուծոյ Հոգին ստեղծուած կամ արարած է, որովհետեւ Հին եւ Նոր Կտակարանների գրքերը ասում են, որ Նա համադաս եւ փառաբանակից է Հօրը եւ Որդուն, որովհետեւ նոյն Աստուածութիւնից եւ էութիւնից է, ինչպէս Տէրն ասաց. «Նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն: Նա այդ ասում էր Հոգու մասին, որին ընդունելու էին Իրեն հաւատացողները» [Յովհ. Է 38–39], ինչպէս որ Յովէլը Հօր անունից ասաց. «Իմ Հոգուց կը հեղեմ բոլոր մարմինների վրայ, եւ կը մարգարէանան ձեր որդիներն ու դուստրերը» [Յովէլ Բ 28]. եւ այս պատճառով փչեց առաքեալների երեսին՝ ասելով. «Առէ՛ք Սուրբ Հոգին» [Յովհ. Ի 22]. որպէսզի սովորենք, որ Աստուածութեան լիութիւնից տրուեց Հոգին աշակերտներին, քանզի ասում է՝ Քրիստոսի մէջ, այսինքն՝ Նրա մարմնի մէջ, «բնակւում է Աստուածութեան ամբողջ լիութիւնը մարմնապէս» [Կող. Բ 9], ինչպէս ասում է նաեւ Յովհաննէս Մկրտիչը. «Մենք ամէնքս Նրա լիութիւնից ստացանք» [Յովհ. Ա 16]: Քանզի մարմնաւոր տեսքով, այսինքն՝ ինչպէս աղաւնի, Սուրբ Հոգին երեւաց՝ իջնելով եւ մնալով Նրա վրայ, որովհետեւ մեր մէջ բնակւում է Աստուածութեան պտուղը եւ առհաւատչեան, իսկ Քրիստոսի մէջ՝ Աստուածութեան ամբողջութիւնը: Եւ ոչ ոք թող չկարծի, թէ Նա, նախապէս չունենալով, ընդունեց [Հոգին]: Քանզի Ինքը՝ որպէս Աստուած, ի վերուստ առաքում է Սուրբ Հոգուն, եւ Ինքն էլ՝ որպէս մարդ, ընդունում է երկրի վրայ: Արդ՝ [Սուրբ Հոգին] Նրանից Նրա վրայ իջաւ, Նրա Աստուածութիւնից՝ Նրա մարդկութեան վրայ: Նաեւ Եսային աղաղակում է Հօր անունից՝ ասելով. «Այսպէս է ասում քո Տէր Աստուած, որ արարեց եւ ստեղծեց քեզ որովայնից.

«Մի՛ վախեցիր, ծառա՛յ իմ Յակոբ, եւ դու, սիրեցեա՛լ իմ Իսրայէլ, որին ընտրել եմ, որովհետեւ ես ջուր պիտի տամ ծարաւածներին, որոնք ընթանում են անջրդի տեղերով. Իմ հոգին պիտի դնեմ քո բերանում եւ Իմ օրհնութիւնը՝ քո զաւակի վրայ»» [Ես. ԽԴ 2–3]: Իսկ Աւետարանում Յիսուս խոստանում է ջուր տալ ծարաւեալներին՝ սամարացի կնոջը ասելով Սուրբ Հոգու մասին. «Եթէ դու գիտենայիր Աստուծոյ պարգեւները եւ թէ Ո՞վ է, որ քեզ ասում է. «Ինձ խմելու ջուր տուր», դուցէ ինքդ արդարեւ Նրանից ուզէիր, եւ քեզ կենդանի ջուր կը տար» [Յովհ. Դ 10]: Եւ փոքր-ինչ յետոյ նրան ասում է. «Ով այս ջրից խմի, նորից կը ծարաւի, բայց ով խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, յաւիտեան չի ծարաւի. իսկ ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մէջ կը լինի բխող ջրի աղբիւր յաւիտենական կեանքի համար» [Յովհ. Դ 13–14]: Եւ այս մասին Դաւիթը սաղմոսելով ասում է, թէ՝ «Քեզանից է կեանքի աղբիւրը, եւ Քո [երեսի] լոյսով ենք տեսնում լոյսը» [Սաղմ. ԼԵ 10], որովհետեւ գիտի, որ Որդին Հօր մօտ է եւ աղբիւրն է Սուրբ Հոգու: Ինչպէս ասում է Երեմիայի միջոցով. «Երկու չարիք գործեց Իմ ժողովուրդը. Ինձ՝ կենդանի ջրի աղբիւրիս, լքեց եւ իր համար ծակ ջրհորներ փորեց, որոնք ջուր չեն կարող պահել» [Երեմ. Բ 13]: Եւ երբ քերովբէները փառաբանում են Աստծուն՝ երիցս ասելով՝ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զօրութիւնների» [Ես. Զ 3], փառաբանում են Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. ուստի ինչպէս Հօր եւ Որդու, այդպէս էլ Սուրբ Հոգու անունով ենք մկրտւում եւ Աստուծո՛յ որդիներ դառնում եւ ոչ թէ՝ աստուածների: Որովհետեւ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին է Զօրութիւնների Տէրը, քանզի մէկ Աստուածութիւն է եւ մէկ Աստուած: Ուստի ինչ որ ըստ Եսայու Հայրն ասաց, նոյնն էլ Յովհաննէսն ասում է, թէ Որդին ասաց, իսկ Պօղոս [առաքեալը] «Գործք առաքելոց»-ում ասում է, թէ Սուրբ Հոգին ասաց: Քանզի Եսային այսպէս է ասում, թէ՝ «Տեսայ Զօրութիւնների Տիրոջը, որ նստած էր բարձրացած աթոռին, եւ տաճարը լի էր Նրա փառքով, եւ սերովբէներ կային նրա շուրջ, որոնցից իւրաքանչիւրը վեց թեւ ունէր. երկուսով իրենց երեսն էին ծածկում, երկուսով՝ իրենց ոտքերը եւ երկուսով էլ թռչում էին: Ձայնակցում էին իրար եւ ասում. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ Տէր զօրութիւնների, ամբողջ երկիրը լի է Նրա փառքով»» [Ես. Զ 1–3]: Եւ քիչ յետոյ ասում է. «Լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, եւ ո՞վ կը գնայ այդ ժողովրդի մօտ»: Եւ ես ասացի. «Ահաւասի՛կ ես,

ի՛նձ ուղարկիր»: Եւ ինձ ասաց. «Գնա՛ այդ ժողովրդի մօտ եւ ասա՛. «Լսելով կը լսէք, բայց չէք իմանայ, տեսնելով կը տեսնէք, բայց չէք ճանաչի». քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպէսզի չլինի թէ երբեւէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն եւ սրտով իմանան ու դարձի գան, եւ Ես բժշկեմ նրանց» [Ես. Զ 8–10]: Իսկ Յովհաննէս աւետարանիչն ասաց. «Այն պատճառով հրեաները չէին կարողանում հաւատալ Յիսուսին, որ Եսային ասաց. «Նրանց աչքերը կուրացրեց եւ նրանց սրտերը կարծրացրեց, որպէսզի երբեւէ աչքով չտեսնեն եւ սրտով չիմանան ու դարձի չգան, եւ նրանց չբժշկեմ»: Եսային այս ասաց, երբ Նրա փառքը տեսաւ» [Յովհ. ԺԲ 39–41], այսինքն՝ Որդու փառքը, քանի որ Յիսուս՝ Տէր Սաբաովթ է, որովհետեւ Տէր Սաբաովթ թարգմանւում է «Զօրութիւնների Տէր», ինչպէս ասում է Դաւիթը. «Զօրութիւնների Տէրը՝ Նա Ինքն է փառքի Թագաւորը» [Սաղմ. ԻԳ 10]: Իսկ փառքի Տէրը, ըստ Պօղոս [առաքեալի], խաչուած Քրիստոսն է [հմմտ. Ա Կոր. Բ 8]. ըստ այսմ՝ Դաւիթն ասաց. «Տէրը կը հովուի ինձ, եւ ինձ ոչինչ չի պակասի» [Սաղմ. ԻԲ 1], եւ մէկ այլ տեղում ասում է. «Որ հովւում ես Իսրայէլին, ո՛ւշ դարձրու, որ առաջնորդում ես Յովսէփի ցեղին ինչպէս հօտ, Դո՛ւ, որ քերովբէների վրայ ես նստում, յայտնուի՛ր» [Սաղմ. ՀԹ 2]: Իսկ Աւետարանում Որդին ասում է. «Ես եմ լաւ հովիւը» [Յովհ. Ժ 11]: Արդ՝ Ինքը Որդին է, որ նստում է քերովբէների վրայ եւ հովւում է Իսրայէլին: Իսկ Պօղոս [առաքեալը] «Գործք առաքելոց»-ում ասաց. «Սուրբ Հոգին է Եսայու միջոցով ասել այս» [Գործ. ԻԸ 25], ինչ որ Եսային ասաց, թէ՝ «Զօրութիւնների Տէրն ասաց ինձ» [Ես. ԺԴ 22]: Արդ՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին է Զօրութիւնների Տէրը:

Եւ երբ Գիրքը Հօր մասին ասում է, թէ՝ «Նա ստեղծեց բոլոր երեւելիները եւ աներեւոյթները» [Կող. Ա 16], ապա մէկ այլ տեղում էլ Գիրքն ուսուցանում է մեզ, թէ Որդու միջոցով ստեղծեց: Ոչ թէ Հայրն առանձին այլ բան ստեղծեց, եւ Որդին՝ մէկ այլ բան, այլ ինչ որ գործում է Հայրը, գործում է Իր զօրութեան միջոցով, որը Որդին է, որովհետեւ «ամէն ինչ Նրանով եղաւ» [Յովհ. Ա 3]: Այդպէս էլ երբ Որդին ասում է. «Քանդեցէ՛ք այդ տաճարը, երեք օրուայ ընթացքում կը վերականգնեմ», ասում է, ինչպէս յայտնի է, Իր մարմնի մասին [Յովհ. Բ 19–21]. եւ մէկ այլ տեղում Գիրքն ասում է, թէ՝ «Հայրը յարութիւն տուեց Իր Որդուն մեռելներից» [Գաղ. Ա 1]: Ճշմարիտ է

ասում, որովհետեւ յարութիւն տուեց Իր Բանի եւ Որդու միջոցով: Եւ չենք ասում, թէ մարմինն Աստուծոյ Բանն է, այլ ասում ենք, որ Որդու մարմինն է: Արդ՝ երբ ասում է՝ մարմինը յարութիւն առաւ, նկատի ունի, որ Որդին յարութիւն առաւ մեռելներից. ուստի ըստ մարմնի ենք ասում, թէ մեռաւ, թաղուեց եւ յարութիւն առաւ մեռելներից, իսկ ըստ հոգու Նա երկնքում, երկրի վրայ եւ ամենուրեք էր: Արդ՝ որովհետեւ նախ հարուստ էր, այսինքն՝ Աստուած էր, իսկ յետոյ մեզ համար աղքատացաւ, այսինքն՝ մարդացաւ եւ ամէն ինչով նմանուեց մեզ՝ բացի մեղքից, այս պատճառով որպէս մարդ կեանք ստացաւ Նա, որ ունէր կեանքը, որովհետեւ Ինքն է կեանքը, սակայն ստանում է մեզ համար: Եւ որպէս մարդ աճում էր հասակով եւ իմաստութեամբ Նա, որ Աստուծոյ մշտնջենական զօրութիւնն ու իմաստութիւնն է: Եւ որպէս մարդ սրբւում է Նա, որ միշտ սուրբ է եւ սրբուելու կարիք չունի, որովհետեւ ասում է. «Իմ անձը սրբացնում եմ նրանց համար, որպէսզի նրանք էլ սրբացուեն ճշմարտութեամբ» [Յովհ. ԺԷ 19]: Եւ որպէս մարդ վեր է բարձրանում՝ ընդունելով մի անուն, որ վեր է բոլոր անուններից, անուն, որը միշտ ունէր ըստ Իր բնութեան, քանզի ասուած է. «Բանն Աստուած էր» [Յովհ. Ա 1]:

Արդ՝ ամէն անգամ, երբ Գիրքն ասում է, թէ Որդին վերցրեց, Նրա մարմնի համար է ասում, որ Եկեղեցու պտուղն է, քանզի ասում է. «Քրիստոս է պտուղը» [Ա Կոր. ԺԵ 20]: Արդ՝ պտուղը վերցրեց մի անուն, «որ վեր է բոլոր անուններից», յարութիւն առաւ [Նրա] զօրութեամբ նաեւ մարմնի զանգուածը եւ Նրա հետ նստեց՝ ըստ ասուածի՝ «Նրա հետ յարութիւն տուեց մեզ եւ Նրա հետ նստեցրեց» [Եփես. Բ 6]. ուստի մարդիկ ըստ շնորհի կոչուեցին աստուածներ եւ Աստուծոյ որդիներ: Արդ՝ [նախ] Տէրն Իր մարմնին մեռելներից յարութիւն տուեց եւ Իրենով բարձրացրեց, իսկ սրանից յետոյ յարութիւն է տալիս նաեւ Իր մարմնի անդամներին. եւ որպէս Աստուած՝ նրանց շնորհում է այն ամէնը, ինչ Ինքը վերցրեց որպէս մարդ: Արդ՝ Ինքն Իրեն կեանք է շնորհում, Ինքն Իրեն սրբում է եւ Ինքն Իրեն բարձրացնում: Իսկ երբ ասւում է, թէ Հայրը Նրան սրբեց, աշխարհ ուղարկեց, յարութիւն տուեց, անուն շնորհեց եւ կեանք տուեց, յայտնի է, որ Հայրն ամէն ինչ Նրա միջոցով արեց: Արդ՝ Նրա միջոցով է յարութիւն տալիս Նրան, Նրա միջոցով սրբում Նրան, Նրա միջոցով բարձրացնում Նրան եւ Նրա միջոցով կեանք տալիս Նրան: Եւ երբ Իր հոգին յանձնում է Հօր ձեռքը, Իրեն յանձնում է Աստծուն

որպէս մարդ, որպէսզի բոլոր մարդկանց յանձնի Աստծուն, որովհետեւ ձեռքը Ինքն է, եւ Ինքն է Հօր ձեռքը: Եւ երբ ասում է. «Բոլոր բլուրներից առաջ ծնեց Ինձ» [Առակ. Ը 25], Եկեղեցու անունից է [ասում], որը սկզբնապէս ստեղծուած էր, իսկ յետոյ ծնուեց Աստծուց ըստ շնորհի: Այս պատճառով էլ «Առակներում» նախ ասուած է. «Տէրն ինձ ստեղծեց» [Առակ. Ը 22], եւ յետոյ՝ «ծնեց» [Առակ. Ը 25]:

Եւ երբ Գիրքը Հօր մասին ասում է. «Մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ» [Մաղ. Բ 10], նոյնպէս էլ Որդու մասին է ասում, թէ՝ «Նրանով ամէն ինչ ստեղծուեց» [Կող. Ա 16]: Եւ նոյն բաները ասւում են Սուրբ Հոգու մասին: «Հանում ես,— ասում է,— նրանցից հոգին, սպառւում եւ հող են դառնում: Ուղարկում ես Քո Հոգին եւ ստեղծագործում նրանց եւ նորոգում երկրի երեսը» [Սաղմ. ՃԳ 29–30]: Եւ երբ Յիսուս Հօր մասին ասում է Պետրոս [առաքեալին]. «Երանի՛ է քեզ, որովհետեւ մարմինը եւ արիւնը չէ, որ յայտնեցին քեզ, այլ Հայրը, որ երկնքում է» [Մատթ. ԺԶ 17], ապա Իր մասին էլ է նոյնն ասում. «Ոչ ոք չի ճանաչում Հօրը, եթէ ոչ՝ Որդին եւ նա, ում Որդին կամենայ յայտնել» [Մատթ. ԺԱ 27]. նոյնպէս էլ Սուրբ Հոգու մասին է ասում Պօղոս [առաքեալը]. «Բայց Աստուած մեզ յայտնեց Սուրբ Հոգու միջոցով, որովհետեւ Հոգին քննում է ամէն ինչ եւ Աստուծոյ խորութիւնները: Քանզի մարդկանցից ո՞վ է, որ որեւէ բան գիտի մարդու մասին, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ նրա մէջ է: Նոյնպէս եւ ոչ ոք չգիտի Աստուծոյ խորութիւնները, եթէ ոչ՝ Աստուծոյ Հոգին» [Ա Կոր. Բ 10–11]: Արդ՝ ինչպէս որ մարդու հոգին իր մարդկութիւնից եւ էութիւնից անբաժան է, նոյնպէս եւ Աստուծոյ Հոգին օտար չէ Աստուածութեանը: Եւ երբ Եսայու միջոցով Տէրն ասում է. «Որդիներ ծնեցի եւ մեծացրի» [Ես. Ա 2], ապա Աւետարանում ասում է. «Մարմնից ծնուածը մարմին է, իսկ հոգուց ծնուածը՝ հոգի» [Յովհ. Գ 6], եւ դարձեալ. «Հոգին ուր ուզում է՝ փչում է, նրա ձայնը լսում ես, բայց չգիտես՝ որտեղից է գալիս կամ ուր է գնում. այսպէս է եւ ամէն ոք, որ Հոգուց է ծնուած» [Յովհ. Գ 8]: Եւ Աւետարանի սկզբում Յովհաննէսն ասում է. «Իսկ ովքեր ընդունեցին Նրան՝ Իր [անունանը] հաւատացողներին, իշխանութիւն տուեց Աստուծոյ որդիներ լինելու, որոնք ո՛չ արիւնից, ո՛չ մարմնի կամքից, ո՛չ մարդու կամքից, այլ Աստծուց ծնուեցին» [Յովհ. Ա 12–14]: Ուստի ովքեր Սուրբ Հոգուց են ծնուել, նրանք Աստծուց են ծնուել, եւ ովքեր մկրտուել են ի Քրիստոս, մկրտուել են ի Հայր

եւ ի Սուրբ Հոգի: Եւ երբ Պետրոս [առաքեալն] Անանիային ասաց. «Ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստէիր Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից թաքցնէիր. մարդկանց չստեցիր, այլ Աստծուն» [Գործ. Ե 3–5], [ցոյց տուեց], որ ով ստում է Սուրբ Հոգուն, ստում է Աստծուն, Ով Հոգու միջոցով բնակւում է մարդկանց մէջ: Որովհետեւ ուր Աստուծոյ Հոգին է, այնտեղ էլ Աստուած է, քանզի ասում է. «Սրանով գիտենք, թէ Աստուած մեր մէջ է, քանզի Իր Հոգուց տուեց մեզ» [Ա Յովհ. Դ 13]:

Եւ երբ Գիրքն ասում է, թէ Սուրբ Հոգին խօսում էր Մարգարէների մէջ, մէկ այլ տեղ երանելի Պողոսն ասում է, թէ Հայրն էր խօսում Մարգարէների մէջ. «Աստուած բազում ձեւերով եւ բազում օրինակներով նախապէս խօսեց մեր հայրերի հետ մարգարէների միջոցով. իսկ այս վերջին օրերին խօսեց մեզ հետ Որդու միջոցով» [Եբր. Ա 1–2], իսկ մէկ այլ տեղ ասում է, թէ Որդին է խօսում. «Եթէ ապացոյց էք փնտրում, թէ ինձանով Քրիստոս է, որ ձեզ հետ խօսում է» [Բ Կոր. Ժ Գ 3]: Իսկ Որդին ասաց, որ Հոգին է խօսում առաքեալների միջոցով. «Երբ ձեզ ատեանի մատնեն,— ասում է,— հոգ մի՛ արէք, թէ ինչպէս կամ ինչ պիտի խօսէք, քանի որ ոչ թէ դուք էք, որ պիտի խօսէք, այլ ձեր Հօր Հոգին, որ պիտի խօսի ձեր միջոցով» [Մատթ. Ժ 19–20]: Եւ երբեմն [առաքեալն] ասում է, թէ հաւատացեալների մարմինները Սուրբ Հոգու տաճար են, իսկ երբեմն ասում է, թէ նրանց անդամները Քրիստոսի անդամներն են, երբեմն էլ նրանց Հօր տաճար է անուանում. «Քանզի դուք,— ասում է,— կենդանի Աստուծոյ տաճար էք, ինչպէս ասաց Աստուած, թէ՝ «Պիտի բնակուեմ նրանց մէջ եւ պիտի ընթանամ նրանց միջով, նրանց Աստուածը պիտի լինեմ, եւ նրանք պիտի լինեն Իմ ժողովուրդը»» [Բ Կոր. Զ 16], եւ «Եթէ մէկն Աստուծոյ տաճարն ապականի, Աստուած էլ նրան պիտի ապականի» [Ա Կոր. Գ 17], եւ դարձեալ՝ «Չգիտէ՞ք, որ Աստուծոյ տաճար էք դուք, եւ Աստուծոյ Հոգին է բնակւում ձեր մէջ» [Ա Կոր. Գ 16]: Քանզի եթէ որեւէ մէկը Հոգու տաճար է, ապա նա նաեւ տաճար է Հօր եւ Որդու, որովհետեւ ուր Աստուծոյ Հոգին է բնակւում, այնտեղ էլ Աստուած է բնակւում: «Եւ ինչպէս որ Հայրը յարութիւն է տալիս մեռելներին եւ կենդանացնում, նոյնպէս եւ Որդին է կենդանացնում՝ ում կամենայ» [Յովհ. Ե 21]: Նոյնպէս եւ Հոգու մասին է ասում, թէ՝ «Հոգին է, որ կենդանացնում է, մարմինը ոչ մի բան չի կարող անել» [Յովհ. Զ 64]: Պողոս [առաքեալը]

գրում է կորնթացիներին. «Իսկ Հոգին կենդանացնում է» [Բ Կոր. Գ 3–6]: Տեսնո՞ւմ ես, որ Հօր գործերը Սուրբ Գիրքը կոչում է Որդու եւ Սուրբ Հոգու գործեր, ինչպէս երանելի Պօղոսն ուսուցանեց՝ ասելով. «Կան շնորհների զանազանութիւններ, բայց Հոգին նոյնն է. կան սպասաւորութիւնների զանազանութիւններ, բայց Տէրը նոյնն է. կան ներգործութիւնների զանազանութիւններ, բայց նոյն Աստուած է, որ ներգործում է ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԲ 4–7]: Արդ՝ ասելով, թէ Հայրն է, որ ներգործում է ամէն ինչ ամէն ինչի մէջ, քիչ յետոյ ասում է, թէ Սուրբ Հոգին է ներգործում ամէն ինչ ամէն ինչի մէջ. «Քանզի այս ամէնը,— ասում է,— միեւնոյն Հոգին է ներգործում եւ բաժանում իւրաքանչիւրին՝ ինչպէս որ կամենում է» [Ա Կոր. ԺԲ 11]:

Եւ երբ երանելի Պօղոսն ուսուցանում է Սուրբ Հոգու մասին, թէ Սուրբ Հոգին մեր ժառանգութեան առհաւատչեան է, ապա Դաւիթն ասում է, որ Տէրն է մեր ժառանգութիւնը, քանզի ասում է. «Տէրն է իմ ժառանգութեան եւ բաժակի բաժինը» [Սաղմ. ԺԵ 5]: Եւ մէկ ուրիշ տեղ ասում է. «Տէ՛ր, քեզ կանչեցի եւ ասացի. «Դու ես իմ յոյսը եւ բաժինը ողջերի երկրում»» [Սաղմ. ՃԽԱ 6]: Իսկ Երեմիան ասաց, թէ՝ «Յակոբի ժառանգութիւնը Նա է, Ով ստեղծեց ամէն ինչ, եւ Նրա անունը Տէր է» [Երեմ. Ժ 16]: Արդ՝ մարգարէները ասացին՝ Տէրն է սուրբերի ժառանգութիւնը, իսկ Պօղոս [առաքեալն] ասաց, որ Սուրբ Հոգին է ժառանգութիւնը. «Որին հաւատալով,— ասում է,— կնքուեցինք խոստացուած Սուրբ Հոգով, որ մեր ժառանգութեան առհաւատչեան է» [Եփես. Ա 13–14]: Ինչպէս եւ Մովսէսի դէմքը կնքուեց Սուրբ Հոգով, երբ ընդունեց Աստուծոյ օրէնքները. եւ Իսրայէլի զաւակներից ոչ ոք չէր կարողանում նայել նրա վրայ, որովհետեւ «Տիրոջ երեսի լոյսը ծագեց» նրա վրայ [Սաղմ. Դ 7], ինչպէս գրուած է Աւետարանում. «Այնժամ արդարները իրենց Հօր արքայութեան մէջ կը փայլեն ինչպէս արեգակ» [Մատթ. ԺԳ 43]: Քանզի Աստուած լոյս է, նոյնպէս եւ Որդին է ճշմարիտ լոյս, նաեւ Հոգին է լոյս, որովհետեւ ճշմարիտ լոյսի նոյն էութիւնից է, ինչպէս Եսային է ասում. «Իսրայէլի Լոյսը կրակ պիտի դառնայ եւ նրան սրբի բոցավառ կրակով» [Ես. Ժ 17]: Իսկ Աւետարանում Յովհաննէս Մկրտիչն ասում է Տիրոջ համար, թէ՝ «Նա կը մկրտի ձեզ Սուրբ Հոգով եւ կրակով» [Մատթ. Գ 11], իսկ մէկ այլ տեղ [Սուրբ Գիրքը] Տիրոջը սրբագործող է ասում. «Ես եմ սրբագործող Տէրը» [Ղեւտ. ԻԲ

16]: Եւ երբ Գիրքն Աստծուն հուր է անուանում. «Մեր Աստուածը,— ասում է,— լափող կրակ է» [Բ Օր. Դ 24, Եբր. ԺԲ 29], նոյնպէս եւ Սուրբ Հոգու մասին է ասում, թէ՝ «Առաքեալներին երեւացին բաժանուած լեզուներ՝ նման կրակէ լեզուների, եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ: Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով եւ սկսեցին խօսել այլ լեզուներով, ինչպէս որ Հոգին նրանց խօսել էր տալիս» [Գործ. Բ 3–4]: Որովհետեւ նրանք, ովքեր հագել են Հոգին, հագել են Հօրը. «Որովհետեւ պէտք է,— ասում է,— որ այս ապականացու մարմինն անապականութիւն հագնի, եւ այս մահկանացու գոյութիւնը հագնի անմահութիւն» [Ա Կոր. ԺԵ 53]. քանզի ովքեր հագել են Աստուծոյ Հոգին, անապականութիւն են հագել, իսկ Աստուած անապականութիւն է:

Եւ երբ Դաւիթն ասում է. «Շատերն ասացին. «Ո՞վ ցոյց կը տայ մեզ բարութիւն» [Սաղմ. Դ 6], Սուրբ Հոգու մասին է ասում. եւ մէկ այլ տեղ էլ ասաց. «Տէրն Իր բարութիւնը չի պակասեցնի նրանցից, ովքեր անբծութեամբ են ընթանում» [Սաղմ. ՁԳ 13]: Նմանապէս էլ Մատթէոս [աւետարանիչը] Նրա մասին այսպէս է ասում. «Գիտէք ձեր որդիներին բարի պարգեւներ տալ, որքա՜ն եւս առաւել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կը տայ նրանց, որ Նրանից խնդրում են» [Մատթ. Է 10]: Իսկ Ղուկաս [աւետարանիչը], նոյն օրինակը բերելով, մեկնում է, թէ ինչ են նշանակում բարիքները՝ ասելով. «Եթէ դուք, որ չար էք, գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներին, որչա՜փ եւս առաւել ձեր երկնաւոր Հայրը կը տայ Սուրբ Հոգին Իրեն հաւատացողներին» [Ղուկ. ԺԱ 13]: Քանզի եթէ Սուրբ Հոգին միակ բարի էութիւնից չլինէր, ապա Նա իսկապէս չէր կոչուի բարի, այնինչ Տէրը մարդացած լինելու պատճառով հրաժարւում էր բարի կոչուելուց՝ ասելով. «Մի՛ կոչիր Ինձ բարի. բարի չէ ոչ ոք, այլ միայն Աստուած» [Մարկ. Ժ 18]: Իսկ Գիրքը չի հրաժարւում բարի կոչել Սուրբ Հոգուն՝ համաձայն Դաւթի, որն ասում է. «Քո բարի Հոգին ինձ կ՚առաջնորդի դէպի արդար երկիր» [Սաղմ. ՃԽԲ 10]: Եւ երբ Տէրը դարձեալ Իր մասին ասում է. «Ես եմ կենդանի հացը, որ երկնքից է իջած» [Յովհ. Զ 51], մէկ այլ տեղ էլ Սուրբ Հոգին է կոչում երկնաւոր հաց՝ ասելով. «Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր» [Մատթ. Զ 11]: Քանզի մեզ ուսուցանեց աղօթելիս այս կեանքում խնդրել հանապազօրեայ հացը, այսինքն՝ հանդերձեալը, որի պտուղն ունենք այս կեանքում՝ Քրիստոսի

մարմնով հաղորդուելով, ինչպէս Ինքն ասաց. «Եւ հացը, որ Ես կը տամ, Իմ մարմինն է, որը Ես կը տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ» [Յովհ. Զ 52]: Քանզի Տիրոջ մարմինն է կենդանարար հացը, որովհետեւ կենդանարար Հոգուց յղացաւ. «Քանզի Հոգուց ծնուածը հոգի է» [Յովհ. Գ 6]:

Եւ երբ Երեմիան Աստուծոյ մասին ասաց, թէ Նա առաջնորդեց Իսրայէլին անապատում. «Եւ չասացիք. «Ո՞ւր է Տէրը, որ մեզ հանեց եգիպտացիների երկրից եւ առաջնորդեց մեզ անապատում»» [Երեմ. Բ 6], իսկ Եսային ասաց, որ Սուրբ Հոգին առաջնորդեց Իսրայէլին անապատում. «Նրանց անցկացրեց անդունդներով, ինչպէս ձին է անցնում անապատով, եւ նրանք չյոգնեցին, եւ ինչպէս հօտը՝ դաշտի միջով, Տիրոջ Հոգին իջաւ եւ առաջնորդեց նրանց» [Ես. ԿԳ 13]: Իսկ Պողոս [առաքեալը] կորնթացիներին ասաց, թէ Քրիստոսն էր առաջնորդում. «Որովհետեւ խմում էին հոգեւոր Վէմից, որ գնում էր նրանց հետ, եւ Վէմը Ինքը Քրիստոսն էր» [Ա Կոր. Ժ 4]: Եւ երբ Պողոս [առաքեալն] ասաց, որ Ինքն [Աստծուց] է կոչուած. «Աստուած ընտրեց ինձ իմ մօր որովայնից եւ կոչեց Իր շնորհների միջոցով՝ յայտնելու ինձանով Իր Որդուն, որպէսզի աւետարանեմ Նրան հեթանոսների մէջ» [Գաղ. Ա 15–16], ապա հռոմէացիներին անուանեց Քրիստոսից կանչուածներ՝ նրանց գրելով. «Որոնց թւում էք եւ դուք՝ կանչուածներդ Յիսուս Քրիստոսի» [Հռոմ. Ա 6]: Իսկ Սուրբը Հոգին ասաց, որ Պողոսին եւ Բառնաբասին կանչեն՝ հեթանոսներին Քրիստոս աւետարանելու [տես Գործ. ԺԳ 2], եւ, ո՛վ զարմանք, տաճարում Յիսուս ասաց Պողոսին. «Գնա՛, որովհետեւ Ես քեզ պէտք է ուղարկեմ հեռաւոր հեթանոսների մօտ» [Գործ. ԻԲ 21]: Եւ Պողոս [առաքեալը] գաղատացիներին գրեց. «Պողոսը՝ առաքեալ՝ ոչ մարդկանց կողմից եւ ոչ էլ մարդու միջոցով, այլ Յիսուս Քրիստոսի եւ Հայր Աստուծոյ, որ յարութիւն տուեց Նրան մեռելների միջից» [Գաղ. Ա 1], եւ փոքր-ինչ յետոյ ասում է. «Յայտնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ Աւետարանը, որ ձեզ աւետարանեցի, ըստ մարդու չէ, եւ Ես մարդուց չառայ, ոչ էլ որեւէ մէկից սովորեցի, այլ Յիսուս Քրիստոսի յայտնութիւնից» [Գաղ. Ա 11–12]: Այսուհանդերձ ասւում է, որ Սուրբը Հոգին է Պողոսին եւ Բառնաբասին ուղարկել հեթանոսներին Քրիստոս քարոզելու:

Եւ երբեմն մարգարէները խօսում են Հօր անունից, ինչպէս սաղմոսներում. Աստուած ասում է. «Մէկ անգամ երդուեցի Իմ սրբու-

թեամբ, որ Դաւթին չեմ ստի. նրա սերունդը յաւիտեան կը մնայ, եւ ինչպէս արեւ՝ նրա աթոռն Իմ առջեւ է» [Սաղմ. ՁԸ 36–37]. եւ դարձեալ. «Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին» [Գործ. Բ 30]. ինչպէս եւ Պետրոս [առաքեալն] ասաց, թէ՝ «Դաւիթը մարգարէ էր եւ գիտէր, որ Աստուած նրան երդուելով խոստացաւ նրա որովայնի պտղից Քրիստոսին նստեցնել նրա գահի վրայ» [Գործ. Բ 30]. իսկ երբեմն Որդու անունից, ինչպէս Եսային ասաց. «Այսպէս է ասում Տէրը. «Ձեր պատճառով Իմ անունը մշտապէս հայհոյւում է հեթանոսների մէջ. դրա համար Իմ ժողովուրդն այդ օրը պիտի ճանաչի Իմ անունը, թէ ես եմ, որ խօսում եմ, եւ ահա մերձ եմ»» [Ես. ԾԲ 5–6]. իսկ երբեմն Սուրբ Հոգու անունից, ինչպէս Ագաբոս մարգարէն ասաց. «Այսպէս է ասում Սուրբ Հոգին այն մարդուն, ում գօտին է սա...» [Գործ. ԻԱ 11]. եւ կրկին Պօղոս [առաքեալը] Տիմոթէոսին գրում է. «Իսկ Սուրբ Հոգին յայտնապէս ասում է, թէ վերջին ժամանակներում ոմանք պիտի հեռանան հաւատից» [Ա Տիմ. Դ 1]. եւ դարձեալ. «Հոգին Փիլիպպոսին ասաց. «Մօտեցի՛ր եւ բարձրացի՛ր եթովպացի ներքինիի կառքը» [Գործ. Ը 29]: Եւ Եզեկիէլ մարգարէն մեղադրելով ասում էր Հին [Ուխտի] ժողովրդին. «Այդ ամէնով տրտմեցրիր ինձ,— ասում է Տէրը» [Եզեկ. ԺԶ 43], իսկ Պօղոս [առաքեալը] Նոր [Ուխտի] ժողովրդին գրում է. «Եւ մի՛ տրտմեցրէք Աստուծոյ Սուրբ Հոգուն, որով կնքուեցիք փրկութեան օրուայ համար» [Եփես. Դ 30]: Եւ Դաւիթը հրեաների մասին ասում էր. «Եւ բարկացրին Աստծուն անապատում» [Սաղմ. ՀԷ 40]. Եսային էլ նրանց մասին [ասաց]. «Իսկ նրանք ըմբոստ եղան եւ բարկացրին Նրա Սուրբ Հոգուն, եւ Տէրը նրանց թշնամի դարձաւ» [Ես. ԿԳ 10]. Ստեփանոսը նոյնպէս «Գործք առաքելոց»-ում ասում է. «Խստապարանոցնե՛ր եւ սրտով ու ականջներով անթլփատնե՛ր, դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակւում էք, ինչպէս ձեր հայրերը» [Գործ. Է 51]: Եւ երբ Պօղոս [առաքեալը] Հօր մասին ասում է, թէ՝ «Աստուած արդարացնում է, ո՞վ է, որ դատապարտելու է» [Հռոմ. Ը 33], [ապա] նոյնն ասում է ե՛ւ Որդու, ե՛ւ Սուրբ Հոգու մասին. «Բայց լուացուեցիք, մաքրուեցիք, արդարացուեցիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով եւ մեր Աստուծոյ Հոգով» [Ա Կոր. Զ 11]: Եւ Տէրն Իր մասին սատանային ասաց. «Քո Տէր Աստծուն չպիտի փորձես» [Մատթ. Դ 7], իսկ Պետրոս [առաքեալը] Սափիրային ասաց. «Ինչո՞ւ միաբանուեցիք՝ փորձելու Տիրոջ Հոգին» [Գործ. Ե 9]:

Եւ Աստուած է, որ ամէն ինչ պարունակում եւ լցնում է, ինչ-պէս ասում է Եսայու միջոցով. «Երկինքն ու երկիրը ես եմ լցնում,— ասում է Տէրը» [Երեմ. ԻԳ 24]. նոյնպէս եւ Որդու մասին Պօղոս [առաքեալն] ասաց. «Որ իջաւ, նոյն Ինքն է, որ բարձրացաւ երկինք-ներից աւելի վեր, որպէսզի լցնի ամէն ինչ» [Եփես. Դ 10], իսկ նոյնը Դաւիթը Հոգու մասին ասաց. «Ո՞ւր գնամ ես Քո Հոգուց կամ Քո դէմքից ո՞ւր փախչեմ» [Սաղմ. ՃԼԸ 7]: Ասելով, թէ՝ «Ո՞ւր գնամ ես քո Հոգուց»՝ ցոյց տուեց մեզ, որ Սուրբ Հոգին լցնում է ամէն ինչ. «Եւ Քո դէմքից ես ո՞ւր փախչեմ. եթէ երկինք ելնեմ, այնտեղ ես Դու, եթէ իջնեմ դժոխք, այնտեղ էլ մօտ ես» [Սաղմ. ՃԼԸ 7–8]: Իսկ ո՞վ իջաւ դժոխք, եթէ ոչ՝ Որդին, որ յարութիւն առաւ մեռելներից: Եւ երբ Ստեփանոսը «Գործք Առաքելոց»-ում ասում է, թէ՝ «Փառքի Աստուածը երեւաց մեր հօրը՝ Աբրահամին» [Գործ. Է 2], ապա այս [նոյնը] Պօղոս [առաքեալն] ասում է Որդու մասին. «Որովհետեւ եթէ ճանաչուած լինէր, արդարեւ փառքի Տիրոջը խաչը չէին հանի» [Ա Կոր. Բ 8], նոյնպէս եւ Դաւիթն է ասում. «Զօրութիւնների Տէրը՝ Նա Ինքն է փառքի Թագաւորը» [Սաղմ. ԻԳ 10]. որովհետեւ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու փառքը մէկ է. «Իմ փառքը,— ասում է,— ուրիշին չեմ տայ» [Ես. ԻԲ 8], քանի որ Որդին երկրորդ Աստուած չէ, այլ մէկ եւ միակ Աստուծոյ Բան՝ Աստուած ասուելով Հօր մէջ, ինչպէս եւ Հայրն է Աստուած ասւում Որդու մէջ, որի մասին է խօսում Եսա-յին՝ Աստուած ասելով Որդուն Հօր հետ. «Քեզ պիտի երկրպագեն եւ Քեզ աղօթեն, որովհետեւ Աստուած Քո մէջ է, եւ բացի Քեզանից չկայ այլ Աստուած. Դու ես Աստուածը, իսկ մենք չգիտէինք, ո՛վ Աստուած՝ փրկիչդ Իսրայէլի. պիտի ամաչեն եւ ամօթահար լինեն բոլորը, ովքեր Նրան հակառակւում են» [Ես. Խե 14–15]: Եւ Նրան հակառակ են բոլոր նրանք, ովքեր չեն խոստովանում, որ Նա եւ Նրա Հոգին նոյն Հօր էութիւնից են, եւ Նրանից բացի այլ Աստուած չկայ, ինչպէս նաեւ նրանք, ովքեր ամաչում են Նրա չարչարանքներից եւ աղքատութիւնից: Որովհետեւ ոչ ոք չի կարող ճանաչել Աստծուն, եթէ սուրբ Թովմասի հետ չխոստովանի, որ Խաչուածն ու մեռելների միջից յարութիւն Առածը Տէր Աստուած է, որ Իր առաքեալներին ասաց. «Եթէ Ինձ ճանաչէիք, ապա կը ճանաչէիք եւ Իմ Հօրը. այսու-հետեւ կը ճանաչէք Նրան եւ տեսել էք Նրան»: Փիլիպպոսն ասում է Նրան. «Տէ՛ր, Հօրը մեզ ցո՛յց տուր, եւ դա բաւական է մեզ»: Յիսուս նրան ասում է. «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ Ինձ չճանաչե-

ցի՞ր, Փիլիպպո՛ս. ով Ինձ տեսաւ, տեսաւ Հօրը. իսկ դու ինչպէ՞ս ես ասում, թէ Հօրը մեզ ցո՛յց տուր, չե՞ս հաւատում, որ Ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ մէջ: Այն խօսքերը, որ Ես ասում եմ, Ինքս Ինձանից չեմ խօսում, այլ Հայրը, որ բնակւում է Իմ մէջ, Նա՛ է գործում գործերը: Հաւատացէ՛ք Ինձ, որ Ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ մէջ. եթէ ոչ՝ գոնէ գործերի՛ համար հաւատացէք Ինձ» [Յովհ. ԺԴ 7–12]: Հայր Աստուծոյ գործ է դեւեր հանելը. եւ [Տէրն] ասաց, որ Սուրբ Հոգու միջոցով է հանում դեւերին. «Իսկ եթէ ես,— ասուած է,— Աստուծոյ Հոգով եմ հանում դեւերին» [Մատթ. ԺԲ 28], որի մասին ասում է Ղուկասը. «Ես Աստուծոյ մատով եմ հանում դեւերին» [Ղուկ. ԺԱ 20]: Որովհետեւ երբ Գիրքը Որդուն անուանում է Հօր բազուկ, ապա Սուրբ Հոգուն կոչում է Աստուծոյ մատ. եւ երբ Որդուն անուանում է Բան, ապա Սուրբ Հոգուն ասում է Աստուծոյ շունչ:

Եւ դարձեալ առաքեալն ասում է. «Երբ տայ թագաւորութիւնն Աստուծոյ եւ Հօր ձեռքը, երբ կործանած լինի բոլոր իշխանութիւնները եւ ամէն պետութիւն ու զօրութիւն. որովհետեւ Նա պէտք է թագաւորի, մինչեւ բոլոր թշնամիներին դնի Իր ոտքերի տակ: Վերջին թշնամին, որ պիտի խափանուի, մահն է, որովհետեւ՝ «Ամէն ինչ հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ» [Սաղմ. Ը 7]: Իսկ երբ ասում է, թէ ամէն ինչ Նրան հնազանդուեց, պարզ է, թէ բացի Նրանից, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան: [Իսկ երբ ամէն ինչ Նրան հնազանդուի, այն ժամանակ եւ Ինքը՝ Որդին կը հնազանդուի Նրան, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան], որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 24–28]: Սա ասաց աշխարհի հնազանդութեան մասին, որ Նրա մարմնով հնազանդուեց, որովհետեւ Նրա երկնային թագաւորութեան մասին Դանիէլը յայտնեց՝ ասելով. «Նրա թագաւորութեանը վախճան չի լինի» [Դան. Գ 100], ինչպէս եւ ըստ Ղուկասի՝ սուրբ Գաբրիէլն ասաց Կոյսին Տիրոջ մասին. «Եւ կը թագաւորի յաւիտեան, եւ Նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ» [Ղուկ. Ա 33]: Իսկ առաքեալն ասում է, որ Նրա թագաւորութիւնը վախճան ունի. «Որովհետեւ Նա պէտք է թագաւորի, մինչեւ բոլոր թշնամիներին դնի Իր ոտքերի տակ» [Ա Կոր. ԺԵ 25]: Նոյնպէս եւ Դաւիթն [ասաց]. «Տէրն իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչեւ Քո թշնամիներին ոտքերիդ պատուանդան դնեմ»» [Սաղմ. ՃԹ 1]: Արդ՝ երբ ասում է «նստի՛ր», նկատի ունի սկիզբը, իսկ ասելով, թէ «մինչեւ Քո թշնամիներին դնեմ»՝ ցոյց

է տալիս վախճանը: «Իսկ երբ ամէն ինչ Նրան հնազանդուի, այն ժամանակ եւ Ինքը Որդին կը հնազանդուի Նրան, Ով ամէն ինչ հնազանդեցրեց Նրան, որպէսզի Աստուած լինի ամէն ինչ ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 28]: Սրանով ցանկանում է ասել. երբ բոլորս հնազանդուենք Քրիստոսին, դառնանք Նրա անդամները եւ Նրանով Աստուծոյ որդիներ դառնանք. «Որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք,— ասում է,— ի Քրիստոս Յիսուս» [Գաղ. Գ 28], այնժամ եւ Ինքը մեր փոխարէն կը հնազանդուի Հօրը, ինչպէս Գլուխը՝ Իր անդամների համար: Իսկ քանի դեռ Նրա անդամները չեն հնազանդուել [Նրան], Ինքը՝ նրանց Գլուխը, նոյնպէս չի հնազանդուել Հօրը՝ սպասելով Իր անդամներին: Իսկ եթէ [Ինքը] հնազանդուողներից մէկը լինէր, [ապա] սկզբի՛ց եւեթ կը հնազանդուէր Հօրը եւ ոչ թէ վախճանին այդ կ՚անէր: Որովհետեւ մենք Նրանով ենք հնազանդւում Հօրը եւ Նրանով ենք մենք թագաւորում, մինչեւ մեր թշնամիները դրուեն մեր ոտքերի տակ: Երկնքի Տէրը մեր թշնամիների պատճառով մեզ նման դարձաւ եւ վերցրեց Դաւթի՝ Իր մարմնաւոր հօր մարդկային աթոռը՝ վերաշինելու եւ հաստատելու այն, որպէսզի երբ հաստատուի այն եւ բոլորս Նրանով թագաւորենք, հաստատուած մարդկային թագաւորութիւնը Հօր ձեռքը տայ. «Որպէսզի Աստուած ամէն ինչ լինի ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 28]. Նրա՝ որպէս Փրկիչ՝ Աստուծոյ միջոցով թագաւորելով, Նրա՝ որպէս Փրկիչ՝ մարդու միջոցով թագաւորելուց յետոյ:

Եւ երբ Պետրոս [առաքեալն] ասում է. «Իսրայէլի ողջ տունը թող ճշմարտապէս իմանայ, որ Աստուած Նրան ե՛ւ Տէր, ե՛ւ Օծեալ արեց, այն Յիսուսին, Ում դուք խաչեցիք» [Գործ. Բ 36], Նրա Աստուածութեան համար չի ասում, թէ Տէր եւ Օծեալ արեց, այլ Նրա մարդկութեան, որ է ողջ Եկեղեցին, որ Նրա խաչելութիւնից յետոյ Նրանով տիրեց, թագաւորեց եւ օծուեց երկնքի թագաւորութեան [համար], որպէսզի թագաւորակից լինի Նրան, Ով Իրեն դատարկեց նրա համար եւ բարձրացրեց նրան՝ ծառայի կերպարանքի միջոցով: Քանզի Աստուծոյ Բանը եւ Որդին միշտ էր Տէր եւ Աստուած եւ ոչ թէ խաչելութիւնից յետոյ դարձաւ Տէր եւ Օծեալ, այլ ինչպէս նախապէս ասացի, Նրա Աստուածութիւնն է, որ Նրա մարդկութիւնը դարձրեց Տէր եւ Օծեալ: Եւ երբ ասում է. «Հա՛յր, եթէ կարելի է, այս բաժակը Ինձանից հեռացրո՛ւ, բայց ոչ թէ Իմ կամքը թող լինի, այլ Քո՛նը, հոգիս յօժար է, բայց մարմինս՝ տկար» [Ղուկ. ԻԲ 42–43, Մարկ. ԺԴ 38],

սրանցով ցոյց է տալիս երկու կամքերը՝ մարդկայինը, որը [յատուկ] է մարմնին, եւ աստուածայինը: Որովհետեւ մարմնի տկարութեան պատճառով մարդկայինը հրաժարւում է չարչարանքներից, իսկ Նրա աստուածային [կամքը] յօժար է: Ինչպէս եւ Պետրոս [առաքեալը], լսելով չարչարանքների մասին, վախեցաւ եւ ասաց. «Քա՛ւ լիցի Քեզ, Տէ՛ր». իսկ Տէրը, նրան սաստելով, ասաց. «Ետե՛ւս գնա, սատանա՛յ, դու գայթակղութիւն ես ինձ համար, որովհետեւ Աստուծոյ բաները չես խորհում, այլ մարդկանցը» [Մատթ. ԺԶ 22–23]: Որպէս մարդ հրաժարուեց չարչարանքներից, իսկ լինելով Աստուած եւ Աստուծոյ էութեամբ անչարչարելի՝ յօժարութեամբ ընդունեց չարչարանքներն ու մահը, որովհետեւ անհնար էր, որ մահը Նրան տիրէր [տես Հռոմ. Զ 9]. քանզի Աստուած էր մարդու նմանութեամբ, որ կամաւոր մեռաւ եւ յարութիւն առաւ Իր իշխանութեամբ՝ որպէս Աստուած, ինչպէս եւ Դաւիթն ասաց. «Թող յարութիւն առնի Աստուած, եւ կը ցրուեն Նրա բոլոր թշնամիները» [Սաղմ. ԿԷ 2]: Եւ դարձեալ ասում է. «Ելի՛ր, Տէ՛ր իմ Աստուած, ըստ քո սահմանած կարգի, եւ ժողովուրդների բազմութիւնները շուրջդ կը հաւաքուեն, դրա համար բազմի՛ր բարձունքում. Տէրն է դատում Իր ժողովրդին» [Սաղմ. Է 7–9]: Եւ առաքեալն էլ է ասում. «Զարչարուեց տկարութեամբ, բայց կենդանի է Աստուծոյ զօրութեամբ» [Բ Կոր. ԺԳ 4], իսկ Աստուծոյ զօրութիւնը Որդին է: Զարչարուեց տկարութեան, այսինքն՝ մարմնի հետ միաւորուածութեան պատճառով, եւ որպէս մարդ հրաժարուեց չարչարանքներից, իսկ կենդանի է Իր զօրութեան միջոցով:

Եւ երբ Տէրը Յովհաննէսի Աւետարանում ասում է. «Յաւիտենական կեանքն այս է, որ ճանաչեն Քեզ միակ ճշմարիտ Աստուած, եւ Յիսուս Քրիստոսին, Ում Դու առաքեցիր» [Յովհ. ԺԷ 3], ապա մէկ այլ տեղ նոյն Յովհաննէսը Որդուն է ճշմարիտ Աստուած ասում, քանզի. «Գիտենք,— ասում է,— Աստուծոյ Որդին եկաւ եւ մեզ տուեց միտք, որպէսզի ճանաչենք ճշմարտութիւնը. եւ մենք ճշմարտի՝ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք, որովհետեւ Նա է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը» [Ա Յովհ. Ե 20]: Ըստ այսմ Նա ճշմարիտ Աստուած է ե՛ւ մինչեւ մարդ լինելը, ե՛ւ Աստուծոյ ու մարդկանց միջնորդ լինելուց յետոյ, ոչ միայն մարդկանց, այլեւ Աստուծոյ, ինչպէս եւ ասում է Երեմիան. «Դա մեր Աստուածն է, Ում հետ ոչ ոք չի կարող համեմատուել. Ով գտաւ իմաստութեան բոլոր ճանապարհները եւ դրանք տուեց Իր ծառայ Յակոբին եւ Իր

սիրեցեալ Իսրայէլին: Եւ դրանից յետոյ յայտնուեց երկրի վրայ եւ շրջեց մարդկանց մէջ» [Բար. Գ 36–38]: Եւ ե՞րբ շրջեց մարդկանց մէջ, եթէ ոչ՝ այնժամ, երբ Նրանց պէս ծնուեց կնոջից, մանուկ եղաւ, աճեց եւ հասակ առաւ: Եւ մէկ այլ տեղ Երեմիան ասում է. «Նրա սիրտը ամէն ինչից խոր է. եւ մարդ է, սակայն ո՞վ կարող է ճանաչել Նրան» [Երեմ. ԺԷ 9]: Նմանապէս եւ Եսային է ասում. «Մեզ համար Մանուկ ծնուեց, Որդի տրուեց մեզ, Ում իշխանութիւնն իր ուսերի վրայ է. Նա պիտի կոչուի Մեծ խորհրդի հրեշտակ, Աստուած հզօր, իշխան խաղաղութեան, Հայր հանդերձեալ աշխարհի» [Ես. Թ 6]. եւ մէկ այլ տեղ ասում է. «Ահա կոյսը պիտի յղիանայ եւ Որդի ծնի, եւ Նրա անունը պիտի կոչուի Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ» [Ես. Է 14, Մատթ. Ա 23]: Արդ՝ Աստուած է, որ ծնուեց Կոյսից եւ մտաւ օրէնքի տակ. եւ դարձեալ մէկ ուրիշ տեղ ասում է. «Նայեցինք Նրան, եւ Նա գեղեցկութիւն չունէր» [Ես. ԾԳ 2]: Քանզի մինչ այդ Նրան տեսել էր աստուածային եւ փառաւոր տես-քով՝ նստած բարձրացած աթոռին, երբ քերովբէները փառաւորում էին Նրան՝ ասելով. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ Տէր զօրութիւնների» [Ես. Զ 3]: Եւ այս ամէնից յետոյ տեսնում է Նրան ծառայի կերպա-րանք առած եւ մարդկանց նման դարձած, որի մասին ասում է. «Եւ նայեցինք Նրան, բայց ոչ տեսք ունէր եւ ոչ էլ գեղեցկութիւն. այլ Նրա տեսքն աւելի անարդ ու նսեմ էր, քան բոլոր մարդկանց որդի-ներինը: Եւ Նա հարուածների ենթակայ մի մարդ եղաւ, որ ցաւերին համբերել գիտի, քանզի Իր երեսը դարձնելով՝ անարգուեց եւ ոչ մի բանի տեղ չդրուեց: Նա մեր հիւանդութիւններն էր վերցնում եւ մեզ համար չարչարւում, իսկ մենք համարեցինք, որ Նա ցաւերի, հա-րուածների ու չարչարանքների ենթարկուեց [Աստծուց]: Բայց Նա վիրաւորուեց մեր անօրէնութիւնների պատճառով եւ չարչարուեց մեր մեղքերի պատճառով» [Ես. ԾԳ 2–5]: Եւ մէկ այլ տեղ Նրա մասին ասում է. «Ահաւասիկ մեր Աստուածը դատաստանով պիտի հատուցի եւ վրէժխնդիր լինի, Նա ինքը պիտի գայ եւ փրկի մեզ: Այն ժամանակ կոյրերի աչքերը պիտի բացուեն, եւ խուլերի ականջ-ները պիտի լսեն, այն ժամանակ կաղը եղջերուի նման պիտի վազի, եւ ծանրախօսների լեզուն պարզ պիտի դառնայ» [Ես. ԼԵ 4–5]: Մէկ այլ տեղ կրկին ասում է. «Ոչ թէ հրեշտակ կամ պատգամաւոր, այլ Տէրն Ինքը գալով փրկեց մեզ» [Ես. ԿԳ 9]: Իսկ Դաւիթն ասում է. «Մարդը մայր է կոչում Սիոնը, եւ նրա մէջ ծնուեց մարդը, եւ նրա

հիմքերը Բարձրեալը գցեց» [Սաղմ. ՁԶ 5]: Քանզի այս մարդը, որ այստեղ ծնուեց, Ինքն է՝ Բարձրեալը, ինչպէս սաղմոսն է ասում. «Թող իմանան, որ Քո անունը Տէր է, եւ Դու միակ Բարձրեալն ես ամբողջ երկրի վրայ» [Սաղմ. ՁԲ 19]: Եւ երբ Փրկիչն ասում է. «Ով առաքեց Ինձ, աւելի մեծ է, քան ես» [Յովհ. ԺԴ 28], մարդ լինելու պատճառով է Հօրն Իրենից մեծ ասում: Իսկ լինելով Հօր Բանը՝ հաւասար է Նրան, քանզի ասում է. «Ես եւ Իմ Հայրը մէկ ենք» [Յովհ. Ժ 30]. եւ «Ով Ինձ տեսաւ, տեսաւ Իմ Հօրը» [Յովհ. ԺԴ 9]: Եւ Հօրը հաւասար լինելը ոչ թէ յափշտակութեամբ է ձեռք բերել, այլ ըստ բնութեան է հաւասար եւ համագոյ [Նրան], որովհետեւ հայրական էութիւնից է ծնուած:

Այսքանը մասամբ գրեցի, որպէսզի ինչպէս առաքեալն է ասում. «Այսուհետեւ չլինենք երեխաներ, որոնք տարուբերուում եւ քշւում են վարդապետութեան բոլոր քամիներից՝ մարդկանց խաբէութեամբ, մոլորեցուցիչ պատրանքների տանող խորամանկութեամբ» [Եփես. Դ 14]:

Գրաբարից փոխադրեցին
Մեսրոպ քահանայ Արամեանը
եւ
Սահակ սարկաւագ Ղազարեանը

ՍԲ ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ[1]

ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

1. Ով ցանկանում է անուշահոտ խունկ[2] պատրաստել, նա թող ըստ օրէնքի հաւասարապէս պատրաստի մաքուր կնդրուկը[3], կասիասը[4], եղունգը[5] եւ ստաշխը[6] [Ել. Ի 34]. սրանք ցոյց են տալիս չորս առաքինութիւնները, քանզի եթէ նրանք կատարեալապէս եւ հաւասարապէս միանան, միտքը չի մատնուի վնասակարին:

2. Անձը[7], սրբուելով տասը պատուիրաններով, պատրաստում է [միտքը] աղօթքի եւ այն հայեցական կարգաւորութեամբ եւ ուղղութեամբ ընդունող դարձնում:

3. Աղօթքը մտքի խօսքն է առ Աստուած. արդ, ի՞նչ կարգաւորութեամբ պէտք է միտքը կանգնի Աստուծոյ դիմաց, որպէսզի իր Արարչի առջեւ զօրանայ հոգեւորի մէջ եւ զրուցի Նրա հետ առանց միջնորդի:

---

1 *Հայրաբանական ժառանգութեան մէջ այս նշանաւոր գործը դարերով վերագրուել է սբ Նեղոս Սինայեցուն, որի անունով էլ հրատարակել ենք առաջին աշխարհաբար թարգմանութիւնը (Գանձասար Ա, 1991 թ.): Սակայն այսօր հայրաբանների մեծ մասը, յենուելով Ի. Հաուսհերի մատենագիտական հետազօտութիւնների վրայ, ընդունում է, որ այս գործի հեղինակը սբ Եւագր Պոնտացին է: Ներկայացուող թարգմանութիւնը առաջին հրատարակութեան վերանայուած տարբերակն է:*

2 *θυμίαμα [Բ Օր. Լ Դ 10]*

3 *λίβανος [Ղեւ. Բ 1, Բ 16, Ելք Կ 6, Մատթ. Լ 11]*

4 *κασία [Ելք Լ 24]*

5 *όνυξ [Ելք Լ 34, Սիր. Ի Դ 18]*

6 *στάκτη [Ծն. Լէ 24, Սաղ. Խ Դ 9]*

7 *Անձ (ψυχή) – բանական հոգի, շունչ*

4. Եթէ Մովսէսին, որ փորձեց [մօտենալ] երկրաւոր մորենուն, արգելուեց, քանի դեռ կօշիկները չէր հանել ոտքերից, ինչպէ՞ս ես դու կամենում տեսնել Նրան, Ով վեր է բոլոր մտքերից ու զգայութիւններից, եւ զրուցել Նրա հետ՝ չհրաժարուելով բոլոր ախտաւոր խորհուրդներից:

5. Նախ աղօթի՛ր արտասուք ստանալու համար, որպէսզի սուգի միջոցով կակղեցնես անձիդ մէջ ներգոյացած խստութիւնը եւ, խոստովանելով անձիդ անօրէնութիւնը քո Տիրոջը, Նրանից թողութիւն ստանաս:

6. Ամէն խնդրանքից առաջ յաջողութեան համար քեզ պէտք կը լինի արտասուք, քանզի քո Տէրը շատ է ցանկանում արտասուալից աղօթք ընդունել քեզանից:

7. Թէկուզ արտասուքի աղբիւր ունենաս աղօթքի ժամանակ, մի՛ հպարտացիր քո ներսում՝ որպէս թէ առաւել ես շատերից, քանզի աղօթքի օգնականութեան շնորհը Տիրոջից է, որպէսզի յօժարութեամբ խոստովանես քո մեղքերը եւ արտասուքի միջոցով հաշտեցնես Աստծուն:

8. Արդ՝ արտասուքով սրբուելով՝ այլեւս մի՛ վերադարձիր դէպի ախտը, որպէսզի շնորհներ Տուողին աւելի չբարկացնես, քանզի շատերն արտասուեցին իրենց մեղքերի համար եւ դարձեալ մոռացան արտասուքը եւ, վաստակից մոլորուած, խոտորուեցին ուղղութիւնից:

9. Կանգնի՛ր տաժանաբար[8] եւ արտասուի՛ր պնդութեամբ եւ կը հեռացնես հոգեկան խորհուրդների այցերը, քանզի խոովեցնում եւ աղմուկով են լցնում քեզ, որպէսզի ստիպեն քեզ լքել այդ պնդութիւնը:

10. Երբ դեւերը տեսնում են, որ դու ճշմարտապէս ցանկանում ես աղօթել, այնժամ առաջադրում են իբրեւ թէ կարեւոր ինչ-որ խորհուրդներ, իսկ քիչ անց քեզանից վերցնում են նրանց յիշողութիւնը՝ միտքը պահելով նրանց որոնման մէջ, իսկ [միտքը], չգտնելով, յոյժ հոգէ անում եւ տրտմում: Եւ երբ մարդը կանգնում է աղօթքի, յիշեցնում են նրան այն, ինչ փնտրում էր, եւ որի յիշողութիւնը կորցրեց, որպէսզի, նրանց ծանրութեան տակ կորացնելով, կորստեան մատնեն ներպտղական[9] աղօթքը:

---

8 Տաժանաբար – մեծ աշխատութեամբ, տառապանքով, աննկուն

9 Ներպտղական (ἐγκαρπος) – պտղաբեր, բեղմնաւոր, բարեբեր

11. Ջանա՛ աղօթքի ժամանակ միտքը խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամէն տեսակ արկածներից, որպէսզի [աղօթքը] ընդունելի լինի:

12. Երբ հանդիպի քեզ փորձութիւն, հակառակաբանութիւն կամ գրգռութիւն՝ դիմակցողին հատուցելու, բարկանալու կամ անհեթեթ խօսքեր գոչելու համար, յիշի՛ր Տիրոջն ուղղուող աղօթքը, եւ, ըստ դրա իրաւունքի, բարի յիշատակով կը լռի քո մէջ եղած անկարգ շարժումը:

13. Ինչ որ վրէժխնդրութեան նպատակով անես քո եղբօրը, որ զրկեց քեզ, այդ ամէնը բարի չի լինի քեզ համար աղօթքի ժամանակ:

14. Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան եւ սիրոյ բխումն է:

15. Աղօթքը խնդութեան, խաղաղութեան եւ գոհութեան [բխումն է] դէպի լաւագոյնը:

16. Աղօթքը տրտմութեան, տարակուսանքների եւ վշտերի հրաժարադեղ ու սփոփանք է:

17. Գնա վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ, վերցնելով խաչը, ուրացի՛ր անձդ եւ աշխարհը [Մատթ. ԺԹ 21, ԺԶ 24], որպէսզի կարողանաս անզբաղ աղօթել:

18. Եթէ կամենում ես գովելի կերպով աղօթել, միշտ ուրացի՛ր անձդ եւ, աղօթքի համար բազում նեղութիւններ կրելով, ստուգապէ՛ս իմաստասիրիր:

19. Ինչի համար տառապանքների համբերես եւ միամիտ խորհուրդներով իմաստասիրես այն, նրա պտուղը աղօթքի ժամանակ կը գտնես:

20. Ցանկանո՞ւմ ես աղօթել ինչպէս պէտք է. մի՛ տրտմեցրու որեւէ մէկին, ապա թէ ոչ՝ ունայն կը լինեն քո վաստակը եւ այս ընթացքը:

21. «Թո՛ղ,— ասում է,— քո ընծան սեղանի առաջ, գնա նախ հաշտուի՛ր քո եղբօր հետ» [Մատթ. Ե 24] եւ ապա կը դաս անխռով կ՚աղօթես, քանզի ոխակալութիւնը տխրեցնում է մտաւոր[10] *հոգին եւ խաւարեցնում աղօթքի դիտաւորութիւնը:*

---

10 Մտաւոր (νοερός, νοητός) – իմանալի, խոհական, ներքին, հոգեւոր

22. Ովքեր տրտմութիւն եւ ոխակալութիւն են կուտակում իրենց հոգում եւ կարծում, թէ աղօթում են, նման են նրանց, ովքեր ջուր են չափում եւ ծակ կարասի մէջ լցնում:

23. Եթէ լինես համբերող, հեզ եւ երկայնամիտ, քո աղօթքը միշտ կը պտղաբերի:

24. Երբ աղօթում ես ինչպէս պէտք է, լինում են նաեւ այնպիսի մտքեր, որ կարծում ես, թէ իրաւացի է, որ ներքաշուես բարկութեան մէջ, սակայն հեռացրո՛ւ քեզանից, քանզի իրաւացի չես ընկերոջ նկատմամբ, եւ եթէ քննես, կը գտնես, որ պէտք է առանց բարկութեան տրամադրուել գործերին. ուստի ամէն կերպ ջանա՛ չգոչել որեւէ զայրալից խօսք:

25. Զգո՛յշ եղիր. միգուցէ, կարծելով բժշկել ուրիշներին, քեզ անբժշկելի դարձնես Տիրոջ առաջ եւ խափանես քո աղօթքը:

26. Ճգնելով բարկութեան դէմ՝ Տիրոջից խնամք ձեռք կը բերես, իմաստուն կ՚երեւաս մարդկանց մէջ եւ առ Աստուած աղօթողների հետ կը լինես:

27. Զայրոյթի դէմ բարկութեամբ եւ ոչ թէ համբերութեամբ սպառազինուելը աւելի է նիւթում զայրոյթ եւ այսպիսով խռովեցնում է իմանալի [աչքը][11] եւ ապականում սուրբ աղօթքի կարգաւորութիւնը:

28. Մի՛ աղօթիր միայն արտաքին ձեւերով, այլ ուղղիր քո միտքը դէպի հոգեւոր աղօթքի զգայութիւնը:

29. Երբեմն միանգամից ես աղօթում, երբեմն էլ խիստ չարչարուելով էլ չես հասնում նպատակին, որպէսզի է՛լ աւելի հայցես եւ առաւե՛լ անկորուստ պահես առաքինութիւնները:

30. Հէնց որ հրեշտակը յայտնւում է, մեզանից հեռու են քշւում բոլոր նրանք, ովքեր մարտնչում են մեզ հետ, եւ միտքն ապահովութեան մէջ է լինում՝ մեծ ողջամտութեամբ աղօթելով: Երբեմն էլ սովորական մարտից տատանուելով՝ միտքը պայքարի մէջ է յայտնւում եւ նրան թոյլ չի տրւում վեր հայել, քանզի նախապէս որսուել է պէս-պէս ախտերով[12]. սակայն եթէ թախանձագին հայցի, կը գտնի, եւ եթէ ուժգին բախի, կը բացուի նրա առաջ [Մատթ. Է 8]:

---

11 Աչք (οφταλμός) – այստեղ՝ հոգեւոր տեսողութեան աչք

12 Ախտ – կիրք, մոլութիւն

31. Մի՛ աղօթիր, որ քո կամքը կատարուի, քանզի այն ոչ [միշտ] է համաձայն Աստուծոյ կամքին, այլ աղօթիր մանաւանդ այնպէս, ինչպէս սովորեցիր՝ ասելով. «Քո կա՛մքը թող լինի իմ մէջ, որ սրբուեմ բոլոր ախտերից եւ բարկութիւնից»: Այսպէ՛ս կը լինի Նրա կամքը քո մէջ, քանզի առաւել քան մեր իմանալը եւ խնդրելն է կամենում եւ իմանում բարին մեզ համար [Եփ. Գ 20]:

32. Շատ անգամ աղօթելով խնդրեցի ինձ համար այն, ինչ աւելի լաւ էի համարում, եւ յամառում էի խնդրուածի համար՝ Աստուծոյ կամքը զուր տեղը հարկադրելով եւ չթողնելով Նրան, որ ինչպէս գիտի օգտակարը, այնպէս տնօրինի: Սակայն երբ ստանում էի կամեցածս, յոյժ տխրում էի, քանզի չխնդրեցի, որ Աստուծոյ կամքը լինի, եւ իմ խնդրածն այնպիսին չէր, ինչպիսին կարծում էի:

33. Ի՞նչն է բարի, եթէ ոչ՝ Աստուած: Ուրեմն Նրան յանձնենք մեզ վերաբերող ամէն ինչ. եւ բարի կը լինի մեզ համար, քանզի բարերար Աստուած բարիքներ տուող է:

34. Մի՛ խնդրիր Աստծուց նոյն ժամին հաւաստիանալ խնդրուածի մէջ, քանի որ [Նա] կամենում է, որ քո աղօթքներն աւելի խնամքով հնազանդուեն. քանզի ի՞նչ կայ աւելի բարձր, եթէ ոչ՝ Աստուծոյ հետ զրուցելը եւ Նրան զուգագոյ[13] անճառելիներին հաղորդուելը:

35. Անզբաղ աղօթելը մտքի ծայրագոյն վիճակն է, որը միշտ աստուածայինը խոկալն է:

36. Աղօթքը մտքի համբարձուելն է երկրային իրողութիւններից առ Աստուած:

37. Եթէ փափագում ես աղօթել, հրաժարուի՛ր ամէն ինչից, որպէսզի միայն այն շահես:

38. Աղօթիր նախ ախտերից սրբուելու, երկրորդ՝ անգիտութիւնից եւ մոռացումից փրկուելու, երրորդ՝ բոլոր փորձութիւններից եւ ծուլութիւնից [ազատուելու]:

39. Աղօթքիդ ժամանակ միայն Աստուծոյ սրբութիւնը, արդարութիւնը եւ արքայութի՛ւնը խնդրիր, ինչպէս նաեւ՝ առաքինութեան ողջ վարքը, եւ մնացածն էլ կը տրուի քեզ [Մատթ. Զ 33]:

40. Իրաւացի է ոչ միայն սեփական անձի սրբութեան համար աղօթել, այլեւ բոլոր ցեղակիցների՝ միշտ հրեշտակների օրինակին նմանուելու համար:

---

13 Զուգագոյ – համագոյ, էակից

41. Զգո՛յշ եղիր, երբ Աստուծոյ առաջ աղօթում ես. միգուցէ գովեստից պատրուած[14] ես եւ ճեպում ես դէպի ստորին ակնկալիքը՝ աղօթքի մէջ յարատեւելը որպէս պատրուակ գործածելով ի վնաս քո հոգու:

42. Թէ՛ եղբայրների հետ, թէ՛ առանձին աղօթելիս ջանա մաքուր աղօթել ոչ միայն ձեւով, այլեւ զգացմունքով:

43. Աղօթքի զգացմունքը երկիւղի, զղջման, հոգեւորի անձկութեան եւ յանցանքներն անմռունչ հեծութեամբ պատմելու համադրութիւնն է:

44. Եթէ աղօթքի ժամանակ քո միտքն այս ու այն կողմ է թափառում, ապա դեռեւս չես իմացել, թէ ինչպէս են միայնակեցաբար աղօթում, այլ աշխարհականի պէս արտաքին բնակատեղիդ ես գեղեցկացնում:

45. Աղօթքի կանգնելով՝ քո յիշողութիւնը զգուշութեա՛մբ պահիր. միգուցէ քո առջեւ բերի իրենը: Այլ թող [միտքդ] յորդորի քեզ քո առջեւ եղածն իմանալու: Քանզի միտքն առ Աստուած աղօթքի ժամանակ յոյժ սովոր է առեւանգուել յիշողութիւնից:

46. Այն շեղում է քեզ կամ աղօթքի ժամանակ ինչ-որ երեւմունքներ ցոյց տալիս, նոր հոգս բերում կամ տրտմեցնողի դէմքը:

47. Յոյժ չարանախանձ է դեւը մարդու աղօթքի հանդէպ եւ բոլոր մեքենայութիւններով փորձում է ապականել աղօթքի դիտաւորութիւնը, չի դադարում յիշողութեան միջոցով իրերի մասին մտքեր շարժել եւ մարմնի միջոցով ամէն տեսակ ախտեր գրգռել, որպէսզի խափանի բարու ընթացքը եւ առ Աստուած վերելքը:

48. Երբ դժնդակ դեւը բազում բաներ անելով չի կարողանում ջանացողի աղօթքի փոյթը խափանել, դոյզն-ինչ թուլացնում է, ապա վրէժը հատուցում աղօթքի ժամանակ. կամ բարկութեան մէջ բորբոքելով է ապականում աղօթքը՝ իբրեւ թէ ներքաշելով իրաւացի մտածմունքների մէջ, կամ միտքը գրգռում է անասնական ցանկութիւնների միջոցով:

49. Երբ աղօթքի ես կանգնում ինչպէս հարկն է, ապա ակնկալի՛ր անհարկի բաներ եւ կանգնի՛ր քաջութեամբ՝ պահելով քո պտուղը, քանզի ի սկզբանէ կարգուեցիր սա՛ գործելու եւ պահելու [Ծն. Բ 15]:

---

14 Պատրուել – խաբուել, պատրանքների տրուել

Արդ՝ այսուհետեւ գործով վաստակածդ առանց պահպանութեան մի՛ թող, ապա թէ ոչ՝ օգուտ չես ունենայ:

50. Ամէն ճակատամարտ, որ հաւաքուած աղօթքով տեղի է ունենում մեր եւ պիղծ դեւերի միջեւ, այլ բանի համար տեղի չի ունենում, եթէ ոչ՝ հոգեւոր աղօթքի, քանզի մեծ ճակատամարտ է պէտք նրանց կործանման եւ մարդու՝ Աստուծով փրկութեան համար:

51. Ի՞նչ են կամենում դեւերը գործել մեր մէջ. որովայնամոլութիւն, պոռնկութիւն, արծաթասիրութիւն, բարկութիւն, ոխակալութիւն եւ այլ ամէն տեսակ ախտեր: Եթէ անձը սրանցով գրաւուի, չի կարողանայ արժանապէս աղօթել, քանզի երբ [հոգու] մի մասին տիրում են ախտերը, հնարաւորութիւն չեն տալիս նրան իսկապէս շարժուել հոգեւոր ջանքերի մէջ:

52. Առաքինութիւնները գործում ենք յանուն եղական[15] խօսքերի եւ սրանք էլ՝ յանուն բնաւորեալ[16] Խօսքի, իսկ Նա սովորաբար երեւում է սուրբերին աղօթքի կարգաւորութեան մէջ:

53. Աղօթքի կարգաւորութիւնը անկրքութիւնն է, որն իմաստասէր եւ հոգեւոր միտքը ծայրագոյն փափագմամբ հասցնում է իմանալի բարձրութեան:

54. Ով կամենում է ճշմարտապէս աղօթել, ոչ միայն պիտի իշխի ցանկութեան եւ սրտմտութեան[17] վրայ, այլեւ հեռացնի սրբութիւնից բոլոր ախտաւոր խորհուրդները:

55. Ով յայտնւում է անախտութեան մէջ, դեռեւս չի [նշանակում], թէ նա ճշմարտապէս է աղօթում, քանզի կարող է հանդիպել դատարկ մտքերի եւ, նրանց տեսակներով զբաղուելով, հեռանալ Աստծուց:

56. Ով սիրում է Աստծուն, Նրա հետ՝ որպէս հօր հետ, միշտ գրուցում է՝ հեռանալով բոլոր ախտաւոր խորհուրդներից դէպի հոգեւորը:

57. Երբ միտքը չի դեգերում դատարկ իրերի իմաստների մէջ, դեռեւս չի [նշանակում], որ աղօթքը տեղ է հասել, քանզի [միտքը] կարող է տեսնել իրերը եւ նրանց մասին խորհել, որոնք թէեւ դատարկ բաներ են, սակայն որպէս ինչ-որ իրերի պատկերներ որեւէ տեսքով տպաւորւում են մտքում եւ հեռացնում նրան Աստծուց:

---

15 Եղական – արարուած, արարածին բնորոշ

16 Բնաւորեալ – այստեղ՝ գոյութիւն ունեցող

17 Սրտմտութիւն – բարկութիւն, զայրոյթ, ցասում

58. Թէկուզ միտքը մարմնաւոր բնութիւնից բարձր բաները տեսնի, չի կարող կատարելապէս տեսնել Աստուծոյ տեղը, քանզի կարող է ծանօթանալ իմանալի բաներին եւ դրանցով զբաղուել:

59. Եթէ կամենում ես աղօթել, հաւատա՛, որ Աստուած կատարում է ուխտաւորի ուխտը, եւ ասա՛ Նրան. «Սո՛ւրբ թող լինի Քո անունը, Քո արքայութի՛ւնը թող գայ» [Մատթ. Զ 9–10], այսինքն՝ թող գան Սուրբ Հոգին եւ Միածին Որդին, որ հոգով եւ ճշմարտութեամբ [Յովհ. Դ 24] սրբում են մեզ:

60. Ով հոգով եւ ճշմարտութեամբ է աղօթում, նա Արարչին մեծարում է ոչ թէ երկրաւոր արարածների միջոցով, այլ փառաբանում Նրան հէնց Նրա՛ միջոցով:

61. Եթէ աստուածաբան ես, ճշմարտութե՛մբ աղօթիր, ուղղափառութե՛մբ քննիր եւ երկրպագութեամբ փառաբանութիւններ ու օրհնութի՛ւն մատուցիր Մէկ Աստուածութեանը:

62. Երբ քո միտքը բազում ցանկութիւնները մէկը միւսի յետեւից հալածում է մարմնից, եւ ամէն ինչ, որ զգայութիւններից է կամ յիշողութիւնից կամ կարծեցեալ բարուց, արտաքսւում է, այնժամ համարի՛ր, որ մերձ ես աղօթքի սահմանին:

63. Սուրբ Հոգին մեր տկարութեանը վշտակից է լինում, թէպէտեւ պղծաբարոյ ենք, սակայն գալիս է մեզ մօտ, եւ եթէ մեր միտքը լինում է ճշմարտասիրութեամբ աղօթելիս, իջնում է մեզ վրայ եւ ամբողջովին պարուրում մեզ, կործանում խորհուրդների կամ մտքերի բոլոր լեգէոնները՝ հրաւիրելով մեզ դէպի հոգեւոր սուրբ աղօթքի ցանկութիւնը:

64. Մնացած բոլորը մարմնի փոփոխութեամբ են մտքի մէջ դնում խորհուրդներ, կարծիքներ կամ պատկերներ, իսկ Աստուած սրանց հակառակն է անում՝ հէնց մտքի մէջ է հանգրուանում, նրա մէջ գիտութիւն դնում, ինչպէս կամենում է, եւ խաղաղեցնում մտքի եւ մարմնի շարժումների խռովութիւնը:

65. Ով տենչում է ճշմարիտ աղօթքը եւ տեւապէս մնում բարկութեան եւ ոխակալութեան մէջ, խելագարից չի տարբերւում, քանզի նման է նրան, ով կամենում է սրատես լինել եւ պղտորում է աչքերը լոյսի բացակայութեամբ:

66. Եթէ փափագում ես աղօթել, մի՛ գործիր այն, ինչ հակառակ է աղօթքին, որպէսզի Սուրբ Հոգին ճանապարհորդի քեզ հետ:

67. Աղօթքի ժամանակ քո ներսում Աստուածութեանը տեսք մի՛ տուր եւ թոյլ մի՛ տուր մտքիդ՝ տպաւորուելու կերպարանքներով, այլ Աննիւթին աննիւթապէ՛ս մօտեցիր եւ հասկացող կը լինես:

68. Պահի՛ր քեզ հակառակորդների որոգայթներից, քանզի պատահում է, երբ պարկեշտաբար եւ անխռով աղօթում ես, յանկարծ քեզ յայտնւում է ինչ-որ օտար եւ այլադէմ կերպարանք՝ քեզ հպարտութեան մէջ գցելու համար, որպէսզի կարծես, թէ Աստուածութիւնն է այդտեղ, եւ համոզելու, թէ Նա յանկարծակիօրէն քեզ յայտնուած քանակութիւն է. սակայն Աստուածութիւնն անքանակ է եւ անձեւ:

69. Երբ նախանձող դեւը չի կարողանում աղօթողի յիշողութիւնը գրգռել, այնժամ բռնանում է մարմնի խառնուածքի վրայ՝ ինչ-որ օտարոտի առաչօք երեւում առաջացնելով եւ կերպարանելով այն [մտքի] մէջ: Իսկ [միտքը], [պատկերներ առաջացնելու] սովորութիւն ունենալով, դիւրութեամբ զիջում է եւ, ճեպելով առ աննիւթ եւ անտեսանելի գիտութիւնը, անգիտութեամբ պատրւում է՝ ծուխը լոյսի փոխարէն ընդունելով:

70. Կանգնի՛ր պահակակէտումդ [Ամբ. Բ 1]՝ աղօթքի ժամին միտքդ մտածութիւններից պահելով եւ սեփական լռութիւնդ պահպանելով, որպէսզի Նա, Ով վշտակից է լինում տգէտներին, նաեւ քեզ մօտ գայ. եւ այնժամ կը գայ շնորհներով բարգաւաճած աղօթքի պարգեւը:

71. Չես կարող մաքուր աղօթել մարմնաւոր բաներով զբաղուելով, քանզի աղօթքը հեռացում է նիւթական մտքերից:

72. Կապուածը չի կարող ընթանալ, եւ ախտերին ծառայող միտքը չի կարող տեսնել հոգեւոր ոլորտը, քանզի ներքաշւում եւ տարուբերւում է ախտաւոր մտքերի մէջ եւ մաքուր չի մնում:

73. Երբ միտքը սրբաբար եւ անկիրք աղօթում է, այնժամ այլեւս ոչ թէ ձախ կողմից, այլ աջ կողմից են դեւերը յարձակւում եւ նրան ներկայացնում Աստուծոյ փառքը եւ զգացմունքներին հաճելի ինչ-որ կերպարանք՝ կարծել տալով, թէ կատարելապէս հասել է աղօթքի դիտաւորութեանը. մի առաքինագործ այր բացատրեց, որ սա լինում է սնափառութեան ախտից եւ այն դեւից, որ մերձենում է լսելիքի տեղին:

74. Կարծում եմ՝ դեւը, հպուելով ասուած տեղին, միտքը պարուրող լոյսը փոփոխում է, ինչպէս կամենում է: Եւ այսպէս շարժում է սնափառական ախտի խորհուրդները եւ թեթեւամտօրէն տպաւորում միտքը՝ աստուածայինի եւ էական գիտութեան կարծիք ստեղծելու համար. եւ [միտքը], վրդովուած չլինելով մարմնաւոր եւ պիղծ ախտերից, այլ

կարծելով, թէ սրբաբար կանգնած է [Աստուծոյ] առաջ, որեւէ հակառակ ներգործութիւն չի ունենում իր վրայ, ուստիեւ կարծում է, թէ աստուածային յայտնութիւն է այն, ինչը յոյժ նենգաբար լինում է նրա հետ դեւից, որը փոփոխում է մտքին լծորդուած լոյսը եւ ձեւ տալիս նրան, ինչպէս կանխապէս ասացի:

75. Աստուծոյ հրեշտակը, այցելելով, միայն խօսքով դադարեցնում է մեր մէջ հակառակորդի բոլոր ներգործութիւնները եւ շարժում մտքի լոյսը՝ անմոլար գործելու Քրիստոսի լուսաւորութեամբ:

76. Ինձ թւում է՝ «Յայտնութեան» մէջ յիշատակուած խունկը, որը հրեշտակը կրում է [Յայտ. Ը 3], որպէսզի մատուցի սուրբերի աղօթքը, հրեշտակի միջոցով ներգործուող շնորհն է, որը ներբնակեցնում է ճշմարիտ աղօթքի գիտութիւնը՝ միտքն ազատելով ամէն տեսակ սասանումներից, ձանձրութիւնից եւ լքուածութիւնից:

77. Խնկի ամանները, ասում են, սուրբերի աղօթքներն են, որ քսանչորս ծերերն են կրում [Յայտ. Ե 8]: Այդ ամանները[18] պէտք է համարել առ Աստուած սէրը[19], այսինքն՝ կատարեալ եւ հոգեւոր սէրը, որով աղօթում են հոգով եւ ճշմարտութեամբ [Յովհ. Դ 23–24]:

78. Երբ համարես, թէ աղօթելիս մեղքերիդ համար արտասուքի կարիք այլեւս չունես, իմացիր, թէ որքա՜ն հեռու ես Աստծուց, Ում հետ միշտ պէտք է լինես, եւ աւելի՛ ջերմ կ՚արտասուես:

79. Արդարեւ, իմանալով քո չափը՝ նաեւ յօժարակամօրէն պիտի սգաս՝ անձդ ողբալով, ինչպէս Եսային. ինչպէ՞ս, պիղծ լինելով եւ բնակուելով նոյնպիսի ժողովրդի մէջ, այսինքն՝ հակառակորդների, կարելի է համարձակուել զօրութիւնների Տիրոջ առաջ կանգնել [Ես. Զ 5]:

80. Եթէ ճշմարտապէս աղօթես, շատ հաւանութիւն կը գտնես, եւ հրեշտակները կը կցորդուեն քեզ, ինչպէս Դանիէլին, եւ կը լուսաբանեն քեզ գալիքը:

81. Իմացի՛ր, որ սուրբ հրեշտակներն են հրաւիրում քեզ աղօթելու եւ աջակից լինում մեզ՝ ուրախանալով սրա համար եւ աղօթելով: Իսկ եթէ ծուլանում ենք եւ ընդունում հակառակ խորհուրդներ, յոյժ զարհուրեցնում ենք նրանց, որովհետեւ նրանք մեզ համար այսչափ ջանում են, իսկ մենք նոյնիսկ մեր անձանց համար չենք կամենում աղա-

---

18 Յուն. φιάλαι (եզ. ուղիղ ձեւը՝ φιάλη)

19 Յուն. φιλία (= կապուածութիւն, մտերմութիւն, սէր)

չել Աստծուն, այլ, քամահրելով մեր սպասաւորութիւնը եւ թողնելով նրանց Տիրոջն ու Աստծուն, զրուցում ենք պիղծ դեւերի հետ:

82. Աղօթի՛ր հեզաբար ու անխռով եւ սաղմոսի՛ր իմաստասիրաբար ու բարեհունչ կերպով[20], եւ կը լինես ինչպէս բարձունքներ սլացող արծուի ձագ:

83. Սաղմոսերգութիւնը խաղաղեցնում է ախտերը եւ հանդարտեցնում մարմնի խռովքը, իսկ աղօթքը պատրաստում է միտքը կատարելու իր գործողութիւնները:

84. Աղօթքը արժանաւոր մտքին վայել գործողութիւն է, այսինքն՝ ընտիր, ստոյգ եւ պիտանի գործ:

85. Սաղմոսերգութիւնը բազմատեսակ իմաստութիւն է, իսկ աղօթքը մուտք է դէպի աննիւթական եւ աստուածային բազմատեսակ գիտութիւնը:

86. Գիտութիւնը բարի է, քանզի աջակից է աղօթքին. արթնացնելով մտքի իմանալի զօրութիւնը՝ լուսաւորում է՝ տեսնելու աստուածային դիտաւորութիւնը:

87. Եթէ երբեւէ չես ունեցել աղօթքի եւ սաղմոսերգութեան շնորհը, հնազանդուի՛ր եւ կը ստանա՛ս:

88. Ասում էր, ասում է [աւետարանիչը], նրանց այս առակը [Ղուկ. ԺԸ 1]՝ մշտապէս աղօթելու ու չձանձրանալու համար. ուրեմն դո՛ւ էլ մի ձանձրացիր եւ մի՛ տրտմիր, որ իսկոյն չստացար, քանզի յետո՛յ կը ստանաս: Որովհետեւ այդ առակի վերջում ասում է. «Թէպէտեւ Աստծուց չեմ երկնչում եւ մարդկանցից չեմ ամաչում, բայց այդ կնոջ՝ ինձ անհանգստացնելու պատճառով պիտի տեսնեմ դրա իրաւունքը»: Նոյնպէս էլ Աստուած պիտի վրէժխնդիր լինի Իրեն գիշեր-ցերեկ կանչողների համար [Ղուկ. ԺԸ 1–8]: Փութանակի քաջալերուի՛ր այսուհետեւ՝ տաժանաբար ժուժկալելով աղօթքի մէջ:

89. Մի՛ կամեցիր, որ քո [գործերը] լինեն այնպէս, ինչպէս քեզ է [ճիշտ] թւում, այլ՝ որ հաճելի լինեն Աստծուն, եւ անխռով հոգացող կը լինես քո աղօթքի մէջ:

90. Թէկուզ կարծես, թէ Աստուծոյ հետ ես, զգո՛յշ եղիր պոռնկութեան դեւից, քանզի յոյժ պատրող եւ նախանձ է եւ կամենում է աւելի սրընթաց լինել, քան քո մտքի շարժումն ու սթափութիւնը, որպէսզի

20 Գրաբ. յորջորջմամբ, յուն. εὐρύθμος

Աստծուց անջատի [միտքդ], երբ Աստուծոյ առջեւ ահով ու երկիւղով այն կանգնած է:

91. Եթէ աղօթքի համար խնամք ես տանում, անձդ պատրաստի՛ր դիւային հարուածների եւ ժուժկալութեամբ համբերի՛ր նրանց տանջանքներին, քանզի վայրենի գազանների պէս կը յարձակուեն քեզ վրայ եւ ողջ մարմինդ կը չարչարեն:

92. Պատրաստի՛ր քո անձը ինչպէս հմուտ ճգնող եւ, եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ շփոթուիր. եթէ տեսնես քեզ վրայ բարձրացած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր. եթէ տեսնես որեւէ տհաճ եւ արիւնատես կերպարանք, ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ դաւանումը, եւ դիւրութեամբ կը տեսնես քո թշնամիների կործանումը:

93. Ով տոկունութեամբ վշտեր է կրում, նաեւ խնդութիւններ կը գտնի, եւ ով համբերում է տհաճութիւնների, նա հաճելի բաներից էլ անմասն չի մնայ:

94. Զգո՛յշ եղիր, որ երբեւէ չպատրուես չար դեւերի որեւէ երեւմամբ, այլ, մտքով դիմելով աղօթքի, աղաչի՛ր Աստուն, որ եթէ Նրանից է այդ խորհուրդը, Նա՛ լուսաւորի քեզ, ապա թէ ոչ՝ մոլորեցնողին փութանակի հալածի քեզանից: Եւ քաջալերուի՛ր, քանզի շները[21] չեն մնայ, երբ դու ջերմօրէն ձեռքդ առնես Աստծուն ուղղուած պաղատանքների գաւազանը. նոյն ժամին իսկ դանահարուելով կը հալածուեն ու կը հեռանան Աստուծոյ աներեւոյթ ու անյայտ զօրութեամբ:

95. Իրաւացի կը լինի, որ նրանց նենգութիւնը չանտեսես, քանզի երբեմն դեւերը [երկու մասի] են բաժանւում, եւ երբ կարծում ես, թէ օգնութիւն ես հայցում [նրանց մի մասի դէմ], միւսները մտնում են հրեշտակների տեսքով եւ հալածում առաջիններին, որպէսզի քեզ խաբեն, եւ կարծես, թէ այդ դեւերը սուրբ հրեշտակներ են:

96. Հոգա՛ մեծ խոնարհութեան եւ արիութեան մասին, եւ դեւերի զրկանքները չեն մօտենայ քո հոգուն, եւ տանջանքները չեն մօտենայ քո յարկին, քանզի Իր հրեշտակներին պատուիրել է քեզ պահել [Սաղ. Ղ 10–11] եւ անհետացնելով կը հալածի բոլոր հակառակ գործողութիւնները:

---

21 Խօսքը դեւերի մասին է:

97. Ով հոգ է տանում մաքուր աղօթքի մասին, նա կը լսի դեւերի ճայթիւններ, թնդիւններ, ձայների խարշափներ[22] *եւ հեծեծանքներ, սակայն չի վախենայ եւ գլուխը չի կորցնի, այլ կ՚ասի Տիրոջը. «Զեմ վախենայ չարից, քանզի Դո՛ւ, Տէ՛ր, ինձ հետ ես» [Սաղ. ԻԲ 4], ինչպէս նաեւ սրանց նման աղօթքի խօսքեր:*

98. Այսպիսի փորձութիւնների ժամանակ ճշմարտապէ՛ս սգա եւ երկա՛ր աղօթիր Աստծուն:

99. Եթէ դեւերը, յանկարծակի երեւալով, սպառնան քեզ, որպէսզի զարհուրեցնեն քեզ եւ յափշտակեն միտքդ կամ գազանների պէս վնասեն մարմինդ, մի՛ սարսափիր նրանցից եւ ուշադրութիւն մի՛ դարձրու նրանց սպառնալիքներին, քանզի վախեցնելով փորձում են քեզ, թէ արդեօք ուշադրութեան կ՚արժանացնե՞ս նրանց, թէ ամբողջապէս կը քամահրես:

100. Եթէ կանգնել ես աղօթելու ամենակալ Աստուծոյ եւ Արարչի եւ բոլորի Նախախնամողի առջեւ, ինչո՞ւ ես այդպէս անասնաբար կանգնել, որ մի կողմ ես թողել Նրա անսահման երկիւղը եւ ճանճից ու մժեղից ես երկնչում: Կամ չե՞ս լսել՝ «Քո Տիրոջի՛ց երկիւղիր» [Բ Օր. Ժ 20], եւ դարձեալ՝ «Ում զօրութեան առջեւ սարսում եւ դողում են բոլորը» [Սաղ. ԼԲ 8]:

101. Ինչպէս հացն է սնում մարմինը, եւ առաքինութիւնը՝ հոգին, նոյնպէս էլ մտքի սնունդը հոգեւոր աղօթքն է:

102. Ոչ թէ փարիսեցու պէս, այլ մաքսաւորի՛ պէս աղօթիր աղօթքի տաճարում, որպէսզի դու էլ արդարանաս Աստծուց:

103. Ջանա՛ աղօթելիս ոչ ոքի չանիծել, որպէսզի այն, ինչ չինում ես, նոյնը չքանդես՝ դարչելի դարձնելով քո աղօթքը:

104. Բիւր քանքարների պարտապանը թող խրատի քեզ, որ եթէ չթողնես պարտապանին, թողութիւն չես ստանայ, քանզի «Տէրը,– ասում է,– մատնեց դահիճների ձեռքը» [Մատթ. ԺԸ 34]:

105. Աղօթելիս հեռացրո՛ւ մարմնական կարիքները, որպէսզի չլինի թէ, խայթուելով լուից, մժեղից կամ ճանճից, զրկուես մեծաշահ աղօթքից:

106. Լսեցինք, որ երբ սուրբերից մէկն աղօթքի էր կանգնում, չարը այնքան էր հակառակում, որ երբ [սուրբը] տարածում էր ձեռքերը, [չարն] առիւծի տեսք էր ստանում եւ, կանգնելով նրա դիմաց, իր

---

22 Խարշափ – սօսափիւն, խշշոց, խշխշոց

ճիրանները երկու կողմից խրում էր ջանացողի ցցուած թիկունքի մէջ՝ չուզելով անջատուել նրանից, մինչեւ ձեռքերը չիջեցնի: Իսկ սուրբը բնաւ չէր զիջում, քանի դեռ սովորական աղօթքն էր կատարում:

107. Այսպիսի բան իմացանք նաեւ Յովհաննէսի մասին, որ գուբի մէջ հանդարտում[23] *էր. նկատի ունեմ այն Յովհաննէսին, որ երիտասարդ էր տարիքով, առոյգ՝ շնորհով, կամաւորապէս միայնացած եւ անքակտելի՝ Աստուծոյ կցորդութիւնից. դեւը վիշապի տեսքով փաթաթուել էր նրան, ծամում էր նրա մարմինը եւ սաստիկ փսխում երեսին, իսկ նա իր ընթացքից ամենեւին չէր դրդւում:*

108. Ընթերցե՞լ ես արդեօք տաբենեսացի[24] *միայնակեացների վարքը: Ինչպէս պատմում են, մինչ աբբայ Թէոդորոսը խօսում էր եղբայրների հետ եւ ուսուցանում, երկու իժ եկան կանգնեցին նրա ոտքերի մօտ, իսկ նա, անխռով մնալով, դնելով ոտքը նրանց վրայ, անշարժ մնաց մինչեւ հոգեւոր խրատների ու աղօթքի աւարտը. եւ ապա ցոյց տուեց դրանք եղբայրներին եւ պատմեց այնպիսի բաներ, որ չգիտէին:*

109. Դարձեալ մէկ այլ հոգեւոր եղբօր մասին ընթերցեցինք, երբ աղօթում էր, մի իժ եկաւ մերձեցաւ նրա ոտքերին, իսկ նա չիջեցրեց ձեռքերը մինչեւ սովորական աղօթքն աւարտելը եւ բնաւ չվնասուեց, քանզի Աստծուն իրենից առաւել սիրեց:

110. Անգբօ՛ս մնա քո աղօթքի մէջ եւ միամիտ ու մաքուր խորհուրդներով ուրացի՛ր քո անձը՝ բոլոր զգայութիւններով հանդերձ:

111. Մէկ այլ սուրբի, որ անապատում առանձնացած պնդաբար աղօթում էր, երկու շաբաթ դեւերը յայտնւում էին, նրան որպէս գնդակ օդ շպրտում եւ ապա խսրի[25] *վրայ ընդունում, սակայն ամենեւին չկարողացան դոյզն-ինչ իջեցնել նրա միտքը Աստծուն ուղղուած ջերմագին աղօթքից:*

112. Մէկ այլ աստուածասէրի, որ անապատում ճանապարհորդելով աղօթքով էր զբաղուած, երկու հրեշտակներ, յայտնուելով միջօրէին, ուղեկցում էին, իսկ նա ամենեւին չնայեց նրանց, որ աւելի պա-

---

23 *Հանդարտել (ἡσυχάζω) – շաբաթանալ, խաղաղութեամբ ճգնել, անդորրի եւ առանձնութեան մէջ լինել Աստուծոյ հետ*

24 *Տաբենեսացի - Վերին Եգիպտոսի Տաբենիս (դպտ.՝ Տաբենիսի) վանքի վանական: Տաբենիսը համարւում է առաջին համայնակեցական վանքը, որ հիմնել է Պախոմիոս Մեծը:*

25 *Գրաբ. թարգմանութեան մէջ՝ լաստ. թարգմանել ենք ըստ յունարէնի՝ ψιαθος (= փսիաթ, խսիր):*

տուականից չզրկուի, քանզի յիշում էր առաքելական խօսքը, որ ասում է. «Ո՛չ հրեշտակները, ո՛չ զօրութիւնները եւ ո՛չ էլ արարածները չեն կարող մեզ բաժանել Քրիստոսի սիրուց» [Հռ. Ը 38–39]:

113. Ճշմարիտ աղօթքի միջոցով անձկալով տեսնել ամենակալ Հօր երեսը, որ երկնքում է՝ միայնակեացը նմանւում է հրեշտակներին:

114. Աղօթքի ժամանակ մի՛ ցանկացիր ընդունել որեւէ կերպարանք, ձեւ կամ գոյն:

115. Մի՛ ցանկացիր զգայապէս տեսնել հրեշտակներ, զօրութիւններ կամ Քրիստոսին, որպէսզի ամբողջովին չխելագարուես՝ հովուի փոխարէն գայլ տեսնելով եւ երկրպագելով թշնամի դեւերին:

116. Մտքի խաբէութեան սկիզբը սնափառութիւնն է, որից շարժման մէջ դրուելով՝ միտքը փորձում է ձեւով կամ կերպարանքով պարգեւել Աստուածութիւնը:

117. Ես իմը կ'ասեմ. երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին ստացել է կատարեալ եւ մաքուր անկերպութիւն:

118. Երջանիկ է այն միտքը, որ, անզբաղ աղօթելով, միշտ առաւել է մեծացնում Աստուծոյ հանդէպ հոգու փափագը:

119. Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին աննիւթական եւ մաքուր է լինում ամէն ունեցուածքից:

120. Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին կատարեալ անզգայութիւն ունի երկրի նկատմամբ:

121[26]. Երանելի է այն միայնակեացը, ով հոգեւորի մէջ իրեն բոլորից նուաստ է համարում:

122. Երանելի է այն միայնակեացը, ով բոլորի փրկութիւնը եւ զարգացումը, ինչպէս իրենը, ուրախութեամբ եւ յօժարութեամբ է տեսնում, լսում եւ խորհում:

[123[27]. Երանելի է այն միայնակեացը, ով Աստծուց յետոյ աստուած է համարում ամէն մարդու:]

124[28]. Միայնակեացը նա է, ով բոլոր չար զբաղմունքներից ազատուել է եւ մերձ է ամէն տեսակ բարու:

---

26 «Ֆիլոկալիայի» յուն. բնագրում եւ դրանից կատարուած թարգմանութիւններում սա ներկայացուած է 123-րդ համարի տակ, իսկ 123-րդը՝ 121-ի:

27 Գրաբար թարգմանութեան մէջ բացակայում էր: Աւելացրել ենք ըստ յունարէն բնագրի:

28 Այս եւ յաջորդ երկու (124–126) համարների բովանդակութիւնը, որ թարգմանուած է ըստ գրաբ. թարգմանութեան, յունարէն բնագրին չի համապա-

125[29]. Միայնակեացը նա է, ով իր անձը բոլորից անարգ է համարում եւ իր հոգին անվրէպ կը տեսնի:

126[30]. Արդ՝ այնպէ՛ս աղօթիր Տիրոջը, որ միշտ բարի գործերով զբաղուես եւ չնուազեցնես Աստուծոյ հանդէպ սէրը:

127. Ամբողջովին հեռո՛ւ մնա ստից, երդումից ու բարկութիւնից եւ աղօթե՛լ փափագիր. եւ շնորհ կը գտնես Տիրոջից:

128. Եթէ կամենում ես հոգով աղօթել, ոչ մէկի մի՛ ատիր, եւ չես ունենայ մառախուղ, որ դիմադրում է քեզ աղօթքի լուսաւորութեան ժամին:

129. Մարմնիդ կարիքները յանձնի՛ր Աստծուն, եւ յայտնի կը լինի, որ նաեւ հոգիդ ես յանձնել Աստծուն:

130. Եթէ արժանանաս խոստացուածին, կը թագաւորես. [ուստի ակնկալելով այն]՝ նմանապէս գոհութեամբ տար աղքատութեան նեղութիւնները:

131. Հրաժարուելով մի՛ անգոսնիր[31] բարեբանեալ աղքատութիւնը եւ նեղութիւնը՝ աղօթքի նիւթը:

132. Մարմնական առաքինութիւնները թող միջնորդեն քեզ համար դէպի շնչաւոր[32] [առաքինութիւնները], շնչաւորները՝ դէպի հոգեւորները, իսկ սրանք [միասին]՝ դէպի աննիւթ եւ էական գիտութիւնը:

133. Զգո՛յշ եղիր, երբ աղօթում ես խորհուրդների դէմ. եթէ հեշտութեամբ են թաքնւում, [հետամո՛ւտ եղիր], թէ ինչից սա եղաւ. միգուցէ դարանակալեն քո դէմ եւ խաբուելով անձիդ վնաս հասցնես:

134. Երբ դեւերը ներշնչում են ինչ-որ խորհուրդներ եւ ապա դրդում քեզ աղօթել նրանց դէմ կամ հակառակել, երբեմն կամովին

տասխանում: Իսկ 127 եւ 128 համարների բովանդակութիւնը ունի յունարէն բնագրից իմաստային որոշակի շեղումներ, բայց մենք դարձեալ թարգմանել ենք գրաբարեան տարբերակը: Յուն. «124. Միայնակեաց է նա, ով հեռացած է բոլորից եւ միաւորուած բոլորի հետ»:

29 Յուն. «125. Միայնակեաց է նա, ով իրեն ամէնքի հետ մէկ է համարում, քանզի փափագում է իրեն մշտապէս տեսնել իւրաքանչիւրի մէջ»:

30 Յուն. «126. Աղօթողը նա է, ով Աստծուն է նուիրաբերում իր մտքի ամէն անդրանիկ պտուղ»:

31 Անգոսնել – արհամարհել, քամահրել

32 Շնչաւոր (ψυχικός) – հոգեկան, անձնական

նահանջում են, որպէսզի պատրուեալով հպարտանաս քեզանով, թէ սուրբ աղօթքով վախեցրիր [նրանց]:

135. Եթէ աղօթում ես ընդդէմ ախտերի կամ քեզ հետ մարտնչող դեւերի, յիշի՛ր ասուածը. «Կը հալածեմ իմ թշնամիներին եւ կը հասնեմ նրանց եւ չեմ դառնայ, մինչեւ չսպառեմ նրանց» [Սաղ. ԺԷ 38–39]: Սա պատշաճ ժամին կ՚ասես՝ մեծ խոնարհութեամբ անձդ սպառազինելով հակառակորդի դէմ:

136. Մի՛ կարծիր, թէ առաքինութիւն կը ստանաս, եթէ մարմնի եւ արեան գնով նրա համար չճակատամարտես. քանզի, ըստ աստուածային առաքեալի, պէտք է մինչ ի մահ ջանասիրաբար եւ անպարսաւապէս դիմադրել մեղքերին [Եբր. ԺԲ 4]:

137. Եթէ օգուտ տաս ուրիշներին եւ վնասես ինքդ քեզ՝ արհամարհուելու դիմաց ասելով կամ գործելով ապիրատ մի բան, բարով հաւաքածը չարով կը ցրես, քանզի սա եւս չար դեւերի դիտաւորութիւնն է, ուստի պէտք է մտքով զգուշանալ:

138. Աչքդ խնամքով պահի՛ր միշտ դեւերի սադրանքների վրայ, որպէսզի հեռանաս ի կորուստ որսացող նրանց ծառայութիւնից:

139. Չար դեւերը գիշերն անձամբ են խռովեցնում հոգեւոր ուսուցչին, իսկ ցերեկը՝ մարդկանց միջոցով՝ նեղութիւնների, զրպարտութիւնների եւ վտանգների մէջ գցելով:

140. Մի՛ հրաժարուիր թափիչներից[33], քանզի թէպէտեւ կոխոտելով տրորում են եւ քաշելով քերում, սակայն սրանցով Տիրոջ մէջ աւելի է պայծառանում [քո] հոգեւոր հանդերձը:

141. Քանի որ չհրաժարուեցիր ախտերից, այլ քո միտքը հակառակ է ճշմարտութեանը եւ առաքինութեանը, քո սրտում չես գտնի անուշահոտ խունկը:

142. Աղօթել է փափագում նա, ով փոխադրուել այստեղից եւ հանապազ կենցաղավարում է երկնքում, ոչ միայն խօսքով, այլեւ հրեշտակային գործով եւ աստուածային դիտութեամբ:

143. Եթէ միայն նեղութեան մէջ ես յիշում Դատաւորին, թէ որքան ահաւոր եւ անաչառ է, ապա դեռ չես սովորել ահով ծառայել Տիրոջը եւ Նրա առաջ երկիւղով ցնծալ [Սաղ. Բ 11]: Իմացի՛ր, որ հոգեւոր ուրախութեան մէջ է՛լ առաւել ահուդողով է պէտք ծառայել Արարիչ Աստծուն:

---

33 Թափիչ (γναφεύς) – կտաւ ճերմակեցնելու միջոց՝ քերելով եւ տրորելով

144. Խելացի է այն մարդը, ով նախքան կատարեալ ապաշխարութիւնը հեռացել է[34] իր մեղքերի տրտմեցնող սուգից եւ, որպէս թէ Տիրոջից յաւիտենական հրով դատուելով, փութացել է դէպի խոստովանութիւն:

145. Ով բռնուած է մեղքերով ու բարկութեամբ եւ անպատկառօրէն համարձակւում է ձգտել դէպի աստուածային կամքի գիտութիւնը կամ աննիւթական աղօթքի աստուածային խորհուրդը, այնպիսին պիտի ընդունի առաքելական սաստը, վտանգի [զգուշացումն] ու դատապարտութիւնը, որի մասին ասւում է. «Անձը պէտք է գլուխը ծածկի» [Ա Կոր. ԺԱ 10], եւ պատկառանքով ու խոնարհութեամբ վայելչաբար աղօթի Աստծուն:

146. Ինչպէս աչքի ցաւ ունեցողին օգտակար չէ կէսօրին առանց քօղարկման երկար նայել յոյժ կիզող արեգակին, նոյնպէս էլ ախտաժէտ[35] եւ պիղծ մտքի համար ամենեւին օգտաւէտ չէ ահաւոր եւ գերազանց աղօթքի սպասաւորութիւնը, որը պէտք է կատարուի հոգով եւ ճշմարտութեամբ, այլ աւելի է շարժում Աստուծոյ ցասումը:

147. Եթէ նրան, ով ընծայով մօտեցաւ սեղանին, Անկարօտը եւ Անաչառը չընդունեց, մինչեւ չհաշտուէր իրենից տրտմած մերձաւորի հետ [Մատթ. Ե 23], ապա տես, թէ որչա՜փ զգուշութիւն եւ ընտրողութիւն է պէտք, որպէսզի իբրեւ Աստուծոյ խունկ ընդունելի լինենք իմանալի սեղանին:

148. Մի՛ ուրախացիր նիւթական իրերով եւ նրանց փառքով, ապա թէ ոչ՝ մեղաւորներն այլեւս թիկունքիդ չեն խփի, այլ երեսիդ [Սաղ. ՃԻԸ 3], որովհետեւ աղօթքի ժամին կը ծաղրեն քեզ՝ հրապուրելով եւ խաբելով անօրէն խորհուրդներով:

149. Աղօթքը, աղօթք փնտրելով, աղօթք կը գտնի[36], քանզի թէկուզ այլ բարի գործեր էլ հետեւեն, աղօթքն է, որ [կարիք ունի] զգուշութեան, ինչին եւ պէտք է միշտ ձգտել:

---

34 Ըստ յունարէնի՝ պիտի լինէր «չի հեռացել»:

35 Ախտաժէտ – ախտահար, կրքոտ

36 Գրաբարեան թարգմանիչը ձեւով շատ նման, բայց տարբեր իմաստներով յունարէն երկու բառերը (προσοχὴ՝ պրոսոխէ, եւ προσευχὴ՝ պրոսեւխէ) իբրեւ մէկ բառ է կարդացել՝ προσευχὴ, այսինքն՝ աղօթք: Ճիշտ թարգմանութիւնը պիտի լինէր. «Ուշադրութիւնը, աղօթք փնտրելով, աղօթք կը գտնի: Քանզի աղօթքն է, որ հետեւում է ուշադրութեանը, եւ ոչ թէ այլ բան, եւ հէնց նրան է պէտք միշտ ձգտել»:

150. Ինչպէս տեսողութիւնը ամենապատուականն է բոլոր զգայարանների մէջ, այնպէս էլ աղօթքը ամենաբարձրն է առաքինութիւնների մէջ:

151. Աղօթքը գովելի է ոչ թէ քանակով, այլ որակով. այս են ցոյց տալիս աղօթելու համար տաճար բարձրացածները [Գործք Գ 1], ինչպէս նաեւ՝ «Երբ աղօթքի էք կանգնում, շատախօս մի՛ եղէք» [Մատթ. Զ 7] եւ սրան յաջորդած նման խօսքերը:

152. Քանի դեռ նայում ես մարմնի համեմատութիւններին եւ քո միտքը գննում է [արտաքին] շինութեան վայելչութիւնները, ամենեւին չես տեսել աղօթքի տեղը, եւ նրա երջանիկ ճանապարհը հեռու է քեզանից:

153. Երբ, կանգնելով աղօթքի, վեր կանգնես սրանից դուրս ամէն տեսակ ուրախութիւնից, այնժամ իսկապէս ձեռք ես բերել սուրբ աղօթքը, որը կատարւում է ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

***

Աշխարհաբար թարգմանութիւնը կատարուել է «Վարք հարանց»-ում (Վենետիկ, 1855) զետեղուած բնագրից՝ յունարէն բնագրի եւ դրանից կատարուած այլալեզու թարգմանութիւնների օգնութեամբ, երբ պէտք է եղել ճշտել գրաբարեան թարգմանութեան անհարթութիւններն ու թերութիւնները: Սակայն այն դէպքում, երբ յունարէն բնագիրն ու գրաբարեան թարգմանութիւնը տարբերուել են, պահպանել ենք գրաբարեան տարբերակը՝ երբեմն ծանօթագրութեան մէջ տալով նաեւ յունարէն բնագրին համապատասխանող թարգմանութիւնը: Ենթադրւում է, որ գրաբարեան բնագրի թարգմանութիւնը յունարէնից կատարուել է Ե դարում: Ցաւօք, առայժմ չի հրատարակուել այս թարգմանութեան քննական բնագիրը, որը թերեւս շտկէր հայերէն թարգմանութեան մի շարք թերութիւններ:

ԱՂԲԻՒՆԵՐ

Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, Բ հատոր, Վենետիկ, 1855, էջ 700–716:

J-P. Migne, *Patrologiae Cursus Completus*. Series Graeca, t. 79, col. 1165–1200.

Φιλοκαλία των Ιερών Νηπτικών, Βενετία 1782, σ. 155–165.

Φιλοκαλία των Ιερών Νηπτικών, τόμος Α΄, Αθήνα 1893, σ. 102–110.

Casiday, A. M. *Evagrius Ponticus*. The Early Church Fathers. Routledge. London and New York 2006, pp. 187–201.

Творения аввы Евагрия. Аскетические и Богословские трактаты. Перевод и комментарии А. И. Сидорова — Москва, «Мартис», 1994, с. 76–93.

ՍԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՃՆԵՑԻ

Սբ Յովհաննէս Օճնեցի Իմաստասէրը ծնուել է Տաշիրքի Օճուն գիւղում՝ մօտաւորապէս է դարի կէսերին: Մանուկ հասակից սբ Յովհաննէսն աչքի է ընկել իր աստուածատուր ձիրքերով եւ առաքինասէր վարքով: Նա աշակերտել է ժամանակի նշանաւոր վարդապետներից մէկին՝ Թէոդորոս Քռթենաւոր խարազնազգեստ ճգնաւորին, որի հոգեւոր հոգածութեամբ ոչ միայն հմտացել է Աստուածաշունչ Մատեանի, իմաստասիրութեան, քերականութեան եւ հռետորութեան մէջ, այլեւ հասել ճգնաւորական-անապատական կեանքի բարձրագոյն աստիճանների՝ հետեւելով իր ուսուցչի կենցաղավարութեան նուրբ եւ գերազանց օրինակին: Յարատեւ ճգնութիւններով եւ խստամբեր կեանքով ապրող սբ Յովհաննէսն Աստծուց ստացել է մարգարէութեան եւ բժշկութեան բացառիկ շնորհներ: Իր ուսուցչի կողմից կոչուել է քահանայական աստիճանի՝ դառնալով Տիրոջ մարմնի մեղսաքաւիչ խորհուրդի ժիր սպասաւոր եւ աստուածային շնորհաբաշխութեան սրբազան անօթ: Քահանայագործութեան շրջանում ի յայտ է եկել ոչ միայն նրա հոգեւոր ճանաչողութեան եւ փորձառութեան առանձնայատուկ օժտուածութիւնը, այլեւ դրանց փոխանցման աստուածատուր կարողութիւնը. նա ունեցել է Սուրբ Գիրքը եւ աստուածաբանական գրուածքները մեկնելու եւ ուսուցանելու՝ ի վերուստ տրուած շնորհ:

Եղիա Արճիշեցի կաթողիկոսի վախճանից յետոյ (717 թ.) սբ Յովհաննէսը համազգային ընտրութեամբ դարձել է ամենայն հայոց կաթողիկոս: Այս մեծ պատմական իրադարձութեան մասին այսպէս է գրում Վարդան Արեւելցին. «Աստուծոյ խնամքի ներգործութիւնից շարժուեցին Հայաստանի բոլոր եկեղեցականների եւ աշխարհականների սրտերը՝ [Հայոց] առաքելական Աթոռի վրայ բարձրացնելու Յովհաննէսին՝ երկրորդ Ոսկեբերանին, որ հեզ էր հոգով, բարձր՝ հանճարի խօսքով, անբիծ աղաւնի էր, ճշմարիտ առաքինի, հեռու բոլոր չար գործերից, ամենավեհն էր բոլոր արեւելեանների մէջ... եւ բազում թախանձանքներով ստիպում են ամեներջանիկ Յովհաննէսին

եւ Սուրբ Հոգու կոչմամբ նստեցնում սուրբ Գրիգորի Աթոռին՝ մեծ հանդիսութեամբ եւ աշխարհակոյտ բազմութեան ներկայութեամբ»[1]: Այս աստուածապարգեւ հայրապետի օրօք հոգեւոր կեանքը մեծ ծաղկում է ապրել. բարեկարգուել են եկեղեցական տօները, մշակուել է եկեղեցական կանոնագիրքը, բազմաթիւ եկեղեցիներ են կառուցուել, սուր պայքար է ծաւալուել աղանդաւորութեան դէմ, իր վերջնական բիւրեղացմանն է հասել հայ քրիստոսաբանական միտքը: Նրա հայրապետութեան շրջանում գումարուել են 720 թ. Դուինի Զ եւ 726 թ. Մանազկերտի նշանաւոր ժողովները: Եկեղեցական-կազմակերպչական բուռն գործունէութիւնը զուգորդուել է աստուածային նշաններով եւ բժշկութիւններով: Նրա սրբութեան եւ հրաշագործութիւնների համբաւը տարածուել է Հայաստանի սահմաններից դուրս, եւ սուրբ հայրապետի նկատմամբ յարգանքը առիթ է հանդիսացել, որ Հայաստանը զերծ մնայ մի շարք աւերիչ արշաւանքներից: Որքան մեծացել է նրա համբաւը, այնքան աւելի է սուրբի սրտում բորբոքուել մարդկանցից հեռանալու եւ ճգնաւորական կեանքով ապրելու փափագը: 728 թ. սբ Յովհաննէսն իր փոխարէն կաթողիկոսական գահին է բազմեցրել Դաւիթ Արամոնեցուն, իսկ ինքն առանձնացել՝ ճգնելու հայրենի գիւղից ոչ հեռու: Իր հետագայ կեանքն անցկացրել է խստագոյն ճգնութիւնների եւ յարատեւ աղօթքի մէջ: Այս ճգնութեան տարիներին տեղի են ունեցել մեծամեծ հրաշքներ, որոնք նկարագրւում են նրա վարքի մէջ: Նրա հանգստարանը ցայսօր մեծ եւ հրաշագործ սրբավայր է:

Սբ Յովհաննէս Օձնեցուց մեզ հասած գրաւոր ժառանգութիւնը մեծ չէ ծաւալով, սակայն նրանից պահպանուած իւրաքանչիւր նշխար մեծ արժէք է ներկայացնում հայ աստուածաբանական մտքի ուսումնասիրութեան համար: Նրա անունով մեզ են հասել հետեւեալ երկերը[2].

---

1 Վարդան Արեւելցի, Ճառք, Ներբողեանք, Երեւան 2000, էջ 354

2 Երկերի ցանկը ներկայացուած է ըստ Նորայր եպս. Պողարեանի (Նորայր եպս. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 98–101):

1. Ատենաբանութիւն եւ կանոնք, ԼԲ, ներկայացուած Դուինի ժողովին.— Յովհաննու Իմաստասիրի Աւաճնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833 (= Մատ.), էջ 1–33.
2. Ընդդէմ պաւղիկեանց.— Մատ. էջ 33–47.
3. Ընդդէմ երեւութականաց.— Մատ. էջ 48–80. ձեռ. ՍՅ N 1009, էջ 3–51.
4. Յաղագս Կարգաց Եկեղեցւոյ.— Մատ. էջ 81–106.
5. Հատուածք բանից ի Հաւաքմանց յաղագս կարգաց Եկեղեցւոյ.— Մատ. էջ 109–114.
6. Շարականք Աւագ տօնից.— Ա. Դաւթի մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբօր. Բ. Ստեփանոսի Նախավկային. Գ. Պետրոսի եւ Պօղոսի առաքելոցն. Դ. Որդւոցն Որոտման.
7. Կանոնագիրք Հայոց (խմբագրել է բոլոր կանոնախմբերը՝ սկզբում նախաբան եւ համառօտ գլխակարգութիւն զետեղելով: Յիշատակարանը տես Մատ. էջ 115–116):

Վերագրելի եւ երկբայական գործեր

1. Հիմնարկէք եկեղեցւոյ.— Մատ., էջ 119–122.
2. Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ.— Մատ., էջ 123–129.
3. Յաղագս Եկեղեցւոյ.— Մատ., էջ 130–144.
4. Սակս ժողովոցն որ եղեն ի Հայս.— Գիրք թղթոց (Թիֆլիս, 1901), էջ 220–233.
5. Ընդդէմ այնոցիկ որք զԽորհուրդն խմորով եւ ջրով առնեն.— Գիրք թղթոց, էջ 234–238.
6. Խոստովանութիւն անչարժ յուսոյ... եւ ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս.— Արարատ, 1896, էջ 192–9 (ըստ Ե. Դուրեանի՝ անվաւեր (Նախատարերք, 1915, էջ 93).
7. Վասն մարմնաւորութեան Տեառն.— հրատ. Հ. Ն. Ակինեան, Յուշարձան, Վիեննա, 1911, 340–344 (անվաւեր).
8. Թուղթ առ Աթանաս պատրիարքն Ասորւոց (որպէս նախաբան Խոսրովիկի կողմից նրան ուղղուած թղթի).— Գ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ (Վաղարշապատ, 1899), էջ 97–100.
9. Ի գիտութիւն պատուիրանացն Տեառն զոր սուրբ հարքն եդին.— «Նաեւ ես զձեզ աղաչեմ մի՛ նոյն աւրինակաւ գնալ...», ձեռ. ՍՅ N 1303 (1297–1307 թթ.), էջ 387–419 (թերի):

Սբ Յովհաննէս Օձնեցու ամենանշանաւոր եւ մեծածաւալ աշխատութիւնը «Ընդդէմ երեւութականների» ճառն է: Գրութեան ստոյգ թուականը յայտնի չէ: Այս գործի ստեղծման առիթ է հանդիսացել այդ ժամանակ Հայաստանում աշխուժացած «երեւութականութիւնը» (դոկետիզմը), որի դէմ սուր պայքար է ծաւալել Հայ Եկեղեցին: Երեւութականութիւնը դեռեւս Ա դարից սկիզբ առած հերետիկոսական ուսմունք է, ըստ որի՝ Քրիստոսի մարդեղութիւնը եւ չարչարանքներն իրական չեն, այլ երեւութական եւ թուացեալ: Այս ուսմունքի հիմքում ընկած են մի շարք հեթանոսական պատկերացումներ Աստուծոյ եւ նիւթական աշխարհի մասին: Երեւութականութիւնը յատկապէս արմատացել է գնոստիկների քրիստոսաբանական հայեացքների մէջ: Ըստ երեւութականների՝ Քրիստոս իրականում չի խաչուել, այլ հրաշքով ազատուել է, իսկ Նրա փոխարէն խաչուել է Յուդա Իսկարիովտացին կամ Սիմոն Կիւրենացին:

Աւելի ուշ շրջանում երեւութականութիւնը հանդէս է եկել որպէս մարդաբանական առնուազուութիւն (մինիմալիզմ) քրիստոսաբանութեան մէջ: Աստուածաբանական մտքի պատմութեան մէջ Տիրոջ մարդեղութեան որեւէ թերի կամ ոչ իրական խոստովանութիւն անխուսափելիօրէն յանգեցրել է երեւութական ծայրայեղութիւնների, որոնց վառ օրինակներից է Եւտիքէսի կեղծ ուսմունքը:

Զ–Ը դդ. երեւութականութիւնը յատկապէս աշխուժացել է Յուլիանոս Հալիկառնասցու անապականութեան վարդապետութեան ծայրայեղ հետեւորդների կամ յուլիանոսականների շնորհիւ: Պէտք է նկատի ունենալ, որ Հայ Եկեղեցու հայրերը վիճել են ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղ հետեւորդների հետ: Յամենայն դէպս Յուլիանոսի գրուածքներում չկայ այն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսել են նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ-որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի»: Յուլիանոսի հետեւորդներն աւելի հեռու են գնացել, նրանց անուանել են «ֆիտարդոկետներ» (անապական-երեւութականներ) եւ «ֆանտազիստներ». այս անունները լաւագոյնս ցոյց են տալիս նրանց մտածելակերպի մէջ բոյն դրած երեւութականութիւնը: Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներից ոմանք համարել են, որ աստուածմարդկային միութեան մէջ պայծառակերպուած եւ աստուածացած մարդե-

ղութիւնը չի կարելի անուանել «արարչական». այսպէս է առաջացել «անարարչականների» աղանդը:

Յուլիանոսի ծայրայեղ հետեւորդներ (երեւութականներ) են յայտնուել նաեւ Հայաստանում: Դատելով նրանց դէմ ծաւալուած պայքարի չափերից՝ «երեւութականութիւնը» բաւականին խոր արմատներ էր գցել հայկական միջավայրում: «Երեւութականութիւնը» հայոց պատմութեան մէջ յիշատակւում է նաեւ «Մայրագոմեցւոյ աղանդ» անունով, եւ սա կապուած է Սարգիս Մայրագոմեցու անուան հետ: Մայրագոմեցու հետեւորդներին կամ հայ երեւութականներին սուր քննադատութեան է ենթարկել Թէոդորոս Քռթենաւոր խարազնագգեստ ճգնաւոր վարդապետն իր «Ընդդէմ մայրագումացւոցն» գրուածքում: Երեւութականների դէմ պայքարը յաջողութեամբ շարունակուել եւ իր գաղափարական ամբողջականութեանն է հասել սբ Յովհաննէս Օձնեցու եւ մեծ գիտնական վարդապետ Խոսրովիկ Թարգմանչի աշխատանքների շնորհիւ:

Սբ Յովհան Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառն առանցքային նշանակութիւն ունի ոչ միայն հակաաղանդաւորական պայքարի տեսանկիւնից, այլեւ հայ աստուածաբանական մտքի կարեւորագոյն սկզբնաղբիւրներից է: Հայ քրիստոսաբանական մտքի մի շարք առանձնայատկութիւններ բացայայտուած են հանճարեղ խորութեամբ: Ակնյայտ է սբ Բարսեղ Կեսարացու եւ սբ Գրիգոր Աստուածաբանի ազդեցութիւնը, որոնց յաճախ վկայակոչում է: Լայնօրէն գործածում է արտաքին իմաստասիրական կաղապարներ: Ճառն ունի գեղեցիկ հռետորական ոճ, որը, սակայն, զերծ չէ խրթնաբանութիւններից, ինչը հետեւանք է յայտնութենական ճշմարտութիւնները բառային կերպերով ներկայացնելու դժուարութեան:

«Ընդդէմ երեւութականաց» ճառի ներկայացուող թարգմանութիւնը կատարուած է ըստ Վենետիկի 1807 (աշխատ. Մ. Աւգերեանի) եւ 1833 թթ. հրատարակութիւնների:

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ

ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆՆԵՐԻ

Ա. Ինձ համար յոյժ տենչալի էր եւ փափագելի, որ ո՛չ ուրիշներն ինձ, ո՛չ էլ ես ուրիշներին թշնամի չլինեմ, այլ, ըստ առաքելական հրամանի, ամէն ժամ հետամուտ լինեմ բարի բաների՝ միմեանց եւ ամէնքի հանդէպ [Ա Թես. Ե 15]՝ ամբողջ սրտով փնտրելով խաղաղութիւն բոլոր մարդկանց նկատմամբ [Հռոմ. ԺԲ 12], որպէսզի դրանով սիրոյ եւ խաղաղութեան Աստծուն ջանայինք հաւանեցնել մեր մէջ բնակուելու: Բայց քանի որ ահա այժմ մարդիկ, վերստին վերցնելով սպանութեան գործիքները, որ ի սկզբանէ հրաման ստացանք մի կողմ դնել, պատերազմում են միմեանց դէմ, եւ Քրիստոսի անդամների մէկ Գլխի փոխարէն շատ գլուխներ ու ցեղապետեր են տեղ գրաւել, ապա անհրաժեշտ է, որ մենք ընտրութիւն կատարենք՝ ունենալու միայն մէկ զօրագլուխ եւ վերակացու մեր կեանքին, եւ Նրան ոչ միայն Աստուած ենք կոչում, այլեւ գրում ենք Նրա մասին եւ Նրա անունով յորդորում [Ես. ԽԴ 5], Նրա համար ահա ատում ենք եւ այն, ինչ Նա է ատում. եւ ատենք դրանցից կատարելագոյնը՝ ատելութիւնը [Սաղմ. ՃԼԸ 21–22]:

Բ. Նաեւ ասենք նրանց. «Զէ՛ք ապրելու, քանի որ Տիրոջ անունով սուտ խօսեցիք» [Երեմ. ԻԸ 16]՝ ըստ մարգարէի խօսքի: Եւ ո՞ր սուտն է աւելի չար, քան Քրիստոսին մարմնով եկած չխոստովանելը. այդպիսիներին Մեծն Յովհաննէսը կոչում է «մոլորեցուցիչ» եւ «նեռ» [Ա Յովհ. Դ 3]: Քանզի նրանք, ում մասին է խօսքս, այնքան են տկարացնում ու նուաղեցնում Քրիստոսի մարմնի մասին խորհրդածութիւններն ու խօսքերը, որ մինչեւ իսկ աչքի երեւոյթ են համարում մարմնացեալ Բանին, որքան հնարաւոր է հասկանալ

նրանց խօսքերի իմաստից: Քանզի Քրիստոսի մէջ բոլոր մարմնաւոր կրքերը[1] յանձն չեն առնում կոչել մարմնաւոր կամ մարմնով, «որպէսզի,— ասում են,— մէկ Քրիստոսի մէջ երկու բնութիւնների ակնարկութիւն չանենք, այլ ինքն իսկ Բանն Աստուած էր,— ասում են,— որ անցնում էր երկուսի միջով էլ՝ մարդկայինի եւ աստուածայինի»:

Գ. Զարմանում եմ այսպիսի կեղակարծ եւ անհաստատ խոստովանութեան վրայ: Եթէ Քրիստոս կամենում էր անմարմնապէս կրել մարմնական [կրքերը], էլ ինչո՞ւ մարմնացաւ Կոյսից՝ յղութեան իննամսեայ ժամկէտով, եւ ծնուելով՝ յայտնուեց որպէս մանուկ: «Կը գտնէք,— ասում է,— մի մանուկ՝ խանձարուրի մէջ փաթաթուած եւ դրուած մսուրի մէջ» [Ղուկ. Բ 12], եւ՝ «ըստ մարմնի՝ Դաւթի սերնդից» [Հռոմ. Ա 3], եւ՝ «որոնցից եւ Քրիստոս է ըստ մարմնի» [Հռոմ. Թ 5], եւ՝ «Մեծ է աստուածպաշտութեան խորհուրդը, որ յայտնուեց մարմնով» [Ա Տիմ. Գ 16], եւ՝ «Քրիստոսի չարչարուելը մարմնով» [Ա Պետ. Դ 1], եւ՝ «Թէպէտեւ մեռաւ մարմնով, բայց կենդանի է հոգով» [Ա Պետ. Գ 18]: Սակայն ակամայ կուրութիւնը ցանկանում է տեսնել անտեսանելին, իսկ կամաւոր կուրութիւնը ջանում է չտեսնել տեսանելին:

Դ. Այլեւ ասում են. «Կոյսից չմարմնացաւ, այլ կոյսի մէջ», որպէսզի, յիրաւի «կոյսից» ասելով, մեր բնութիւնը չյիշեցնեն եւ չներմուծեն: Իսկ ասելով «կոյսի մէջ»՝ «ուրեմն Ինքը՝ Բանն Աստուած է,— ասում են,— մարմնացած լինում Կոյսի արգանդում»: Հարցնում եմ ձեզ. մարմնանալը ըստ բնութեա՞ն էք վերագրում Բանին, թէ՞ ըստ մեզանից [վերցրածն][2] Իրեն միաւորելու: Եթէ այս բնութիւնն ընդունեց Իր [բնութեան] փոխարէն, ապա թողեց այն [բնութիւնը], որն ունէր. ուրեմն ընդունայն է եւ մեր փրկութեան յոյսը: Բայց, կարծում եմ, ձեր միտքն ուրիշ բան է երկնում՝ այդպէս կեղծաւորութիւն անելով: Իսկ ի՞նչ ես անելու հրեշտակապետի խօսքը. «Նա, Ով ծնուելու է,— ասում է,— քեզանից» [Ղուկ. Ա 35] եւ ոչ թէ «քո մէջ», եւ թէ՝ «Աստուած ուղարկեց Իր որդուն, Որը

1 Մարդկային կրքերը լինում են մեղանչական (անգոսնելի, պարսաւելի) եւ անմեղ (անանգոսնելի, անպարսաւելի): Քրիստոս կրել է միայն անմեղ կրքերը (օրինակ՝ քաղցը, ծարաւը, յոգնութիւնը, տրտմութիւնը, քունը եւն):

2 Նկատի ունի մարդկային բնութիւնը:

ծնուեց կնոջից» [Գաղ. Դ 4], եւ թէ՝ «Առաքուեց Աստուած Աստծուց եւ հոգի ու մարմին առաւ Կոյսից»[3], եւ թէ՝ «Քրիստոս Կոյսից է. կանա՛յք, կո՛յս եղէք»[4], եւ թէ՝ «Ծնուեց սուրբ Կոյս Մարիամից»[5]: Գիտեմ, որ լսում ես այս խօսքերն ու չես հնազանդւում, որպէսզի կորստեան մատնուես՝ հայրերին[6] անհնազանդ որդիդ:

Ե. Իսկ եթէ տարակուսանքի երկիւղից է ձեր թերախօսութիւնը, ապա նմանւում էք նրանց, ովքեր, սրի ահից փախչելով, մեռնում են գահավէժ լինելով: Նրանց պէս եւ դուք, վախենալով ասել «երկու բնութիւնից», փախչում ընկնում էք Պանդորոսի յիմարութեան մէջ, որն ասում էր, թէ «Բանը փոխուել է մարմնի ու ոսկորի»: Որովհետեւ եթէ հոգեւոր աչքով չնայէք Աւետարանի՝ «Բանը մարմին եղաւ» խօսքին [Յովհ. Ա 14], բնաւ չէք կարող խուսափել վերոյիշեալ հայհոյութիւնից:

Զ. Ըստ նոյն օրինակի՝ մէկ բնութիւն ասելիս, եթէ չասէք ինչպէս հարկն է՝ ըստ ճշմարիտ կարգի, կը նմանուէք հայհոյութիւններ բարբառող բազում շների: Քանզի բոլոր քրիստոսասէրների մտքի աչքերը լուսաւորուած են սրա վերաբերեալ, որ մարմնի եւ Բանի բնութիւնը մէկ է ոչ ըստ բնութեան նոյնութեան, որովհետեւ երկուսն էլ մարդկային կամ երկուսն էլ աստուածային չեն: Մարմինը երկնքից իջած չէ, ինչպէս առաջին Եւտիքէսն էր ցնորաբանում, ոչ էլ Բանն Աստուած սկիզբ է առել Մարիամից, ինչպէս Փոտինոսին էր թւում, այլ անեղ Բանը, ի բնէ անեղ Հօրից իջնելով, արարչական մարմին առաւ Կոյսի արգանդից: Ուրեմն՝ մէկ բնութիւն է՝ ոչ ըստ բնութեան նոյնութեան, քանզի թէեւ ասում ենք՝ մէկ է բնութիւնը մարմնացեալ Բանի, սակայն ոչ այդպիսի խելայեղ եւ ստայօդ իմաստով, իբրեւ թէ մէկը միւսի կողմից ջնջուած է կամ հեղուկների

---

3 *«Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», ԼԸ, պարբ. 368, Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909 (=Ագաթ.), էջ 184*

4 *Սբ Գրիգոր Աստուածաբան, «Յաստուածայայտնութեան եւ ի Ծնունդն Փրկչին», ճառ ԼԸ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան («Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի Հայոց Օձնեցւոյ ճառ ընդդէմ Երեւութականաց», աշխատասիրութեամբ՝ Մ. Աւգերեանի, Վենետիկ, 1807 (=Աւգերեան), էջ 6, տողատակի ծնթ. 4)*

5 *Նոյն տեղում*

6 *Նկատի ունի Եկեղեցու հայրերին:*

պէս լուծուած են իրար մէջ, ինչից եւ ոչ մի բնութիւն չի լինում: Այլ առանց թողնելու այն, ինչ էր, դարձաւ այն, ինչ չէր: Այսպէս յայտնի դարձաւ Բարձրագոյնի խոնարհութիւնը. մնալով [Իր] բարձրութեան վրայ՝ Նոյն Ինքը խոնարհութեան մէջ յայտնուեց, ինչպէս ասում է սուրբ Գրիգորը. «Թէպէտեւ մեզ համար իջաւ անարգութեան մէջ, սակայն մնում է Իր բնութեան մէջ»[7], ինչպէս Ինքն իսկ ասաց. «Ես նոյնն եմ եւ չեմ փոփոխւում» [Մաղ. Գ 6]:

Է. Յայտնի դարձաւ նաեւ մեր մեծութիւնը. ունենալով ծառայի պատկերը՝ հագանք Երկնաւորի պատկերը [Ա Կոր. ԺԵ 49]: Փրկիչն Ինքը յայտնեց սա՝ ասելով. «Ես եկայ, որպէսզի կեանք ունենաք եւ առաւել եւս ունենաք» [Յովհ. Ժ 10]: Այսինքն՝ չեկայ վերցնելու տրուած գոյացութեան սկզբնական շնորհը, այլ Իմ առաւել աստուածանմանը հաստատելու նրա վրայ: Քանզի Ստեղծիչը չեկաւ եղծելու Իր ստեղծած արարածին, այլ վերաստեղծելու նրան եւ նորոգելու: Եւ այսպէս, առանց թողնելու իրենց գոյութիւնը, մարդկայինն ու աստուածայինն այնուհետեւ ասւում են միաւորութեամբ՝ այդպիսի գոյացութեամբ չլինելով [մինչեւ միաւորուելը]: Այսինքն՝ Բանն Աստուած, մարդ դառնալով եւ ասուելով, այսուհանդերձ մնաց Աստուած, իսկ մարդը, աստուածանալով եւ [աստուած] ասուելով, երբեք չկորցրեց իր բնութիւնը: Ինչպէս երանելի Եփրեմն է ասում. «Ոչ թէ մարմինն անմարմնութեան փոխեց, այլ Իր մարմինն ունի այնպէս, ինչպէս ծնուեց Կոյսից. եւ [այն] առաւել է, քան մերը՝ ըստ Բանն Աստուծոյ հետ միաւորութեան»[8]:

Ը. Արդ՝ պարզ է, որ անհաս միաւորութիւնն է եւ ոչ թէ բնութիւնների փոփոխումը, որ առաջնորդում է մեզ «մէկ» խոստովանել մարմնացեալ Բանի բնութիւնը: Այս է ուսուցանում նաեւ մեծահանճար Կիւրեղը՝ Ալեքսանդրիայի հայրապետը՝ ասելով. «Բանը մարմնաւոր բնութեան չվերածուեց, ոչ էլ մարմնի [բնութիւնը]՝ Բանի, այլ երկուսն էլ մնում եւ իմացւում են իւրաքանչիւրն իր բնական յատկութիւններով՝ ըստ մեր կողմից ասուած խօսքերի. Որդու բնութիւնը մէկ է ըստ անճառելի եւ անպատմելի միաւորութեան»[9]: «Իւ-

---

7 «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», Խ, պարբ. 378, Ագաթ., էջ 189

8 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

9 Թուղթ Բ Առ Սեկունդոս, «Գիրք պարապմանց սբ Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին» , Կ. Պոլիս, 1717 թ., էջ 418

բաքանչիւրն իր բնական յատկութեամբ» ասելով նկատի ունի, որ երկուսից իւրաքանչիւրը մնում է անփոփոխ՝ ինչպիսին որ էր: Իսկ գերագանց եւ սքանչելի միաւորութեան մէջ որեւէ արգելք չկայ՝ ամէն ինչ միութեամբ խոստովանել Քրիստոսի մէջ՝ մէկ դէմք, մէկ անձ եւ մէկ բնութիւն: Քանզի Նա, որ անմարմին Բանն էր Հօրից, մարմին հագաւ սուրբ Կոյս Մարիամից, այսինքն՝ մեր մարդկային բնութիւնից, որը միաւորելով իր դէմքին ու բնութեանը՝ մարմնով հանդերձ կոչւում է մէկ դէմք եւ մէկ բնութիւն: Հօրից [ծնուած] Բանը ոչ թէ անգոյ կամ առանց մտքի ու անձի եւ առանց բնութեան վերցրեց մերը կնոջից, այլ ըստ ամենայնի կատարելապէս առնելով՝ միաւորեց իր կատարելութեանը. եւ այսպէս մէկ կատարեալ է ասւում՝ մէկ կենդանութիւն եւ դէմք ունենալով: Ոչ միութեան մէջ ուրանում եմ իւրաքանչիւրի կատարելութիւնը, ոչ էլ իւրաքանչիւրի կատարելութեան պատճառով հրաժարւում եմ խոստովանել մէկ կատարելութիւնը՝ միութիւն խոստովանելով անայլայլութեան մէջ եւ անայլայլութիւն՝ միութեան մէջ:

Թ. Ապա ուրեմն Քրիստոս մէկ բնութիւն եւ մէկ դէմք ունի, եթէ հարկ է աւելի համառօտ ասել, ոչ ըստ բնութեան նոյնութեան կամ ըստ մէկանձնականութեան, քանզի այս երկուսը միասին գրեթէ զրկում են Աստծուն մարդանալուց եւ մարդուն՝ աստուածանալուց, այլ, ինչպէս բազում անգամ ասացի, ըստ Բանի՝ Իր մարմնի հետ անճառ միաւորութեան: Ինչպէս եւ սուրբ Գրիգորն է ասում. «Բնութեամբ միացաւ մարմնին եւ մարմինը միաւորեց Իր աստուածութեանը»[10]: Ահա ըստ անճառելի եւ անհասանելի միութեան եւ միաւորութեան ենք համարձակւում «մէկ» կոչել Քրիստոսի բնութիւնը եւ ո՛չ թէ որեւէ այլ կերպ: Նոյնը հաստատում է նաեւ Հռոմի երանելի Յուլիոս հայրապետը. «Երանի՜ նրան, ով ասում է, որ եղական մարմինն անեղ Աստուծոյ հետ՝ միաւորութեամբ աստուածային է եւ երկրպագելի, նաեւ երկուսը միասին մէկ անեղ Աստուած է»[11]: Հաւասարապէս երանի է տալիս երկուսին էլ՝ խոստովանելով «երկու»՝ ըստ բնութիւնների, եւ «մէկ»՝ ըստ միաւորութեան: «Մէկ» ասելով՝ չխեղաթիւրենք՝ խցանելով բնութիւնների աղբիւրները, եւ «երկու» ասելով՝ չկամենանք պատռել միաւորութեան պատմուճա-

---

10 «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի», ԼԸ, պարբ. 369, Ագաթ., էջ 185
11 Թուղթ առ Փրոստոկիոս (Աւգերեան, էջ 16, ծնթ. 2)

նը, այլ գիտենալով բարեպաշտաբար մօտենալ երկուսին էլ՝ միութեա՛մբ ճանաչենք բնութիւնները եւ բնութիւններից գնանք դէպի միաւորութիւն: Ինչպէս սքանչելի Յովհան Կոստանդնուպոլսեցին է ասում. «Խոստովանում եմ միութիւն, սակայն ոչ թէ քայքայում կամ մի բնութեան վերածումը միւսի կամ ընդհակառակը, այլ միացած՝ մէկ դարձած»[12]: Արդ՝ ինչպէս նախապէս ասացի, երեւելին եւ աներեւոյթը մէկ դարձած է կոչում ըստ միաւորութեան եւ ո՛չ ըստ համագոյութեան, որովհետեւ, իսկապէս, ինչպէ՞ս [համագոյ] կը լինեն նրանք, որոնք [այդպիսին] չեն:

Ժ. Սակայն ձեր ասած այս խօսքն էլ ենք լսում. «Աստուածային եմ մէկ բնութիւն կոչում՝ Իր իսկական բնութիւնը, որ Հօրից ունէր, որովհետեւ արարածներիցս ոչ ոք բնութիւն չի կոչւում, քանզի միայն Արարչինն է բնութիւն կոչւում, իսկ մարմինը Քրիստոսի մարմին եմ կոչում, բայց ո՛չ Քրիստոսի բնութիւն»: Փախչո՞ւմ ես բնութեան անուանումից, դրա հետ եւ՝ «երկու» ասելուց, եւ չես հասկանում, որ մարմին ասելով ներառում ես այն, ինչից փախչում ես: Ուրեմն այն, ինչով կարծում ես բարեպաշտանալ, կը դնեմ ընդդէմ քեզ: Մարմինը կոչելով Բանի մարմին եւ ասելով՝ Բանը մարմին ունի, ուրիշ ի՞նչ ես կարծում ասել, եթէ ոչ նոյնը: Եւ դարձեալ՝ «Բանը Հօրից» ասելով՝ Հօր բնութիւնը տուած կը լինես Նրան, իսկ երբ ասում ես «մարմինը մարդկանցից է», ո՞ւմ բնութիւնն ունի ըստ քեզ, եթէ ոչ՝ մարդկանց: Բայց կարծում եմ, թէ կամենում էք մարմինն էլ չհամարել Քրիստոսինը, քանզի եթէ խոստովանէիք, որ Քրիստոս ճշմարտապէս ունի մարմինը, եւ այն՝ մարդկանցից եւ մարդկային, ապա չէիք վարանի նաեւ մարդկային բնութիւն կոչել այն: Քանզի նոյնն է Քրիստոսի՝ մարդկային մարմին եւ մարդկային բնութիւն ունենալը, որովհետեւ Քրիստոս առանց միաւորութեան չի՛ կոչւում Քրիստոս Յիսուս, այլ Բանն Աստուած: Ինչպէս ասում է սուրբ Բարսեղը. «Եթէ մէկը մարմինը կոչի Բանի բնութիւն եւ Բանը՝ մարմնի բնութիւն, ապա այս խօսքը լի է ամբարշտութեամբ»[13]:

ԺԱ. Իսկ եթէ միեւնոյն Քրիստոսին խոստովանում ես երկու բնութիւններից, այսինքն՝ աստուածային եւ մարդկային, ինչո՞ւ ես

---

12 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:
13 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

վախենում ու սաստկացնում չարութիւնը եւ անշնորհք ու հայհոյական շարադրանքով պղտորում բարեպաշտների լսելիքը: Քանզի ասում ես. «Նա, որ Հօրից էացած անձ էր, անձնաւորուեց սուրբ Կոյսից, եւ Հօրից ունեցած բնութիւնը բնաւորուեց Կոյսի արգանդում»: Բայց գոհութի՛ւն Աստուծոյ, որ բացայայտում է խաւարի խորքերը եւ ցոյց տալիս մահուան ստուերները [Յոբ ԺԲ 22], քանզի թէպէտեւ շատ աշխատեցիր խաւար արահետներով ծածկել եւ թաքցնել քո մէջ հաւաքուած դառը մաղձը, [սակայն] այժմ, աստուածային հայեացքից հարկադրուած, դուրս թափեցիր [այն]: Արդ՝ Կոյսի մէջ ինչպէ՞ս անձնաւորուեց Որդու անձը. Իր բնութիւնը թողնելով՝ ա՞յլ բնութիւն դարձաւ, ինչպէս ասում է Պանդորոսը, թէ՞ Իրենը պահելով՝ առերեւութապէս միայն ձեւն Իր վրայ առաւ, առաչօք եւ սոսկ ձեւով ցոյց տալով մեր [բնութիւնը] Կոյսից, ինչպէս յիմարաբար խօսում է երկրորդ Եւտիքէսը՝[14] ասելով. «Խոստովանում եմ, որ Բանն Աստուած Կոյսի արգանդում կերպարանք ու ձեւ է առել, մարդու պատկեր ու ձեւ ընդունել, այլ ո՛չ թէ արարածական բնութիւնից որեւէ մաս խառնել Իրեն, քանզի Աստուածութիւնն անխառն է եւ անյօդ»: Տեսնո՞ւմ ես ինչպէս էք ձեր հայհոյութեամբ ձայնակցում միմեանց. դու ասում ես՝ Հօրից ծնուած Որդու անձն անձնաւորուեց Կոյսի մէջ, իսկ նա ասում է՝ Կոյսից ոչինչ չխառնեց անխառն աստուածութեանը:

ԺԲ. Իսկ եթէ Բանն Իրեն միաւորեց ո՛չ մեր անձնաւոր բնութիւնը Կոյսից, ինչպէ՞ս Ինքն Իրեն անուանեց մարդ կամ մարդու որդի: Նաեւ՝ ինչպէ՞ս, յայտնուելով որպէս մանուկ, պատուեց խանձարուրով, սնւում էր կաթով եւ հասակով աճելով՝ վեր էր ընթանում դէպի կատարելութիւն՝[15] ըստ Աթանաս Մեծի ուղղափառ դաւանութեան, [որն] ասում է. «Ըստ Իր հրամանի՝ մարդկային բնութիւնը կատարելապէս միաւորեց Իրեն, ինչպէս որ կամեցաւ. այսինքն՝ ծնուեց կնոջից, հասակով աճեց, յոգնեց, ծարաւեց, քաղ-

---

14 Երկրորդ Եւտիքէսի ինքնութեան հարցն անորոշ է: Մինչեւ Օձնեցին այս մասին հայ մատենագրութեան մէջ տեղեկութիւններ չկան, սակայն նրանից յետոյ հայ մատենագիրները կրկնում են այս վկայակոչութիւնը (Աւգերեան, էջ 8–9, տողատակի ծնթ. 2):

15 «Կատարելութիւն» ասելով՝ այստեղ սբ Յովհան Օձնեցին նկատի ունի 30 տարեկանը, որը կատարեալ հասակ է: Սա չի նշանակում, որ Յիսուս Քրիստոս մինչ այդ ունէր որեւէ մարդկային թերութիւն կամ անկատարութիւն:

ցեց, քնեց, տրտմեց, մեռաւ եւ յարութիւն առաւ»[16]*: Այս բոլորը Քրիստոսի կողմից արուած արտաքին ձեւեր ու սուտ երեւումնե՞ր են թւում քեզ, թէ՞ ճշմարտութիւն: Ուրեմն՝ եթէ ճշմարտութիւն, ինչպէս եւ է իսկ, քանզի անհնար է, որ անսուտ Աստուած ստով կեղծի Իր գործերը, ապա ինչպէ՞ս ես յանդգնում ասել, թէ Որդու անեռեւոյթ եւ անմարմին անձը, մարմնի ձեւ առնելով, անձնաւորուեց Կոյսի արգանդում, եւ թէ Հօրից առաքուած Բանն Աստուած Իրեն չմիաւորեց մեր կատարեալ բնութիւնը՝ [այն] վերցնելով կնոջից:*

ԺԴ. «Եթէ այդպէս ասենք,— ասում են,— ընդունած կը լինենք երկու դէմք եւ երկու բնութիւն»: Դարձեալ, փախչելով սնոտի երկիւղից, աւելի մեծ չարիքի մէջ ես ընկնում: Եթէ չես կամենում «մէկը» ասել «երկուսից» ըստ բնութեան, ապա շատ աւելի չարաչար կերպով՝ ըստ բնութեան ասած կը լինես «մէկ բնութիւնը»: Սակայն Բանի անմարմին աստուածային բնութիւնը, մարմնեղէն բնութիւն ընդունելով Կոյսից, միաւորեց Իրեն, որ ըստ բնութեան երկուսից է՝ աստուածային եւ մարդկային, իսկ ըստ միաւորութեան մէկ է: Քանզի եթէ հաւատքի այս երկու գեղեցիկ ոտքերի վրայ կանգնելով չհաստատուես ճշմարտութեան մէջ, դրանցից որ մէկին էլ յենուես, կաղ կը լինես ճշմարիտ խոստովանութեան մէջ, այլ [պէտք է] երկուսն ըստ իւրաքանչիւրի [յատկութեան] կատարեալ ընդունել եւ ըստ միաւորութեան՝ մէ՛կ կատարեալ, մէ՛կ դէմք եւ մէ՛կ Որդի Աստուծոյ խոստովանել, ինչպէս սուրբ Բարսեղն է ասում. «Երկու կատարեալ գոյացութիւնների միաւորութիւն»[17]*:*

ԺԴ. Սրա դէմ հակառակ կանգնելով գրեցիր դու քո շարադրանքներում՝ ասելով. «Այն բնութիւնը, որ Հօրից է, նոյնը բնաւորուել է Սուրբ Կոյսից: Եթէ մինչ այդ բնութիւնը Հօրից էր, ուրիշ ի՞նչ բնութիւն պէտք է գոյանար Կոյսի արգանդում»: Մտածի՛ր, թէ այդպէս ասելովդ որքան սաստիկ հայհոյութիւնների յորձանուտի մէջ ես ընկղմւում: Նիկիայում հաւաքուած սուրբը հայրերն ասացին. «Նոյն Հօր բնութիւնն [ունեցողը], մեր փրկութեան համար մարդանալով, ծնուեց սուրբը Կոյս Մարիամից՝ Սուրբ Հոգով»[18]*: Եւ ապա մէկ*

---

16 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

17 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914 (=ԿՀ), էջ 87

18 Հմմտ. «Հաւատամքի» համապատասխան հատուածի հետ:

առ մէկ թուարկեցին մեր բնութեան կատարելութիւնները՝ «հոգի, մարմին, միտք», եւ ասացին. «Նոյն մարմնով երկինք համբարձուեց եւ գալու է նոյն մարմնով»[19]*: Իսկ դու ասում ես. «Այն բնութիւնը, որ Հօրից է, բնաւորուեց Կոյսի արգանդում եւ այդ պատճառով կոչ-ւում է մէկ բնութիւն»: Եթէ Կոյսի արգանդում բնաւորուեց, ապա Հօրից չէր բնաւորուել: Դարձեալ՝ եթէ Կոյսի արգանդից սկսեց Հօր հետ մէկ բնութիւն լինել, ապա նախքան Կոյսի արգանդն իջնելը օտար էր Հօր բնութեանը: Եւ այդպէս բարբաջելովդ*[20] *ձայնակից ես լինում Արիոսի չարափառութեանը:*

Ժե. Դարձեալ՝ ասում ես, որ «մէկ բնութիւն»-ը ստուգապէս դէմ է «երկու բնութիւն» ասողներին: Իսկ ով «երկու բնութիւն» է ասում, նկատի ունի աստուածայինն ու մարդկայինը. դու քո «մէկն» ասելով նրանցից ո՞րը նկատի ունես կամ ո՞ր եղանակով: Ուստի այդպէս մոլորւում ես ցնորական խորհուրդներով եւ չես կարողանում գտնել Աստուծոյ ուղիղ ճանապարհը [Առակ. Բ 20]: Քանզի Բանն Աստուած ոչ թէ նախապէս գոյացրածը [վերցրեց, այլ] մարդկային բնութեամբ հանդերձ գոյութիւն առնելով Կոյսի անարատ արգանդից՝ անճառապէս միաւորեց Իր գոյութեանն ու բնութեանը: Քանզի «մարմնի բնութիւնը ճանաչեցի Բանի միաւ-որութեամբ»,— ասաց սուրբերից մէկը[21]*, եւ այսպէս է ասւում մէ՛կ դէմք եւ մէ՛կ բնութիւն մարմնացեալ Բանի: Չի ասւում ինքնին մէկ բնութիւն եւ անձ, քանզի Բանն Աստուած այն յաւիտենապէս ունէր, այլ՝ ըստ անճառ տնօրէնութեան՝ Կոյսից: Ինչպէս ասում է սուրբ Բարսեղը. «Մարիամի բնութիւնից ծնուած էութիւնը ոչ թէ բնութեամբ էր Աստուած, այլ տնօրէնութեան միաւորութեամբ, քան-զի Բանը, որ Աստուած էր Հօր բնութիւնից, Մարիամի բնութիւնից ծառայի պատկեր առաւ եւ դարձաւ նրա որովայնի պտուղը»*[22]*: Եւ այս է նրա [խօսքը]: Ապա ուրեմն՝ ոչ թէ աստուածային բնութիւ-նը բնաւորուեց Կոյսի արգանդում, ինչպէս դու ես բարբաջում,*

---

19 *Հմմտ. «Հաւատամքի» համապատասխան հատուածի հետ:*

20 *Բնագրում՝ «զաւղակատելովդ», որը չկայ ՆԲՀԼ-ում:*

21 *«Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբա-նութիւն», ԿՀ, էջ 86*

22 *«Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբա-նութիւն», ԿՀ, էջ 91*

այլ Բանն Աստուած՝ Հօրից, մարդկային բնութիւն հագաւ կնոջից: Ինչպէս ասում է նաեւ Աթանաս Մեծը. «Քանի որ մեր մարդկային բնութիւնն էր, որ պիտի ծնուէր, դրա համար էլ նրան չարչարուած է ցոյց տալիս»[23]*: Այսպիսին է հօր [խօսքը]:*

ԺԶ. Իսկ դու, որ ասում ես. «Բանը, որ Հօրից էր, ճշմարտապէս մարդ դարձաւ մարդկանցից», ինչո՞ւ ես վարանում դաւանել մարդկային բնութիւնը Քրիստոսի մէջ եւ ծռմռւում խօսքերիդ մէջ՝ ցատկոտելով մի սնոտի մտածութիւնից միւսը: Վախենում ես ասել «երկու բնութիւն». մեծ երկիւղ կայ նաեւ, երբ Քրիստոսի «մէկ բնութիւնը» արժանավայել կերպով չի խոստովանւում: Իսկ եթէ ստուգութեամբ եւ բարեպաշտօրէն հասկանաս երկուսն էլ, ոչ մի արգելք չկայ՝ «մէկն» ասելով՝ յիշելու նաեւ «երկուսիցը», եւ դարձեալ, «երկուսիցը» չմոռանալով, խոստովանելու նաեւ «մէկը»: Քանզի եւ սուրբ հայրերը, ուղղափառութեան վրայ հիմնուած հաւատով, անտարակոյս եւ աներկբայ խոհականութեամբ, այս երկուսն էլ որպէս անվրէպ զէնք կրելով իրենց վրայ, մատուցում էին ըստ անհրաժեշտութեան [եւ] մէկ առ մէկ առաջ մղելով՝ փայլատակեցնում ճշմարտութեան թշնամիների դէմ. նրա՛նց, ովքեր ըստ Եւտիքէսի կամ էլ ըստ Յուլիանոսի չարապէս ըմբռնելով էին ասում «մէկ» [եւ] իրենց երկիմաստ խօսքերով դժուարութիւններ յարուցում: Քանզի թէ՛ «մէկը», թէ՛ «երկուսը» իրար հետ միասին կ՚առաջնորդեն յոյժ ուղղափառ խորհուրդների:

ԺԷ. Ծառը պտղից է ճանաչւում [Ղուկ. Զ 44], իսկ ծաղիկն արմատից է անուն ստանում: Ծաղկի մասի՞ն ես հարցնում. արմատի անուամբ է հանդէս գալիս: Եթէ անունը վերցուի, ապա [կը վերանայ] նաեւ իմաստը, եւ ի յայտ կը բերես երկուսի՝ անուան եւ իմաստի վերացումը. [մինչդեռ] արմատը [հանդէս է գալիս] անուամբ, գոյնը՝ տեսանելիութեամբ, հոտը՝ բուրմունքով եւ համը՝ ճաշակմամբ: Նոյն օրինակով էլ թեւածելով կը բարձրանաս դէպի փրկչական մարմինը, տեսակի անուամբ մարդ կը խոստովանես Նրան՝ Յիսուս Քրիստոս ասելով. [Նրան] տեսնելու պատճառով՝ «Շօշափեցէ՛ք Ինձ եւ տեսէ՛ք, քանզի ոգին մարմին ու ոսկորներ չունի, ինչպէս Ես, որ տեսնում էք, ունեմ» [Ղուկ. ԻԴ 39], [Նրա] մարդկային կրքերի պատճառով՝ «Որովհետեւ Ինքը չարչարուեց

23 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

եւ փորձութեան մատնուեց, կարող է օգնել նաեւ փորձուողներին» [Եբր. Բ 18], Նրա՝ մեզ համար մեռնելու պատճառով՝ «Քրիստոս մեզ համար մեռաւ՝ ըստ Գրքի» [Ա Կոր. ԺԵ 3]:

ԺԸ. Ապա ուրեմն եթէ եւ այս մէկով չսթափուեցիր, մէկ առ մէկ միւսների մօտ գնալով հարցրու. եւ կը համոզուես՝ տէրունական մարմինն ասելու համագոյ եւ համաբուն մեր մարդկային բնութեանը, քանզի այսպէս երկու բնութիւնից խոստովանելով՝ Նրան կը հռչակես ե՛ւ մարդ, ե՛ւ Աստուած: Իսկ ասելով, որ Նա ըստ բնութեան «մէկ» է, ինչպէս եւ վկայում են ձեր իսկ խօսքերը, սոսկ բացարձակ անուամբ յայտնած կը լինես. [ուրեմն] ինչպէ՞ս կարող ես ասել, թէ Նա մարդ եղաւ, մեռաւ եւ [Իր] մահուամբ մեր մէջ աղբիւրացրեց անմահութեան շնորհը: Այս պատճառով սուրբ հայրերը համարձակօրէն ցոյց են տուել Քրիստոսի երկու՝ աստուածային եւ մարդկային բնութիւնների գոյութիւնը: Ասւում է «երկու բնութիւն», քանի որ Աստուած է եւ մարդ, եւ թէ՝ «բնութիւնները միացան»[24], եւ թէ՝ «Քրիստոս ստուգապէս ունէր երկու բնութիւնը»[25], եւ թէ՝ «Երկակի է Քրիստոս. մարդ էր, որ երեւում էր, եւ Աստուած էր, որ չէր երեւում»[26], եւ այլ այսպիսի [խօսքեր], որ ասուել են ուրիշների կողմից: «Երկուսից» ասելով ոչ թէ հրաժարւում էին հաստատել «մէկը», կամ էլ ընդհակառակը՝ «մէկը» խոստովանելով՝ յամառում «երկուսից» խոստովանել, այլ լուսափայլելով ուղղափառութեան այս երկու ջահերով՝ համարձակօրէն պայծառանում էին՝ ըստ բնութեան «երկու» եւ ըստ միաւորութեան «մէկ» քարոզելով Քրիստոսին, որով ցոյց էր տրւում, որ Բանն Աստուծոյ բնութիւնն անեղ է եւ Հօրից, իսկ Նրա մարմնի գոյացութիւնը՝ Կոյսից եւ եղական՝ ասելով. «Աւետարանիչների խօսքերը հաւասարապատիւ չեմ ասում, ոչ էլ նրանց արժանաւորութեան մասին ասուածները. այլ մէկը ցոյց է տալիս Աստուածութեան բարձրութիւնը, իսկ միւ-

---

24 Սբ Գրիգոր Աստուածաբան, Թուղթ Ա առ Կղեդոնիոս, ճառ ԾԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Թ «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 27, ծնթ. 2)

25 Սբ Գրիգոր Աստուածաբան, ճառ ԼԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 27, ծնթ. 2)

26 Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վնտ., 1832, էջ 52

սը՝ խոնարհուելը դէպի մեր մարդկային նուաստութիւնը»[27], եւ թէ՝ «Զարչարելի է մարմնով եւ անչարչարելի՝ Աստուածութեամբ»[28]: Սակայն սա, որ այժմ ասաց. «Աստուածութեամբ անչարչարելի է», մէկ այլ տեղում վերաձայնում է՝ «Աստուած չարչարեալ»[29]: Արդ՝ ինչպէ՞ս հասկանանք սրանք. մի՞թէ կարելի է մարտնչել սեփական վարդապետների դէմ. քա՜ւ լիցի: Այլ առաջինը խօսում է ըստ բնութեան, իսկ երկրորդը՝ ըստ Բանի միաւորութեան: Երբ ըստ միաւորութեան է խօսում, չի ուրանում ընդհանուրից իւրաքանչիւրին, եւ դարձեալ՝ ընդհանուրից իւրաքանչիւրի մասին ասուած որեւէ խօսք միութիւնը երկու միութիւնների չի բաժանում, այլ երկուսին էլ մօտենում է բարեսէր եւ բարեպաշտ կամքով՝ չարչարելին անչարչարելի խոստովանելով՝ ըստ ընդհանուր միաւորութեան, եւ ըստ բնութեան անչարչարելին բազմաչարչարելի խոստովանելով՝ ըստ միաւորութեան:

ԺԹ. Սրա նման, միւս սուրբ հայրերը եւս արձանագրեցին իրենց դաւանական խօսքերը: Երբ անհրաժեշտ էր լինում խօսել ըստ բնութեան, համարձակապէս յիշում էին երկուսից իւրաքանչիւրի առանձնայատկութիւնները. ոչ թէ մէկ Որդին երկու որդիների կամ երկու դէմքերի բաժանելու համար, այլ միայն այն էին ազդարարում, թէ ինչ [գոյացութիւններից էր միութիւնը]: Ըստ սուրբ Բարսեղի. «Յոգնեց ճամփորդութիւնից՝ մարմնի եւ ջղերի յոյժ երկար ուղեգնացութիւնից. ոչ թէ Աստուածութիւնը աշխատութեամբ չարչարուեց, այլ մարմինը, որ բնութեամբ աւելի յարմար էր՝ կրելու դիպուածները»[30]: Եւ նա, որ այժմ ըստ մարմնի բնութեան այսպէս է ասում, մէկ այլ տեղում ըստ Բանն Աստուծոյ հետ միաւորութեան այսպէս

27 Սբ Գրիգոր Նիւսացի, ճառն զոր խօսեցաւ ի ժողովոյն Կոստանդնուպոլսի, զետեղուած է սբ Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ժողովածուում (գլուխ Դ) եւ Նիւսացու յունարէն եւ լատիներէն գործերի Բ հատորում (Աւգերեան, էջ 28, ծնթ. 1)

28 Սբ Գրիգոր Աստուածաբան, Թուղթ Ա առ Կղեդոնիոս, ճառ ԾԱ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Թ «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 27, ծնթ. 2)

29 Սբ Գրիգոր Աստուածաբան, ճառ ԼԶ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան եւ գլուխ Ե «Առ որս» ժողովածուում (Աւգերեան, էջ 28, ծնթ. 3)

30 «Գոհութեան մասին» ճառից է: Տես «Գանձասար» հանդէս, Ը, էջ 242:

է արտայայտւում՝ ասելով. «Ես ասում եմ, որ մարմնի թաղումը եւ նրա զգեստը Բանինն են՝ ոչ թէ աստուածային բնութեամբ, այլ տնօրէնութեան միաւորութեամբ: Նոյնպէս եւ՝ մարդկային անձին յատուկ խօսքերը եւ չարչարանքները, տրտմութիւնն ու տագնապը, ասում եմ, որ Բանինն են՝ ոչ թէ աստուածային բնութեամբ, այլ տնօրէնութեան միաւորութեամբ»[31]*:*

Ի. Այս երկու ուղղապաշտ չաւիղներով այսպէս կարողանալով վեր ընթանալ դէպի Բանի մարմնաւորութեան խորհուրդը՝ սուրբ հայրերը արժանաւորապէս եւ պատշաճօրէն համարձակւում էին խօսել ե՛ւ բնութիւնների, ե՛ւ տնօրէնութեան միաւորութեան մասին՝ ասելով. «Քաղցեց մարմնով, ծարաւեց, յոգնեց, ննջեց: Դրանով ոչ թէ նսեմացրեց Աստուածութիւնը, այլ՝ որպէսզի ճշմարտապէս ցոյց տայ մարմնի բնութիւնը»[32]*: Եւ թէ՝ «Բանը, որ Հայր Աստծուց է, անչարչարելի է եւ անմահ. դրա համար մարմին առաւ, որպէսզի կարողանայ չարչարուել»*[33]*: Եւ թէ՝ «Աստուծոյ Միածին Որդին մեր բնութիւնը միացրեց Իր Աստուածութեանը եւ ամէն ինչ անում ու կատարում է մեր մարդկային բնութեամբ, սակայն ըստ աստուածային բնութեան անախտ է ու անկարօտ եւ լցնում ու կատարելագործում է բոլոր արարածներին»*[34]*:*

ԻԱ. Արդ՝ մէկ Քրիստոսի մասին այսպէս են անբաժանաբար վկայում բազմերջանիկ հայրերը՝ ոչ թէ մէկ Քրիստոսին երկու դէմքերի կամ երկու որդիների բաժանելու համար, քա՜ւ լիցի, այլ այստեղ կամենում են առաւել եւս հաստատել հաւատքի ճշմարտութիւնը, դրա հետ միասին նաեւ կործանել չարափառների հոյլերը, որոնք Քրիստոսի բնութիւնը «մէկ» կոչելու միջոցով ուրանում էին Նրա մարդեղութեան անսուտ խորհուրդը: [Նկատի ունեմ] վերջին Եւտիքէսին, որ «մէկ բնութիւն» [ասելով]՝ դժոխաբանում էր, թէ Քրիստոսի մարմինը Կոյսին համագոյ չէ. առաջին Եւտիքէսին, որ «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարում էր, որ Քրիստոսի մարմինը

---

31 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», ԿՀ, էջ 95

32 Վկայակոչութիւնը Սեբերիանոս Գաբաղացուց է (Աւգերեան, էջ 30, ծնթ. 1):

33 Գիրք պարապմանց սբ Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին, Կ. Պոլիս, 1717 թ., էջ 490:

34 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

երկնքից է եւ անստեղծ. Վաղենտիանոսին եւ Մանիին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ թուացեալ համարեցին Քրիստոսի յայտնութիւնը. Ապողինարին, Սոփրոնիոսին եւ Յուլիանոսին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարեցին, թէ Բանը թերի եւ անկատար է առել մեր բնութիւնը Կոյսից. Եւնոմիոսին եւ Արիոսին, որոնք «մէկ բնութիւն» ասելով՝ յայտարարեցին, թէ Բանի միաւորութիւնը մարմնի հետ [սոսկ] անտեսանելի եւ տեսանելի արարածների չարակարգութիւն է:

ԻԲ. Կարծում եմ՝ սրանցից հեռու չէ նաեւ քո ասած «մէկ բնութիւնը», որ տանջանքների վախից ընդունում ես Բանն Աստուծոյ մարմնացումը, իսկ այն, ինչից է՛ մարմինը, ուրանում ես: Ինչպէս օրինակ՝ նրանք, ովքեր թագաւորական գահոյքը համարում են պատուարժան, իսկ նիւթը, որից կերտուել է գահոյքը, արհամարհելով մի կողմ են դնում իբրեւ անարգ մի բան՝ չհասկանալով, որ առարկան այն ժամանակ է պատուում, երբ [պատիւ է] ընծայւում նրա բնութեանը: Քանզի եթէ չընծայուի նրան, որից վերցուեց, չի երեւայ այն փառքի առաւելութիւնը, որին հասաւ: Եւ դարձեալ՝ եթէ նոյն էութեամբ չհասնի փառքի մեծութեան, չի կոչուի «փառաւորեալ», այլ «փոփոխեալ», քանզի փառքն ու փառաւորելը մէկը միւսի նկատմամբ տարբերութիւնն են յայտնում եւ ո՛չ նոյնութիւնը:

ԻԳ. Արդ՝ կամ եկ խոստովանի՛ր, որ վերոյիշեալ չարափառներից մէկի պէս ես, եւ կ՝իմանանք, որ յոյժ մարդատեաց ես՝ ուրանալով Աստուծոյ մարդասիրութիւնը, քանզի Նա, Իր վրայ առնելով մեր բնութիւնը, մեծարեց [այն], իսկ դու չխոստովանելովդ անարգում ես: Ուրեմն էլ ինչո՞ւ քեզ հետ վիճենք՝ իբրեւ հարազատի. դու, որ ախորժում ես հեթանոսաբար մեկուսանալ մեզանից, քանի որ պատուիրան ստացանք չգնալ հեթանոսների ճանապարհով եւ սամարացիների քաղաքները չմտնել [Մատթ. Ժ 5]: Իսկ եթէ այն խիստ չարաչար արմատներից բուսած աւելի չար մի ճիւղ չես, կը խոստովանես մեզ հետ, մանաւանդ՝ Ընդհանրական Կաթողիկէ Եկեղեցու հետ, մէկ եւ նոյն Քրիստոսին է՛ւ Աստուած, է՛ւ մարդ, որպէսզի ճանաչուի մարմնացեալ Բանն Աստուծոյ անբաժանելի եւ անշփոթ միութիւնը: Ինչո՞ւ ես նմանւում զառիվայր թափուող ջրի, որ անկարող է յետ դառնալու, կամ ամպերից պոկուած կարկուտի, որ աւելի մօտ է հալչելու, քան թէ դարձեալ միանալու ամպերին:

Առանց նենգութեան ընդունի՛ր գրուածները եւ ճշմարի՛տ համարիր Փրկչի կատարած գործերը: Սուտ համարիր քո սին եւ սխալական խորհուրդները եւ ո՛չ թէ աստուածային անսուտ Գիրքը: Եթէ Գրքով պիտի գայթակղուես, գործի՛ն հաւատա, քանզի խօսքի ապացոյցները գործերն են, ինչպէս վկայում է Տէրը. «Գոնէ գործերի համար,— ասում է,— հաւատացէք» [Յովհ. Ժ 38]:

Ի Դ. Միմեանցից խիստ տարբեր բաներն իրար հետ մի՛ համեմատիր, քանի որ այնտեղ ներգործութիւնն առանց մարմնի է եւ միայն ձեւով, իսկ այստեղ՝ մարմնով եւ ճշմարտութեամբ: Կերակրուեց Աբրահամի մօտ [Ծն. ԺԸ 8], ճաշակեց նաեւ աշակերտների հետ [Գործ. Ժ 41]. այնտեղ՝ անմարմին, այստեղ՝ մարմնաւորուած, որից պարզ է, որ այն մէկը գործի նմանութիւնն էր, իսկ այս մէկը գործն է ճշմարտութեամբ: Եթէ գործը գործի կողքին դնելով հաւասարեցնես, հաւասարուած կը լինեն նաեւ յայտնութիւնները՝ նախորդն ու այս վերջինը: Նոյնին կը հետեւեն ծնունդը, հասակով աճելը, մահը, թաղումը, յարութիւնը, համբարձումը, որոնց միջով Ինքը՝ որպէս գլուխ, անցնելով, Իր մարմնի՝ Եկեղեցու համար պատշաճ բոլոր անդամներին հրաւիրելով կանչում է Իր յետեւից. իսկ մեր յոյսի բոլոր ակնկալութիւններն, ըստ քեզ, ստուեր են ու ցնո՞ւք: Սրանից Մանին ու Մարկիոնն իսկ կը կենդանանան այդքան տարիներ անց՝ քեզ իրենց գաւակը դարձած տեսնելով: Մարգարէն ասում է. «Կորստեան ես մատնում սուտ խօսողներին» [Սաղմ. Ե 7]. եթէ խօսքը կորստեան է մատնում, առաւել եւս գործն է պատճառ դառնում կորստեան: «Զէ՞ որ մեր հայր Աբրահամը գործերով արդարացաւ»,— ասում է Մեծն Յակոբոսը [Յակ. Բ 21]: Ինչո՞ւ ես փորձում սուտն ապացուցել եւ ո՛չ թէ հաւատքը՝ խօսքերով եւ գործերով՝ կամենալով լինել սատանայ հօր անդրանիկ որդին [Յովհ. Ը 44]:

Ի Ե. Ինչո՞ւ ես ջանում անունը փոխել եւ այլ անուն դնել, որից հեռու է ասուածը, կամ էլ խօսքերն անպատշաճ կերպով այլափոխել: Յանձնի՛ր քեզ խօսքի բուն խորհուրդին եւ ո՛չ թէ խօսքի խորհուրդը հարկադրաբար չեղիր քո կողմը: Հաստատի՛ր այն խօսքերը, որոնք Բանն Աստուած հաստատեց եւ ընտրեց, եւ մի՛ արդարացրու շատերից յանդիմանուած եւ դատապարտուած խօսքերդ: Ճանաչի՛ր՝ այդ [խօսքերից] ո՛րն է ասուած «ըստ բնութեան» եւ ո՛րը պէտք է հասկանալ «ըստ միաւորութեան»: Այսպէս

աւելի յստակօրէն կը կարողանաս հասկանալ գրուած իւրաքանչիւր խօսքի իմաստը:

ԻԶ. Քանզի աւետարանական եւ առաքելական խօսքերից շատերը ծածուկ եւ դժուարիմաց են, որոնց եթէ խաւարամիտ մէկը փորձի նայել իր հոգու աչքերով, նոյն այդ ճշմարիտ խօսքերը նրա համար մոլորութեան պատճառ կը դառնան: Ինչպէս այն յիմարամիտ Ապողինարը, առաքեալից լսելով «Որովհետեւ մանուկները հաղորդակից եղան արեան եւ մարմնի, Ինքն էլ մերձաւորութեամբ մասնակից եղաւ նրանց» [խօսքը] [Եբր. Բ 14], սրանից, ուրեմն, [հետեւութիւն անելով], մարմնից կտրեց-հանեց մարդկային բանական հոգին՝ ասելով. «Աստուածային էր՝ հոգեւորութեամբ հոգիացած»[35]: Ուրիշ մէկն էլ, սխալ հասկանալով, մոլորուեց Փրկչի ասած մէկ այլ խօսքով. «Ոչ ոք երկինք չբարձրացաւ, բացի Նրանից, Ով իջաւ երկնքից՝ Մարդու Որդուց, որ երկնքում է» [Յովհ. Գ 13]. առաջին Եւտիքէսի [մասին է խօսքը], որ Քրիստոսի մարմինը համարեց երկնքից բերուած, աստուածային բնութիւնից հնարուած եւ Կոյսի միջով, ինչպէս խողովակով, անցկացուած: Զհասկացաւ, որ երկրաւորը երկնաւորի հետ միաւորուելու պատճառով էր այս [խօսքն] այսպէս ասում[36]: Ուրեմն՝ աստուածային գրուածքների մէջ խօսք կայ, որ ասուած է եւ հասկացւում է ըստ բնութեան, եւ կայ՝ որ ըստ տնօրինական միաւորութեան: Երբ Փրկիչն ասաց Փիլիպպոսին. «Ով Ինձ տեսաւ, Իմ Հօրը տեսաւ» [Յովհ. ԺԴ 9], եթէ այս «տեսնելը» չհասկանաս որպէս Հօր բնութեան տեսութիւն, որ ունի Որդին, ապա ոչ թէ միայն որդեհայրութիւն ներմուծած կը լինես, այլեւ մարմին էլ կը շնորհես Հօրը, ինչպէս եւ Որդին ունի: Նոյնպէս եւ, երբ ասաց, թէ՝ «Ես եւ Հայրս մէկ ենք» [Յովհ. Ժ 30], «մէկ» լինելն ըստ դէմքի եւ անձի չասաց, այլ ըստ բնութեան:

ԻԷ. Որին դու, կուրացած մտքով նայելով, չկարողացար զանազանել, այլ, յանդիմանելով նախնիների աստուածխօսութիւնը, գրեցիր եւ ասացիր. «Ի՞նչ կարիք կայ թուելու յոյն իմաստուններին, որոնք ասում են՝ Երրորդութիւնը դէմքերով եւ անձերով բաժա-

---

35 «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն», ԿՀ, էջ 84

36 Միտքը սբ Գրիգոր Աստուածաբանի՝ Կղեդոնին ուղղուած Ա թղթից է (Աւգերեան, էջ 36, ծնթ. 4):

նուած է, իսկ աստուածութեամբ՝ միաւորուած»: Այստեղից յայտնի դարձրիր, որ դու այդ երկուսից ոչ մէկն էլ չես ընդունում. եւ այդպէս, ըստ դէմքերի չբաժանելով, դառնում ես սաբելացի[37]*, իսկ ըստ բնութեան չմիաւորելով՝ արիոսական*[38]*: Եթէ ըստ դէմքերի չի բաժանւում, անձերն ինչպէ՞ս են կարողանում անփոփոխ մնալ, ինչի մասին Մեծն Գրիգոր Նազիանզացին ասում է. «Երեք անձերը պէտք չէ մէկի մէջ ժողովել կամ միմեանցից լուծարել կամ խառնակել»*[39]*: Եւ դարձեալ՝ «Եթէ Աստուածութեամբ չես միաւորում, ապա ուրեմն օտար բնութիւն ես ներմուծում եւ զուգահաւասար անձերը անհաւասար համարում»*[40]*: Արդ՝ այսպէս խաւարի միջով փորձում ես հասնել ճշմարտագոյն լոյսին եւ քո մտքի կուրութիւնը վերագրում ես սուրբ հայրերին՝ կոչելով նրանց «յոյն իմաստուններ». եւ սա ի յանդիմանութիւն քեզ ասացիր, քանզի եթէ դու գիտութիւնից լինէիր, այլ գիտուններին չէիր անուանարկի: Իսկ քանի որ ընդունեցիր նրանց իմաստուն լինելը, նրանց իմաստնաբար ասածներն ինչպէ՞ս չես ընդունում: Բայց, քե՛զ եմ հարցնում, եթէ ճշմարիտը կ՚ասես. ովքե՞ր են արդեօք այդ «յոյն իմաստունները», քանզի եթէ անգամ դու կամենաս ստել, նրանց մասին քո ամբաստանութիւնը մեզ յանուանէ ցոյց է տալիս այդ խօսքերի հեղինակներին*[41]*: Ասացիր՝ դէմքով եւ անձով բաժանում են, իսկ Աստուածութեամբ միաւորում: Սա սուրբ հայրերն են ասել. «Ո՛չ [անձերից] իւրաքանչիւրի առանձնայատկութիւններն են վերանում, ո՛չ էլ [մէկ] անձի առանձնայատկութիւնները երեւում են միւսի մէջ»*[42]*: Նաեւ՝ «Բաժանւում է անբաժանաբար եւ միաւորւում զատուելով՝ ո՛չ միաւորութիւնը խառնակութեան վերածելով, ո՛չ էլ բաժանութիւնը՝ օտարութեան»*[43]*: Նաեւ՝ «Պէտք է պահել մէկ*

---

37 *Այսինքն՝ Սաբելիոսի հերետիկոսութեան հետեւորդ:*

38 *Այսինքն՝ Արիոսի հերետիկոսութեան հետեւորդ:*

39 *Սբ Գրիգոր Աստուածաբան, «Յորժամ տեսանեմ այժմ», ԿՀ էջ 38: Ըստ Աւգերեանի՝ Ճառն ԻԹ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 38, ծնթ. 1)*

40 *Սբ Գրիգոր Աստուածաբան, Ճառն ԻԹ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 38, ծնթ. 1)*

41 *Խօսքը, ամենայն հաւանականութեամբ, կապադովկեան հայրերի՝ սբ Բարսեղ Կեսարացու, սբ Գրիգոր Աստուածաբանի եւ սբ Գրիգոր Նիւսացու մասին է:*

42 *Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:*

43 *Սբ Գրիգոր Աստուածաբան, «Դարձեալ իմ Յիսուս», ԿՀ, էջ 33*

Աստուածութիւնը եւ խոստովանել երեք դէմքերը կամ երեք անձերը՝ իւրաքանչիւրն իր առանձնայատկութեամբ»[44]*: Նաեւ՝ «Անուններեր անգոյ չեն եւ մէկ դէմքի տարանուանումներ չեն, այլապէս մեր [հաւատքի] աւանդն անուամբ է եւ ո՛չ իրապէս»*[45]*:*

ԻԸ. Սա է երանելի հայրերի աստուածաբանական դաւանութիւնը, որոնց խօսքերի համար դու նրանց հերձուածողներ ես անուանում եւ չես երկնչում ու զարհուրում օձի պէս թունալից լեզուդ ուղղել ընդդէմ նրանց, ովքեր եղան Բանն Աստուծոյ գործակիցներն ու սպասաւորները՝ անսասան հաւատքով հաստատելով Նրա Եկեղեցին: Եւ մի՞թէ զարմանալի է, որ չես պատկառում աստուածանման մարդկանցից, դո՛ւ, որ նոյն ինքն Վեհագոյն Բնութեան դէմ անգամ յանդգնեցիր ուղղել քո հայհոյական խօսքը՝ չխոստովանելով մէկ անեղ բնութեան մէջ երեք դէմք եւ երեք անձ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Այսպէս [Աստուածային Անձերի] միմեանց նկատմամբ պատճառականութեան եւ անունների ժխտմամբ, ժխտւում է նաեւ անձերից իւրաքանչիւրի գոյութիւնը, ինչից հետեւում է, որ Աստուած չկայ, եւ դառնում ես անաստուած, դո՛ւ, որ այդպէս յանդուգն ես աստուածտեսութեան մէջ, որ ճառում ես իմաստասէրի պէս եւ ասում, թէ՝ «Նոյն անձը Հօրից անձնաւորուեց սուրբ Կոյսի մէջ»:

ԻԹ. Երբ «աստուածաբանելով» համարում էիր Նրան «Հօր հետ», չչնորհեցիր Նրան դէմքի կատարելութիւնը, իսկ այժմ վախենալով, որ միգուցէ ստիպուած լինես խոստովանել Նրա՝ Կոյսից, այսինքն՝ մարդկային բնութիւնից, լինելը եւ ընդունել Նրա կատարեալ մարդկային գոյութիւնը, Նրան անուանում ես «անձ Հօրից»: Իսկ եթէ ասում ես «անձ», ինչո՞ւ ես հրաժարւում «դէմք» կոչել Նրան. թէ՞ քո արհեստանոցում ուսանեցիր, որ «անձն» այլ է, «դէմքն»՝ այլ: Որոնք թէեւ երբեմն զանազանւում են տարբեր տեսակների մէջ, սակայն երբ գործածւում են միեւնոյն իրողութեան նկատմամբ, երկուսն էլ նոյն իմաստն են ունենում: Քանզի որեւէ [անձնաւոր] մէկի մասին ասւում է, որ թէ՛ «անձ», թէ՛ «դէմք» ունի, եւ սա ընդհանրապէս վերաբերում է մարմնաւոր եւ անմարմին տեսակներին, քանզի իւրաքանչիւրը, որ առանձնաւորուած է տեսակի մէջ, կոչւում է «դէմք», ինչպէս մարդկանցից Պօղոսը, մասնաւորուելով,

---

44 Սբ Գրիգոր Աստուածաբան, «Յորժամ տեսանեմ այժմ», ԿՀ, էջ 38
45 Սբ Գրիգոր Աստուածաբան, «Արձակէ ինձ լեզու», ԿՀ, էջ 37

կոչւում է «դէմք», իսկ անմարմիններից Գաբրիէլը, առանձնացուելով, կոչւում է «դէմք»: Այսպէս եւ՝ Անեղ Էութիւնից՝ Հայրը կամ Որդին կամ Հոգին, առանձին յիշուելով, կոչւում են «դէմք»: Եւ Նրանց մէջ դէմքն առանձնացուելով այսպէս է ճանաչւում. Հայրը՝ Ծնող, Որդին՝ Ծնունդ, իսկ Հոգին՝ Ելում: Եւ նոյն սա է անձը, քանզի ինչով սահմանւում է դէմքը, նոյնը կը լինի նաեւ նրա անձը:

Լ. Ուրեմն դու ինչպէ՞ս մոլորուեցիր՝ կա՛մ ասելով՝ Եռանձնեայ զօրութիւնը նոյնիսկ դէմք ու անձ չունի, կա՛մ էլ մարտնչելով Լիբէացու[46] պէս եւ չարաչար ասելով մէկ դէմք եւ անձ[47]՝ երեք դէմքերի ու անձերի փոխարէն: Եւ խիստ զարմացած եմ՝ քո մէջ տեսնելով այս տարօրինակ կերպարը, քանզի ուրիշները սատանայական ճախակողմեան ուսմունքներից քաղեցին մէկական պտուղ, իսկ դու, յոյժ ագահելով, փափագեցիր առանց բացառութեան ունենալ դրանք բոլորը, այնպէս որ քո հանդէպ իրաւացի է մարգարէի ասածը. «Աչքերդ բարձրացրո՛ւ, ուղիղ դէպի առաջ նայի՛ր եւ տե՛ս, որտե՞ղ չթաւալուեցիր քո ճանապարհին» [Երեմ. Գ 2] եւ այլն: Ամէն ինչի մէջ անամօթութիւն անո՛ղդ՝ ե՛ւ դաւանանքում, ե՛ւ [եկեղեցական] կարգերում, ե՛ւ աստուածպաշտութեան մէջ, մերկացար այս ամէնից եւ փոխարէնը լցրիր հայհոյութեան չափը: Հնարաւոր է հաշուել գետի մանրաքարերը, ծովի աւազն ու անձրեւի կաթիլները [Սիր. Ա 2], սակայն ո՛չ՝ քո հնարած նորագիւտ խօսքերն ու գործերը: Խորհեցիր դէմ ելնել աստուածային Գրքին. ասուած է. «Երկիրը պիտի լցուի Տիրոջ գիտութեամբ, ինչպէս ջրերի բազմութիւնը լցնում է ծովը» [Ես. ԺԱ 9]: Իսկ դու ծովացրիր քո խաբէական խօսքերը եւ նորամուծութիւնները ամէն օր, ժամ ու ամիս: Ո՞ւր տանենք քեզանից մեզ վրայ հասած աղէտները, ո՞ւմ պատմենք չարիքները կամ ո՞ւմ գուժենք կաթից զրկուածիդ եւ ստինքից զատուածիդ մասին [Ես. ԻԸ 9], որ բերանդ դրեցիր երկնքում եւ լեզուովդ պատում ես երկիրը [Սաղմ. ՀԲ 9], որ ձգտում ես մեզանից մերժել մեր Աստուծոյ օրէնքը [Ես. Լ 11] եւ փոխարէնը հրամցնել մեզ մոլորեցուցիչ այլ [վարդապետութիւն] [Ես. Լ 10], որ քրտնակոխ ձիու նման չես կասեցնում քո ընթացքը [Երեմ. Ը 6] «եւ չես ասում, թէ՝ հիմայ

---

46 Սաբելիոս Լիբէացու մասին է:

47 Ըստ Սաբելիոսի հերետիկոսութեան՝ Աստուածային միեւնոյն անձը երբեմն հանդէս է գալիս որպէս Հայր, երբեմն՝ որպէս Որդի, երբեմն՝ որպէս Հոգի:

դադարեցնեմ. որովհետեւ հարկադրաբար էիր անում այդ» [Ես. ԾԷ 10]: Որ յոյժ պնդում ես «մէկ բնութիւնը», սակայն ասածիդ իմաստը յանգում է վաղենտինոսականների եւ մանիքէականների զառանցանքներին, իսկ երբ ասում է «երկու բնութիւններից», ոչ միայն լսել չես կարողանում, այլեւ աւելի վատթար մի օրինակ ես բերում. ինչպիսին քո աստուածխօսութիւնն է, այնպիսին եւ քո օրինակն է: Եւ վախենալով, թէ միգուցէ ստիպուած լինես ասելու, որ Փրկչի մարմինը մեր՝ մարդկային բնութիւնից է, առհասարակ բոլոր էակներից մերժեցիր բնութեան անունը՝ ասելով. «Բնութիւն է կոչւում միայն աստուածայինը, որը եւ նրանից ստեղծուած բոլոր արարածների բնութիւնն է»: Որպէսզի, ըստ քեզ, գոնէ երկուսից մէկը յարմարուի. կա՛մ Արարչին դասել արարածների հետ, որն անաստուածութիւն է, կա՛մ աստուածութիւն վերագրել արարածներին, որը բազմաստուածութիւն է, եւ երկուսն էլ անաստուածութիւն են: Այս է քո պանծալի «աստուածաբանութիւնը», բայց մանաւանդ՝ յիմարութեանդ ապացոյցը, որ նիւթը կոչում ես յաւերժակից արարչական զօրութեանը եւ ո՛չ թէ Աստծուց ստեղծուած խոստովանում:

ԼԱ. Սակայն լինելով լկտի եւ չար՝ ամբարշտութեանդ յագուրդ տալ չգիտես, ինչպէս ասում է մարգարէն [Ես. ԾԶ 11]: Երբ տեսնում ես Քրիստոսի մարդկային կրքերի մասին որեւէ խօսք, առանց երկիւղի յանդգնում ես այդ վկայող խօսքերը ջնջել գրուածքից՝ ասելով. «Որոմնացան մշակներն են սերմանել այդ» [Մատթ. ԺԳ 24–30, 38–43]: Ասածդ ոչ միայն անընդունելի է, այլեւ անստոյգ: Եթէ չար մշակները կարողանային բարի սերմի վրայ որոմ ցանել, ապա բոլոր եկեղեցականներն առհասարակ, որոնք Քրիստոսի հօտի վերակացուներն են, կը վերանային, եւ Քրիստոսի կողմից մէկ գաւթում հաւաքուած հօտն անտերունչ կը թափառէր. չէր լինի մէկը, որ տեսնէր, ոչ էլ մէկը, որ լսէր: Բայց արդ՝ եթէ կային ոմանք, առաւել եւս՝ շատերը՝ կենդանի մնացած, ինչպէ՞ս կարող էին նրանք, որ հալածում էին մոլորութիւն սովորեցնողներին, իրենց ուղիղ վարդապետութիւնը նրանց ձեռքը յանձնել թիւրելու համար: Կամ՝ մեզանից նրանք, որոնց Սուրբ Հոգին արթնացրեց՝ դառնալու լուսաւորիչներ նախորդ [Լուսաւորչից] յետոյ, նկատի ունեմ երկու սուրբերին՝ Սահակին ու Մաշտոցին, եւ նրանց բոլոր ընտրեալ աշակերտներին ու օգնականներին՝ Եղնիկին եւ միւսներին, կամ՝ ով նրանց պէս էր եւ գրեթէ նրանց ժամանակակիցը՝ մեծ

իմաստասէր եւ տիեզերահռչակ տէր Մովսէսը, որոնք միաժամանակ հմուտ թարգմանիչներ էին եւ ուղղափառներ. մի՞թէ անգամ նրանք չկարողացան ճանաչել օտարոտի խառնուրդը եւ անխարդախ կաթի փոխարէն պղտոր մոլորութիւննե՞ր ջամբեցին իրենց ազգակիցներին, [կամ մի՞թէ] վարձկաններ էին եւ ոչ հովիւներ, եւ չհոգացի՞ն գառների համար: «[Մի՞թէ] ձեզանից հնչեց Աստուծոյ խօսքը, կամ Աւետարանը միայն ձե՞զ հասաւ» [Ա Կոր. Ժ Դ 36]: Ուրեմն դո՞ւք էք բարի հովիւը [Յովհ. Ժ 11], որը Քրիստոս ասաց Իր մասին, եւ ամէնքը, որ ձեզանից առաջ էին, գող էին ու աւազա՞կ [Յովհ. Ժ 8]: Ասում էք. «Աստուածսիրութեամբ եւ ուսումնատենչութեամբ համակուած՝ ինչ գրքեր որ կարողացան գտնել, թարգմանեցին եւ բերեցին»: Ի՞նչ էք ասում. աստուածասէր լինելով՝ աստուածատեցութեա՞ն գործեր էին յանդգնում գործել, կամ ուսումնատենչութեամբ ջանալով՝ դէպի յիմարութի՞ւն էին գնում՝ դառը համարելով քաղցր եւ խաւարը՝ լո՞յս, փոխելով չարը բարու հետ եւ իրենց վրայ հրաւիրելով մարգարէական վայասացութի՞ւնը [Ես. Ե 20]: Այսպէս սնոտիները սնոտիներով էք պատում, ինչպէս ասում էր Յոբը [Յոբ ԻԷ 12] եւ ձեր յոյսը ստութեան վրայ դնելով՝ ստութեամբ էլ պիտի ծածկուէք, ինչպէս ասում էր Եսային [Ես. ԻԸ 15]: Լսում ես Յիսուսի քաղցելու մասին Աւետարաններում գրուածը [Մատթ. Դ 2] եւ այնուհետեւ լողում ես շաղակրատանքի հոսանքների մէջ՝ ասելով. «Նրա քաղցը հասկանում եմ, ինչպէս Աստծուն է վայել քաղցելը, այլ ոչ թէ նմանեցնում եմ մարդկային օրինակին, քանզի մարդու քաղցելն ապականութիւն է գործում, եւ նոյն ինքը քաղցը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ապականութիւն»:

ԼԲ. Իսկ ես ամենեւին չեմ հասկանում նախայաւիտենական՝ աստուածային [բնութիւնը] կարիքի հարկադրութեան ներքոյ, քանի որ եթէ այդպէս լինէր, ստիպուած կը լինէինք մարմին կոչել նաեւ պարզ եւ անմարմին զօրութիւնը: Եւ ըստ ձեզ՝ սուտ է «մարդ եղաւ կնոջից» խօսքը, այլ իր մարմինը երկնքից բերելով՝ ցոյց տուեց մեզ: Սրանով գնում հանդիպում ես նրան, ում միշտ փնտրում ես՝ առասպելաբան Եւտիքէսին, ինչպէս մի մոլորուած մանուկ, որ շաբունակ կանչում է մօրը:

ԼԳ. Դարձեալ՝ մեզ յատուկ հոգեկան եւ մարմնական [կրքերը] մարդկային բնութեան ապականիչ կամ ապականութիւն չեն, քանզի ապականութիւնը ներհակ է լինելութեանը, իսկ ներհակները չեն

կարող միասին եւ միաժամանակ գոյութիւն ունենալ: Իսկ քաղցը, ծարաւը, յոգնութիւնը, տրտմութիւնը, յոգոց հանելը, երկիւղը, ցասումը, ինչպէս նաեւ անգիտութիւնը եւ այլ այսպիսի բաներ բանական հոգու լինելութեան հետ միասին են տրուած մարդուն. ուրեմն սրանք ապականութիւն չեն, քանզի եթէ ապականութիւն լինէին, չէին կարող լինել գոյութեան հետ միասին, այլ [մարդկային] բնութեան բաղկացուցիչ մասն են: Արարիչն ասաց մեր նախահօրը. «Դրախտի բոլոր ծառերից կ՚ուտես» [Ծն. Բ 16]: Զէ՞ որ սրանով կերակրելի բնութեանը առաջադրում էր համապատասխան պէտքը, այլապէս աւելորդ եմ համարում Տնկագործողի տնկած այն պտղալից դրախտը, ուր բնակեցնելով մարդուն՝ հրամայեց նրան վայելել այնտեղից:

ԼԴ. Եւ դարձեալ՝ «Դրախտի մէջտեղի ծառից չուտես, որպէսզի չմեռնես» [Ծն. Գ 3]: Եթէ երկիւղի զգացումը բնաւորուած չէր մարդու բանական հոգում, ինչպէ՞ս էր [Աստուած] զգուշացնում, եւ կամ՝ [մարդը] զգուշացւում եւ չզգուշանալուց յետոյ մեղադրւում: Իսկ դրանից առաջ գրուած է Նրա տնկած այդ փափկութեան դրախտը մշակելու եւ պահելու մասին [Ծն. Բ 15]: Առաջինը վերաբերում է աշխատանքին, իսկ երկրորդը՝ հոգածութեանը: Իսկ քնելու ունակութեան մասին բացայայտ կերպով իմանում ենք հետեւեալ խօսքից. «Աստուած թմրութիւն բերեց Ադամի վրայ, եւ նա ննջեց» [Ծն. Բ 21]: Ոչ թէ քնի իրողութիւնը արտաքուստ բերեց նրա վրայ, այլ [քնի] բնաւորական կիրքը գործեց ըստ հարկի: Իսկ ցանկութիւնը գիտեմ նրանից, որ [կինը] ցանկացաւ արգելուած պտուղը: Իսկ այն խօսքը, թէ՝ «Ադամի համար [իրեն նման] օգնական չգտնուեց» [Ծն. Բ 20], ցոյց է տալիս նախաստեղծի տրտմութիւնը, որը, կենդանիների միւս տեսակներին տեսնելով իրենց զուգակիցների հետ վայելչացած, այդ պատճառով տրտմում էր միայն իր՝ անընտանիք մենութեան եւ զրկանքի համար: Իսկ կանխագիտութիւնը նրա մէջ ոչ թէ ըստ բնութեան էր, այլ Աստուծոյ Հոգու ներգործութիւնից, որ երբեմն շարժման մէջ է գնում, երբեմն էլ, Ինքն Իր մէջ ամփոփուելով, թողնում մտաւոր եւ բանական հոգին. քանզի արարածներից ոչ ոք չարժանացաւ դրան. դա բնորոշ է միայն Արարչին, ինչպէս եւ Ինքն է ասում Եսայի [մարգարէի] միջոցով. «Ինձանից բացի չկայ մէկը, որ գիտենայ վերջին իրողութիւնները, մինչեւ դրանք չկատարուեն եւ չամբողջանան» [Ես. ԽԶ 9–10]:

ԼԵ. Արդ՝ պարզ է, որ սրանք նախքան մեղանչելն էլ գոյութիւն ունէին ըստ բնութեան եւ ոչ թէ յետագայում են ներմուծուել մեր բնութեան մէջ մեղքի հետեւանքով, ինչպէս դու ես կարծում: Բայց քանի որ միեւնոյն ինքնիշխան կամքն ազատ ցանկութեամբ յօժարամէտ է դէպի երկու կողմն էլ, սրանց կարգաւորութիւնը երկակի է իմացւում. մէկինը կոչւում է հոգու, միւսինը՝ մեղքի. «Կեանքի հոգու օրէնքն ինձ ազատեց մեղքի եւ մահուան օրէնքից» [Հռոմ. Ը 2],— ասում է Պօղոս [առաքեալը]. եւ թէ՝ «Այլ օրէնք եմ տեսնում՝ մտքի օրէնքի դէմ մարտնչող եւ ինձ գերող՝ մեղքի օրէնքով, որ իմ անդամների մէջ է» [Հռոմ. Է 23]:

ԼԶ. Արդ՝ քաղցը, տրտմութիւնը եւ այլ այսպիսի [կրքեր] ոչ թէ յետոյ են մուտք գործել մահուան ու ապականութեան հետ կամ իրենք ապականութիւն են, այլ կառավարւում են առաջնորդական [մտքի] կողմից, ինչպէս երկրագործն է [վարւում] սերմերի հետ. եթէ դրանք սերմանում է մարմնի մէջ, մարմնից պիտի ապականութիւն հնձի, իսկ եթէ սերմանում է հոգու մէջ, հոգուց պիտի յաւիտենական կեանք հնձի [Գաղ. Զ 8]: Տրտմութիւնն ինքնին մահ չէ, այլ աշխարհի տրտմութիւնն է, որ մահ է գործում, իսկ ըստ Աստուծոյ տրտմութիւնը հաստատապէս հասցնում է փրկութեան [Բ Կոր. Է 10]: Եւ ոչ միայն այս, այլեւ միմեանց փոխարինող ներհակները նոյն կերպով շրջաբերւում են երբեմն դէպի կեանք, երբեմն՝ դէպի մահ, քանզի տրտմութիւնը փոխարինւում է ուրախութեամբ, իսկ չարութեան հետ խառնուած ուրախութիւնը՝ սուգով եւ տրտմութեամբ, որը հալածելու սպառնալիք էր տալիս Յակոբոս Մեծը՝ ասելով. «Ձեր ծիծաղը սուգի թող վերածուի, եւ ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան» [Յակ. Դ 9]: Բայց նոյն այն ուրախութեամբ, որ առ Աստուած է, Պօղոս [առաքեալը] պատուիրում է ուրախանալ ամէն ժամ [Փլպ. Դ 4]՝ սիրով ընդարձակուած հոգով: Նոյնպէս եւ որկրամոլութեամբ ուտելը յանդիմանւում է, բայց այն սեղանը, որ Աստծուն փառաւորելու համար է, բարեբանւում է հէնց նոյն առաքեալի խօսքով. «Թէ՛ ուտէք, թէ՛ ըմպէք, բոլորն արէք ի փառս Աստուծոյ» [Ա Կոր. Ժ 31]:

ԼԷ. Արդ՝ վերն ասուածից պարզ է, որ նոյնը կարելի է ասել նաեւ նախաստեղծի մասին. քանի դեռ նա ընթանում էր պատուիրանապահութեամբ, վերոյիշեալ բնաւորական [կրքերով] ընդդիմամարտելով՝ իրենից հեռու էր վանում մահն ու ապականութիւնը, եւ

այդպէս՝ առաւել յարատեւ գոյութեամբ ընթանալով՝ հաղորդակցւում անճառելի կեանքին: Իսկ երբ պատուիրանազանցութեան պատճառով վայր սայթաքելով ընկաւ, որից եւ բողբոջեց մեղքը, այնժամ մտաւ մահուան ու ապականութեան լծի տակ: Եւ Ստեղծիչը այսպէս չէր [գոյացրել] Իր կողմից ստեղծուածին, այլ ստեղծուածի ինքնակամութիւնը եւ բանսարկուի պատրանքները յաւելեցին մահն ու ապականութիւնը մեր բնութեան մէջ: Բայց այն ժամանակ դժուարահակ էինք դէպի մեղքը եւ աւելի դիւրահակ՝ դէպի բարին, իսկ այժմ, այս ապականացու կեանքի մէջ ընկած լինելով, հակառակ փոփոխութեամբ ենք տառապում՝ դիւրահակ ենք դէպի մեղքը եւ դժուարահակ՝ դէպի առաքինութիւնը:

ԼԸ. Եւ սա այսպէս է, ինչպէս ըստ կարգի [ցոյց է տալիս] խօսքս՝ քո ասածի պատճառով. քանզի բնաւորական [ունակութիւնները] մեկնաբանեցիր որպէս ապականութիւն, ոչ միայն մարմնի հետ լծորդուածները՝ յոգնութիւնը, քաղցն ու քունը, այլեւ հոգու երեք մասերը՝ խոհականը, ցանկականը եւ ցասմնականը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ մարդու կազմութեան բնաւորական [ունակութիւններ] եւ յատկութիւններ, որոնք, պատուիրանապահութեամբ զինուած, մարտնչում են մահուան ու ապականութեան դէմ, իսկ պատուիրանազանցութեամբ զինաթափուելով՝ յանձնւում թշնամիներին:

ԼԹ. Արդ՝ քանի որ տեսանք, որ մեր հոգու եւ մարմնի կրքերը ո՛չ մեղք են, ո՛չ էլ ապականութիւն, այլ մեր մարդկային բնութեանը պատշաճող որոշակի որակներ ու յատկութիւններ, [ուրեմն] մի՞թէ զարմանալի է, որ Փրկիչը նոյնպէս, երբ ապրում էր մարդկանց մէջ, գործադրեց դրանք, որտեղ, երբ եւ որքան կամեցաւ՝ ոչ ինչոր օտար կամ ստուերակերպ եղանակով, այլ ճշմարտութեամբ եւ մեր իսկ բնաւորական [կրքերը] գործադրելով ու թոյլ տալով, որ մարմինը կրի իրենը: Սուրբ Գրիգոր Նիւսացին այսպէս է ասում. «Քառասուն օր ոչինչ չճաշակելուց յետոյ քաղց զգաց եւ երբ կամեցաւ, որ բնութիւնը իրենը կատարի, թոյլ տուեց»[48]:

Խ. Ապա ուրեմն՝ ըստ մեզանից վերցրած Իր մարմնի օրէնքի՛ կրեց մեր կրքերը եւ ոչ թէ ըստ Աստուածութեան, ինչպէս դու ես կարծում: Քանզի եթէ հնարաւոր լինէր, որ Քրիստոս ըստ Աստուա-

---

48 Սբ Գրիգոր Նիւսացի, Յաղագս երանութեանց, ԻԴ ճառ, Ա հատոր՝ ըստ յունական եւ լատինական դասակարգութեան (Աւգերեան, էջ 51, ծնթ. 2)

ծուլթեան կրէր մարդկային կրքերը, ապա թերեւս մարմին չէր առնի Կոյսից, [այսինքն]՝ մեր բնուլթիւնից, այլ կը շարունակէր նախահայրերին յայտնուելու նոյն երեւուլթական կերպը, ինչպէս կերաւ Աբրահամի մօտ [Ծն. ԺԸ 8], մարտնչեց Յակոբի հետ [Ծն. ԼԲ 24], անգիտաբար հարցրեց Ադամին ու Կայէնին [Ծն. Դ 9]: Իսկ եթէ դրանք ճշմարտուլթեան նմանուլթիւն ու օրինակ էին, եւ Սա նոյն ինքը ճշմարտուլթիւնն է եւ ոչ թէ օրինակը, ապա ուրեմն պարզ է, որ ճշմարտուլթիւն էին ե՛ւ երեւումը, ե՛ւ երեւածը, ե՛ւ կրելը, ե՛ւ կիրքը: Թէեւ աստուածային զօրուլթիւնը կարող է նաեւ նմանուլթեան մէջ պահել ճշմարտուլթիւնը, ինչպէս ասաց սուրբերից մէկը՝ մեր Գրիգորիոսը, սակայն նախկին երեւումներն ու կրքերը վերջիններիի հետ համեմատելով՝ դրանք պէտք է կոչել նմանուլթիւն եւ օրինակ եւ ո՛չ թէ ճշմարտուլթիւն: Իսկ ճշմարտուլթիւն կոչում եմ իրողուլթիւնը եւ ո՛չ թէ միայն անունը: Արդ՝ ինչպէս որ իրողուլթիւն էր կնոջից ծնուելը, այդպէս էլ իրողուլթիւն էին նաեւ Նրա ներգործուլթիւնները եւ կրքերը: Եւ ինչպէս Բանի մարմինը ուրիշ մէկից չճանաչեցինք, այլ Կոյսից, այսինքն՝ մարդկային [ընուլթեան] զանգուածից, այդպէս էլ Քրիստոս ըստ մե՛զ կրեց մեր իսկ մարդկային կրքերը եւ ո՛չ թէ ըստ Աստուածուլթեան կամ այլ կերպ, ինչպէս եւ մեծն Գրիգոր Նազիանզացին է ասում. «Կրկնակի էր, որ յոգնեց, երկիւղեց, արտասուեց, քաղցեց, ծարաւեց մարմնի օրէնքով»[49]: «Կրկնակի» ասելով նկատի ունի Բանն Աստծուն ու Նրա մարմինը, իսկ ասելով «մարմնի օրէնքով»՝ ցոյց է տալիս, որ կրքերը կրելն ըստ մարդկուլթեան է եւ ո՛չ ըստ Աստուածուլթեան: Դու դրանցից եւ ոչ մէկը չես կարողանում ընդունել, որի պատճառով նոյն մարդկային կազմուլթիւնն ինքնին մեղք համարեցիր:

ԽԱ. Այս մասին ասում է գաբաղացիների եպիսկոպոսը՝ առաւելաշնորհ Սեւերիանոսը՝ Փրկչի տնօրէնուլթեան մասին ճառում. «Անչարչարելին չարչարւում է չարչարելիով. մտաւ ոչ թէ այն կրքերի տակ, որոնք տանում են դէպի մեղք, այլ՝ որոնք յատուկ են մեր բնուլթեանն ընդհանրապէս: Քանզի հոգին ու մարմինը ծառայում են ե՛ւ դէպի մեղք տանող, ե՛ւ մեղքից զերծ կրքերին. վերջիններից

---

49 Սբ Գրիգոր Աստուածաբան, «Յաստուածայայտնուլթիւն եւ ի Ծնունդն Փրկչին», ճառ ԼԸ՝ ըստ յունական եւ լատինական դասակարգուլթեան (Աւգերեան, էջ 52, ծնթ. 2)

են քաղցելն ու ծարաւելը, յոգնելն ու ննջելը, որոնք մարմնի կրքեր են եւ մեղք չեն համարւում: Իսկ պոռնկութիւնը, պղծութիւնը եւ հակառակութիւնը մեղքի կրքեր են: Նոյնպէս եւ հոգին իր մէջ է պահում Արարչից [ստացած] օգտակար ու կարեւոր կրքերը՝ երկիւղը, տրտմութիւնն ու ցասումը, որոնք եթէ առանձին դիտարկուեն, կը կոչուեն կրքեր, իսկ եթէ՝ չափով եւ ըստ ժամանակի, ապա մեր բնութեան օգնականներն են»[50]*: Այսպէս ասելով՝ շարունակում է. «Կենարարը յանձն առաւ մարմնի եւ հոգու այն կրքերը, որոնք զերծ են մեղքից. քաղցեց մարմնով, ծարաւեց, յոգնեց ու ննջեց եւ դրանով ոչ թէ նսեմացրեց Աստուածութիւնը, այլ ճշմարտապէս յայտնեց մարմնի բնութիւնը: Նոյնպէս եւ հոգով երկիւղեց, տագնապեց, տրտմեց. ասում է. «Հոգիս տրտում է մահու չափ» [Մատթ. ԻԶ 38], եւ դարձեալ, թէ՝ «Սկսեց տրտմել ու տագնապել» [Մատթ. ԻԶ 37]: Դրանք մեղանչական կրքեր չէին, այլ մարմնի բնութեան յայտարարներ»*[51]*: Ապա դարձեալ շարունակում է, որպէսզի նախապէս փակի հերձուածողների բերանը եւ ցոյց տայ, որ [Կենարարը] բազմաթիւ կրքերի ենթակայ [մեր] այս մարմինն է առել, որը երկիւղում է չարչարանքից, դողում մահուան բռնութիւնից, խռովւում ու տրտմում կեանքի վախճանի համար*[52]*:*

ԽԲ. Ահա սուրբ հայրը բացայայտօրէն ցոյց տուեց, որ մեր մէջ եղած այս կրքերը մեղքի ու ապականութեան մասեր չեն, այլ մարմնին ու հոգուն բնորոշ անհրաժեշտութիւններ, դէպի որոնք Տէրը խոնարհուեց կամաւորապէս եւ ըստ [փրկագործութեան] խորհուրդի կանխագիտութեան, [որոնց], սակայն, փրկչական մարմինը հարկադրաբար ենթակայ չէր, քանզի բնական կրքերի ծառայութեանը ենթարկուելը յատուկ է միայն մարդուն: Իսկ Բանն Աստուած անբաժանաբար Իրեն միաւորեց մեր [բնութիւնը]. երբ Ինքը կամենում էր, այնժամ Իր մարմնին թելադրում էր գործադրել բնական [կրքերը]՝ հաստատելով, որ Իրեն է միաւորել կատարեալ մարդկային [բնութիւնը]՝ հոգով եւ մարմնով: Ինչպէս ասում է սքանչելի Յովհան Կոստանդնուպոլսեցին. «Ինչո՞ւ առաւօտեան քաղցեց. երբ կամե-

50 Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի ճառք ԺԵ, Վենետիկ, 1830, էջ 11–12

51 Նոյն, էջ 12–13

52 Նոյն, էջ 13

նում եւ թոյլ էր տալիս մարմնին, այնժամ էր զգում իր կրքերը»[53]: Ասում են. «Եթէ այդպէս է, ուրեմն Քրիստոս փոփոխելի էր, [քանզի] մարմինը երբեմն տկարանում էր Բանի թոյլտուութեամբ, երբեմն էլ զօրանում Բանի կողմից»: Դարձել են թիւրահաւատներ՝ յանդգնելով թիւրել ճշմարիտ հաւատքը: Իսկ ի՞նչ կ՚ասես Քրիստոսի՝ մեզ համար մեռնելու մասին. ըստ քեզ՝ կամ մեռաւ եւ փոփոխուեց, կամ էլ չփոփոխուեց եւ չմեռաւ: Իսկ եթէ ե՛ւ մեռաւ, ե՛ւ չփոփոխուեց, ուրեմն նոյնպէս էլ կրեց կրքերը եւ չփոփոխուեց դրանցից: Եւ ինչպէս մեռնելիս ընդունեց մեր մահը, այսինքն՝ հոգին բաժանուեց իր մարմնից, այդպէս եւ [կրքերը] կրելիս նոյն կերպով հաղորդ դարձաւ մեր կրքերին, ինչպէս սուրբ Բարսեղն է ասում «Գոհութեան մասին» ճառում. «Արդ՝ ինչպէս Տէրն ընդունեց քաղցը, երբ պինդ կերակուրը սպառուեց Նրա մէջ, եւ ծարաւը ճշմարտապէս յայտնեց, երբ մարմնի մէջ խոնաւութիւնը սպառուեց, եւ երկարաձիգ ուղեգնացութիւնից յոգնեց մարմնով ու ջղերով, [սակայն] ոչ թէ աստուածութիւնը յոգնեց եւ չարչարուեց, այլ մարմինն ընդունեց իր բնութեանը յատուկ պատահմունքը, այդպէս էլ ճշմարտապէս արտասուեց՝ թոյլ տալով, որ մարմնի մէջ կատարուի բնական պատահմունքը»[54]: Այսպէս [է ասում] այս սուրբ հայրը:

ԽԳ. Այստեղից պարզ է, որ երբ կամեցաւ, ինքնիշխան կամքով թոյլ տուեց, որ բնական կրքերից իւրաքանչիւրը ճշմարտապէս եւ անապականաբար ներգործի իր մարմնի ու հոգու վրայ, ոչ թէ սոսկ անուամբ եւ նմանութեամբ, այլ առաւելապէս՝ ըստ էութեան, որից է նաեւ անունը, համբերելով դրանցից իւրաքանչիւրի մէջ, եւ այս պատճառով է ասում, որ ընդունեց մեր կրքերը: Այլեւ ըստ մեզ [կրեց], եթէ շատ չես գայթակղուի խօսքովս՝ խորհելով ապականութեան մասին, քանզի ես ասում եմ, որ Քրիստոս յանձն առաւ բնական կրքերը, իսկ դու ներմուծում ես անբնականը, որն ապականութիւն է եւ փոփոխելիութիւն: Սոսկ մարդ չէր, բայց լոկ Աստուած էլ չէր, այլ մանաւանդ՝ ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ էր միաժամանակ: Տէրն իր մէջ ցոյց տուեց այն, ինչն ըստ մեզ է, եւ այն, ինչն ըստ

---

53 Սբ Յովհան Ոսկեբերան, Մատթէոսի Աւետարանի մեկնութիւն, ճառ ԿԷ (ԿԸ՝ ըստ այլոց)՝ ըստ յունարէն եւ լատիներէն դասակարգութեան (Աւգերեան, էջ 56, ծնթ. 1)

54 Տես ծնթ. 30:

մեզ չէ. քաղցեց ըստ մեզ, եւ քաղցելով ոչ ըստ մեզ՝ տարաւ մեզ դէպի երկնային բարիքների վայելումը: Եթէ սոսկ մարդ էր, կրելով չէր կարող նաեւ ներգործել, եւ եթէ սոսկ Աստուած էր, ներգործելով հանդերձ չէր կարող կրել: Սակայն, արդ՝ միաժամանակ լինելով երկուսն էլ՝ կրեց մեր տկարութիւնները եւ ըստ մեզ եղաւ, իսկ մենք Նրա զօրութեան հետ միաւորուեցինք եւ ըստ Նրա եղանք:

ԽԴ. Անգիտացաւ եւ դրանով մեզ դարձրեց մարգարէաշնորհ: Մեռաւ ըստ մեզ՝ թաղել տալով Իր մարմինը, եւ մարդկային հոգով ճշմարտապէս այցելեց դժոխքում գտնուողներին, որոնցից առաջինով ընդունեցինք մահուան լուծարումը, իսկ երկրորդով՝ ապականութեան: Եւ միանգամայն ճիշտ է ասել, որ Նա հաղորդակից դարձաւ մեր բոլոր բնական [յատկութիւններին], որով մեզ հաղորդակից դարձրեց Իր բնական [յատկութիւններին]: Այդ է առաւել յստակօրէն ասում մեծն Աթանաս Ալեքսանդրացին. «Բանը կրեց մարմնաւոր ծնունդը եւ մեղքի, ապականութեան ու մահուան մէջ ցրուած Իր արարածներին Իրենով հաւաքեց նոր պատկերի մէջ, որի համար դատապարտեց մեղքը երկրի վրայ, խաչափայտի վրայ վերացրեց անէծքը, գերեզմանի մէջ լուծարեց ապականութիւնը եւ դժոխքում՝ մահը: Ելաւ ամէն ինչի վրայ, որպէսզի փրկի բոլոր մարդկանց՝ Իրենով ցոյց տալով մեր պատկերը: Քանզի ի՞նչ կարիք ունէր Աստուած, Ով արարել է յաւիտեանները, ծնուելու կնոջից, աճելու հասակով եւ տարիքով եւ կամ ի՞նչ կարիք ունէր խաչի, գերեզմանի ու դժոխքի, որոնց մէջ էինք ընկել մենք, եթէ ոչ՝ մեզ փնտրելու՝ մեր պատկերի միջոցով կենսագործելով մեզ, եւ որպէսզի կանչի Իրեն միանալու եւ նմանուելու Իր կատարեալ պատկերին»[55]*:*

ԽԵ. Այսպէս ասելով՝ աստուածանման հայրը ցոյց է տալիս, որ Բանն Աստուած ոչ թէ սոսկ Իր ամենակարող զօրութեամբ կամ իշխանասաստ հրամանով տանջեց մեզ տանջողներին, այսինքն՝ մեղքը, ապականութիւնն ու մահը, այլ մեզանից վերցրած Իր մարմնով ու բանական հոգով դրանց մերձենալով՝ յաղթեց: Եւ այսպէս Երկրորդ Ադամը նորոգեց առաջինին, քանզի եթէ նա, մեղքից վիրաւորուելով, իրեն ծառայութեան յանձնեց հակառակորդին, ապա Սա, անմեղութեամբ մօտենալով, դատապարտեց մեղքը եւ,

---

55 Վկայակոչութեան աղբիւրն առայժմ մնում է անյայտ:

վիրաւորին առողջացնելով, ծառայողին հրամայեց ծառայեցնել իր ծառայեցուցչին: Այս ազատութիւնը Տիրոջից ստացանք ոչ այլ կերպ, քան այն ծառայական կրքերով, որոնք Նա կրեց Իր մարմնով՝ մահու չափ հնազանդ լինելով Հօրը [Փլպ. Բ 8], որպէս թէ տկարութեամբ զօրութիւն ցոյց տալով եւ խոնարհութեամբ ճանապարհ հարթելով դէպի բարձրութիւն: Աւելի ընդարձակ խօսքով նոյնն է ասում նաեւ Մեծն Գրիգոր Նազիանզացին. «Իր վրայ է վերցնում օտար կերպարանքը՝ Իր մէջ ամբողջութեամբ բերելով ինձ եւ ինչ որ իմն է, որպէսզի Իրենով սպառի չարիքը, ինչպէս կրակը՝ մոմը, եւ ինչպէս արեգակը՝ գոլորշին, եւ ես միաւորութեան շնորհիւ հաղորդ լինեմ Նրա [յատկութիւններին]: Ուստի գործով է պատւում հնազանդութիւնը եւ փորձում այն չարչարանքների մէջ. քանի որ սէրը բաւական չէր լինի (ինչպէս եւ մեզ համար), եթէ նաեւ գործով չկատարէր մերը, քանզի սիրոյ ապացոյցը գործն էր: Թերեւս աւելի վատ չէ խորհել հետեւեալը, թէ փորձում է մեր հնազանդութիւնը եւ մարդասիրութեան արուեստով ամէն ինչ չափում՝ ըստ Իր չարչարանքների, որպէսզի որպէս թէ Իր փորձառութեամբ իմանայ մերը»[56]*: Այսպէս [է ասում] սուրբը հայրը:*

ԽԶ. Բայց մարդկային բոլոր կրքերը մէկ շարքի մէջ մի՛ դիր եւ մէկ մի՛ համարիր՝ իբրեւ թէ կարծելով, որ դրանք բոլորը նոյն կերպ են բնաւորուած մեր մէջ: Ուստի եւ արժանավայել չէ ասել նաեւ, թէ Փրկչի կիրընդունակութիւնը [վերաբերում է] այդ բոլոր [կրքերին], քանզի դրանցից ոմանք կոչւում են բնական՝ ըստ բնութեան մեր մէջ կարգաւորուած [լինելով], ինչպէս քաղցը, ծարաւը, քունը, յոգնութիւնը, տրտմութիւնը, երկիւղը, ցասումը, անգիտութիւնը, իսկ ոմանք յետոյ են ներմուծուել մեր մէջ, որոնցից մէկը սկզբնաւորուել է մեզանից, այսինքն՝ մեղքը, որը սովորեցրեց արհամարհել պատուիրանը, իսկ միւսը յանցանքի պատճառով Արարչի կողմից դրուած պատուհաս է, [այսինքն]՝ մահը: Իսկ ապականութիւնը հետեւանք է մահուան եւ ո՛չ մեզանից, ո՛չ էլ Արարչից չի կցուել մեր բնութեանը, այլ որսացել եւ իր կերակուրն է դարձրել մահուան

56 *Սբ Գրիգոր Աստուածաբան, Որդու մասին երկրորդ ճառից, Ճառ Լ՝ ըստ ռուսերէն դասակարգութեան, տես* **Святитель Григорий Богослов**, Собрание творений, том 1, Слово 30, О богословии четвертое, о Боге Сыне второе, Минск—Москва, 2000, с. 525:

իշխանութեան տակ ընկածներիս, քանզի, ինչպէս նախապէս ասացի, ներհակ է լինելութեանը եւ ապականում է իրը՝ կարծես թէ ձգտելով անգոյացնել գոյը: Դրանով յոյժ ուրախանում ու չար յոյսով զուարճանում էր խաբեբան՝ մեր նախահօրը պատրողը, իբրեւ թէ յաղթել է նախանձելի [պատիւ ունեցողին] եւ կարողացել է խափանել [նրան, որ] կոչւում է Արարչի պատկեր բոլոր արարածների մէջ, եւ վստահ էր, թէ այլեւս անհնար է, որ նա, կազմալուծուելով այն նիւթի մէջ, որից գոյացել էր, վերստին գոյութեան կոչուէր, ուստի, անշունչ ու անշարժ նիւթն անտեսելով, բռնութեամբ պահում էր միայն կենդանի հոգին: Այս պատճառով մեզ կենսագործելու եկած Բանն Աստուած թոյլ չտուեց, որ Իր մարմնին մօտենայ ապականութիւն, ինչը եւ մեռնելիս պիտի կործանէր: Օրինակ՝ որեւէ շինութեան հիմքի քանդումով [կործանւում է շինութիւնը], եւ կամ պարսպի խորտակմամբ կործանւում է քաղաքը: Իսկ արդարադատ Աստուած թէպէտ պատժեց մեզ, սակայն նոյն այդ մահուան մէջ երկու նմանօրինակ օգտաշահ սերմեր թաքցրեց, որոնք հետեւեալն են. [մէկն այն է], որ մահից նեղւում ենք, երբ մեղքերը հասնում են իրենց լրումին, եւ [միւսը]՝ որ մահն անքակտելի կենդանութեան սկիզբն է: Ուստի Տէրն ամենայն փութով եկաւ ու յանձն առաւ մահը, որպէսզի լուծարի մեղքն ու խափանի ապականութեան յափշտակութիւնը եւ որպէսզի Իր յարութեամբ հրաւիրի մեզ երկնային կեանքի:

Խէ. Սակայն կամենում եմ մի փոքր եւս երկարաձգել ապականութեան մասին խօսքս, քանի որ այս չափազանց չար մարդկային ցեղին արժէ երկարաձիգ խօսքերով պախարակել, որպէսզի աւելի խոհեմաբար գիտենայ, թէ ի սկզբանէ Աստուած ինչպիսի՛ պատուով ստեղծեց մեր բնութիւնը, [որն] ինքնակամութեամբ սայթաքելով ինչպիսի՛ եւ որքա՛ն անարգութեան հասաւ: Եւ կամ մեր Արարիչն ինչպէ՛ս հոգաց մեր փրկութեան մասին՝ մարդանալով եւ Իր խաչի արեամբ ազատելով մեզ թէ՛ մեղքից, թէ՛ ապականութիւնից, թէ՛ բանսարկուի բռնութեան ծառայութիւնից: Արդ՝ ապականութիւնն ամբողջ իրի քակտման պատճառն է, որ տեղի է ունենում փոփոխութեամբ, քանզի ամբողջը բաղկացած է մասերից, իսկ ապականութիւնը փոփոխութեան միջոցով քանդում է մասերից բաղկացածը: [Ահա] մի օրինակ, որ պատշաճում է մեր այս խօսքին. տնկողի արմատախիլ արած մի տունկ, որին ապականութիւնը մերձենալով՝ փոփոխութեան հրամանով վերացնում է նրանից նրա նախկին

բնական որակութիւնները եւ դրանց փոխարէն ներմուծում յոյժ անվայելուչ որպիսութիւններ՝ թոյլ չտալով, որ այն մնայ այդ փոփոխութեան մէջ, այլ վայր քաշելով՝ բաշխում է նրան ըստ բաղկացած տարրերի. եւ այնուհետեւ միայն ամենազօր ձեռքի կարողութիւնն է՝ քայքայուած նիւթը կրկին նոյնի մէջ հաւաքելով վերահաստատել [բնական] տեսակը:

ԽԸ. Արդ՝ խօսքս ցոյց տուեց մեր կործանման երեք վիճակներ. առաջինը՝ մեր իսկ գտած եւ առաջ բերած մեղքը, երկրորդը՝ մահը, որով Աստուած դատապարտեց ու պատուհասեց, եւ վերջինը՝ ապականութիւնը, որն, ինչպէս ասացինք, մահուան հետեւանքն է եւ մանաւանդ՝ հակառակորդի թուացեալ յաղթանակը իր խաբէութեան պայքարում: Քանզի թէպէտեւ Ստեղծիչը հողածիններին ասաց. «Հող էիր եւ հող պիտի դառնաս» [Ծն. Գ 19], [սակայն] ոչ թէ հրաման տուեց, այլ բացայայտեց, թէ ինչ է հետեւելու մահուանը, ինչպէս, օրինակ, բարձր տեղից գլորուող քարը մօտակայքից դիտողը կ՚ասի. «Կը գնաս, մինչեւ հասնես՝ ուր հարկն է»:

ԽԹ. Արդ՝ ծայրինները, [այսինքն՝ մեղքը եւ ապականութիւնը], պարզապէս չար են ե՛ւ անուամբ, ե՛ւ իրապէս, իսկ մէջտեղինը, [այսինքն՝ մահը], ո՛չ պարզապէս եւ ո՛չ նոյն կերպ, այլ՝ ծայրիններից վերցրած եւ իրար հետ միահիւսուած: Քանզի այն, ինչ կոչւում է մահ, կոչւում է նաեւ քուն, եւ ինչը կեանքի վախճան է, [նաեւ] կեանքի սկիզբ է: Ծայրիններն ի յայտ բերեցին մարդը եւ բանսարկուն. մէկը պատճառ եղաւ մեղքի, իսկ միւսը՝ մեր բնութեան ապականութեան: Այս պատճառով Նա, որ մեզ համար մարդացաւ եւ կոչուեց Երկրորդ Ադամ [Ա Կոր. ԺԵ 45], մեղք չգործեց, «քանզի Նրա բերանում նենգութիւն չգտնուեց» [Ա Պետ. Բ 22], եւ «Նրա մարմինը ապականութիւն չտեսաւ» [Գործք Բ 31]: Ինչ որ Ինքը չէր դրել մեր բնութեան մէջ, նաեւ չառնչուեց դրանց հետ, քանզի աւելորդ եւ զուր համարեց Իրեն մօտեցնել այն, ինչից կամենում էր ազատել մեզ, սակայն պատուհասից[57] չհրաժարուեց: Ինչպէս, օրինակ, բժիշկը, որ պատրաստւում է դեղ տալ հիւանդին, եթէ [նախ] ինքն է փորձում դեղը, ապա վստահութիւն է ներշնչում: Քանզի պատուհասը ո՛չ մեղք էր, ո՛չ էլ ապականութիւն, այլ այն, ինչը հալեցնում ու մաքրում էր դրանք մեր բնութիւնից, ինչպէս

57 Այսինքն՝ մահուանից:

կրակն [է մաքրում] ժանգը ոսկուց: Եւ այս կամաւորապէս կրելու կարողութիւնը միայն Քրիստոսինն է եւ նրանցը, ովքեր, Նրանից զօրանալով, արժանացան ընդունելու որդեգրութեան փառքը. «Կցորդ դառնալով Նրա չարչարանքներին՝ հաղորդակից դարձան նաեւ Նրա փառքին», ինչպէս ասում է առաքեալը [Հռոմ. Ը 17]: «Քանզի Տէրը խրատում է նրան, ում սիրում է, տանջում է ամէն մի որդու, ում ընդունում է» [Եբր. ԺԲ 6], որը թէպէտ «...նոյն պահին ուրախալի չի թւում, սակայն յետոյ դրանով կրթուածներին հատուցում է խաղաղութեան պտուղը արդարութեան մէջ» [Եբր. ԺԲ 11]: Իսկ խաղաղութեան պտուղը նոյն ինքն է, որ «երկուսը մէկ դարձրեց եւ իր մարմնի մէջ քանդեց միջնորմը՝ թշնամութիւնը» [Եփես. Բ 14]: Եւ ի՞նչն է աւելի վեհ ու գերաշխարհիկ, քան այս խաղաղութիւնը, երբ Գերագոյնի յաղթանակով մեր մարդկային բնութիւնը միանում է աստուածայինին եւ [Նրա հետ] դառնում մէկ: Ինձ թւում է, որ սա է, երբ Որդին ասում է Հօրը. «Փառաւորի՛ր Քո Որդուն Քեզ մօտ եղող այն փառքով, որ ունէի Քեզ մօտ նախքան աշխարհի լինելը» [Յովհ. ԺԷ 5]: Եւ այս խօսքերի խորհուրդը Ինքը Տէրը գալով կ՚ուսուցանի մեզ, եթէ հարցնենք Նրան.

—Ո՛վ Տէր, Աստծուն քեզ Հայր ես կոչում, ուրեմն Նրա էակից Որդին ես, անշուշտ նաեւ փառակիցը: Իսկ ի՞նչ է նշանակում այդ խօսքդ. «Փառաւորի՛ր Քո Որդուն Քեզ մօտ եղող այն փառքով»: Ա՞յն ես հաստատում, թէ՝ ունէի փառքը, եւ՝ Քեզ մօտ ունէի, եւ՝ նախքան աշխարհի լինելն ունէի: Իսկ եթէ Նրա մօտ եղող փառքն ունէիր մինչեւ աշխարհի սկիզբը, այժմ ի՞նչ ես խնդրում. այնժամ ունէիր, իսկ այժմ չունե՞ս: Սակայն անհնար է, որ մշտնջենաւոր էութիւնդ առանց փառքի լինի, քանզի եթէ փառքը Քեզ հետ չէ, ուրեմն [Քեզ հետ] չէ նաեւ էութիւնդ, եւ եթէ [փառքը] Քեզ հետ չէ, ապա վերանում է նաեւ Հօր փառքը, Ումից ունէիր այն: Ուրեմն էլ ի՞նչ ես խնդրում Նրանից, աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, յայտնի՛ր մեզ, «քանզի Քո մէջ են թաքնուած իմաստութեան եւ գիտութեան բոլոր գանձերը» [Կող. Բ 3]:

—Դեռ պէտք է անարգանք կրէի, թուք ու ապտակ ընդունէի, քացախ ու լեղի ճաշակէի, յանձն առնէի խաչի մահը, աղաչէի Հօրը, ինչպէս անարգուած մէկը, որպէսզի դարձեալ Ինձ տայ փառքը:

—Բայց ինչո՞ւ, մի՞թէ անարգանքների պատճառով զրկուեցիր փառքից: Եթէ այդպէս է, ուրեմն մահուան հետեւանքով էլ կորցրիր

անմահութիւնդ, եւ միաժամանակ հարկ է ասել, թէ մարմնիդ պատճառով Աստուածութիւնդ էլ հեռացաւ Քեզանից:

—Այդպէս չէ՛. ոչ թէ Իմ [յատկութիւնները] փոխուեցին, այլ Իմ մասին ունեցած մարդկանց կարծիքներն էին, որ փոխուեցին: Երբ վայելում էին բժշկութեան սքանչելիքները, զարմանում, հաւատում ու բարեբանում էին, ինչպէս պատշաճ էր Իմ փառքին, իսկ երբ Ինձ անարգուած տեսան, գայթակղուեցին Ինձանից, թողնելով Իմ մասին պատշաճ խորհուրդները՝ ընկղմուեցին յոյժ անպատշաճ խորհուրդների մէջ, ինչպէս եւ Եսային, Իմ վերաբերեալ մարգարէանալով, ասել էր նրանց մասին [Ես. ԾԳ 4]: Արդ՝ խնդրում եմ Հօրից, որ մարդկանց մտքից թօթափի անհաւատութեան անարգանքը եւ նրանց հագցնի հաւատքի խորհուրդների փառքը: Թող չնայեն այս [խոնարհութեանը], որ տեսնում են այժմ, այլ նրան, ինչ լինելու է դրա միջոցով՝ Իմ մշտնջենական փառքի մեծութեանը: Թո՛ղ իմանան նրանք, որոնց իմաստութիւնն իրենց առաջնորդեց դէպի մոլորութիւն, որ հաւատացեալները քարոզութեան յիմարութեամբ պիտի փրկուեն [Ա Կոր. Ա 21]. Իմ այդ անարգանքով մարդիկ վերստին պիտի գտնեն կորցրած փառքը, Իմ ճաշակած մահուամբ պիտի ստանան անմահութիւնը. եւ միաժամանակ հարկ է ասել, որ Իմ՝ Մարդու Որդի դառնալով՝ մարդկանց որդիները պիտի արժանանան Աստուծոյ որդիներ դառնալու: Այս էր, որ Հայրն Ինձ պատասխանեց երկնքից. «Փառաւորեցի եւ դարձեալ պիտի փառաւորեմ» [Յովհ. ԺԲ 28]:

—Ինչպէս նախքան Քո մահը հրաշքներիդ զօրութեամբ որոշ մարդիկ փրկուեցին, առաւել եւս Քո կամաւոր մահուանից յետո՛յ պիտի բազմանան Քեզ հաւատացողները, եւ դեռ աւելին, քանզի սակաւաթիւ են ընտրեալները Քո աստուածահրաշ նշաններից, բայց անթիւ են այն մարդիկ, որոնց Քո խաչի քարոզութիւնը պիտի հաւաքի՝ դառնալու Քո արքայութեան ժառանգորդները:

Գրաբարից փոխադրեցին
Մեսրոպ քահանայ Արամեանը
եւ
Արա սարկաւագ Նալչաջեանը

ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԱՑՈՒ
«ՀԱՒԱՏՔԻ ԽՕՍՔՆ ԸՆԴԴԷՄ ՀԵՐՁՈՒԱԾՈՂՆԵՐԻ»

Պօղոս Տարօնացին ԺԱ–ԺԲ դդ. հայ դաւանաբանական մտքի մեծագոյն ներկայացուցիչներից մէկն է: Նրա վարքը եւ գործունէութիւնը անխզելիօրէն կապուած են Մշոյ Առաքելոց վանքի հետ, որը նրա օրօք եւ նրա ջանքերի շնորհիւ դարձաւ հայ հոգեւոր կեանքի եւ մշակոյթի գլխաւոր կենտրոններից մէկը: Իր մեծ ժամանակակցի՝ Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի հետ Պօղոս Տարօնացին գլխաւորել է Հայ Եկեղեցու դաւանական պայքարն ընդդէմ քաղկեդոնականութեան[1]: Պօղոս Տարօնացու բացառիկ հեղինակութեան մասին են վկայում նրա մասին հայ մատենագրութեան մէջ պահպանուած մեծարանքի խօսքերը՝ «մեծ իմաստասէր հայոց», «երկրորդ լուսաւորիչ Տանս հայոց», «վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց»[2] եւն:

Պօղոս Տարօնացին հարուստ աստուածաբանական ժառանգութեան հեղինակ է: Մեզ են հասել բազմաթիւ դաւանական, ծիսական, կանոնագիտական, իմաստասիրական բնոյթի գործեր: Արդէն հրատարակուած, ինչպէս նաեւ Երեւանի Սբ Մեսրոպ Մաշտոցի (ՄՄ), Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց (ՍՅ) եւ Սուրբ Ղազարի (ՍՂ) ձեռագրատներում Պօղոս Տարօնացու անունով յայտնի երկերի պատկերը հետեւեալն է[3].

---

1 *Լ. Մելիքսեթ-Բեկ, Պօղոս Տարօնացի՝ ԺԱ–ԺԲ դարերի հայ մատենագիրը եւ թոնդրակեցի եւ ծայթ հայերը, «Էջմիածին», 1960, N 4, էջ 38*

2 *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 356*

3 *Պօղոս Տարօնացու մատենագրական ժառանգութեան պատկերը պարզելիս օգտուել ենք Հ. Մանուչարեանի «Պօղոս Տարօնացի» ուսումնասիրութեան մէջ առկայ տեղեկութիւններից, որոնք համեմատել ենք սբ Մեսրոպ Մաշտոցի անուան, Սրբոց Յակոբեանց եւ Սուրբ Ղազարի մատենադարանների գրչագրերի հետ եւ յաւելել Տարօնացու անունով գտնուած նոր միաւորներ: Աղբիւրագիտական ճշգրտումների համար ներկայացուած են միաւորների սկսուածքները եւ երբեմն՝ վերջաւորութիւնները:*

ա) Պողոսի Տարօնացւոյ ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի (համառօտ տարբերակ)
Սկս. — «Աստուածային եւ մեծ առաքեալն Պաւղոս գրէ առ կորնթացիսն՝ ասելով. «Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալսդ...»[4]:

բ) Պատասխանի Թղթոյն Թէոփիստեայ (ընդարձակ տարբերակ)

---

4 *Բնագիրը հրատարակուել է 1688 թ. Նոր Ջուղայում, «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», էջ 376–450: ՄՄ — 83 (1664), 573 (ԺԵ), 625 (ԺԷ), 774 (1651), 841 (ԺԸ), 1324 (1281), 1521 (1404) (153բ–159բ) (երկու միաւոր), 1865 (1656), 2160 (1773) — քաղուածք, 2174 (1309), 2190 (ԺԸ), 2268 (ԺԷ), 3076 (ԺԷ), 3078 (1589–1608), 3124 (1757), 3192 (1714), 4670 (1401), 4676 (ԺԴ), 4677 (ԺԵ), 4709 (ԺԴ–1344°), 4764 (1534), 5787 (1617), 6517 (ԺԸ), 6617 (1618), 6624 (ԺԷ), 7248 (ԺԷ), 7248 (ԺԷ), 7255 (1701), 8030 (1731), 8194 (1688), 8273 (1731), 8391 (ԺԷ), 8938 (1685), 9830 (ԺԸ), ՍՅ — 775, 858 (ԺԷ), 898 (1619), 960, (1602), 1047 (ԺԷ), 1072 (1611), 1134 (1822), 1272, 1418, 1750, 1760, 1840, 1886, 2043, ՍՂ — 791 (եր. 332–355), 392 (ամբողջը), 1440 (եր. 28–58):*

5 *Բնագիրը լոյս է տեսել 1752 թ. Կ. Պոլսում՝ «Թուղթ երանելւոյն Պողոսի Տարօնացւոյ յաղթող ախոյեան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ հռոմ փիլիսոփայի» վերնագրով: ՄՄ 731 (1345) 1ա–253ա, թերի, սկս. — «...ն ուսուցին սուրբ եկեղեցւոյ, զոր սուրբ առաք[ելն] ասաց եւ ստուգապէս ցուցանէ զանճառ միաւորութիւն Աստուծոյ ընդ մարմնոյ Իւրոյ եւ գրեաց այսպէս...». յիշատակարաններ գրչի՝ 251բ, ստացողի՝ 253ա, յետագայի (ԺԴ դ.)՝ 305ա: ՄՄ 1555 (1397թ.), թերի, 292բ–317ա, սկս. — «Սուրբն Գրիգոր ասէ՝ միացաւ ի մարմնի եւ խառնեաց զմարդկութիւնս ընդ Իւրումն Աստուածութեանն...», վրջ. «...Իսկ [ի] Հօրէ Միածինն մշտնջենաւոր, մշտնջենաւորապէս ծնեալ Հոգւովն Սրբով ի Մարիամ կուսէն...»: ՄՄ 2678 (1426–1478թթ.), թերի, 181ա–225բ, սկս. — «Գոչեաց ի Կաթողիկէ առաքելական քրիստոսապսակեալ հարսնացեալ սուրբ Եկեղեցի եւ երաց զծածկեալ զգանձս Իւր յաւիտենից...», վրջ. — «...վասն զի յառաջնորդաց ձերոց ապականեցաւ ամենայն կարգ եկեղեցւոյ Աստուծոյ, յեպիսկոպոսաց, ի քահանայից, ի կրօնաւորաց եւ ի սարկաւագաց, վասն այնորիկ յառաջագոյն պատուիրեաց Պողոս, խրատեաց եւ ասէ...»: (Ձեռագրից պակասում են 209ա, 209բ երեսները, 219 էջը կիսատ է, մեծ մասը ջնջուած է): Տես նաեւ ՄՄ — 574 (ԺԷ), 670 (ԺԸ), 671 (ԺԶ), 840 (1641), 1109 (1640), 1154 (ԺԷ), 8482 (1664, 1714), ՍՅ — 847 (1634), 898 (1619), 1072 (1611), 1547 (1393):*

«Գոչեաց Կաթուղիկէ Առաքելական Քրիստոսապսակ եւ հարսնացեալ սուրբ Եկեղեցի. Եբաց գծածկեալ գանձն իւր յաւիտենից. եւ փող հարեալ բարձրաքարոզ բարբառով...»[5]*:*

գ) Պողոսի Տարօնացւոյ Վասն մարդեղութեան Քրիստոսի[6]

դ) Ընդդէմ հերձուածողաց[7]

Սկս. — «Հաւատով խոստովանիմք, պաշտեմք եւ երկրպագեմք...»:

ե) Ի խորհուրդ Քառասնորդական պահոց[8]

Սկս. — «Վասն ընդարձակագոյն եւ երկար ասելոյ եւ գրելոյ զաւրինակ եւ զխորհուրդ քառասնորդաց պահոցս յառաջագոյն ասացեալ է ի բազմաց...»:

զ) Պատճառ երկրորդ շաբաթու երկուշաբաթ աւուրն, թէ ո՞րպէս երկրորդ շաբաթս հինգ աւուրցս հաւասար ունի զընթերցուածսն եւ զսաղմոսն զատ եւ ուրիշ յայլոցն շաբաթուց առ յեաւթներորդ շաբաթն հայելով (ամբողջական, լաւ պահպանուած)[9]

Սկս. — «Արդ, երկրորդս շաբաթ, յորում ծնունդն Սամուէլի պատմի յաւրինակ ծննդեանն Քրիստոսի...»:

է) Պողոսի Տարօնացւոյ Բացայայտութիւն ժամակարգութեան աղօթից[10]

Սկս. «Ազգարարութիւն ժամուն նշանակ է հրեշտակացն լուսաւորութեան գոչման փողոցն...»:

ը) Պողոսի Տարօնացւոյ Կարգ մեկնութեան ժամուց աղօթից[11]

Սկս. — Ա. «զմարմնական վաստակն եւ զհանգստեան մահիճսն [թողուլ] եւ հասանել ի տեղի աղօթիցն. այս է՝ թողուլ զհողաթաւալ եւ զմարմնական ջանս եւ համօրէն յարութեանն հասանել...», վրջ. — «..եւ յառնել խաչիւն պահպանեալ հրեշտակաց

---

6 ՄՄ — 714 (1303–1350)

7 ՄՄ — 6907 (ԺԵ), 3918 (1591), 9410 (ԺԹ, հատուած), 10199 (ԺԷ, հատուած), ՍՅ 1142 (271–294), ՍՂ 57, (եր. 467–486 հին համարակալումով) — ընդարձակ հարցմունք եւ պատասխանիքով:

8 ՄՄ — 1521 (1404 թ.), 186բ–189ա: Տես նաեւ՝ 3276 (ԺԷ), 4869 (1482):

9 ՄՄ — 1521 (1404 թ.), 189ա–189բ: Տես նաեւ՝ 3276 (ԺԷ), 4869 (1482):

10 ՄՄ — 1979 (ԺԴ, 401ա–411բ), ՍՅ 1272 (226–252):

11 2018 (1621 թ.), 368ա–376ա (ամբողջական, լաւ պահպանուած):

12 ՍՅՁ 1272 (252–257):

նմանութեամբ յաւրհնութիւն եւ ի գովեստ Տեառն, զարթուցեալ փառաւորել զՀայր, զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս»:

թ) Յաղագս սրբոյ Եկեղեցւոյ կարգացոյցք[12]
Սկս. — «Երանելին Պաւղոս գրէ, եթէ ստուեր հանդերձելոց բարեացն էին աւրէնք...»:

ժ) Յաղագս հիմնարկութեան սրբոյ Եկեղեցւոյ[13]
Սկս. — «Վէմն անտաշ եւ անկոփ կանգնեալ ի մէջ խորանին...»:

Վերագրելի գործեր

ՄՄ — 3276 գրչագիրը պարունակում է գործեր Պողոս Վերծանողի անունով՝
59բ. Յառաջաբանութիւն Պաւղոսի, զոր [յ]Եփթաղի ցանկէ արարեալ
Սկս. — «Աբիացիքն հերձուած ասեն, թէ մարգարէից բանքն ի վկայութիւն չէ ընդունելի...»:
Նոյն երեսի վրայ՝ Պատճառ սահմանաց գրոց
Սկս. — «Մեծն Դաւիթ եւ Եզնակ Կողբացի չոգան ի յԱթէնս...»:
61ա. Վասն կազմութեան խնկոց
Սկս. — «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ...»:
61բ. Աստղաբաշխական երկրաչափութիւնք
Սկս. — «Ի հարաւային ծայրէն մինչեւ ցհիւսիսային շրջանակն...»
62ա. «Գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր չինէ»
Սկս. — «Այս է՝ գիտութիւն առանց սիրոյ հպարտացուցանէ...»
Զանազան միաւորներ՝ ՍՂ 57 գրչագրի (եր. 486–505) «Ընդդէմ հերձուածողաց» բնագրից անմիջապէս յետոյ:
ՍՂՁ 643, եր. 118–124 — Վերլուծութիւն կարգաց Եկեղեցւոյ
Սկս. — «Որք զթագս արքայական...»:

***

Պողոս Տարօնացու «Բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց» հակաճառական բնոյթի երկը, որի բնագիրն ընթերցողին առաջին անգամ ներկայացուել է «Գանձասար» հանդէսի Է հատորում եւ

13 ՍՅՁ 1272 (257–256):

այժմ նոյնութեամբ վերահրատարակւում է, հայ դաւանաբանական գրականութեան կարեւոր աղբիւրներից է: Բնականաբար երկի հիմնական թեման քրիստոսաբանութիւնն է: Թէպէտ յստակ չէ, թէ որն է երկի ստեղծման դրդապատճառը, եւ «հերձուածողներ» ասելով՝ հեղինակը ում նկատի ունի, այսուհանդերձ երկն ունի ակնյայտ հակաքաղկեդոնական ուղղուածութիւն: Ամենայն հաւանականութեամբ, այս երկասիրութիւնը, ինչպէս նաեւ Տարօնացու «Պատասխանի թղթոյն Թէոփիստեայ» (համառօտ եւ ընդարձակ) գործը, արդիւնք են լարուած հակաքաղկեդոնական պայքարի:

Երկի առաջին մասը հաւատքի խոստովանութիւն է՝ «Դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն» խորագրով, ունի հակիրճ երրորդաբանական սկիզբ եւ աւելի ընդարձակ քրիստոսաբանական շարունակութիւն: Երկրորդ մասը բացառապէս քրիստոսաբանական բնոյթի «Հարցմունք եւ պատասխանիք» է: Որոշ ձեռագրեր «Դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն» խորագրով առաջին մասը ներկայացնում են Պօղոս Տարսոնացու անունով: Յայտնի չէ, թէ սա ընդամէնը գրչական սխա՞լ է, թէ՞ իսկապէս առաջին մասի հեղինակը Պօղոս Տարսոնացին է, ում ինքնութիւնը մնում է անյայտ մեզ համար:

«Հարցմունք եւ պատասխանիք»-ում Պօղոս Տարօնացին հետեւողականօրէն ներկայացնում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեան մի շարք կարեւոր դրոյթներ, յատկապէս Քրիստոսի մարդկային համագոյութեան խնդիրը: Այս կարեւորագոյն փրկաբանական խնդրի բացայայտման բանալին, ըստ Տարօնացու, Տիրոջ մարմնի կիրընդունակութեան եւ մարդկային տկարութիւնների ճիշտ ընկալումն է: Նա քննութեան է առնում Սուրբ Աւետարանի դրեթէ բոլոր դժուարիմաց խօսքերը Տիրոջ մարդկային տկարութիւնների մասին՝ ցոյց տալով Քրիստոսի մարդկային կատարելութեան ճշմարտացիութիւնը: Պօղոս Տարօնացին ոչ միայն բացայայտում է Տիրոջ մարդեղութեան

14 Բնագիրը ներկայացւում է աննշան ուղղագրական միջամտութիւններով. օրինակ՝ վերականգնուած են բաց թողնուած յ-երը եւ ւ-երը՝ արքա-արքայ, քահանա-քահանայ, հոգոյ-հոգւոյ եւն, սրբագրուած են որոշ բարբառային ձեւեր՝ անկամ-անգամ, ցանգամ-ցանկամ եւն, ուղղուած են տառասխալները եւ վրիպակները՝ միաւորացաւ-միաւորեցաւ, կուսեն-կուսէն եւն: Միօրինակութեան համար հազուադէպ հանդիպող «այդ» հնագոյն ձեւը (3 անգամ) փոխարինուած է «այլ»-ով: Մնացած անհրաժեշտ փոփոխութիւններն արտացոլուած են տարընթերցումների մէջ:

իսկութիւնը, այլեւ իրաւամբ ցոյց տալիս քաղկեդոնական համակարգում քօղարկուած «մարդաբանական առնուազութիւնը»: Անանձ եւ անկատար մարդեղութիւնը վտանգում է փրկութեան իսկութիւնը: Քրիստոս կատարեալ Աստուած է եւ կատարեալ մարդ՝ անբաժանելի, անշփոթ եւ անփոփոխելի միութեամբ: Աստուածութիւնը եւ մարդկութիւնը անճառելիօրէն միաւորուած են մէկ բնութեան եւ անձի մէջ:

Երկի քննական բնագիրը ներկայացնում ենք ըստ Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի չորս ձեռագրերի՝ 6907 (ԺԵ) — A[14], 3918 (1591) — B, 9410 (ԺԹ, հատուած) — C1, 10199 (ԺԷ, հատուած) — C2[15]:

15 C1 եւ C2 ձեռագրերում առաջին մասը («Դաւանութիւն հաւատոյ ի Սուրբ Երրորդութիւնն») ամբողջական է, իսկ երկրորդ մասից («Հարցմունք եւ պատասխանիք») կան մի քանի փոքր հատուածներ՝ աննշան տարբերցումներով:

°ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՊԱՒՂՈՍԻ ՏԱՐԱՒՆԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ*

86ա

ԲԱՆ ՀԱՒԱՏՈՅ ԸՆԴԴԷՄ // ՀԵՐՁՈՒԱԾՈՂԱՑ

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ ⌜ԱՒԳՆԵԱ՛, ՅԻՍՈՒՍ⌝*

I. [1]Հաւատով խոստովանիմք+, □պաշտեմք եւ երկրպագեմք զգուգափառ միութիւն Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: [2]Հայր անսկիզբ եւ անճառ, որոց ⌜ինքն է⌝ սկիզբն եւ պատճառ՝ Որդւոյ՝ ծննդեամբ եւ Հոգւոյ+՝ բղխմամբ: [3]Թէպէտ եւ սկսեալք են ի Հաւրէ, ⌜այլ հաւասարք են ընդ Հաւր⌝՝ ըստ բանին Տեառն, որ ասէ. «Ես եւ Հայր °իմ մի եմք» [Յովհ. Ժ 30]: [4]Եւ վասն Հոգւոյն ասէր Յիսուս առ սամարացիսն+. «Հոգի է Աստուած» [Յովհ. Դ 24]: [5]Հոգի է ըստ անձնաւորութեան եւ Աստուած է ըստ բնութեան, վասն զի Աստուածութիւնն բնութիւն է Սուրբ Երրորդութեանն: [6]Եւ ասէր Տէրն+՝ Հոգի է Աստուած. եւ ոչ ասէր, թէ՝ եղեւ, այլ թէ՝ է, եւ

---

* ° *B / հերձուածողացն B / ⌜–⌝ B / Սահակայ սուրբ միայնակեցի եւ երանելի ճգնաւորի Քրիստոսի ասացեալ է դաւանութիւն ի Սուրբ Երրորդութիւնն (Երրորդութիւն— C1) եւ ընդդէմ չարափառացն հարցումն եւ պատասխանի Պաւղոսի Տարսոնացւոյ ասացեալ ընդդէմ հերձուածողաց / բան հաւատոյ... աւգնեա՛ Յիսուս C (=C1+C2)*

1 *+եւ դաւանեմք BC / □պաղատեմք C1 / զուգափառ B / Երրորդութեան C / Սրբոյն C1*

2 *անսկիզբն BC / ⌜ի քէն է⌝ C / Որդւոյն C / Հոգւոյն BC / + Սրբոյ BC*

3 *⌜–⌝ A / ⌜0124(-3)⌝ C / ասէր B / ° AC1*

4 *ասէ C / սամարացին BC / +թէ C*

5 *առանձնաւորութեան BC*

6 *+թէ BC / +1եւ լուսաւորութեան B / եւ լուսով յերեսաց (երեսաց C2) քոց տեսանեմ զլոյս C*

էն ցուցանէ, թէ ոչ է եղեալ, այլ բղխեալ է ի Հաւրէ՝ ըստ Դաւթի, որ ասէ. «Ի քէն է, Տէ՛ր, աղբեւր կենդանութեան[+1]» [Սաղմ. ԼԵ 10]: [7] Եւ ոչ ասէր[+՝] ի ձէնջ, այլ թէ՝ ի քէն °է. ըստ նմին եւ Եսայի ասէ. «Տէր, Տէր առաքեաց զիս, եւ Հոգի նորա» [Ես. ԽԸ 16]: [8] Տէր Հայր, Տէր Որդի եւ Հոգի նորա ասէ. այլ ոչ ասէ[+՝] Հոգի նոցա, այլ թէ՝ °Հոգի նորա, [+1]զի ի Միոյն է բղխումն եւ ոչ՝ յերկոցունցն: [9] Որպէս Որդի միայն °է ի Հաւրէ ծնեալ եւ ոչ ի Հոգւոյն, նոյնպէս եւ Հոգին Սուրբ միայն °[1]է ի Հաւրէ բղխեալ եւ ոչ ի յՈրդւոյ: [10] Եւ այլ իմն պատճառ, ⌜զի եթէ⌝ Հոգին յՈրդւոյ եւս բղխէ, որպէս ի Հաւրէ, ապա եւ երկու հոգի իմանի. մինն՝ ի Հաւրէ, եւ միւսն՝ յՈրդւոյ: [11] Եթէ մի Հոգին յերկոցունց բղխէ, ահա մասնաւոր տեսանի, որ է յոյժ // հայհոյութիւն: [12] Եւ եթէ 86բ
հարցանեն[+՝] ընդէ°ր ասաց Որդին, թէ՝ «Ցիմմէ անտի առնուցու եւ պատմեսցէ ձեզ» [Յովհ. ԺԶ 14], ոչ եթէ այս զբղխումն ասէ, այլ Յիսուս յայտ առնէ ասելովն. «Ոչ եթէ յանձնէ ինչ խաւսեսցի, այլ զոր ինչ լուիցէ, խաւսեսցի եւ զգալոցն պատմեսցէ ձեզ» [Յովհ. ԺԶ 13]: [13] Քանզի որպէս Որդին Հոգւովն առնէր զաւրութիւն՝ ասելով, թէ՝ «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեւս» [Մատթ. ԺԲ 28], նոյնպէս եւ Հոգին[+] Որդւովն պատմէր զիմաստութիւն՝ ըստ Պաւղոսի, որ ասէ. «Առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյ իւրոյ ի սիրտս մեր, որով աղաղակեմք՝ Աբբա՛, Հա՛յր» [Գաղ. Դ 6]: [14] Եւ եթէ ասիցեն, թէ փչեաց յաշակերտսն[+] եւ ասէ. «Առէ՛ք Հոգի Սուրբ» [Յովհ. Ի 22], եւ թէ այս բղխումն է, ապա եւ ⌜Որդի ծնունդ է⌝ ի Հոգւոյն՝ ըստ հրեշտակին, որ[+1] ասէ, թէ՝ «Յղութիւն նորա ի Հոգւոյն Սրբոյ է» [Մատթ. Ա 20]: [15] Ահա չփոթումն երեւի՝ Որդին Սուրբ ▫բղխող եւ Հոգին Սուրբ բղխող. զայս ոչ տեսանեմք ▫[1]ի Սուրբ Երրորդութիւնն: [16] Եւ զայս եւս ասէ

---

7 ասէ B / [+]թէ B / ° B
8 [+]թէ B / ° B / [+1]վասն զի B / երկոցունցն B
9 ° B / °[1] B
10 ⌜եւ թէ⌝ B
11 մին B
12 թէ(1) B / [+]թէ B / Որդի B
13 ասելովն B / [+]Սուրբ B / որ (31) B
14 թէ (1) B / ասեն (2) B / [+]իւր B / ⌜այս եւս ծնունդ է Որդին⌝ B / [+1]առ Յովսէփ B / ասէր B
15 ▫ ծնող B / ▫[1]առ B
16 ° B

Որդի առ Հայր, թէ՝ «Ամենայն ինչ, °որ քո է, այն իմ է» [Յովհ. ԺԷ 10]: [17] Ոչ +այս զբղխումն ասէ, այլ զանհաս էութիւնն: Զնոյն ինքն ասէ, թէ՝ «Ամենայն, որ ինչ իմ է, այն քո է» [Յովհ. ԺԷ 10]: [18] Ոչ եթէ այս զմարմնանալն ասէ, այլ զաւրութիւն ասէ: [19] Ապա թէ ասիցեն, թէ Որդին անկենդան է, վասն զի ի նմանէ ոչ բղխէ Հոգին, ահա+ ասասցուք ⌜եւ մեք⌝, եթէ Հոգին եւս անբան °է, քանզի+1 ի սմանէ °1ոչ եւս ծնանի Որդի, որ է °2կարի յիմարութիւն զայս գործել: [20] Այլ մեզ պարտ է իմանալ, քանզի հայրութիւնն ոչ է բնութիւն, եւ որդիութիւնն+ ոչ է բնութիւն, եւ բղխողութիւնն Հոգւոյն ոչ է բնութիւն,
87ա այլ յատկութիւնք առանձնաւորու//թեանցն են մի բնութեան: [21] Եւ հարցանեմք ընդ նոսա, թէ ⌜Սուրբ Հոգին⌝ բղխումն է, եւ Որդին՝ միածին ծնունդ, զբղխումն ի վերայ անձի՞նն ասէք, թէ՞ ի վերայ բնութեանն: [22] Զի եթէ ի վերայ անձինն ասէք, ահա որ երկու անձն ասէք զՀոգին Սուրբ. մինն՝ ի Հաւրէ եւ միւսն՝ ի յՈրդւոյ: [23] Եւ եթէ ի վերայ բնութեանն ասէք+՝ բխեալ է ի Հաւրէ եւ յՈրդւոյ, ահա որ զբնութիւնն այլայլեցիք: [24] Քանզի զՀոգին Սուրբ ասէք, թէ ի բնութեանցն է եւ յերկոցունց բղխեալ է. ապա եւ բղխողքն հեռի են ի բնութենէ, քանզի նոքա ոչ են բղխած, այլ բղխողք են:

II. [1] Եւ արդ, մատիցուք առ+ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս, եթէ որպէ՞ս էջ յարգանդ Կուսին եւ կամ զի՞նչ էառ եւ որպէ՞ս միացաւ եւ զիա՞րդ կրեաց զկիրս ամենայն եւ որպէ՞ս էր անմեկնելի ի Հաւրէ եւ ի Հոգւոյն Սրբոյ: [2] Եթէ ինքն կամեսցի, □յայտնեսցէ: [3] Ասաց հրեշտակն առ ամենասուրբ Կոյսն Մարիամ. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» [Ղուկ. Ա 35]: [4] Եկն Հոգին Սուրբ զաւրութեամբ եւ մաքրեաց զԿոյսն սուրբ

17 +եթէ B
19 +եւ աստ B / ⌜–⌝ B / ° A / +1եւ B / նմանէ B / °1 B / °2 B
20 հայրութիւն B / որդիութիւն B / + Բանին B / բխողութիւն B / յատկութիւն A / բնութիւն AB
21 ⌜10⌝ B
22 թէ A
23 բնութեան A / +եթէ B / զբնութիւն B
24 եթէ B / բնութիւն(7) B / բխէ(1) B
1 +կենսատու B / միաւորեցաւ B
2 □յայտ արասցէ B
3 կոյս B

յամենայն մարմնական կրից, եւ ապա Որդին միածին կամաւ Հաւր
եւ գործակցութեամբ Սուրբ Հոգւոյն էջ բնակեցաւ ի սուրբ Կոյսն:
[5] Եւ անպարագրելի անձն Որդւոյն պարագրեցաւ ի Կուսէն՝ ըստ
Պաւղոսի, որ ասէ. «Որ ի կերպարանս Աստուծոյ էր, ոչ ինչ յափշտա-
կութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ զանձն ու// 87բ
նայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ» [Փլպ. Բ 6—7]: [6] Եւ ընդ
իջանել Բանին էառ յարենէ ամենամաքուր Կուսին եւ ի վերայ իւր
աստուածային անձին անձնացոյց՝ ըստ հարցն սրբոց, որ ասացին, թէ՝
«Էառ ⌜մարմին, հոգի⌝ եւ միտք եւ զամենայն ⌜[1]ինչ, որ[1]⌝ է ի մարդ»:*
[7] Առանց ապականութեան առեալ եւ աստուածացոյց՝ ըստ Դաւթի, թէ՝
«Աւծ զքեզ Աստուած, Աստուած քո» [Սաղմ. ԽԴ 8]. ոչ եթէ զԲանն
Աստուած ասէ, այլ զմարդեղութիւնն: [8] Եւ ըստ Յիսուսի, որ ասէ, ի
Յոհանու գլուխն, թէ՝ «Զոր Որդին Մարդոյ տացէ ձեզ, քանզի զնա
Հայր կնքեաց Աստուած» [Յովհ. Զ 27]: [9] Եւ արդ, ոչ ասեմք երկուս՝
այլ իմն զաւծածն եւ այլ իմն զաւծողն: [10] Այլ էաւծ, ասէ, միաւորու-
թեամբ եւ կնքեաց Աստուածութեամբ: [11] Որպէս մի +կերպարան Հաւր
եւ մի +[1]կերպարան Հոգւոյն Սրբոյ, նոյնպէս եւ մի կերպարան Բանին
եւ մարդկութեանն: [12] Թէպէտ եւ Պաւղոս երկուս ասէ, այլ □զմիութիւն
ինքն ցուցանէ՝ ասելով+ մեզ. «Մի է Աստուած Հայր եւ °մի միջնորդ
Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս» [Ա Տիմ. Բ 5],
քանզի որպէս ի հոգւոյ եւ ի մարմնոյ ⌜մի մարդ կոչի⌝, նոյնպէս աս-
տուածային բնութիւն եւ մարդկային բնութիւն կոչի մի մարդ, զորոյ
զանունն Քրիստոս Աստուած ճանաչեմք: [13] Դարձեալ ասէ Պաւղոս.
«Մարդով եղեւ մահ, եւ մարդով՝ յարութիւն մեռելոց» [Ա Կոր. ԺԵ 21]:
[14] Եւ ինքն ցուցանէ, թէ ուստի է մարդս այս, որով զյարութիւն արար՝
ասելով, թէ՝ «Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն, իսկ երկրորդ մարդն՝
°Տէր յերկնից» [Ա Կոր. ԺԵ 47]: [15] Տեսանե՞ս, զի թէպէտ մարդ ասէ // 88ա

---

5 *յունայնացոյց* B / *էառ* B
6 *անձինն* B / *առ* B / ⌜10⌝ B / ⌜[1]10[1]⌝ B
* *Հաւատոյ հանգանակ. «Ժամագիրք», Երուսաղէմ, 1959, էջ 460*
8 *Յոհան* B
10 *աւծ* B / *Աստուածութեամբն* B
11 +*է* B / +[1]*է* B
12 □*միաւորութիւնն* B / +*թէ* B / ° B / ⌜(+*մարդն*)201⌝ B / *բնութիւնն* B / *որոյ* B
14 *զյարութիւնն* B / ° B

զՅիսուս Քրիստոս, այլ յերկնից ասէ: 16⌜Որպէս եւ յայլում տեղւոջ
ասէ⌝, թէ՝ «Յիսուսիւ Քրիստոսիւ եղեւ ամենայն+ ինչ յերկինս եւ+1
յերկրի՝ եթէ՛ երկինք, եթէ՛ երկիր, եթէ՛ աթոռք, եթէ՛ պետութիւնք, եթէ՛
իշխանութիւնք» [Կող. Ա 16]: 17 Տեսանե՞ս, զի զՅիսուս, զոր եւ մարդ
ասէ, ի յերկնից ասէ եւ արարչակից ընդ Հաւր եւ □ընդ Հոգւոյն: 18 Եւ
արդ, զայս եւս գիտելի է, զի եւ Պաւղոս Բ կերպարանս ասէ զՅիսուս
Քրիստոս՝ □զմինն իջեալ եւ զմիւսն առեալ: 19 Եթէ Բ բնութիւնքն ոչ
միաւորեցան, որպէս հերձուածողքն ասեն, ահա+ Բ կերպարանքն,
քանզի Պաւղոս զկերպարանքն Բ-□ացոյց եւ ոչ՝ զբնութիւնն: 20 Եթէ
կերպարանքն ոչ միաւորեցան, ահա+ Երրորդութիւնն+1 չորրորդութիւն
տեսանի: 21 Եթէ ասիցեն, թէ Պաւղոս վասն Բ բնութեան °ասէ զերկու
կերպարանքն+, □ըստ այս եւս մոլին: 22 Քանզի+ զԵրրորդութիւնն մի
կերպարան □ասեն, որպէս եւ՝ մի բնութիւն: 23 Ահա+ զանձնաւորու-
թիւնն ուրացան, քանզի կերպարան եւ պատկեր ի վերայ անձինն
ասի եւ ոչ՝ ի վերայ բնութեանն: 24 Զի յամենայն Սուրբ Գիրս զպատ-
կերս եւ զկերպարանս եւ զանձինս երիս °ասեն՝ ըստ Մովսիսի, որ
ասէ, թէ՝ «Ասաց Աստուած՝ արասցուք մարդ ըստ պատկերի մերում+
⌜եւ ըստ նմանութեան⌝» [Ծն. Ա 26]: 25 Եւ վասն անձինն ասէ Յիսուս.
«Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եւ Որդւոյ ետ
ունել կեանս յանձին իւրում» [Յովհ. Ե 26]: 26 Ոչ եթէ Որդի ոչ ունէր,
88բ զայն ցուցանէր Յիսուս, թէ՝ «Որ յանձնէ իւրմէ +խաւսի, փառս // ան-
ձին իւրում խնդրէ» [Յովհ. Է 18]: 27 Վասն այնորիկ զՀայր պատճառ
ցուցանէ, զի մի՛ Որդին+ միայն փառաւորեսցի: 28 Եւ վասն Հոգւոյն

16 ⌜ըստ Պաւղոսի⌝ B / +որ B / երկինս B / +1որ ինչ B / թէ(1,2,3,4,5) B
17 □սուրբ B
18 կերպարան B / □զմիւսն A
19 միաւորեցաւ A / +որ B / □ասաց B
20 միաւորեցաւ A / +եւ B / Երրորդութեան B / +1կերպարանն B
21 բնութեանն B / ° B / կերպարանն B / +ասաց B / □ընդ B
22 +թէ B / Երրորդութիւնն B / □է B
23 +որ B / զանձնաւորութիւնքն B
24 ամենայն B / զպատկերքն B / ° B / +եւ պատկերի մերում A / ⌜–⌝ B
25 անձին B
26 ցուցանէ B / իւրմէ B
27 +Որդին A
28 Որդւոյն B

ասէր, թէ՝ «Ես Հոգւովն Աստուծոյ հանեմ զդեւս» [Մատթ. ԺԲ 28], զի եւ Հոգին փառաւորեսցի ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ միածնի: [29] *Եւ դարձեալ ի Յորդանան յայտնապէս տեսանեմք ▫զերիս կերպարանսն եւ ոչ՝ զչորրորդն:*

III. [1] *Եւ արդ, խնդրելի է, եթէ կերպարան Որդւոյն, որ էջն յերկնից, միաւորեցաւ ընդ կերպարանին ▫մարդոյն, որպէ՞ս էրն յարգանդի Կուսին կամ որպէ՞ս ընդ Հաւր եւ ⌜Հոգւոյն Սրբոյ⌝, եւ որպէ՞ս Հայր եւ ▫*[1] *Հոգի ընդ նմա էին. ոչ անձնաւորութեամբ, այլ զաւրութեամբ եւ միաւորութեամբ:* [2] *Նոյնպէս եւ Որդին ընդ Հաւր էր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ՝ ըստ հրամանի ▫Տեառն, որ ասէր, եթէ. «Ես ի Հայր, եւ Հայր*[+] *յիս» [Յովհ. Ժ 38]:* [3] *Ոչ ընդ ▫ամենայն ինչ ասէր, այլ զանորիշութիւն ցուցանէր, քանզի թէպէտ*[+] *անշաւշափելի էր Բանն, շաւշափեցաւ՝ ըստ Յովհաննու, որ ասէ, թէ՝ «Զեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց» [Ա Յովհ. Ա 1], սակայն անշաւշափելի մնաց, քանզի ոչ չփոթեցաւ:* [4] *Նոյնպէս եւ մարդկութիւն անշաւշափելի էր*[+] *Բանին միաւորութեամբն եւ ոչ չփոթմամբ՝ ըստ բանին Տեառն, որ ասէ, եթէ՝ «Ոչ ոք ել յերկինս, ⌜եթէ ոչ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս⌝» [Յովհ. Գ 13]:* [5] *Քանզի*[+] *հացն եւ գինին անապական, զոր Տէրն ետ աշակերտաց ◦իւրոց՝ զկուսածին Քրիստոսն հաւատամք:* [6] *Նոյնպէս եւ զհոգին բանական եւ զմարմինն, որ*[+] *ի Կուսէն էառ, Աստուած յաւիտենական ▫խոստովանիմք: //* [7] *Եւ եթէ ասիցեն, թէ ի* 89ա
Կուսէն էառ՝ յաւիտենական ոչ է, ասեմք ⌜եւ մեք⌝, եթէ ի սեղանոյն ◦էառ զհացն եւ զգինին[+] *Յիսուս, այն*[+1] *ոչ է կուսածին Քրիստոս:* [8] *Ահա*[+] *ամենայն դիմաւք ⌜կուրացեալ էք⌝, որք զայսպիսի կարծիս ստացէք ի Կուսածինն:* [9] *Դարձեալ հարցցուք եւ մեք ընդ նոսա՝*

---

29 ▫զերրորդ B /կերպարանն B / չորրորդն A
1 կերպարան(2) A / ▫Որդւոյն B / յարգանդ B / ⌜10⌝ B / ▫[1]Որդի A
2 ▫Փրկչին B / [+]ի B
3 ▫ման B / զանորիշութիւնն B / [+]եւ B
4 մարդկութիւնն B / [+]ըստ B / ⌜–⌝ A
5 [+]որպէս B / զհացն B / զգինին B / աշակերտացն B / ◦ B
6 [+]եւ B / ▫հաւատամք B
7 ⌜–⌝ B / ◦ B / [+] ի բաժակէն առ B / [+1]եւս B
8 [+]որ B / ⌜կորացեալ գտանին⌝ B
9 ◦ A / ⌜վասն⌝ B / ▫ընութեան B / ⌜[1]վասն անձինն[1]⌝ B

°եթէ Աստուած կատարեալ էր Քրիստոս եւ մարդ կատարեալ, զկատարելութիւնն ⌜ի վերայ⌝ ◻անձի՞ն ասէք, թէ՞ ⌜ի վերայ բնութեանն[1]⌝:
10 °Զի թէ ի վերայ բնութեանն ասէք, ահա որ Բ կատարելութիւն տեսանի ի Սուրբ Երրորդութիւնն: 11 Քանզի Երրորդութիւնն մի բնութիւն է, եւ մի բնութիւնն մարդկութիւն. ահա որ զԵրրորդութիւնն ասէք մարմնացեալ, որ է յոյժ հայհոյութիւն: 12 Զի թէպէտ+ Սուրբ Երրորդութիւնն մի բնութիւն է, այլ Հայր եւ Հոգին ոչ առին մարմին, բայց միայն՝ Որդին: 13 Եւ եթէ Բ կատարելութիւն ի վերայ անձինն ասէք, ահա որ Երրորդութիւնն չորրորդութիւն եղեւ, որ է Նեստորի °չարափառութիւնն: 14 Եւ եթէ ասիցեն, թէ մարդկային անձն ոչ ունէր Քրիստոս, քանզի աստուածային անձն ունէր, ասասցուք եւ մեք՝ եթէ զաստուածային բնութիւն ունէր, ընդէ՞ր+ °զմարդկայինն բնութիւն էառ: 15 Եւ այլ իմն պատճառ. զի եթէ մարդկային անձն ոչ ունէր, ապա եւ սուտ խաւսէին, թէ մարդ կատարեալ է: 16 Եւ որ °ասէ սուտ+ սատանայ է: 17 Իսկ մեք այսպէս դաւանեմք զՔրիստոս, քանզի °է Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ+. եւ ընդ իջանել Բանին
89բ յարգանդ+1 Կու//սին՝ էառ զկատարելն եւ ոչ զմասնաւորն: 18 Քանզի որպէս զաստուածային կերպարանն ◻ի մարդկայինն+ ◻1միացոյց, եւ է մի կերպարան, ◻2այսպէս եւ աստուածային կատարելութիւնն ⌜եւ մարդկային կատարելութիւնն⌝ միաւորեցաւ եւ է մի կատարելութիւն:
19 Նոյնպէս աստուածային բնութիւնն եւ մարդկային բնութիւնն միաւորեցաւ եւ է մի բնութիւն: 20 ◻Սմին նման աստուածային ներգործութիւնն եւ մարդկային ներգործութիւնն միաւորեցաւ, եւ է մի

10 ° A / եթէ B
11 բնութիւն(2) B / մարդկութիւնն B
12 + եւ B
13 զԲ B / կատարելութիւնն B / ° A
14 զմարդկային B / զաստուածային B / թէ B / բնութիւնն B / +եւ B / ° B բնութիւնն B
15 զմարդկային B / խաւսին B
16 ° B / +խաւսի ի B / սատանայէ B
17 ° B / +է B / +1սուրբ B / մասնաւորն A
18 աստուածային B / ◻եւ B / մարդկային B / +կերպարանն B / ◻1միաւորեցաւ B / ◻2նոյնպէս B / ⌜–⌝ B
19 սոյնպէս(0) B
20 ◻նմին B / նմանէ(1) B / ներգործութիւն(1) A

ներգործութիւն: [21]⌜*Այսպէս եւ*⌝ *աստուածային կամքն եւ մարդկային կամքն միաւորեցաւ, եւ է մի կամք:* [22] *Ոչ բաժանմամբ ասեմք՝ ըստ Նեստորի եւ ոչ շփոթմամբ՝ ըստ Եւտիքեայ, այլ անշփոթ միաւորութեամբ խոստովանիմք զՔրիստոս:* [23] *Քանզի որպէս Հայր մի է, եւ ոչ ասեմք Բ, նոյնպէս եւ մարմնացեալ Բանն Աստուած մի է, եւ ոչ ասեմք Բ:* [24] *Նոյնպէս եւ Հոգին Սուրբ մի է եւ ոչ*[+] *Բ, զի մի՛ Երրորդութիւնն չորրորդութիւն* [+1]*համբաւեսցի:*

IV. [1]□*Հարցումն: Ընդէ՞ր Հայր եւ Հոգի ոչ առին մարմին, բայց միայն՝ Որդին:* [2] *Պատասխանի: Քանզի Հայր անծին է եւ եթէ*[+] *առնոյր մարմին եւ ծնանէր, լուծանէր ի հայրութենէն:* [3] *Նոյնպէս եւ Հոգին Սուրբ, քանզի*[+] *բղխումն է ի բղխողէն եւ ոչ՝ ծնունդ:* [4] *Եւ թէ Հոգին եւս առնոյր մարմին եւ ծնանէր, նա եւս ելանէր ի Հոգիութենէն եւ որդի լինէր. եւ այս փոփոխումն լինէր եւ ոչ հաստատուն:*

V. [1]□*Հարցումն: Եթէ* ⌜*ասիցեն, թէ*⌝ *Որդի միայն մարմնացաւ, ապա*[+] *յաւելաւ քան զՀայր եւ*[+1] *զՀոգին*[+2]*. քանզի յա//ռաջ քան* 90ա
զմարմնանալն հաւասար էր ընդ Հաւր եւ ընդ ⌜*Հոգւոյն Սրբոյ*⌝*:* [2] *Պատասխանի: Ասասցուք* ⌜*եւ մեք*⌝*՝ եթէ ոչ միաւորեցաւ Բանն Աստուած ընդ մարդկութեանն, յաւելաւ, ապա եթէ միաւորեցաւ, ոչ յաւելաւ:* [3] *Քանզի թէպէտ* ⌜*էառ զմարդկային բնութիւնն ի սրբոյ Կուսէն*⌝*, այլ յառաջ*[+] *քան զյաւիտեանս* °*էր՝ ըստ* ⌜*Աւետարանին Յովհաննու*⌝*, թէ՝ «*□*Ելանիցէ Որդի մարդոյ, ուր էր զառաջինն» [Յովհ. Զ 63]:* [4] *Տեսանե՞ս, զի Քրիստոս զմարդկային բնութիւնն,* ⌜*ուր էրն ասէ, ոչ եթէ յարգանդ<է> Կուսին ել*⌝*, ուստի ծնաւ, այլ* °*ի յերկինս համբար-*

---

21 ⌜*սին նման*⌝ *B*

24 [+]*ասեմք B* / [+1]*համարեսցի եւ B*

1 □*եւ արդ, հարցումն, զոր եթէ հարցանիցեն, եթէ B*

2 [+]*Հայր B*

3 *Հոգի A* / [+]*եւ Հոգի Սուրբ B*

4 *եթէ B* / *հոգիութենէ B*

1 *Տե՛ս* □*հարցումն (III 1), յետագայում նոյնն է B-ում:* / ⌜–⌝ *B* / [+]*եւ B* / [+1]*քան B* / [+2]*Սուրբ B* / ⌜*Սուրբ Հոգոյն*⌝ *B*

2 ⌜*նախ*⌝ *B* / *մարդկութիւն B* / *թէ B*

3 ⌜*345(առ/0)12*⌝ *B* / *առ B* / [+]*է B* / ° *B* / ⌜*Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ասէ յԱւետարանն ի Յոհան գլուխ*⌝ *B* / □*եանց A*

4 ⌜*{-34567}201(+Նա)*⌝ *A* / ° *B* / [+1]*եւ B*

ճաւ եւ ընդ աջմէ Հաւր նստաւ+1: 5 Եթէ ասիցեն, թէ Որդի մարդոյ զԱստուածութիւնն ասէ, ասասցուք եւ մեք, եթէ ի բազում տեղիս Որդի մարդոյ ասէ Յիսուս: 6 Զայն ամենայն վասն Աստուածութեանն ասէ եւ ոչ վասն մարդկութեանն՝ ըստ նոցա կարծեացն: 7 Այլ այս է ճշմարիտն, քանզի թէպէտ ի սրբոյ Կուսէն էառ զմարդկային բնութիւնն, այլ Բանն Աստուած յառաջ °է քան զյաւիտեանս: 8 Հանդերձ մարդկութեամբն □է Որդի Աստուծոյ, որպէս զհացն եւ զգինին անապական՝ հանդերձ բանիւն, զոր ասաց Յիսուս, թէ՝ «Այս է մարմին իմ եւ արիւն իմ» [Մատթ. ԻԶ 26—28, Մարկ. ԺԴ 22—23, Ղուկ. ԻԲ 19—21], 9 կուսածին Աստուած հաւատամք, թէպէտ °յետ բազում ամաց ի սեղանոյն էառ, նոյնպէս եւ զմարդկութիւնն, որ ի Կուսէն էառ, հանդերձ Աստուածութեամբն °1խոստովանիմք յառաջ քան զյաւիտեանս+: 10 ⌜Եւ այս եւս ուղիղ է⌝, քանզի թէպէտ աւր ըստ աւրէ առնուն

90բ *քահանայքն զհացն եւ // զգինին անապական եւ □պատարագեն, եւ ոչ յաւելու ի Քրիստոս, նոյնպէս եւ Բանն Աստուած էառ զմարդկութիւնն, աստուածացոյց, եւ ոչ յաւելաւ յԱստուածութիւնն: 11 Քանզի հուրն միացաւ ընդ երկաթի եւ զսեւութիւն երկաթին ներկեաց, եւ ոչ յաւելաւ ջերմութիւն հրոյն:*

VI. 1 Հարցումն: Ընդէ՞ր ասաց Յիսուս+. «Քակեցէ՛ք զտաճարս այս, եւ զերիս աւուրս չինեցից զսա» [Յովհ. Բ 19]: 2 Եւ աւետարանիչն ասէ, թէ՝ «⌜Վասն տաճարին⌝ մարմնոյ իւրոյ ասէ» [Յովհ. Բ 21]: 3 <Պատասխանի>: □Իսկ չարափառքն յոյժ ուրախանան, բայց ոչ է, որպէս նոքա կարծեն: 4 Քանզի ոչ եթէ մարմինն Տեառն ի միմեանց քակտեցաւ, այլ անքակ մնաց, որպէս էրն՝ ըստ Աւետարանին, թէ՝ «Ոսկր նորա մի՛ փշրեսցի» [Յովհ. ԺԹ 36]: 5 Եւ մարգարէն ասէ, թէ՝ «Մարմին նորա ոչ ետես զապականութիւն» [Սաղմ. ԺԵ 10, Գործ. Բ 31]: 6 Մարմին Քրիստոսի էին աշակերտքն՝ ըստ Պաւղոսի, ⌜որ ասէ⌝,

---

7 °Բ
8 □էր Բ
9 °Բ / °1Բ / +խոստովանիմք Բ
10 ⌜–⌝ Ա / հաց Բ / գինի Բ / □պատարագի Բ
11 միաւորեցաւ Բ / երկաթոյ Բ
1 ասէ Բ / +թէ Բ / զայս Բ
2 ⌜(տաճար/1)0⌝ Բ
3 □եւ Բ
6 մարմինն(1) Բ / ⌜–⌝ Բ

թէ՝ «Մարմին եմք ի մարմնոյ նորա եւ անդամք յանդամոց նորա» [Ա Կոր. ԺԲ 27, Եփես. Ե 30]: [7] Եւ յորժամ կալան զՅիսուս, ցրուեցան ամենեքեան եւ փախեան ի նմանէ: [8] Եւ յետ երից աւուրց չիննեաց զնոսա յարութեամբն իւրով, եւ անքակ մնացին ի Քրիստոսէ մինչեւ յաւիտեան: [9] Եւ դարձեալ ասեն ոմանք, թէ միաւորութիւնն+ քակտեցաւ զերիս տիւս եւ զերիս գիշերս: [10] Ասասցուք եւ մեք ընդդէմ նոցա, թէ արիւնն եւ ջուրն, որ ել ի կողիցն °Քրիստոսի, ո՞չ էր Քրիստոսի: [11] Քանզի նախ զհոգին աւանդեալ էր, եւ ապա խոցեցին զկողն, եւ ել արիւն եւ ջուր: [12] Եւ սոսկ մարմնոյն՝ Քրիստոսի ասել ոչ լինի, քանզի եւ հոգի ոչ գոյ ի նմա: [13] Եւ հոգին բանական, որ ի // դժոխքն 91ա
°գնաց, նա ոչ+ է Քրիստոս, քանզի մարմին ոչ գոյր ընդ նմա: [14] Եւ Բանն Աստուած, որ ընդ աւազակին եմուտ ի դրախտն, նա եւս ոչ էր Քրիստոս: [15] Ահա որ ընդ ամենայն տեղիս զերիս տիւս եւ զերիս գիշերս ոչ գոյր °ընդ նոսա Քրիստոս: [16] Այլ պարտ է °մեզ այսպէս դաւանել՝ քանզի արիւնն եւ ջուրն, որ+ ել, ⌜ի Քրիստոսի կողիցն էր եւ⌝ Քրիստոսի էր՝ ըստ °[1] Յոհաննու աւետարանչին, որ ասէ, թէ՝ «Արիւն Յիսուսի Քրիստոսի՝ Որդւոյն Աստուծոյ, սրբեսցէ զմեզ յամենայն մեղաց մերոց» [Ա Յովհ. Ա 7]: [17] Եւ զաւազակն ⌜Քրիստոս տարաւ ի դրախտն⌝ եւ ոչ՝ առանձին Բանն Աստուած: [18] Եւ զդժոխքն Քրիստոս աւերեաց եւ ոչ՝ սոսկ բանական հոգին, քանզի ասէ Պետրոս առաքեալն, թէ՝ «Քրիստոս մեռաւ մարմնովն, այլ կենդանի էր հոգւովն, °եւ երթեալ ի դժոխքն եւ բանաւորաց քարոզեաց» [Ա Պետ. Գ 18—19]: [19] Տեսանե՞ս, զի զկենդանին մարմնովն մեռեալ ասէ □Պետրոս եւ զմեռեալն կենդանի ասէ հոգւովն եւ ի դժոխսն երթեալ: [20] Եւ զերեզմանն, յոր եդին զմարմինն °Քրիստոսի Յիսուսի, ոչ լոկ մարմնոյ ասեմք, այլ Քրիստոսի: [21] Քան ամենայն □իրաւք զգերեզմանն նման տեսանեմք

---

9 *միաւորութիւն B / +Քրիստոսի B*
10 *° B / է B*
13 *° B / +եւս B /գոյ B*
15 *գոյ B / ° B*
16 *° B / արիւն A / +ի կողիցն B / ⌜–⌝ B / °[1] A*
17 *⌜2301⌝ B / առանձինն B*
18 *եթէ B / ° A / դժոխս B / բանաւորացն B*
19 *մարմնով B / □Պաւղոս A / երթալ A*
20 *° B / մարմնոյն B*
21 *զամենայն A / □կիրս A / զԱստուածածնին A*

սուրբ Աստուածածնին: 22 Եւ դարձեալ, որպէս ծնունդն ▫սքանչելի էր,
նոյնպէս եւ մահն+ անթարգմանելի է:

VII. 1 Հարցումն: Ընդէ՞ր ասաց Յիսուս. «Վասն աւուրն այնորիկ
եւ ժամուն ոչ ոք գիտէ՝ ո՛չ հրեշտակ յերկինս եւ ո՛չ Որդի, բայց միայն՝
Հայր» [Մատթ. ԻԴ 36]: 2 <Պատասխանի>: Իսկ հերձուածողքն ասեն,
թէ մարդկային բնութիւնն էր, որ ոչ գիտէր: 3 Ասասցուք եւ մեք ընդ-
91բ դէմ նոցա այսպէս՝ եթէ Որ//դի զմարդկային բնութիւնն ասէր, ⌜ահա
աստուածային բնութիւն, որ ի Քրիստոսի էր⌝, նա ոչ էր որդի: 4 Եւ եթէ
Բանն Աստուած Որդի էր Հաւրն, յայտնի է, եթէ Բանն Աստուած էր, որ
անգիտացաւ: 5 Եւ եթէ Բանն Աստուած+ անգիտանայր եւ նա Որդի է,
եւ ◦եթէ մարդկային բնութիւնն անգիտացաւ, նա եւս Որդի է: 6 Քանզի
ասաց Յիսուս, եթէ՝ «ոչ հրեշտակք գիտեն եւ ոչ Որդի» [Մատթ. ԻԴ
36]: 7 Ահա որ Բ որդի տեսանեմք Հաւրն երկնաւորի՝ մինն՝ հաւասար
ընդ Հաւր՝ ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Ես եւ Հայր իմ մի եմք» [Յովհ.
Ժ 30], եւ միւսն՝ կրտսեր քան զՀայր՝ ըստ բանին, որ ասէ. «Հայր իմ
մեծ է քան զիս» [Յովհ. ԺԴ 28]: 8 Եւ որք զայսպիսի ▫կարծիս խորհին
եւ ընդ Բ սահմանեն ի վերայ կուսածին Արքային, ուրացողք գտանին+
ի ծնունդն Քրիստոսի: 9 Զոր եթէ զաստուածային Որդին եւ զմարդկա-
յին որդին ասեն ծնեալ ի Կուսէն, ահա որ զԿոյսն սուրբ Բ որդւոյ
մայր ասեն: 10 Եւ եթէ զմին որդին ասեն ծնեալ ի Կուսէն եւ զմիւսն՝
ոչ, ահա+ զմինն ուրացան՝ զորն եւ իցէ: 11 Այլ մեզ պարտ է իմանալ,
թէ զինչ է բանն, զոր ասաց Յիսուս, եթէ՝ «+ո՛չ հրեշտակք յերկնից եւ
ո՛չ Որդի, բայց միայն՝ Հայր» [Մատթ. ԻԴ 36]: 12 Բազում պատճառ
ունի բանս ◦այս: 13 ◦Նախ առաջին այս է, թէ ո՛չ հրեշտակաց եւ ո՛չ ձեզ
գիտելի է զաւր կատարածին, քանզի յառաջագոյն զհրեշտակսն ստեղծ

22 ▫անճառելի B / +Քրիստոսի B
3 ⌜–⌝ B
4 յայտ B / թէ(2) B
5 +ոչ B / ◦ B
6 գիտէ B
8 որ B / ▫բան B / +նոքա B
10 զմի(1)B / +որ B
11 +ոչ ոք գիտէ B
12 ◦ B
13 ◦ B / առաջինն B / զհրեշտակս B / մարդիկ A

Տէրն, քան զմարդիկ: [14] Վասն □այնորիկ յառաջ զհրեշտակս ասաց եւ ապա զորդի եւ անուանեաց զհրեշտակս երէց որդի: [15] Եւ ապա ստեղծ զմարդն եւ անուանեաց կրսեր որդի °զնոսա: [16] Եւ // զաւրն զայն ո՛չ 92ա հրեշտակք գիտեն, որ յերկինս են, եւ ո՛չ ⌜որդիք հաւատացեալք⌝, բայց միայն՝ Սուրբ Երրորդութիւնն: [17] Ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես զՀայր» [Յովհ. Ժ 15]: [18] Եւ Պաւղոս ասէ, թէ՝ «Քրիստոս է Աստուծոյ զաւրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն» [Ա Կոր. Ա 24]: [19] Գիտէ ճշմարիտ զամենայն: [20] Ըստ այնմ՝ զոր եւ ինքն պատմեաց մի ըստ միոջէ մինչ ի կատարած աշխարհիս եւ զայն աւրն ոչ յայտնեաց: [21] Եւ այլ պատճառ+, եթէ ասէր Յիսուս, թէ՝ գիտեմ եւ ոչ ասեմ,+1 գայթակղէին ⌜ի նա⌝ առաքեալքն, եթէ ոչ է սէր Սորա առ մեզ կատարեալ, քանզի գիտէ եւ ⌜1ոչ ասէ մեզ1⌝: [22] Եւ այլ իմն պատճառ, □զի որպէս զամենայն կիրս կրեաց կամաւորաբար՝ նոյնպէս եւ զանգիտութիւնն:

VIII. [1] Հարցումն: Ընդէ՞ր ասէ աւետարանիչն, թէ «Սկսաւ Յիսուս տրտմիլ եւ հոգալ» [Մատթ. ԻԶ 37], եւ ասելն Տեառն՝ «⌜Տրտում է⌝ ոգի իմ մինչեւ ի մահ» [Մատթ. ԻԶ 38]: [2] Պատասխանի: Ոմանք ի հերձուածողաց ասեն, թէ մարդկային բնութիւնն էր, որ տրտմէր եւ հոգայր: [3] Ո՛վ անաւրէն, եթէ մարդկային բնութիւնն տրտմէր ⌜եւ հոգայր⌝, եւ աստուածայինն՝ ոչ, ահա որ Բ բնութիւնք ի միմեանց բաժանեցան, քանզի մինն տրտմէր եւ հոգայր, եւ միւսն՝ ոչ: [4] Եւ որք զայսպիսի կարծիս °ասեն ի վերայ Քրիստոսի, զանէծս ընդ Նեստորի ընդունին: [5] Այլ աւետարանիչն ցուցանէ, եթէ «սկսաւ տրտմիլ

---

14 □այն B / զհրեշտակն A
15 ° B
16 ⌜հաւատացեալք, որք որդի անուանեցան⌝ B
18 եթէ B
20 աշխարհի B
21 պատճառաւ B / +քանզի B / թէ(1)B / եթէ(1) B / +1ձեզ B / ⌜–⌝ B / ⌜1201⌝ B
22 □քանզի B
1 ⌜տրտմէ⌝ A
2 տրտում էր B
3 տրտում էր(1) B / ⌜–⌝ B / զաստուածայինն A / բնութիւնքն B / տրտում էր(2) B
4 զայսպիսիս B / կարծեն B / ° B /
5 ⌜…(1,5բառ)թիւն⌝ A / ° B / հոգիս A

եւ հոգալ» [Մատթ. ԻԶ 37], քանզի Մինն ի Սրբոյ Երրորդութենէն ⌜սկսաւ զամենայն տնօրէնութիւնն⌝ կատարել, քանզի տրամեցաւ եւ
92բ *// զտրամութիւնս °մեր եբարձ. ի հոգս անկաւ, զի զհոգիս մեր ազատեսցէ ի բռնութենէ խաւարին:*

IX. [1] *Հարցումն: Զի՞նչ է, զոր ասաց Յիսուս, թէ «Հոգիս յաւժար է, □բայց մարմինս տկար °է» [Մատթ. ԻԶ 41]:* [2] *Պատասխանի: Զարափառքն ասեն, թէ հոգի զաստուածային բնութիւնն ասէ եւ մարմին՝ զմարդկային բնութիւն:* [3] *Ահա որ յոյժ ուրացան:* [4] *Զի եթէ հոգի զաստուածային բնութիւնն ասէր, ապա եւ Որդի ոչ էր մարմնացեալ, քանզի ասէ, թէ՝ հոգիս յաւժար է [Մատթ. ԻԶ 41]:* [5] *Եւ եթէ Բանն Աստուած զիւր անունն հոգի կոչէ, ահա որ □Երրորդութիւնն չփոթեցաւ, քանզի երբեմն Որդի ասէ զինքն եւ երբեմն հոգի:* [6] *Եւ որք չփոթումն ասեն ի Սուրբ Երրորդութիւնն, ուրանան եւ զանձնաւորութիւնն:* [7] *Եւ այլ ոմանք ասեն, թէ զբանական հոգին ասաց □Քրիստոս, եթէ յաւժար է, □[1]բայց մարմինս տկար:* [8] *Եւ այս եւս ոչ է ուղիղ. զի եթէ մարդկային հոգին յաւժար էր, եւ մարմինն տկար, ապա ընդէ՞ր ասէր նոյն ինքն Քրիստոս*[+]*. «Երանի՛*[+1]*խաղաղարարաց*[+2]*» [Մատթ. Ե 9]:* [9] *Քանզի զիւր ⌜մարմինն եւ զհոգին⌝ ոչ կարէր խաղաղեցուցանել եւ հակառակութիւն ասել ի Քրիստոս՝ յո՛յժ հայհոյութիւն է:*

X. [1] *□Հարցումն: Ընդէ՞ր ասէր Յիսուս, թէ՝ «Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ» [Մատթ. ԻԶ 38]:* [2] *°Պատասխանի: Այլ ցուցանէ Փրկիչն, թէ տրտմութիւն հոգւոյն է եւ տկարանալն՝ մարմնոյն:* [3] *Եւ Բանն Աստուած ⌜միաւորեալ էր⌝ ընդ հոգւոյն եւ ընդ մարմնոյն, կրէր կամաւ զտրտմութիւնն եւ զտկարութիւնն վասն մերոյ փրկութեան:* [4] *Եւ*
93ա *այս եւս °ի դէպ է, որ ասէր, թէ՝ «Հոգիս յաւժար է, □բայց // մարմինս՝ տկար» [Մատթ. ԻԶ 41]:* [5] *Քանզի հոգին են մարդարէքն, □որ խաւսէին*

---

1 □եւ B / ° B
5 □ի յորդիութենէ B
7 եթէ B / □Յիսուս B / □[1]եւ B / զմարմինս B
8 ասէ B / +թէ B / +[1]է B / +[2]զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին B
9 ⌜(-գ2)0(1-ն)⌝ B
1 □ եւ եթէ բանական հոգին յաւժար է B
2 ° B
3 միաւոր B / +էր / զտրտմութիւն A
4 ° B / □եւ B
5 հոգիք B / մարդարէք B / □եւ B / °B

ի Թաբաւր լերին վասն ելիցն Տեառն °յԵրուսաղէմէ [Մատթ. ԺԷ 3]: 6 Եւ մարմին °էին աշակերտքն եւ °1տկար, □որք ոչ կամէին զչարչարանս Տեառն, զի մի՛ ի նոցանէ հեռասցի [Մատթ. ԺԶ 22]: 7 Եւ այս եւս ճշմարիտ է, °քանզի ասէ Յիսուս, թէ՝ Հոգիս յաւժար է. հոգի զՀոգին Սուրբ ասէ, քանզի յաւժարութեամբ Սուրբ Հոգւոյն արար զամենայն: 8 Բայց մարմինս տկար, նոյն ինքն է Բանն+, ըստ Յովհաննու+1, որ ասէ, թէ՝ «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» [Յովհ. Ա 14]: 9 Քանզի որպէս մարմնացաւ, նոյնպէս+ տկարացաւ: 10 Եւ մինն ի Սրբոյ Երրորդութենէն կրեաց զամենայն կամաւորաբար եւ ոչ՝ ⌜ի հարկէ⌝:

XI. 1 Հարցումն: Ընդէ՞ր «անկաւ ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղաւթս եւ ասէ. «°Հա՛յր իմ, եթէ հնար □է, անցցէ բաժակս այս յինէն, □1բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»» [Մատթ. ԻԶ 39]: 2 Պատասխանի: Անկաւ ի վերայ երեսաց իւրոց, զի զանկեալքս ⌜բարձրացուսցէ յերկինս⌝: 3 Եկաց յաղաւթս, զի աղաւթիւք զմեզ ի փորձութենէ ապրեցուսցէ՝ ըստ Յիսուսի, որ ասէ. «Յաղա՛ւթս կացէք, ⌜զի մի՛ մտանիցիք ի փորձութիւն⌝» [Ղուկ. ԻԲ 46]: 4 Եւ ասէր, թէ՝ «Հա՛յր °իմ, եթէ հնար □է, անցցէ բաժակս այս յինէն» [Մատթ. ԻԶ 39]: 5 Ոչ եթէ երկնչէր ի չարչարանացն, ըստ □այնմ՝ «Մի՛ երկնչիք յայնմանէ, որ սպանանեն զմարմինն ձեր» [Մատթ. Ժ 28]: 6 Եւ ինքն զիա՞րդ երկնչի ի մահուանէ: 7 Եւ եթէ Յիսուս երկնչէր, +սէրն նորա ոչ էր առ մեզ կատարեալ: 8 Քանզի Յոհաննէս +ասէ, թէ՝ «Սէր կատարեալ ի բաց մերժէ <զ>երկիւղն» [Ա Յովհ. Դ 19]: 9 Իսկ □եթէ երկնչէր՝ ⌜ոչ

---

6 ° A / °1 A / □եւ B
7 ° A
8 մարմինն(1) B / +Աստուած B / +1աւետարանչին B
9 +եւ B
10 ⌜բռնադատելով⌝ B
1 ⌜–⌝ A / □ինչ իցէ A / □1այլ A
2 ⌜(+ի)10⌝ B
3 ⌜եւ այլն ⌝ A
4 ° A / ինչ իցէ A
5 ⌜Յիսուսի, որ ասէ⌝ B
7 +ապա եւ B / է B
8 +աւետարանիչն B
9 □որ B / երկնչի B / ⌜չէ⌝ B / +ի B / +1եւ B

93բ է⌉ կատարեալ+ սէր:+1 // 10 Եթէ յակամայ ▫եկն ի չարչարանս մահու, քանզի ասաց Յիսուս. «Ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու+» [Մատթ. ԻԶ 39]. ահա որ կամքն նորա Հաւր կամացն հակառակ էր՝ ըստ չարախաւսիցն: 11 Եւ եթէ ասիցեն՝ այլ է կամք աստուածային եւ այլ է կամք մարդկային, ▫ըստ այսմ եւս տարակուսին: 12 Քանզի կամքն մարդկային, որ ի Քրիստոս էր, ոչ կամէր զչարչարանս, ապա ընդէ՞ր ասաց ցՊետրոս. «Ե՛րթ յետս իմ, սատանա՛յ+» [Մատթ. ԺԶ 23, Մարկ. Ը 33], քանզի+1 Պետրոս ոչ կամէր զչարչարանս եւ զմահ Տեառն: 13 Զի թէ կամքն մարդկային, որ ի Քրիստոս էր, նա+ ոչ կամէր զմահն եւ զչարչարանս եւ կամակից էր կամացն Պետրոսի, պարտ էր զՊետրոս բարեկամ անուանել, քան ◦թէ՝ «Գայթակղութիւն իմ ⌈ես» [Մատթ. ԺԶ 23],— ասէ⌉: 14 Եւ դարձեալ, ասէ Տէրն. «Իջի ես յերկնից, ոչ զի զկամս իմ արարիցս, այլ զկամս Այնորիկ, որ առաքեացն զիս» [Յովհ. Զ 38]: 15 Տեսանե՞ս, զի իջեալ Բանն ասաց զայս: Ոչ եթէ այլ էր կամք Հաւրն, եւ այլ+՝ կամք Բանին, այլ զայն ցուցանէր, թէ ⌈ամենայն իրաւք⌉ հնազանդ էր Որդի ▫ընդ Հաւրն երկնաւորի: 16 Եւ զասելն Յիսուսի. «Հա՛յր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ՛ բաժակս այս յինէն, ապա ◦թէ ոչ՝ արբիցս զսա» [Մատթ. ԻԶ 39], զայն ցուցանէր Յիսուս, եթէ բաց ի խաչելութենէն ոչ գոյ հնար ազատութիւն առնել: 17 Եւ դարձեալ, զմիակամութիւնն ▫առաւել ցուցանէ, քան թէ զհակառակութիւնն:

XII. 1 Հարցումն:+ Եթէ իջեալ հրեշտակն+1 եւ զաւրացուցանէր զնա [Ղուկ. ԻԲ 46]: 2 Պատասխանի: Հակառակորդքն ասեն, թէ զմարդկային բնութիւնն զաւրացուցանէր հրեշտակն: 3 Մի՞թէ+
94ա Բանն // Աստուած ոչ էր ⌈ընդ նմա, այսինքն⌉՝ ի մարմնին: 4 Եւ եթէ ի մարմնի էր՝ ըստ Պաւղոսի, որ ասէ. «Ի նմա բնակէ ամենայն լրումն

10 ▫երկն A / չարչարան A / +կամիս B / կամք B
11 կամքն(1) B / կամքն(2) B / ▫ընդ B / այս B
12 +գայթակղութիւն իմ ես դու B / +1եւ B / զմահն B
13 +եւս B / զչարչարանսն B / ◦ B / ⌈եւ սատանայ ասել⌉ B
15 կամքն (1) B / +էր B / կամքն(2) B / ցուցանէ B / ⌈ամէնուրեք⌉ B / ▫միածին B
16 զբաժակս զայս AB / ◦ A / ցուցանէ B / ▫բայց B
17 ▫առնել B / հակառակութիւն B
1 +Որ ասէ աւետարանիչն B / թէ B / հերեշտակ B / +1յերկնից B
2 հակառակքն B / բնութիւն B
3 +եւ B / ⌈–⌉ B
4 Աստուածութեանն B / ◦ B / էր B / ▫զի B

Աստուածութեան °մարմնաւորապէս» [Կող. Բ 9], ընդէ՞ր եւ Բանն Աստուած ոչ գաւրացուցանէր զիւր մարդկութիւնն, որ արարիչն է հրեշտակաց, քան □թէ՝ հրեշտակն, որ արարած էր ի նմանէ: [5] *Այլ այս է ճշմարիտն, քանզի որպէս զամենայն կիրս վասն մեր կրեաց Մինն ի Սրբոյ Երրորդութենէն կամաւորաբար, նոյնպէս եւ զգաւրանալն ի հրեշտակէն, զի զտկարութիւնս մեր բարձցէ:* [6] *Եւ °որ ասաց ցԱդամ*+. *«Քրտամբ երեսաց ⌜քոց կերիցես զհաց քո⌝» [Ծն. Գ 19],* ⌜[1]*նոյնպէս եւ*[1]⌝ *ինքն քրտնեցաւ եւ զմարմին զիւր ետ մեզ հաց անմահութեան եւ զքիրտն Ադամայ □եբարձ:* [7] *Եւ դարձեալ ուսոյց մեզ, եթէ ի ժամանակի նեղութեան այսպէս պարտ է աղաւթել, մինչեւ քիրտն □իբրեւ զարիւն ի վերայ երկրի հեղցի:* [8] *Քանզի ասէ □Աւետարանն, թէ*+ *«սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել» [Գործ. Ա 1]:*

XIII. [1] *Հարցումն: Ընդէ՞ր ասաց □Յիսուս, թէ՝ «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ*+*, ընդէ՞ր թողեր զիս» [Մատթ. ԻԷ 46]:* [2] *Պատասխանի: ⌜Բազումք ի հերձուածողացն⌝ ասեն, թէ մարդկային բնութիւնն ասաց առ աստուածային բնութիւնն, թէ՝ «Աստուա՛ծ Աստուա՛ծ...»:* [3] *Ո՛վ յիմար, զի թէ մարդկային բնութիւնն ասաց զայս, ահա որ զմարդկային բնութիւնն, որ ի Քրիստոս էր, մեղանչական ասէք:* [4] *Քանզի Դաւիթ ասէ. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ*+*, ընդէ՞ր թ<ողեր զիս]:* [5]⌜*Հեռի եղէ վասն բանի յանցանաց իմոց⌝» [Սաղմ. ԻԱ 2—3]:* [6] *Եւ ցուցանէ Դաւիթ, եթէ որք թողեալ յԱստուծոյ՝ վասն մեղաց իւրեանց հեռացեալ են*+*:* [7] *Որք զայսպիսի բանքս °ասեն ի վերայ մարդկային բնութեանն, որ ի Քրիստոս էր*+*, նոքա հեռացեալ են ի ⌜Սուրբ Հոգւոյն⌝:* [8] *Եւ այս*
եւս □տա//րակուսէ նոցա, քանզի ասաց Յիսուս. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ+*, ընդէ՞ր...»:* [9] *Զի եթէ մարդկային բնութիւնն ասաց զայս* 94բ

---

6 ° *B* / +*թէ B* / *քրտամբ B* / ⌜*եւ այլն*⌝ *A* / ⌜[1]*նոյն*[1]⌝ *B* / □*մաքրեաց B*
7 □*իւր եւ B*
8 □*աւետարանիչն B* / +*զայս ամենայն B*
1 □*Փրկիչն B* / +*նայեաց առ իս B*
2 ⌜*բազում հարձուածողք*⌝ *B* / +*իմ նայեա՛ց առ իս B*
4 +*նայեաց... B*
5 ⌜–⌝ *B*
6 *Աստուծոյ B* / +*:Եւ B*
7 ° *B* / +*ասեն B* / ⌜*չնորհաց Հոգւոյն Սրբոյ*⌝ *B*
8 *զայս B* / □*տարակուս է B* / +*նայեա՛ց եւ այլն B*
9 *բնութիւն(1) B* / *բնութիւնն(3) B* / ° *B*

առ աստուածային բնութիւնն, ապա եւ աստուածային բնութիւն Բ է, քանզի Յիսուս Բ անգամ ասաց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ ◦իմ»: [10] *Եւ եթէ մարդկային բնութիւնն ◦ասաց առ Սուրբ Երրորդութեան անձնաւորութիւնն, ընդէ՞ր երիցս անգամ ոչ ասաց, քանզի անձնաւորութիւնքն երեքն են, մի՞թէ զմիսնն մոռացաւ ասել. քա՛ւ լիցի:* [11] *Այլ մեզ պարտ է այսպէս իմանալ, քանզի առ Մովսէս ասաց որ էնն, թէ՝ «Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ» [Ելք Գ 6]:* [12] *Աստուած Աբրահամու՝ Հայր*[+]*, եւ Աստուած Իսահակայ՝ Որդին Միածին, եւ Աստուած Յակովբայ՝ Հոգին Սուրբ:* [13] *Եւ ասաց Աստուածն Իսահակայ առ Աստուածն Աբրահամու եւ Աստուածն Յակովբայ. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր...»:* [14] *Իսկ խոյն փոխանակ Իսահակայ ⌜կախեցաւ ի ծառոյն⌝, եւ Աստուածն Իսահակայ փոխանակ ամենեցուն կախեցաւ ի խաչէն:* [15] *Եւ որպէս վասն մեր խաչեցաւ Մինն ի Սրբոյ Երրորդութենէն, նոյնպէս եւ վասն մեր աղաղակեաց առ Հայր եւ Հոգին Սուրբ եւ ասաց. «Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր...»:* [16] *Ոչ եթէ ինքն էր թողեալ, այլ Ադամ հեռացեալ էր, եւ խաչելութեամբն իւրով մերձեցոյց առ Հայր եւ Հոգին Սուրբ:*

XIV. [1] *Հարցումն:*[+] *Աւանդեա՞ց Յիսուս զբանական հոգին ի վերայ խաչին, ⌜թէ՞ ոչ:⌝* [2] *Պատասխանի: Որք ուրանան զԲանն Աստուած, ասեն, թէ մարդկային բնութիւնն մեռաւ ի վերայ խաչին:* [3] *Ո՛վ հայհոյիչ, եթէ մարդկային բնութիւնն մեռաւ, եւ աստուածայինն՝ ոչ, ⌜ահա որ մարդկային բնութիւնն ծնաւ ի Կուսէն, եւ աստուածայինն՝*
95ա *ոչ⌝:* [4] *Քան//զի որ ծնաւ, նոյնն եւ մեռաւ:* [5] *Եւ եթէ զծնունդն Աստուծոյ ասէք եւ զմարդն ոչ յիշէք, եւ զմահն մարդոյ ասէք եւ ոչ՝ Աստուծոյ*[+]*, ահա որ զերկոսին ուրացեալ էք՝ ի ծնունդն՝ ◻մարդն եւ ի մահն՝ Աս-*

---

10 ◦ B / Երրորդութիւնն A / անձնաւորութեանն A / ◻է B
11 Մովսիսիւն A
12 [+]Սուրբ B
14 ⌜–⌝ A
1 [+]Թէ որպէս B / ◦ B
3 բնութիւն B / ⌜–⌝ B
4 ծնաւն B
5 [+]ասէք B / ◻մարդկութիւնն B / զԱստուածութիւնն B

տուածութիւնն: [6] Եւ եթէ ասիցեն, թէ աստուածային բնութիւն ոչ մեռանի, քանզի Աստուածութիւն Երրորդութիւնն է, ասասցուք, եթէ ի Կուսէն+ աստուածային բնութիւնն ոչ ծնանի, քանզի բնութիւնն Երրորդութեանն է: [7] Ապա եւ որ ոչն □մեռաւ, նա եւս ոչ ծնաւ: [8] Եւ որք այսպէս դաւանեն, ընդ Նեստորի դատապարտեսցին: [9] Այլ մեզ պարտ է դաւանել զմահն Քրիստոսի՝ որպէս+ ⌜ասէ առաքեալն⌝ Պաւղոս, թէ՝ «Հաշտեցաք ընդ Աստուծոյ արեամբ Որդւոյ նորա» [Հռոմ. Ե 10]: [10] Ոչ եթէ Բ⌜որդի էր⌝, մինն մեռաւ եւ միւսն՝ ոչ, այլ մի եւ նոյն °ինքն Որդին Աստուծոյ մեռաւ հանդերձ մարդկութեամբն: [11] Եւ մարդկութիւնն, որ ի Քրիստոս էր, մնաց կենդանի հանդերձ Աստուածութեամբն: [12] Եւ որ □մեռաւն, նոյն ինքն է կենդանի, եւ որ կենդանի էր, նոյն ինքն է եւ մեռեալ՝ ըստ Աւետարանին, որ ասէ, թէ՝ «Ի կողիցն Քրիստոսի ել արիւն եւ ջուր» [Յովհ. ԺԹ 34]: [13] Եւ եթէ ասիցեն, °թէ արիւն զԱստուածութիւնն նշանակեաց, եւ ջուրն՝ զմարդկային բնութիւնս, քանզի մեռեալ էր, ընդ այս □եւս յոյժ տարակուսին, քանզի աստուածային բնութեանն արիւն ոչ գոյ, եւ մարդկային բնութիւնն ի միում ժամանակի արիւն եւ ջուր բղխել ոչ կարէ: [14] Ապա որպէ՞ս պատմեսցեն մեզ, որք զԲ բնութիւնն ասեն ի Քրիստոս: [15] Այլ մեզ պարտ է այսպէս իմանալ, քանզի ջուրն եւ արիւնն ոչ °ի մերկ յԱստուածութենէն ել եւ ոչ ի սոսկ մարդկութենէն, // այլ <յ>անճառ միաւորութենէն: 95բ
[16] Եւ եցոյց, □թէ անճառ միաւորութիւնն էր մեռեալ, եւ անճառ միաւորութիւնն էր կենդանի, եւ միաւորութիւնն եղաւ ի գերեզմանի, եւ միաւորութիւնն ազատեաց զհոգիսն, եւ միաւորութիւնն եբաց զդուռն դրախտին եւ ասաց աւազակին. «Այսաւր ընդ իս իցես ի դրախտին» [Ղուկ. ԻԳ 43]:

---

6 բնութեամբն(1) B | Աստուածութիւնն B | +եւս B | բնութիւն(2) B | բնութիւն (3) B | Երրորդութեան B
7 □ 3 անընթեռնելի տառ A
8 զայսպիսիս B | դատապարտին B
9 +եւ B | ⌜10⌝ B
10 ⌜որդիս ունէր Աստուած⌝ B | ° B
12 □մեռեալն էր B | էր(1) B | էր(2) B
13 ° A | բնութիւնն(1) B | □եւ B | բնութիւնն(2) B
15 ° B | Աստուածութենէն B
16 □մեզ B | ասէր B | ցաւազակն B

XV. [1] *Հարցումն: Զի՞նչ է, զոր ասէ Պաւղոս ի Կորնթացիսն, °եթէ՝ «Վկայեցաք զԱստուծոյ, զի յարոյցն զՔրիստոս ի մեռելոց» [Ա Կոր. ԺԵ 15]:* [2] *Պատասխանի: Որք զԱստուած ոչ հաւատան, նոքա ասեն, թէ Քրիստոս մեռաւ, եւ Աստուած յարոյց զնա ի մեռելոց:* [3] *Եւ այլք ասեն, թէ մարդկային բնութիւնն մեռաւ, եւ աստուածային բնութիւնն յարոյց զնա ի մեռելոց:* [4] *Ո՛վ եղկելի, եթէ մարդկային բնութիւնն Քրիստոս է առանց □Աստուածութեանն, ապա +այլ է Հայր, որ ոչ մարմնացաւ, ⌈եւ այլ է Հոգին Սուրբ, որ ոչ ծնաւ, եւ այլ է Որդին, որ ոչ մեռաւ⌉, եւ այլ է Քրիստոս, որ ծնաւ, եւ Աստուած յարոյց զնա ի մեռելոց:* [5] *Եւ այլ եւս, զի եթէ մարդկային բնութիւնն Քրիստոսի առանց աստուածային բնութեանն ⌈է Քրիստոս⌉, ապա ոչ գտանէք վկայութիւն, թէ Մարիամ ⌈1զմարդ ծնաւ եւ1⌉ զԱստուած+:* [6] *Քանզի աւետարանիչն ասէ. «Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս» [Մատթ. Ա 18], եւ դուք ասէք, թէ Յիսուս Քրիստոս ⌈մարդկային բնութեանն⌉ է °անուն եւ ոչ՝ միաւորութեանն, ⌈1զի ամենեւին սուտ էք1⌉:* [7] *Եւ եթէ միաւորութեանն է Քրիստոս անուն, ապա յայտ է, թէ միաւորութիւնն մեռաւ, որ է Քրիստոս, եւ միաւորութիւնն յարոյց զինքն ⌈ի մեռելոց⌉, որ է Աստուած:* [8] *Ըստ Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ □զնա» [Յովհ. Ժ 18]:* [9] *Եւ այս եւս ուղիղ է, քանզի ասէ Պաւղոս,*
96ա *թէ՝ «Առաքեաց Աստուած զՈր//դի իւր, որ եղեւ ի կնոջէ ⌈եւ եմուտ ընդ...⌉» [Գաղ. Դ 4]:* [10] *Զի որպէս առաքեաց Հայր զՈրդի իւր, նոյնպէս եւ յարոյց:* [11] *Եւ զայս+ հարցանեմք ընդ նոսա՝ թէ Քրիստոս մեռաւ, եւ Աստուած յարոյց զնա ⌈ի մեռելոց⌉, Ղազար մեռաւ, եւ Աստուածութիւնն, որ ի Քրիստոս էր, յարոյց զնա ⌈1ի մեռելոց1⌉:* [12] *Զի՞նչ աւելի էր Քրիստոս, քան զՂազար, զի զԲ-սինն Աստուած յարոյց ի*

---

1 *որ B / ° B / յարոյց B*
4 *⌈աստուածային բնութեանն⌉ B / +յայտ է, թէ B / ⌈8,9,10,11,12,13,14,01234567⌉ B*
5 *⌈10⌉ B / եթէ B / ⌈1–1⌉ B / +ծնաւ B*
6 *⌈մարդկութեանն⌉ B / ° A / միութեանն B / ⌈1–1⌉ B*
7 *անուն B / ⌈–⌉ B*
8 *□զսա B*
9 *⌈–⌉ B*
11 *+եւս B / ⌈եւ⌉ B / ⌈1–1⌉ B*
12 *մեռելոյ A*

մեռելոց: [13] *Որք զայսպիսի □բանս ի մարդկութիւնն +տայցեն, որ +[1]ի Քրիստոս, ընդ հրեայսն դատապարտեսցին, քանզի նոքա +[2]իբրեւ մարդ խաչեցին, բայց աստուածասպանք □[1]եղեն:*

XVI. [1] *Հարցումն: Զի՞նչ է, որ ասաց Յիսուս, թէ՝ «Ելանեմ ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր եւ ⌜Աստուած իմ եւ Աստուած ձեր⌝» [Յովհ. Ի 17]:* [2] *Պատասխանի: Հայհոյիչքն ասեն, թէ աստուածային բնութիւնն ասաց. «Ելանեմ ⌜ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր⌝», եւ մարդկային բնութիւնն ասաց+. «Աստուած իմ եւ Աստուած ձեր», որ է յոյժ □հայ-հոյութիւն զայս կարծել:* [3] *Զի եթէ աստուածային բնութիւնն ասաց առանց մարդկային բնութեանն, յայտ է, եթէ+ մարդկային բնութիւնն ⌜ոչ է⌝ Որդի Աստուծոյ, քանզի ⌜[1]եւ նա[1]⌝ ոչ ասաց, թէ՝ «Ելանեմ+[1] առ Հայր ⌜[2]իմ եւ առ Հայր ձեր[2]⌝»:* [4] *Եթէ մարդկային բնութիւնն եւս ասաց, թէ՝ «Ելանեմ առ Հայր», ապա եւ մարդկային բնութիւնն եւս էր որդի:* [5] *Եւ եթէ մարդկային բնութիւնն եւս էր որդի, ընդէ՞ր ոչ ասաց, թէ՝ «Ելանեմ առ Հայր իմ»:* [6] *Եւ դարձեալ, թէ մարդկային բնութիւնն ասաց. «Աստուած իմ եւ Աստուած ձեր», եւ Բանն Աստուած զայս ոչ ասաց, ապա եւ մարդկային բնութիւնն զի՞նչ աւելի էր, քան զառաքեալսն:* [7] *Քանզի ուրացողքն ասեն, թէ որպէս առաքելոցն Աստուած էր Հայր, նոյնպէս եւ մարդկային բնութեանն, որ ի Քրիստոս էր, Աստուած էր:* [8] *Եւ թէպէտ Բանն Աստուած // ասաց զայս, թէ՝ «Ելանեմ* 96բ
ես առ...», հանդերձ մարդկութեամբն ասաց եւ ոչ առանց մարդկային բնութեանն առանձինն: [9] *Ապա յայտ է, թէ մարդկային բնութիւնն ի Քրիստոսի հանդերձ Բանիւն ասաց. «Աստուած իմ եւ Աստուած ձեր»:* [10] *Եւ զոր ասացն Յիսուս, թէ՝ «Ելանեմ ես առ Հ<այր>...», պատճառն այս է, զի <զ>առաքեալսն ընդ ինքն միաւորեաց եւ ասաց, թէ՝ «Ելանեմ ես ա<ռ>...»:* [11] *Զի Հայրն երկնաւոր Քրիստոսի Հայր էր բնութեամբ եւ առաքելոցն՝ շնորհաւք:* [12] *Նոյնպէս եւ Մինն ի Սրբոյ Երրորդութենէն ինքն զինքն ընդ առաքեալսն միաւորեաց եւ վասն Հոգւոյն Սրբոյ ասաց, եթէ՝ «Աստուած իմ եւ Աստուած ձեր», զի*

---

13 □տկարութիւնքս B / մարդկային B / +բնութիւնս B / +[1]է B / դատապարտին B / +[2] եւս B / □[1] կոչեցան B

1 զոր B / ⌜այլն⌝ A

2 ⌜–⌝ A / +թէ առ B / □մոլորութիւն B

3 թէ(2) B / +եւ B / ⌜որ էր⌝ A / ⌜[1]1(եւս/0)[1]⌝ B / +[1]ես B / ⌜[2–2]⌝ A

7 բնութիւնն A

ամենայն սուրբ ուղղափառք զՀոգին Սուրբ հաւատասցեն: [13] *Քանզի Աստուած էր կոչմամբն, որպէս՝ առաքելոցն, Աստուած էր արարչագործութեամբն, եւ վասն զի զառաքեալսն ընդ ինքն բարձրացոյց եւ ասաց, թէ՝ «Ելանեմ...»:* [14] *Եւ ինքն Քրիստոս ընդ առաքեալսն խոնարհեցաւ եւ ասաց, թէ՝ «Աստուած իմ եւ Աստուած ձեր*[+]*»:* [15] *Ըստ այնմ, զոր ասէ առաքեալն Պաւղոս, թէ «Պարտ էր նմա* [□]*ամենայնիւ*[+] *եղբարց նմանել» [Եբր. Բ 17], «զի եղիցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց» [Հռոմ. Ը 28], այսինքն՝ առաջնորդ եւ փրկիչ ամենայն ուղղափառ հաւատացելոց:*

XVI. [1] *Հարցումն: Ընդէ՞ր ասաց Յիսուս յետ յարութեանն, թէ՝ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն...» [Մատթ. ԻԸ 18]* ⌜*եւ այլն*⌝*:*
[2] *Պատասխանի:* [□]*Զարափառքն ասեն, թէ յառաջ քան զյարութիւնն* ⌜*մարդկային բնութիւնն*⌝ *ոչ ունէր զամենայն իշխանութիւնս եւ յետ յարութեանն ապա ընկալաւ, եւ վասն այսորիկ ասաց, թէ՝ «Տուաւ*
97ա *ինձ ամենայն իշխանութիւն»:* [3] *Ո՛վ եղկելի, զի եթէ յառաջ քան // զյարութիւնն ոչ ունէր զամենայն իշ<խանութիւն>, ընդէ՞ր ասէր առաքելոցն, թէ՝* «⌜*Ետու ձեզ*⌝ *իշխանութիւն կոխել զաւազս եւ զկարիճս* ⌜[1]*եւ զա<մենայն զաւրութիւն թշնամւոյն>*[1]⌝*» [Ղուկ. Ժ 19]:* [4] [°]*Եւ աւաղ ասելով՝ զգունդս դիւաց* [□]*նշանակէ, եւ կարիճ՝ զպիղծ հերձուածողսն*[+]*:*
[5] *Վասն զի հանապազ հերձուածողքն, որ կարիճ անուանեցան, առնուն զաւրութիւն ի սատանայէ, որ աւաղ կոչեցան եւ* [□]*խայթեն զՔրիստոս:*
[6] *Եւ դարձեալ, թէ մարդկային բնութիւնն Քրիստոսի ոչ ունէր իշխանութիւն յառաջ քան զյարութիւնն, ապա զայս ո՞ր բնութիւն ասաց, թէ՝ «Որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում,* [°]*նոյնպէս եւ Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում, եւ իշխանութիւն ետ նմա դատաստան առնել» [Յովհ. Ե 26]:* [7] *Զի եթէ* ⌜*առանց մարդկային բնութեանն ասաց Բանն*⌝*, ահա որ Բանն Աստուած*[+] *ոչ եւս ունէր*

---

14 -{XVI 4- XVI 14} B /
15 որ B / □ամենայն B / +իրաւք B / յեղբարսն(1) B
1 ⌜–⌝ B
2 □հայհոյիչքն B / ⌜–⌝ B / իշխանութիւն(1) B
3 ասաց B / ⌜տուաւ Ինձ ամենայն⌝ B / զաւազն B / զկարիճն B / ⌜1–1⌝ B
4 ° A / □ցուցանէ B / +նշանակէ B
5 կարիճն B / □խեթեն A
6 եթէ(1) B / անձին(1) B / ° B / անձին(2) B
7 ⌜4(+Աստուած)3(+զայս)012⌝ B / +նա B / ⌜1–1⌝ B / +1իւրում B

⌈1իշխանութիւն եւ⌉ կեանս յանձին+1: 8 Քանզի ասէր Յիսուս, թէ՝
«Որդւոյ ետ ունել կեանս յանձին իւրում»: 9 Այլ եւս պատճառ, զի եթէ
Բանն Աստուած ասաց զայս, ապա եւ մարդկային բնութիւնն, որ ի
Քրիստոս էր, նա ոչ էր Որդի Աստուծոյ, քանզի մի Որդի գոյ Աստուծոյ
եւ ոչ Բ: 10 Եթէ զմարդկային բնութիւնն, որ ի Քրիստոս էր, եւ ասէք,
եթէ Որդի էր Աստուծոյ, ահա որ Բ որդի ասէք Հաւրն երկնաւորի, մինն՝
բնութեամբ եւ միւսն՝ շնորհաւք: 11 Եւ յայս Բ որդւոցս զո՞րն ասէք,
թէ ծնաւ կամ զո՞րն ասէք, թէ մեռաւ: 12 Եւ այլ իմն պատասխանի.
զի եթէ մարդկային բնութիւնն ասաց. «Որպէս Հայր ունի կեանս,
նոյնպէս եւ Որդւոյ ետ», ապա յայտ է, թէ յառաջ քան զյարութիւնն
մարդկային բնութիւնն եւս ունէր զամենայն իշխանու//թիւնս: 13 Բայց 97բ
յետ յարութեանն ընդէ՞ր ասաց, թէ՝ «Տուաւ ին<ձ>...»: 14 Եւ զայս
ասէր Յիսուս, զի կարկէր զբերանս հերձուածողաց, որք ասէին, թէ
Քրիստոս ազատեաց զհոգիս արդարոցն եւ զմեղաւորացն՝ ոչ: 15 Ո՛վ
եղկելի, զի եթէ մեղաւորացն ի դժոխոցն ոչ ազատեաց, յայտ է, թէ
սատանայի իշխանութիւն մեծ է քան զՔրիստոսին, քանզի Քրիստոս
մեղաւորսն բազում ասաց եւ զարդարսն սակաւ: Ահա, որ ոչ հաւա-
տայք Քրիստոսի: 16 Քանզի Քրիստոս ասէ. «Տուաւ ինձ ամենայն...»,
զի երկնաւորաւքն հանդերձ զնա Աստուած հաւատասցեն, եւ որ ինչ
յերկրի ասաց, զի ոչ ինչ եթող ի ձեռն սատանայի, ըստ այնմ, զոր
ասաց Յիսուս. «Տուաւ ինձ ամենայն իշխա<նութիւն>...»: 17 Դարձեալ
ասէ Յիսուս. «Յորժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս»
[Յովհ. ԺԲ 32]: 18 Ո՛վ անմիտ հերձուածող, ընդէ՞ր հակառակիս ընդ
Քրիստոսի: 19 Տեսանե՞ս, զի զամենեսեան ասէ, եւ դու ասես՝ ոչ:
20 Մի՞թէ դու առաւել գիտես, քան զՅիսուս եւ կամ ընդ նմա էիր ի
քակել դժոխոցն. քա՛ւ լիցի: 21 Եւ դարձեալ ասէ Յիսուս. «Իշխան աշ-
խարհիս այսորիկ դատապարտեալ է» [Յովհ. ԺԲ 31]: 22 Եւ անարատ
Կոյս Աստուածածինն ասէ. «Յրուեաց զամբարտաւանն եւ քակեաց
զհզաւրն յաթոռոց, զխոնարհս բարձրացոյց» [Ղուկ. Ա 31—32], վասն

8 զկեանս B
9 բնութիւն B

զի ոչինչ եթող ընդ նմին: [23] Եւ Դաւիթ ասէ վասն հոգւոցն, որ ի դժոխս են. «Տէ՛ր, հաներ ի դժոխոց զանձն իմ» [Սաղմ. Իթ 4]:

XVII. [1] Հարցումն: Ընդէ՞ր ասաց □Աւետարանն. «ԶԱստուած ոչ ոք ետես+, բայց միածին Որդի+1» [Յովհ. Ա 18]: [2] Պատասխանի: Բազում անգամ կամեցան մարդիկ+ զԱստուած տեսանել եւ ոչ կարացին, զի
98ա ոչ էին // կամք Աստուծոյ, որ տեսանէին °զնա: [3] Բայց որոց կամէր Աստուած՝ զինքն ցուցանէր: [4] Ըստ Մովսիսի+՝ երեւեցաւ Աստուած Ադամայ բազում անգամ [Ծն. Ա—Գ]: [5]⌈Եւ ըստ Յեսայեայ⌉՝ «Տեսի զՏէր նստեալ յաթոռ+...» [Ես. Զ 1]: [6] Եւ Յ<ակ>ովբ ասէ. «Տեսի զՏէր+ դէմ յանդիման եւ ապրեցաւ անձն իմ» [Ծն. ԼԲ 30]: [7] Եւ+ Ստեփաննոս+1՝ «Աստուած փառաց երեւեցաւ+2» [Գործ. Է 2]: [8] Եւ Դաւիթ+՝ «Աստուած մեր յայտնապէս+1» [Սաղմ. Խթ 3]: [9] Ընդէ՞ր ասէ, թէ՝ «ԶԱստուած ոչ ոք ետես ի մարդկանէ»: [10] Այլ զայն կամի ցուցանել, թէ զէութիւն աստուածային բնութեանն, °այսինքն՝ Սուրբ Երրորդութեանն, ոչ ոք կարէ տեսանել ո՛չ աչաւք եւ ո՛չ մտաւք: [11] Ապա եթէ+ կամեսցի, յայտնեսցէ զինքն, որպէս °զի կարողք □լինիմք տեսանել զնա հաւատով:+1

XVIII. [1]° Հարցումն: Զի՞նչ է, որ ասէ Պաւղոս+, թէ՝ «Հաւատարիմ եղեւ Արարչին իւրոյ» [Եբր. Գ 2]: [2] Պատասխանի: Զարափառքն ասեն, թէ Պաւղոս զՔրիստոս արարած ասէ: [3] Նախ ասասցուք եւ

---

23 Բարձրացոյց եւ զմեծատունս արձակեաց յունայն: Տեսանե՞ս, զի յունայն ասէ, վասն զի ոչինչ եթող նմա: Եւ Դաւիթ ասէ վասն հոգւոցն, որ ի դժոխսն էին. «Ասաց Տէր. «Ի խորոց անդընդոց դարձուցից եւ ի միջոյ զայն ի դուրս կորգեցից»» [Սաղմ. ԿԷ 23] / (VII 10—23) B

1 ասէ B / □Յովհաննէս, թէ B / +ի մարդկանէ B / Որդին B / +1որ ի ծոց Հաւր, Նայ պատմեաց մեզ B

2 +որ B / տեսանէին(1) B / կամքն B / ° B

3 ցուցանել A

4 +որ ասէր B

5 ⌈Եւ Եսայի ասէ⌉ B / +բարձրութեան B

6 +նստեալ B

7 +սուրբ B / +1յիւրում քարոզութեանն ասէ B / +2երեւեցաւ Աբրահամու հաւր մերում մինչ ի Միջագետս էր B

8 +ասէ B / +1եկեսցէ: Բայց B

10 ° B / Երրորդութեան B

11 թէ B / +Ինքն B / ° B / □լինիցիմք B

1 °A / +վասն Քրիստոսի B

մեք ընդդէմ նոցա, թէ Պաւղոս յԵբրայեցւոց թուղթն արարած ասէր զՔրիստոս: [4] Եւ հրեայքն՝ «Ծ ամ չեւ է քո ⌜եւ զԱբրա<հա՞մ⌝ տեսեր>» [Յովհ. Ը 57]: [5] Եւ Արիսոս ասէր, թէ Քրիստոս արարած է եւ ոչ Արարիչ: [6] Եւ դուք, ո՛վ ▫զազիրք, ասէք, թէ արարած է եւ ոչ Արարիչ: [7] Ապա եւ դուք զանձանց վկայէք, թէ հրեայքն եւ Պաւղոս եւ Արիսոս ⌜համախոհք են⌝: [8] Եւ դարձեալ ընդդէմ նոցա ասեմք, թէ Պաւղոս զՔրիստոս արարած ասէ, որպէս եւ նոքա կարծեն, ասասցեն մեզ, թէ ի Քրիստոս<ի> ո՞ր բնութիւն ⌜արարած է⌝, աստուածայի՞նն+, թէ՞ մարդկայինն+1: [9] Գիտեմք,+ զի ասէք, թէ մարդկային բնութիւնն ⌜է արարած⌝, որ ի Քրիստոս է, եւ աստուածայինն+1 արարիչ է // 98բ
եւ ոչ արարած: [10] Ընդ այս եւս պապանձին: [11] ▫Զի եթէ մարդկային բնութիւն Քրիստոսի արարած է, եւ նա Քրիստոս է առանց Բանին Աստուծոյ, ⌜ապա յայտ է, թէ Բանն Աստուած, որ արարիչ է, նա ոչ է Քրիստոս: [12] Եւ եթէ մարդկային բնութիւնն առանց Բանին Աստուծոյ ասեն⌝, թէ ոչ ասի Քրիստոս, ապա ընդէ՞ր ասէ Պաւղոս, թէ՝ «Յիսուս Քրիստոս հաւատարիմ եղեւ Արարչին+» [Եբր. Գ 2]: [13] Եւ այլ եւս, զի թէ Պաւղոս զՔրիստոս արարած ասէ,+ որպէս ֆռանկն ասէ, բայց ընդէ՞ր նոյն ինքն °եւ Պաւղոս ասէ, թէ՝ «Յիսուսիւ Քրիստոսիւ °1եղեւ ամենայն, °2որ ինչ եղեւն, °3այսինքն՝ աթոռք+1, իշխանութիւնք ⌜եւ պետութիւնք⌝» [Կող. Ա 16]: [14] Եւ դարձեալ ⌜ասէ Պաւղոս⌝+. «Ակն կալցուք մեծին Աստուծոյ եւ Փրկչին+1 Յիսուսի Քրիստոսի» [Տիտ. Բ 13]: [15] Այլ այս է ճշմարիտն, քանզի ասէ Պաւղոս. «Քրիստոս հաւատարիմ եղեւ Արարչին+»: [16] Տեսանե՞ս, զի Պաւղոս զՔրիստոս հաւատարիմ ասաց Հաւրն երկնաւորի: [17] Քանզի

---

4 +ասէին առ Քրիստոս B / ⌜–⌝ B
5 ասէ B
6 ▫զասիրք A
7 ⌜համախոհ էք⌝ B
8 ⌜10⌝ B / աստուածային B / +բնութիւնն B / մարդկային B / +1բնութիւնն B
9 ▫գիտեմ B / +թէ B / բնութիւն B / ⌜10⌝ B / աստուածային B / +1բնութիւնն B
11 ▫եւ B / թէ B / բնութիւնն B
12 ⌜–⌝ A / եթէ(1) B / +իւրոյ B
13 ասէր(1) B / +եւ B / ° B / °1 B / °2 B / °3 B / +1թէ B / ⌜–⌝ B
14 ⌜10(+թէ)⌝ B / +1մերոյ B
15 +իւրոյ B
16 ասէ B

ոչ էր կամքն Քրիստոսի Հաւր կամացն հակառակ: [18] *Վասն այնորիկ եւ Պաւղոս զՔրիստոս հաւատարիմ ասէ եւ Արարիչ ասաց զՀայր Քրիստոսի:* [19] *Քանզի Բանն Աստուած առանց մարդկային բնութեանն ⌜ոչ ասի Քրիստոս, եւ ոչ մարդկային բնութիւնն⌝՝ առանց Բանին Աստուծոյ*[+]*:* [20] *Այլ միաւորութեանն է Քրիստոս անուն:* [21] *Եւ վասն միաւորութեանն Պաւղոս զՀայր Արարիչ անուանեաց Քրիստոսի, քանզի զմիաւորութիւնն Հայր ⌜եւս արար⌝:* [22] *Ըստ Պետրոսի, որ ի «Գործս °Առաքելոց»-ն ասէր առ հրեայսն, եթէ՝ «Գիտասցէ ամենայն տունդ Իսրայէղի, զի Տէր զնա աւծեալ Աստուած արար, զայն Յիսուս, զոր դուքն խաչեցէք» [Գործ. Բ 36]:* [23] *Տեսանե՞ս, զի*[+] *Պետրոս □արար ասաց, բայց աւծեալ ասաց եւ ոչ՝*[+1] *ստեղծեալ:* [24] *Նոյնպէս եւ Պաւղոս զՀայր Արարիչ ասաց Քրիստոսի վասն միաւորութեանն եւ ոչ՝ վասն*

99ա *ստեղծագործութեանն:* [25] *Եւ վասն Բանին Աստուծոյ ասէր Դաւիթ. // «Աստուած մեր յերկինս եւ յերկրի. ⌜զամենայն, զոր ինչ կամեցաւ՝ եւ արար⌝» [Սաղմ. ՃԼԴ 6]:* [26] *Քանզի Բանն Աստուած, որ յերկինս էր ընդ Հաւր եւ*[+] *Սուրբ Հոգւոյն, իջեալ յերկնից եւ էառ կատարեալ մարդկութիւն ի սրբոյ Կուսէն եւ արար զանճառ միաւորութիւնն:* [27] *Եւ վասն Հոգւոյն Սրբոյ ասաց հրեշտակն առ Յովսէփ, թէ՝ «Յղութիւն նորա ի Հոգւոյն Սրբոյ է» [Մատթ. Ա 20]:* [28] *Եւ սուրբ հարքն ասացին, թէ՝ «Հոգւովն Սրբով*[+] *էառ զամենայն ⌜ինչ, որ⌝ է ի մարդ՝ առանց ապականութեան»*:* [29] *Զի թէպէտ*[+] *Որդին միայն մարմնացաւ, այլ Հայր եւ Հոգին Սուրբ կամակիցք եւ գործակիցք էին նմա:*

XIX. [1] *⌜Հարցումն⌝: Զի՞նչ է, զոր ասէ Պաւղոս, °թէ՝ «Հոգին ցանկայ հակառակ մարմնոյ եւ մարմինն □ցան<կայ>...» [Գաղ. Ե 17]:* [2] *Պատասխանի: °Ասեն ոմանք ի □չարափառացն, թէ հոգին մարդոյ*

---

19 ⌜–⌝ *B* / [+]*ոչ ասի Քրիստոս B*
21 ⌜*Արարիչ ասէ*⌝ *A*
22 *Գործսն B* / ° *B* / *գիտասցի A*
23 [+]*եւ B* / □*արարիչ A* / [+1]*ասաց, թէ B*
25 ⌜–⌝ *A*
26 [+]*ընդ B* / *էջ B* /*զկատարեալ B* / *մարդկութիւնն B*
28 [+]*որով* / ⌜*10*⌝ *B*
* *Հմմտ. Հաւատոյ հանգանակ, Ժամագիրք, Երուսաղէմ, 1959, էջ 460:*
29 [+]*միածին B* / *կամակից A* / *գործակից A*
1 *որ B* / ° *B* / *մարմնոյն(1) B* / □*հակառակ հոգոյն B*
2 ° *B* / □*չարախաւսիցն ասեն B* / □[1]*ասէ A* / *մարմին A*

զարդարութիւնն ▫[1]կամի, եւ մարմինն՝ մեղքն: [3] Ո՛վ յիմարք, թէ հոգի մարդոյ զմեղսն ոչ կամէր, ապա յայտ է, թէ+ ոչ գործէ, եւ եթէ ոչ գործեն ամենայն հոգիք զմեղս եւ ոչ կամակից են մարմնոյն, որ զմեղսն գործեն: [4] Յայտ է, թէ+ ի դժոխս ոչ երթան, ⌜եւ ապա⌝ դատաստանն Աստուծոյ ոչ է ճշմարիտ: [5] Եւ դարձեալ, թէ ամենայն մարմին զարդարութիւնն ոչ կամենայ, յայտ է, թէ ամենայն մարմին յարքայութիւնն Աստուծոյ ոչ մտանէ: [6] Եւ թէ ⌜արքայութիւն Աստուծոյ եւս մտանէ ամենայն մարմին⌝, յայտ է, թէ ընդ այս+ ⌜դատաստանն Աստուծոյ ոչ է⌝ ուղիղ: [7] Այլ եւս պատճառ. զի թէ հոգի մարդոյ հանդերձ մարմնովն զմեղս ոչ գործէ եւ ոչ կամակից է մարմնոյն, որ զմեղս գործէ, ապա ընդէ՞ր բարբանջեն °հերձուածողքն եւ ասեն, թէ քաւարան գոյ, եւ գներելի մեղքն քաւէ հոգին: //[8]⌜Եւ այս⌝ կարի 99բ
յոյժ յիմարութիւն է: [9] Քանզի որ զմեղս ոչ գործէ եւ ոչ կամենայ, ▫եւ մարմինն, °որ զմեղս գործէ, զիա՞րդ հոգին փոխանակ մարմնոյն երթայ ի քաւարանն եւ զմարմնոյն մեղսն քաւէ: [10]⌜Եւ այս⌝ ոչ է ուղիղ դատաստան: [11] Այլ այս է ճշմարիտն, քանզի Պաւղոս ասէ, թէ՝ «Հոգին ցանկայ ⌜հակառակ մարմնոյն, եւ մարմինն ցանկայ հակառակ հոգւոյն⌝»: [12] Ոչ եթէ վասն ▫մարդոյն ասէ, այլ վասն գործոց մարդկան: [13] Ըստ այնմ, զոր+ ինքն ասէ, թէ՝ «Ընդ հոգեւորսն զհոգեւորսն խաւսիմք» [Ա Կոր. Բ 13]. ոչ եթէ ընդ անմարմնոցն խաւսիմք, այլ ⌜ընդ այնոսիկ⌝, որք զարդարութիւնն գործէին, զնոսա հոգեւորս կոչէ: [14] Եւ դարձեալ, ⌜Պաւղոս ասէ⌝. «Ո՞չ ապաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարմնոյ գնայք» [Ա Կոր. Գ 3]: [15] Ոչ եթէ այսու ընդ ան-

3 եթէ (1)B / հոգին B / կամի B / +եւ B / հոգիքն B / զմեղսն B
4 +եւ B / ⌜10⌝ B
5 եթէ(1) B / զարդարութիւն B / մարմինք B / մտանեն B
6 եթէ(1) B / ⌜4523(յ+0)1⌝ B / +եւս B / ⌜2301⌝ B
7 եթէ(1) B / հոգին B / ° B
8 ⌜–⌝ B
9 կամի B / ▫որ B / ° B / մարմնոյ B
10 ⌜–⌝ B
11 ⌜–⌝ A
12 ▫մարմնոյն A
13 +եւ B / անմարմնոց B / խաւսէր(2) B / ⌜–⌝ B / կոչեցին B
14 ⌜10⌝ B
15 մարդն B / +քո B / զմեղսն B / մարմնաւոր B

հոգի մարդոյ+ խաւսի, այլ որ զմեղս գործէին, զնոսա մարմնաւորս անուանէ: 16 *Քանզի արդարութեան փառքն անաւսր է եւ աներ-*
ւոյթ, վասն այնորիկ զնա հոգի ասէ Պաւղոս: 17 *Եւ մեղքն՝ թանձր, եւ անարգանքն նորա երեւի °յոյժ, վասն այնորիկ զնա մարմին կոչէ:*
18 *Եւ յիրաւի ասէ Պաւղոս, թէ արդարութիւնն ցանկայ հակառակ մեղացն, եւ մեղքն ցանկայ հակառակ արդարութեանն:* 19 *Այլ հոգի*
եւ մարմին մարդոյ յաւրէ, յորմէ+ միաւորեցան, զամենայն ⌜ինչ, զոր⌝ առնեն, միաւորութեամբն առնեն ըստ Յիսուսի, որ ասէ. «Մի՛
հոգայք վասն հոգւոց ձերոց, թէ զինչ ուտիցէք» [Մատթ. Զ 25]:
20 *Տեսանե՞ս, զի Քրիստոս զկերակուրն հոգւոյն ասէ, թէպէտ+ մարմ-*
նովն ուտէ: 21 *Եւ դարձեալ ասէ Յիսուս. «...եւ մի՛ վասն մարմնոց*
ձերոց, թէ զինչ ագանիցիք» [Մատթ. Զ 25]: 22 *Քանզի հանդերձն*
100ա *զմարմինն ծածկէ, // բայց հոգին ցանկայ:* 23 *Նոյնպէս եւ կերակուրն*
զմարմինն զաւրացուցանէ, բայց հոգին ցանկայ ուտել: 24 *Եւ յայս-*
մանէ յայտ է, թէ ամենայն իրաւք հոգին եւ մարմինն ⌜հնազանդ են միմեանց⌝ եւ ոչ՝ հակառակ: 25 *Դարձեալ ասէ Յիսուս. «Մի՛ երկնչիք*
յայնմանէ, որ զմարմինն ձեր սպանանէ, բայց զհոգին ոչ կարէ սպա-
նանել» [Մատթ. Ժ 28]: 26 *«Այլ ես ցուցից,— ասէ Յիսուս,— եթէ*
յումմէ երկնչիցիք. երկնչիցիք+ յայնմանէ, որ յետ սպանանելոյն
ունի ⌜իշխանութին զհոգի եւ զմարմին արկանել ի գեհեն հրոյ⌝»
[Ղուկ. ԺԲ 5]: 27 *Տեսանե՞ս, զի Քրիստոս զմարմինն ասաց սպանանել,*
բայց զմահն եւ զերկիւղն հոգւոյն ետ, եւ ասէր ընդ հոգիսն, թէ՝
«Մի՛ երկնչիցիք ⌜դուք յայնմանէ, որ զմարմինս ձեր սպանանեն⌝»:
28 *Եւ դարձեալ ⌜ասէ Քրիստոս եւ եցոյց⌝, թէ հոգին եւ մարմինն ի գե-*

---

16 նաւսր B
17 անարգանք B / ° B
18 արդարութիւն B / մեղաց B / արդարութեան B
19 +հետէ B / ⌜10⌝ B / առնէ(1) B / առնէ(2) B
20 կերակուրն B / ասաց B / +եւ B
24 ⌜201⌝ B /
25 զմարմինս B / սպանանել A / կարեն A
26 երկերուք(2) B / +դուք B / ⌜-⌝ A
27 երկնչիր A / ⌜-⌝ A
28 ⌜-{0,2}31⌝ B / հրոյն B

հեն հուրն տանջելոց են: [29] *Քանզի հոգի, որ այսաւր երկնչի եւ խնամէ զմարմինն իւր ի սպանանելոյ, վաղիւն յարքայութիւնն Աստուծոյ ոչ ◦կարէ մտանել:* [30] *Եւ կատարի բանն ▫Յիսուսի, որ ասէ, թէ՝ «Դատեմ, եւ դատաստան ⌜իմ արդար է⌝» [Յովհ. Ե 30]:*

XX. [1] *◦Հարցումն: Զի՞նչ է բնութիւն:* [2] *Պատասխանի: Ամենայն ինչ, զոր եւ կայ, զինչ իրաւք որ յամենայն ընչից զինքն բաժանէ, այն է բնութիւն նորա:* [3] *Եւ տե՛ս, թէ անբան ▫անասունքն ի մարդկանէ բաժանին, այն է նոցա բնութիւն:* [4] *Եւ տե՛ս, թէ հրեշտակք ինչ իրաւք ի Սուրբ Երրորդութենէն բաժանին, այն ◦է նոցա բնութիւն:* [5] *Եւ տե՛ս, թէ Սուրբ Երրորդութիւնն ինչ իրաւք յամենայն արարածոցս բաժանի, այն է նորա բնութիւն, որ է ▫այսպէս՝ Աստուած անեղ*[+] *◦եւ անժամանակ*[+1]*, անսկիզբն*[+2] *◦*[1]*եւ անքանակ*[+3]*, յառաջ քան զյաւիտեանս*[+4]*, անիմանալի է ⌜բնութիւնն Աստուծոյ⌝ ◦*[2]*եւ անթարգմանելի, եւ գոյութիւն է անճառելի, եւ իմաստութիւն է անհասանելի:* [6] *Վասն որոյ խոստովանելի է // զերիս Անձնաւորութիւնսն եւ զմի* 100բ
Աստուածութիւնն, էութիւն անեղ, կատարեալ, անհաս ◦եւ անճառ, անիմանալի երկնաւորացն եւ երկրաւորացս, Արարիչ բոլորից եւ ստեղծող ամենայն էիցս, Աստուած ի վերայ ամենեցուն՝ աւրհնեալ յաւիտեանս. ամէն:[+]

---

29 ◦ *B* / *մտանէ B*
30 ▫ *Տեառն B* / *դատիմ A* / ⌜-⌝ *A*
1 ◦ *A*
2 *ամենայն(2) B*
3 ▫*կենդանիքն ինչ իրաւք B* / *բնութիւնն B*
4 ◦ *A*
5 *այս B* / [+]*է B* / ◦ *B* / [+1]*է B* / [+2]*է B* / [◦1] *B* / [+3]*է B* / [+4]*է B* / ⌜*10*⌝ *B* / [◦2] *B* / *իմաստութիւնն A*
6 *Անձնաւորութիւնն A* / ◦ *B* / *ստեղծիչ B*

Քննական բնագրում գործածուած նշանների բացատրութիւն

(տարընթերցումները ներկայացուած են ըստ նախադասութիւնների)

1. ° — յաջորդող բառը բաց է թողնուած
2. + — ներմուծութիւն մէկ կամ աւելի բառերի
3. ▫ — յաջորդող բառը փոխարինուած է մէկ կամ աւելի բառերով
4. ⌜ ⌝ — ներփակուած բառերը՝

   ա) փոխարինուած են այլ բառով կամ արտայայտութեամբ,

   բ) բաց են թողնուած (⌜–⌝),

   գ) ունեն այլ յաջորդականութիւն (այս դէպքում նշանների մէջ ներկայացուած է նոր յաջորդականութիւնը. օրինակ՝ սկզբնական ⌜0123⌝ փոխարինւում է ⌜3102⌝),

   դ) ա—գ կէտերի խառը տարբերակներ. այս դէպքում նշւում են փոխարինուած եւ բաց թողնուած մասերը, բառերի նոր յաջորդականութիւնը եւն: Օրինակ՝ երբ սկզբնական ⌜01234567⌝ տարբերակը դառնում է ⌜-{056}74(+a)2(b/3)⌝, նշանակում է, որ 0, 5, 6 բառերը բաց են թողնուած, իսկ 7-ին եւ 4-ին յաջորդում է a յաւելումը, ապա՝ 2-ը, այնուհետեւ b բառը՝ 3-ի փոխարէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳԻ «ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱԿԻ ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆ ՅԺԸ-ԻՑՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մուտք

Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների[1] հոգեւոր ժառանգութիւնն այսօր աննախադէպ ուշադրութեան առարկայ է դարձել աստուածաբանական շրջանակների համար: Մէկը միւսի յետեւից գումարւում են խորհրդաժողովներ[2], կատարւում են ուսումնասիրութիւններ, լոյս են տեսնում բնագրեր: Այս ամէնի շնորհիւ հնարաւորութիւն է ստեղծւում առաւել ստոյգ եւ չմիջնորդաւորուած պատկերացումներ ձեռք բերել քրիստոնէական Արեւելքի մասին, որը հսկայական ազդեցութիւն է թողել համաքրիստոնէական քաղաքակրթութեան ձեւաւորման վրայ: Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում յատկապէս դաւանական բնագրերը, քանի որ հէնց

---

1 *Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների (Oriental Orthodox Churches) ընտանիքը ներառում է Հայ, Ղպտի, Ասորական (ներառեալ Հնդիկ Մալանկարա) եւ Եթովպական Եկեղեցիները, որոնք վերը նշուած միասնական անուան տակ հանդէս են գալիս միջազգային ժողովներում:*

2 *Յատկապէս յիշատակութեան են արժանի Վիեննայի հինգ ոչ պաշտօնական խորհրդաժողովները (1971, 1973, 1976, 1978, 1988) Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Կաթողիկէ Եկեղեցու միջեւ, ինչպէս նաեւ Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների միջեւ ոչ պաշտօնական չորս խորհրդակցութիւնները (1964, 1967, 1970, 1971) եւ երեք պաշտօնական հանդիպումները (Ս. Բիշոյի վանք, 1989. Շամբեսի, 1990. Ժնեւ, 1993): Այս խորհրդաժողովների որոշ փաստաթղթեր տես «Գանձասար» Ե, Երեւան, 1994, էջ 48–53: Աւելի մանրամասն տես "Five Vienna Consultations", ed. by Pro Oriente, Vienna, 1993:*

նրանցում են անթեղուած այս կամ այն Եկեղեցուն ներյատուկ տարբերութիւնները եւ նմանութիւնները: Ահա թէ ինչու դաւանական բնագրերի ուսումնասիրութիւնն ու լոյսընծայումը դարձել է արդի աստուածաբանական մտքի կարեւորագոյն խնդիրներից մէկը:

Դաւանական բնագրերով յատկապէս առատ է Հայ Առաքելական Եկեղեցու աստուածաբանական ժառանգութիւնը, ինչն արդիւնք է դաւանական լարուած պայքարի, որ մշտապէս ուղեկցել է մեր Եկեղեցու պատմութեանը: Սակայն եթէ Հայ Եկեղեցու ներդրումը քրիստոնէական մշակոյթի (երաժշտութիւն, ճարտարապետութիւն, մանրանկար եւ այլն) զարգացման մէջ որոշ չափով պատկերացնելի է այսօր, ապա հայ աստուածաբանական (յատկապէս դաւանական) միտքը եւ նրա զարգացման օրինաչափութիւնները ծածկուած են անյայտութեան մէգով: Արդէն իսկ հայ դաւանաբանութեան հպանցիկ ուսումնասիրութիւնը ակներեւ է դարձնում այն, որ ուսումնասիրողը գործ ունի մի ուրոյն դաւանական դպրոցի հետ՝ իր զարգացման փուլերով եւ առանձնայատկութիւններով: Դժբախտաբար, մի կողմից՝ դարեր շարունակուող դաւանական պայքարի պատճառով այդ գրականութիւնը արհամարհուած է եղել մեր ընդդիմախօսների կողմից, միւս կողմից՝ աւանդութեան խզումների հետեւանքով նոյն այդ գրականութիւնը մեզ համար դարձել է անմատչելի եւ անհասկանալի: Մեր այս ուսումնասիրութիւնը մէկ փորձ է՝ անյայտութեան խաւարից դէպի լոյս բերելու հայ դաւանական մտքի խոշորագոյն դրսեւորումներից մէկը՝ Յովհաննէս Սարկաւագի[3] «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» նշանաւոր ժողովածուն:

---

3 *Յովհաննէս Սարկաւագի կեանքի եւ գործունէութեան մասին տես* Հ. **Ղեւոնդ Ալիշան**, *Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Բազմավէպ», Ս. Ղազար, 1847, էջ 214–225. «Սարկաւագ Սոփեստէս», «Յուշիկք հայրենեաց հայոց», ԻԳ, Ս. Ղազար, 1870, էջ 279–307.* Հ. **Գարեգին Զարբհանալեան**, *Հայկական հին դպրութեան պատմութիւն, Ս. Ղազար, 1886, էջ 588–597.* Հ. **Համազասպ Ոսկեան**, *Յովհաննէս Սարկաւագ, Մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 1–64.* **Երուանդ Տէր-Մինասեան**, *Հաղբատի դպրոց եւ Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Արարատ», 1902, էջ 340–344.* **Մանուկ Աբեղեան**, *Հայոց հին գրականութեան պատմութիւն, Գիրք երկրորդ, Առաջին յաւելուած, «Սարկաւագ վարդապետի կենսագրութիւնը», 1946.* **Աշոտ Աբրահամեան**, *Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956.* **Կարլեն Միրզոյեան**, *Յովհաննէս Իմաստասէրի աշխարհայեացքը, Երեւան, 1984:*

Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Յաղագս նշանակի հաւատոյ...» ժողովածուն եզակի արժէք ունի հայ դաւանական մտքի օրինաչափութիւնները վերհանելու տեսանկիւնից: Մշակութաբանական, գիտական, պատմական լայն անդրադարձները ժողովածուն դարձնում են ընդհանրապէս ԺԱ–ԺԲ դդ. արեւելաքրիստոնէական մշակոյթի կարեւորագոյն կոթողներից մէկը: Յոյս ունենք, որ ներկայացուող ուսումնասիրութեամբ կը կարողանանք փոքր-ինչ լոյս սփռել մեր մատենագրութեան այս մեծարժէք ժողովածուի վրայ:

Ա. Յովհաննէս Երզնկացու ժողովածուն

Սարկաւագի այս երկը մեզ հասել է Յովհաննէս Երզնկացու նշանաւոր ժողովածուի միջոցով, որը բացի դիտարկուող երկից ներառում է նաեւ Խոսրովիկ Թարգմանչի եւ Անանիա Սանահնեցու յայտնի հակաճառութիւնները: Այն, որ Երզնկացին անձամբ հաւաքել է այս երկերը մէկ ժողովածուի մէջ, վառ վկայութիւնն է հայ դաւանական գրականութեան մէջ վերջիններիս բացառիկ կարեւորութեան, ինչը նա մասնաւորապէս շեշտում է իր առաջադրութեան մէջ[4]. «Նախ քան զմտանել քո ի դրունս ըն[թերց]ման[5] գրոցս, պարտ է մեզ ցուցանել զգիւտ այս պատուական եւ բարելի գանձուց: Նուաստ եւ տկարոգի Յոհանէս Ե[ր]զնկայ եպիսկոպոս[6] սպասաւոր բանի եւ իմաստից Գրոց Սրբոց ծարաւի, յոլով ժամանակաւք եւ աշխատութեամբ բազմաւ զսա[7] երեք գիրքս, որ են հիմունք հաւատոյ ուղղափառութեանն: Եւ թէ զմին մի ի սոցանէ գտանէ ոք, բարեբախտութիւն մեծ եւ փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեան գիտաւղի: Զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի եւ ստացա[յ] գերիս գիրսն եւ ի նոցունց դարձեալ ետու գրել եւ առ միմեանս եղի եւ արարի մի գիրք: Առաջին զԱնանիային զհայոց վարդապետի, երկրորդ զԽոսրովկայ Թարգմանչի եւ հզաւր գիտնականի, երրորդ զՍարկաւագ

---

4 *Բնագիրը ներկայացնում ենք այնպէս, ինչպէս գրչագրում է, ընդգծելով տառասխալները եւ ուղիղ փակագծերի մէջ առնելով անհրաժեշտ յաւելումները:*

5 *Գրչագրում չորս տառ ընկած է, որը յետագայում անհաւաստի լրացման է ենթարկուած այսպէս՝ ըն[դհաց]ման:*

6 *Բառը լաւ չի ընթերցւում:*

7 *Բառը լաւ չի ընթերցւում:*

վարդապետին [եւ] զմեծ[ի]ն իմաստասիրի զհաղբատեց[ւ]ոյ: Եւ թողում զսա [որք յ՞]ետ իմ ժառանգէք յոգնագան բարեաց ճոխութիւն [եւ՞] ամէնառատ գանձուց փարթամութիւն: Աստուածաբանական հանճարով յերկինս թռուցելոց սա թեւք զաւրաւոր եւ վերացուցիչ, յաշխարհիս ծովիս նաւելոց զեկք վարիչք եւ ուղղիչք, ի մարտս խմբից հերձուածողականացն [...][8] զէնք սրեալք յաջողակ ձեռաց քաջամարտից: Ի խաղաղական ժամու ժողովոց սեղանք երկնաւորք եւ քաղցրաճաշակ լցեալ կերակրովք: Վաճառականաց հ[...][9]արոյ եւ հմտագունից, մարգարիտ անգիւտ եւ աշխարհաւ ամենայնիւ գնեալ: Աղքատաց անճաց եւ նիւթականաց անձեռնհասից սա ճոխութիւն երկնաւոր եւ անհամեմատելի: Իմաստութեամբ լուսաւոր անճանց արփի լուսաբու[ղ]խ եւ բազմանշոյլ: Անգիտութեան մթով պատելոց ճրագ լուսատու եւ խաւարափարատ: Սա ձեզ յոլով բարեաց բղխմունս աղբերաց եւ մեզ նիւթ յիշատակի եւ բարբառ եւ ձայն առ ձեզ մաղթանաց: Զի որք աւգտիք եւ զուարճանայք, զողորմելի Յոհանէս յիշեսջիք եւ մեղուցելոյս անձին եւ վարդապետին իմոյ եւ ծնաւղաց ողորմութիւն ի Քրիստոսէ հայցեսջիք»[10]:

Երգնկացու ժողովածուն մեզ հասել է հինգ գրչագրերով՝ N 504 (ՍՂՄ), N 436[11] (ՄՄ), N 567 (ՄՄ), N 6453 (ՄՄ), N 2751 (ՄՄ): Խոսրովիկի եւ Սանահնեցու հրատարակիչները նկատի են ունեցել միայն վերջին երկու գրչագրերը: Մինչդեռ առաջին գրչագիրը պէտք է նկատել որպէս Երզնկացու ինքնագիր[12], եւ ահա թէ ինչու: Նախ եւ առաջ՝ N 504 գրչագրում զետեղուած երեք բնագրերը ակնյայտօրէն գրուած են երեք տարբեր գրիչների կողմից: Այս մասին իր նախագրութեան մէջ ծանուցում է ինքը՝ Երզնկացին. «Զոր եւ գտի ես յայլ եւ յայլ տեղի եւ ժամանակի եւ ստացա[յ] զերիս գիրսն եւ ի նոցունց դարձեալ **ետու գրել եւ առ միմեանս եդի** *եւ արարի մի գիրք»: Ուրեմն Երզնկացին նախ հաւաքել է այս երեք գրքերը եւ տուել է ընդօրինակելու (հաւանաբար՝ իր աշակերտներին) եւ ապա համադրելով կազմել իր այս*

---

8 Անընթեռնելի երկու տառ

9 Անընթեռնելի չորս տառ

10 Այս նախագրութիւնը հրատարակել է նաեւ Գարեգին Յովսէփեանը (տես Խոսրովիկ Թարգմանիչ, Ս. Էջմիածին, 1899, մաս Բ, Երկասիրութիւնք Խոսրովկայ Թարգմանչի, էջ 1–2):

11 Այս գրչագիրը չունի Սարկաւագի ժողովածուն:

12 Այստեղ ինքնագիրը աւելի շուտ պէտք է հասկանալ «իր կողմից կազմուած»:

ժողովածուն: Մինչդեռ եթէ N 504 գրչագիրը Երզնկացու ժողովածուի սոսկ մի ընդօրինակութիւն լինէր, ապա մեծ հաւանականութեամբ գրուած կը լինէր մէկ գրչի կողմից, ինչպիսիք են, օրինակ, ՄՄ NN 567, 6453 եւ 2751 գրչագրերը:

Սկզբնագիր յիշատակարանը կամ նախագրութիւնը եւ Սանահնեցու հակաճառութիւնը, որը հերթականութեամբ առաջինն է, ակնյայտօրէն գրուած են միեւնոյն գրչի կողմից: Նախագրութեանը կցուած է հետեւեալ մանրատառ գրութիւնը՝ «....եւ ինձ մեղուցեալ գրչիս Յովհաննու քահանայի», որի գրչութիւնը համընկնում է նախագրութեան եւ Սանահնեցու բնագրի գրչութեան հետ: Յովհաննէս գրիչը կարող է լինել ինքը Երզնկացին կամ նրա աշակերտներից մէկը: Սանահնեցու բնագիրը չունի վերջի յիշատակարան, ինչը նորից խօսում է այն մասին, որ գրիչը թերեւս Երզնկացին է եւ բաւարարուել է միայն նախագրութեամբ: Խոսրովիկի բնագիրը, որը հերթականութեամբ երկրորդն է, վերջում ունի գրչի ընծայական-յիշատակարան. «Փառք Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն: Պատուելի եւ ընդրեալ եւ աստուածային շնորհաւքն լցեալ սուրբ վարդապետ Յոհաննէս, ընդա՛լ զսակաւ գծիկս ի նուաստ յանարժան քահանայի Յոհանիսէ եւ յիշեա՛ զիս անմոռաց յիշմամբ յաղաւթս քո եւ խոշորութեան եւ սղալանաց, որ ի սմա, մի՛ մեղադրեր, զի աւրինակն գրապակաս էր եւ իմ կարն այսչափ, եւ դու յիշեալ լիցիս ի Տուողէն արարածոց. եւ Նմա փառք յաւիտեանս»: Թէպէտ եւ գրիչների անունները համընկնում են, այսուհանդերձ գրչութեամբ խիստ զանազանւում են իրարից: Ս. Ղազարի N 504 գրչագրի վերջից երկու թերթ ընկած լինելու պատճառով Սարկաւագի բնագիրը վերջից թերի է, ուստի եւ ոչ մի պատկերացում չենք կարող ունենալ գրչի անուան եւ ընդօրինակութեան տեղի եւ ժամանակի մասին: Խոսրովիկի բնագրի վերջում կայ նաեւ յետագայի յիշատակարան. «Արդ, յերեսս անկեալ պաղատիմ մանկանցդ սուրբ Եկեղեցւոյ, որք հանդիպիք աստուածային կտակիս, յիշեսջիք զվերջին ստացողս զնուաստ վարդապետս Սարգիս եւ զհոգեւոր եւ զմարմնաւոր ծնողքն իմ: Եւ ետու զսա Թովմա վարդապետի, որ հանապազ ընթեռնու եւ յիշէ զմեզ յաղաւթս իւր: Եւ Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուր բարեաց, զձեզ յիշէ ի փառս եւթնալիր աւրհնութեան. ամէն: Ի թուականիս ՊՀԴ ամի հայկազեանս տումարի»: Փաստօրէն յետագայի յիշատակարանը գրուած է 1425 թ.՝ Երզնկացու մահուանից ընդամէնը 132 տարի յետոյ:

Այսպիսով՝ երեք տարբեր գրիչների կողմից գրուած լինելու պարագան եւ Խոսրովիկի ընդօրինակող գրչի յիշատակարանը յուշում են, որ Վենետիկի N 504 գրչագիրը հէնց Երզնկացու կազմած ժողովածուն է, որը մեզ յայտնի է նաեւ ուշ շրջանի մի քանի այլ ընդօրինակութիւններով[13]*:*

Բարեբախտաբար, այսօր հնարաւոր է կատարել նաեւ գրչութեան քննութիւն, ինչը այլեւս կասկած չի թողնում, որ ժողովածուն հէնց Երզնկացու կազմածն է: Էդուարդ Բաղդասարեանը իր «Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը» ուսումնասիրութեան մէջ ներկայացնում է Երզնկացու՝ ՍՅՄ N 1796 գրչագրի 2ա երեսին զետեղուած ինքնագիր յիշատակարանը, որի գրչութեան համեմատութիւնը ՍՂՄ N 504-ի նախագրութեան եւ Սանահնեցու հակաճառութեան գրչութեան հետ ցոյց է տալիս, որ դրանք գրուած են միեւնոյն գրչի կողմից:

Դժուար է պատկերացնել, թէ ինչ կը պատահէր այս կարեւորագոյն դաւանական բնագրերի հետ, եթէ Յովհաննէս Երզնկացու կողմից չկազմուէր այս նշանաւոր ժողովածուն: Փաստօրէն, այս ժողովածուից զատ, միայն այս կամ այն գրչագրերում սփռուած պատառիկներ են մեզ հասել եւ Սանահնեցու հակաճառութեան երկու այլ համառօտ խմբագրութիւններ, որոնցից մէկը ակնյայտ ազդեցութիւններ է կրում Դաշանց թղթից[14]*: «Յաղագս նշանակի հաւատոյ...» ժողովածուից այլ ընդօրինակութիւններով մեզ են հասել մի քանի պատառիկներ, որոնցից ամենաարժէքաւորը ՄՄ N 777 գրչագրով մեզ հասած հատուածն է: Այս հատուածի հետ համեմատութիւնը լոյս է սփռում մի շարք լեզուական խնդիրների վրայ, ինչին կ'անդրադառնանք «Լեզուաոճական առանձնայատկութիւններ» ենթագլխում:*

---

13 Տես ՄՄ ձեռ. NN 567, 2751, 6453 եւ մասամբ N 436 (առանց Սարկաւագի ժողովածուի) գրչագրեր:

14 Տես **Ց. Անասեան**, *Հայկական մատենագիտութիւն, էջ 781: Միւս խմբագրութիւնը, որի մասին խօսում է Անասեանը, մեր կարծիքով, Անանիա Նարեկացու «Հաւատարմատի» մէկ մասն է: Այս մասին՝ «Ժողովածուի աղբիւրները եւ ստեղծման դրդապատճառը» ենթագլխում:*

Բ. Ժողովածուի կառուցուածքը

«Յաղագս նշանակի հաւատոյ...» ժողովածուն կազմուած է 14 դաւանական թղթերից, որոնք բացի դաւանական խնդիրներից հարուստ նիւթ են պարունակում քրիստոնէական մշակոյթի, պատմութեան եւ աւանդութիւնների մասին: Սակայն անյայտ է մնում, թէ այս ժողովածուն ինքը Սարկաւա՞գն է կազմել, թէ յետագայում ի մի բերուած թղթեր են, քանի որ այդ թղթերը գրուել են այլեւայլ ժամանակներում եւ զանազան պատճառներով: Թղթերի հեղինակային պատկանելութեան հարցերը նոյնպէս հարկ է մանրազնին քննութեան ենթարկել: Քանի որ Երզնկացու ժողովածուում դրանք ներկայացուած են «Յովհաննու քահանայի յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» վերտառութեամբ, այնքան էլ ակնյայտ չէ, թէ Յովհաննէս քահանան նոյն ինքը Յովհաննէս Սարկաւագն է, թէ ոչ: Օրինակ՝ Արիստակէս Լաստիվերցին իր «Պատմութեան» մէջ գրում է. «Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք... եւ Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերագրիր անուամբ Կոզեռն կոչէին, որ **զՀաւատոյ գիրսն** *գրեաց...»*[15]*: Յովհաննէս Կոզեռնի անունով մեզ ոչ մի «Գիրք հաւատոյ» չի հասել, սակայն կարող էր աւանդուած լինել Յովհաննու քահանայի անունով*[16]*: Հեղինակային պատկանելութեան խնդրին մանրամասնօրէն կ՚անդրադառնանք յաջորդ գլխում:*

Ստորեւ ներկայացնում ենք այդ թղթերի վերտառութիւնները իրենց հակիրճ բովանդակային նկարագրութիւններով:

Ա. Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի> հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն

Հայ Եկեղեցու երրորդաբանութեան, քրիստոսաբանութեան եւ Սուրբ Հոգու աստուածաբանութեան համակարգուած շարադրանք է: Քննութեան են առնուած կամ յիշատակուած մի շարք աղանդաւորական եւ հերձուածողական ուսմունքներ՝ արիոսականութիւն, սաբելիոսականութիւն, վալենտիանոսականութիւն, մանիքէականու-

---

15 *«Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերցւոյ», Ս. Ղազար, 1844, էջ 6–7*

16 *Սարկաւագի մի շարք յայտնի գործեր (օրինակ՝ ագօթքները)՝ աւանդուած թէ՛ Յովհաննէս քահանայի, թէ՛ Յովհաննէս Սարկաւագ վարդապետի կամ Սարկաւագ վարդապետի անուններով: Նոյնը կարող էր պատահել մէկ այլ Յովհաննէսի հետ:*

թիւն, ապողինարիզմ, մակեդոնականութիւն, նեստորականութիւն եւ այլն: Սուր քննադատութեան են ենթարկուած Քաղկեդոնի ժողովը եւ Թէոդորիտի եւ Լեւոն պապի քրիստոսաբանական հայեացքները: Այս թղթի վերտառութեամբ էլ պայմանականօրէն կոչում ենք ամբողջ ժողովածուն:

Բ. Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականացն գլուխ ԺԸ

Կազմուած է 18 ենթագլուխներից: Դաւանական խնդիրներից զատ արժէքաւոր տեղեկութիւններ է պարունակում եկեղեցական տօների, սուրբերի յարգանքի, պատկերայարգութեան, ծիսական խնդիրների մասին: Եզրափակւում է որոշ թուերի խորհրդաբանութեան համառօտ տեսութեամբ: Թղթի ամբողջականութիւնը կասկածելի է. մեր կատարած որոշ ստորաբաժանումներ պայմանական բնոյթ են կրում:

Գ. Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ

Մանրամասն շարադրանք է պատկերների եւ սրբոց նշխարների նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքի: Այս մասին անդրադարձներ կան նախորդ եւ յաջորդ գլուխներում: Աստուածաբանական խորհրդածութիւնները ուղեկցւում են որոշ աւանդապատումների վկայակոչութեամբ: Թուղթն ընդհանուր առմամբ ջատագովական բնոյթ ունի՝ ընդդէմ ԺԱ–ԺԲ դդ. Հայաստանում աշխուժացած օտարամուտ աւանդութիւնների:

Դ. Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն

Ջատագովական բնոյթի գործ է՝ ընդդէմ ուտելիքների եւ ըմպելիքների գործածութեան հետ կապուած մեղադրանքների: Հակաճառութիւնն ըստ երեւոյթին սկիզբ է առել վանական միջավայրում, որի մասին հետաքրքիր տեղեկութիւններ կան թղթում: Քննութեան են առնուած մի շարք ծիսական խնդիրներ: Նորից բարձրացնում է ս. խաչի եւ սրբապատկերների նկատմամբ վերաբերմունքի հարցը: Թղթին ընորոշ հակաճառական խիստ ոճը երբեմն բարեխառնւում է զարմանալի հանդուրժողականութեան եւ եղբայրասիրութեան երանգներով: Լեզուն ակներեւ խրթնութիւններ ունի:

Ե. Նորին յաղագս, եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել զաստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ զ՚առ ի յինքենէ գործս կամ կիրս

Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգի շարադրանք է՝ գրուած ընդդէմ քաղկեդոնականների: Անդրադառնում է ապականութեան խնդիրներին: Հերքւում են Դիոդորոս Տարսոնացու, Նեստորի եւ Եւտիքէսի տեսութիւնները: Ոչ ընդհանրացած մօտեցում է ցոյց տալիս ապողինարականութեան նկատմամբ, որը մերժում է անապականութեան վարդապետութեան տեսանկիւնից: Հետաքրքիր զուգահեռներ է տանում Հին եւ Նոր Կտակարանների միջեւ՝ փաստելու Քրիստոսի մարդկային կիրընդունակութեան կամաւոր լինելը: Միանգամայն անընդունելի է համարում մեզ եւտիքէսականութեան մէջ մեղադրելը: Կոչ է անում միմեանց նկատմամբ արդարացի եւ ոչ թշնամական վերաբերմունքի, որը աւարտում է զարմանալի գեղեցկութեան աղօթքով՝ Եկեղեցու միութեան համար:

Զ. Յաղագս, եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս ի Քրիստոս ի հարկէ հետեւին Նեստորականաց մտաց

Ամենակարճ գլուխն է, ուր քննարկւում են նեստորականութեան ակունքները քաղկեդոնական վարդապետութեան մէջ: Քաղկեդոնի ժողովը նմանեցնում է երկրորդ ջրհեղեղի՝ ընդգծելով կայսերական իշխանութեան չարաշահումները եւ մարդահաճոյութեան տարրը այդ ժողովի որոշումների ընդունման մէջ:

Է. Թէ զիա՞րդ չարչարեալ Բանն մարմին եղեալ եւ անչարչարելի մնացեալ, եւ կամ ո՞րպէս դարձեալ ճայնակցեն չարափառքն

Հակիրճ եւ կուռ շարադրանք է անապականութեան վարդապետութեան: Այդ տեսանկիւնից քննութեան է առնուած քաղկեդոնական համակարգը: Գործածում է մի շարք կարեւոր աստուածաբանական եզրեր՝ բնորոշելու համար Քրիստոսի մարդկային կրքերը՝ որպէս փրկական եւ տնօրինական գործեր: Աստուածութեանը այլայլելիութիւն եւ չարչարականութիւն չվերագրելու համար պէտք է զանազանել տնօրինական եւ բնութեան նիստերը:

Ը. Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի

Բնութիւնից վերցրած օրինակներով ցոյց է տալիս, որ «մի բնութիւն» բանաձեւի գործածումը արդարացի է նաեւ բնախօսական տեսանկիւնից: Դիմում է նաեւ արարչագործութեան պատմութեանը «Ծննդոց» գրքից՝ լոյսի եւ նիւթի միութիւնը որպէս օրինակ դիտելով աստուածմարդկային միութեան համար: Հետաքրքիր են աննիւթական (սակայն զգալի) եւ նիւթական լոյս ըմբռնումները, որոնք վկայում են Սարկաւագի բարձր բնագիտական պատկերացումների մասին:

Թ. Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայուդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց

Պատմական ակնարկով անդրադառնում է նեստորականութեանը եւ Քաղկեդոնի ժողովին՝ ցոյց տալով մարդաբանական մաքսիմալիզմի վաղնջական ակունքները Արտեմոնի հերձուածի մէջ: Հիմնականում օգտւում է Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութիւնից»՝ մէջբերելով Ե դպրութիւնն ամբողջութեամբ: Յիշատակում է Կղեմէս Աղեքսանդրացու, Իրենէոսի, Յուստինոսի եւ այլ վաղ եկեղեցական հայրերի երկերը, որոնք «քարոզեն վասն Քրիստոսի, թէ Աստուած է եւ մարդ»: Գլուխը եզրափակւում է Քաղկեդոնի ժողովի եւ նախընթաց դաւանական շարժումների հակիրճ ամփոփումով:

Ժ. Նորին յաղագս բնութեան Բանի եւ միաւորութեան

Գեղեցիկ ոճով գրուած ամփոփում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանութեան: Շեշտադրւում է կատարեալ աստուածային եւ կատարեալ մարդկային իրականութիւնը Քրիստոսի մէջ, միաժամանակ՝ Աստուծոյ եւ մարդու միութեան անճառելիութիւնը՝ ընդդէմ քաղկեդոնականների:

ԺԱ. Նորին, եթէ զիա՞րդ ասի մի բնութիւնն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան

Խաղաղութեան եւ ներողամտութեան կոչով սկսուող այս ընդարձակ թուղթը հիմնարար շարադրանք է Քրիստոսի աստուածամարդկային բնութեան մասին: Ներկայացուած են եկեղեցական մարդաբանութեան մի շարք կարեւոր ըմբռնումներ: «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» եզրակերպումը դիտւում է կամքի եւ ներգործութեան տեսանկիւնից: Լայնօրէն գործածւում են արտաքին իմաստասիրական մեթոդները, վկայակոչւում է Պլատոնը: Ակնյայտ ազդեցութիւններ կան Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» նշանաւոր երկից:

ԺԲ. Նորին յայտարարութիւն զանազան հերձուածաց յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց

Ընդարձակ շարադրանք է անապականութեան վարդապետութեան: Քննարկում է զանազան ժամանակներում սկզբնաւորուած աղանդաւորական-հերձուածողական ուսմունքներ՝ աստուածաբանական կարեւոր վերլուծութիւններով: Նկարագրում է Սեւերոս-Յու-

լիանոս հակաճառութիւնը՝ սուր քննադատութեան ենթարկելով երկու կողմին էլ: Մեծապէս ազդուած է Խոսրովիկ Թարգմանչից:

ԺԳ. Նորին դարձեալ

Թուղթն ըստ երեւոյթին գրուած է այն նոյն անձնաւորութեան խնդրանքով, որին հասցէագրուած է առաջին թուղթը: Առաջին մասում համառօտ կերպով ամփոփուած են Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքները: Երկրորդ մասը արժէքաւոր վկայակոչումներ է զանազան հերձուածողներից:

ԺԴ. Վկայութիւնք սրբոցն, եթէ մի բնութիւն է Բանին Աստուծոյ մարմնացելոյ

Վկայակոչումներ Եկեղեցու հայրերից (Յուլիոս Հռոմէացի, Աթանաս Աղեքսանդրացի, Գրիգոր Նէոկեսարացի, Գրիգոր Աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Աղեքսանդրացի, Տիմոթէոս Կուզ):

Գ. Վաւերականութեան խնդիրը

Այս ժողովածուն առաջին անգամ աղբիւրագիտական քննութեան է ենթարկել Գարեգին վրդ. Յովսէփեանն իր «Խոսրովիկ Թարգմանիչ»[17] *պատմամատենագրական ուսումնասիրութեան մէջ, ուր նա ցոյց է տալիս հետեւեալը:*

ա) Յովհաննու քահանայի երկի ԺԲ գլուխը՝ «Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց» վերտառութեամբ, «ամբողջապէս համառօտութիւն կամ բանաքաղութիւն է Խոսրովիկի Ա, Դ եւ Ե գլուխներից»[18]*:*

բ) Դ գլխից՝ «Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանեն եւ զանձինս ոչ արգելուն», մի հատուած է մեզ հասել ՄՄ N 777 գրչագրով, որն ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից: Այսինքն՝ այս գլխի հեղինակն, անկասկած, Յովհաննէս Սարկաւագն է[19]*:*

---

17 Տես **Գարեգին վրդ. Յովսէփեան**, *Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899 (=ԽԹ):*

18 ԽԹ, էջ 37

19 ԽԹ, էջ 53–54

գ) Սարկաւագի յայտնի երկերը աւանդուած են մերթ Յովհաննէս Սարկաւագի, մերթ Յովհաննու քահանայի անունով[20]*:*

դ) Բ գլխի՝ «Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականաց գլուխ ԺԸ» վերտառութեամբ, V ենթագլխում յիշատակւում է Սարկաւագի «Յաղագս քահանայութեան»[21] *ճառը*[22]*:*

ե) Գ գլուխը՝ «Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ» վերտառութեամբ, եզրափակւում է ուշագրաւ արտայայտութեամբ. «Աղաչեմ, զասացող բանից զերանելի վարդապետն Սարկաւագ եւ զհայցողն ի նմանէ յիշեա՛», որով ակնյայտ է դառնում, որ այս գլխի հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է[23]*:*

Յաւօք, Գարեգին վրդ. Յովսէփեանը այսքանով բաւարարւում է՝ ասելով. «Մեր փաստերը չեն սպառուել. բայց կարծում ենք բերածներս էլ բաւական են ընթերցողներին համոզելու, թէ արդարեւ Յովհաննէս քահանան՝ Խոսրովկի գրքից օգտուողը՝ Յովհաննէս սարկաւագ վարդապետն է»[24]*: Զնայած մեծանուն մատենագէտի այս եզրայանգմանը՝ մնում է մէկ կարեւոր չլուծուած հարց. արդեո՞ք բոլոր թղթերի հեղինակը միեւնոյն անձնաւորութիւնն է: Առայժմ մենք գիտենք, որ Գ եւ Դ գլուխների հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է: Ինչ վերաբերում է Բ գլխին, ապա հարկ է նշել, որ «Յաղագս քահանայից» ճառը մեզ յայտնի է միայն մէկ ընդօրինակութեամբ, եւ այն էլ՝ Յովհաննու քահանայի անունով (ՍՂՄ ձեռ. N 828, էջ 642): Այնպէս որ այս փաստարկը բաւարար չէ այս գլուխը Սարկաւագին վերագրելու համար:*

Այժմ փորձենք շարունակել փաստերը, որոնք Գարեգին վրդ. Յովսէփեանը սպառուած չի նկատում: Նախ տեսնենք, թէ ինչ փոխադարձ կապեր կան առանձին գլուխների միջեւ:

ա) Սրբոց մասունքների, ս. խաչի, պատկերների յարգանքի եկեղեցական վարդապետութեան մասին ամենաակնյայտ ընդհանրու-

---

20 Տես ԽԹ, էջ 54–56: Այս բանի իրաւացիութեան մասին կարելի է բազում այլ ապացոյցներ բերել ի թիւս Գարեգին վրդ. Յովսէփեանի բերածների:

21 «Սոփերք հայկականք», հտ. Գ

22 ԽԹ, էջ 56

23 ԽԹ, էջ 57

24 Նոյն տեղում

թիւններ կան [Բ III, VIII, IX, XVII][25] ենթագլուխ-պարբերութիւնների, [Դ XIV 11–24] հատուածների եւ Գ գլխի միջեւ:

*բ) [Բ XIII 3]-ում անկասկած խօսւում է Դ գլխի մասին, որը հաղորդութեան ժամանակ գինուն ջուր խառնելու եւ թթխմորով հաց գործածելու հարցերին շատ մանրամասնաբար է անդրադառնում. «Քանզի բազումք ի նոցանէ **զջուր եւ զխմոր** գապականութեան տարացոյցս ի մեծ խորհուրդն վնաս եւ հերձուած ոչ համարին, յորոց աւտարանալ պարտ է՝ որպէս ի հրէից, քանզի եւ նոքա անապական եւ կենդանարար զՄարմին եւ զԱրիւնն Տեառն ոչ համարին, ընդ որս հաղորդել եւ սիրով անգամ անպատեհ է, **որպէս եւ յայլում ցուցաք մատենի** վասն նոցա եւ վասն խորամանկ խորհրդոցն նոցա առատագոյն»:*

գ) Հետեւեալ երկու մէջբերումներում Սարկաւագը պատուիրում է լռութիւնը գերադասել տգէտ պատասխանից:

1. «Թէ իցէ ի քեզ բան, տո՛ւր պատասխանի, ապա թէ ոչ՝ ափ քո ի վերայ բերանոյ քոյ լիցի» *[Բ XV 2]:*

2. «Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՛ւր զպատասխանի, ապա թէ ոչ՝ ափ քո եղիցի ի վերայ բերանոյ քո» *[Դ XI 30]:*

դ) Սարկաւագը, անդրադառնալով քաղկեդոնականների մի դէմք եւ երկու բնութիւն բանաձեւմանը, նշում է, որ նրանք դրանով փորձում են ծածկել իրենց քօղարկուած նեստորականութիւնը եւ խաբել պարզամիտ, անվարժ եւ անուսում մարդկանց: Այս միտքը տարբեր եղանակներով ներկայացուած է ժողովածուի զանազան թղթերում: Ահա դրանցից մի քանիսը.

1. «Կեղծաւորին ոմանք մի ասել դէմ եւ զնոյն բաժանեն յերկուս բնութիւնս՝ **խաբելով զպարզամիտս...**» *[Ա VI 4]:*

2. «Քանզի երկուս դէմս ասաց՝ հաղորդեալս ի միմեանց եւ զսուրբ Կոյսն՝ ոչ Աստուածածին, այլ՝ Քրիստոսածին՝ խորամանկեալ **գողանալ զպարզամիտս եւ զանուսումունս...**» *[Ա IX 4]:*

3. «Ի դէպ ժամանակի տեսցուք զՆեստորին եւ զերկուց ասացողացն բնութիւնս՝ ընդ միմեանս դատելով, զի գիտասցես ամենեցունց

---

25 Բնագրային յղումներ կատարելիս մենք յղում ենք մեր կողմից արդէն հրատարակուած եւ այս հատորում վերահրատարակուող բնագրին, ուր իւրաքանչիւր գլուխ հռոմէական թուերով բաժանուած է պարբերութիւնների, իսկ իւրաքանչիւր նախադասութիւն համարակալուած է ըստ պարբերութիւնների:

նոցա զմի զգայուեալ հայհոյութիւն, թէպէտ հայթայթին սիղոբայիւքն ***գողանալ զթեթեւամիտսն եւ զանուսմունս*** *» [Ե V 8]:*

4. «Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ***ստայուդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ պարզամտաց*** *հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց» [Թ վերն.]:*

5. «Ոչ դանդաղին հոմանուանութիւն որդւոց երկուց ամենեքեան ի զանազան ժամանակս բուսեալք հերձուածք զՔրիստոսէ, ի ներքս մուծանեն եւ մի դէմն ստեղծաբանելով՝ ***գողանան զանվարժից միտսն*** *» [Ժ I 3]:*

6. «Տեսանե՞ս, զի երկու բնութիւնդ ասել տարբերս յետ միաւորութեանն ի Նեստորէ սերմանեցաւ, եւ որք այժմ, զնոյն ասելով, պատրուակաւ իմն այլազգաբար ***գողանան զմիտս անուսմանց*** *» [ԺԱ II 23]:*

7. «Զի թէպէտ եւ բազում անգամ հնարիւք խաբէութեան մի դէմն ասելով՝ ջանասցեն ***պատրել զդիւրահաւան անձինս****...» [ԺԱ VIII 16]:*

8. «Զի թէպէտ եւ ***խաբելով զպարզամիտս եւ զանուսմունս****...» [ԺԲ II 2]:*

ե) Հետեւեալ երկու տեղերում Սարկաւագը խօսում է մարմնաւորման խորհրդի անճառելիութեան մասին.

1. «Սակայն զի մարմին եղեւ անփոփոխելին եւ անայլայլելի<ն>, Նմա ասին ամենայնք Իւրոյ մարմնոյն կիրք, քանզի եթէ Ինքն մարմնացաւ, եւ Նորա է մարմինն անձնաւոր եւ բանական, Նորա են եւ կիրք մարմնոյն, այսինքն՝ Բանին Աստուծոյ մարմնացելոյ. ***դժուարատես է եւ նուրբ ամենեւին բանդ է, նաեւ անհաս ոչ միայն մարդկային մտաց, այլեւ անմարմին զաւրութեանց*** *» [Ա VIII 2]:*

*2. «****Եւ է իրս յոյժ դժուարատես եւ նուրբ, մանաւանդ թէ անճառելի եւ առանց քննութեան****, չարչարեալ ասել եւ անչարչարելի զնոյն եւ զերկոսեան առանց երկբայութեան, մի՛ յայսմիկ զմեզ բանբասիցէք, քանզի աստուածային է տեսչութեանս յեղանակ եւ ոչ մարդկան միայն, այլեւ իմանալի մաքուր բնութեանն վերնոցն բանականաց անհաս» [Է II 13]:*

զ) Զ եւ ԺԲ գլուխների հետեւեալ հատուածներում Քաղկեդոնը համեմատւում է ջրհեղեղի հետ:

1. «Եւ այսպէս ***ջրհեղեղն երկրորդ*** *ապականեաց զերկիր, եւ այլ ազգի հուրն եկեզ ոչ սակաւս քաղաքս եւ նուազս ազգս, այլ փոքր ինչ*

եւ զամենայն տիեզերս, թէպէտ եւ ապրեցան, որք էին գրեալ ի կեանս, ոմանք տապանակաւ եւ ոմանք ի լեառն փախստեամբ» [Զ I 17]:

*2. «Սակայն պահեցաւ նշխար **ի ջրհեղեղէն հաւատոյ**, յուսամ թերեւս յաճումն համազգի ժողովրդոց...» [ԺԱ X 10]:*

*է) **Տրամատել** հազուագիւտ բառը, որ Խոսրովիկ Թարգմանիչը ընդամէնը մէկ անգամ է գործածում, իսկ Սանահնեցին՝ ամենեւին ոչ, Սարկաւագը գործածում է հետեւեալ երկու տեղիներում՝ [Ա XI 12] եւ [Ը II 1]:*

ը) Դաւանական հանդուրժողականութեան մասին հետեւեալ արտայայտութիւնները վկայում են Դ եւ Ե գլուխների՝ մի հեղինակի կողմից գրուած լինելը:

*1. «Այլեւ սիրեմք եւ բաղձամք զմիաւորութիւն Հոգւոյ, **ողբամք դառնութեամբ լցեալք զլծակցութեանն բաժանումն**, արտասուաւք թացեալ լինիմք...» [Դ XVI 13]:*

*2. «Վասն զի **ողբամք դառնապէս զ'առ ի միմեանց վարատմանն պատճառս** եւ զվա<ր>ատումն եւ աղաւթեմք ջերմապէս զհաւաքումն...» [Ե VII 2]:*

թ) ԺԳ գլխի սկզբում ակնարկւում է Ա եւ ԺԴ գլուխների մասին:

*«**Ցառաջնում քան զայս զոր խնդրեցեր մատենի** ըստ կարողութեան արարի **ըստ բան բանին հաւատոյ, ըստ սրբոց հարցն աւանդութեան ժողովումն**: Բայց զի վասն չարափառացն դժնէութեան զվկայութիւն Սրբոց Գրոց, որ յաղագս խաչելութեանն փրկական Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի **հրամայեցեր** սակաւուք տալ առ ի յանդիմանութիւն անհանճարութեան նոցա, առաքեցի ձեզ համառաւտագոյն՝ **մերձ եղեալ եւ զհարցն ուղղափառաց**, որքան դիպողագոյն ժամուս եւ **ձեր խնդրոյ** էր բան: Բայց կարեւոր է նախ **զկարծեաց նոցա յայտնել դարձեալ զամբարշտութիւն**...» [ԺԳ I 1–3]:*

Նախ եւ առաջ Ա գլուխը ամենաամբողջական դաւանական գլուխն է, որը նուիրուած է ոչ թէ մէկ մասնաւոր խնդրի (անապականութիւն, բնութիւնների միութիւն, պատկերայարգութիւն եւ այլն), այլ Նիկիոյ հանգանակի կամ Հաւատոյ նշանակի հանգամանալից վերլուծութեանը՝ ըստ սուրբ հայրերի աւանդութեան. «Արդ, ըստ Աստուածաշունչ գրոց եւ ըստ հարցն աւանդութեան» [Ա I 1], «...զոր ի հարցն ընկալաւ Եկեղեցի» [Ա VII 6], «Դարձեալ, սրբոց հարցն հետեւելով...» [Ա IX 1]:

Ըստ երեւոյթին Ա, ԺԳ եւ ԺԴ գլուխները գրուած են միեւնոյն անձնաւորութեան խնդրանքով, որին Սարկաւագ վարդապետը դիմում է «պատուականդ քաջ արանց» [Ա VIII 1] ձեւով:

Այսպիսով՝ դժուար չէ նկատել, որ վերը նշուած փաստերի համադրութեամբ բոլոր թղթերը փոխադարձ շաղկապւում են, եւ ակնյայտ է դառնում, որ նրանց հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է:

Դ. Ժողովածուի աղբիւրները եւ ստեղծման դրդապատճառը

Հայ Եկեղեցու պատմութիւնը մշտապէս ուղեկցուել է դաւանական մտքի իւրօրինակ վերելքով: Ներքին եւ արտաքին հերձուածները արտորոշելու եւ հոգեւոր գիտակցութիւնն ամրացնելու անհրաժեշտութիւնը եղել է Հայ Եկեղեցու տեւական հոգածութեան առարկան. ահա թէ ինչու դաւանական խնդիրները լայն արծարծում են գտել հայ մատենագրութեան մէջ: Հայ մատենագրութեան մէջ թերեւս չի կարելի ցոյց տալ մի երկ, որը այս կամ այն կերպով առնչութիւն չունենայ դաւանական խնդիրների հետ:

Ե–ԺԲ դդ. ընթացքում հայ հայրերի եւ վարդապետների կողմից ստեղծւում է հսկայածաւալ դաւանական գրականութիւն, որը, յենուած լինելով տիեզերական հայրերի՝ Աթանաս Մեծի, Յովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Աստուածաբանի, Կիւրեղ Աղեքսանդրացու եւ այլոց գրուածքների վրայ, ունի ինքնուրոյն դիմագիծ եւ զարգացման օրինաչափութիւններ: Հայ դաւանական մտքի զարգացումը մի իւրօրինակ եւ ըստ էութեան անկրկնելի բարձունքի հասաւ Ը դարում Խոսրովիկ Թարգմանչի եւ Յովհաննէս Օձնեցու աշխատանքների շնորհիւ: Իսկ 726 թ. Մանազկերտի ժողովը առանցքային իրադարձութիւն է ոչ միայն հայ դաւանական մտքի պատմութեան տեսանկիւնից: Սարկաւագի այս ժողովածուն, ինչպէս արդէն նշեցինք, զգալի ազդեցութիւններ է կրում Խոսրովիկից, իսկ Օձնեցու ազդեցութիւնների մասին կարելի է միայն խօսել ոչ ուղղակի իմաստով[26]*:*

Հայ դաւանական մտքի զարգացման որպէս երկրորդ կարեւոր փուլ պէտք է նկատել Ժ դ. երկրորդ կէսից մինչեւ ԺԲ դարի սկիզբ ընկած ժամանակաշրջանը, երբ դաւանական մտքի ասպարէզ են

---

26 Խոսրովիկ-Օձնեցի զուգահեռների մասին տես ԽԹ, էջ 86–98:

մտնում այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք են Անանիա Նարեկացին[27], Սամուէլ Կամրջաձորեցին, Անանիա Սանահնեցին, Պօղոս Տարօնացին[28], Յովհաննէս Սարկաւագը: Դաւանական մտքի այս աննախադէպ վերելքը պայմանաւորուած էր հայ-բիւզանդական եւ մասամբ հայ-վրացական դաւանական շփումների զգալի աշխուժացմամբ: Եթէ, օրինակ, Պօղոս Տարօնացու (որ Սարկաւագի ժամանակակիցն է) հակաճառական գրուածքները արդիւնք են հայ-բիւզանդական միջեկեղեցական փոխյարաբերութեան, ապա Սարկաւագի ժողովածուի ստեղծման դրդապատճառն ըստ երեւոյթին հայ-վրացական փոխյարաբերութիւններն են[29]: Պէտք է նաեւ նշել, որ փոխադարձ ազդեցութեան որեւէ հետք չի նշմարւում Պօղոս Տարօնացու եւ Յովհաննէս Սարկաւագի միջեւ:

Ինչպէս արդէն նշեցինք, Սարկաւագի դաւանական գրուածքները տարբեր ժամանակներում ստեղծուած եւ տարբեր անձանց հասցէագրուած թղթեր են: Օրինակ՝ եթէ Բ գլուխը գրուած է ոմն

---

27 *Անանիա Սանահնեցու անունով մեզ հասած «Հակաճառութեան» մեծ մասի հեղինակը Անանիա Նարեկացին է (տես Հ.* **Թամրազեան**, *Անանիա Նարեկացի, Երեւան, 1968, էջ 117–150): Յատկապէս այդ երկի առաջին գլուխը, որ աչքի է ընկնում առանձնայատուկ աստուածաբանական խորութեամբ, գրուած է Ա. Նարեկացու կողմից: Այն վերջից մեզ է հասել մի շարք գրչագրերով (վերջից մի փոքր հատուածի բացակայութեամբ): Տես, օրինակ, ՄՄ ձեռ. N 568, էջ 2ա–54ա:*

28 *Պօղոս Տարօնացու մասին սխալ կարծիք է տարածուած հայագիտութեան մէջ, թէ ծայրայեղ դաւանական հայեացքներ է ունեցել: Այս կարծիքի ձեւաւորման հիմնական պատճառը «Ընդդէմ Թէոփիստեայ» թուղթն է (համառօտ տարբերակ), որը, ըստ մեզ, անվաւեր գրուածք է՝ լի յետագայ ընդմիջարկութիւններով: Պօղոս Տարօնացու «Ընդդէմ Թէոփիստեայ» ընդարձակ դաւանաբանական գրուածքի եւ «Ընդդէմ հերձուածողաց» երկի նոյնիսկ հպանցիկ ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Տարօնացին հայ դաւանական մտքի կարեւորագոյն դէմքերից մէկն է:*

29 *Այս ենթադրութեան պատճառը նախ եւ առաջ Հաղբատի վանքի դիրքն է, ուր ապրել եւ ստեղծագործել է Յովհաննէս Սարկաւագը: Նա մեծ հռչակ է վայելել վրացական միջավայրում, որի մասին վկայում են նաեւ վրացական աղբիւրները: Պահպանուել է նաեւ մէկ թուղթ՝ հետեւեալ սկսուածքով՝ «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն...» (տես* **Ա. Աբրահամեան**, *Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 302), որը վկայում է Սարկաւագի բացառիկ հեղինակութեան մասին Վրաց Եկեղեցու շրջանակներում:*

Գագիկ կրօնաւորի (վերնագիր), իսկ Ե գլուխը՝ եղբայրների [Ե VII 8] խնդրանքով, ապա Ա, ԺԳ եւ ԺԴ գլուխները ուղղուած են ինչ-որ իշխանական հեղինակութեան, որին նա դիմում է «պատուականդ քաջ արանց» [Ա VIII 1] ձեւով, որը ոչ միայն խնդրել է [ԺԳ I 1] նրանից այդ գրութիւնները, այլ նաեւ հրամայել է [ԺԳ I 2] գրել: Թ եւ ԺԲ գլուխներում նա դիմում է ոմն սիրելիի [Թ I 2, ԺԲ I 4, VIII 1]: Իսկ [ԺԲ VIII 14]-ում ակնարկում է ԺԴ գլխի մասին[30]. «Որպէս յառաջնում քան զայս թղթին ցուցաք, ուր եւ զԿիւրղի զերկոտասան գլուխսն յաղագս այդորիկ գրեալ առ Նեստոր կարգեցաք», որտեղից ակնյայտ է դառնում, որ այդ սիրելի անձնաւորութիւնը նոյն իշխանական հեղինակութիւնն է:

Վարդան Արեւելցու պատմութեան մէջ կայ մի ուշագրաւ վկայակոչութիւն. «Էին եւ կանայք թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ ի Քոբայրն, Խորասու եւ Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագն զգուշական խրատս»[31]. այն կարող է որոշ լոյս սփռել Սարկաւագի հաղորդակցութեան շրջանակների վրայ: Սակայն մեզ թւում է, որ այստեղ խօսքը աւելի նրա ներանձնական-խրատական գրուածքների[32] մասին է, քան դաւանական թղթերի:

Ինչ վերաբերում է ժողովածուի աղբիւրներին, ապա նրանց մէջ պէտք է առանձնացնել Տիմոթէոս Կուզի «Հակաճառութիւնը»[33] եւ «Կնիք հաւատոյ»[34] ժողովածուն, որոնցից հիմնականում օգտւում է Սարկաւագը մէջբերումներ կատարելիս (յատկապէս ԺԳ եւ ԺԴ գլուխներում): Սարկաւագի վկայակոչութիւնները Եկեղեցու հայրե-

30 Այստեղից ենթադրում ենք, որ այդ թուղթը չի պահպանուել իր ամբողջական տեսքով, քանի որ Կիւրեղի տասներկու նզովքներից ընդամէնը մի քանիսն են առկայ ԺԴ գլխում:

31 «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Ս. Ղազար, 1862, էջ 122

32 Տես **Գրիգոր սարկաւագ (այժմ Տրդատ քահանայ) Ուզունեան**, Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագիտութիւնը եւ խրատական գործերը (աւարտաճառ), Ս. Էջմիածին, 1995:

33 Տես Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի, Ս. Էջմիածին, 1908: Ի դէպ, Սարկաւագի վկայակոչած քաղուածքներով լրացում-վերականգնում են Տիմոթէոսի «Հակաճառութեան» եղծուած մասերը:

34 Տես Կնիք Հաւատոյ, Ս. Էջմիածին, 1914:

ըից երբեմն խմբագրութիւններ են, որոնք որոշակի տարբերութիւններ ունեն սկզբնաղբիւրներից: Խոսրովիկի գալի ազդեցութիւնների կողքին Սանահնեցու «Հակաճառութեան» որեւէ ազդեցութիւն չյայտնուեց բացայայտել: Ամենայն հաւանականութեամբ, Սարկաւագը ծանօթ չի եղել այս Հակաճառութեանը[35]*:*

Ընդհանրապէս նշուած ժամանակաշրջանի դաւանական բնագրերի ուսումնասիրութիւնը շատ կարեւոր է հայ քրիստոսաբանական մտքի առանձնայատկութիւնների բացայայտման տեսանկիւնից, որովհետեւ անմիջապէս յաջորդում է Կիլիկեան դարաշրջանը, որն ընդհանուր առմամբ մեծ անկում էր հայ դաւանական մտքի համար, երբ փոխզիջումների փնտրտուքի յորձանուտում գրեթէ մոռացութեան էին մատնուած Մայրագոմեցու, Խոսրովիկի, Օձնեցու, Անանիա Նարեկացու, Սարկաւագի փառահեղ աւանդները:

Ե. Լեզուաոճական առանձնայատկութիւնները

Սարկաւագի ժողովածուի լեզուի առաջին գնահատականը խիստ միակողմանիօրէն տրուած է «Նոր հայկազեան բառգրքի» հեղինակների կողմից. «...է գործ խառնակ, զի ընդ հանճարաւոր բանիս խառնեալ է ի յետնոց ոճ իմաստակութեան եւ խստութեան Խոսրովկայ եւ Սանահնեցւոյն, եւ այն՝ խռկեալ անհեթեթ բարդութեամբք բառից...»[36]*: Հարկ է նկատել, որ որեւէ աստուածաբանական երկի լեզուաոճական առանձնայատկութիւնների մասին պատկերացում կազմելու համար նախ եւ առաջ պէտք է պարզել տուեալ երկի ժանրային բնոյթը եւ միայն տուեալ ժանրի ծիրի մէջ քննութեան առնել նրա ոճն ու լեզուն: Բարոյախրատական երկերի լեզուն խիստ տարբերւում է դաւանաբանական երկերի լեզուից, մեկնաբանական լեզուն այլ ոճ ունի, վարքագրականը՝ այլ... Նոյնիսկ միեւնոյն հեղինակի՝ տարբեր ժանրերի պատկանող գործերը կարող են այնպիսի լեզուաոճական*

35 *Այս հանգամանքը փոքր-ինչ տարօրինակ է, քանի որ Սարկաւագը քաջածանօթ է եղել Սանահնեցու ժառանգութեանը եւ անգամ խմբագրել դրանք (տես* **Յակոբ Քեոսէեան**, *Անանիա Սանահնեցու «Մատթէի մեկնութիւնը», Գանձասար Դ, Երեւան, 1993, էջ 216–217):*

36 *ՆԲՀԼ, էջ 18: Այստեղ նկատենք, որ ոչ պատահականօրէն նոյնպիսի որակման բախտին են արժանանում նաեւ Խոսրովիկի եւ Սանահնեցու հակաճառութիւնները, որոնք գրուած են Քաղկեդոնի ժողովի դէմ:*

տարբերութիւններ ունենալ, որ տարակուսելի թուայ նրանց՝ նոյն հեղինակի կողմից գրուած լինելը: Աւելի յստակ պատկերացնելու համար ասուածը՝ կարելի է համեմատել, օրինակ, Նարեկացու «Ողբերգութեան մատեանը» եւ «Երգ Երգոցի մեկնութիւնը» կամ Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» եւ «Ատենաբանութիւնը» կամ Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» եւ «Մատթէոսի մեկնութիւնը»: Եւ այստեղ տառացի համեմատութիւնները կարող են ոչ մի լոյս չսփռել նրանց հեղինակային պատկանելութեան խնդրի վրայ: Որեւէ աստուածաբանական երկ ստեղծելիս հեղինակը պէտք է հետեւէր ձեւաւորուած որոշակի ժանրային եզրերի եւ ոճի՝ հարազատ մնալու Եկեղեցու աստուածաբանական մտքի սրբազան աւանդութեանը:

Սարկաւագի այս երկը, լինելով դաւանական թղթերի ժողովածու, բնականաբար ունի ակնառու լեզուական եւ եզրաբանական ընդհանրութիւններ դաւանական բնոյթի երկերի հետ: Սակայն մեր խնդիրն այստեղ ոչ թէ այդ ընդհանրութիւնների քննութիւնն է (այս մասին կը խօսենք աստուածաբանական վերլուծութիւնների մէջ), այլ յատկապէս որոշ լեզուական առանձնայատկութիւնների վերհանումը:

Ինչպէս արդէն նշուեց, այս թղթերը գրուել են տարբեր ժամանակներում եւ տարբեր պատճառներով, ուստիեւ չունեն միօրինակ լեզու եւ ոճ: Թղթերին բնորոշ են լեզուական խրթնութիւններ, որոնք առաւել ակնառու են յատկապէս «Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն պատկերաց դարձեալ» եւ «Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն» վերտառութիւններով թղթերում: Սարկաւագը յաճախ վկայակոչում է Սուրբ Գիրքը եւ կատարում համեմատութիւններ նիւթական աշխարհի օրինակների հետ՝ դիմում այսպէս կոչուած բնախաւսութեան *(յատկապէս Ը գլխում): Երբեմն Սարկաւագի լեզուի դաւանական կուռ կերտուածքի մէջ յուզական տարր է յայտնւում, երբ նա եղբայրական սիրով եւ մեծ հանդուրժողականութեամբ խօսում է Հայ Եկեղեցու ընդդիմախօսների մասին [տես Դ XVI 13–14, Դ XVII 3–7, Ե VII 2–8, ԺԱ I 1–4]: Մերթընդմերթ հանդիպում են գեղեցիկ եւ բարձրաոճ արտայայտութիւններ, որոնք առանձնայատուկ երանգ են հաղորդում լեզուին, օրինակ՝ «զճառս լուսոյ ստուերացուցանեն խաւարաւ» [Բ IX 1], «յանտեղիսն ճարտարագոյնք եւ հանճարեղք յանբանութիւն» [Գ I 1], «արուեստաւոր ճոռոմաբանութեամբ» [Դ III 6], «յամենազան եւ ի բիւրապատիկ ձիրս» [Դ XVI 7], «ճարտարեն բանիւք պակասեալք*

յարդեանցն ազնուականութենէ» [Ժ I 1], «ախորժելով զհոգեւոր թովչութեան գաձայնս եւ զիմաստուն դեղատուութիւնն» [ԺԱ I 3]:

Սարկաւագի լեզուի բնորոշիչ առանձնայատկութիւններից է նաեւ նախդիրների բարդութիւններ գործածելը, օրինակ՝ **ընդ առ** *[Դ V 1],* **զ'ի** *[Ե III 5, Ե VIII 12, Ե X 7],* **զ'առ** *[Ե VII 2, Թ II 7, Ժ I 2],* **զ'ըստ** *[Ե VIII 12, ԺԱ IX 6],* **զ'ընդ** *[Է II 1],* **յ'առ** *[ԺԲ I 24],* **առ եւ զ...** *[Դ VII 12],* **զ'առ ի** *[Ը II 1]: Առհասարակ նախդիրների բարդութիւնների խնդիրը գրաբարում լուրջ ուսումնասիրութեան կարիք է զգում:*

Սարկաւագի կողմից գործածւում են նաեւ որոշ բառեր, որոնք չկան «Նոր հայկազեան բառգրքում». օրինակ՝ **սկզբնահաւք** *[Դ XIV 2],* **բացասահմանեմ** *[Դ VI 9],* **նախահաւաք** *[Թ I 2]:*

Վերջապէս հարկ է անդրադառնալ մեզ հասած բնագրի խմբագրութեան աստիճանին, այսինքն՝ պարզել, թէ Երզնկացու ժողովածուով պահպանուած բնագիրը որքանով է հարազատ Սարկաւագի ինքնագրին: ՄՄ N 777 (ԺԲ դ.) գրչագրով մեզ է հասել մի հատուած «Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ գմիս վարկանին եւ զանձինս ոչ արգելուն» թղթից (1ա–51բ)՝ երկաթագիր գրչութեամբ, որը, ըստ գրչի յիշատակարանի, ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից: Ահա այդ մեծարժէք յիշատակարանը. «Այս բանք քերդողականք՝ ասացեալ մեծի պուետիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերահռչակ ուխտին Հաղբատ, գտի ես՝ նուաստ ոմն ի մանկունս Եկեղեցւոյ: Արդ, մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց եւ յարուեստից: Զի եւ մեք ոչ իշխեցաք յաւելուլ եւ պակասեցուցանել զոր ինքնին իւրով ձեռամբն գրեալ էր, եւ ըստ այսմ աւրինակի էր կտակն, յորում էր սա՝ սկիզբն եւ կատարածն եղծեալ: Եթէ գտցես ուրեք զբովանդակն, գրեա՛: Եւ զմեզ յիշեա՛ ի Տէր»:

Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Երզնկացու ժողովածուով աւանդուած բնագիրը տեղ-տեղ զգալի լեզուական (ո՛չ իմաստային) խմբագրութիւններ է կրել, որի պատճառը կա՛մ ձեռքի տակ եղած ընդօրինակութիւնների թերութիւններն են եղել, կա՛մ այդ ընդօրինակութիւններն արդէն իսկ փոփոխութիւններ էին կրել: Համեմատութեան արդիւնքներն անշուշտ շատ կարեւոր են բնագրի վերականգնման խնդրում, եւ մենք նկատի ենք ունեցել դրանք մեր պատրաստած բնագրի մէջ խմբագրական միջամտութիւններ կատարելիս:

Զ. Յովհաննէս Սարկաւագի դաւանական հայեացքները

Սարկաւագի աստուածաբանական հայեացքների մասին լիակատար պատկերացում կազմելու համար անշուշտ պէտք է նկատի ունենալ ոչ միայն այս ժողովածուն, այլ նաեւ նրա աղօթքները եւ բարոյախրատական երկերը[37]*: Սակայն այստեղ մենք կը սահմանափակուենք Սարկաւագի դաւանական հայեացքների դիտարկմամբ: Ուստի այս ժողովածուում արծարծուած* ծիսական աստուածաբանութեան[38] *մի շարք կարեւոր հարցերի քննութիւնը թողնում ենք ապագային: Այս խնդիրներին մասամբ անդրադարձել է Յակոբ Քեոսէեանն իր «Յովհաննէս Սարկաւագի «Վասն պատկերաց» եւ «Վասն մասանց պատուոյ» աշխատութիւնները» յօդուածում*[39]*:*

Սարկաւագի ժողովածուն սկսւում է երրորդաբանական խնդիրների ամփոփ ներկայացումով՝ Սուրբ Երրորդութեան աստուածաբանութեան այն բոլոր հիմնարար սկզբունքների, որոնք արդէն բիւրեղացել էին եկեղեցական վարդապետութեան մէջ:

«Մի բնութիւն եւ երեք Անձեր» (μία οὐσία, τρεῖς ὑποστάσεις) *կապադովկյան եզրակերպումը դիտւում է ներաստուածային եւ տնօրի-*

---

37 *Սարկաւագի աղօթքների մի մասը լոյս է տեսել «Սոփերք հայկականք» շարքով (ԺԷ, 1854): Մէկ ճառ հրատարակուել է «Սոփերք հայկականք» շարքով՝ «Յովհաննու Սարկաւագ վարդապետի Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին» (Գ, 1853), մէկ ճառ էլ հրատարակել է Աշոտ Աբրահամեանը՝ «Յովհաննու քահանայի Յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախաւսութեամբ» (տես «Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը», Երեւան, 1956, էջ 306–315): Վերջինիս վաւերականութեան հարցը կասկածի տակ է առել Ս. Արեւշատեանը (տես «Բանբեր Մատենադարանի», 1974, հ. 11): «Գանձասար» հանդէսի Զ հատորում լոյս են տեսել մի քանի բարոյախրատական գործերի թարգմանութիւններ, որոնք կատարուել են Տ. Տրդատ քահանայ Ուզունեանի պատրաստած բնագրերից (տես «Յովհաննէս Սարկաւագ վարդապետի մատենագիտութիւնը եւ խրատական գործերը» (աւարտաճառ), Ս. Էջմիածին, 1995):*

38 *Ծիսական աստուածաբանութեամբ (liturgical theology) այստեղ նկատի ունենք ոչ միայն եկեղեցական ծէսի եւ տօների հետ առնչուած աստուածաբանական հարցերը, այլ նաեւ նշանական աստուածաբանութիւնը (symbolic theology) այնքանով, որքանով խօսքը վերաբերում է եկեղեցական ծէսի եւ պաշտամունքի նշաններին կամ խորհրդանշաններին (օրինակ՝ պատկերներ, ս. խաչ եւ այլն):*

39 *«Պատմա-բանասիրական հանդէս», 1979, N 4, էջ 127–134*

նական մակարդակներում: Ներաստուածային խորհրդական կարգը բնորոշւում է համագոյութիւն (ὁμοούσια) կարեւոր եզրով, որը աստուածաբանական կիրառութեան մէջ մտաւ Նիկիոյ Ա տիեզերական ժողովով (325 թ.) եւ նշանաւորեց քրիստոնէութեան յաղթանակը հրէական[40] *եւ միջին-պլատոնական*[41] *մտքի վրայ:*

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին զանազանւում են անձերով եւ նոյնանում բնութեամբ՝ **համագոյակից** *են միմեանց: Երրորդութեան Անձերի բնութենական նոյնութիւնը արտայայտելու համար Սարկաւագը գործածում է նաեւ այլ եզրեր՝* **բնութենակից**, **էակից**, **փառակից**, **երկրպագակից**, **տիրակից**, **համազօր**, **նոյնապատիւ**, **հաւասարապատիւ**, **համապատիւ**, **համաբուն**, **նոյնագոյ**: *Համագոյութիւնը բացառում է որեւէ ժամանակային պատճառականութիւն Երրորդութեան Անձերի միջեւ: Հայրը անժամանակ պատճառն է Որդու՝ ծննդեամբ, եւ Սուրբ Հոգու՝ բխմամբ: Ծնունդը եւ բխումը ներբնութենական ակտեր են եւ ոչ թէ աստուածային բնութիւնից դուրս ժամանակային առաջացումներ (ընդդէմ Արիոսի) կամ միեւնոյն Աստուածային Անձի տարակերպութիւններ (ընդդէմ Սաբելիոսի):*

«Ոչ երեք աստուածներ՝ բնութեամբ օտար միմեանցից, եւ ոչ մէկ անձ՝ տկար առատութեան մէջ, այլ մի Աստուած՝ ըստ բնութեան նոյնութեան, եւ երեք Անձեր՝ ըստ ամէնառատութեան եւ անճառելի խորհրդի: Դարձեալ՝ ոչ երեք անսկիզբներ, քանզի միայն Հայրն է անսկիզբը՝ ոչ մէկից չծնուած, իսկ Որդին Նրա ծնունդն է, եւ Սուրբ Հոգին ելնում է Նրանից, բայց ըստ ժամանակի՝ անսկիզբ են Հօր պէս, եւ Երեքը սկիզբ չեն Միմեանց համար: Քանզի Հայրն է սկիզբը Որդու՝ ծննդեամբ, եւ Հոգու՝ ելողութեամբ, ոչ մէկ անձ՝ երեք լինելով, եւ ոչ երեք աստուած՝ մի բնութեամբ, ուստի եւ անբաժանելի ենք խոստովանում: Եւ պէտք չէ Սաբելիոսի պէս կարծել մէկ անձ՝ երեք անուններով, եւ ոչ Արիոսի պէս՝ երեք տարբեր բնութիւններ, այլ մի բնութիւն եւ երեք Անձեր»[42] *[Ա I 2–5]:*

---

40 *Մեսրոպ քահանայ Արամեան, Երեք տիեզերական ժողովների դաւանութիւնը, «Գանձասար» Ա, Երեւան, 1992, էջ 110*

41 *Տես* Aloys Grillmeier, *The Council of Chalcedon — An Analysis of a Conflict*. “Five Vienna Consultations”, ed. by Pro Oriente, Vienna, 1993.

42 *Այս եւ յետագայ բոլոր բնագրային մէջբերումները ներկայացնում ենք թարգմանաբար՝ շարադրանքը աւելի դիւրահաս դարձնելու համար:*

«Արդ՝ ոչ մի կերպ չեն զանազանւում Ծնողի համագոյ Ծնունդը, բայց միայն, որ Հայր չէ եւ չի ասւում եւ չի գաւում Սուրբ Հոգուց, պատուակից է եւ կարողակից... Որի սկիզբը ոչ թէ ժամանակ է, այլ Իր Հայրը, Նրա հետ է անսկզբնաբար եւ Նրա մէջ կատարեալ ամէն ինչում՝ որպէս Հօր նոյն զօրութիւն եւ իմաստութիւն, անվրէպ պատկեր, փառքի ծագում եւ Նրա էութեան նկարագիր, պատկեր, Միածին Որդի, Բան, Խորհուրդ... Եւ քանզի անբաժանելի է Հօրից, ասում է. «Ես Հօր մէջ եմ, եւ Հայրը՝ Իմ»[43] *եւ դարձեալ՝ Իր սուրբ եւ փրկական աղօթքում ասում է. «Դու, Հա՛յր, Իմ մէջ ես, եւ Ես՝ Քո»*[44]*...Բայց դու, երբ լսում ես այս, մի՛ կարծիր, թէ Մէկը Միւսի մէջ է ընկղմւում, որ անմարմին եւ անճառելի էութիւն է եւ կատարելապէս առանց թանձրութեան եւ նիւթի, քանզի երկրպագելի եւ ամենասուրբ Երրորդութիւնը զանազանւում է անձերով եւ դէմքերով: Այլ ըստ բնութեան նոյնութեան եւ անվրէպ նմանութեան իմացանք, որ Հայրը Որդու մէջ է, եւ Որդին՝ Հօր...» [Ա 7–17]:*

Երրորդութեան Անձերը ունեն Իրենց ներյատուկ արարչագործական եւ տնօրինական նիստերը, որոնք աւելի բացայայտւում են քրիստոսաբանութեան եւ Սուրբ Հոգու աստուածաբանութեան մէջ: Սուրբ Հոգու աստուածաբանութեանն է յատկացուած Ա գլխի եզրափակիչ մասը: Սուրբգրային բազմաթիւ վկայակոչութիւններով հաստատում է Սուրբ Հոգու համագոյութիւնը Հօր եւ Որդու հետ: Ուշագրաւ է Սարկաւագի **ծաւալումն անճառելի** *արտայայտութիւնը Սուրբ Հոգու մասին [Ա XII 2], որ «կատարելապէս ունի Աստուածութեան էութիւնը եւ պատիւը, ուստի իշխանութեամբ գալով՝ յանդիմանեց աշխարհը մեղքի պատճառով» [Ա XIII 12]: Հոգեգալուստով սկսւում է Սուրբ Հոգու տնօրինական նախախնամութեան դարաշրջանը: Ով չի ընդունում Սուրբ Հոգուն, նա չի ընդունում Հօրը եւ Որդուն: Ուստի ճշմարիտ դաւանութեան եւ աստուածպաշտութեան հիմքը Սուրբ Հոգու ընդունելութիւնն է, որով մենք դառնում ենք Սուրբ Երրորդութեան տաճար: Որի համար Սուրբ Հոգու կենդանի ուսուցմամբ եւ մխիթարութեամբ պէտք է հեռանալ ամէն տեսակ աղանդաւորական եւ հերձուածողական ըմբռնումներից եւ կանգնել Բանի մարդեղութեամբ հաստատուած սրբազան աւանդութեան հիմքի վրայ [Ա XIII 1–XIV 6]:*

---

43 Յովհ. ԺԴ 11
44 Յովհ. ԺԷ 21

Բնականաբար, քրիստոսաբանութիւնը սոյն ժողովածուի կենտրոնական թեման է: Սարկաւագը հետեւողականօրէն բացայայտում է Հայ Եկեղեցու քրիստոսաբանական համակարգը՝ սուր քննադատութեան ենթարկելով Քաղկեդոնի ժողովը եւ նախընթաց հերետիկոսական-հերձուածողական շարժումները (ապողինարիզմ, Նեստորականութիւն, եւտիքէսականութիւն եւ այլն): Ժողովածուում առանձնայատուկ տեղ են գրաւում անապականութեան խնդիրները, որոնք մենք կը դիտարկենք առանձին գլխում: Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքները փրկաբանական ուղղորդուածութիւն ունեն: Բանն Աստուած մարդացաւ մեր մարդկային ընկած բնութիւնը փրկագործելու համար: Աստուած կատարելապէս մարդացաւ, այսինքն՝ միաւորուեց մարդկային բնութեան ամբողջականութեան հետ [Ա V 2, Ե VIII 5]: Եթէ Քրիստոսի մարդեղութիւնը կատարեալ կամ իրական չէ, ապա մեր փրկութիւնը իրական չէ. ահա թէ ինչու մերժելի են ապողինարիզմը եւ եւտիքէսականութիւնը. իւրաքանչիւր մարդաբանական թերացում կամ վերացարկում փլուզում է մեր փրկութեան իրականութիւնը (մարդաբանական մինիմալիզմ) [Ե VIII 1–2, Ե X 1–5]:

Հաւասարապէս պէտք է հեռու մնալ մարդաբանական չափազանցումներից եւ աւելորդ շեշտադրումներից, որոնցով գայթակղուած էր ողջ անտիոքեան դպրոցը՝ Թէոդորոս Մոպսուեստացուց եւ Դիոդորոս Տարսոնացուց մինչեւ Նեստոր: Սարկաւագը անընդհատ շեշտադրում է Քրիստոսի մէջ Աստուծոյ եւ մարդու գոյաբանական եւ էական (բնութենական) միութիւնը, առանց որի խախտւում է մեր փրկաբանական իդեալը [Ա V 1–4]:

Սարկաւագը յատկապէս զգուշացնում է քաղկեդոնական համակարգում քօղարկուած վտանգներից, որոնք, ըստ նրա, «ծածկուած են պարզամիտներից եւ անուսումներից»: Քաղկեդոնական համակարգում միանգամայն ակնյայտ է նոյն անտիոքեան թթխմորը, որը Նեստորականութեան անկման պատճառը դարձաւ: Անտիոքեան այս անլուծելի երկուութիւնը Նեստորը փորձեց յաղթահարել մխացութեան դէմք *(*πρόσωπον τῆς ἑνώσεος*) արհեստական եզրով, սակայն արդիւնքում Քրիստոսի մէջ սկսեց միայն աստուածացած մարդ տեսնել: Քաղկեդոնի հետեւորդները փորձում էին այս անլուծելի երկուութիւնը յաղթահարել հիպոսթասիսի միութեամբ, որն աւելի ճիշտ կը լինի անուանել հիպոսթատիկ սերտաճում, քանզի այդ համակարգում*

մարդկային բնութիւնն անանձ է եւ անձնաւորուած Բան-Աստուծոյ անձով: Աւելի ստոյգ այս համակարգը առաջադրուեց Քաղկեդոնի ժողովից շուրջ մէկ դար յետոյ Ղեւոնդիոս Բիւզանդացու կողմից եւ ընդհանրացաւ քաղկեդոնական վարդապետութեան մէջ: Այս արհեստական համակարգը սուր քննադատութեան ենթարկուեց Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Եւ երբ խօսւում է հակաքաղկեդոնական հակաճառութեան մասին, աւելի պէտք է նկատի ունենալ Ղեւոնդիոս Բիւզանդացու համակարգի մերժումը, քան թէ «մի բնութիւն» եւ «երկու բնութիւն» բանաձեւերի տառացի հակադրումը: Այս լուծումը, փաստօրէն, յիշեցնում է ապողինարեան-նեստորական մի սինթեզ:

Աստուծոյ եւ մարդու միութիւնը մեր հաւատքի եւ փրկութեան կիզակէտն է: Այն նախ եւ առաջ **խորհուրդ** *է՝* **անպատմելի բանի** *եւ* **անհասանելի մտաց** *[Ա V 4],* **դժուարատես եւ նուրբ** *[Ա VIII 2],* **վերագոյն մտաց եւ անճառելի բանի** *[Ա IX 2]: Երբ հաւատքի խորհուրդը վերածւում է մտքով ըմբռնելի մեխանիզմի, վտանգւում է մեր փրկութեան իսկութիւնը: Ուստի հաւատքի խորհրդական ճշմարտութիւնները պէտք է արտայայտել աւելի բացասումների, քան պնդումների միջոցով: Աստուծոյ եւ մարդու միութիւնը Սարկաւագը բնորոշում է* **անշփոթ**, **առանց խառնակութեան** *[Ա VI 1],* **անփոփոխ**, **առանց յեղման**, **առանց այլայլութեան** *[Ա V 3] կարեւոր եզրերով, այսինքն՝ Աստուծոյ մարդացման տնտեսութեան մէջ չկայ որեւէ փոխակերպութիւն: Միաժամանակ Քրիստոսի մէջ աստուածմարդկային միութիւնը ոչ թէ բնութիւնների* **յարակցութիւն** *[Է I 2] կամ* **շարայարութիւն** *[Ժ II 2] կամ* **վերաբերութիւն** *[Է I 9] է, այլ էական, գոյաբանական եւ բնութենական միութիւն, որի մէջ հնարաւոր չէ ներմուծել որեւէ բաժանում կամ լուծարում: «Բայց երբ մեզ վրայ առատապէս հեղեց մարդասիրութեան անբաւութիւնը մարդանալ կամենալու միջոցով Նա, Ով ճշմարիտ Աստուած է ճշմարիտ Աստծուց, բնութեան զանազանութիւնները միացան անփոխադրապէս եւ առանց լուծարման, որպէսզի այն, ինչ մարդկային բնութեամբ է, աստուածային խոստովանենք՝ ըստ միաւորութեան եւ նոյն [Իրեն]՝ Աստուած եւ մարդ միաժամանակ» [Ժ II 1]:*

Է. Անապականութեան[45] վարդապետութիւն

Ինչպէս արդէն նշեցինք, անապականութեան խնդիրներն ամենալայն արծարծումն են գտել սոյն ժողովածուում: Փաստօրէն այս ժողովածուն անապականութեան վարդապետութեանը նուիրուած մի հիմնարար եւ եզակի երկասիրութիւն է հայ դաւանական գրականութեան մէջ[46]: Պարզւում է, որ քրիստոսաբանութեան ներքին դինամիզմը կարելի է ընկալել միայն անապականութեան վարդապետութեան միջոցով, որը զարգացել է միայն Հայ Առաքելական Եկեղեցու դաւանական համակարգում: Ահա թէ ինչու հայ քրիստոսաբանական մտքի այս արգասիքը առանձնայատուկ կարեւորութիւն է ունի ուսումնասիրողների համար:

Անապականութեան վարդապետութիւնը արդիւնք է Եկեղեցու քրիստոսաբանական մտքի հետեւողական զարգացման: Եթէ մենք քրիստոսաբանութեանը մօտենում ենք փրկաբանական տեսանկիւնից, եթէ մենք խոստովանում ենք, որ կատարեալ Աստուած դարձաւ կատարեալ մարդ, որպէսզի փրկագործի եւ աստուածացնի մարդկային ընկած բնութիւնը, ապա Բան Աստուծոյ մարդեղութեան խորհուրդը դառնում է քրիստոսաբանութեան անխուսափելի մեկնակէտը: Եւ պատահական չէ, որ արիոսական հերձուածի յաղթահարումից յետոյ Եկեղեցու քրիստոսաբանական միտքն, ըստ էութեան, սեւեռուած է եղել մարդաբանական խնդիրների վրայ, այսինքն՝ ինչպէս պէտք է դաւանել Բան Աստուծոյ ճշմարիտ մարդեղութեան խորհուրդը: Ի՞նչ է նշանակում, որ Հօր միածին Որդին՝ նախայաւիտեան Բանը, դարձաւ ճշմարիտ եւ կատարեալ մարդ՝ ամէն ինչում նման մեզ (այսինքն՝ համագոյակից է մեզ ըստ մարդեղութեան)՝ բացի մեղքից: Ինչպէ՞ս է Նա անցնում այսպէս կոչուած անմեղ կրքերի միջով (քուն, ծարաւ, յոգնութիւն...), որոնք մարդկային բնութիւն են ներմուծուել մեղքի անկման հետեւանքով: Ինչպիսի՞ն է մարդկային բնութեան ազատութեան եւ ներգործականութեան աստիճանը Աստուած-մարդ փրկական տնտեսութեան մէջ: Ահա այս եւ մեր փրկաբանական իդեալի հետ աղերսուած

---

45 *Անապականութեան վարդապետութեան մասին աւելի մանրամասն տես* **Մեսրոպ քահանայ Արամեան**, *Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար» Բ, Երեւան, 1992, էջ 106–121:*

46 *Ինչ որ իմաստով՝ նաեւ առհասարակ դաւանական գրականութեան մէջ:*

մի շարք այլ կարեւոր հարցերի է պատասխանում անապականութեան վարդապետութիւնը:

Անապականութեան խնդիրը ծագել է Սեւերոս Անտիոքացու եւ Յուլիանոս Հալիկառնասցու նշանաւոր հակաճառութիւնից Տիրոջ մարմնի անապականութեան շուրջ[47]*: Հարցն այն մասին էր, թէ որքանով են Քրիստոսին բնորոշ մարդկային կրքերը (*ἀνθρώπινα πάθη*), եթէ խոստովանում ենք, որ Քրիստոս ամէն ինչով նման է մեզ՝ բացի մեղքից: Ուրեմն՝ Քրիստոսի մարմնի կիրընդունակութեան մասին խօսելիս պէտք է նկատի ունենալ բացառապէս անմեղ կրքերը (*πάθη ἀδίαβλητα*)՝ տխրութիւն, երկիւղ, սով, ծարաւ եւ այլն, որոնք դիտարկւում են որպէս մեղքի անկման հետեւանքային վիճակներ:*

Սեւերոսը պնդում էր, որ Քրիստոս բոլոր մարմնական կրքերը կրում է հարկադրաբար (ակամայ, ստիպուած, անհրաժեշտօրէն)՝ սովորական մարդկանց պէս: Սեւերոսի «ապականութեան» ուսմունքը կտրականապէս մերժուել է Հայ Եկեղեցու կողմից: Սակայն Տիրոջ մարմնի անապականութեան վարդապետութիւնը վերոյիշեալ հակաճառութեամբ ծագած մի նորաստեղծ երեւոյթ չէր աստուածաբանական մտքի պատմութեան մէջ, այլ Եկեղեցու տիեզերական հայրերի գրուածքներում բիւրեղացած մի դաւանական ուսմունք էր: Հայ հայրերը եւ վարդապետները սոսկ շարունակել եւ զարգացրել են այն, ինչ աւանդուած է եղել ս. Աթանաս Մեծի, ս. Եփրեմ Ասորու, ս. Բարսեղ Կեսարացու, ս. Գրիգոր Աստուածաբանի եւ միւս մեծ ուսուցիչների կողմից: Սրա լաւագոյն վկայութիւններից մէկը, թերեւս, «Կնիք հաւատոյ» նշանաւոր ժողովածուն է, որի զգալի մասը նուիրուած է Տիրոջ մարմնի կիրընդունակութեան եւ անապականութեան խնդիրներին[48]*: Զ–Ը դդ. սուր պայքար է ծաւալւում «ապականութեան» վարդապետութեան հետեւորդների դէմ, որը եզրափակւում է 726 թ. Մանազկերտի նշանաւոր ժողովով: Այդ ժողովը*

---

*47 Պէտք է նկատի ունենալ, որ «ապականութիւն» (*φθορά*) եւ «անապականութիւն» (*ἀφθαρσία*) եզրերը այստեղ գործածւում են ոչ թէ քայքայման կամ ոչ քայքայման իմաստով, այլ Քրիստոսի մարդկային կիրընդունակութեան կամաւոր կամ ակամայ լինելու իմաստով:*

48 Տես «Կնիք հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, Բան Գ–Թ, էջ 243–371:

եւ նրա ընդունած նզովքները բացառիկ դեր են խաղացել քրիստոսաբանական մտքի պատմութեան մէջ[49]*:*

Մեր Եկեղեցու հայրերը որքան որ խորշում էին Սեւերոսի «ապականութեան» վարդապետութիւնից, նոյնքան էլ զգուշանում էին Յուլիանոսի անապականութեան մէջ քօղարկուած երեւութականութիւնից (դոկետիզմ): Սակայն հայրերը վիճում էին ոչ այնքան Յուլիանոսի, որքան նրա ծայրայեղ հետեւորդների հետ: Ցամենայն դէպս, Յուլիանոսի գրուածքներում[50] *չկայայն կոպիտ երեւութականութիւնը, որի մասին յաճախ խօսում էին նրա հակառակորդները՝ մեղադրելով նրան այն բանի մէջ, որ Տիրոջ մարմնի անապականութեան իր ուսմունքով նա փրկութեան խորհուրդը վերածում է ինչ-որ «երեւակայութեան եւ անրջական պատրանքի» (այստեղից էլ՝ «երեւութականներ» անունը)*[51]*:*

Տիրոջ մարմնի անապականութեան վարդապետութիւնը, ինչպէս արդէն ասուեց, առանձնայատուկ զարգացում է ապրել եւ բիւրեղացել է Հայ Եկեղեցու դաւանական համակարգում, որը զերծ է թէ՛ սեւերոսեան, թէ՛ յուլիանոսեան ծայրայեղութիւններից: Մեր հայրերը Տիրոջ մարդեղութեան որեւէ դրուագի մօտեցել են միմիայն փրկաբանական տեսանկիւնից: Քրիստոսի երկրաւոր կեանքը փրկական տնտեսութիւն է եւ զերծ է պատահականութիւններից: Հետեւաբար Քրիստոսի մարդկային կեանքի ամէն մի պահ, սկսած սուրբ Յղութիւնից մինչեւ հրաշափառ Յարութիւն, ունի բարձրագոյն եւ փրկաբանական նշանակութիւն:

---

49 *Տես* **Մեսրոպ քահանայ Արամեան**, *Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար» Բ, էջ 86–122: Այս խնդիրներին է նաեւ անդրադարձել Գարեգին Յովսէփեանը (տես ԽԹ, նախաբան): Շատ արժէքաւոր, բայց խիստ միակողմանի եւ եզրայանգումների մէջ միանգամայն անընդունելի է Երուանդ Տէր-Մինասեանի «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնը ասորւոց Եկեղեցիներու հետ» ուսումնասիրութիւնը (Ս. Էջմիածին, 1908):*

50 *Հիմնական աշխատութիւնն այս մասին՝ R. Draguet, Julien d'Halicarnasse et sa controverse avec Sévère d'Antioche sur l'incorruptibilité du corps du Christ, Louvain, 1924:*

51 *Յուլիանոսի դաւանական հայեացքների համառօտ շարադրանքը տես* **Մեսրոպ քահանայ Արամեան**, *Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ–Ը դդ.), «Գանձասար» Բ, էջ 110–112:*

Ինչպէս արդէն նշուեց, Քրիստոսին բնորոշ են այսպէս կոչուած անմեղ *կրքերը, որոնք Յովհաննէս Սարկաւագը անուանում է նաեւ* անպարսաւելի *[Ա. VIII 8],* անբստգտանելի *[Է. II 9],* անանդոսնելի *[ԺԱ. III 12] կրքեր: Այս կրքերը, զերծ լինելով մեղքից, բնաւորուել են մարդկային բնութեան մէջ մեղքի անկումից յետոյ, այսինքն՝ յատուկ են մահկանացու եւ չարչարական մարդկային բնութեանը, ոչ թէ ադամական նախաստեղծ բնութեանը: Ուստի Սարկաւագը կոչում է դրանք նաեւ միաժամանակ ե՛ւ* բնաւորական *[ԺԲ I 6], ե՛ւ* տրտմական *[Է. II 3] կրքեր: Քրիստոս անցնում է մարդկային կրքերի միջով* կամաւորապէս *եւ ոչ ի հարկէ, առանց բնութեան բռնադատուածութեան [Ա. VII 1–2, Ե I 11], հետեւաբար այդ կրքերը* կամաւոր *են [Ա. VII 5]: Աստուած կատարելապէս մարդացաւ, այսինքն՝ վերցրեց մարդկային բնութեան ամբողջականութիւնը մեր փրկութեան համար. ուստի Տիրոջ մարդկային կրքերը* փրկական *են [ԺԲ I 5], ինչպէս նաեւ՝* տնօրինական *[Ա. XI 10] կամ* տնտեսական *[ԺԱ. II 12]:*

Քրիստոս փրկական տնօրինութեամբ կրում է բոլոր մարդկային տկարութիւնները, ազատօրէն անցնում մարդկային կրքերի միջով՝ դատապարտելով դրանց մէջ մեղքի թթխմորը եւ ազատագրելով մեզ մեղքի դատապարտութիւնից: Հետեւաբար տնօրինական գործեր են ոչ միայն աստուածավայելուչ հրաշքները, այլ նաեւ մարդավայելուչ տկարութիւնները [Ա. VII 7–25]:

«...ինչպէս ծնուեց առանց բնութեան հարկադրուածութեան եւ բռնադատութեան, այնպէս էլ կրեց մարդկային կրքերը առանց մեղքի: Կամաւոր էր ծնունդը, կամաւոր էին նաեւ բոլոր կրքերը. ոչ ոք թող չհամարձակուի կամաւոր կրքերը ապականութիւն կոչել, քանզի ամէն ինչը տնօրինաբար էր կրում մեր փրկութեան համար, կարող էր չկրել, քանզի Աստուած էր եւ հանդերձ մարմնով, բայց [կրում էր], քանի որ առաչօք չէր մարդեղութիւնը, ինչպէս թուաց մանիքեցիներին եւ Եւտիքէս վանահօրը: Կրել հաճեց, հէնց դրա համար էլ մարդ եղաւ, որ ի սկզբանէ Աստուած էր, որպէսզի կրի մերը մեզ համար՝ մեզ հետ լինելով: «Աստուած առաքեց Իր Որդուն մեղքի մարմնի նմանութեամբ եւ մեղքի պատճառով եւ դատապարտեց մեղքը մարմնի մէջ»[52],— ասում է առաքեալը: Արդ՝ ինչպէս դատապարտեց մեղքը չմեղանչելով, [այնպէս] էլ դատապարտեց ապականութիւնը՝ չկրելով այն, եւ ինչպէս

52 *Հռոմ. Ը 3*

փրկագնեց մեզ օրէնքի անէծքից՝ մեզ համար անէծքի մէջ մտնելով, որ հեռու էր անէծքից եւ բաշխիչ էր օրհնութեան, [այնպէս էլ] կամեցաւ փրկել մեզ ապականութիւնից դէպի յոյս՝ Իր անապականութիւնը որպէս առհաւատչեայ տալով մեզ» [ԺԲ III 11–15]:

Սարկաւագը սոսկ չի համակարգում իրեն հասած դաւանական գրուածքները[53] *անապականութեան խնդրի շուրջ, այլ վերջինս էապէս մի նոր աստիճանի վրայ է բարձրացնում՝ բացայայտելով մի շարք սկզբունքային ըմբռնումներ, որոնք չկան իր նախորդների մօտ: Տիրոջ մարմնի անապականութեան ըմբռնումը Սարկաւագի քրիստոսաբանական հայեացքներում վերածւում է մի համընդհանուր սկզբունքի եւ փորձադրոյթի, որով կարելի է ներկայացնել Բանի մարդեղութեան ամենաամբողջական պատկերը եւ արտորոշել ամէն տեսակի հերձուածողական տեսութիւն: Ուշագրաւ է, որ Սարկաւագը անապականութեան վարդապետութեան տեսանկիւնից քննութեան է առնում այնպիսի հերձուածողական ուսմունքներ, որոնք աստուածաբանական մտքի պատմութեան մէջ ծագել են շատ աւելի վաղ, քան անապականութեան խնդիրը: Այսպէս, օրինակ, նա մերժում է ապողինարիզմը ոչ այն դասական տեսանկիւնից, որ առաջադրուել է ս. Բարսեղ Կեսարացու «Ընդդէմ Ապողինարի» հանրայայտ երկով եւ ընդհանրացել եկեղեցական աստուածաբանութեան մէջ: Ըստ Սարկաւագի՝ եթէ Քրիստոսի մէջ մարդկային բնութիւնը բանական հոգի չունի, ինչպէս պնդում էր Ապողինարը, ապա դրանով չարչարականութիւն եւ կիրընդունակութիւն են ներմուծւում աստուածային անչարչար եւ անկրակա բնութեան մէջ, քանի որ մարդու մէջ բանական հոգին հաւասարապէս հաղորդակից է մարմնական կրքերին: Մէջբերենք երկու յատկանշական հատուած այս մասին:*

«Քանզի ոչ թէ ըստ Ապողինարի՝ Բանը անանձ մարմին միաւորեց Իրեն, քանզի այդպիսի խոստովանութիւնը չարչարանքների տակ է մտցնում անչարչարելի բնութիւնը, այլ՝ բանական անձ ունեցող մարմին, որպէսզի բանական անձի միջոցով զգայակից լինի մարմնի չարչարանքներին, ոչ թէ Բանը ըստ Իր [բնութեան], այլ Իր բանական

53 *Այստեղ պէտք է յատկապէս նկատի ունենալ Խոսրովիկ Թարգմանչի «Հակաճառութիւնը», որը ամենաակնառու ազդեցութիւնն է թողել Սարկաւագի դաւանական հայեացքների ձեւաւորման վրայ:*

անձով մարմնի միջոցով ստանայ: Ինչպէ՞ս է Ինքը չարչարուում. որը համառօտելով ասում ենք, թէ նոյն Ինքը Բանն Աստուած՝ Անչարչարելին, ճշմարտապէս չարչարուեց Իր բանական անձ ունեցող մարմնով, եւ Անմահը մեռաւ Իր մարմնով, քանզի Աստուած էր ճշմարիտ, որ կրում էր ամէն ինչը մեր բնութեամբ, որպէսզի ազատի մեզ մեղքի ծառայութիւնից եւ ըստ չնորհի Իր Հօր որդիներ դարձնի եւ անուանի Իր եղբայրներ...» [Ա VIII 5–6]:

«...անանձ մարմինը ինչպէ՞ս կարող է զգալ չարչարանքները: Եւ եթէ Բանը անանձ մարմին ունէր, ինչպէս թւում է Ապողինարին, ապա Բանը, որ ամենեւին դուրս է չարչարանքներից, ընդունում էր ցաւերի զգայութիւնը, որը քաւ լիցի կարծել անգամ ճշմարտութեանը ծանօթութիւն ունեցողներին: Բայց երբ ասում ենք Բանը անձնաւոր մարմին ունի, ինչպէս եւ է, այսպէս չի իմացւում, քանզի թէպէտեւ մարդկային անձը անհաղորդ է մարմնական չարչարանքներին եւ առանձին է ինքնին, սակայն մարմնի մէջ լինելով՝ զգայակից է լինում բոլոր բնաւորական կրքերին եւ արտաքին պատահմունքներին, ուստի բոլորը նաեւ կոչւում են անձնաւորականներ: Այլեւ անձնական են կոչւում ախտակրութեան որոշ մասեր՝ ցասումը, ցանկութիւնը... Ուստի այս ամէնից հասկանում ենք, որ հոգին զգայակից է մարմնի բոլոր բնաւորական եւ արտաքին ախտերին, եւ ահա թէ ինչու խոստովանում ենք, որ Բանն Աստուած ոչ միայն մարմին, այլեւ մտաւոր անձ առաւ Աստուածածին Կոյսից, այսինքն՝ մարդ եղաւ՝ ըստ Գրքի» [Ե VIII 1–5]:

Այսպիսով՝ Քրիստոսի մարմինը չարչարելի է եւ մահկանացու, սակայն ո՛չ ապականացու (ապականութիւնն այստեղ դիտւում է որպէս մեղքին (մեղանչման) զուգակցուած մարմնական վիճակ, որը հակաբնական է, քայքայում է բնութիւնը): Բանն Աստուած ոչ թէ առաւ Ադամի նախաստեղծ բնութիւնը, այլ մեր ապականացու բնութիւնը՝ ապականակիր մարմինը եւ մեղանչական հոգին ու միտքը, եւ, միաւորելով Իրեն, զատեց մեղքը հոգուց եւ ապականութիւնը՝ մարմնից: Տիրոջ մարմնի աճն ու զարգացումը վկայում են ոչ թէ ապականացու լինելը, այլ՝ ընդհակառակը, քանզի սրանք կատարելագործում են մարմնի զգայական համակարգը, իսկ ապականութիւնը՝ քայքայում: Տէրը կրեց կամաւոր *եւ* անանդոսնելի *կրքերը եւ ոչ թէ* ակամաները *եւ* անդոսնելիները, *որոնք հարկադիր են, ծառայական եւ մեղանչական: Սրանով չեն թուլանում Տիրոջ մարդեղութեան կատարելութիւնը եւ*

համագոյութիւնը մեզ հետ, քանզի բանական մարդը կամաւորներով եւ անմեղութեամբ է մարդ: Այն, ինչ ակամայ է եւ մեղանչական, գործում է ոչ թէ ըստ բնութեան, այլ հակառակ բնութեան եւ բնութեան մէջ օտար ու ներմուծուած բան է:

Ը. Դաւանական Հանդուրժողականութիւն

Դաւանական հանդուրժողականութեան խնդիրը, որը վերջերս բարձրացրեց Պ. Մուրադեանն իր «Դաւանական հանդուրժողականութեան եւ ազգամիջեան համերաշխութեան գաղափարը ԺԲ–ԺԳ դդ. Հայաստանում» վերնագիրը կրող յօդուածում[54]*, պարզւում է, որ հայ հակաճառական մտքի յատկորոշ կողմերից մէկն է: Այս առումով բացառութիւն չէ Սարկաւագը, որը նախորդում է Մխիթար Գոշին եւ Վարդան Այգեկցուն: Խօսելով դաւանական տարաձայնութիւնների եւ Եկեղեցիների հաղորդական պառակտման մասին՝ Սարկաւագը խոր ցաւով գրում է. «...սիրում եւ բաղձում ենք Հոգու միաւորութիւնը, դառնօրէն ողբում ենք լծակցութեան բաժանումը, արտասուքով թրջւում՝ յիշելով երբեմնի լծակցութիւնը, նաեւ այժմ իսկ փարւում ենք որպէս հարազատ եղբայրների, որ հեռացել են [մեզանից], հեռուից ողջունում ենք համաշնչութիւնը եւ լսելով այսքան չափազանցութիւններ եւ բամբասանքներ մեր մասին՝ չենք ցանկանում նոյն կերպ պատասխանել նրանց. «Տէ՛ր, սա նրանց համար մեղք մի՛ համարիր»»: [Դ XVI 13–15] Իսկ ընդդիմախօսները, ըստ Սարկաւագի, չունեն այդ զոհողութեան եւ հանդուրժողականութեան հոգին, այլ «զզւում են, երբ որեւէ տեղ հանդիպում են [մեզ] եւ հեռանալով հայհոյում...» [Դ XVI 18]: Այսպիսի վերաբերմունքը կարող է նմանօրինակ հակազդեցութիւն յարուցել, ինչը խորթ է ճշմարիտ քրիստոնեայի պատկերին: Ուստի Սարկաւագ վարդապետը յորդորում է. «Սակայն մենք միայն համբերենք գոհութեամբ՝ որպէս անիրաւ նախատինքի եւ թշնամանքի արժանացածներ, այլեւ օրհնենք նրանց, քաղցած տեսնելով՝ կերակրենք, ծարաւած հանդիպելով՝ յագեցնենք, հագցնենք, երբ մերկ են. բարեգործ լինենք ատելիների նկատմամբ, ինչպէս Հեզի եւ Մարդասէրի աշակերտները, սոսկ անուամբ եւ ճշմարիտ դաւանութեամբ մեզ քրիստոնեայ ցոյց չտանք, այլ այս պատուիրանների հնազանդու-*

54 *Տես «Գանձասար» Դ, Երեւան, 1993, էջ 95–109:*

թեամբ եւ կատարմամբ, քանզի ամէն ծառ իր պտղից է ճանաչւում» [Դ XVII 3]: Ե գլխում Սարկաւագը, նորից մեծ վշտով անդրադառնալով Եկեղեցիների բաժանութեան խնդրին, այս անգամ մի զարմանալի հոգեշունչ աղօթական հայցուածով դիմում է Տիրոջը՝ վերականգնելու Եկեղեցու երբեմնի միութիւնը [Ե VII 2–7]: Այս աղօթքը կամ մաղթանքը իրաւամբ կարելի է համարել հայ աղօթական գրականութեան ամենագեղեցիկ նմուշներից մէկը:

Ճշմարիտ քրիստոնեան, ըստ Սարկաւագի, կոչուած է այս աշխարհում խաղաղութիւն սերմանելու, որովհետեւ Քրիստոս խաղաղութեան Աստուած է: Հետեւաբար, ոչինչ այնքան խորթ չէ քրիստոնեայի պատկերին, որքան դիւային խռովութիւնները եւ պառակտումները. եւ պէտք է խուսափել հոգեկործան վէճերից եւ հակառակութիւններից: «Պարտ եւ պատշաճ էր խաղաղութեան աշակերտներին պատերազմ չյարուցել նոյն խաղաղութեան համար, քանզի եթէ խաղաղութեան կանչուեցինք Նրանից, որ խաղաղութեան Աստուած է եւ ոչ՝ խռովութեան, ուրեմն սիրում եւ գործում ենք ոչ այն, ինչ կամենում է, այլ այն, ինչ չի կամենում, երբ շատ անգամ անօգուտ վիճում ենք ի կործանում լսողների եւ մեր իսկ անձերի» [ԺԱ I 1]: Սակայն Սարկաւագը չի յորդորում կրաւորական անտարբերութեան, այլ, երբ ստիպուած ես լինում պատասխան տալ յանուն ճշմարտութեան, պէտք է այդ անել ոչ թէ սրտի դառնութեամբ, այլ ներքին հանդարտութեամբ՝ «հաւաստի եւ փափուկ խօսքով վարդապետելով ճշմարիտը, որպէսզի լսեն՝ ախորժելով հոգեւոր թովչութեան ձայնը եւ համաձայնեն ընդունել իմաստուն բժշկութիւնը»: Որովհետեւ այս կեանքի ժամանակն Աստծուց տրուած է հոգեւոր պտղաբերութեան համար, ուստի «պէտք է միշտ սպասել պտղին եւ ջանալ գործել կարելին եւ առաւել քան կարելին» [ԺԱ I 2–4]:

***

Յովհաննէս Սարկաւագ վարդապետի «Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովածուին նուիրուած այս ուսումնասիրութեանը կից՝ ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում ժողովածուի ամբողջական բնագիրը, որն առանձին մասերով հրատարակուել է «Գանձասար» աստուածաբանական հանդէսի Զ, Է եւ Ը հատորներում:

<Ա>

// ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ 200ա

ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱԿ<Ի> ՀԱՒԱՏՈՅ ՆԻԿԻԱԿԱՆՆ ՅԺԸ-ԻՑՆ*

I. [1]Արդ, ըստ Աստուածաշունչ գրոց եւ ըստ հարցն աւանդութեան՝ «Մեզ մի է Աստուած Հայր, յորմէ ամենայն, եւ մեք ի նա, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, եւ մեք նովաւ»†. յայտ է, թէ եւ մի Հոգի Սուրբ Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ: [2]Ո՛չ երեք աստուածք՝ ըստ բնութեան աւտարք ի միմեանց, եւ ո՛չ մի անձն՝ տկար յառատութիւն, այլ մի Աստուած՝ յաղագս նոյնութեան բնութեանն, եւ անձինք երեք՝ վասն ամէնառատութեանն եւ անճառելին խորհրդոյ: [3]Դարձեալ, ո՛չ երեք անսկզբունք, քանզի Հայր միայն է անսկիզբն. ո՛չ յումեքէ ծնեալ, իսկ Որդի՝ ծնունդ նորա, եւ Հոգին Սուրբ յառաջ եկեալ ի նմանէ, բայց ըստ ժամանակի՝ անսկզբունք իբրեւ զՀայր, եւ ոչ երեքեան սկզբունք միմեանց: [4]Վասն զի Հայր է սկիզբն Որդւոյ ծննդեամբ եւ Հոգւոյ՝ արտաքս առաքմամբ, ո՛չ մի անձն՝ վասն երեք գոլոյն, եւ ո՛չ երեք աստուածք՝ վասն միոյն բնութեան, վասն որոյ եւ անբարժանելի խոստովանիմք: [5]Եւ ոչ է կարծել մի գոլ անձն երեք անուամբք, վասն զի Սաբելի է այս, եւ ոչ երիս այլս ըստ բնութեան, քանզի արիոս//եան 200բ է այս, այլ մի գոլ բնութեան զերիս առանձնաւորութիւնսն: [6]Է ինչ, զոր հասարակաբար խոստովանիմք Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ է ինչ, զոր առանձնապէս: [7]Զ Աստուածն անուն եւ զգաւրութիւն Աստուածութեանն, զիշխանութիւնն, զփառս, զմեծութիւնն, զարարչութիւնն, զպատիւ, զճոխութիւն հասարակ Երրորդութեանն անճառելւոյ

---

* *Բնագիրը ներկայացւում է ըստ Ս. Ղազար N 504 գրչագրի՝ աննշան ուղղագրական միջամտութիւններով. օրինակ՝ վերականգնուած են բաց թողնուած յ-երը եւ ւ-երը՝ քահանաի-քահանայի, հոգոյ-հոգւոյ եւ այլն, ուղղուած են տառասխալները՝ ելաւղ-ելող, հոգիոյ-հոգւոյ, տեղիոջ-տեղւոջ, սղալ-սխալ, զքանչելի-սքանչելի եւ այլն:*

† *Ա Կոր. Ը 6*

խոստովանիմք: [8]Իսկ զՀայրն եւ զՈրդի եւ զՍուրբ զՀոգին շրթամբք խոստովանելով եւ սրտիւ հաւատալովն՝ առանձինն գոլ հաւատամք իւրաքանչիւր ումեք, զի յայսոսիկ հաւասարութիւն տալ երիցն ոչ ընդունի Եկեղեցի, այլ մի Հայր՝ պատճառ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ մի Որդի՝ ծնունդ էութեան նորա, եւ մի Հոգի Սուրբ՝ ելող ի Հաւրէ: [9]Դարձեալ եւ յանուանցդ գտանեմք ի Գիրս՝ ոչ ինչ խտրելով ասել Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: [10]Նախ՝ ինքն ասէ Փրկիչն յաղագս Հաւրն. «Հոգի է Աստուած», եւ ապա† Երեմիա մարգարէն վասն Որդւոյ. «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս»‡: [11]Այլ եւ լոյս եւ կեանք եւ ճշմարտութիւն, բարութիւն ամենայն, սէր, գթութիւն՝ հանդերձ երկայնամտութեամբ եւ անոխակալութեամբ եւ պարգեւասիրութեամբ եւ որ ինչ նման է*

201ա *այսոցիկ, ասել հասարակաբար Սրբոյ Երրորդութեանն Գիրք ոչ արգ// ելուն, եւ խոստովանեալ է յամենեցունց նոյն ինքն անայլայլելի եւ անփոփոխելի, ժամանակի արտաքոյ, ամենեւին եւ՝ հասման: [12]Զի այսոքիկ եւ որք նման սոցին՝ արարեալք առ ի նմանէ եւ ոչ համագոյք նորա եւ համեմատք, պատճառ ամենայնի եւ պատճառաց երիցագոյն, հաստիչ բնութեան եւ գոյացութեան, որ զամենայն բովանդակէ, եւ յիմիքէ ինքն ոչ բովանդակի, միայն ճշմարիտ՝ վասն ոչ ի սկսմանէ զէութիւնն ունելոյ եւ ոչ կատարածի ի ներքոյ անկեալ: [13]Քանզի այլքն ամենայն էութեան վիճակեալք վախճանի եւ սկսմամբ պարունակին, եւ ոմանք՝ ոչ երկուքումք ի նոցանէ, զի են յարարածոց անմահ՝ որպէս մարդկային ոգի եւ հրեշտակք: [14]Սակայն առանց սկսման եւ ոչ մի ոք, թէպէտ եւ արտաքոյ իմաստութեանն աշակերտք ասասցեն յաւետակից Աստուծոյ զնիւթն կամ զԱստուած կարաւտ նիւթոյ, եւ ոմանք՝ բնութեամբ գոլ զամենայն եւ առանց Արարչի կամ ինքնամատուցիկ որպէս ասացին, զի զմանիքեցւոցն եւ զվաղենտիանոսացն թողցուք զերեսուն յաւիտեանսն եւ զխաւար եւ զանդունդս:*

II. [1]Արդ, պարզից եւ խառնեցելոց մարմնոց եւ իմանալւոյ էու-

201բ *թեանն ինքն է արար//իչ՝ միայն անյաւդական եւ պարզ գոլով, ըստ բնութեան՝ անորակ, անքանակ, ոչ ի տեղւոջ, քանզի սոքա ի նիւթոյ եւ ի տեսակէ հաստատելոց յարմարեալ տուան, իսկ ամենասուրբ բնութիւն Երրորդութեանն գեր ի վերոյ ամենայնի է, վասն որոյ միտք ամենայն եւ*

---

* *Յովհ. Դ 24*

† *Գրչագիրը լաւ չի ընթերցւում:*

‡ *Ողբ Դ 20*

բան տկարանան իմանալ ինչ կամ ասել յաղագս նորա ստուգութեամբ:
2Բայց զի մի՛ ի կատարեալ եւ ի միայն էապէս բարւոյ անտի զրկեսցի
մարդկային բնութիւնս, չափաւորապէս եւ ըստ զիջանելոյ խաւսեցաւ
առաքելովք եւ մարգարէիւք ընդ մեզ, որոց եւ երեւեցաւ, որք անկար
էին տեսանել, զի «ոչ ոք է,- ասէ,- որ տեսանէ զերեսս Իմ եւ ապրէ»*:
3Եւ մեծն Աբրահամ, յորժամ ընդ կերպարանեցելումն ի տեսիլ մարդոյ
խաւսէր ընդ Տեառն վասն սոդոմացւոցն, ծանուցեալ զեղականի
բնութեանս տկարութիւն եւ զնորա պատուոյն զերազանցութիւնն՝ ասէր.
«Որովհետեւ սկսայ խաւսել ընդ Տեառն, բայց ես հող եմ եւ մոխիր»†:
4Իսկ Դաւիթ առաւելութեամբ ասէ. «Ո՞ խաւսեսցի զզաւրութիւնս
Տեառն»‡. զի եթէ վասն զաւրութեան Նորա ոչ ոք է բաւական ըստ
արժանի խաւսել ինչ, վասն նորուն ինքեան, որոյ զաւրութիւնն է, զի՞նչ
ասասցուք: //5Հիանայ եւ ամէնիմաստն Պաւղոս ոչ ընդ անհասութիւն 202ա
բնութեանն, քանզի ոչ համարձակէր, այլ ընդ մուտն հեթանոսաց եւ ընդ
տարագրութիւնն Իսրայիղի. «Ո՛վ խորք մեծութեան եւ իմաստութեան
եւ գիտութեանն Աստուծոյ, ո՛րպէս առանց քննելոյ են դատաստանք
նորա, եւ առանց զննելոյ՝ ճանապարհք նորա»§: 6Առնու եւ զմարգարէն
ձայնակցել. «Ո՞ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞ խորհրդակից եղեւ նմա,
կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ դատանել ի նմանէ հանճարոյ խելամտութիւն,
կամ ո՞ ետ նմա փոխ եւ հատուցանիցէ նմա»¶: 7Եւ զի ոչ զաւրէր սուրբն
կատարելապէս իմաստասիրել վասն իրացն յԱստուծոյ մատակարարելոյ,
կնքէ փառաւորութեամբ զբանն, զի «ի նմանէ,- ասէ,- եւ նովաւ եւ ի
նոյն ամենայն»**. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Յաղագս Որդւոյ

III. 1Որ ինչ ի վեր է քան զմեզ, հրամայեցաւ եւ ոչ քննել: 2Դարձեալ,
ընկալաք պատուէր քննել զԳիրս††: 3Որպէս զի ի ձեռն առաջնոյն
ուսցուք մի՛ մտացածին բանիւք յանդգնել յաղագս Աստուծոյ ինչ

* Տես Ել. Լ Գ 20:
† Տես Ծն. ԺԸ 27:
‡ Սաղմ. ՃԵ 2
§ Հռոմ. ԺԱ 33
¶ Տես Ես. Խ 13:
** Տես Բ Տիմ. Դ 18, Եբր. ԺԳ 21, Գաղ. Ա 4, Հռոմ. ԺԶ 26:
†† Տես Յովհ. Ե 39:

իմաստասիրել՝ աւելի քան զգրեալսն իմանալ կարծելով, իսկ ի ձեռն
202բ երկրորդին գծուլութիւն հեղգութեան եւ զդանդաղանաց ի բաց ընկ//
ենուլ եւ գործասիրաբար զաշխատասիրութենէ բուռն հարկանել եւ
կրթութեամբ Գրոց իմաստնանալ եւ երկիւղիւ մեծաւ զքննութիւնն
յաղագս Աստուծոյ մատչել առնել:

IV. [1]Արդ, թէպէտ եւ զՀայր գիտեմք պատճառ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ, այլ զժամանակի միջնորդութիւն ոչ ընդունիմք ասել եւ ոչ
երիցութիւն եւ կրտսերութիւն ի սուրբ խորհուրդ խոստովանութեան
Երրորդութեանն իշխեմք մուծանել, վասն զի յաստուածաբանելն
Յովհաննու լուաք ասել յաղագս Որդւոյ. «Ի սկզբանէ էր Բանն, եւ
Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն»*: [2]Զյանդուգն լրբու-
թիւն մոլեգնեցելոյն Արիոսի ըմբերանելով՝ զարարածն ասող Բանին
Աստուծոյ, քանզի «էրն ի սկզբանէն» ոչ պատշաճի արարածոց, եւ
դարձեալ՝ «Նա էր ի սկզբանէ, եւ ամենայն ինչ Նովաւ եղեւ»†: [3]Եւ
զիա՞րդ Արարիչն ամենայնի արարած իցէ: [4]Ո՛վ չտեմարան չարութեան
եւ ամենայն պղծութեան աղբիւր, զի թէ Արարիչն արարած իցէ, ոչ ինչ
արգելու եւ զՀայր հայհոյել քեզ, որ ասացն ցարարչակիցն. «Արասցուք
մարդ ըստ պատկերի իւրում եւ ըստ նմանութեան»‡: [5]Եւ ի մի պատկեր
Աստուածութեանն հաստատեաց զմարդն, վասն զի չեն ի միմեանց ըստ
203ա բնութեան բաժանեալ Ծնողն եւ Ծնունդն, // այլ ամենայնիւ նոյնք
եւ նմանք: [6]«Ես եւ Հայր իմ մի եմք, եւ որ ետեսն զիս, ետես զՀայր»§,
եւ դարձեալ՝ «Ես ի Հայր, եւ Հայր՝ յիս¶, այսինքն՝ զնոյն յերկոսին
տեսանել, բայց յառանձնաւորութեանցն: [7]Արդ, ոչ իւիք զանազանին
Ծնողին Ծնունդն համագոյ, բայց միայն զի Հայր չէ՛ եւ ո՛չ ասի եւ ո՛չ
զատանի ի Հոգւոյն Սրբոյ, պատուակից եւ կարողակից: [8]Որով ամենայն
ինչ եղեւ՝ ըստ մեծին Պաւղոսի, որ ասէ, թէ՝ «Ամենայն ինչ Նովաւ եւ ի
նոյն հաստատեցաւ՝ եթէ՛ աթոռք, եթէ՛ տէրութիւնք, եթէ՛ պետութիւնք,
եթէ՛ իշխանութիւնք»**: [9]Որոյ սկիզբն ոչ ժամանակ, այլ Հայր իւր, ընդ
նմա անսկզբնաբար եւ ի նմա կատարեալ†† յամենայնի՝ իբրեւ զնոյն

* Յովհ. Ա 1
† Տես Յովհ. Ա 2, 3:
‡ Ծն. Ա 26
§ Յովհ. ԺԴ 9
¶ Տես Յովհ. Ժ 38:
** Տես Կող. Ա 16:
†† Ըստ ձեռ. N 6453-ի: Բն.՝ կատարել:

զաւրութիւն Հաւր եւ իմաստութիւն, պատկեր անվրէպ, ծագումն
փառաց եւ նկարագիր էութեան նորա, կերպարան, Միածին Որդի, Բան,
խորհուրդ: [10]Անուանի եւ կեանք՝ ըստ ճշմարտութեան, լոյս, ճանապարհ,
ճշմարտութիւն եւ ամենայն, որ ինչ գերազանցեալ բարութեան է
նշանակիչ: [11]Այլ դու, եթէ կամիցիս զճշմարտութիւն Որդւոյ առ Հայր
տեսանել, մի՛ հեղգասցիս մտանել ի դպրոցն աստուածային, ուր լուիցես
նախ ի նոյն ինքն Միածնէ Որդւոյն Աստուծոյ. «Հայր իմ մինչեւ // ցայժմ 203բ
գործէ, եւ ես գործեմ»*: [12]Տեսանե՞ս զանսխալապէս գործակցութիւնն:
[13]Եւ դարձեալ, որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ,
նոյնպէս եւ Որդի, որս կամի, կենդանի առնէ եւ չասէ ըստ մասին գոլ
Հաւր գործակից զինքն կամ երկրորդ ի տալն կեանս, այլ ամենեւին ըստ
նմին եւ նոյնպէս: [14]Եւ զի անբաժանելի է ի Հաւրէ, ասէ. «Ես ի Հայր, եւ
Հայր՝ յիս»†. եւ դարձեալ, ի սուրբ եւ փրկական յաղաւթսն իւր. «Դու,
Հա՛յր, յիս, եւ ես ի քեզ»‡: [15]Ոչ ինչ նեղեալ յընդունելն զՀայր, քանզի չէ
նուաստ քան զնա, եւ ոչ ունայն ինչ եւ դատարկ՝ ի Հայր թողեալ մասն
յինքենէ, քանզի ոչ մեծ է քան զՈրդի Հայր: [16]Բայց յորժամ լսես զայս,
մի՛ կարծեր ընկղմել միոյն ի միւսն զանմարմին եւ զանճառելի էութիւնն
եւ ամենեւին արտաքոյ թանձրութեան եւ նիւթոյ, զի ըստ դիմաց եւ
ըստ առանձնաւորութեանց զանազանի երկրպագելի եւ ամենասուրբ
Երրորդութիւնն: [17]Այլ ըստ նոյնութեան բնութեանն ուսաք զՀայր
յՈրդի գոլ եւ զՈրդի ի Հայր, եւ վասն անվրէպ նմանութեանն, եւ զի
աստուածային եւ անպատմելի բնութեանն տեղի տանելոյ ոչ այլ ինչ
է, բայց ինքն միայն: [18]Արդ, նախ քան զմարմնանալ Բանին ոչ ան// 204ա
ունանի նորին մերկ Աստուածութիւնն Յիսուս եւ Քրիստոս, այլ Աստուած
եւ Բան եւ Որդի Միածին եւ որ ինչ վայելուչ է եւ յարմարական
աստուածայնոյ եւ անմարմին էութեան Բանին: [19]Իսկ յորժամ գթացեալ
ի մեզ՝ հաճեցաւ մարմնանալ, կոչեցաւ հրեշտակին յայտնութեամբ
այսոքիւք անուամբք, քանզի ասէ ցՄարիամ. «Ծնցիս որդի եւ կոչեսցես
զանուն նորա Յիսուս»§, եւ ցՀովիւսն. «Ծնաւ ձեզ այսաւր Փրկիչ, որ
է Քրիստոս»¶:

---

* Յովհ. Ե 17
† Յովհ. ԺԴ 11
‡ Յովհ. ԺԷ 21
§ Ղուկ. Ա 31
¶ Ղուկ. Բ 11

V. [1]Եւ արդ, որքան է տկարութիւն մեր, սակաւուք եւ վասն ընդ
մարմնոյ խառնման Բանին ասասցուք: [2]Խոստովանիմք զՈրդին Աս-
տուծոյ ճշմարտապէս մարդ եղեալ, զբովանդակ բնութիւն մարդոյ
միացուցեալ ընդ ինքեան՝ զհոգի եւ զմարմին եւ զմիտս: [3]Ո՛չ նախ
ստեղծեալ մարդոյն եւ ապա բնակեալ Բանին, այլ ինքեան Բանին եղեալ
մարմին՝ ըստ Յովհաննու ձայնին, սակայն անփոփոխելի եւ առանց
յեղման եւ այլայլութեան կացեալ մնացեալ ըստ Իւրում բնութեանն,
որպէս նախ քան զմարմնանալն, զայլայլելի եւ զմահկանացու
բնութիւնն ընդ անմահին եւ անայլայլելւոյ յորովայնի ամենամաքուր
Կուսին խառնեալ յարմարի: [4]Եւ ըստ բնութեան աւտարացեալսն
204բ իւրով անճառելի իմաստութեամբն խառնեալ // միացոյց, վասն զի
անհնարինքն առ ի մարդկանէ հնարաւորք են Աստուծոյ, իսկ զոր նայն
առնէ, անհասանելի է մտաց մարդկան եւ հրեշտակաց եւ անպատմելի
բանի, մանաւանդ ըստ մարմնոյ տնաւրէնութեանն իրագործութիւն՝
Աստուծոյ զծնունդն եւ զեղելութիւնն, խոստովանիմք եւ ո՛չ լոկ
մարդոյ, որպէս չարափառն Նեստորիոս եւ որք ըստ նմա: [5]Հաւանիմ
վարդապետին՝ անսալով ամէնիմաստին Պաւղոսի, որ ասէ. «Իբրեւ
եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի
կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք»*: [6]Այսպէս զստեղծանելի մարմնոյն
եղելութիւնն անեղ բնութեանն գիտէ, ոչ եթէ զանսկզբնական էութիւնն
այլայլեալ փոխադրեաց ինչ Բանն ի զգենուլ մարմին, այլ վասն զի
աներկբայապէս մարդ եղեւ Որդին Աստուծոյ, նմա դնէ զեղելութիւնն,
զի մի՛ երկու դէմս ոք կարծեսցէ, կամ առանց միանալոյ երկուս
բնութիւնս: [7]Զսոյն եւ այլուր ասէ. «Մեզ մի է Աստուած հայր, յորմէ
ամենայն, եւ մեք ի նա, եւ մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, եւ
մեք նովաւ»†: [8]Զի եթէ ոչ Բանն ինքն մարմնով ծնաւ, այլ՝ պատկերն
ծառայի, որպէս ասեն հերձուածողք, ապա ոչ է աստուածածին սուրբ
205ա Կոյսն՝ ըստ նոցա, // եւ երկուք ոմանք կատարեալք առանց միութեան,
եւ ոչ այնուհետեւ ըստ նոցայն հայհոյութեան՝ ամենակատար Երրոր-
դութեանն ի նմին մնացեալ՝ զչորրորդին յաւելուած ընդունելով, եւ
խառնակ խոստովանութիւնն Եկեղեցւոյ եւ պաշտաւնն յԱրարիչ եւ
յարարած, ի Տէր եւ ի ծառայ:

---

* Գաղ. Դ 4

† Ա Կոր. Ը 6

VI. [1]*Բայց մեք հաւատամք զՈրդին Աստուծոյ բնութեամբ եւ ճշմարտապէս մարդ լինել, ո՛չ ի մարդ բնակեալ՝ որպէս ի սուրբս, այլ ինքեան իսկ լինել կատարեալ մարդ՝ անշփոթ եւ առանց խառնակութեան մնալով, ո՛չ Աստուածութեանն ի մարմնոյ յեղեալ բնութիւն եւ ո՛չ մարմնոյն լուծեալ յանմարմնութիւն, այլ ի վեր քան զբան միացեալ ընդ մարմնոյ Բանին:* [2]*Վասն որոյ ոչ յերկուս բաժանեալ յետ միանալոյն իշխեմք զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին խոստովանիմք, թէպէտ եւ մարմին առ:* [3]*Եւ որպէս զմարդ եւ ոչ ոք ասէ այլ եւ այլ բնութիւնս, թէպէտ եւ յոգւոյ եւ ի մարմնոյ զգոյացութիւնն ունի, նոյնպէս եւ ի վերայ Տեառն մերոյ ոչ երկակս պարտիմք իմանալ, զի իւր եւ ոչ եթէ այլոյ ուրուք է մարմինն անձնաւոր եւ բանական, զնոյն ինքն՝ Աստուած կատարեալ եւ զնոյն ինքն՝ մարդ ճշմարիտ, համագոյ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ՝ ըստ Աստուածութեանն, եւ համագոյ մեզ՝ ըստ մարդ//կայնոյն բնութեան, սակայն ոչ այլ եւ այլ, այլ մի՝ ըստ Գրոց* 205բ
Սրբոց: [4]*Կեղծաւորին ոմանք մի ասել դէմ եւ զնոյն բաժանեն յերկուս բնութիւնս՝ խաբելով զպարզամիտս, եւ որ ինչ խոնարհագոյնք թուին գրեալք յԱւետարանսն, մարդկութեանն տան, այսինքն լոկ մարդոյ՝ զքաղցն, զծարաւն, զաշխատութիւնն, զգանգիտելն, զննջելն, զմահն, զթաղումն, իսկ զմեծամեծսն եւ զհրաշափառագոյն<ս>ն Աստուծոյ միայնոյ որոշեն՝ զբժշկութիւն ախտից եւ զաճեցուցանել հացից, ի վերայ ծովուն գնալն, զաստուածավայելուչ հրամանսն եւ խոստմունսն եւ զյարութիւնն, եւ չիմանան, թէ ի լոկ անուանէ միութեանն շահ ինչ ոչ է, յորժամ իրաւք յերկուս բաժանիցեն:* [5]*Զխաբէութիւն երկուութեանն իւրեանց թաքուցանեն ընդ մեզ՝ մի դէմն ասելով եւ յայտնեն՝ յերկուս բնութիւնսն անջատելով եւ յերկուս կամս եւ ներգործութիւնս եւ զայն հարկաւորաբար զԱրարիչն հարկի եւ բնութեան ընդ հարկաւ առնել ոչ ամաչեն:* [6]*Քանզի կարողութիւն էր նմա եւ հնար ոչ բնաւ ի նուաստագունիցն կրել ինչ, եթէ էր կամեցեալ, եւ վաղվաղակի ընդ ծնանելն ի Կուսէն յառն կատարելոյ գալ հասակ եւ ոչ՝ աճմամբ եւ զարգանալով, // բայց անվայելուչ էր չափոյ մարդկութեանն առանց* 206ա
կարգի, եւ անկարգս ինչ կամ անվայելուչս եւ առանց յարմարութեան լինել Աստուծոյ՝ ամբարշտութիւն է կարծելն: [7]*Եւ ոչ ի նուաստագունիցն կրել ինչ նմա ամենեւին դիւրին էր, վասն զի Աստուած էր մարմնացեալ, այսինքն՝ կատարեալ մարդ եղեալ, բայց ըստ որում ասացաւն վայելչականաւն մերոյս եւ բնաւորականաւն վարի<ւ>ր ի փրկութիւն մեզ:* [8]*Եւ վասն այնորիկ մարդ եղեւ, զի զայն ամենայն*

յանձն առցէ վասն մարդկան, ապա թէ ոչ, զի՞նչ հարկ ի վերայ կայր Նմա լինիլ մարդ, եւ զի մի՛ ոք յանդգնեսցի առ աչաւք ասել զճշմարիտն մարդեղութիւն Բանին Աստուծոյ, որպէս մանիք եւ այլ բազումք, եւ զփրկութիւնն մեր ապախտ առնել:

VII. [1]*Արդ, ինքն որ մարմնացաւն Աստուած, յորժամ կամէր եւ ոչ եթէ ի հարկէ ինչ կրէր զմարդավայելուչսն, որպէս եւ սուրբ Աւետարանն ուսուցանէ, թէ՝ «Ի կատարել աւուրցն քառասնից՝ ապա քաղցեաւ»**: [2]*Զի եթէ ի հարկէ բնութենէ լինէր բռնադատեալ որպէս զմեզ, ոչ լնլոյ քառասնիցն, այլ կանխաւ քան զայն քաղցնոյր:* [3]*Յեղիաս եւ Մովսէս թէպէտ եւ պահեցին զուգաթիւ աւուրս ըստ Տեառն, ոչ եթէ առանց*
206բ *քաղցնլոյ մնացին, վասն զի մա//ղդիկ էին, թէպէտ եւ աստուածազգեացք էին:* [4]*Իսկ Փրկիչն մեր յորժամ կամեցաւ, յայնժամ քաղցեաւ, քանզի Աստուած էր ճշմարիտ ի մարմնի միացեալ:* [5]*Եւ այսպէս եւ ըստ այսմ՝ մեք յերկուս ոչ բաժանեմք զմիոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կամաւորապէս կիրսն եւ զաստուածավայելուչ սքանչելիսն:* [6]*Վասն զի որք բաժանենն՝ է ինչ, զոր Աստուծոյ տան, եւ է ինչ, զոր՝ մարդոյ, առանց երկբայութեան երկուս դէմս եւ երկուս որդիս ի ներքս մուծանեն՝ հակառակ ուղիղ վարդապետութեանն եւ առաքելական աւանդութեանն, զոր ի հարցն ընկալաւ Եկեղեցի:* [7]*Եւ է այսպէս՝ Աստուածն Բանն յաւիտենական, որ ոչն քաղցնու եւ ոչ երբէք ծարաւէ, որպէս ասէ մարգարէն Եսայի*†*, իւրով մարմնովն քաղցնոյր եւ ծարաւէր, եւ նոյն ինքն, որ ոչ ննջէ եւ ի քուն երթայ, ննջէր մարմնով իւրով, անաշխատն եւ անվաստակն մարմնովն ի ճանապարհորդութեանն նստէր առ աղբեւրն վաստակեալ, բարձիչն արտասուաց արտասուէր ըստ մարմնոյն, քաջալերիչն ամենեցուն զերկիւղ յանձն առնոյր մարմնովն, անչարչարելին չարչարէր, եւ անմահն մեռանէր, զի ազատեսցէ զմահուն երկիւղիւ վտարանդեալսն ի ծառայութիւն:* [8]*Որպէս եղեւ որ*
207ա *ան//եղն էր եւ առանց սկզբան, մարդ եղեւ Աստուածն, եւ բովանդակիլ յանձն էառ անբովանդակելին՝ անփոփոխ մնալով յիւրումն առանց կարեաց, նոյնպէս եւ զամենայնն կրեաց անպարսաւելի կիրս եւ սքանչելագործէր աստուածային մարմնովն, զոր առ ի Կուսէն: «Հայր Իմ,- ասէ,- մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ»*‡: [9]*Թքով բերանոյն կաւ*

* *Տես Ղուկ. Դ 2:*

† *Հմմտ. Ես. ԽԹ 10:*

‡ *Յովհ. Ե 17*

արարեալ՝ զնոյն աչս ի ծնէ կուրին ստեղծանէր եւ ծանր մարմնովն
գնայր ի վերայ ծովուն Թեթեւապէս*: 10Այլ եւ <զ>Պետրոս վեր ածէր
սուրբ ձեռամբն՝ հանդերձեալ ընկղմիլ†, նովին ձեռամբ եւ զոքանչին
Պետրոսի՝ ի մահաբեր ջերմանն‡, ապա բժշկութիւն եւ կարողութիւն
սպասաւորել ինքեան եւ որոց ընդ նմայն՝ շնորհէր: 11Զհամերն լեզուոյ,
բուռն հարեալ աստուածայնոյ մարմնոյն մատամբք, պարգեւաւս քան
զքաջալեզուսն վաղվաղակի առնէր եւ լսելոյ զաւրութիւն ի խելսն եւ
յականջսն դնէր խլին՝ արկեալ անդ զմատուանն: 12Զժողովրդապետին
դուստրն ձեռն տուեալ՝ ի մեռելութենէ յարուցանէր իբրեւ ի քնոյ եւ
զբորոտն պիղծ ըստ աւրինացն մերձաւորութեամբ ձեռինն մաքրէր: 13Եւ
ոչ միայն աստուածարեալ մարմնովն սքանչելագործէր, այլ եւ հանդեր// 207բ
ձիւ մարմնոյն, որով տեառատեսն քաջահաւատ կինն բժշկեցաւ, եւ
բիւրքն են լուեալք եւ ասացեալք սքանչելեացն, որք ի ձեռն մարմնոյն,
զի զբաժանասէրսն ըմբերանեսցէ եւ ցուցանէ յայտնապէս, թէ չիք
անջրպետութիւն ինչ միացեալ բնութեանն: 14Արդ, եւ զորս բանիւ միայն
բժշկէր, մի՞թէ ոչ եւ այնոքիկ մարմնովն լինէին կատարեալք, որով եւ
ամենայն հրաշագործութիւնքն: 15Քանզի ոչ եթէ իմանալի ձայնքն
եւ անմարմնապէս լինէին, որպէս ի տաճարին եւ առ մարգարէիւքն,
այլ մարմնական շրթամբք եւ լեզուաւ եւ շնչերակաւք եւ այլովք
ձայնական գործարանաւք իւրով մարմնոյն Բանն Աստուած բարբա-
ռէր: 16<Յ>թագաւորազինն ասէր, եթէ՝ «Ե՛րթ, որդին քո կենդանի է»§,
եւ կնոջն քանանացւոյ՝ «Ո՛վ կին դու,- ասէ,- մեծ են հաւատք քո, ե՛րթ
եւ որպէս հաւատացերդ, եղիցի՛ քեզ»¶, անդամալուծին՝ «Արի՛, ա՛ռ
զմահիճս քո եւ շրջեա՛ց»**, եւ բորոտացն տասանց՝ «Երթա՛յք, ցուցէ՛ք
զանձինս քահանային»††, եւ ցորդի այրոյն, որ ի վերայ դագաղացն, այն
ինչ մեռեալ՝ «Պատանի՛ դու, քեզ ասեմ, արի՛»‡‡. եւ աղաղակաւ մեծաւ
ց Ղազար ասէր. «Արի՛, ե՛կ արտաքս»§§: 17Զի ուսցուք Աստուծոյ աղաղա-

* Հմմտ. Յովհ. Թ 6, Մատթ. ԺԴ 26:
† Հմմտ. նոյն:
‡ Մատթ. Ը 14, Մարկ. Ա 30, Ղուկ. Դ 39
§ Յովհ. Դ 50
¶ Մատթ. ԺԵ 28
** Տես Ղուկ. Ե 24:
†† Ղուկ. ԺԷ 14
‡‡ Ղուկ. Է 14
§§ Յովհ. ԺԱ 43

208ա կել մարմնովն, բայց տես//ցուք եւ զհոգեւոր պարգեւացն բաշխմունս,
թէ իցէ ըստ միութեան եւ ոչ ըստ մասին, որպէս հերձուածողքն ասեն:
18Ո՞չ ապաքէն անմեղ մանկտիոյն ձեռն եդ եւ աւրհնեաց եւ զոմն ի
գիրկս ընկալաւ, զոմանց ասաց. «Թո՛յլ տուք մանկտիոյդ գալ առ իս, զի
այդպիսեացդ է արքայութիւնն Աստուծոյ»*: 19Եւ առաքելոցն բանիւք
բերանոյ իւրոյ ետ իշխանութիւն թողուլ զմեղս եւ ունել իշխանու-
թիւն արձակել եւ կապել, կոխել զաւաս եւ զկարիճս եւ զամենայն
զաւրութիւն թշնամւոյն: Եւ պոռնիկն, յոտսն մերձեցեալ, թողութեան
մեղաց պարգեւ ընդունէր†: 20Եւ ցանդամալոյծն ասէր. «Թողեալ լիցին
քեզ մեղք քո»‡, եւ որոց գայթակղեցանն, ասէր. «Զի գիտասջիք, թէ
իշխանութիւն ունի Որդի Մարդոյ յերկրի թողուլ զմեղս»§: 21Եւ այնմ
ի վկայութիւն հաստատութեան ասէր. «Արի՛, ա՛ռ զմահիճս քո եւ ե՛ր-
թ ի տուն քո»¶: 22Եւ այլն ամենայն եղեալք եւ ասացեալք ի Տեառնէ եւ
ոչ մի ըստ մասին եւ առանձնակի բնութեան միոյ ուրուք, այսինքն՝
Աստուծոյ առանձինն կամ մարդոյ յատուկ երեւին ներգործութիւնք եւ
բանք, քանզի նոյն է Աստուած եւ նոյն ինքն մարդ, եւ ո՛չ ոմն մարդ եւ
208բ ոմն Աստուած, զի մի՛ մարդապաշտք, այլ աստուածապա՛շ//տք գտցուք
եւ Երրորդութեանն, այլ ո՛չ չորրորդութեանն երկրպագուք: 23Այսու
պատճառաւ միոյ եւ նորին Բանին Աստուծոյ մարմնացելոյ զամենայն
խոստովանիմք զաստուածավայելուչսն եւ զմարդավայելուչս<ն>, զոր
ասեն ներգործութիւնս եւ կիրս: 24Վասն որոյ եւ Աստուծոյ զծնունդն
ի Կուսէն, զաճելն ըստ մարմնոյ, զշնորհաւորիչն, զիմաստնանալն,
զքաղցնուլն, զծարաւելն, զխաչն, զթաղումն, զէջն ի դժոխս եւ զյա-
րութիւնն: 25Որպէս զի մի՛ ըստ Նեստորի եւ Թէոդորիտեայ եւ Ղեւոնի
եւ ժողովոյն Քաղկեդոնի՝ շնորհաւք աստուածացեալ զՔրիստոս եւ
պատուակից Բանին, զոր ի զաւակէն Դաւթի եւ իշխանակից՝ ըստ նոցա,
որպէս ոմն ուրումն, այլ Բանն Աստուծոյ մարմին եղեալ, այսինքն՝
մարդ ճշմարիտ եւ կատարեալ խոստովանեսցուք՝ առանց շփոթութեան
եւ խառնակութեան զբնութիւնսն պահելով եւ անապական եւ զբաժա-
նումն անջատման ի միաւորութեանն ոչ ընդունելով:

---

* *Մարկ. Ժ 14*

† *Հմմտ. Ղուկ. Է 47:*

‡ *Մարկ. Բ 8*

§ *Տես Մատթ. Թ 6:*

¶ *Մատթ. Թ 6, Մարկ. Բ 9*

VIII. [1]*Բայց զգուշացի՛ր, պատուակա՛նդ քաջ արանց, քանզի Բանն, որ եւ Միածին եւ նկարագիր էութեան Հաւր եւ պատկեր, զաւրութիւն*
եւ իմաստութիւն, անընդունակ կրից եւ չարչար//անաց է, վասն զի 209ա
Աստուած է յաւիտենական: [2]*Սակայն զի մարմին եղեւ անփոփոխելին եւ անայլայլելի<ն>, Նմա ասին ամենայնք իւրոյ մարմնոյն կիրք, քանզի եթէ ինքն մարմնացաւ, եւ նորա է մարմին անձնաւոր եւ բանական, նորա են եւ կիրք մարմնոյն, այսինքն՝ Բանին Աստուծոյ մարմնացելոյ. դժուարատես է եւ նուրբ ամենեւին բանդ է, նաեւ անհաս ոչ միայն մարդկային մտաց, այլ եւ անմարմին զաւրութեանց:* [3]*Բայց որոց ճշմարտութիւնն բաղձալի է եւ աշխատութիւնն սիրելի, բարեպաշտ, ուղիղ խորհրդով, ոչ թաքուցանէ ի նոցանէ, որ ասացն, թէ՝ «Ոչ զՀայր ոք ճանաչէ, թէ ոչ Որդի, եւ ում Որդին կամիցի յայտնել»**: [4]*Արդ, ոչ եթէ բնութիւն աստուածային գիտակ չարչարանացն ընդունէր յինքն եւ սգայր զչարչարանսն, վասն զի գերազանց է եւ կարի յոյժ քան զչարչարելի բնութիւնն, բայց յաղագս ճշմարտապէս միանալոյն շարականիս բնութեան եւ մի լինելոյն նովաւ՝ նորա չարչարանքն եւ են, եւ ասին:* [5]*Քանզի ոչ եթէ ըստ Ապողինարի անանձն մարմին*
ընդ ինքեան միաւորեաց Բանն, զի այսպէս խոստովանել ընդ չար// 209բ
չարանաւք արկանէ զանչարչարելի բնութիւնն, այլ մարմին բանական՝ անձն ունող, որպէս զի ի ձեռն անձին բանականի լինիցի զգայակից չարչարանաց մարմնոյ, ոչ Բանն ըստ ինքեան, այլ իւրով անձամբն բանականաւ ի ձեռն մարմնոյն ստասցի: [6]*Ի՞ւ եղիցի չարչարեալ ինքն, զոր համառաւտելով ասասցուք, թէ նոյն ինքն Բանն Աստուած՝ անչարչարելին ճշմարտապէս չարչարեցաւ իւրովն մարմնով՝ բանական անձն ունողաւ, եւ անմահն մեռեալ իւրով մարմնովն, քանզի Աստուած էր ճշմարիտ, որ կրէր զամենայն մերով բնութեամբս, զի ազատեսցէ զմեզ ի մեղացն ծառայութենէ եւ արասցէ որդիս ըստ շնորհի Հաւր իւրում եւ անուանեսցէ եղբայրս իւր եւ ծանուսցէ զճշմարտութիւնն, որ է նոյն ինքն Քրիստոս Աստուած մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

IX. [1]*Դարձեալ, սրբոց հարցն հետեւելով՝ ըստ որում խոստովանիմք մի Որդի Աստուծոյ զմարմնացեալ Բանն Աստուած եւ Տէր եւ Քրիստոս, զնոյն ինքն եւ Աստուած ճշմարիտ, աստուածային եւ զնորա մարմնաւոր ծնունդն, քանզի Աստուած է Ծնեալն ի սրբոյ Կուսէ եւ ոչ, որպէս*

* *Տես Ղուկ. Դ 23:*

210ա Նեստորի թուեցաւ, մարդ սոսկ // եւ ապա եղեալ ընդունող Բանին,
քանզի այսպէս կարծիլ եւ ասել ամբարշտութիւն է: [2]Վասն այնորիկ
եւ ասեմք, եթէ ոչ ի մարդ բնակեաց Բանն Աստուած, այլ մարդ եղեւ,
եւ ոչ որպէս նոքայն ասեն՝ աստուածազգեաց մարդ էր Քրիստոս,
որպէս նոքայն ասեն, այլ Աստուած մարմնացեալ եւ մարդացեալ,
ոչ յարակցութիւն մարդոյ առ Աստուած Բանն եւ իշխանութիւն
կամ պատուոյ հաւասարութիւն, որպէս Նեստորն ասաց, զսուրբ
եւ զաստուածային տնաւրէնութիւնն ասեմք, այլ միաւորութիւն
ըստ ճշմարտութեան աննման բնութեանցն, եւ զխառնումն զայն
վերագոյն մտաց եւ անճառելի բանի՝ Աստուծոյ միայն հնարաւոր եւ
վայելուչ եւ ինքեան եւեթ հասանելի: [3]Բայց որք միաւորութեանն
զկնի դարձեալ յերկուս քակտեն զբնութիւնս եւ զանազանութիւն
ներգործութեանց եւ կրից եւ կամաց եւս ի վերայ բերեն՝ ըստ ժողովոյն
Քաղկեդոնի, այլովք բառիւք եւ նոյն իմացուածովք զ Նեստորի
հայհոյութիւնն անրջանան: [4]Քանզի երկուս դէմս ասաց՝ հաղորդեալս
ի միմեանց եւ զսուրբ Կոյսն՝ ոչ Աստուածածին, այլ Քրիստոսածին՝
խորամանկեալ գողանալ զպարզամիտս եւ զանուսմունս, եւ երկուց
210բ Քրիստոսաց ժողով//ումն առնէ աննաւրէնն՝ բազին անուանելով զայն,
որ ի զաւակէն Դաւթի եւ բնակիչ զԲանն Աստուած: [5]Եւ սոքա երկու
անջատելով յետ միութեանն զբնութիւնսն՝ մի դէմ ընդ մեզ ասեն նովին
նենգութեամբ եւ բաժանեն զաւետարանական եւ զառաքելական ձայնս.
զաստուածավայելուչ բանս եւ զգործս միայն Աստուածութեան նորա
տան եւ զմարդավայելուչ տնաւրինաբար կիրս եւ ձայնս մարդկութեան
նորա առանձնապէս որոշեն:

X. [1]Արդ, ի՞ւ իւիք տարաձայնեն միմեանց, կամ որո՞վք զատանին
յիրերաց մտածութեամբք, քանզի երկոքին կողմանքն՝ զնուաստագոյնսն
մարդկութեանն յարմարեն եւ զբարձրագոյնսն՝ Աստուածութեանն:
[2]Բաժանելով յերկուս զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ զի՞նչ աւելի քան
զ Նեստորին իմանան սոքա կամ ասեն, քանզի չէ ինչ աւգուտ ասել
զԲանն Աստուած ի Կուսէն ծնեալ եւ մի դէմ զՔրիստոս եւ ապա՝ անդրէն
դառնալ եւ բաժանել յերկուս: [3]Նաեւ քան զ Նեստորի աղճատանս
դժնդակագոյն ունին զչարութիւնն այսպիսի պատրուակեալ բանք,
զի նա յետ միաւորութեանն, զոր ինքն ասէ, կարծիս տայ ոչ բաժանել:
211ա [4]Բայց սոքա յայտնապէս որոշեն եւ // զդէմն, զոր մի ասացին՝ զձայնս
Գրոց Սրբոց բաժանելովն եւ վասն այսորիկ դառնագոյն զսոցայն քան
զ Նեստորին ասացի ունել, վասն զի նորայն հայհոյութիւն առանց

ծածկութեան* եւ յայտնի է, զի Բանն Աստուծոյ ոչ ասէ մարմին եղեալ, այսինքն՝ մարդ կատարեալ, այլ ի մարդում բնակեալ, եւ յայնպիսի ամբարշտութենէ դիւրին է զգուշանալ եւ պարզամտաց անգամ:

XI. [1]Իսկ նոքա պատրուակեալ ունին զիւրեանցսն եւ ոչ ամենեցուն յայտնի, բայց հմտագունից արանց, քանզի զծնունդն ըստ մարմնոյ ի Կուսէն՝ զՈրդոյն Աստուծոյ խոստովանել ասեն եւ մի դէմ մարմնացելոյ Բանին, որպէս եւ մեք, կարծիս տան գոլ եւ ոչ յայտնապէս, ըստ Նեստորի, յերկուս դէմս բաժանեն զՔրիստոս: [2]Բայց երկուս կամսն ասելով եւ յերկուս ներգործութիւնն ի միում դիմին՝ զնոյն նշանակեն զՆեստորին, զի առանձնաւորութիւն երկաքանչիւրոցդ՝ ներգործութեան եւ կամաց, եւ զնուաստագոյնս, այսինքն՝ զմարդկայինսն, մարդոյ առանձինն որոշել եւ զհրաշափառագոյն գործսն՝ առանձինն Աստուածն Բանի տալ զի՞նչ այլ ցուցանէ, եթէ ոչ տա//ր բաբերութիւն երկուց դիմաց: [3]Թէ- 211բ
պէտ եւ նենգութեամբ կեղծաւորեալ՝ ուրեք ուրեք զճշմարտութիւնն խառնեն, ոչ այլ իրիք ազագաւ, այլ զի ստութիւնն հաւանելի գոլ թուեսցի, բայց մեք ե՛ւ զծնունդն, ե՛ւ զչարչարանսն, ե՛ւ զամենայն խոնարհութեան կիրսն Աստուծոյ Բանին մարմնացելոյ խոստովանիմք, քանզի իւր ինքեան՝ Բանին էր մարմինն եւ ոչ եթէ այլոյ ուրուք: [4]Յայտ ուրեմն, եթէ եւ իւրոյ մարմնոյն կիրքն նորա են, եւ վասն այնորիկ ասեմք զԱստուած խաչեալ եւ չարչարեալ կամաւորապէս վասն մեր: [5]Զանչարչարութիւնն, որ է ըստ բնութեան Աստուծոյ, ամբողջ պահելով՝ որպէս վերագոյնդ ասացաւ սակաւուք եւ ըստ որում կրիցն մարդկայնոց եւ մահուն զԱստուածն Բան ասեմք կամաւ հնազանդել իւրով մարմնովն, նոյնպէս եւ զաստուածավայելուչսն հաւատամք կատարեալ գգործսն: [6]Զի ճշմարտապէս եւ անանջատաբար խառնեաց Բանն ընդ ինքեանն զիւրն մարմին անձնաւոր եւ բանական, այսինքն՝ մտաւոր, եւ ամենայն, որ ինչ կատարեցաւ առ ի Նմանէ յաշխարհի ի ծննդենէն ըստ մարմնոյ ի սուրբ եւ յԱստուածածին Կուսէն մինչեւ ի յ//արութիւնն եւ զոր ինչ այլ եւս հանդերձեալն է կատարել զվայելուչս 212ա
իւրոյ անճառելի զաւրութեանն եւ իմաստութեանն, միոյ եւ նորին խոստովանելի է ճշմարտապէս Բանին Աստուծոյ մարմնացելոյ: [7]Նա նոյն ինքն՝ Որդի Աստուծոյ, եւ նոյն ինքն՝ ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ: [8]Նա՝ յառաջ քան զյաւիտեանս, ի Հաւրէ ծնեալ անճառաբար, եւ նոյն ինքն՝ ի լրման ժամանակաց ի Կուսէ աստուածավայելչաբար

* Բն.՝ ծածկութիւն

մարմին զգեցեալ, այսինքն՝ ամենայնիւ, որ ինչ մարդ յերկրի երեւեալ, բայց ի մեղաց, ճշմարտապէս եւ առանց կարծեաց չարչարեալ, նոյն ինքն՝ մարմնացեալ Բանն, որ է Աստուած ճշմարիտ: [9]Մի՛ ամաչեսցուք զհերձուածողացն ընդդէմ բերեալ աստուածաչարչարութիւն լսելով, այլ իմաստութեամբ զՍուրբ Գիրս ի մէջ բերեալ՝ պատասխանի տացուք նոցա: [10]Միոյ եւ նորին գոլ զամենայն՝ Աստուծոյ մարմնացելոյ եւ մարդացելոյ, զաստուածավայելուչսն եւ որ ինչ ըստ տնաւրէնութեանն վասն մեր կիրք, եւ մի՛ հաւանակիցք եղեալք նոցա՝ բաժանեսցուք զՔրիստոսն եւ որ ինչ վասն նորա զասացեալսն յառաքելոց եւ ի մարգարէից եւ յաւետարանչաց՝ Աստուծոյ առանձինն եւ մարդոյ ըստ
212բ // յատկութեան: [11]Վասն զի մի ուսուցին մեզ հարքն բնութիւն Բանին Աստուծոյ, թէ եւ մարմին առ, եւ բազում ունի անտեղութիւնս յերկուս բաժանել բնութիւնս յետ միաւորութեանն զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ըստ իւրաքանչիւրոցն՝ զձայնս Գրոց Սրբոց: [12]Եւ զ'առ ի Տեառնէն եղեալս եւ կատարեալ գործս եւ բանս ըստ տնաւրէնութեանն՝ զտնաւրինականսն եւ զոր ինչ Աստուծոյ միայն վայելուչս եւ կարելիս, նմանապէս տրամատել:

Յաղագս Հոգւոյն Սրբոյ

XII. [1]Մի յերրորդութենէն գոլ, ըստ որում եւ էն իսկ, խոստովանիլ ուսաք եւ խոստովանիմք զՀոգին Սուրբ՝ փառակից եւ երկրպագակից Հաւր եւ Որդւոյ, բնութեամբ նոյն, իսկ անձամբ՝ այլ, կատարեալ ամենայնիւ՝ իբրեւ զՀայր եւ զՈրդի, համազաւր եւ նոյնապատիւ, ոչ իւիք բնաւ նուազեալ, արարչակից որոց, նոյնագոյ եւ հաւասար: [2]Վասն բնութիւն զնոյն ունելոյ՝ ամենայնի պատճառ էիցս ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ, անեղ, Տէր Աստուած, թագաւոր, յաւիտենական, մշտնջենաւոր, լոյս, ճշմարիտ, ամենայնի լուսաւորիչ, բաւական բնութեան, ելող ի
213ա Հաւրէ եւ ոչ արարած, ճշմարտ//ութեան Հոգի, Մխիթարիչ, ոչ Որդի եղեալ կամ ասացեալ, այլ ծաւալումն անճառելի, ըստ որում ասաց Փրկիչն. «Հոգին ճշմարտութեան, որ ի Հաւրէ ելանէ»*: [3]Ճշմարտութեան Հոգի ասելով՝ վասն զի իւր Հոգի եւ է, եւ ասի, եւ ի Հաւրէ ելող, վասն զի ի Նմանէ ստուգապէս յառաջ գայ, զորմէ ասաց նոյն ինքն Փրկիչն.

* Յովհ. ԺԵ 26

«Նա զիս փառաւորեսցէ, զի յիմմէ անտի առնու եւ պատմեսցէ ձեզ»[*]: [4]*Տեսանե՞ս, զի եւ Որդւոյ Հոգի ասի՝ որպէս եւ Հաւր՝ Հոգին Սուրբ:* [5]*Ըստ որում եւ մեծն գրէ Պաւղոս. «Դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով, եթէ իցէ Հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ, իսկ եթէ ոք զՀոգին Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա, ապա եթէ Քրիստոս ի ձեզ է, մարմին մեռեալ է վասն մեղաց, եւ Հոգին կենդանի է վասն արդարութեան»*[†]: [6]*Մի՛ տ դիր, ասաց՝ Հոգի Աստուծոյ, ասաց եւ՝ Հոգի Քրիստոսի. զնոյն դարձեալ եւ Քրիստոս անուանէ զՀոգին՝ ոչ զանձնաւորութիւնն խառնակելով եւ չփոթելով, որպէս եւ Սաբելիոսն այն, այլ յայտ առնելով ի Փրկչին էութենէ գոլ զնա եւ ի միոջէ Աստուածութենէն ոչ աւտար:* [7]*Վասն այնորիկ Հոգի Աստուծոյ ասացեալ՝ անդէն եւ Հոգի Քրիստոսի կոչէ զնա՝ ճշգրտապէս յայտ առնելով, թէ ամենայն, որ ինչ // Հաւր է, անցանէ եւ յՈրդի՝ ի* 213բ
բնաւորապէսն իւր Ծնունդ: [8]*Իսկ ասելովն, թէ Քրիստոս ի ձեզ է վասն Հոգւոյն, ցուցանէ բնութենակից Բանին զՀոգին Սուրբ գոլ: Թէպէտ եւ այլ է առանձնաւորութեամբ, բայց զի է յՈրդւոջ, եւ Որդի ի Նմա:* [9]*Այդպէս ասաց երանելին. «Սա խաւսեցաւ յաւրէնսն եւ ի մարգարէսն»*[‡], *եւ զի է Տէր, ասէին մարգարէքն յաճախ. «Այսպէս ասէ Տէր»*[§], *եւ թէ՝ «Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի»*[¶]: [10]*Որում եւ աստուածայինն վկայէ Պաւղոս՝ ասելով. «Տէր Հոգին է»*[**], *վասն որոյ իշխանութիւն ունի ընդ Որդւոյ եւ իբրեւ զնոյն զծառայս բնութեամբ ազատ առնել, քանզի «ուր Հոգին Տեառն է, անդ ազատութիւն է»*[††], *վասն որոյ եւ Փրկիչն վասն իւր ասէր ցհրեայսն, զորս յորդորէր ի հաւատս, եթէ՝ «Որդին զձեզ ազատս արասցէ»*[‡‡]: [11]*Արդ, եթէ որ առնէ զմեղս, ծառայէ մեղաց եւ ո՛չ մնայ ի տան Աստուծոյ, ո՛չ յեկեղեցւոջ եւ ո՛չ յերկնի, իսկ Հոգին Սուրբ ի ձեռն վերստին ծննդեան աւազանին ինքեամբ ճշմարտութեամբ յազատութիւն ածեալ որդեգրութեան*[§§] *Աստուծոյ արժանաւորէ,* [12]*ուրեմն զնոյն ունի բնութիւն եւ զաւրութիւն զՈրդւոյ, յայտ է, թէ՝ եւ*

---

* *Յովհ. ԺԶ 14*

† *Հռոմ. Ը 9—10*

‡ *Հմմտ. Հաւատոյ հանգանակ:*

§ *Տես Երեմ. Բ 17, 19, Ե 18, Ա Թագ. Բ 27, Բ Թագ. ԺԲ 7:*

¶ *Տես Եզ. Զ 10, ԺԴ 1, ԺԴ 1, ԺԶ 11, ԻԵ 1, Լ 12, 17, ԼԱ 12, ԼԲ 7:*

** *Բ Կոր. Գ 17*

†† *Նոյն տեղում:*

‡‡ *Հմմտ. Յովհ. Ը 36:*

§§ *Բն.՝ որդեգրութեան*

214ա զՀաւր, վասն որոյ եւ իւր որդիս առնէ, որպէս՝ Հայր, // եւ՝ զիւր անունն, որպէս եւ Քրիստոս ի վերայ կնքաւորացն կոչէ. «Զի ծնեալն ի մարմնոյ մարմին է,- ասէ Տէր,- եւ ծնեալն ի Հոգւոյն՝ հոգի»*: 13Եւ դարձեալ. «Հողմն ուր կամի, չնչէ, այլ ոչ գիտես՝ ուստի՞ գայ կամ յո՞ երթայ, սոյնպէս եւ՝ ամենայն ծնեալն ի Հոգւոյն», եւ՝ «Որ ոչն ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյն, ոչ տեսցէ զարքայութիւն Աստուծոյ»†: 14Եւ զիա՞րդ իշխէ հոգեմարտն եւ աստուածամարտն զազատարարն եւ որդեգրող ծառայ անուանել, որ եւ անբովանդակելին է բնութեամբ որպէս Աստուած եւ լնուլ բաւական զամենայն:

XIII. 1Գրեալ է վասն Հաւր. «Ո՞չ զերկինս եւ զերկիր ես լնում»‡, ասէ Տէր իսկ վասն Հոգւոյն. «Հոգի Տեառն ելից զտիեզերս»§: 2Առաքէ Հայր. «Եկ առաքեցից զձեզ առ փարաւոն»¶, եւ՝ զո՞ առաքեցից, կամ ո՞ երթայցէ առ այն ժողովուրդ: 3Առաքէ եւ Որդի. «Երթա՛յք,- ասէ,- աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս»**, եւ ընտրեաց յաշակերտացն, զորս եւ առաքեալս անուանեաց: 4Առաքէ եւ Հոգին Սուրբ, նոքա՝ առաքեալք ի Հոգւոյն Սրբոյ, որովք ուսանիմք մի գոլ եւ ազատ զբնութիւն Երրորդութեանն Սրբոյ: 5Զոր կամեցեալ յայտ առնել առաքելոյն
214բ Պաւղոսի՝ զկարգ դասաւորութեանն անդրէն դարձուցանէ նա՝ // զՀոգին Սուրբ անուանելով, ապա՝ զՈրդի, ապա՝ զՀայր, ոչ անգիտացեա<ա>լ պատճառ զՀայր գոլ Որդւոյ եւ զՀոգւոյն Սրբոյ, այլ զի ցուցցէ զՀոգին Սուրբ հաւասար ըստ ամենայնի Որդւոյ եւ Հաւր, քանզի բազումք յոլովակի գայթակղին յանուսումնութենէ՝ ի գիրն եւեթ հայելով եւ զզաւրութիւն անգիտանալով իրին եւ ճշմարտութեան: 6Վասն զի մեծ է, ասեն, Հայր, վասն այնորիկ ամենայն ուրեք առաջին ի գիրս լինի կարգեալ եւ անուանեալ, զորոյ կարծիս բժշկելով՝ ասէ այսպէս. «Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է. եթէ բաժինք աջողութեանց են, այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամենայնի»††: 7Եւ ոչ աստ միայն, այլ եւ ի բազում տեղիս սոյնպէս ցուցանէ երանելին զՀոգւոյն

* Յովհ. Գ 6
† Տես Յովհ. Գ 3:
‡ Տես Երեմ. ԻԳ 24:
§ Իմաստ. Ա 7
¶ Ել. Գ 10
** Մատթ. ԻԸ 19
†† Ա Կոր. ԺԲ 4

Սրբոյ հաւասարապատուութիւնն առ Հայր եւ Որդի, եւ չէ ծածկեալ
յուսումնասիրաց եւ իմաստուն ընթերցողաց: [8]Արդ, զամենայն ունի
զՀաւր եւ զՈրդւոյ Հոգին Սուրբ, բայց միայն զի Հայր ոչ է եւ ոչ ասի,
այլ եւ՝ ոչ Որդի, սակայն՝ Որդւոյ, ըստ որում ասէ Պաւղոս. «Եւ զի
եմք որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր,
որով ա//ղաղակեմք՝ Աբբա՛ Հայր»*: [9]Եւ մեծն Պետրոս զմարգարէիցն 215ա
առ հաւատացեալսն գրելով՝ ասէր. «Որք վասն որոյ ի ձեզ լինելոց էին
շնորհք՝ մարգարէանային, յորում եւ յորպիսի ժամանակի գուշակէր
ի նոսա Հոգին Քրիստոսի»†, զոր եւ ինքն Տէր աւետիս անուանէ
եւ Հաւր: [10]«Նստարո՛ւք,- ասէ ցաշակերտսն,- մինչեւ զգենուցուք
զաւրութիւն ի բարձանց»‡, զորմէ զաւրութենէ ասաց նախ, թէ՝ «Ես
աւասիկ առաքեմ զաւետիս Հաւր իմոյ ի ձեզ»§: [11]Արդ, եթէ զաւրութիւն
է, որպէս եւ Քրիստոս՝ Աստուծոյ, եւ աւետիք նորա եւ Հոգի Որդւոյ,
ոչ երկբայութիւն ինչ ունի՝ նորին բնութեան գոլ Հաւր եւ Որդւոյ
զՀոգին Սուրբ: [12]Եւ եթէ այս, ապա ուրեմն կատարելապէս ունի
զԱստուածութեանն էութիւն եւ զպատիւ, վասն որոյ իշխանութեամբ
եկեալ՝ յանդիմանեաց զաշխարհ վասն մեղաց եւ վասն արդարութեան
եւ վասն դատաստանի: [13]Որով ձայնիւ եւ Փրկիչն վարի ի դատաստան,
ասէ. «Եկի յաշխարհս յայս, զի որք ոչ տեսանեն, տեսցեն, եւ որք
տեսանենն, կուրասցին»¶, եւ այսպիսի ձայնք զհամապատուութիւն եւ
զտիրակցութիւն մեզ ուսուցանեն զՈրդւոյ եւ զՀոգւոյն: [14]Սադուկեցիք
ուրանան զՀոգին Սուրբ՝ ամենեւին ոչ գոլ կարծելով, // իսկ արիանոսք եւ 215բ
մակեդոնիտք նուաստեցուցանեն <քան> զՀայր եւ զՈրդի՝ ի միմեանց
բաժանեալք հերձուածովք եւ միաբանեալք հայհոյութեամբ, վասն զի որ
զմի ոք յերրորդութենէն ուրանայ կամ նուաստ ասէ, աստուածապաշտ
ոչ է, ըստ որում եւ ինքն վկայէ Փրկիչն՝ ասելով. «Որ զիս ընդունի,
զԱռաքիչն իմ ընդունի»**, իսկ որ ոչ հաւատայ Որդւոյ, բարկութիւնն
Աստուծոյ կացցէ ի վերայ նորա:

XIV. [1]Ուրեմն, որ զՀոգին Սուրբ ընդունի, զԱռաքիչն նորա ընդունի, յայտ է թէ՝ զՀայր եւ զՈրդի: [2]«Եթէ ես ոչ երթայց,- ասէ,- Մխի-

---

* Հռոմ. Ը 15
† Ա Պետ. Ա 10
‡ Տես Ղուկ. ԻԴ 49:
§ Ղուկ. ԻԴ 49
¶ Տես Յովհ. Թ 39:
** Մատթ. Ժ 40, Ղուկ. Թ 48

*թարիչն ոչ եկեսցէ առ ձեզ, ապա թէ երթամ, առաքեցից զնա առ ձեզ»**, *եւ դարձեալ. «Հոգին Սուրբ, զոր առաքեսցէ Հայր յանուն իմ»*†, *եւ որ ոք ոչ ընկալցի զՀոգին Սուրբ, ի բաց կացցէ՝ հրաժարեալ ի Հաւրէ եւ յՈրդւոյ՝ պարսկական աղանդոյն հետեւեալ եւ հրէականին:* [3]*Այլ մեք, որ ուղիղս փառաւորել ուսաք, ամբողջ զերկրպագութիւնն եւ զպատիւն պահել ուսաք Սրբոյ Հոգւոյն եւ զԱստուածութեանն խոստովանութիւն ընդ Հաւր եւ ընդ Որդւոյ, որպէս զի ի ձեռն այսպիսի ճշմարիտ խոստովանութեան եւ հաւատոյ ի Հոգին Սուրբ տաճար զմեզ առ-*
216ա *նիցեմք Սրբոյ Երրորդութեանն:* [4]*Քանզի որ թերի // զխոստովանութիւնն առնիցէ ի Հոգին Սուրբ եւ անկատար, ի բաց պարսպէ զանձն ի բովանդակ Աստուածութենէն Սրբոյ Երրորդութեանն, եւ ոչ միայն տաճար նորա ոչ է աւթեւան, այլ եւ առանց թողութեան շեղջակուտ է, եւս ինքեան՝ զհայհոյութեանն դատապարտութիւն, քանզի «որ զՀոգին Սուրբ հայհոյեսցէ, մի՛ թողցի նմա՝ մի՛ յայսմ աշխարհի եւ մի՛ ի հանդերձելումն»*‡: [5]*Եւ զի՞նչ այլ իցէ հայհոյութիւն մեծագոյն, քան զոչ խոստովանելն կատարեալ ամենայնիւ ընդ որում Հայր եւ Որդի եւ զՀոգին Սուրբ: Վասն որոյ հրաժարեալք յամենայն աղանդոյ եւ հերձուածոց՝ զճշմարիտն, զոր ուսաք ի նոյն ինքն ի Հոգւոյս Սրբոյ, եւ ուղիղ եւ հաստատուն պահեսցուք զխոստովանութիւն հաւատոյ որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, եւ համարձակութեամբ աղաղակեսցուք միոյ բնութեան զոլ զամենասուրբ Երրորդութիւնն՝ անբաժանելի, անփոփոխելի, անայլայլելի, անապական, անժամանակ, անեղանելի, անվախճան, անսահմանելի, անիմանալի, ամենայնի արարիչ՝ զգալեաց եւ իմանալեաց, անճառելի բանի եւ ի մտաց անհասանելի,*
216բ *որոյ տէրութիւն եւ թագաւորութիւն // նոյն, զաւրութիւն, պատիւ, կարողութիւն, Աստուածութիւն, իմաստութիւն, ճոխութիւն եւ ամենայն գեղեցիկ եւ իմանալի պայծառութիւն, վայելչական ինքեան, որում միայնոյ վայել է երկրպագութիւն եւ մշտնջենաւոր աւրհնաբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

---

* *Յովհ. ԺԶ 7*

† *Յովհ. ԺԴ 26*

‡ *Տես Մատթ. ԺԲ 31, Մարկ. Գ 28:*

<Բ>

ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ Ի ԽՆԴՐՈՅ ԳԱՊԿԱՅ ԿՐԱՒՆԱՒՈՐԻ ՅԱՂԱԳՍ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆԱՑՆ ԳԼՈՒԽ ԺԸ

Վասն մի եւ ո՛չ երկուս ասել զՏէր մեր Յիսուս Քրիստոս

I. [1]*Յայս ուղիղ տասան մասունս գլխաւորեալ զհարցմունս քո՝ համառաւտիւ բովանդակեսցուք ըստ կարողութեան:* [2]*Նախ՝ վասն զմի գոլ Քրիստոսի՝ ըստ առաքելական աւանդութեանն եւ հարցն ճայնակցութեանց, զի ոչ ի մարդ բնակեալ զԲանն ուսաք, որպէս Նեստորի թուի, եւ նախ քան զնա հերձուածողաց եւ որոց զկնի նորա, որովք երկու իմանին որդիք եւ դէմք եւ բնութիւնք յետ միաւորութեանն, այլ զԲանն մարմին եղեալ, այսինքն՝ մարդ ճշմարիտ:* [3]*Որպէս զի ոչ գոլ այլ Որդի զ՚առ ի Հաւրէ Բանն ըստ բնութեանն եւ այլ՝ ըստ յարակցութեան զոր ի Մարիամայն, որպէս նո//քայն աղճատին՝ բաժանելով երկաքան-* 217ա
չիւրոցն յատուկս ըստ ինքեանց, այլ զնոյն ինքն անժամանակաբար ի Հաւրէ ծնեալն Որդի ի լրման ժամանակի ի կնոջէ ծնեալ՝ անփոփոխելի եւ անայլայլելի կալով մնալով ըստ իւրում բնութեանն: [4]*Քանզի ինքն է Որդի Աստուծոյ եւ ինքն է Որդի Մարդոյ, ինքն՝ անբովանդակելի եւ ինքն՝ ի մարմնի բովանդակեալ, չարչարական եւ անչարչարելի, մահկանացու եւ անմահ, միանգամայն իսկ Աստուած եւ մարդ:* [5]*Բայց նոքա զԳնողն զնոսա ուրանան ստուգապէս՝ ըստ մասին որոշելով զբնութիւնս, ըստ որում՝ կամս եւ աջողութիւնս, որ են գործք, զորոց մանրամասնաբար յեղանակս տարբերութեանցն ուսցիս որպէս ի հարցն սրբոց եւ յայնմ մատենէ**, *զոր ժողովեալ է մեր յաստուածայնոց Գրոց առատագոյնս եւ ոչ դժուարահաս ինչ կարի:*

Վասն տաւնից միաբանութեան եւ բաժանման

II. [1]*Այլ՝ վասն տաւնից աստուածայնոց:* [2]*Թէպէտ եւ մոլորեցան ի հաւատս, ոչ կարացին այլայլել զամենայն, եւ տաւնեմք նմանապէս*

* *Հաւանաբար նկատի ունի սոյն ժողովածուի Ա թուղթը, որն աչքի է ընկնում սուրբգրային առատ մէջբերումներով: Սակայն խօսքը կարող է վերաբերել նաեւ Ե, ԺԱ եւ ԺԲ թղթերին, ուր քննւում են նոյն խնդիրները եւ համեմատաբար շատ են սուրբգրային վկայակոչութիւնները:*

217բ *ամենեքեան, բայց վասն Աւետեացն եւ Ծննդեան // ոչ պարտիմք հակառակել, քանզի տաւնեմք եւ մեք, թէպէտ եւ ոչ ընդ նոսա: [3]Ի թիւս աւուրցն սխալ են նոքա, որպէս երեւի, զի ոչ յամսոցն քանիս հանդիպիմք միմեանց տաւնիւքն, սակայն տաւնէին առաջինքն նոյնպէս. թէպէտ եւ ոչ ամենայն քաղաք: [4]Վասն որոյ գտանեմք ի բանս հարցն այլազգ ի Մկրտութիւնն եւ այլազգ ի Ծնունդն ըստ իւրաքանչիւրոցն խորհրդոյ առնել զխաւսն, որպէս եւ Գրիգորն Անձիանձու մեծն ցուցանէ յերկոսին տաւնականսն բանս: [5]Բայց քաղաքն երուսաղէմացւոց, ըստ նախնեացն սովորութեան զկարգն պահեալ, ոչ փոփոխեցին մինչեւ ի հուսկ վերջին աւուրս, յորոց ընկալաք իբր ի նախագահ Աթոռոյ եւ քաղաքէ մեք զկարգս տաւնից եւ պահեմք անշարժ: [6]Եւ թէպէտ այլք ի քաղաքաց ոչ ընդ երուսաղէմացիս գտաւն Յայտնութեան եւ Ծննդեանն միանգամայն կատարէին, սակայն խաղաղութիւն ունէին ընդ միմեանս վասն ի բան հաւատոյ միաբան գոլոյն: [7]Բայց մեք, զաւուրսն փոփոխելով տաւնիցն, զԱստուածամաւրն ասեմ եւ զԽաչին նաւակատեաց,*

218ա *է ուրեք եւ՝ զվկայիցն յիշատակս, ոչ բարւոք առնեմք // եւ յայսմ տեղի տալ պարտիմք նոցա, քանզի ո՞ ի սրբոցն աւանդեաց զփոխաձեւութիւնս զայս. այլ է ամբուշ կարծեաց այս եւ սոյնպիսիք ինչ այլ գիւտք:*

Վասն յիշատակաց վկայից ճշմարտութեանն

III. [1]Իսկ զվկայս ճշմարիտս զգուշութեամբ ընտրել արժան է ի կատարմունս յիշատակացն, մանաւանդ թէ ոչ իսկ այլ, քան զոր այժմ ճանաչեմք, անուն աւտար եւ անծանաւթ ի ներքս մուծանել: [2]Քանզի բազում անգամ զանսուրբս ոմանս եւ զհերձուածողս սուրբս կոչեն նոքա եւ յիշատակի արժանի առնեն, որպէս զամբարիշտն Մարկիանոս եւ զԼեւոն Հռոմայեցի, յորոց յիշատակաց փախչել պարտ է իբրեւ ի դատապարտելոց նզովիւք: [3]Արդ, զքաջայայտս սրբոց կամ անսրբոց, թէ զիարդ արժան է պատուել կամ անարգել, երկայն ինչ բանից պէտք ոչ են, իսկ որոց երկբայութիւն ինչ եւ կարծիք հուպ են, ոչ պատուել եւ ոչ թշնամանել եւ ոչ՝ զպատուիրանադիրս նոցա երբեք:

Վասն մկրտութեան եւ թէ զիա՛րդ իցէ

<IV>. [1]Այլ վասն անկատար մկրտութեան նոցա բազում են բանք,

218բ *բայց մեզ ի յոլովիցն սակաւք // բաւականասցին: [2]Կանոնեցին հարքն*

սուրբք զհերձուածեալսն ի հերձուածսն Ապողինարի վերստին մկրտել:
3Արդ, եթէ որ ասացն չունչ մարդկային եւ միտս ոչ ունել Քրիստոսի,
եւ յայնպիսի խոստովանութիւնն զմկրտեալսն մկրտել արժան է դար-
ձեալ, իսկ սոքա, զի զմարդն իսկ բովանդակ աւտարացուցանեն ի Բա-
նէն, զիա՞րդ իշխեն մկրտութիւն ճշմարիտ ասել եւ կոչել զիւրեանցն:
4Լուիցեն առաքելոյ<ն>. «Որք միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յի-
սուս,— ասէ,— ի մահ անդր նորա մկրտեցաք»*: 5Եւ մեծն Պետրոս նոյն-
պէս՝ «Մկրտեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ յանուն Յիսուսի Քրիստո-
սի»†,— ասէ: 6Արդ, եթէ ի մահ մարդոյ իցէ մկրտութիւնն, ո՞ւր է փր-
կութիւնն, եւ եթէ մերկ Բանին ասիցեն զմահն, գտանին ամենեւին ամ-
բարշտեալ եւ ի դասու կարգեալ աստուածասպանիցն: 7Եւ եթէ յերկուցն
անուն, որպէս բաժանեն յինքեանք՝ ի մարդ առանձինն եւ յԱստուած
յատուկ, որպէս մասնաւորեն եւ գտնաւրինականն ամենայն եւ զբանս
Գրոց, սուտ առնեն զճշմարտութիւնն, որ ասաց ցառաքեալսն մկրտել
յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ‡: 8Եւ չասաց յերկուց որդւ// 219ա
ոց անուանս էակցելոց, որպէս ասեն, ի միոյ՝ ըստ բնութեան Որդւոյ,
եւ միւսոյ՝ ըստ շնորհի, քանզի այս զԱրարիչ եւ զարարած համապա-
տիւ ցուցանէ եւ զԵրրորդութիւնն՝ չորրորդութիւն, իսկ զԵկեղեցի՝ կի-
սապաշտաւն զարարած եւ զԱստուած: 9Իսկ զիա՞րդ արարածք ի պաշ-
տամանէ ազատեցան եւ յառաջմայն աստուածոց. ճշմարտապէս առաս-
պելք եւ անուրջք ասացուածքն են եւ իմացուածքն: 10Արդ, մկրտիմք ի
մահ Աստուծոյ մարմնացելոյ եւ յանուն Երրորդութեանն եւ ոչ աւել-
ւոյ, զի եղիցուք կատարեալք եւ մաքրեալք, իսկ ի նոցայն այն հրա-
ժարիմք յիւղոյ աւծութենէն, եւ ի մարմնական լուացմանէն եւ ի չոր-
րորդին յաւելուածոյ:

Վասն քահանայութեան եւ քահանայից

<V>. 1Զի թէեւ ուղիղ իսկ զհաւատոցն համարս պահանջէին յեկե-
լոցն առնուլ կնիք, զիա՞րդ ոչ անարժան էր յայնպիսեաց քահանայից
առնուլ ձեռնադրութիւն կնքոյ, որք ի բնութենէն թշնամանեալք եւ
թշնամանիչք՝ զնոյն յապաւեալք եւ կրճատեալք ի մասանց անտի, զոր

* Հռոմ. Զ 3
† Գործ. Բ 38
‡ Տես Մատթ. ԻԸ 19:

219բ *ստեղծ Արարիչն զ//նոյն ինքն՝ աղարտելով ի ձեռն այնր զհաստիչ բնութեանս՝ որպէս զոչ գիտող պատշաճաբար արարչագործել. զորոյ անտեղութեան առաւելութիւն ուսցիս ի բանէն*, զոր յաղագս այդորիկ արարեալ է մեր: [2]Բայց ոչ այնքան եւեթ զամբաստանութիւն արժանի են տանելոյ, այլ եւ վասն անխտրութեան մեղաց այլոց եւ անձանց: [3]Արդ, անկատարքն մարմնով եւ հոգւով զիա՞րդ կամ զայլս ոմանս կարեն կատարել. յայտ է, թէ ոչ արժան ումեք է իբրեւ առ քահանայս հայել ի նոսա, որք ամենեւին եւ ամենայն ուրեք զհակառակն ունին պարկեշտ մերոյս աւրինաց քահանայութեան:*

Վասն աշխարհականաց ժողովրդոց

<VI>. [1]Բայց զզինուորսն եւ զռամկական ժողովուրդսն այսպէս է տեսանել, թէ աննենգ եւ պարզամտաւք զհետ երթայցեն կանխակալ սովորութեան, զմեր ճշմարտութիւն ոչ բամբասեալ ծաղր առնիցեն, թէպէտ եւ ոչ առժամայն աշակերտից<ե>ն, ընդ նոսին խնամով եւ սիրով խաւսել արժան է եւ ի Գրոց Սրբոց ամենայն հեզութեամբ: [2]Թերեւս զզ-
220ա *ջացեալ եւ ծ//անաւթացեալ մերոցն՝ ընտրեսցեն զբարին, ապա թէ յանդգունք եւ հայհոյիչք մերոցն պատահիցին, հրաժարել յայնպիսեացն յետ միանգամ եւ երկիցս խրատելոյ եւ ոչ մաքառել բանիւք այլ եւս:*

Վասն տաճարաց աղաւթարանաց, որ են եկեղեցիք

VII. [1]Այլ թէ յորս արժան է աղաւթից տունս մտանել եւ աղաւթել, եւ ի սովորութենէ իսկ յայտ է, քանզի յառաքելոցն եւ ի սրբոց մարտիրոսացն վկայարանս այնպէս մտանել եւ աղաւթել ունիմք ի սկզբանէ սովորութիւն, որպէս եւ ի սուրբ եկեղեցիսն Երուսաղէմի: [2]Իսկ եթէ զաննշանն զուրուք ունիցի զառակոչութիւնս եկեղեցիքն անուանեալ եւ վկայարանք, ո՛չ մտանել ի նոսա իբրեւ ի սուրբս, բայց թէ դէպ լինիցի մտանել, այնպէս զաղաւթսն կատարել պարտ է՝ Աստուծոյ ճշմարտի եւ միայնոյ երկրպագելով, որպէս ի հասարակաց տունս կամ այլ ուրեք յանպատեհ տեղիս: [3]Սակայն, որչափ հնար է, հեռանալ պարտ է ի հերձուածողացն աղաւթակցութենէ, քանզի արտաքսեալք են յԵկեղեցւոյ եւ դատապարտեալք ի հարցն, եւ չէ ումեք իշխանութիւն յուղղափառաց

* *Ցստակ չէ, թէ որ աշխատութիւնն է ակնարկւում:*

եւ ի տ//ան անգամ լինիլ նոցա կցորդ աղաւթից. եւ այս սահմանեցաւ 220բ
ի հարցն: [4]Բազում ուրեք երգէ եւ Դաւիթ. «Հաղորդէի ես ամենայն եր-
կիւղածաց Քոց, որոց պահեալ է զպատուիրանս Քո», եւ որ այլք այս-*
պիսի բանք աստուածայինք՝ հրաժարեցուցիչք ի կցորդութենէ չարաց,
եթէ ոչ խոստանայցեն հեռանալ յաղանդոցն եւ ի մեղաց պղծութենէն:

Վասն վկայարանացն սրբոց եւ անուանելոցն միայն

<VIII>. [1]Սովորութիւն է հաւատացելոց երթալ ի մատրունս վկայից
առ ի նախանձ բարեպաշտութեան նոցա եւ ունել բարեխաւս առ Տէրն
իւրեանց վասն փրկութեան եւ բարութեան հոգւոց եւ մարմնոց, ոչ եթէ
պաշտել զնոսա եւ երկրպագել փոխանակ Տեառն: [2]Կոչեն եւ հերձուա-
ծողք զշիրիմս եւ զդիրս մեռելոց իւրեանց վկայարանս, յորոց վերայ
պարտ է հասանիլ ստուգութեամբ մեծաւ, խուզիւ եւ քննութեամբ, զի
մի՛ զանսուրբս փոխանակ սրբոց պատուեալ՝ բարկացուցանիցեն զԱ-
բարիչն եւ ընդունիցին մեղս եւ տանջանս փոխանակ արդարութեան
եւ փրկութեան: [3]Եւ ոմանք, որ եւ հրեշտակաց աղաւթս մատուցանի-
ցեն եւ յիշատակս կամ տաւ//նս կատարեն, զի եւ զայս յիշել բարւոք եւ 221ա
ի դէպ թուեցաւ, զոր խոտեալ անարգեցին սուրբ հարքն՝ որպէս զան-
յայտ կռապաշտութիւնն, եւ եթէ հրեշտակաց եւ կամ սրբոց արանց
եւ վկայից պաշտաւն եւ երկրպագութիւն ոչ արժան է մատուցանել,
այլ մերձ առ նոսա Աստուծոյ զաղաւթսն եւ զերկրպագութիւնն առ-
նել, բարեխաւս զնոսա ունել, ո՛րչափ եւս պատկերաց ոմանց: [4]Ահա եւ
հրեշտակն արգելոյր զՅովհաննէս յիւրմէն երկրպագութենէ. «Մի՛,—
ասէ,— ծառայակից քո եմ եւ ընկերաց քոց»†, եւ մեծն Պետրոս՝ զԿուռ-
նելիոս. «Յոտն կաց,— ասէ,— զի եւ ես ինքնին մարդ եմ»‡, եւ ոք ի սր-
բոց զայս ոչ հրամայէ:

Վասն սրբոյ խաչին

<IX>. [1]Զարմանամ ընդ մարդկան իմացուածոց տգեղութիւն, թէ
զիա՛րդ վասն նոցին իրաց մարտնչին զանազանապէս. յաղագս ճշմար-

* *Սաղմ. ՃԺԸ 63*
† *Յայտ. ԻԲ 9*
‡ *Գործ. Ժ 26*

տութեանն իմաստասիրելով՝ զհակառակս խաւսին եւ վասն կենաց զմա-
հու արբուցանեն դեղ, զճառս լուսոյ ստուերացուցանեն խաւարաւ: [2]Որք
ոչ են անկեալ ի մտաց, քաջայայտ ունին զխաչին խորհուրդ: [3]Ես եւ
221բ *յանտառի ուրեք կամ ի նկարս հանդերձից // եւ գրի զնշան չարչարա-*
նաց Տեառն իմոյ տեսանելով՝ սոսկամ ճշմարտապէս եւ անխայեմ յան-
ստուգութենէ: [4]Իսկ որք պահեն զերկիւղ ի սնոտիս եւ որ ոչն է արժան՝
երկնչին, զ՞առ ի յիշատակ մերոյն փրկութեան ձեւացեալ եւ կանգնեալ
նշանն հայհոյեն, եւ յոլովք ի նոցանէ, ի վայր իսկ արկեալ, կոխան առ-
նեն, թէ վասն զի ի հերձուածողաց ձեւացեալ եւ կանգնեալ իցէ. եւ վասն
այնորի՞կ խղճիցիս ինչ դու, որ զուղիղն խորհիս, կալ յաղաւթս առաջի
նորա: [5]Ո՛չ անգոսնեմ, վասն զի նշանակ է առաւել ատելութիւն ունել
առ չարափառսն, սակայն հայհոյել եւ անարգել ոչ է պարտ, զի Տեառն
քո է նշանն: [6]Նաեւ մեք, յորժամ երկրպագեմք առաջի նորա, ոչ եթէ
նիւթոցն զերկրպագութիւն մատուցանեմք կամ զնոյն ինքն աստուա-
ծացուցանեմք զնիւթն, այլ նովաւ ի յիշատակել չարչարանաց Փրկչին
մերոյ առ ի <յ>Աստուծոյ զաղաւթսն եւ զերկրպագութիւն մատուցա-
նեմք՝ խնդրելով ի նմանէ զնոյն նշան ի փրկութիւն եւ ի պահպանու-
թիւն մեզ, վասն որոյ եւ յաճախ իսկ զդէմս կնքեմք նովաւ եւ զբովան-
222ա *դակ մարմինն նոյնպէս՝ աղաչելով զԽաչե//ալն ի փրկութիւն անձանց*
նովաւ: [7]Եւ յորժամ նմին ինքեան խաչին երբեք երկրպագիցեմք՝ առ
սէր Տեառն մերոյ եւ զի նովաւ կեցոյց զմեզ, այլ ո՛չ վարկանելով Աս-
տուած եւ որպէս Աստուծոյ զերկրպագութիւն առնելով: [8]Ըստ որում եւ
աստուածայնոյ գերեզմանին եւ մսրոյն եւ սրբոյ Աւետարանին երկր-
պագեմք ի փառս Տեառն, քանզի նոքաւք կորուսեալ բարձաւ իշխանու-
թիւն բանսարկուին. հակառակ նմա եւ ի փրկութիւն մեզ՝ պատուեալ
մեծարեմք զնշանն պարծանաց: [9]Իսկ կորստական աղանդոյն Նեստորի
հետեւողքն եւ ժողովոյն Քաղկեդոնի զնոյն ինքն զԽաչեալն ուրանան
Աստուած գոլ եւ զխաչն պատուել կեղծաւորին, ընդ որ ոչ փոքր ինչ
հիանամ, զորս հարցանեմ, թէ իբրեւ զմարդո՞յ սրբոյ տանջանաց գոր-
ծով դուք մեծարէք զխաչդ: [10]Ընդէ՞ր ոչ ապա ե՛ւ զհնոցն Բաբելովնի,
ե՛ւ զգուբն առիւծուց կամ զքարինսն Զաքարիայ պաշտէք, զի զայլսն
թողից. զսուրն, որով գլխատեցաւ մեծն ի ծնունդս կանանց մարգարէ,
եւ զմահու անաւթսն, որով Յեզաբել ջնջեաց զԱստուծոյ մարգարէսն:
222բ *[11]Ապա թէ Աստուծոյ իցէ խաչն, հի՞մ զԽաչեալն // աւտարացուցանէք*
յիւրմէ Աստուածութենէն՝ իբր զարհուրեալք լինել ուղղափառք, կամ
թէ՝ գուցէ ախտ եւ չարչարանք յանչարչարելի եւ յանախտ բնութիւն

Բանին մերձանայցէ, որ իւրով մարմնովն չարչարեցաւ ճշմարտապէս՝ ոչ ինչ զանչարչարութեանն Բանն վնասե<ա>լ. բայց զի ինքն է Տէր մեր Յիսուս Քրիստոս, այսինքն է՝ Բանն մարմին եղեալ, եւ ոչ երկուք դէմք եւ բնութիւնք, որ չարչարեցաւն եւ ոչ վնասեցաւ: [12] *Նմա տան Գիրք Սուրբք եւ հարցն աւանդութիւնք զամենայն զիւրսն, զի այսպէս ասասցուք զչարչարանսն եւ զանչարչարութիւնն, զկիրս եւ զսքանչելագործութիւնս, զխոնարհութիւն եւ զբարձրութիւն, զպատիւ եւ զանպատուութիւն, զմահն եւ զանմահութիւն. այսպէս եւ ոչ ըստ մասին բաժանելով՝ զխոստովանութիւն առնել ուսաք:*

Ի մի Տէր մեր Յիսուս Քրիստոս

<X>. [1] *Արդ, որովք բաժանեալ զատանիմք ի նոցանէ, սակաւուք ասացաւ, իսկ եթէ որովք հաւասարեմք նոցա, աւելի է:* [2] *Եւ են այսոքիկ՝ տաւնիւ Յայտնութեան Տեառն եւ Յարութեան եւ այլովք ոմամբք տաւնիւք եւ յիշատակովք վկայից ոմանց եւ զնոյն գիրս առաքելականս // 223ա
եւ վարդապետականս վարդապետելով, թէպէտ զբազումս կամակորեն նոքա հակառակասիրութեամբ, յոլովս եւ ի սրբոց հարցն բանից այլայլեցին՝ քարշելով ի խոտորնակ իւրեանց կարծիսն յոյժ անտեղութեամբ, յորս զգուշանալ պարտ է ամենեւին:*

<XI>. [1] *Այլ զպարզամտագոյնս ի նոցանէ, որպէս վերագոյնն իսկ ասացի, եւ զաննենգն, որք գթանն ի մեզ եւ ոչ այպանեալ նախատեն, այլ եւ խնամով եւս հային եւ ակն ածեն ի մէնջ, ընդունիլ ոչ յեկեղեցի կամ ի հաւասարութիւն աւրինաց, այլ խաւսել ի Գրոց Սրբոց, թերեւս աւգտեալք ապրեսցին, իսկ ի հակառակս խորհողացն եւ թշնամանողաց հեռանալ ի բաց:*

<XII>. [1] *Մի՛ ումեք ի նոցանէ անսալ ի լուծումն պահոց՝ կարգելոցն յեկեղեցւոջ, զոր արհամարհեն յաղագս որովայնամոլութեան հագածեալք ի փափուկ կերակուրս եւ մանաւանդ ի գինի:* [2] *Եւ յաղագս ձկանց եւ ի ձէթ եւ ի սոյնպիսիսս նաեւ յարձակ իսկ աւուրսն ոչ յամենայն ճաշակել համարձակ, զոր ուտեն նոքա, զի անխտրաբար զբազումս յանսրբոց կենդանեաց յաւդագնաց//ից եւ ի ջրայնոց եւ ի հետեւակաց ցամաքայնոց բարբարոսաբար ուտեն եւ զսուրբ կերակուրսն պղծել մեռելովք զեռնովքն ոչ խտրեն:* [3] *Այլ զամենայն միրգ ի նոցանէ եւ զունդ եւ զհաց անխիղճ պարտ է ուտել, իսկ վասն գինւոյ եւ ձիթոյ <յ>իւրաքանչիւր կամս թողուցումք, քանզի երկիւղածութեամբ* 223բ

եւ հաւատովք ի փառս Աստուծոյ ճաշակողացն համարձակութիւն է, մանաւանդ եթէ որք տանն երկիւղածագոյնք իցեն:

<XIII>. [1]Են, որպէս լսեմք, եւ ուղղափառք ի նոսա՝ զաւղեալք եւ թաքուցեալք վասն ահի չարեացն: [2]Բայց դու մի՛ վաղվաղակի յանձն առնուցուս հաղորդիլ ընդ նոսա հարցափորձութեանն, եւ մի՛, թէ զուղղափառութեան խոստովանութիւն ի չրթունս ունիցին, անդէն եւ անդ հաւատարմացին քեզ: [3]Քանզի բազումք ի նոցանէ զՋուր եւ զխմոր՝ զապականութեան տարացոյցս, ի մեծ խորհուրդն վնաս եւ հերձուած ոչ համարին, յորոց աւտարանալ պարտ է որպէս ի հրէից, քանզի եւ նոքա անապական եւ կենդանարար զՄարմին եւ զԱրիւնն Տեառն ոչ
224ա *համարին, ընդ որս հաղորդել եւ սիրով անգամ անպատեհ է, որպէս // եւ յայլում ցուցաք մատենի* վասն նոցա եւ վասն խորամանկ խորհրդոցն նոցա առատագոյն:*

<XIV>.† [1]Բայց որպէս պատուիրէ Պաւղոս, պարտիմք իմաստութեամբ գնալ առ նոսա ամենայն զգուշութեամբ՝ որպէս առ արտաքինսն‡, զի մի՛ տացուք պատճառս, որոց զպատճառսն կամիցին: [2]Այլ յամենայնի ի բանս եւ ի գործս այնպէս լինիլ ի մէջ նոցա, որպէս լուսաւորս յաշխարհի, որպէս զի պատկառեսցին ի մէնջ. «Ամաչեսցէ,— ասէ,— աշխարհ ի գնացից ձերոց»§, զի եւ նոքա աւգտեսցին ի մէնջ:

<XV>.¶ [1]Եւ զխաւսս առնել առ նոսա ի Գրոց Սրբոց ոչ դոյզն հանճարով. ապա թէ չիցես բաւական տալ պատասխանի, ոչ գովեմ զաներկսիրութիւնն, սակայն ոչ պարտիս բնաւ մատչիլ ի խնդիրն: [2]Թէ իցէ ի քեզ բան, տո՛ւր պատասխանի, ապա թէ ոչ՝ ափ քո ի վերայ բերանոյ քոյ լիցի:

<XVI>. [1]Այլ վասն ըմպելեացն եւ կերակրոցն անաւթոց, քանզի զպղծեալսն ոչ խորեն, զգուշանալ պարտ է, մանաւանդ ի խեցեղինաց. իսկ ի պղնձեաց եւ յորոց նոյնպիսիք կամ ի փայտեղինաց, զորս աւրէնքն սրբեն, ոչ այնպէս ինչ հարկ ի վերայ կայ:

---

* *Նկատի ունի սոյն ժողովածուի Դ թուղթը:*

† *լուսանցքում՝ ԺԵ*

‡ *Տես Կող. Դ 5:*

§ *Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք, ՃառՔրստեայ, Վենետիկ, 1907 թ., էջ 55*

¶ *լուսանցքում՝ ԺԶ*

Վասն պատկերաց

XVII. // [1]Զ Փրկչին կենդանագրութիւն նկարեալ յեկեղեցիս եւ* 224բ
կամ զբուն իսկ՝ որ երբեմն <յ>եղեսացւոց քաղաքին, եւ կամ զոր տե-
ռատես կինն եւ քաջահաւատ կանգնեաց ի Պեննադա, յորժամ տեսա-
նիցեմք, առ մարմնացեալ Բանն, որ վասն մեր զծառայի կերպարանս
առ, որում զգծագրութիւնն տեսանելով առաւել եւս գամք ի յիշատակ,
աղաչել պարտիմք եւ գոհանալ սրտի մտաւք եւ երկրպագելով սրտի
մտաւք նմին ինքեան Փրկչին՝ առաջի նորա զպաղատանսն առնել:
[2]Իսկ առաջի Աստուածածնին պատկերի կամ որ ի սուրբ եկեղեցիս քան-
դակեալք իցեն, Որդւոյ նորա երկրպագել եւ աղաչել զծնողն ի բարե-
խաւսութիւն: [3]Այլ եթէ զառաքելոցն եւ զմարգարէիցն եւ զյայտնեաց
վկայիցն տեսանիցեմք յեկեղեցիսն եւ ի վկայարանս զդրոշմեալ կեն-
դանագրութիւնս, աւրհնել պարտիմք զայն, որ ընտրեացն զնոսա. եւ
նմա երկրպագելով՝ գոհանալ զսիրոյն առ ազգս մարդկան, իսկ զսոսա ի
բարեխաւսութիւն ածել, այլ ոչ նիւթապաշտ եւ պատկերապաշտ լինել:
[4]Բայց զհայհոյիչսն, զանարգիչս այնպիսի պատկ//երաց յիմարս կար- 225ա
դասցուք եւ շամբչեալս, որք եւ յարձանս ամբարշտաց գրեսցին: [5]Են
եւ անյայտք ոմանք սուրբք, որոց զպատկերսն բերեն տունք եւ տախ-
տակք եւ անդրիանդք: [6]Առաջի նոցա ոչ համարձակ առ Տէր աղաւթել,
վասն որոյ երկբայութիւն է, այլ զորս անուանենն նոքա սուրբս, որոց
հերձուածն եւ պղծութիւնն ցարդ եւս յայտնի է, զնոսա նզովել եւ ի
բաց փախչել. «Եթէ մեք,— ասէ,— կամ հրեշտակ յերկնից կամ այլ ոք
աւետարանեսցէ ձեզ աւելի, քան զոր առէքն, նզովեալ լիցի»†: [7]Բայց
բազմութիւն պատկերաց ոսկեղինաց եւ արծաթեաց եւ այլոց նիւթոց,
զորս չրջեցուցանեն ընդ ինքեանս կամ ի տունս հասարակաց, ոչ հա-
ճեցայ, մանաւանդ զաննշանից ոմանց: [8]Էր ժամանակ, զի հպարտա-
ցան կենդանագիրք ի վերայ գրչաց Գրոց Աստուծոյ եւ պատմութեանց
այլոց, որպէս թէ նախապատուագոյն իցէ նոցայն արուեստ, քան զգր-
չաց: [9]Զի դուք, ասեն, զբանս գրելով ի լսելիս ածէք ի հին ինչ իրաց,
իսկ մեք աչաց յայտնի կացուցանեմք հաւատարմագունիցն զգայու-
թեանց եւ իմաստասիրի՝ զիրագործութիւնս եւ զպատճառս նոցա: [10]Իսկ
սոքա // զընդդէմսն վիճէին՝ իրաւաբանելով բազում իրաւք. եւ եղելոյ 225բ

* *լուսանցքում՝ ԺԸ*
† *Գաղ. Ա 8–9*

ժողովոյ եւ քննութեան առաւել ցուցաւ գրչութիւն Գրոց: [11]Յայնմանէ ոմանք պատճառս առեալ՝ անարգէին զամենայն պատկերս՝ անդիտանալով զպատճառսն, որք եւ անարգեցան իսկ: [12]Իսկ դու ըստ տուեցեալումդ վարեսցիս առ տէրունականն եւ առ սրբոցն կենդանագրութիւնս, իսկ զանսրբոցն անարգ եւ խոտան համարեսցիս, բայց զերկբայելիսն ո՛չ պատուել եւ ո՛չ անարգել. եւ վասն բազմութեան պատկերացն գրաւչելոց առ այժմ լուռ եղէց:

<XVIII>. [1]Ի թիւս երկուց քուէից առանձնակաց գլխաւորեալ զհարցուածսդ բաժանեցի, որք են միանգամայն եւ քառանկիւնիք եւ քառանկիւնոյն երրորդք ի միակէ, որոց իւրաքանչիւր ոք զաւրութիւն ունի հաճելի՝ երբեակն վասն լին գոլոյ եւ տատրսկեալ եւ հոծ՝ մէջ ունելով եւ սկիզբն եւ վախճան, թէեւ այլ բանք են սորա: [2]Իսկ քառեակն հաստատաչափութեան ի ձեւսն սկիզբն եւ առաքինութեան սահման եւ չափ կատարելագունին՝ ծնող տասնեկին թուոյ, տարերց եւ յեղանակաց
226ա եւ ի բազմաց գոյացեալոց նիւթականաց, // որքանութիւն եւ անբանից կենդանեաց կատարելոցն, ասեմ, ընթացից գործի, զի զայլսն թողից: [3]Իսկ քուէային առաջին տասնեկին՝ դրացի իններորդ կարգի եռանկիւնոյն թուոյ ԽԵ-ին, որ քաջայարմարն է ի ծնունդս մանկանց գոյացուցիչ, որ եւ երիցսն երիւք ճոխանայ եւ եռապատկեալ՝ ծնանի զքսան եւ զեւթնն՝ զերրորդն քուեայ եւ զչորրորդ եւթնեակ, բայց վասն եւթանցն մերձակայ ժամս ոչ ունի բնախաւսել:

<Գ>

ՆՈՐԻՆ ՎԱՄՆ ՄԱՍԱՆՑ ՊԱՏՈՒՈՅ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՎԱՄՆ ՊԱՏԿԵՐԱՑ ԴԱՐՁԵԱԼ

I. [1]Յանտեղիսն ճարտարագոյնք եւ հանճարեղք յանբանութիւն ոմանք խառնակել զպարզագոյնս յիրաց եւ ի բանից ոչ վեհերին եւ զզանազանութիւն ընտրելեացն այնքան չփոթեն անարգաբար, մինչ զի ոչ դիւրատես գոլ եւ ճաշակելոյ յիմաստութենէ, բազում անգամ եւ զաստուծոյսն իսկ կամ խառնակեն եւ կամ ընծայեն արարածոց, որոց ոչ դժուարին ինչ է զեղանելի ոմն յանեղ բնութիւն Երրորդութեանն յաւդել եւ ի կատարեալն զանկատարն: [2]Քանզի ոչ այլ ինչ, քան եթէ զայս
226բ աւրինադրեն, // որք ի մարդ բնակիլ Բանին, այլ ոչ մարդ լինել աւանդեն, որք զմիոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յերկուս զտնաւրի-

նականս բաժանեն եւ զատուցանեն գործ եւ բան, զոմանս անախտանալի Բանին եւ բնութեամբ Որդւոյն Աստուծոյ եւ զոմանս ախտակրի մարդոյ եւ չնորհաւք որդւոյ սահմանեն, զԲանն մարմին եղեալ ոչ խոստովանողք, այլ՝ ի մարդ բնակեալ, որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց: [3]Արդ, թէպէտ եւ հոմանուանաբար գոյացութիւն ասի ամենայն, սակայն իսկ տիրապէս էութիւն արարչականն, ըստ որում եւ էն ասասցի, իսկ այլք երկրորդ եւ երրորդք եւ որ քան հեռաւորք խոստովանեսցին ընդ նոսին, եւ պատիւն եւ պաշտաւն հարկաւորապէս մասնաւորեսցի, որպէս զի արարչականն միայն զծայրագոյնն տարցի պաշտաւն եւ երկրպագութիւն եւ զամենայն բարեպաշտիկ պատուոյ գեղեցկակարգ սպասաւորութիւն, որք անկարողութիւն է զանազանապէս լինելոյ բնութեան, վասն զի արժանաւորութեանն յոյժ դժուարին է հանդիպիլ, զի մի՛ ասացից անհնարին: [4]Իսկ արարեալքն զատցին ի կենդանի եւ յանշունչ, // անշունչքն զպէտս իւրեանց պաշտեսցեն հան- 227ա
դերձ զգայական եւ անբան կենդանեաւք, քանզի ոչ վասն նոցա է խնդիրս, բայց կենդանին, զի բաժանի յանբան եւ ի բանաւոր: [5]Ստորաբաժանեսցուք դարձեալ զբանականն յանմարմին արարեալ եւ ի մարմնաւոր, եւ ի սոցանէ նախ առաջին, զի ըստ կարգի է, վասն հրեշտակաց տեսցուք՝ թողեալ զանսուրբսն: [6]Արդ, նոքա թէպէտ եւ վեհագունի քան զմարդիկ վիճակեցան եւ բնութեան եւ պատուոյ, սակայն պաշտաւն եւ երկրպագութիւն առնուլ յումեքէ ոչ գրեցան: [7]Զի Աբրահամ վասն հիւրասիրութեան ընդ առաջ ընթացեալ՝ երկրպագեաց այլ Մի-ումն, որում արժանն էր, առ որ եւ զբանսն առնէր, իսկ Ղաւտ նոյնպէս զաւտարասիրութեանն լնոյր կանոն երկրպագելովն եւ ոչ զպաշտելոյ ուրուք հատուցանէր արդարակս, նաեւ՝ յորժամ մատուցանել ոմն ումեմն հրեշտակի կամեցաւ զոհ, ոչ հաւանեալ յանձն առ որում մատուցանէր, այլ ասէ. «Տեա՛ռն մատուսջիր»: [8]Եւ Դաւիթ, թէպէտ եւ զհրեշտակն ետես, այլ Աստուծոյ զերկրպագութիւնն, որում զողջակէզն մատուցանէր, իսկ Զաքարիա եւ Եզեկիէլ բնաւ ոչ գրեալ է, թէ երեւեցելոց սրբոցն զուարթնոց կրկնեցին ծունր, եւ Դանիէլ // խոստովանէր Մի- 227բ*
ոյն զկարիս բնութեանս ի տագնապելն, լինէր Գաբրիէլի եւ զ՚առ յապայսն ուսանել դիմէր, եւ ոչ վասն Հեղիու կամ Իսրայիղի կամ միոյ ուրուք ի տեսանողացն գրեալ է այնպիսի ինչ: [9]Այլ եւ յետ այսորիկ ի յայտնել ճշմարտութեանն մի՞թէ Պետրոս զսքանչելին կամ Փիլիպպոս

* *Տես Դատ. ԺԳ 16:*

կամ քրիստոսասէր կանայքն մատուցին ինչ պաշտաւն կամ երկրպա-
գութիւն երեւելոցն հրեշտակաց: 10Եւ եթէ կենդանի եւ սուրբ զաւրու-
թեանցն ոչ տուեալ է պաշտաւն եւ երկրպագութիւն, զի՞նչ ասասցեն,
որք պատկերս իմն նոցա եւ որակութիւնս ստեղծանեն անձեւ եւ անո-
րակ բնութեանց եւ պաշտաւնատարք լինին. ոչ ընկալաւ զայս ի հարցն
Եկեղեցի, բայց վասն մարդկան գրեալ է, զի երկրպագեցին միմեանց, եւ
սուրբքն իսկ, այլ ո՛չ իբրեւ Աստուծոյ, զորոյ զպատճառն եթէ ուսցուք
հաւաստեաւ, ո՛չ սխալեսցուք: 11Աբրահամ երբեմն որդւոցն Քետայ,
վասն ըստ արժանի պատուելոյն զնա եւ ասելոյ թէ՝ «Թագաւոր յԱստու-
ծոյ եւ ի միջի մերում յընտիրս չիրմաց մերոց թաղեա՛ զմեռեալ քո»*, ի
վերայ երեսաց իւրոց երկիր պագանէր՝ զանչափ սէրն առ մարդիկն եւ
զխոնարհութիւն բարուցն յայտ առնելով, միանգամայն եւ շնորհհա-
տոյց լինէր: 12Իսկ Յակոբ եւթն անգամ երկիր եպագ Եսաւայ, զի գէթ
այնու զխստութիւն եւ զդառնութիւն եղբաւրն սրտի կակղացուցեալ
228ա քաղցրացուս//ցէ եւ մոռասցի զզրկումն աւրհնութեան եւ անդրանկու-
թեան ի մտաց Եսաւայ, եւ ինքն կանամբք եւ մանկտով <ի> սատակ-
մանէ ապրեսցի: 13Նաեւ Մովսէս, ընդ որում բերան ի բերան խաւսե-
ցաւ Աստուած եւ ոչ տեսլեամբ քնոյ եւ հիացմամբ, որպէս այլոց մար-
գարէիցն, որոյ եւ երեսքն պայծառացան փառաւք Տեառն, որ եւ հաւա-
տարիմն էր յամենայն տան նորա, իբրեւ զծառայ աներոյն իւրոյ մա-
դիանացւոյ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց, զի գիտէր զայն իբրեւ
մարդոյ մատուցեալ եւ ոչ որպէս թէ առաւել ումեք, եւ զանբարտաւա-
նութեան այտումն նախատէր այնու, եւ թէ պատուեցելոց յԱստուծոյ
եւ բարձրագունից առաւել ընտանի է խոնարհութիւն: 14Ուսուցանէր եւ
Նաթան մարգարէ, մարգարէին Դաւթայ երկրպագէր՝ զիշխանութեանն
պատիւ հատուցանելով, սրբոցն պատուագիր լինիլ միմեանց բարւոք
գոլ եւ գովելի յոյժ քարոզելով: 15Ըստ որում եւ ինքն իսկ Տէր եդ աւ-
րէնս՝ մեծին լինել ամենեցուն ծառայ եւ պաշտաւնեայ եւ առաջնոյն՝
վերջին, զինքն յարացոյց ի միջի եդեալ եւ ուսումն կենդանի, երբեմն
թէ՝ «Եկն Որդի Մարդոյ ո՛չ պաշտաւն առնուլ, այլ պաշտել»† եւ երբեմն՝
«Ես Տէրս եւ վարդապետս եմ,— ասէ,— ի միջի ձերում իբրեւ զպաշտաւ-
նեայ»‡, որ եւ մտադիւրն ծառայեաց բազմաց ըստ մարգարէութեանն:

---

* Ծն. ԻԳ 6

† Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45

‡ Յովհ. ԺԳ 14

// II. [1]Արդ, սոքա եւ այսպիսիք ինչ առ ի սրբոցն կատարեալ եւ 228բ
ասացեալ զախտ հպարտութեան առողջացուցանել ախորժելով գրեցան,
բայց զգերեզմանս կամ զպատկերս ոմանց, թէեւ սուրբք իցեն, պաշտել
ոչ հրամայեցաք, եւ ոք ցուցանել ոչ կարէ: [2]Պատուել զսուրբ նշխարս
երանելեացն ոսկերաց բարւոք սովորութեամբ եւ գեղեցիկ աւանդու-
թեամբ ուսեալ է Եկեղեցի եւ աղաչել զնոսա ի բարեխաւսութեան առ
Տէրն իւրեանց, այլ փոխանակել զնոսա ընդ Փրկչին եւ Տեառնն անսը-
բութիւն է: [3]Եւ ոչ ինքեանք վկայքն ճշմարտութեան յանձն առնուն եւ
ներեն զանպատուութիւնն եւ զթշնամանս, զի այսպէս արդարեւ վարկա-
նիմ զաստուածացուցանելն, որպէս ընթեռնումք յերկրորդ գիրսն Ղու-
կասու վասն Պաւղոսի եւ Բառնաբայ ի լիւստրացւոց քաղաքին զպա-
տուելեացն եւ լաւաց: [4]Արժան է իմանալ եւ որոշել զզանազանութիւն
աննենգութեան աջողակ մտաւք եւ իրաւանց զպատիւն տալ, զի մի՛ ի
տգիտութենէ վնասեալք՝ անզուգութիւն եւ աննմանութիւն եւ այլայ-
լութիւն ի զուգութեան եւ ի նմանութեան կամ ի նոյնութեան երեւե-
ցուցանել աղճատիցիմք, այսինքն՝ առանց ընտրութեան եւ իմաստու-
թեան զմեծ գործ բարեպաշտութեան վճարել կարծելով՝ զանբաղդատա-
կան պատիւ // Աստուածութեանն ծառայից նորա կամ ումեք յարարա- 229ա
ծոցս տայցեմք, եւ ոչ զԱրարիչն եւեթ, այլ եւ զծառայս նորա պատուել
կարծելովն տրտմեցուցանեմք: [5]Զայս ասելով՝ ոչ զպատիւ սրբոյն կա-
միմ փոքր կացուցանել, քա՛ւ լիցի, զի լուայ ի Տեառնէ զասելն առ սի-
րելիսն իւր, թէ՝ «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ, եւ որ զիս անարգէ,
զԱռաքիչն իմ անարգէ»*, այլ զոմանց պատկերապաշտաց զչարամտու-
թիւն եւ զսխալանս կամիմ զգաստացուցանել: [6]Արդ, ի պատուելեացն
է ինչ, որ վասն ինքեան է պատուելի, որպէս ինքն Աստուած, զի ըստ
բնութեան ունի զանճառելի եւ զանիմանալի պատիւն, զորոյ զպաշ-
տաւն եւ զպատիւ ոչ վայել է տալ ումեք, եւ է ինչ, որ վասն այլոյ, որ-
պէս տէրունական եւ սուրբ նշան խաչին, [7]քանզի ինքն ըստ ինքեան ի
սկզբանն տանջարան եւ մահու գործի եւ ոչ անաւթ երկրպագելի էր. եւ
վասն զի Բանն Արարիչ մարմնովն չարչարեցաւ ի նմա, որով ազատե-
ցաք ի կրկնատեսակ մահուց, երկրպագեմք նմա յաղագս պատճառին՝
զանպատմելի շնորհացն երախտիս Փրկչին մերոյ նովաւ յիշատակեալ
ի խորհուրդս եւ ի դէմս, երկրպագեմք առաջի նորա եւ թագաւորակա-
նի Սրբոյ Երրորդութեանն՝ գոհանալով զՀաւրէն փառաց, զի այնքանս

* Ղուկ. Ժ 16

229բ // սիրեաց զմեզ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ նովաւ, իսկ նա մա-
տոյց զինքն պատարագ ի հոտ անուշից Հաւր իւրում ի ձեռն յաւիտե-
նականի Հոգւոյն՝ ըստ Պաւղոսի ձայնին՝ փոխանակ մեր եւ վասն մեր
մեռանելով*: 8Իսկ զսուրբս, վասն զի յաղագս չարչարանաց Տեառն իւ-
րեանց չարչարեցան եւ ընտրեալքն Աստուծոյ, վկայարանաւք եւ յի-
շատակաւք պայծառապէս մեծարեմք զնոսա ի փառս Տեառն եւ ի փր-
կութիւն Եկեղեցւոյ: 9Եւ այս յայտնի ունի զպատճառն. պարծիմք ազ-
գակցաւքն, նոցայնովքն բերկրիմք արեամբք, զՁաւրացուցիչն փա-
ռաւորեմք, տանջանացն պատմութեամբք հեշտանամք, առ Տէրն մեր
զմտերմութիւնն ցուցանեմք՝ զծառայսն նորա պատուելով, մասնաւո-
րիմք նահատակութեանցն ի ձեռն սիրոյն եւ աշխատութեանցն, զհրա-
հանգս առ ի նոցանէ վարդապետեմք բարեպաշտութեանն Քրիստոսի,
յոսկերս նոցա երկիրպագանել՝ բնութեանս աւգնել աղաչեմք, ազգին
վերակացու լինել, զպաղատանս փոխ տալ, մաղթանաւք զԱրարիչն
հաշտեցուցանել, գլորելոցս ձեռն տալ եւ կանգնել, համարձակութիւն
հայցել ամաչեցելոցս եւ տկարութեան՝ զաւրութիւն, դանդաղանաց լք-
230ա ման՝ ջիղս եւ կազդուրութիւն, բժշկութիւն իշխ//անականին ի վիշա-
պին խածմանէ, չարեաց եւ չարին ընդդիմակացութիւն: 10Է երբեք, զի
եւ հարկաւորաց մարմնոյ պիտոյից անկարաւտութիւն եւ եթէ այլ ինչ
շուրջանակելոց դժնդակութեանց զհանդարտութիւն եւ զփրկութիւն եւ
բիւրս գտանել առ ի Տեառնէ վասն նոցա բարութիւնս եւ խնդրոյ նո-
ցա ժողովիմք, նոյնպէս եւ յորժամ զկենդանագրութիւն նոցա պատկե-
րաց տեսանեմք յեկեղեցիս եւ ի վկայարանս՝ երկրպագելով Աստուծոյ,
զճգնութիւն նոցա միջնորդ եւ աւժանդակ մեզ առ նոյն ինքն մատչելոյ
առնումք՝ աղաչել նոքաւք, որոց գծագրութիւնն, եւ ոչ եթէ գունովք
երանգոցն եւ կամ զինչ եւ նիւթովք եւ իցէ, զՏէրն մեր եւ զԱստուած
ի հաշտութիւն ածել: 11Այլ զյաճախութիւն պատկերաց աւտարոտուց
ոմանց եւ անծանաւթից՝ անուանացելոց սրբոց, մանաւանդ՝ որոյ զկ-
նի հակառակք Քրիստոսի ժողովոյն Քաղկեդոնի, ոչ արժանի եւ տեսա-
նելոյ անգամ արասցուք: 12Լսեմ զոմանց առ Եւքսինոս ծովու եզերքն
պոնտացւոց, թէ աստուածացուցին զնշան խաչին՝ զնոյն ինքն զխա-
չեալն մեծապէս անգիտանալով, եւ աղճատանաց իմն համբաւէ զնո-
ցանէ՝ խնջոյս եւ խաղս եւ արբեցութիւնս՝ լի անառակութեամբ եւ զե-
230բ խութեամբ, // այլ եւ զինուք, որ մշտապէս խաղս հանդերձ արեամբ եւ

* Տես Հռոմ. Ե 9:

սպանութեամբ եւ յամսատաւնս կատարեն: 13Եւ զարմացայ ընդ խորամանկութիւնն Բէլիարայ, թէ զիա՞րդ հնարեցաւ ընդ բարձչի, կորուսչի հեթանոսութեանն ուսման եւ աւանդութեան խառնել զհեթանոսութիւն, եւ զտաւրացւոցն կամ զլակոնացոցն մարդախանձութիւնն ի հեզութեան վարդապետութիւնն մեր յամենապարկեշտ սպրդեալ ի ներքս եմոյծ եւ յանուն Քրիստոսի: 14Զատելին նմա գործեն զ Դեմետրի եւ Ափրոդիտեայ, ամաչեմ ասել, խորհրդատաւնս կատարեն եւ զ Ատտինի, այսինքն՝ զ Դիովնիւսա, կափարսն եւ գործս՝ իբր աւրինաւք հաստատեալ ունին այնր կողման բնակիչք:

III. 1Արձակեցաւ ստուգապէս վիշապն եւ քարշէ ի ստորեւ զաստեղս*: 2Ժամանակ յայտնութեան որդւոյն կորստեան եւ անաւրէնութեան մարդոյն†, որպէս թուի, մերձեցաւ, որում յոլովս, ըստ Գրոց վկայելոյ, տեսանի նշանս, բայց զի արտաքոյ այժմու բանիս եւ գործոյ մեծի է, լռեսցուք եւ ի կարգ բանիս երթիցուք: 3Երկնչիմ զառաւելութիւն սիրոյ պատկերագործութեանն, գուցէ ի բանսարկուին խաբէութենէ արտաքոյ իրաւանցն, որպէս ահա ճառեցաւ վասն ոմանց հիւսիսական//աց մարդոց, անկանիցին: 4Քանզի սովորութեան յամումն ի 231ա
բարս գտեալ՝ ի բնութեան անկանի կարգ եւ տայ խորհել աւտարաւտիս իմն եւ այլանդակս՝ որպէս բարւոքն զ՚առ ինքն յանկագոյնսն, վասն զի եւ կռոցն պաշտաւն ոչ մերկ ընդ մերկ վաղվաղակի ի ներքս եմուտ յաշխարհ, այլ, ըստ որում գրեալն է, տարաժամ սգով թախծեալ՝ հայր վաղամեռիկ որդւոյն արար պատկեր: 5Եւ ոմանք ի թագաւորաց նախնեաց, փառամոլութեան ախտիւ գերեալք, ըստ քաղաքաց առնապատկերս զիւրեանցն ի վերայ սեանց բարձրագունից եւ նշանաւոր տեղիս բարձանցն տային կացուցանել՝ հրամայելով պատուել ներբողինիւք, երբեմն եւ՝ նուիրաւք խնկոց եւ տերեւովք ոստախիտ ծառոց: 6Եւ յայնմանէ եւ յայսպիսի անպատեհ եւ անկարգ սովորութենէ եկին մարդիկ ի պաշտաւն դից եւ դիւցազանցն անուանելոց, յոր հայեցեալ անհասանելի եւ անճառ Աստուծոյ իմաստութեանն՝ պատուէր տայր Մովսէսիւ տանն Իսրայէլի մի՛ ամենեւին պատկեր ինչ զուրուք դնել ի քաղաքս իւրեանց կամ նկարել յորմս տանցն, թէպէտ եւ զերկուս քերովբէսն ոսկիս զայն այլոյ խորհրդոյ ծայրագունի հրամայեաց առնել եւ կանգնել առ տապանակաւն, զի թէ զպատկերաւ աւձին պաշտեաց Իս-

* Տես Յայտ. ԺԲ 4:

† Տես Բ Թես. Բ 3:

231բ բայէլ, // զոր եւ Նէեսթա անուանեցին, յիրաւի զգուշացուցանէր զնոսա Տէր ի ձեռագործ պատկերաց: [7]Բայց մեզ զսրբոցն պատկերս, ըստ որում ասացաւդ վերագոյն, չափով սրբութեան եւ յաղագս պատճառին պատուել ի գովեստ Աստուծոյ եւ յիշատակ քաջութեան նոցա, այլ ոչ որպէս արտաքոյ սահմանին հեղուլ մտաւք: [8]Իսկ զտուեալն ի Տեառնէ իւրն անպարագրութեան ամենասուրբ եւ աստուածային պատկեր բարեպաշտին Աբգարու՝ երկրպագել նմին՝ որպէս ինքեան մարմնացեալոյ Բանին, եւ զնոյն նկարագրեալս յեկեղեցիս ի մարդկանէ տեսանելով եւ երկրպագելով Քրիստոսի՝ անկանիլ առաջի եւ աղաչել վասն փրկութեան զայն, որ ի չափ եւ ի նմանութիւն ծառայի վասն ծառայից գոլ անչափ խոնարհութեամբ արժանի արար. [9]այլ զսրբոյ եւ զաստուածածնի Կուսին ամենաշնորհ պատկեր՝ զտուեալն, որպէս ասի, հաստատութեամբ խնդրողացն զայն երանելի առաքելոցն, առաւել ամենեցուն սրբոցն համարել եւ երկրպագութեամբ՝ որպէս զՄաւր Տեառն պատուել զտիպ պատկերի՝ աղաչելով լինել բարեխաւս վասն մեր առ որ մարմնացաւն ի նմանէ վասն թշուառութեանն մերոյս բնութեան եւ առ Ծնող Բանին եւ Միածնին Որդւոյ, որ առաքեացն զնա ի խնդիր մո-
232ա լորելոյ բնութեան մարդկութեանս, եւ առ Հոգին // Սուրբ, որ աւետարանեցաւ նմա ի Գաբրիէլէ ի սպաս եւ ի յարդարումն անճառելի մարմնաւորութեան Բանին:

IV. [1]Արդ, ցուցաւ ասացելովքդ, թէ այլ պատիւ է այնր, որ ըստ բնութեան ունի զանզուգական փառսն եւ ճշմարիտ թագաւորութիւնն, որ է Երանելին եւ միայն Հզաւրն, եւ այլ պատիւ՝ առ ի նմանէ եղելոցն: [2]Եւ ի նոսա դարձեալ զանազանութիւն, որպէս՝ բնութեանց եւ պատուոց, իսկ ի մարդկանէ սրբոցն՝ չափ պատուոյ եւ արժան, եւ թէ զիա՞րդ զսուրբ ոսկերս նոցա պատուեսցուք, եւ կամ թէ զո՞րս արժան է ընդունել կենդանագրութիւնս եւ զո՞րս՝ ոչ, եւ թէ՝ ո՞րպիսի զանազանութիւն ընկալելոցն է եւ վասն Տէրունական պատկերին մտածութեան եւ սրբոյ Աստուածածնին, եւ վասն այդոցիկ շատ լիցի այսքանն: [3]Բայց կարեւոր համարիմ յիշել եւ վասն որոյ բազում անգամ կրեն ի միմեանց մարդիկ երկրպագութիւն, զի միտք բազում անգամ ինքնին մտեալ՝ խնդրեն վասն այսր, եւ թէ արժան իցէ կամ ոչ՝ համարաձակապէս առնել զվճիռ կալան: [4]Բայց ինձ այսպէս բարւոք գոլ թուի, զի թէ էր արդեաւք հնար ոչ այլ ումեք երկրպագել, բայց Աստուծոյ միայն, հաճեալ եմ յոյժ. այլ վասն զի տեսանեմ հին զիրացդ պատմութիւն, որպէս ցուցաւ, եւ ան-
232բ հնարագոյն զխափանումն, // յաւելցուք զայս, եթէ իմաստութեամբ

պարտիմք եւ զգործն եւ զիրացն քննութիւն առնել: [5]Եւ է իսկ այսպէս, զի Աստուծոյ՝ որպէս միայնոյ եւ արարչի եւ թագաւորի եւ մեծի, ամենայնին պատճառի եւ պատճառաց արարչագործի, նախախնամողի եւ կրողի, զամենայն զպաշտաւնն եւ զերկրպագութիւնն առանձնական մատուցանել, որպէս արարած՝ Արարչի: [6]Զայլ ամենայն բարութիւնսն առ մեզ եւ վասն մեր թողից, յորս ոչ կարէ ումեք մտաւք ըստ արժանին հուպ երթալ եւ ոչ ճառել: [7]Իսկ իշխանաց ազգակցաց ոմանց՝ իբր բռնաւորաց առ երկիւղի, զոր ոչ ընդունիմ հաւանել, եւ այլոց՝ որպէս երախտաւորաց կամ պատիւն ինչ ունողաց, կիսոց՝ վասն սիրոյ եւ մտերմութեան, եւ դարձեալ ոմանց՝ վասն զԱստուած յինքեանս ունողաց, զոր մանաւանդ գովեմք, ըստ որում Նաբուգոդոնոսորն երկրպագէր Դանիէլի, ի սոյն յարի եւ վասն խոնարհութեան գովելւոյ, որ յաղագս Քրիստոսի երկրպագէ եղբաւրն:

V. [1]Արդ, ի փառս Աստուծոյ եղեալ ամենայնդ եւ առանց վնաս ինչ առնելոյ յամենայն աստուածայինսն եւ յիրս առաքինութեան՝ հաճելի է, իսկ եթէ առ երկիւղի տանջանաց կամ սպանման յաղագս կրաւնից մերոց կամ պաշտաման բարեպաշտութեան // նախապատիւ զսնոտիսն արարեալ եւ զայն առնիցէ ընդ առ Աստուած, մահու չափ մեղուցելոցն դատաստանաւ է: [2]Տեսանեմ եւ այլ ինչ, ոչ հեռի յայսմանէ, ողբոց արժանի իրս, զի թղթոց բռնաւորաց եւ անշունչ պատկերաց նոցա սուտակասպասութեան աղագաւ, իսկ երբեմն եւ առ ահի անկեալ երկիր պագանեն, բայց մեր ամենայն ինչ պարկեշտութեամբ եւ ըստ կարգի եղիցի, որպէս զի ամաչեսցէ աշխարհ ի գնացից մերոց: [3]Եւ հայելով ի գործս մեր բարիս՝ մարդիկ յաւիտենիս փառաւորեսցեն զՀայր մեր յերկինս ընդ Որդւոյ իւրում Միածնի եւ ընդ Հոգւոյ իւրում Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

233ա

<Դ>

ՆՈՐԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՌ ՈՐՍ ՊԻՂԾ ԶՄԻՍ ՎԱՐԿԱՆԻՆ ԵՒ ԶԱՆԶԻՆՍ ՈՉ ԱՐԳԵԼՈՒՆ

I. [1]Նորք ոմանք փարիսեցիք եւ առանց դպրութեան այժմ ի մէջ մեր ընծայեցան, դժուարակիրս եւ ծանուցս զդիւրըմբերսն եւ թեթեւագոյնս ստեղծանելով յանձանց՝ բառնալ առանց աւրինաց հրամայեն, ոչ

միայն զի մատամբ ոչ կամին երթալ յայնոսիկ ինքեանք մերձ, այլ եւ
233բ գործել զանարժանս՝ զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, // աւրինաւոր
ինքեանց համարին՝ զգերան յակաս ոչ տեսանելով յիւրում: [2]Բամբասէ
եւ որ ոչ զդուզնաքեան ծանեաւ չիւղ, եւ ոչ միայն զի ոչ չիւղ, այլ եւ
սահման աստուածային եւ յԱստուծոյ առ արդարս եւ անարատս կար-
գեալ: [3]Անկեալք ի հաւատոց արհամարհեն զհաւատացեալս, զհիմնն
ոչ ունելով՝ կործանեալք ի հեղեղաց եւ հողմոց կամ, զիսկն ասել եւ ճշ-
մարիտ, առանց իրիք բնութեան ցողուն եւ փայտ ի կերակուր հրոյ ժո-
ղովեն, իսկ զհիմամբ հաստատեալս առանց վթարութեան եւ հերքելոյ
եւ սուղ ինչ նուազ չինող ոսկի եւ արծաթ եւ պայծառ քարինս քամա-
հեն փռնգալով: [4]Վասն զի պիղծ է յաչս ամբարշտի աստուածապաշտ,
եւ մոլեգնեալ անգիտանալով զանձն՝ զողջամիտ ոք ախտիւն նախա-
տէ, <որպէս> ծարաւի է արեան յԱբէլի՝ Կայէն:

II. [1]Արք քաղդէացիք չարախաւս զԱնանիանց եւ զԴանիէլին: [2]Սի-
բեմ, թէ ոչ գազանք եւ ոչ հուր պատերազմեսցին ընդ ատելիս ատե-
լեացն: [3]Բաղայամ անիծանել զԻսրայէլ յանդգնի, սակայն ոչ տուե<ա>լ
նմա լինի: [4]Եւ թէպէտ անիծանեն նոքա, Տէր աւրհնեսցէ, եւ զամաւթ
յարուցեալքն ի վերայ կրեսցեն, վասն զի ախորժեն զկուրութիւն, եւ
234ա լուսաւորութիւն խաւար նոցա կարծի, ոչ զան//գիտեն անլուսաւորք
անուանել զտեսանողս: [5]Եւ թէ այնպէս ի հաւատ վնասեալք են, սքան-
չանամ եւ ոչ մի վասն անառակութեան գնացից նոցա, քանզի որ ոչ
զինքնաշարժն ունիցի շարժող, զիա՞րդ ինչ ի պիտանեաց եւ ի կարգա-
ւորաց կարասցէ գործել: [6]Ո՞չ անզգամք զիմաստունս թշնամանեն, ո՞չ
անաւրէնք՝ զքաջաւրինաւք դաստիարակեալս, զբարեպաշտս՝ ամբա-
րիշտք, զարդարս՝ անիրաւք, զմաքրասէրս եւ զգաստս՝ վաւաշոտք եւ
գէջք, ագահք եւ կապեալք ուժգութեամբ՝ զողորմածս եւ զսփռողս աղ-
քատաց: [7]Քանզի զիա՞րդ ներհակք միաբանեսցին բայց ի տարերց: [8]Ո՞
զառաքեալս, ո՞ զմարգարէս, զմարտիրոսս, ոյք ոչ չարք եւ մեղաւորք,
հալածեցին եւ սպանին: [9]Զի եթէ զտանուտէրն, ո՞րչափ եւս առաւել՝
զընտանիս նորա: [10]Այլ խրախ լինիմ, զի յաղագս բարեպաշտութեան
վտանգիմ, թէպէտ եւ ոչ նոցա այսպէս երեւի, [11]վասն զի եւ որոց շր-
ջեալ են խելք կամ անապակաւ այլայլեալ, ըստ էութեան ոչինչ կարեն
տեսանել, բարբաջեն անզգայաբար եւ իմանան զյիմարութիւն, եւ ըստ
բանի թուեցեալքն նոցա ծիծաղելիք են առողջաց եւ զընութիւնն ամ-
234բ բողջ ունողաց: [12]Լուիցեն եւ ն//ոքա ի մէնջ զառաւել քան զհաւասարն
պատասխանիս՝ ոչ ըստ ոսոխասիրաց եւ վիճողաց, այլ զիրաւունս պա-

հանջողաց, ոչ յաղագս ատելութեան ընդդիմադրողաց, այլ զթիւրութիւն ընտրութեան նոցա ի դատաստան արդար ածողաց:

III. [1]*Արդ, զի թէպէտ եւ բազում ինչ առ ի մէնջ յաղագս բանի հաւատոյ ասացաւ հակառակ նոցա, դարձեալ գլխաւորելով փոքր ինչ իբրեւ զյիշատակարան ճառել ոչ աւելորդ ինչ, այլ յարմարական գոլ երեւի,* [2]*որպէս զի եւ յայսմ իսկ ուսանիցիմք՝ անհաւատարիմս զնոսա ի մեծամեծսն, ըստ որում եւ ի փոքունսն այնքան կարճամտաց եւ խորհրդով դուգնաքեայց յաստուածաբանութիւնս:* [3]*Զի զարմանք իցեն եւ առ այլս երեւել անհանճարաբար առդնիլ, ոյք ոչ զԲանն մարմին եղեալ, որ է մարդ ըստ ճշմարտութեան լինել խոստովանել յանձն առնուն՝ Յովհաննու հաւանելով:* [4]*Այլ մարդ զոմն՝ ապականացու եւ անկատար, ունայն ի փառաց Աստուածութեան, յառաջ գոլ ի Մարիամայ ստեղծանեն, մահկանացու միայն՝ ըստ մեզ, եւ չարչարելի, անխառն եւ անմիաւոր գերագոյին՝ ըստ բնութեան, մինչեւ չարչարեսցի խաչիւ ի մահ եւ գերեզման եւ յարուցեալ մարդ՝ փառաւորեսցի ապա Աստուածով: // [5]Իսկ ոմանք ի պատահելոցն գլորման եւ գայթակղութեան* 235ա
քարին եւ վիմի կարծելով լաւագոյն քան զնոսա խոստովանիլ, եւ յառաջ իսկ քան զխաչն ասեն Բանիւ զմիաւորութիւնն՝ ոչ ճշմարտապէս եւ ըստ բնութեան, այլ արժանաւորութեան հանգանակաւ իմն եւ չափովք, եւ զայս՝ կա՛մ նախակազմեալ յորովայնի, որումն համբակի, եւ կա՛մ զկնի ծննդեանն սքանչելոյ: [6]*Երկուց դիմաց կատարելոց եւ անճնաւորութեանց յարակցութիւն զմիաւորութիւնն զայն ասեն, զի թէպէտ ջանան թաքուցանել արուեստաւոր ճոռոմաբանութեամբ զերկուց դիմացն դաւանութիւն, այլ ոչ կարեն՝ ամենայն իւիք զնոյն զեկուցանելով:* [7]*Վասն զորոշեալ կամաց երկուց եւ երկուց բնութեանց եւ ներգործութեանց կամ կրից առանձին մարդոյ ճառք եւ տրամաբանութիւնք՝ զի՞նչ այլ, եթէ ոչ երկուս նշանակեն դէմս. խառնմանն եւ միաւորութեան յեղանակի գոլով անհմուտք՝ փորձին եղծանել զԵկեղեցւոյ ճշմարիտ աւանդութիւնս:*

IV. [1]*Արդ, ի նահատակաց բանին կշտամբեալք նոքա, առաւելապէս եւ՝ խոցոտեալք, թէպէտ եւ ոչ զգան՝ մեռեալք գոլով:* [2]*Առաջիկայս մեզ քննեսցի աշխատութիւն ինչ բարձրագու//նի եւ խորագունի:* [3]*Յայսոսիկ* 235բ
ոչ ինչ պիտոյանամք քաջայայտ ունել անմտութեանն զամբաստանութիւն ինքեան, զորոց եւ առաքեալ նախախնամաբար յաղագս իւրոցն Հոգւով Սրբով արտադրեաց զհակառակաձայնութեանն առ ինքն հերձուած՝ մարդոց ապականելոց մտաւք եւ ի հաւատս անպիտանից գոլ

գիւտ զայնպիս<ի> նորաձեւութիւնս: [4]«Այլ Հոգին Սուրբ յայտնապէս ասէ, թէ ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոց»*, ուրացութեան հաւատոց լինել ծնունդ՝ զխարդախ մտածութիւնն եւ զանաւրէն դրութիւնն զայնգունակ ասէ, դիւաց եւ մոլար հոգւոց անկրաւն եւ եղծեալ իմաստութիւն, [5]քանզի յարեալ՝ ի նոյն յաւելու ասել այսպէս. «Հայեսցեն յայսս մոլորութեան եւ ի վարդապետութիւն դիւաց՝ կեղծաւորութեամբ. ստաբանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց. [6]որ արգելուցուն յամուսնա<նա>լոյ եւ մեկնիցեն ի կերակրոց, զոր Աստուած հաստատեաց ի վայելումն հաւատացելոց, եւ ոյք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ. [7]զի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խոտան, մանաւանդ որ գոհութեամբն ընդունիցին, զի սրբի բանիւ Աստուծոյ եւ աղաւթիւք»†:

236ա V. // [1]Եւ արդ, ո՞չ յայտնապէս հակառակաբար ունին Հոգւոյն Սրբոյ եւ հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս. [2]զի եթէ հոգւոց մոլորութեան եւ դիւաց վարդապետութիւն ցնորականն այն իցէ վատթար եւ դառն ուսումն, չիք ի նոսա գիտութիւն ըստ Քրիստոսի, [3]քանզի՝ «Զի՞նչ հաղորդութիւն է Քրիստոսի ընդ Բէլիարայ, կամ զի՞նչ բաժին հաւատացելոյ ընդ անհաւատի»,‡ եւ թէ՝ «Ի վայելս հաւատացելոց եւ գիտակաց ճշմարտութեանն կերակուրք յԱստուծոյ հաստատեցան»§: [4]Թշնամանեն զԱրարիչն, ոյք զարարած նորա գարշեցուցանեն, հեռի եւ ինքեանք անկանին <յ>ուղիղ հաւատոց եւ ի ճշմարտութենէ: [5]Քանզի ասեն զբարին չար եւ ոչ բարի, զառաւել դժնդակս իբրեւ զաւրինաւորս եւ կանոնեալս ամենայն յաւժարութեամբ գործեն, զսահման ճշմարիտ հաւատոյ լքին, թողին եւ զարժանաւոր վարուց՝ իբրեւ զատելիս կամակարութեամբ առանց իրիք բռնութեան եւ ընդդիմութեան վնասեալք ի բանականն յոյժ, եւ հակառակաւքն զուարճանան:

VI. [1]Վա՛յ, որ դնէ զխաւարն լոյս եւ զլոյսն՝ խաւար, զքաղցր՝ դառն եւ զդառնն՝ քաղցր, զչարն՝ բարի եւ զբարին՝ չար: [2]Արդարե՛ւ, մոլորելոց են այսպիսի անխորհրդականութեան ընտրութիւնք եւ բանք:

236բ // [3]Հայեա՛ եւ ընդ միւս եւս զառանցութիւն մտաց նոցա եւ յիմարութիւն հոգւոց. ոչ է արգել նոցա եւ ոչ մի յաւուրց եւ ի ժամանակաց նո-

* Ա Տիմ. Դ 1
† Ա Տիմ. Դ 1–5
‡ Բ Կոր. Զ 14
§ Բ Կոր. Զ 14

քումբք կերակրովք զմայլել ամենայն չուայտութեամբ եւ անլիր ագահութեամբ, [4]եւ զորս գոհութեամբն մերձենան եւ աղաւթիւք յաւուրս երեւելիս եւ նշանաւորս, հաւատովք եւ վարուք պարկեշտք, հայհոյել ոչ պատկառեն: [5]Զի եթէ չար է ինձ, ընդէ՞ր քեզ բարի. եւ եթէ ինձ ի մեղս, վասն է՞ր քեզ յարդարութիւն: [6]Կամ մի՛ ուտեր, կամ մի՛ դատապարտեր, քեզ՝ բովանդակ տարոյն ժամանակ, իսկ ինձ՝ եւ ո՞չ մի աւր պայծառ եւ աստուածային, քեզ՝ առանց պատճառի, իսկ ինձ՝ ոչ եւ ի տկարութիւն: [7]Եւ ո՞ զայս որոշեալ սահմանեաց, զի՞նչ է հակառակ աւրէնսդրութիւնս. քեզ արբեցութեամբ եւ որովայնամոլութեամբ զեղխել եւ եղծանել զկեանս ի մանկութենէ մինչեւ ի կատարած առանց խղճի մտաց, եւ որ զաստուածայինն հանապազ իմաստասիրէ, նմա եւ ո՞չ մասն ինչ ի պատճառ կելոյ, թէ երբեք հանդիպեսցի ի բարւոք աւուր: [8]Յարենէ եւ ի մեռելոտոյ հրաժարել տուեալ է. «Զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցես», այլ զարիւն յերկիր հեղուցուս, քանզի «ամենայն շնչոյ կենդանոյ չունչ արիւնն իւր է»†, զոր եւ առաքեալքն Տեառն հաստատեցին // թղթովն՝ որ առ հաւատացեալս ի հեթանոսաց: [9]Քեզ ո՞ համարձակեաց ուտել զհեղձուցիկս արեամբ կամ յո՞րս թռչնոց եւ երէոց, ո՞ սպանդագործ քեզ զշունսն հրամայեաց, զի զխզելն ձեռաւք եւ խեղդանաւս կռելն լուռ եղէց, կամ զանմաքուր կենդանեացն ըստ աւրինացն անխտիր ճաշակս թողացուցի՞ն քեզ սպասաւորք բանին անծանաւթիդ եւ զաներկբայ մաքրոցն պէտս բացասահմանեցի՞ն ի ստոյգ //‡ բանին ընդունողաց: [10]Թողում զապականութեան վարդապետացն քոց խառնակ եւ անսուրբ կեանս եւ որքան ինչ այլ՝ մի՛ բաւական համարելով զ՚առ նոսա ի մէնջ յայլում ժամու ասացեալս: [11]Եւ միւս եւս, զի ոչ է դիտաւորութիւնն այժմու բանիս մեծ խնդիրն այն, սակայն ունիմ շնորհ հռովմայեցւոցն աւրինաց վերջնոց՝ սատակել իբրեւ զթշնամիս հասարակաց բնութեան մարդկան զխզիչս արականացն հրամայողաց:*

237ա

1ա

* *Ծն. Թ 4*

† *Ղեւ. ԺԷ 11, 14*

‡ *Ինչպէս արդէն ծանուցել ենք ներածութեան Ե գլխում, այս երկի սկզբից պակասաւոր մի հատուած հասել է մեզ ՄՄ N 777 ձեռագրով, որն, ըստ գրչի յիշատակարանի, ընդօրինակուած է Սարկաւագի ինքնագրից: Սա է սկիզբը ՄՄ N 777-ի հատուածի, եւ այստեղից սկսեալ՝ բնագիրը ներկայացւում է ըստ ՄՄ N 777-ի: Բնագրի վերջում տրուած են ՍՂ 504-ի (=Բն.) տարընթերցումները:*

1բ VII. // [1]Արդ, յայսպիսեաց եւ այնպէս խրատեալք՝ զպղծեալս աւ-
րինացն կենդանիս, որ ի ծովու եւ ի ցամաքի եւ յաւդս շրջին, ուտեն
առանց խտրութեան եւ մեզ զհրամայեալս եւ համարձակեալս անուամբ
սրբութեան յԱստուածոյ ի գործ համարին մեղաց: [2]Այլ ասեն, զի թէ-
պէտ եւ սուրբ է եւ աւրինաւոր, սակայն ոչ է արժան զձեւ պարկեշտու-
թեան եւ կրաւնաւոր ժուժկալութեանն ընկալելոց եւ որոշելոց ի սովո-
2ա րութենէ հասարակաց այլովք վարուք հաւա//սարեալ մարդկան: [3]Ասեմ
եւ ես զդոյն, եւ ոչ հաճելի է ինձ յայնպիսի կերակուրս շուայտութիւն
ոմանց, մանաւանդ կարողաց ուժով մարմնոյ եւ առողջաց յախտէ հի-
ւանդութեան, եւս առաւել մանկագունաց ի նոսա եւ կարաւտից թառա-
մեցուցանել ընդ ծաղկի մարմնոյն եւ զախտս բնաւորականս, եւ որոց
պարտն է արեամբ չափ պատերազմաւ կալ հակառակ մեղաց՝ միայն ոչ
2բ յայնպիսի կերակրոց եւ ի գինոյ զանձինս արգելլով, //այլ եւ յամենայն
փափկութենէ եւ յագեցմանէ դոյզն եւս կերակրոց: [4]Սակայն ոչ դատա-
պարտեմ զբարեձեւութեամբ մերձեցեալսն ի տկարագունից՝ իբրեւ ի
դեղ ցաւոց եւ ի պատճառ կելոյ, եւ ոչ բամբասեմ որպէս զգործաւոր
անաւրէնութեան եւ դժնդակագունի ապիրատութեան եւ ոչ տեղի որո-
շեմ զչարագործաց եւ ժամանակ երկայն ի ներքս ածելոյ զկնի եւ խառ-
3ա նելոյ ընդ եղբարս ի կցորդութիւն աղաւթից // եւ Սեղանոյն երկնաւո-
րի: [5]Իսկ դու յանըստգտանելւոջն չարապէս դատիս զիմսն եւ պարսա-
ւեսս դառնութեամբ, որպէս որոց ոչ գուցէ փրկութիւն եւ դեղ բժշկու-
թեան: [6]Բայց զքոյսն, զի մի՛ ասացից զկողման չարին կամ ձախու, զմա-
հու չափ ի մեղանչականս ե՛ւ առ Աստուած, ե՛ւ առ ընութիւն վաղվա-
զակի առանց եւ դոյզն միոյ ժամանակի որոշման մերձեցուցանես յա-
3բ նուանեալն քո սեղան, խառնակ եւ շփոթեալ հացին եւ բաժա//կին ըն-
դունակ լինել արժանի առնես: [7]Թուի ինձ՝ գիտելով, թէ ոչ ի դատաս-
տան անձին առնու զարհամարհեալ կերակուրն: [8]Զի զոր այպանեցերն
թշնամանելով՝ բամբասելք եւ թշնամանեալք կերիցեն եւ արբցեն,
զապականեալն՝ ապականեալք, եւ զարտաքինն կանոնաց Եկեղեցւոյ՝
աւտարք առաքինութեան վարուց, նախատիչք Քրիստոսի՝ զնախա-
4ա տեալն: [9]Ո՛վ ամբարշտութեանն. // զիա՞րդ ոչ ակն ածեն ծաղր առնել
զխորհուրդն մեծ եւ դողութեան արժանաւոր, զիա՞րդ եւ ոչ յանձանց
տան զիրաւունս, ուստի՞ դիմեալ սպրդեաց մտանել ի ներքս անշիջա-
նելի ճարակ չարի այսր հրդեհութեան, յորպիսի՞ յանդգնեցան մարդիկ՝
մանկունք չարին, աւտար առաւել եւ նորաձեւ ամբարշտութիւնս: [10]Եւ
4բ քոյքն այսպէս, վասն զի համառաւտել տեղիս պահանջէ: //[11]Իսկ մարդ-

կաւրէն ինչ ոք յիմոցն ախտացեալ՝ արժանաւոր բժշկեալ դեղովք լի-
նի, քանզի ունին զսկիզբնն կենդանութեան, ոչ խսպառ մեռան, թէ ոչ
բժշկեսցին. եւ ոչ խաբէութեամբ կեղծաւորին մտանել՝ ցուցանելով զին-
քեանս յԵկեղեցւոյ գոլ՝ ոչ ելով: [12]*Այլ զուսումն առաքելական ի վարս*
եւ ի կրաւնս անշարժ ունելով՝ հնազանդին լծոյ ապաշխարութեան, ողբ-
բան, խոնարհին, տրտմին ընդ Դաւթայ, զաւրհանապազ ընդ Պե//տրոս- 5ա
սի լան դառնապէս, ցուցանեն զփտութիւն վիրացն զթածի Բժշկին, ոչ
կան ի բաց, մինչեւ առնուցուն զնեխուածոցն հաստատուն առողջու-
թիւն, երկասէրք են, աշխատին առ եւ զսպիսն ջնջելոյ, ոչ յանդգնին
մտանել, մինչեւ լցցի ժամանակն սահմանեալ: [13]*Նաեւ յայնժամ եւս ի*
խղճէ մտաց յաղթահարեալք բազմաց ստգտանելով զանձինս՝ յորոշ-
մանն մնալ աղաչեն, երկնչին, գուցէ ոչ իբրեւ զձիւն սպիտակացան, // 5բ
այլ եւ ոչ ոմանք իբրեւ զասր եւ զկտաւ, թէպէտեւ յոլովս վաստակե-
ցին: [14]*Եւ յորդորեալք ի վարդապետաց՝ ողոքեն մաղթանաւք զնոսա*
տեղի տալ աղաչանացն. [15]*«Գիտակցութիւն մտաց ո՛չ,_ ասեն,_ համար-*
ձակեցուցանէ, թո՛ղ տառապեցայց առ դրունս Շնորհողի ստուգապէս
*մաքրութեանն. <մեղա՛յ, զի քնով դանդաղիմ>**, *չիշխեմ վաղվաղակի*
յակն անկանել որում զայրացուցին, զարհուրեալ եմ յարդարադատու-
թենէն, թէպէտ եւ գիտեմ զնա ող//որմած»: [16]*Եւ զի մի՛ անհաւանք եւ* 6ա
անհնազանդք առ հարս ցուցցին, հազիւ ուրեմն զդէմս խոնարհեցու-
ցանելով յանձն առնուն մտանել, սակայն եւ ոչ յետ այնորիկ յանհոգս
եղեալ խրախանան մտաւք եւ մարմնով՝ որպէս ի բաց վճարեալք յեր-
կիւղէ տանջանաց: [17]*Այլ զմնացեալ եւս նշխար կենացն յաւելուածով*
ճգնութեան Քրիստոսի ընծայեն. զայն՝ բժշկութեանն վարձ Բժշկին,
զայն՝ շնորհակալութեան // նուէր եւ պատիւ Ընդունողին: [18]*Իսկ սահ-* 6բ
ման սորա ոչ ժամանակ որոշեալ թուով, այլ կատարած կենաց:

VIII. [1]*Ասա՛ եւ դու ինձ զքոյսն եւ զ՚առ ի նոցանէ ընծայաբերեալսն*
ոչ Աստուծոյ, վասն զի զմաքրութիւն սիրէ: [2]*Ասա՛, դատապարտի՛չդ*
զանմեղս եւ զրպարտի՛չ իմաստուն եւ ճարտարաբան, զո՞րս ի պոռն-
կոցաց՝ զիգացեա՞լս եւ զարուագէ՞տս, զյափշտակո՞ղս, զշո՞ւնս, զաւա-
զա՞կս, զարբեցո՞ղս, զորովայնամո՞լս, զծաղրածուս եւ զծիծաղկո՞տս,
զարծաթասէ՞րս, որով ոչ ոք կարացէ զԱստուած սի//րել, [3]*առ այսոքիւք* 7ա
եւ զամբարտաւա՞նս, զսնապա՞ծս, զսո՞ւտս, զհպա՞րտս, զանողո՞րմս,
զոխակա՞լս, զաղտեղի՞ս լեզուաւ, զդատարկ եւ շատախաւս բերանով

* *Ըստ Բն.-ի*

պարտաւորեա՞լս, զամպարհաւաճս եւ զվէ՞սս զաչաւք եւ զվաւաշո՞տս,
զերդմնահա՞րս եւ, համանգամայն ասել, զաւտա՞րս ամենայն առա-
քինի որակութեան եւ զպատարո՞ւնս չարութեամբ, այսպիսի՞ք ներ-
7բ քին քո եւ խորհրդոյ արժանաւորեալք: [4]Որ մտանէ <ընդ բերան>*, //
յայտ է աւրինաւոր եւ մաքուր կերակուր, ոչ պղծէ զմարդ, այլ կարգե-
լոցդ ազգ վերագոյն: [5]Ընդէ՞ր ոչ թշնամանես եւ խոտես, զորս՝ եւ Աս-
տուած, հի՞մ զհրամայեալս Աստուծոյ ի դատապարտութիւն դնես սր-
բոց եւ զհրաժարեցելովքն պատեալ դու փարիս, զատելիս Տեառն սի-
րես յարգանաւք եւ զսիրելիս նորա անարգես թշնամանաւք: [6]Որո՞յ ար-
դեաւք մասն իցէ ասողն բարի զչար<ն> եւ ընդդէմ նմին չար՝ զբարին,
8ա զլոյսն՝ խաւար եւ զխաւարն՝ // լոյս, զայնպիսի դառնութիւն՝ քաղցր եւ
զբնութիւն քաղցրութեանն՝ դառն. մորոսաց եւ մտաց անկելոց, այլ եւ
մոլեգնոտաց են ձախողակի այդոքիկ ընտրութիւնք եւ կարծիք: [7]Ո՞չ
լուար զասելն՝ կերողի ոչ դատել զոչն կերող, եւ ոչ նմա՝ զայն, որ ու-
տէն†, քանզի գոհանալ երկոքին պարտին զԱստուծոյ, ոյք նմա ուտեն
եւ ոչ: [8]Դու զի՞ դատիս եւ անդոսնես զայլոյ ծառայ, վասն զի Քրիս-
տոսի կամք եւ անկանիմք, բայց ոչ անկցուք, այլ կացցուք կարողու-
8բ թեամբ //զաւրութեան նորա, որ հաստատէն զմեզ:

<Վասն բաղարջին>‡

IX. [1]Դու առ յաղթասիրելն ինձ ախորժելով՝ յանդգնիս կամակորել
եւ զ Գիրս եւ հակառակս խաւսել Հոգւոյն Սրբոյ, անամաւթանաս եւ ոչ
զարհուրիս: [2]Զածես զմտաւ՝ որքան ինչ յաղագս այնորիկ աւրէնք եւ
պատուիրանք զգուշութեան, եւ որում վայել էր լնուլ զամենայն արդա-
րութիւնս, զիա՞րդ զմեծագունաւն քամահեալ զանցանէր: [3]Զիա՞րդ եւ
9ա ոչ չարասէր հրէայքն գտանիցին // ըստ քեզ իրաւամբք դատել, զի եթէ
ի գովելիսն եւ բարձրագոյնս<ն> յարել բիծ եւ հայհոյութիւն ոչ ակնա-
ծէին պատկառեալք, զի՞նչ ոչ զաւրէնազանցութենէն բաղբաղէին զհռ-
չակաւորն տաւնից նոցա եւ զամենամեծ, եթէ տեսանէին եւ լսէին աւ-
րինացն ջատագովք՝ այլովք արհամարհեալ կարգաւք եւ անաւրէն կե-
րակրովք, զիա՞րդ ոչ առաւել կատաղութեամբ զհայհոյութիւնն բարձ-

* Ըստ Բն. -ի
† Տես Հռոմ. ԺԴ 3:
‡ Ըստ Բն.-ի

բացուցանէին, եւ եթէ ստութիւն վկայիցն անաւր//ինաց հաւատարմա- 9բ
ցաւ նոցա, ճշմարիտ ամբաստանութիւնն ո՞րչափ եւ քա՞նի արկանէր ի
մէջ խռովութիւն: [4]*Դու, որ զխմորն ինձ եւ զձուկն՝ առանց հանճարոյ*
եւ զգաւնութեան յամենամաքուրն մատուցանես սեղան, զի՞նչ առ այ-
սոսիկ կարասցես գտանել բարրանաց յաւդուածս, զի թէպէտ եւ պատ-
բաստ ես յամառութեամբ, եւ դիւրին առ ստութիւն ըմբռնեալ ամենայն
ուստեք լինիս: [5]*Առաջին, զի ոչ արտաքոյ ինչ // աւրինաց գործէր՝ որ 10ա*
ոչ եկն լուծանել զաւրէնս կամ զմարգարէս եւ որ կատարած եւ լրումն
աւրինացն էր, վասն զի իշխանութիւն ումեք յիսրայելէ ոչ էր ի Պաս-
քային եւ յաւուրս բաղարջակերացն ուտել խմորեալ կամ ունել ի տունս,
մանաւանդ առ երկիւղին մահու, եւ ոչ յերեկորւոջն Զատկի զգառիննն
արհամարհել զենումն եւ կերակուր: [6]*Եւ երկրորդ, այլազգւոյ մատանել*
ի քաղաքն Երուսաղէմ ի փառաւորեալ աւուրսն այնոսիկ չէր համար-
ձակութիւն ամենեւին, // եթէ վաճառեսցէ ինչ, որպէս ասեն ապշեալք: 10բ
[7]*Երրորդ, զի ինքն եւեթ լինէր պատճառ իւրոյ մատնութեանն եւ մահու*
Տէրն՝ գործելով ինչ, զոր ոչ աւրէնք հրամայէին ի տաւնին: [8]*Զորրորդ,*
զի մատնիչն պատրաստ առ ձեռն ունէր զչարախաւսութեանն պատ-
ճառ առ քահանայապետսն եւ իշխանս տաճարին, եւ նոքա դատաւո-
րին ընդէ՞ր ոչ զայնմանէ եղեն ամբաստան, քանզի ոչ ծածկէր ի նոցա-
նէ Յուդաս՝ առ կարասւոյն ագահութեան եւ զնա պարտաւ//որ առա- 11ա
ւել ցուցանելոյ: [9]*Հինգերորդ, եթէ կամէր Յիսուս զպասեքն ոչ ըստ աւ-*
րինացն կատարել, վասն է՞ր ընաւ եւ զերեկոյն զայն իբրեւ զմեծ ինչ
պատուէր եւ խնդրէր տեղի ըստ արժանի, ուր ուտիցէ զգատիկն: [10]*Ո՛չ*
ասաց՝ ասել ցտանուտէր տանն ուտել առ նմա ձուկն եւ խմորեալ, այլ
թէ՝ «Առ քեզ առնեմ զգատիկս աշակերտաւքս հանդերձ», եւ զգատիկ ոչ*
ձկամբ եւ խմորելով կատարէր, այլ գառամբ եւ բաղարջով // ընդ եղե- 11բ
գի: [11]*Վեցերորդ, զի թէպէտ եւ նա այնպէս իսկ կամէր, որ է անհնար,*
ոչ նմա յանձն առնոյր այրն աւրինապահ, զի մի՛ եւ ինքն ընդ նոսին
կորիցէ ի քահանայապետիցն չարաց: [12]*Եւթներորդ, զի որոյ էր տունն,*
նմա իսկ պարտ էր զամենայն պէտս տաւնին պատրաստել, վասն որոյ
եւ հրամայեացն <Տէր> իսկ ասել. «Առ քեզ ուտեմ զպասեքս աշակեր-
տաւքս հանդերձ»†, որպէս զի ուսեալ նորա՝ մի՛ ինչ ի պիտո//յիցն նուա- 12ա
զեցուսցէ տաւնին, քանզի ոչ էին աշակերտացն գառինք եւ բաղարջ եւ

---

* *Մատթ. ԻԶ 18*

† *Մատթ. ԻԶ 18*

գինի, որպէս եւ ոչ տուն յԵրուսաղէմ, եւ զիա՞րդ ոք աշակերտի աւրի-
նացն առն համարձակէր տալ հրաման զհակառակս աւրինացն եւ զայն՝
ի տաւնին մեծի: 13Ուրեմերորդ, զմէ՞ ոչ եւ աւետարանիչքն գրեցին, որք
սովոր էին յամենայնի զճշմարտութիւն խաւսել, եւ յաղագս իրաց այն-
12բ պիսեաց: 14Իններորդ, զի եւ յանդիմանեալ վասն մեղացն լինէր, // որ
ազատեաց զանձն բանիւք եւ արդեամբք ի բծոյ մեղաց:

X. 1Արդ, ամենեքումք սոքաւք եւ այլովք բազմաւք ցուցանի, եւ
քաջայայտ է ստել եւ ամպարշտել՝ որոց կարկատելն զոչ գրեալս եւ զոչ
աւրինաւորս ի վերայ Տեառն: 2Եւ եթէ եկեր նա եւ աշակերտք նորա
զմիս գառին, զհաւատացեալս ի նա ամենայն ուղիղ դաւանութեամբ
եւ դուն ուրեք զոմանս ի նոցանէ հաղորդեալս սրբոյ կերակրոյն յա-
13ա ղագս հարկաւոր պատճառաց, // վասն է՞ր յանդգնիցիս հայհոյել յղ-
փացեալդ ժանտութեամբ գարշութեանց: 3Ո՞ւր արդեւք եւ զնախ մարմ-
նաւորութեանն առ հաւատացելոյն Աբրահամու դնիցես զուտելն նո-
րա երկու հրեշտակաւքն ի մսոյ որթուն: 4Թուիս ինձ եւ ոչ զՀեղիաս
զմեծն՝ յագռաւուց կերակրեալ մսաւք եւ հացիւ ի հեղեղատին Քոռա-
թու*՝ թողուլ ազատ ի թշնամանաց. ո՛չ եւ զՄովսէս եւ զԱհարովն եւ
13բ զորդիս նորա՝ մասամբք // զոհից ժողովրդեանն պարարեալս: 5Եւ զի
յոյժ դիւրին է որոց կամիցին ի յանդիմանութիւն այնպիսեաց հակա-
ռակողաց ժողովել ի Գրոց դրուագս բանից, բաւական առ այդ զասա-
ցեալսդ համարեսցուք: 6Իսկ զմիւսն առ դմին ի նոցանէ կարգեալ ստու-
թիւն, հաւասար դմին եւ եւս առաւել, յիշեսցուք վերստին զնոյն ինքն
առընթեր դնելով զ Գրոյն բան, որ յաղագս խմորոյ, զի ծանիցես զան-
14ա հաստատութիւն իմա//ցուածոց եւ բանից նոցա: 7Որպէս եւ յայնմ եւս՝
յաւրէնս Զատկին ի Գիրս Ելիցն ասէ նոյն ինքն Աստուած այսպէս. «Եւ
եղիցի ձեզ արիւնդ ի յիշատակ, եւ տաւնեցէ՛ք զդա տաւն Տեառն յազգս
ձեր: 8Օրէն յաւիտենական տաւնեցէք զդա: 9Զեւթն աւր բաղարջ ու-
տիցէք, յառաջնմէ աւրէ անտի անհետ առնիցէք զխմոր ի տանց ձե-
րոց: 10Ամենայն, որ ուտիցէ խմորեալ, սատակեսցի անձն այն յիսրայ-
14բ ղէ: 11Յառաջնմէ աւրէ անտի մինչեւ // յաւրն եւթներորդ մի՛ ուտիցէք
խմորեալ»†՝ աւր առաջին կոչելով զաւրն, յորոյ սպառուածին զենեալ
գառն լինէր‡: 12Եւ զկնի փոքու միոյ ասէ դարձեալ այսպէս. «Եւ առ-

* Տես Գ Թագ. ԺԷ 6:

† Ել. ԺԲ 15–16

‡ Տես Ել. ԺԲ 1–15:

նիցէք զաւրս զայս յազգս ձեր աւրէն յաւիտենական: 13Ի սկսանել չո-
րեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ յերեկորեայ բաղարջ ուտի-
ցէք մինչեւ ցքսան եւ մի աւր ամսոյն ցերեկոյ: 14Զեւթն աւր մի՛ գտցի
խմորեալ ի տունս // ձեր. ամենայն, որ ուտիցէ խմորեալ, սատակեսցի 15ա
անձն այն ի ժողովրդենէն, յեկաց եւ ի բնակաց երկրին խմորեալ մի՛
ուտիցի. յամենայն բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ»*: 15Եւ զի-
ա՞րդ անցանէր Տուիչն աւրինացս այսոցիկ զիւրովք պատուիրանաւք
այսպիսովք նախ քան զլնուլն զնա, կամ զիա՞րդ ոչ իցէր մահապարտ
ըստ աւրինացն, եթէ քամահեաց զնոքաւք, եւ ո՞ւր իցէ կամաւորու-
թեամբ գալ նմա ի չարչարանս, // որպէս եւ ճշմարիտ խսկ է, եւ ոչ իբ- 15բ
րեւ զաւրինազանց բռնաբար ձգիլ ի հրէից:

XI. 1Սոյնպէս իմա՛ ինձ եւ յաղագս ջրոյն ստել նոցա սովորաբար,
վասն զի կամ ոչ ուսան կամ «ուսանին հանապազ եւ երբեք ի գիտու-
թիւն ճշմարտութեանն ոչ ժամանեն»†, «զի չնչաւոր մարդ ոչ ընդու-
նի զՀոգւոյն Աստուծոյ»‡: 2Փախչի ի նենգութենէ Հոգին Սուրբ իմաս-
տութեան եւ անջատանի յանաւրէն խորհրդոց եւ ոչ բնակէ ի մար// 16ա
մնի՝ վարեցելոյ մեղաւք: 3Յապականութենէ իսկ վարուց եկին ի սա-
տակիչ իմաստս ամենայն ջոլիրք հերձուածողաց եւ անջատեալ հեռա-
ցան ի Հոգւոյն շնորհաց: 4«Մեղքն ձեր որոշեն ի մէջ ձեր եւ Աստու-
ծոյ»§,— ասէ Եսայի ի տեսլենէ իսկ իրացն, որոց անբաժ ի խորհրդոյ
իմաստութեան ոչ են, յայտնապէս տեսանի ոչ միայն ի կրաւնից աւան-
դութիւնս Եկեղեցւոյ, այլ եւ որքան ինչ յաղագս գործականին: 5Բայց
դարձեալ անդրէն // զերասանակ բանիս ձգեալ՝ դարձուսցուք յոր դի- 16բ
մեացն ի սկսմանէ երթալ: 6Յորժամ կարծրութեամբ բանից առ ի մէջն
քարկոծեալ՝ զգայցեն տկարութեանն անձանց յաղագս կերակրոյն սր-
բոյ յԱստուծոյ, յոր եւ Տէր եւ ամենայն ծառայք իւր ոչ ըստգիւտ հա-
մարեցան մերձենալ ի ժամանակի, ոյք ի հրաժարելիսն ամենայն գործս
եւ կերակուրս համարձակութեամբ եւ առանց խտրելոյ յարձակին յա-
նաւրէնն եւ յանսուրբ՝ իբր // յաւրինաւոր եւ մաքուր, եւ յանհրամանն՝ 17ա
որպէս ի հրամայեալ եւ ոչ հրաժարեցուցեալ, այսպիսիս մատուցանեն
անխորհրդապէս ընդդիմադրութիւնս բանիւք: 7Եթէ այդոքիւք, ո՛վ

* Տես Ել. ԺԲ 17–20:
† Բ Տիմ. Գ 7
‡ Ա Կոր. Բ 14
§ Ես. ԾԹ 2

դուք, եւ Տեառն եւ սրբոց նորա կամիք լինել նմանողք, զիա՞րդ ոչ եւ
սքանչելեաց գործովքն. յարուսջի՛ք մեռեալս, շնորհեցէ՛ք կուրաց տե-
սանել եւ խլից լսել, զգեւս եւ զախտս ամենայն հալածեցէ՛ք ի մարդ-
17բ կային մարմնոց: 8Միանգամայն եւ զորս կատար//էր Փրկիչն աստուա-
ծաբար, Աստուածութեան նորա ոսոխք եւ ընդ ակամբ հայեցողք կա-
տարել եւ մեզ հրամայեն՝ կարծելով յաղթութիւն գոլ զպարտութիւնն
անձանց իւրեանց, որպէս թէ ոք ումեք յաղթել ի պատերազմի կամե-
լով՝ սուր ընդ ինքեանն մղիցէ սիրտ: 9Քանզի հարցցուք զնոսա այս-
պէս եւ ըստ սմին յեղանակի. «Մեք միով, որպէս դուդ ահա ասես, նմա-
նողք եւ նախանձաւորք Տեառն մերոյ լինիմք, իսկ միւսով՝ նշանացն
18ա գործ//ովք՝ ոչ: 10Յոյց ինձ եւ զքոյսն, զո՞րս արդեւք լնուս հրաշագոր-
ծութիւնս, որո՞վ միով եւ դու բերես առ նա զնմանութիւն, եւ որո՞ց
սքանչելեաց հանդիսական երեւմունք ետուն քեզ համարձակութիւն
ասել զոր ինչ կամիսդ առանց ամաւթոյ: 11Երկնչիմ ի հայհոյութենէն,
որ ծնանի ի քումմէ առաջարկութենէդ, քանզի «նա մեզս ոչ արար, եւ
ոչ գտաւ անիրաւութիւն ի շրթունս նորա»*: 12Ո՞ ուսոյց քեզ չարագոր-
18բ ծել եւ անիրաւել, մի ըստ միոջէ // ասել դանդաղիմ, քանզի խնայեմ ի
քեզ, ո՞՝ զամենայն աւր պայթուցանել զորովայն մսոց եւ գինեաց զա-
նազանութեամբք, 13քանզի եւ ձկանցդ մարմին ոչ հեռի ինչ է ի գոլոյ
միս, որպէս մեծն վկայէ նախամարգարէ՝ առ նոյն ինքն Աստուած եւ
Տէր ասելով յորժամ հրամայեաց տալ միս որովայնամոլ ժողովրդեանն,
որ լայինն եւ խնդրէին. «Ուստի՞ տաց, միթէ բաւակա՞ն իցէ ամենայն
19ա ձուկն ծովու լին//եւ սոցա կերակուր»†: 14Մեք, թէպէտեւ սքանչելեաւք՝
ոչ, պահովք զնմանութիւն քառասուն աւուրց պահողին ըստ մարդկան
կարողութեան բերեմք, իսկ դու ո՛չ ուտելով եւ ո՛չ չուտելով կարասցես
պարծել նմանութեամբ, քանզի չուտելոյ աւուրք ոչ են քոյ, իսկ ուտելն՝
հեռի ի բարեպաշտելն կարողաց եւ սովորից: 15Արդ, ասա՛, սքանչելա-
գո՛րծդ եւ իմ հայհոյի՛չ, զի՞ քեզ մասն նմանութեան առ Տէր: 16Զնա-
19բ պաստա՞կն, լուռ վասն // խոզի լինիմ. եւ վասն ոչ առաքելոցն որոշե-
լոյ զայսպիսի յանցանել Հնոյն՝ թէպէտ եւ պահելն է գովելի, 17բայց
վասն զհեղձուցիկն ուտելոյ եւ զարիւն, յորոց եւ առաքեալք Տեառն
ըստ Հնոյ օրինացն հրամայեցին պահել զանձինս հաւատացելոց հե-
թանոսաց, զի՞նչ կամիցիս տալ պատասխանի, կամ զանմաքուր զեռ-

* Ես. ԾԳ 9

† Թիւ. ԺԱ 22

նովք պղծեալ կերակուրս եւ ըմպելիս ուտել եւ ըմպել վստահութեամբ:
18Ո՞ քեզ հրամայեաց եւ ինձ զմաքուրն տարա//սահմանեաց: 19Սքան- 20ա
չելիս ոչ առնեմ, վասն զի հող եմ եւ մոխիր եւ ոչ ի վեհագոյն բնութե-
նէն կամ առաքեալ ոք եւ մարգարէ, այլ զսքանչելագործն Քրիստոս,
զոր դուն մարդ ապականացու ասես հայհոյելով, Աստուած ես փառա-
ւորելով ուղղապէս խոստովանիմ: 20Նշանս ոչ կարեմ, որպէս եւ ոչ դու
առնել, այլ զստեղծեալ Աստուծոյ կերակուրս ի վայելս հաւատացելոց
պիղծ ումեք ոչ վարկանիմ, ի ժամանակի պիտոյից արգելում զբազումս,
// բայց ոչ իբր ի պղծութենէ հրամայեմ յոլովից, վասն զի գիտեմ զժա- 20բ
մանակ համարձակելոյն եւ յաղագս երկոցունց իմաստասիրեմ ուղիղ եւ
հաւանական բանիւ: 21Իսկ դու ոչ եւ զմի յայսցանէ եւ ի սոյնպիսեաց
կարասցես ինձ յանտեղեաց տալ անփորձ եւ վիժած բանից քոց անկո-
րովութեամբ. մեք՝ յառաքելոց եւ յԱւետարանաց եւ ի Հնոց Աւրինաց,
իսկ դու՝ ի մտաց քոց անզգամութեամբ խաւարելոց, այլ մեռեալ կոչիս
եւ // ես իսկ, ասէ, այդպիսի ձեւով: 22Մեռանել ուսայ, այո՛, ոչ յուրաստ 21ա
լինիմ, այլ ախտի՛ց եւ ո՛չ անաւելորդ եւ հարկաւոր կերակրոց, իսկ ապա
թէ իբրու ըստ բնութեան մեռելոյ հրամայես ինձ, մի՛ թողացուսցես եւ
զպէտս հացի եւ ջրոյ եւ որքան ինչ այլք իցեն այսգունակք, յորս եւ
ոչ դու հպիս, մեռեա՛լդ աշխարհի եւ ամենայն ախտից: 23«Կեղծաւո՛ր,
հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ,— հրամայեաց Տէր,— եւ ապա՛
հայեսցիս // հանել զչիղ յականէ եղբաւր քո»*: 24Զի թէ մաքուր էր աւ- 21բ
րինաղրութիւնդ քո, գովէի արդեւք զամբաստանութիւնդ զմէնջ, հա-
ւանէի ընդունել, ի բաց կալ՝ իբրեւ յաւելորդաց եւ ոչ ի հարկաւորաց
կերակրոց, ի մսոյն պիտոյից: 25Բայց տեսանեմ լի հերձուածով կորս-
տեան, քանզի զչնութիւն եւ զարուագիտութիւն ոչ տանջես եւ զագա-
հութիւն, որովք գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհա-
ւանութեան, իսկ զսուրբս գոհութեամբ ի // պատշաճ ժամանակի մերձե- 22ա
ցեալս յաղագս տկարութեան մարմնոյ, իբր բժշկականաւ վարեցեալ դե-
ղով՝ մաքուրն կերակրով, դատապարտե՞ս՝ որպէս զ՚առ Աստուած զմա-
հու չափ զմեղուցեալս, եւ դու կաս մնաս ազատ եւ անպարտաւո՞ր, ոչ
եւ ի միոջէ խորշելով՝ փախչել ի յանիրաւութենէ: 26Զմտաւ ո՞չ ածես
զառաքելականն աւրէնս, թէ՝ եւ ոչ բամբասողք եւ թշնամանիչք, մա-
նաւանդ յոր իրս ոչ է արժան, զարքայութիւն Աստուծոյ // ժառանգել 22բ

* *Մատթ. Է 5*

ոչ կարեն*, զի «որ ուտէ, Տեառն ուտէ եւ գոհանայ զԱստուծոյ, որպէս
եւ որ ոչն ուտէ»†: 27Եւ դու, դատապարտ գոլով, դատի՞ս զայլոյ ծառայ,
յորմէ ակն ածեն եւ անմեղութեամբ վկայեալք: 28Տո՛ւր ինձ ի Գրոց զա-
պացոյց այսր պարտաւորութեան: 29Քանզի զքոյդ արհամարհեմ նոր
եւ խոտելի աւրէնս եւ հաճեցայց զղջանալով՝ յորս մեղայն, ապա թէ ոչ,
23ա ցուցից ես անտուստ բազմաւք եւ հաստատուն վկայութեամբք զընդ//
դէմսն քեզ յաղագս բազմամասն եւ յոքնաւրինակ ամպարշտութեան
քո: 30Եթէ իցէ ի քեզ բան իմաստութեան, տո՛ւր պատասխանի, ապա
թէ ոչ՝ ափ քո եղիցի ի վերայ բերանոյ քո: 31Զայսոսիկ ասելով՝ ոչ եթէ
աւրէնս դնեմ վարիլ ամենեցուն այնու կերակրով, քանզի եւ ոչ ինձ
հաճելի է, եւ ցանկամ, եթէ հնար իցէ, եւ ի հարկաւորսն հազիւ երբեք
մերձանալ ամենեցուն, որք մերոյս իցեն խոստովանութեան, ի հաց եւ
23բ ի ջուր լոկ // եւ անպաճոյճ: 32Այլ ըստ նախատեսութեանն առաքելոյ
զվերերեւեալ այժմ հերձուածոյն անիրաւաբար զերկպառակ լեզուա-
գարութիւնն ամաչեցուցանել կամիմ եւ ցուցանել, թէ յորոց արժան է
խորշել առաւել անկարգութեանց եւ խոտորնակ գնացից, կամ զորս ոչ
պարսաւել եւ ոչ գովել եւ որոց իրաց չարագրել կամ դնել առժամայն
24ա պարսաւանս բանիւք, իսկ գովութեամբք, ներբողականաւք եւ // ար-
ժանաւոր պատուով զոյս ոմանս պսակել:

XII. 1Արդ, գովեսցին ազատ բարբառով անբիծքն հաւատով եւ
առանց հերձուածոյ, ոյք լծակից եւ զարժանաւոր վարուց մաքրու-
թեան ունիցին զծագումն ի փառս Աստուծոյ: 2Իսկ պարսաւեսցին, որ-
պէս ունի կարգն յերկոսին յայսոսիկ, այլ եւ ի մին միայն, ոչ առողջք,
յորոց եւ խորշել եւ հեռանալ ամենեւին յետ միագամ եւ երկիցս խրա-
24բ տու հրամայէ առաքեալ‡՝ ըստ ուղիղ բանի. // զի թէ ի ստահակ միայն
եղբաւրէ, որչա՞փ եւս յերկոքումք ապականեցելոյ: 3Իսկ որք ոչն ու-
նիցին առաքինութիւն ինչ կամ չարութիւն, որպէս որ ո՛չ հիւանդք
իցեն եւ ո՛չ առողջք, ո՛չ գովելիք խսկապէս են եւ ո՛չ պարսաւելիք:
4Բայց յանգիտութենէ եւ ի հին դժնդակ սովորութենէ մոլորելոցն սի-
րով խրատս մատուցանել վայելչականս, եւ որովք առթի փրկութիւն,
25ա մանաւանդ որոց ախորժելովն ընդունիցին՝ որպէս // ցանկացեալք կե-
նաց, 5անձանց վարուք ուղղութեան՝ նախ, եւ ապա բանից վարդապե-

* Տես Ա Կոր. Զ 10:
† Հռոմ. ԺԴ 6
‡ Տես Տիտ. Գ 10:

տութեամբ, քաղցր եւ ձգողական յորդորմամբ, առանց խրտուցանելոյ եւ մի՛ նախատանաւք թշնամանաց, որպէս սովոր են առնել անտեղեակք որոշման կարգի իրաց եւ բանից, առանց ճանձրանալոյ առաջի հանապազ արկանել զճշմարիտ գիտութեանն աստուածային եւ աննենգ
կերակուրս, հանել յանարգէ զպատու//ականն՝ լինելով իբրեւ զբերան 25բ
Աստուծոյ: 6Զի եթէ յանձն առցէ հաւանեալ մերոյ լինել գաւթի եւ սեղանոյ, չնո՛ւրհ Աստուծոյ, որ կամի ընդ կեալ ամենայն մարդոյ եւ ի գիտութիւն ճշմարտութեան հասանել: 7Իսկ եթէ լսող միայն եղեալ եւ գովիչ մերոցն, յառաջնմէն ոչ ի բաց կարել կալ պատճառեսցէ ըստ յաւժարութեան սրտին՝ առաջի արկանելով զխափանմանն զանազան բա-
բուրս, սակայն հայհոյիչ լեզուաց զմէնջ // ոչ որպէս կանխաւն հաւա- 26ա
սարեալ հաղորդեսցի, եւ լինի այս ոչ գոյզն ինչ նպաստ նմա առ ի փրկութեան սկիզբն եւ մեզ՝ ի հանդարտութիւն հանգստեան:

XIII. 1Եւ սկսանելի է այսպէս: 2Պահանջես յինէն զմիդ զայդ, զոր տալ ինձ ոչ դժուարին ինչ է եւ ոչ ակամայ, քանզի ընդունիմ յաւժարութեամբ եւ կատարեմ, թէպէտ եւ հերձուածոյն ոչ տամ տեղի: 3Տո՛ւր
եւ դու զոր հայցեմն եւ ես զբազումս, քանզի անիրաւութիւն է ի հանկ// 26բ
անակս պարտապահանջութեան առնուլ ջանիւ զդատախազութեան զփոքրն եւ զմի, իսկ զբազումսն եւ զմեծամեծս նորայոցն աւանդից ոչ տալ ի ձեռն: 4Արդ, զի մի՛ զրկող եւ զլացող բամբասիցիս յառնուլն եւ ի չտալ, հատո՛ ինձ զպարտսն, որ է քեզ յաւելուած փարթամութեան եւ գանձ անճառելի, ճոխացո՛ զաղքատութիւն քո ինքեան անձին, մի՛
երեւեսցիս յաչագոտ, ո՛վ սիրելի, քոյին գլխոյ: // 5Եւ տացես առաջին 27ա
ինձ անյաւելուած զխոստովանութիւն Սրբոյ Երրորդութեանն եւ Միոյ Բնութեան, մի՛ անուսումնաբար յաւելուածով մարդոյն քո ապականացուի աճեցուցաներ զկատարեալ եւ զանաճականութիւն: 6Քանզի զիա՞րդ Կատարեալն եւ Աննուազ աճեսցի: 7Լե՛ր դաւանակից ինձ ուղիղ այսու բարբառով, զոր ուսաք ի Տեառնէ եւ յառաքելոց նորա:
8Զաշխատութիւն հարցն երանելեաց յաղագս սորին պատուեա՛ր: //9Զայ- 27բ
նին լո՛ւր Յովհաննու, որ համարձակեցաւ անբաւ սիրով գթոյ անկանել զլանջաւքն տերունականաւք, զոր ոչ մարդ հասարակական գիտէ եւ քարոզէ, այլ Բան մարմին եղեալ: 10Եւ դու մի՛ ժամանակաւ որոշեսցես տնաւրէնութեանն զնա ինքենէ՝ ասելով յետ յարութեանն միաւորութիւն զոլ Բանին ընդ մարմնոյ: 11Վասն զի, թէ այս, ոչ ապա Բանն
եղեւ, ըստ նմա, մարմին, այլ ի մարդ, ըստ քեզ, բնակեաց, որ//պէս զի 28ա
մի՛ Աստուած մարդացեալ եւ մարմնացեալ Աստուած եւ մարմնովն,

ըստ որում նայն որոտայ, այլ մարդ ոմն աստուածացեալ՝ ըստ այդմ անուսումնութեան հաւատասցի: [12]*Բայց նմա հետեւելով՝ Եկեղեցի Քրիստոսի ուսաւ ըստ ճշմարտութեան խոստովանել մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, քանզի ոչ այլոյ ուրուք, այլ իւր իսկ նորա էր առ ի մէնջն եւ ի մերմէ բնութենէ մարմինն անձնաւոր եւ բա-*
28բ *նական:* [13]*Վասն որոյ յուղիղ եւ ըստ ճշմար//իտ բանի խոստովանողաց ոչ ոք իշխեաց բաժանել ըստ բնութեան եւ կամաց կամ գործոց եւ կրից զմին Տէր մեր Յիսուս Քրիստոս, այլ Աստուած գիտեն զխաչեալն եւ չարչարեալ կամաւորապէս յաղագս մեր:* [14]*Վասն զի միաւորութիւնն եւ մին գոլ ըստ անճառելւոյ տնաւրէնութեանն ոչ բաժանեալ որոշի ի զանազան առանձնականս եւ յատուկս, թէպէտ եւ ճար-*
29ա *տար իցէ ոք բեւրս անգամ եւ բեւրս, ոչ փոքունս եւ սակաւս, // այլ բազումս եւ մեծամեծս զսրբոցն ունիս այսոցիկ եւ ազգակցաց սոցունց հաւատարմացուցիչս եւ քարոզողս, ուստի այսքան ասել առ այս չատ է ըստ այժմուս խնդրոյ:*

XIV. [1]*Երկրորդ, զխորհուրդն անապական եւ գերաշխարհիկ զփրկութեան մերոյ գրականն ընդէ՞ր ձաղես՝ յապականութիւն իջուցանելով եւ յամենեւին արհամարհանս նուաստութեան նենգանաւք ի կի-*
29բ *բառեցելոյ խ//մորոյն եւ ջրոյ:* [2]*Յայտնապէս ուրանալ ոչ կարացեալք սկզբնահաւք այնպիսի դառն եւ աստուածամարտ աղանդոյ զխորհրդոյն ի Տեառնէ աւանդութիւնս ի վերջնում եւ յառաջնում գիշերին ի Վերնատանն սրբում ի ձեռն այպանութեանն այնորիկ ընդ հրեայսն մարդ ապականացու զնա նկարագրեցին,* [3]*յորմէ բարւոք խորհողաց հեռանալ փախստեամբ, իբր ի չար հերձուածոյ, յոյժ է իրաւացի եւ սուրբ.*
30ա *ունիս եւ առ այդ//ոսիկ զերբեմն ասացեալ մեր բան:* [4]*Երրորդ, ոչ բարւոք էր զառագաստ ամենամաքուր Փեսային եւ զկատարման մեծին խորհրդոյ տաճար՝ զժողովետղն հաւատացելոց սրբոց կացուցանել, ըստ կորնթացւոցն, տեղի ճաշոյ եւ ընթրեաց եւ հանկանակաւ գինարբութեան** [5]*կամ զասացեալն յարմարապէս առակաւ՝ ուղտուց եւ իշոց վա-*
30բ *բարից հանգրուանս եւ ձիոց վրնջողաց եւ մատակախազից, // զի քեզ պարկեշտս բարբառեցայց, թողում ասել զանխտրաբար այդպիսեացն հաղորդիչ այնպիսի կերակրոյ եւ սեղանոյ.* [6]*Թուի ինձ՝ գիտելով այպանեալ գոլ՝ ոչ զանգիտեն պատկառելով իբր յաստուածայնոյ եւ ի սքանչելի սեղանոյ:* [7]*Չորրորդ, խորհրդածուք տգէտք եւ անմաքուրք, դա-*

* *Տես Ա Կոր. ԺԱ 20–22:*

տարկք եւ ունայնք յամենայն իմաստութենէ, արհամարհեալ քահա-
նայութիւն՝ անուամբ եւեթ եւ ոչ ըստ աւրինի կանոն//ելոյ: [8]Հինգե- 31ա
ղորդ, ապաշխարութիւն անտես եղեալ, զղջումն՝ եւ ոչ մի, այլ եւ ծո-
վացեալ եւս առանց լրման ամենատեսակ անաւրէնութիւն, գողութիւն,
աւազակութիւն, սպանութիւն ի խաղաղութեան եւ առանց պատերազ-
մի, գարշ եւ տգեղ աղտեղութիւն գիջութեան: [9]Ո՞ւր դիցես եւ զհեթա-
նոսական անխտրութիւն ամուսնութեանց կամ զանսուրբ եւ զապակա-
նեալ կերակրոց եւ ըմպելեաց անակնածաբար ի // ներքս ընդունելու- 31բ
թիւնս: [10]Եղիցին եւ սոքա սորին գլխոյ, թէպէտ եւ ոչ կարգ բանին ըն-
դունիցի, վասն զի համառաւտութեան շարագրութիւնդ ճեպոյ աղա-
գաւ է, զյոյժ կարի առաւել եւ զանխտիր դարձուածս մոլորութեանն՝
զընկալեալ յանձինս կամ զոր ընդունելոցն են յայնժամ, լուռ անցա-
նեմ կամ: [11]Վեցերորդ, զանսրբոց ոմանց եւ զանծանաւթից ճշմարտու-
թեանն սիրողաց եւ եղելոց կենդանագրութիւնս // եւ ստեղծուածս ո՞ 32ա
ուսոյց երկրպագութեամբ պաշտել եւ մեծացուցանել: [12]Ո՞չ բաւական
են ճշմարտիցն եւ առաքինեաց ի Տէր՝ զարթուցանել զմեզ ի նախանձ
բարեպաշտութեան ի ձեռն տեսլեան երեսաց, որոց զսկզբնատիպս եւ
ցոյցս կամ, որպէս զոյ ասել, նախագաղափարս եւ տիրագոյն ենթա-
կայս ի բարեխաւսութիւն միայն Տեառնն մաղթել միջնորդաբար իրա-
ւացի եւ պատկանաւոր էր: [13]Ո՛չ փոխանակ Աստուծոյ ուն//ել անգի- 32բ
տաբար նախաշաւիղ իմն կռապաշտութեան: [14]Ընդէ՞ր քեզ փոքրկա-
ցաւ խաչին փրկականի պատուական եւ զարհուրելի դիւաց նշան, եւ
պատկերք ոմանց անգիտից իմաստնոց նախադասեալ մեծարեցան: [15]Ըն-
կա՛լ ինձ զտէրունականն եւ զորոց վկայինն ի բարեփառաց եւ զայն
նկարեալ յեկեղեցիս եւ մի՛ բազմեցուցաներ ըստ հնոյ սովորութեանն
զգայթագղութեան յոլովից երեւոյթս. [16]պարծեսցո՛ւք ընդ Պաւղոսի ի
չարչար//անս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի խաչին փայտիւ* եւ մի՛ 33ա
ի ձուլածոյս ոմանս, զորս ոչ գիտէին հարքն մեր: [17]Ի նկարու զսրբոցն
տեսանել աւգտէ զմիտս հանճարեղս եւ ուղղախոհս, իսկ բարձեալ շր-
ջեցուցանել կամ ետեղակալ ունել ի ներքս զոսկեղէնս եւ զարծաթե-
ղէնս ո՛չ պատճառ ուղղափառութեան գոլ վարկանիմ, կամ յայլմէ կազ-
մեալ նիւթոյ. ստայաւգութեան ոմանց զանազան ձեւով խաբկանաց
բանիւք ունկն դնել շամ//բուշ մտաց է եւ անբարեփոքձ խորհրդոց: 33բ
[18]Եւթներորդ, զի զառժամայնսն առանց աւծման եւ աջոյ քահանայու-

* Տես Գաղ. Զ 14:

թեան աստուածացուցեալս նախապատիւ համարելով՝ պսակէք երկրպագութեամբ պատկերս եւ զերկոքումբք ըստ աւրինի Եկեղեցւոյ եւ կանոնի հարցն առ ի մէնջ շնորհաւորեալս յԱստուծոյ պանծալի եւ կենագործակ նշան, յորում երկրպագի Քրիստոս, անարգել եւ խորտակել
34ա ո՛չ զանգիտէք: [19]Հեթանոսական արդարեւ է գործն: [20]Իսկ մեք, թէ // պէտ եւ գիտեմք դատարկ ի զաւրութենէ եւ նիւթ լոկ զ՚առ ի ձէնջն մանկաբար ստեղծեալ եւ դրաւշուած, վասն ձեւոյն փրկականի պատուեմք եւ, յիշելով զԿենարարին մերոյ չարչարանս գործւով այնպիսեաւ, առ նոյն ինքն Քրիստոս յաղաւթս առաջի նորա կամք երկրպագելով: [21]Իսկ թշնամանելով դուք զխաչեալն Աստուած՝ իրաւունս համարիք ոչ եւ զառանձին նորա նշան մերոյ փրկութեան եւ կենաց թո-
34բ ղուլ անպարսաւ եւ առանց նախ//ատանաց, զհրէիցն ապարասանութեան եւ յանդգնութեան պակասութիւն ի Տէր այդու յեղանակաւ լնուք ստուգապէս՝ առանց թերութեան եւ նուազութեան: [22]Ո՞չ երկաթեղէն բեւեռեցաւ բեւեռաւք յոտս եւ ի ձեռս եւ ի պարանոցս, ո՞չ արդ նա տիգաւ խոցեցաւ մարմին եղեալ Բանն անչարչարելի եւ մի Տէր յերկաքանչիւրս ի սոսա՝ զմածուցեալ երկաթով նշանն սքանչելի արհամարհանաց քոց նախատանաւք եւ ի բաց խլելով նորին աղագաւ, ոչ հե-
35ա ռան//աս ինչ զբեւեռեալն ի խաչի Աստուած եւ աշտէիւ խոցեալ յանպատուողաց հրէիցն: [23]Ընդէ՞ր ապա ոսկեղէն եւ արծաթեղէն քեզ ձեւանան խաչք յերկրպագութիւն, որովք ոչ բեւեռեցաւ Քրիստոս կամ խոցեցաւ: [24]Կատականաց ճշմարտապէս իմաստքդ են եւ վնասելոց մտաւք, զոր ի Տէրն եւ ի խաչին՝ անարգե՞ս, եւ զորս ոչն անդ՝ երկրպագե՞ս: [25]Ուստի՞ քեզ նորոյ այդորիկ բարեպաշտութեան, զի մի՛ ասացից ամպարշտութեան, աւանդութիւն, խաղկտոց արարէք զեկեղեցական
35բ գեղեցկա//կարգութիւնս, [26]կամ ընդէ՞ր զձեռս եւ զգործս հիւսանց ամբառնաս զքահանայական խորհրդածութեամբ քաջ ի բաց՝ զոսկեգործաց եւ զարծաթաձուլից եւ որոց նկարելն հաճոյ եղեւ ուսումն: [27]Մի արդեաւք թշնամանի՞ աջով քահանայութեան եւ իւղովն սրբով երկրպագելին քեզ՝ եթէ պատկերն եւ եթէ խաչ: [28]Եւ եթէ այդպէս իցէ, ընդէ՞ր բնաւ առնուս ի նոցանէ լուսաւորութիւն կնքոյ կամ հաղորդու//
36ա թիւն աւրինաց եւ պսակ ամուսնութեան եւ զայլս, որքան ինչ նոքաւք մատակարարեալ տնաւրինի: [29]Քեզ արուեստագէտք յայնոսիկ առհասարակ եղիցին պարգեւատուք: [30]Ո՞չ գիտես, զի կռապաշտութեան է անտեղի եւ անբան սովորութիւնդ այդ: [31]Այլ ասեն՝ Քրիստոսիւ կատարեցաւ խաչին խորհուրդ՝ բեւեռելովն ի նմա, ուրեմն էին ի նմա բե-

ւեռք երկաթեղէնք եւ ոչ փայտեղէնք: [32]Ի բանից քոց պարտաւորեսցիս, // թէպէտ եւ զերծանել ճարտարէիր: [33]Յի՞մ իմիք եւ պատկերք 36բ
ստեղծեալք եւ նկարագրեալք. դարձեալ եւ նոքա ի Տեառնն կերպագրութեան եւ Կուսին Մարիամու, թերեւս, ասիցես: [34]Թէպէտ եւ գովեմ զբանդ, զի ոչ կամելով խոստովանեցեր Աստուած զԽաչեալն՝ անկար գիտելով զմարդ սոսկ այսպիսւոյ գաւրութեան եւ գործոյ, սակայն լուծանել զառաջարկութիւնդ ճեպիմ: [35]Մկրտեցաւ Տէր՝ սրբելով զազգս
հաւատացելոց եւ // զջուրց բնութիւն միանգամայն: [36]Ընդէ՞ր այժմ 37ա
մկրտես կամ առնուս մկրտութիւն յետ այնպիսւոյ կատարելութեան: [37]Մի՛ ինչ բան գոհութեան եւ աղաւթից եղիցի քո ի մատուցման պատարագի Մարմնոյ եւ Արեանն Տեառն, վասն զի յերեկոյին, յորում ի խորհուրդ զաշակերտսն ածէր ի Վերնատանն, Ամենակատար<ն> զգոհութիւնն մեծ աւանդեաց: [38]Թուիս ինձ վասն այնորիկ չապաշխարել,
զի ապաշխարեցին այլք. քո եղիցին // եւ այնոքիկ: [39]Եթէ կամիս եւ մի՛ 37բ
*բնաւ ի մեռելոց յարիցես յարուցելոյ Քրիստոսի, մի՛ եւ զարքայութիւնն ժառանգեսցես՝ պատրաստեալ ի սկզբանէ աշխարհի սրբոց նորա, վասն զի տուաւ նոցա: [40]Եւ այլ եւս յոլովք են ի նիւթս ձեւք խաչի յոստայնանկաց կամ ի քրէական արուեստագիտաց տպաւորեալք, կրեսցեն եւ այնոքիկ զ՚առ ի քէն պաշտամանն պատիւ: [41]Գտցես եւ ի տունկս <եւ>**
ի բոյսս եւ ի ծաղիկս բազում անգամ զնոյն ձեւ՝ ոչ // նուազ ինչ սոցա. 38ա
[42]այլ եւ ի շնչաւորս՝ զհանգէտն, քանզի բովանդակ իսկ թռչնոց ազգք ցուցանեն ճշգրտիւ յինքեանս, ի թռիչս ընդ աւդ գնալով՝ ճախր առեալ, զայնգունակ նմանութիւն, ոչ միայն հերձաթեւքն անուանեալ, այլ եւ յանաւսրաթեւոցն բազումք եւ ի պատենաւորացն անուանակոչելոց: [43]Զի՞նչ զմարդոյ ասիցես ձեռաւք տարածեցելոյ, յորոյ իսկ նմանութիւն եղեւ իմացեալ ձեւ այն ի պատուհաս չարա//գործաց, եւ զիա՞րդ 38բ
հնարեսցիս դնել արտաքոյ բնաւորականին մասունս ի սոսա ամենեսին զառաջնոցն եւ հնոց, զի պաշտեսցին: [44]Կամ ընդէ՞ր ոչ զումայից եւ ասարաց պղնձեաց եւ ոսկւոց դահեկանաց, որք այժմ զկնի Քրիստոսի ի հրամանէ թագաւորաց բարեպաշտից յարուեստէ ընկալան զայնպիսի ձեւ գծոյ, երկրպագես: [45]Զտեսանե՞ս, զի ե՛ւ ի ձորձս, ե՛ւ ի հանդերձս, վասն զի ոչ է ի նոսայն երկրպագելի յաղագս Քրիստոսի տիպ
ձեւոյ, կոխ//ի ի մարդկանէ եւ յայլոց կենդանեաց բազում անգամ: 39ա
[46]Խորհուրդ եւ զաւրութիւն մեծացուցանէ, եւ ոչ եթէ ըստ ինքեան եւ

---

* *Ըստ Բն.-ի*

բնութեամբ ունի զպատիւ երկրպագութեան նիւթ անշունչ: 47Իսկ յորս
եւ ուր ոչ խորհրդոյն եւ զաւրութեանն աներեւութի եւ անմարմնակա-
նի վերակոչեսցի աղաւթիւք առ ի յԱստուծոյ շնորհս ընծայութեան,
ընդ ազգակիցս համարելի է: 48Ապա թէ ոչ, յամբայր եւ յախուռն ար-
39բ դեւք զաւա//նդութիւն այսպիսի ընկալան <եկեղեցի եւ>* հաւատա-
ցեալք:

XV. 1Զերկոտասան աւուրս նաւակատեաց խորանին վկայութեան
յանապատին Սինա ոչ ի դէպ է<ր> առանց աղաւթից պատշաճականաց
իրին եւ զաւրաւոր պաղատանաց Մովսէսի կատարել, 2վասն որոյ եւ
սրսկմամբ արեան կտակին կահ սպասուն ամենայն եւ նոյն ինքն խո-
րանն ներքին հանդերձ տապանակաւն եւ քրովբէիքն ոսկեղինաւք եւ
40ա արտաքին // խորանաւն լինէր աւծեալ, եւ ապա լնուին փառք Տեառն
զխորանն, եւ ծածկէր ամպն արտաքուստ: 3Սոյն եւ առ Սողոմոնիւ լի-
նէր արքայիւ, քանզի յետ մեծի եւ արժանաւոր աղաւթից եւ աւրհնե-
լոյ զժողովուրդն լինէր առաքեալ յԱստուծոյ պայծառութիւն այնքան
լուսոյ շնորհաց՝ վկայութիւն ընդունելութեան պաղատանացն, մինչ
զի ոչ կարել քահանայիցն մտանել ի տաճարն: 4Իսկ առանց խնդրե-
40բ լոյ ոչ լինի տուեալ, եւ ոչ դտեալ // կամ բացեալ՝ առանց բախելոյ եւ
հայցելոյ†: 5Մի՛ բաւական զմի անգամն եղեալ յիրս ամենայն վարկա-
նիցիս, վասն զի մի անգամ ծագելոյ արեգական եւ լուսնոյ եւ աստե-
ղաց ի սկզբանն թերեւս ոչ դարձեալ փայլէին զկնի առաջնոյն, ոչ եւ
պտղոց եւ կամ բուսոց պէտք: 6Երկրորդ անգամ, ի լրումն կարաւտու-
թեան համաւրէն կենդանեաց ի բնութենէս լինէր պարգեւեալ՝ անձրե-
41ա ւաց, յեղանակաց տարեւորականաց, ծննդոց // ապականացուաց կեն-
դանեաց: 7Բայց քո նոր աւրէնսդրութիւն, պարտ իցէ ասել եւ եթէ տա-
բաւրէն հանճարոյ գիւտ, զսպեալ ամփոփէ զյաճախածաւալ Աստուծոյ
պարգեւացն անհամեմատ առատութիւն, որպէս զի նիւթ ապականա-
ցու եւ անշունչ կրեսցէ երկրպագութիւն՝ ունայն գոլով ի խորհրդա-
կան եւ յաստուածային զաւրութենէ: 8Ո՞չ այդր աղագաւ թշնամանի
անմտութիւն մարդկան դարուցն առաջնոց, որոց չէին անգիտացեալ
41բ արդարա//պէս պատուադրութիւն անէից, զայն ի յոյժ վնասամտութե-
նէ, առանց իրաւանց մատուցանէին: 9Մո՛ւտ յանտառս եւ որոց զ՚ըստ
բնութեանն ունին զարդ եւ գեղաւորութիւն հաճելի, եւս եւ՝ ձեւ բա-

* Ըստ Բն.-ի

† Մատթ. Է 7, Ղուկ. ԺԱ 9–10

զում այդպիսի, եւ երկրպագեա՛: [10]Ընդէ՞ր հատելոց եւ անջատելոց ի
բնաւորական զարդուէ կանաչասաղարթութեանն գաւսացելոց փայ-
տից եւ ոչ զաստուածայինն ունողաց կատարումն զայդպիսիդ ընձե-
ռես պատիւ: [11]Մարդ, // որ է պատկեր Աստուծոյ եւ արեամբ Որդւոյ 42ա
նորա ի փառս վերստին ածեալ, ոչ կարասցէ քահանայել առանց կա-
տարման եւ աւծման Հոգւոյն: [12]Իսկ զիա՞րդ բնութիւն փայտի եւ քա-
րի կամ նիւթոյ այլոյ առանց զլրումն մեծի խորհրդոյն ընդունելոյ ի
ձեռն աւծութեան աւծելոց կարասցէ գոլ անաւթ փրկութեան եւ երկր-
պագելի: [13]Ընդէ՞ր ձեզ աղաւթիցն իմաստութիւն եղեւ անտես կամ խո-
տեալ եւ ի բաց ընկեցեալ, յո՞ր արդեւք իրս եւ // ժամանակս կամ տե- 42բ
ղիս ուսար զաղաւթս եւ զգոհութիւնս լինել վնասաբեր եւ արհամար-
հեալ Աստուծոյ, [14]կամ զի՞նչ յեղա<նա>կք* եւ կարդք դասու առաքե-
ցին զնա ի բաց եւ ընկեցին արտաքս. ո՞ր պատճառք, որպիսի՞ ներհա-
կութիւնք, ո՞ աւանդիչ եւ աւրինադիր: [15]Կամ ցոյց, զի հաւանեցայց,
կամ ընկալ, զի գովեցից եւ հաղորդեցայց, քանզի ոչ զաւտարութիւն եւ
զատելութիւն ախորժեմ: [16]Ինքնն իսկ, որ աւծանէ Հոգւով զորս կամի
եւ // գոյացոյց զամենայն, անուանեցաւ, այլ եւ եղեւ Աւծեալ, եւ դու 43ա
արհամարհես զաւծութիւն: [17]Ձեռնադրեցաւ ի մարդոյ՝ Աստուած գո-
լով ըստ ճշմարտութեան, եւ դու ոչ կամիս յանուն նորա ընդունել նիւ-
թոյն ձեռնադրութիւն: [18]Ո՞ քան զնա անկարաւտ, ո՞ գերագոյն սրբու-
թեամբ, որ աղաւթէրն. «Հա՛յր, փառաւորեա՛ զՈրդի քո» եւ դարձեալ
անդրէն. «Զի եւ Որդի քո փառաւորեսցէ զքեզ»†: [19]Նա վասն անձին եւ
վասն Հաւր, որ//ոց բնաւորական է փառաց եւ պատուոյ գերապայծա- 43բ
ռութիւն եւ ոչ արտաքուստ յարելութեամբ, աղաւթէր զընդունելութիւն
փառաց, [20]եւ քո կարճմտութիւնդ ի վերայ սորին նիւթոյ անպատշա՞ճ
վարկանի զգաւրութիւն ընդունելոյ եւ շնորհի խորհրդոյն զաղաւթս:
[21]Զի զյաղագս առաքելոցն եւ համաւրէն հաւատացելոց բանիւ նոցա
ի նոյն եւ որքան ինչ այլ՝ թողից:

XVI. [1]«Յամենայնի գոհանալ եւ անդադար // աղաւթս առնել»‡,— 44ա
առաքեալ հրամայէ: [2]Եւ քեզ յայսմ իրի եւ ժամու, յորում եւ վասն որոյ
քաջայարմար սոքա, որոց ոչ անբաժ ի խորհրդոյ իմաստութեան իցեն,
երեւի, ո՞չ բանալ զբերան առ Աստուած եւ բանիւ նորա կամ զձեռս

* Ըստ Բն.-ի
† Յովհ. ԺԷ 1
‡ Ա Թես. Ե 17–18

բառնալ ի վեր թուի հաճոյ եւ իրաւացի: 3Յոյժ է շամբուշ քո իմաստու-
թիւնդ եւ աւրէնադրութիւն՝ առասպել պառաւանց եւ խաղ մանկտւոյ
44բ կամ աղճատանք հինաւրեայ ծերոց՝ անկելոց ի մտաց: 4Ընդէ՞ր // ոչ եւ
զմկրտութիւն արգելուս՝ պարտաւորելով զմկրտիչս, որպէս զի մի՛ մա-
սամբ, այլ բոլորովին եղիցես արտաքոյ Քրիստոսի: 5Արդ, այսպիսեաց
եւ այսքանից բերողաց զվատթարութիւն չարութեան յինքեանս՝ ըստ
կրաւնից եւ վարուց, դատապարտել զանբիծս ի հաւատս եւ սուղ ինչ
նուազ զբարոյականաւք կատարեալս առաքինութեամբ, ո՞չ ապաքէն
յետնոյ է մոլորութեան եւ սատանայականի շարժման: 6Ոյց զհրէականն
45ա ախ//տացեալ կամաւոր մորոսութիւն եւ նախանձ յաչաղանաց զմար-
դասպանին ի սկզբանէ, բարւոյ իրի եւ անուան պարսաւանս դնել եւ
հայհոյութեան դառնութեամբ թշնամանել ոչ պատկառեն: 7Քանզի եւ
նոքա յէապէս բարոյն վայելեալք յամենագան եւ ի բիւրապատիկ ձիրս
շնորհաց արդեամբք եւ բանիւք, յորս արժան էր ստանալ զգաւնութիւն,
թէեւ ադամանտեայ եւ վիմեղէն ոք ունէր հոգի, սիրել եւ գոհանալ, եր-
45բ կիր պագ//անել փոխանակ մեծամեծաց եւ անթուելեացն բարերարու-
թեանց, եւ զկնի չարաչար եւ զարհուրելի թշնամանացն եւ հայհոյու-
թեանց «բառնա՛լ եւ խա՛չ հանել»* աղաղակէին: 8Զո՞. զԲանն մարմնա-
ցեալ՝ զամենայնին հաստիչ եւ կրաւղ բանիւ զաւրութեան իւրոյ†, զոր
եւ դուն թշնամանես՝ մարդ սոսկ անուանելով: 9Եւ արդ, զի՞նչ մեծ իցէ
կրել եւ մեզ՝ նուաստից եւ փոքունց ի ծառայս նորա, լուտանս բամբա-
46ա սանաց ի թշնամեաց Տեառն մերոյ, // «զի թէ ընդ փայտ դալար զայն
արարին եւ առնեն, ընդ չորն զի՞նչ ոչ գործիցի»‡: 10Եւ եթէ ի տանու-
տէրն զանարժանս բարբառեցան յանզգայութենէ մոլութեան, ո՞ըչափ
եւս յընտանիս նորա: 11Որոց թէպէտ եւ երախտիս բարեաց ինչ ոչ արա-
բաք՝ ըստ մեծին եւ բաւականի, այլ գրեթէ եւ իւիք ոչ մեղաք երբեք:
12Եւ ինչ առ ի մէնջ ընաւ ուրեք ոչ կրեցին վնաս: 13Եւ ոչ այսքան եւեթ.
46բ այլ եւ սիրեմք եւ բաղձամք զմիաւորութիւն Հոգւոյ, ողբամք // դառնու-
թեամբ լցեալք զլծակցութեանն բաժանումն, արտասուաւք թացեալ լի-
նիմք՝ յիշելով զձայն<ա>կցութիւնն յերբեմն ժամանակի: 14Նաեւ այժմ
իսկ փարիմք՝ իբրեւ զհարազատ եղբարքք՝ ի բաց առաքեալք, զհամաշն-
չութիւնն ողջունեմք ի հեռաստանէ եւ, զայնքան լսելով ի մեզ մեծա-

* Յովհ. ԺԹ 15
† Եբր. Ա 3
‡ Ղուկ. ԻԳ 31

բանութիւնս եւ բասրանս, ոչ զհաւասարն ախորժեմք դարձուցանել
փոխարէնս: 15Այլ զի՞նչ. «Տէ՛ր, մի՛ համարիր նոցա զայս մեղս»*: 16Եւ
պատ//ահեալ մարմնով՝ խնդամտութեամբ ընդունիմք, զուարթանամք 47ա
դիմաւք՝ զ'ի խորւոջն զեկուցանելով մտադիւրութիւն: 17Ոչ դանդա-
ղիմք, անիրաւ համարելով, համբուրիւ սրբութեան ողջագուրել: 18Իսկ
նոքա զզուեն՝ հանդիպեալ երբեք ուրեք, եւ արտաքսելով՝ ծանրապէս
հայհոյեն: 19Զհասարակացն քրիստիանոսաց աւրինաւորեալ մեր՝ ոչ
հաղորդին, տեղի պաշտաման եւ նշան: 20Թուի ինձ ոչ անխորհուրդ եւ
արտատեղի, ըստ նշանակութեան, գործ//եցեալն: 21Քանզի դիւաց բնու- 47բ
թիւն ոչ զաւրէ բերել զ'ընդ սուրբս լինել՝ խոշտանգանաց գիտելով իր
զոչն գնալ հեռի. 22եւ գարշք հոգւով, խարեալք մտաց խղճիւ, զղջման
անընդունակք, որպէս գոյ ասել, ծածկել կարծեն զտգեղութիւն ան-
ճանց հայհոյութեամբ սրբոց: 23Եւ չար ամպարիշտք, որպէս ահա տե-
սի բազում անգամ, զպաշտաւն բարի եւ զորս այնր վիճակի եւ մասին
դրսովեն անամաւթաբար ի նոյն միտս: 24Քանզի յանճանց ոչ ունելով
// տալ ումեք երեւութիւն բարեպաշտութեան եւ հաճելի վարուց՝ յար- 48ա
ճակին թշնամանել զայնպիսիս իբր լաւք՝ ի կեղծաւորութենէ առան-
կեալք ի բիբս անմտաց:

XVII. 1Ունիս ոչ սակաւս եւ աննշանս այդոցիկ յարացուցական աւ-
րինակս: 2Հայեա՛ց ընդ յաւիտենից սուրբսն, զորս ո՛չ արժէ աշխարհ.
յո՛րպիսեաց ատեցան եւ թշնամանեցան, ո՛րչափ հայհոյութիւնս, քա-
նի՛աւն տանջանս եւ կտտանս յանողորմից անտի եւ ի գազա//նաց մար- 48բ
դակերպից կրեցին յաւժարութեամբ: 3Եւ մեք, թէպէտ եւ վարուց նոցա
զնմանութիւն գոնեա դուզնաքեաւք ոչ կամեցաք բերել, զի մի՛ ասացից
անկարացաք, սակայն զոյգ եւ հաւասար եւ յաղագս նոցին իրաց զթշ-
նամանսն կրեմք: 4Դատապարտիմք յատենի անիրաւաց: 5Լեզուք չարք
եւ չրթունք պարսաւասէրք խաւսին զմէնջ ոչ իբրու վայել է բարեաց
եւ ճշմարտից ի հաւատս, այլ զանճանց իւրեանց անկս եւ պատկանա-
ւորս. // 6սուտք՝ զսուտս, փիծք՝ զանարժանս, թեւրք եւ խոտորեալք ի 49ա
ճշմարտութենէ՝ զծամածուռս եւ զոչ բնաւս յուղղութիւն մերձ: 7Բայց
մեք մի՛ միայն համբերեսցուք գոհութեամբ՝ իբրեւ յանիրաւի նախա-
տեալք եւ թշնամանեալք, այլ եւ աւրհնեսցուք զհակառակն, կերակ-
րեսցուք՝ տեսանելով քաղցեալ, ծարաւի հանդիպեալ՝ արբուսցուք, զգե-
ցուսցուք զմերկութիւնս, լիցուք բարեգործք առ ատելիս՝ որպէս աշա-

* Գործ. Է 59

49բ կերտք // Հեզոյն եւ Մարդասիրին, [8]ցուցցուք մի՛ անուամբ եւեթ զոլ
քրիստոնեայս զմեզ եւ ճշմարիտ դաւանութեամբ, այլ եւ այսպիսեաց
հրամանաց հնազանդութեամբ եւ կատարմամբ, վասն զի ի պղծոյ ան-
տի իւրաքանչիւր ոք ճանաչի ի ծառոց*: [9]Տացուք մշակողին հոգւոց
մերոց եւ տնկողի, որպէս այգի քաջաբեր եւ բարետոհմ, մի՛ փուշ, այլ
խաղող: [10]Մի՛ նախանձեսցուք ընդ ոմանս այգեաց՝ հակառակ յուսոյն
50ա պտղաբերեալս, մի՛ // մասամբ եւեթ ի մեզ բերկրեսցի ուրախ եղեալ տն-
կագործն: [11]Հատուսցուք զաշխատութեանցն համաւրէն պտղոցն բե-
բիւք: [12]Իսկ առաջին է պտղոցս այսոցիկ զկնի բարեպաշտութեան սէր
անկեղծաւոր եւ սերտ՝ ի սուրբ սրտէ եւ <յանկեղծաւոր հաւատոց եւ>† ի
մտաց բարեաց առ եղբարս ճշմարիտս եւ համախոհս՝ իբրեւ առ անդամս
Քրիստոսի, առ ատեցողս եւ թշնամիս եւ որոց գիւրին է զամենայն ինչ
50բ ի կսկծելեաց ասել եւ առնել մեզ վասն բարե//պաշտութեան՝ որպէս առ
երախտաւորս ի մեծամեծս եւ գեղեցկագոյնս, քան զոր ասաս: [13]Քան-
զի յաղագս այնորիկ եւ Աստուծոյ լինիմք նմանողք, որ հասարակա-
բար տեղայ զանձրեւ եւ ծագէ զարեգակն իւր ի վերայ չարեաց եւ բա-
րեաց, արդարոց եւ մեղաւորաց‡: [14]Այլ եւ այնպէս սիրեաց զաշխարհ՝
հեռացեալ յինքենէ եւ յանծանաւթս եղեալ, զարդարակս նմա եւ զար-
51ա ժանաւոր պաշտաւն եւ պատիւ՝ արարածոց եւ պատ//կերաց անշնչից
նուիրելով, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ զաւտարս, զպանդուխտս,
զկարաւտեալս հարկաւորացն: [15]Վասն զի նա տարագրեալս զմեզ յուխ-
տիցն աւետեաց եւ յինքենէ հեռացեալս արար բնակիցս եւ մերձաւորս
սրբոց ի ձեռն Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ, որում փառք եւ զաւ-
րութիւն <եւ պատիւ>§ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն¶:

---

* Տես Մատթ. ԺԲ 33:

† Ըստ Բն.-ի

‡ Մատթ. Ե 45

§ Ըստ Բն.-ի

¶ <Յիշատակարան գրչի:> /51բ/ Այս բանք քերդողականք ասացեալ մեծի Պուլտիկոսին Սարկաւագին՝ որ ի տիեզերահռչակ ուխտին Հաղբատ, զտի ես նուաստ ոմն ի մանկունս Եկեղեցւոյ: Արդ, մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց եւ յարուեստից, զի եւ մեք ոչ իշխեցաք յաւելուլ կամ պակասեցուցանել զոր ինքնին իւրով ձեռամբն գրեալ էր: Եւ ըստ այմ աւրինակի էր կտակն, յորում էր սա. սկիզբն եւ կատարածն եղծեալ: Եթէ գտցես ուրեք զբովանդակն, գրեա՛ եւ զմեզ յիշեա՛ ի Տէր:

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳԱ, ԵԹԷ ՈՉ Է ԱՐԺԱՆ ԸՍՏ ՄԱՍԻՆ ԲԱԺՆԵԼ ՁԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՑ ՁԱՅՆՍ Ի ՎԵՐԱՅ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՉ Զ'ԱՌ Ի ՅԻՆՔԵՆԷ ԳՈՐԾՍ ԿԱՄ ԿԻՐՍ

I. [1] Կարողութիւն բերել հաւատամք Բանին Աստուծոյ եւ ի մարդն լինել մարդկային ինչ, թէ էր կամեցեալ՝ ոչ կրել հարկաւ բնութեան, այլեւ ոչ յորովայնի, ըստ մեզ, ժամանակաւ զարգանալ, կամ յետ ծննդեանն աւր ըստ աւրէ եւ իմաստութեամբ եւ շնորհաւք՝ ըստ Սրբոյ Աւետարանին: [2] Բայց վասն զի մարդ լինել հաճեցաւ, մարդկայնովքն, որպէս կամեցաւ, պարտ էր յաշխարհի ընթանալ եւ մի՛ հրաշափ<առագոյնս ինչ եւ մարդեղութեան իւրոյ անարժանս ցուցանել յանկարծաւրէն, վասն զի կարգի եւ յարմարութեան, որ-պէս եւ յամենայնի Արարիչ է: [3] Վասն որոյ եւ ի սկզբանն, ոչ եւ ի վայրկենի միում, որ եւ կարողն էր գոյացուցանել զէիցս բնութիւն, կամեցաւ, այլեւ գործոյ եւ հանգստեան աւուրս որոշէ, զի ցուցցէ ոչ միայն բնութեան արարիչ, այլեւ աւուրց, եւ մի՛ խառնակիչս եւ անդաս, որպէս թուեցաւ արտաքնոցն, եղիցի յարարածս Աստուծոյ: [4] Եւ իմաստութեամբ թէ նայեսցի ոք եւ ի նախախնամականսն յետ արարչութեան, որք եղենն եւ լինինն եւ լինիցին, անկարգաբար ինչ տեսանել ոչ կարասցէ, քանզի զոչէն զիա՞րդ ոք տեսցէ: [5] Թողեալ անդր զքերթողացն ստեղծուածս կամ, զտիրականագոյնն ասել, առասպելս, ո՞րչափ եւս արժան էր, ուր քան յամենեսին պէտք էին, վասն անչափ մեծութեան խորհրդոյն, յարմարութեան եւ կարգաւոր իրաց՝ անընտանի ինչ ի ներքս ոչ բերել, եւ մանաւանդ, զի յայն իսկ եկեալ էր, ընդէ՞ր իսկ բնաւ եւ մարդ լինել յանձն առնոյր, թէ ոչ էր հանդերձեալ: [6] Էր մերովքս վարիլ եւ առանց մեղաց, քանզի զհրաշա-փառագոյնսն առաւել յայնժամ պատշաճ էր եւ իրաւացի կատարել: [7] Մի՛ պատմութեամբքն եւեթ զիրսն չափեսցուք, ուստի բազումք ի ներքս մտանեն անտեղի իմացուածք, այլեւ ի ծածկեալսն, զորս մա-նաւանդ ճշմարտապէս է քննելի, յառեսցուք. «Քննեցէք,— ասէ,—*

---

* *Բն.՝ յասեսցուք*

զ Գիրս եւ տեսէք»*. ո՛չ վարկպարագի, այլ մեծաւ եւ դժուարըմբերելի աշխատութեամբ՝ բոլորովիմք առ ճշմարտութիւն զմիտսն առաքեալ եւ հաստատեալ: 8 Ապա եթէ ոչ իցէ այսպէս այս, զի՞նչ արդեաւք, յորժամ գնալ եւ խաւսել եւ տեսանել կամ լսել կամ հոտոտել, այլեւ ուտել՝ ոչ ունելով որովայն, կամ սուսեր ի ձեռին բերել եւ գաւտի ընդ մէջ ածել լսիցիմք ի Գրոց, պարտիցիմք իմանալ: 9 Մի՞թէ յաւդապատ, ըստ մեզ, ունել բնութիւն, զի մի՛ զամենայնն ասասցուք՝ զմենամարտիլն, զյառնելն, զնստիլն, զննջիլն՝ երբեմն միայն, եւ երբեմն՝ յաթոռ, երբեմն՝ ի քերովբէս կամ ի կառս, այլեւ տեսլեամբ՝ մարդոյ հինաւուրց երեւեալ: 10 Իսկ Որդի՝ իբրեւ Որդի Մարդոյ եւ նախ քան զլինելն եւ զայլսն մարդկաւրէնագոյնս զիջանելն եւ տեսանել, զհարցանելն անգիտաբար, զզղջալն, զցասնուլն, ոչ սրտի եւ ոչ զնովաւ արեան ունողի զնախանձելն, զտրտմելն, զատելն, զերեսս դարձուցանել կամ ի վերայ հաստատել երբեմն յանաւրինաց եւ յամբարշտաց, իսկ երբեմն՝ ի վերայ արդարոց եւ երկիւղածաց: 11 Արդ, որպէս վասն զայսոսիկ զանմարմին բնութենէն լսելոյ, այսպիսով բնութեամբ զնա գոյ ոչ կարծեմք, այլ տնաւրէնութիւն աստուածային կամ նախախնամութիւն կամ այլ ինչ անուանեալ զիրսն կոչեմք, ըստ պի<տ>ոյից մերձակայից իրաց եւ ժամանակի, նոյնպէս եւ ի մարդն լինել Բանին Աստուծոյ, որ եւ Աստուած զմարդկայինսն կրելով՝ ոչ հարկաւորապէս զայնոսիկ, որպէս թէ բռնադատեալ յաւրինաց բնութեանն, պարտիմք ասել կամ իմանալ զախտակրելն, այլ կամաւ եւ զիջանելոյ առ մերսն: 12 Մի՛ մեզ կարծեաւքն կամ զ՚առ աչաւքն վասն ապացուցիցն ի վերայ բերցեն արագունքն, վասն առ իմանալ ճշմարտութեանն, վասն զի եւ այնոքիկ ճշմարիտք, քանզի յԱստուած եւ առ յինքենէ նշանակեալսն՝ սուտ կարծիք եւ խաբէութիւն ոչ է եւ ոչ ասի: 13 Բայց ըստ պիտոյից, որպէս ասացաւն, այնոքիկ՝ ի պարզ եւ յամենամաքուր բնութենէն, այլեւ ըստ նշանակի իրիք լինէին մատակարարեալք եւ ցուցեալք, իսկ եթէ հարկաւորապէս, որ եւ մանաւանդ վայել է բնութեանս, այլեւ զայլսն եւ զախտսն, զորս ի մեզ կրել՝ ըստ նոցայն կարծեաց, եւ ոչ յետ ընլոյն՝ քաղցնուլ քառասնիցս աւուրց: 14 Բայց վասն զի ոչ զամենայնս մերսն կրեաց զախտս, այլ զանպարսաւսն եւեթ, զի եւ ոչ զմեղաց եւ զապականութեան, յայտ է, թէ զորս ախորժէրն եւ որովք մեզ ի դէպ էր բարեկրիլն, նաեւ՝ զորս ի խրատ եւ յուսումն

* Յովհ. է 52

մեզ կրեաց, վասն որոյ եւ մարդն իսկ լինել յանձն էառ, սոյնպէս եւ իւրովն մարմնով ի մերմէս բնութենէ առեցելով, քանզի իւր իսկ է ճշմարտապէս, զաստուածավայելուչսն կատարէր զսքանչելիս, ուստի եւ ոչ կամաւք միայն կամ բանիւ, այլեւ թքով բերանոյ եւ ձեռին մերձաւորութեամբ եւ ոտիւք, նաեւ մարմնոյն հանդերձի քղանցիւք զախտս եւ զմահ ի բաց առաքէր:

II. [1] Եւ ո՞ւր է այժմ եւ յայսոսիկ բնութեանցն զանազանութիւն. թէ անշփոթ եւ անփոխադրելի զաստուածայինն խոստովանիմք բնութիւն, եւ բնաւ ոչ յորմէ ունէրն կողոպտեալ կամ նուաստացեալ ինչ՝ ի լինելն մարդ, այլեւ ոչ զմարդկութիւն կամ թէ զոր ըստ մեզն ասել բնութիւն բարձեալ ինչ ի միջոյ, որպէս թէ խափանեալ՝ ի գոլոյն մարմին անձնաւոր եւ մտաւոր: [2] Վասն որոյ մարդ միանգամայն եւ Աստուած ուսաք խոստովանիլ՝ ոչ սկիզբն առեալ Աստուածութեան, այլ մարդկութեան, սակայն մի եւ նոյն, ոչ այլ եւ այլ դիմաւք կամ բնութեամբ, թէպէտ եւ ոչ համաբունք եւ նոյնագոյք: [3] Քանզի նոյն, ըստ Աստուածութեան՝ անեղ, իսկ ըստ մարդկութեան՝ եղեալ ի կնոջէ. այս՝ ի լրման ժամանակաց, իսկ>* // այն՝ նախ քան զժամանակս եւ 256ա
զյաւիտեանս, անճառ ի Հաւրէ՝ անմարմնական ծննդեամբն, անճառ եւ ի մաւրէ՝ ըստ մարմնական ծննդեանն, անպատմելի՝ ըստ անեղութեան, անպատմելի եւ ըստ եղելութեան, թէպէտ եւ ըստ ոմանց՝ դիւրահաս իրքն կարծիցին աստուածավայելուչ առաջին ծնունդն, ոչ՝ մարդկավայելուչ եւ երկրորդն, քանզի՝ «Ո՞ պատմեսցէ զազգատոհմն անհաւրն եւ անմաւր»†: [4] Ո՛վ մեծի խորհրդոյս, եւ զի՞րդ ոչ պատկառեն ոմանք, որոց խաղ ճշմարտութիւնն թուի, եւ փոքր՝ մեծն, եւ լոյսն՝ խաւար, որպէս զառանցելոց նուաստաբար իմանալ կամ խաւսել յաղագս ամենեւին ծայրագունացն եւ անճառ իրացն:

III. [1] Արդ, նմա, որ այսպիսին եւ այսքան վեհագոյն, զի առաւելն թողցուք, դժուարի՞ն արդեաւք էր կամ անհնա՞ր, թէպէտ եւ քեզ թուիցի, զտարբերսն միաւորել ըստ ճշմարտութեան բնութիւնս, եւ զի՞րդ անհնարինքն մարդկան՝ հնարաւորք Աստուծոյ: [2] Բայց, որպէս յամենայնին աքանչելի երեւի, եւ է եւս առաւել յայսմ, քանզի ոչ ինչ կարի մեծ է, կամ բնաւ իսկ «առնել Աստուծոյ մեծամեծս

* ՍՂ 504 հիմք գրչագրից մէկ կամ երկու թերթ ընկած է, վերականգնուած է ըստ ՄՄ 6453-ի:

† Գործք Ը 33

եւ հրաշակերտս»[*], որպէս ի Յովբ գրեալ է: [3] Բայց մարդոյ երեւել
բնութեամբ եւ մարդ իսկ լինել մտաց անհասանելի է, յայտ է, թէ եւ
256բ բանի բոլորովիմ//ք անճառելի: [4] Ուրեմն, ճշմարիտ է ասել՝ զամենայն
մեծամեծսն Աստուծոյ եւ յամենայնին սքանչելին գոլ նմա, նուաստ
ամենեւին առ մարմնով տնտեսութեանն կամ մարդեղութեան յեղանակ
համեմատելով վարկանել: [5] Սակայն եկեսցուք ասել, որքան վայելուչ
է մերոյս տկարութեան եւ արժան, այլեւ ճշմարիտ իսկ, թէպէտ եւ
տեսանեմք զանազան յեղանակաւք յԱստուածաշունչ Գրոց ասացեալս
եւ վասն Փրկչին մերոյ բանս ե՛ւ երբեմն որպէս զմարդոյ, ե՛ւ երբեմն՝
որպէս զ՚յերկոցունց զմիոյքն, ըստ որում եւ էրն իսկ, վասն զի ոչ
միայն եւ մարդ սոսկ, այլեւ Աստուած եւ մարդ համանգամայն: [6] Եւ
գիտես, զի համանգամայնն ոչ է որոշիչ բնութեանց յետ միաւորու-
թեան, ասեմ՝ այսպէս իմանամք եւ ասեմք զաստուածավայելուչսն,
խոստովանիմք եւ զմարդկայինսն ներգործութիւնս եւ կիրս, այլեւ
զկամսն, զոր գտին ասել, բայց եթէ ոչ հարկաւորապէս, այլ կամելով՝
ըստ մերոյս բնութեան, ըստ մեզն եղեալ Աստուած՝ կրէր:

IV. [1] Ո՛չ անվայելուչ վարկանիմ յարացուցիւ ոմամբ հաւատար-
մացուցանել եւ զայն յինքենէ իսկ, եւ եթէ փոքր ինչ զբանս վասն
հաւաստապէս զեղեալսն ցուցանելոյ երկայնեսցուք, ճանճրութեան
257ա ոք // հնազանդեսցի, քանզի այսպէս վայել է ի միտ առնուլ տալ,
զորմէ ինքն աւրինակ յարացոյցս, զի այսպէս եւ յայս անուանեցից:
[2] Եկն երբեմն ինքն, որ հանդերձեալն էր ըստ աւետեացն լինել զա-
ւակ Աբրահամու, յոր եւ աւրհնելոց էին ամենայն ազգք երկրի, առ
Աբրահամ ի Մամբրէ, ոչ միայն զի զարդարսն պատուեսցէ գալս-
տեամբն եւ զցանկութիւն վասն ազատ եւ ազատէ[†] որդի ունելոյ լցցէ
կամ զի զամբարշտացն առ Աստուած եւ զտմարդեացն կորուստ նմա
ծանուսցէ՝ որպէս բարեկամի, եւ յաղաչանս նմա համարձակութիւն
տայցէ եւ զմարդասիրութիւն, որ եւ <առ> չարսն, հրապարակալուր
արասցէ, այլ զի եւ զհիւրասիրութիւն եւ զաւտարասիրութիւն, զոր
կատարելապէս ունէր հաւատացեալն, պայծառ եւ փառաւոր ցուցցէ:
[3] Եւ որոց զկնի եւ առ նովաւ զգերազանցեալ չափ պատուոյ փոխա-
բինին առ աւտարս եւ առ ամենայն մարդիկ սիրոյ սահմանեսցէ,
զոր եւ յետոյ էր յինքն փոխադրելոց զմեր առ միմեանս զսէրն,

---

* *Յոբ Ե 9, Թ 10*

† *«Վասն ազատ եւ ազատէ» արտայայտութեան իմաստն անորոշ է:*

վասն որոյ եւ կոչեսցէ «աւրհնեալս Հաւր իւրոյ»՝ ասելով զինքեանն դարմանիչս ժառանգել զնոցայն պատրաստեալ ի սկզբանէ աշխարհի զարքայութիւն: [4] Եւ եկն ո՛չ միայն, այլ երկու խորհրդականագունիւք սպասաւորաւք, ամբարձ զաչսն հիւրընկալն, // ետես զարսն, քանզի* 257բ
այսպէս ասէ աստուածային պատմութիւնն. «Յարեաւ, ընթացաւ ընդառաջ եւ երկիր եպագ»†: [5] Աղաչէր հանդչել անաշխատիցն՝ որպէս աշխատելոց, լուանալ եւ զոտսն հրաւիրէր զանմարմնոցն. ո՛յ մեծի համարձակութեանն եւ ճշմարիտ սիրոյն, արդարեւ սիրէ Աստուած, եւ «որ կայ ի սէրն, բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ»‡: [6] Յանդեայ ընթանայր, հասուցանէր զորթն, զոր եբեր, հրամայէր եւ Սառռայի թրել նաշիհ եւ առնել բաղարջս եւ զայսոսիկ հանդերձ կաթամբ կոդով բերեալ՝ մատուցանէր նոցա, եւ կայր ինքն ի սպասու, մինչեւ կատարեցին զուտելն: [7] Եւ արդ, զի՞նչ ասիցես, զի՞նչ քեզ թուեսցի՝ կերա՞ն ճշմարտապէս եւ լուացա՞ն ոտիւք, թէ՞ ոչ: [8] Եւ եթէ ոչ ասիցես կամ կարծիցես, սուտ առնես զաստուածաբանութիւնն, իսկ եթէ կերան եւ լուացան, որ է ճշմարիտ, զիա՞րդ այսոքիկ առ անմարմնայինսն, քանզի զլրումն խնդրէ թափումն եւ զհանգիստ՝ աշխատութիւնն, եւ քաջայայտ է անմարմնոյ ընդ այսպիսիւք ոչ անկանել ախտիւք, որոյ ոչ ստամոքք եւ ոչ որովայն, ճանապարհ եւ ընդունակ կերակրոյ, ոչ ստամոքք եւ լեզու եւ շրթունք այսոցիկ սպասաւորք եւ գործիք եւ ոչ թուրծք եւ այլք յայսոցիկ պէտս եւ ոչ
ոտք աշխատակի//ք հանգստեան կամ լուացման կարաւտք: [9] Իսկ 258ա
արդ, զի՞նչ պարտ է կարծել եւ ասել կամ զո՞ր հաստատուն համարել, եթէ ոչ՝ զոր աստուածայինն հաւաստէ Մովսէս, զի ընկալան ճշմարտապէս զամենայն զհիւրոյսն անճառելի իմն աւրինակաւ եւ ծախեցաւ կերակուրն, նոյնպէս եւ առ Ղովտաւն իրքն կատարեցան, քան<զի> եւ նա զերկուսն ի Սոդոմ երթեալսն ընկալաւ հրեշտակս:

V. [1] *Եւ արդ, եթէ անմարմին գոլով նախ քան զմարդանալն՝ վասն տեսչութեան եւ խորհրդոյ եկեր եւ զամենայն զհիւրավայելուչ սպասաւորութիւնն ընկալաւ յառնէն, զիա՞րդ է անհաւանելի ասելն, եթէ ի մարդն լինել ինքեան, այսինքն է՝ Որդւոյն Աստուծոյ:* [2] *Մարմնականաւքն վարէր ոչ միայն կերակրովք եւ ըմպելեաւք, այ-*

---

* *Մատթ. Իե 34*

† *Ծն. ԺԸ 2*

‡ *Ա Յովհ. Դ 16*

լեւ այլովք բնաւորականաւք կրիւք, բայց ի մեղաց, եւ ոչ ի հարկէ
աւրինաց բնութեան լինէր բռնադատեալ որպէս մեք, այլ կամաւ
յայն խոնարհեալ, որ եւ առաւել է գեղեցկագէպ եւ քաջայարմար:
3 Մի՛ ասիցես, եթէ անդ անմարմին գոլով՝ ոչ էր կարաւտ կամ ընդ
հարկաւ, բայց աստ էր վասն մարդկութեան, այլ զա՛յն ած զմտաւ,
եթէ զոր ինչ կամիցի մի անգամ, կարող է առնել, թէպէտ եւ եղական
258բ բնութեանն // հնարաւոր ոչ բնաւ կարծիցի: 4 Եւ զայն դարձեալ, թէ
նա նոյն ինքն, որ վասն տեսչութեան անբնաւորապէս ի կերակուր
խոնարհիլ եւ զոտից լուացումն յանձն առնուլ կամեցաւ, յայնժամ
եւ այժմ կարող է զոչ բնաւորն մարդոյ, թէպէտ եւ մարդ էր, բերել
յինքեան եւ ցուցանել, այսինքն՝ ոչ ի կերակուր եւ յըմպելի մերձենալ
եւ ոչ այլ ինչ ի մերոցս կրել, յորոց կրեացն: 5 Բայց զի մի՛ զանվա-
յելուչսն չափոյ մարդանալոյն առնիցէ, ոչ կամեցաւ, եւ զի մի՛ առ
աչաւք եւ ոչ ճշմարտապէս լինել մարդ թուիցի ումեք, քանզի զայս
յոլովք կարծեցին եւ յետ այնչափ տարացուցից, ո՛րչափ եւս առանց
այնոցիկ: 6 Որ ի Քրիստոս Յիսուս հաւատայ եւ խոստովանի ոչ իբր
ի լոկ մարդ միայն, այլ որպէս յԱստուած մարդացեալ, այսպիսեաւք
յեղանակաւք իմն կրել նմա զմերս իմանայ եւ ասէ: 7 Զի ի հարկէ
բնութեանն ասել՝ յաղթահարեալ զնա կամ ամաւթոյ արժանի գոլ Բա-
նին Աստուծոյ՝ զամենայն մարդկայինսն տալ եւ զչարչարանս խաչին
իւրով մարմնովն ինքեան կրել, Նեստորի է եւ Դիոդորի՝ ասողաց
վեր<ա>բերութեամբ եւ ոչ ճշմարտութեամբ՝ վարկանել պարտ Բա-
259ա նին զչարչարանսն, եւ է այս՝ ըստ որում Տէրն ցա//չակերտսն ասէր,
թէ՝ «Որ զձեզ անարգէ, զիս անարգէ»*: 8 Եւ ի դէպ ժամանակի տես-
ցուք զ Նեստորիսն եւ զերկուց ասացողացն բնութիւնս՝ ընդ միմեանս
դատելով, զի գիտասցես ամենեցունց նոցա զմի զգայռեալ հայհոյու-
թիւն, թէպէտ հայթայթին սիղոբայիւքն գողանալ զթեթեւամիտսն եւ
զանուսմունս: 9 Իսկ առ այժմ ջանասցուք ի զրպարտութենէ, որոց
ոմանց սուտն եւեթ է սիրելի եւ ճշմարտութիւն սուղ ինչ կամ բնաւ
ոչ փութալի, զանձինս թափել, թերեւս հաւանիցին կամ ոչ:

VI. 1 Ասէք մեզ զանչարչարելի բնութիւն Բանին ընդ չարչարա-
նաւք արկանել, յորժամ Աստուծոյ զչարչարանս ասիցեմք եւ յորժամ
մի ասիցեմք բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, զ՚ի Կուսէն
առեալ մարդկութիւն խոստովանել ոչ ասէք, որպէս Եւտիքէսն այն,

* Ղուկ. Ժ 16

ոչ եթէ ոչ գիտեն ասողքն զայսոսիկ, թէպէտ եւ ոչ ամենեքեան մեզ ըստ առաքելական ուսումնն եւ ըստ սրբոցն աւանդութիւնս հարցն եւ սահմանս ոչ զանցանել ի խոստովանութեանն հաւատոյ մասին. բայց զի զամենայնն ասել թողից՝ վասն աւելորդս ասել ոչ երեւելոյ: [2] Ո՞ ոք ի մեղանչականաց դատապարտել զանմեղս համարեցաւ գայթակղութիւն, թէպէտ եւ ոչ ի խորս չարեաց ժամանելոց // եւ արհամարհողաց կարծիցի, այլ ի չափաւորաց, վասն զի ե՛ւ Եսաւ, ե՛ւ եղբարքն Յովսէփայ, ե՛ւ Ահարովն, ե՛ւ Մարիամ, զի մի՛ ասացիս զ Դաթան եւ զ Աբի<ր>ոն եւ զկորխացիսն եւ ամենայն ժողովուրդն առ Քաղեբ եւ Յեսու զճշմարիտն ասողս, եւ նոյն ինքն՝ առ Մովսէս եւ Ահարաւն, ոչ միանգամ, այլ եւ յոլովակի, մի՛ բնաւ յիշեսցի եւ որ զ Յովբայն չարախաւսէր: [3] Բայց զբարեկամքն զ Դաւթայ՝ Սաւուղ եւ զհրէիցն համա<յ>ն զ Եղիայէ՝ Աքաաբ խանգարիչ գոչելով Իսրայէլի, իբր զինքն գոլ մոռանալով, զոր զեկոյց մարգարէն, զանանիանցն՝ քաղդէացիքն եւ զ Դանիէլէ՝ քրմացն ժողովք, այլեւ իշխանքն առ Դարէհիւ եւ առ Կիւրոսիւ, ամենայն ազգն, որ եթէ զ Տեառնէ եւ զառաքելոցն իշխանք ժողովրդեանն եւ որք ընդ նոսա, կամ զառաջնմէ յետ առաջնոյն վկայէ եւ զայլոց նոյնք կամ այլք յիշել բնաւ մի՛ լիցի: 259բ

VII. [1] Բայց դուք դատաստան արդա՛ր դատեցարուք եւ մի՛ առ աչս դատիք, այլ ուղի՛ղ, մի՛ թշնամիս զմեզ, այլ սիրելիս եւ յոյժ մանաւանդ փափագողս սիրելութեան ընկալարուք: [2] Վասն զի ողբամք դառնապէս զ՚առ ի միմեանց վարատմանն պատճառս եւ զվարատումն եւ աղաւթեմք ջերմապէս զհաւաքումն՝ // «Տէ՛ր,— ասելով,— որ չինես զկործանեալն Երուսաղէմ եւ զցրուեալսն ժողովս Իսրայիլի, որ ի ծառայութենէ ազատես զազատ ազգիսն, եւ յանապատի հանգուցանես բիւրապատիկ առատութեամբ զանսովորս պարգեւաց՝ զծարաւ եւ զսով, ոչ հացի եւ ոչ ջրոյ, թէպէտ եւ զայնոսիկ բժշկես, որում ամենայն ինչ անհնարին է, դիւրահնար յոյժ: [3] Ի հեղեղաց ջուրց փրկես, հասին ջուրք յանձինս մեր, եկաք ի խորս ծովու եւ պտոյտք զմեզ ընկղմեցին եւ շրջանք գետոց պաշարեցին, եւ զմեզացն ասեմ եւ զհերձուածողականն ալիք եւ զբաւսանք անցին ի վերայ մերոց գլխոց եւ մերժել կարծեցաք յաչաց քոց բարձանց, որք հային ընդ ամենայն երկիր: [4] Իցէ՞ թէ յաւելցուք հայել ի տաճար սուրբ քո, որոյ քարինք ցրուեցան եւ քակտեցան, մինչեւ ոչ մնաց քար ի քարի վերայ, այլեւ հրով, զոր բորբոքեաց մարդասպան դահիճն, տոչորեցաւ շինուածն, եւ մեծն Յովէլ ճայնակցէ ողբոյս. «Հուր եկեր զգեղեցկութիւն անա- 260ա

պատի»*: [5] Շիջցի արդ, Տէ՛ր, քոյովն, զոր եկիր† արկանել յերկիր,
հրովն ապականագործս այս հուր, եւ ծաղկեսցի դարձեալ Իսրայէլ՝
որպէս շուշան, ծաղկեսցի եւ լցցին ամենայն երկիր պտղով նորա,
զի քոյդ հուր միայն գիտէ ոռոգել: [6] Ուրախասցի միւսանգամ անա-
260բ պատն, ծարաւի անապատն Յորդանանու, այլեւ // զաւտար հուրն
զսոդոմացւոց կա՛մ շիջուսցես, կա՛մ զՂովտ զերծուսցես ի լեառնն.
եթէ իցէ անդ բաբելացի ոմն հուր, քոյոյն մի՛ կարասցէ վնասել, թէ-
պէտ եւ ի ներքս իցեն կապեալք, զբորբոքիչսն ծախեսցէ, զի սուրն
եւ որոգայթն, զոր սրեցին եւ թագուցին, ի սիրտս իւրեանց մտցէ եւ
զոտս իւրեանց առցէ, եւ անձինք մեր ապրեսցին որպէս ճնճղուկ յո-
րոգայթից որսողացն եւ ի մերկացեալ սրոյ մեղաւորացն: [7] Կամեա՛ց
ժողովեալ զորդիս սրբոյ քաղաքին ընդ ջերմ գթոյ քոց թեւովք եւ
զոչխարս քո ի գաւիթս քո, եթէ զաւտարսն ի գաւթէն ժողովեցեր ի
նոյն լինել մի հաւտ քեզ սեփականս, զոր անուանեցեր եւ արարեր
քո՝ ո՞չ միաւորեսցես»: [8] Այսոքիկ մեր հայցուածք, միանգամայն եւ
ողբք, եւ զիա՞րդ ոչ սիրելիք կամ ախորժողք նախ զգեղեցիկն սիրոյ
կապ, զհամաձայնութիւնն ասեմ ուղղակի ի Քրիստոս խոստովանու-
թեանն, եւ ապա զսիրոյն շղթայս, վասն որոյ մի՛ որպէս յատելեաց,
այլ իբր ի սերտ <ս>իրելեաց եւ բարեմտաց, սուրբ ունողաց սիրտ եւ
անկեղծաւոր հաւատս. զամենայն ի մէնջ, որ ինչ վասն այսր խնդրոյ,
ընկալարուք, ո՛վ եղբարք:

261ա VIII. // [1] Արդ, եթէ ըստ Ապողինարի ամբարշտութեանն՝ ասէաք
Քրիստոսի ունել, այսինքն Բանին Աստուծոյ, մարմին միայն առանց
մտաւոր անձին, յիրաւի կարծէիք ասել մեզ զանչարչարելի բնութիւնն
չարչարեալ եւ ընդ չարչարանաւք, քանզի զգայութիւն չարչարա-
նացն, ի միայն մարմին գոլով՝ առանց մարդկայնոյ անձին մտաւորի,
Բանին Աստուծոյ, ոչ մարմնոյն կամ, զճշմարիտն ասել, մարդացելոյն
Աստուծոյ, այլ միայն Բանին լինի ասացեալ, որ է ամբարշտութիւն,
վասն զի անանձն մարմին զիա՞րդ կարասցէ զգալ զչարչարանս: [2] Եւ
եթէ անանձն ունէր մարմին Բանն, որպէս Ապողինարի թուի, ապա
Բանն, որ ամենեւին արտաքոյ է չարչարանաց, ընդունէր զցաւոցն
զգայութիւն, զոր մի՛ լիցի եւ կարծել անգամ ծանաւթից ճշմարտու-
թեանն: [3] Բայց յորժամ մարմին անձնաւոր, ըստ որում էն ասեմք

* Յովէլ Ա 20

† Բն.՝ երկիր

Բանին ունել, ոչ այսպէս իմանի, վասն զի թէպէտ եւ մարդկայինն անձն անհաղորդ է մարմնական չարչարանաց եւ անհատ ըստ ինքեան, սակայն ի մարմնի գոլով՝ զգայակից լինի ամենայն բնաւորականացն կրից եւ արտաքուստ պատահելոց, ուստի եւ անձնաւորականք կոչին ամենայնքն: [4] *Այլեւ ոմանք զոմանս յախտիցն մասունս անձին*
անուանեցին՝ զցաս//ումն եւ զցանկութիւն եւ զայսպիսիս, եւ որ ինչ 261բ
վասն այսպիսեացս բանք իցեն, իւրում տեղւոյ եւ ժամանակի չտեմարանեսցին: [5] *Սակայն յայսցանէ ի միտ առնումք, թէ զգայակից է հոգին ամենայն բնաւորականացն եւ արտաքնոցն ախտից մարմնոյն, եւ զի զԲանն Աստուած խոստովանիմք՝ միայն ոչ մարմին, այլ անձն մտաւոր առնուլ յԱստուածածին Կուսէն, այսինքն՝ մարդ լինել Բանն՝ ըստ Գրոց:* [6] *Յայտ է, թէ ըստ այսմ ինքն՝ Յիսուս Քրիստոս, որ է մարդ միանգամայն եւ Աստուած, ասի չարչարեալ ճշմարտապէս եւ անչարչարելի մնացեալ, զի ոչ է արժան եւ մարթ յետ միաւորութեանն յերկուս բաժանել զմիացեալսն բնութիւնս, զի մի՛ ըստ Նեստորի ի հարկէ երկակս ի ներքս մուծանիցեմք Քրիստոսս եւ մի՛ բնաւ իմասցուք առանձին ինչ մարդոյ եւ առանձին՝ Աստուծոյ, զկնի մարմնանալոյն մարդանալոյ. մի ձայնս եւ մի գործս կամ կիրս, մի եւ կամս, զի մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ Որդի Աստուծոյ:* [7] *Նոյն ինքն, որ նախ քան զյաւիտեանս ի Հաւրէ, ի լրման ժամանակաց ի Կուսէ ծնեալ, զամենայն ինչ, զոր կրեաց կամ գործեաց, միոյ եւ նմին ասեմք:* [8] *Զնոյն ինքն բովանդակեալ յամենայնի եւ անբովանդակելի, կրեալ ի գիրկս եւ կրող զամենայն, քաղցեալ եւ կերակրիչ, ծարաւի*
եւ արբուցիչ, զարգաց//եալ եւ ամենակատար, ունայնացեալ եւ լի, 262ա
այլեւ լցուցիչ, մեծատուն եւ աղքատ, ընդ հարկաւ եւ ազատ, աշխատեալ եւ հանգուցիչ, անէծք եւ աւրհնութեան բաշխիչ, ծառայ եւ Տէր, կերպարան Հաւր եւ կերպարան ծառայի, առանց դպրութեան եւ վարդապետ, տկարացեալ մարմնով եւ Հաւր զաւրութիւն, զարհուրեալ եւ քաջալերիչ՝ իբրեւ յաղթող աշխարհի, եւ նախ քան զայս փորձեալ եւ պարտեալ զփորձիչն, երկրորդ Մարդ եւ յերկնից Տէր, չարչարեալ եւ անչարչարելի, վասն զի իւրացոյց զամենայն յաղագս մարդանալոյն: [9] *Եւ եթէ ինքն մարդ եղեալ ասի ըստ Գրոց, ո՞յր ապա իցեն չարչարանքն եւ այլն ամենայն, եթէ ոչ մարմնացելոյն Աստուծոյ, որոյ եւ մահն եւ յարութիւնն եւ մշտնջենաւոր կենդանութիւնն:* [10] *Թէպէտ եւ այլ եւ այլ ձայնքն կամ գործքն թուիցին, մի՛ ոք գայթակղեսցի եւ մեծապէս այլ եւ այլ զմին կարծելով զմարմնացեալն Աստուած եւ առանց*

յեղման: [11] Պաւղոս հաստատեսցէ զգայթակղութիւնն վասն Հաւր՝ յիւր
Որդին ոչ խնայեալ ասելով, այլ վասն մեր ամենեցուն մատնեալ*, որոյ
եւ մահուամբն հաշտեցոյց ընդ ինքեան զմեզ, եւ ոչ այսքան միայն,
262բ այլեւ զսքանչելին ասել, զի զոչ գիտողն զմեզս // վասն մեր մեղս
արար†, ամենայն իրաւք զԲանն յայտնէ մարմին եղեալ: [12] Տեսանե՞ս
զ՚ըստ միոյ ասացեալսն, եւ Յովաննէս զԲանն տեսեալ «զ՚ի սկզբանէ»
ասէ. «Ընդ որ հայեցաքն, եւ ձեռք մեր շաւշափեցին ոչ զմարմինն, այլ
նովաւ զԲանն կենաց, որ առ Հաւրն էր՝ յաւիտենական կեանքն, նա
յայտնեալ երեւեցաւ»‡, որ եւ զփառսն խնդրէր, ոչ այլում, այլ ինքեան
ունողին ի սկզբանէ աշխարհի, վասն զի ունայնացաւ մարդանալով,
որ եւ <ի> լրութենէ իւրմէ զամենեսեան զմեզ շնորհաւորեաց, զոր
վիրաւք ձեռացն եւ կողիցն Թոմաս ծանեաւ Տէր եւ Աստուած գոլ§,
ո՛չ անգիտացեալ, թէ անչարչարելի է աստուածային բնութիւնն, այլ
զճշմարտութիւն միութեանն քարոզեաց: [13] Այսպէս եւ ի ծնէ կոյրն
վարդապետեցաւ՝ ի պահանջելն որդի յՈրդի Աստուծոյ հաւատոյն,
վասն զի տարակուսեցաւ՝ զո՞ զնա լինել. «Ե՛ւ տեսեր զնա, ե՛ւ որ
խաւսիդ ընդ քեզ, նա է»¶: [14] Ո՛վ բարուցն ազնուականութեան, ոչ
վասն մարդ տեսանելոյն երկուանալ կամեցեալ, որպէս բազումք եւ
այժմ եւս, եւ ոչ հաւաստիս պահանջեալ՝ գիտելով, թէ ի միոջէ լու-
սաւորեցաւ, առաձեռն ընծայէր զհաւատն եւ երկիր պագանէր:

IX. [1] Առողջասցուք իբրեւ զկոյրն, մանաւանդ եթէ լիցուք հաւա-
263ա տացեալք եւ ոչ տարա//կուսեալք, վասն զի հաւատացելոց յայտնի է,
եւ քննողաց՝ միգով ծածկեալ՝ «Արդարեւ Որդի Աստուծոյ ես»**, որք ի
նաւին աշակերտքն ասացին երկրպագելով, յորժամ թեթեւաբար ծանր
մարմնովն ի վերայ լոյծ բնութեանն գնացեալ զնա տեսին, երբեմն եւ
Պետրոս միայն, որ եւ երանեցա<ւ>ն: [2] Եւ զ<ի> մի՛ այսոքիկ եւ սոյն-
պիսիք ասացեալք եւ իմացեալք այլք թուե<ս>ցին ոմանց քաջայայտ
ոչ ունել զիմաստս, իբր թէ միոյ իցեն պատկանաւորք մարդացելոյն
Աստուծոյ, ուր ամենեւին գայթակղութիւնն հրէականաց եւ հեթանո-

* Հռոմ. Ը 32
† Բ Կոր. Ե 21
‡ Ա Յովհ. Ա 1–2
§ Յովհ. Ի 27, 28
¶ Յովհ. Թ 8
** Մատթ. ԺԴ 33

սականացն յիմարութիւն մտաց առնիլ թուի: [3] Անդ իրքն կանխագի-
տութեամբ Հոգւոյն ճշմարտութեան յայտնապէս մատակարարեցան,
վասն զի այն ինչ Տեառն եւ Աստուծոյ, զբանական մարդկային հոգին
ի ձեռս Հաւր յանձն արարեալ եւ յերկբայս դատաւորին զինուորաց
վասն մահուանն եղեալ, զի իջցի ի խաչէն, գեղարդեամբ զաստուա-
ծային մարմնոյն հարկանէր մի ոմն զկողսն, եւ զճշմարտութիւն
գեղեցիկ եւ բարձր ձայնիւ քարոզէր ի տեսանել զսքանչելիսն՝ Որդի
Աստուծոյ եւ այր զնա խոստովանելով: [4] Զի՞նչ քան զայս ճշգրիտ եւ
յայտնի կամիցի ոք լսել ձայն նշանակիչ. Աստուած՝ զչարչարեալն // 263բ
եւ զխաչեալ: [5] Եւ եթէ այս է, վասն այլոցն յերկուանալ, որոց նախ
քան զխաչն կրից, թէ ըստ մասին ուրուք իցէ միոյ, այսինքն՝ մարդոյ
լոկոյ եւ ոչ մարդացելոյ Աստուծոյ, մեծի է խելայեղութեան:

X. [1] Արդ, խոստովանեցաք եւ դարձեալ խոստովանեսցուք՝ մար-
մին ո՛չ անբան եւ անանձն առնուլ Բանին, այլ անձն ունող, բանա-
կան, զգայակից մարմնոյն բանաւորականաց անպարսաւ կրից, համայն
եւ՝ չարչարանացն, զի մի՛ անչարչարելի բնութիւն Բանին ասասցի
անմիջնորդաբար զգայակից լինել կամ հաղորդ մարմնաւորակա-
նացն ախտից՝ բնաւորականացն եւ պատահմանց՝ ըստ Ապաւղինարի:
[2] Այլ միջնորդաւ բանականաւ անձամբ՝ գիտողն զչարչարանսն եւ
զբնաւորականսն կիրս, Բանն անչարչարելի ընդ մարմնոյն միացեալ՝
զամենայն իւրացոյց, վասն զի հանդերձ մարմնովն մի ասի եւ է
յետ խառնմանն, եւ այսպէս ասեմք զնա չարչարեալ եւ անչարչա-
րելի մնացեալ, վասն զի ոչ փոխադրեցաւ ինչ, յորմէ էրն, եւ մարդ
եղեալ չարչարեցաւ մարմնով: [3] Լուծանին սոքաւք Եւտիքեայքն՝ վասն
զԿոյսն մեզ խոստովանելոյ մայր ըստ մարմնոյ ճշմարտապէս լինել
Բանին Աստուծոյ, եւ մ//արդ կատարեալ լինել եւ ճշմարիտ, որ եւ 264ա
Աստուածն ըստ բնութեան, եւ չարչարանս կրեալ մարմնով, որպէս եւ
ահա ասացաւդ: [4] Զի ամբարիշտն այն ի Կուսէն ըստ ճշմարտութեան
մարդ լինել Որդւոյն Աստուծոյ խոստովանել յանձն ոչ առնու, այլ
ձեւ իմն եւ նմանութիւն եւ ոչ բնութիւն, առ աչաւք զճշմարտու-
թիւնն կարծելով եւ զկերպարանս ծառայի առնուլ եւ կերպարանաւք
գտանիլն որպէս մարդ եւ առ ի Հաւրէ զառաքիլն ի նմանութիւն
մարմնոյ մեղաց: [5] Եւ զայլս այսպիսի տեսակաւ ասացեալս ստուեր
իմն ցուցանել եւ ոչ ճշմարտութիւն իմանայ ատելին այն, վասն զի
կերպարանաւքն եւ զորպէսն եւ զնմանութեամբն ուրուական ինչ
երեւոյթ գոլ կարծէ, յորոց ժողովի ոչ փոքր ինչ նուազ, քան զայս,

եւ այլ կարծիք ամբարշտութեան, քանզի յորժամ նոյնպէս եւ Հաւր կերպարան եւ նմանութիւն եւ որպէս նա կեանս յանձին իւրում ունել եւ զայն տալով եւ նկարագիր էութեան նորա գոլ եւ պատկեր աներեւութին յԱստուածաշունչ Գրոց լսիցէ: [6] Այլեւ ճառագայթ փառաց եւ զաւրութիւն կամ իմաստութիւն եւ այլս, որովք յայլում զէութիւնն ունել բազում անգամ դէպ եւ պատշաճ թուիցի իմանալ
264բ կամ ստուերապէս զսկզբնատիպն յինքեանց ցուցանել // պարտի եւ ոչ զայսոսիկ ըստ ճշմարտութեան իմանալ: [7] Եւ այսպէս քաջայայտ զհրաժարումն ունի զ՚ի բաց դառնալ մոլեգնութենէ նորա կարծիք ոչ միայն ըստ իրաւանցն եւ զկարգաւորն ընտրել գիտողաց ի սրբոց դաստիարակելոց եւ հասելոց ի չափ հասակի ըստ գիտութեանն, որ ի Քրիստոս, այլեւ պարզամտաց եւ կաթնակերաց:

<Զ>

ՅԱՂԱԳԱ, ԵԹԷ ՈՐՔ ՅԵՏ ՄԻԱՆԱԼՈՅՆ ԵՐԿՈՒՍ ԱՍԵՆ ԲՆՈՒԹԻՒՆՍ Ի ՔՐԻՍՏՈՍ, Ի ՀԱՐԿԷ ՀԵՏԵՒԻՆ ՆԵՍՏՈՐԱԿԱՆԱՑ ՄՏԱՑ

I. [1] Պարտ էր յաստուածայնոյ անդաստանին եւ այգւոյ կոչեցելոցն ի գործ, նոյն է եւ ասել թէ՝ հաւատին ի հովուութիւն, ոչ արուեստի մշակութեանն աւտարս ինչ իմանալ կամ զգուռն եւ զարաւտ անգիտանալ հաւատին, ոչ սակաւս եւ անփառս այսոցիկ ունելով աւրինակս, եթէ գծագրութիւնս պատշաճ իցէ ասել, ըստ որոց զկենդանագրութիւնսն ցուցցեն, եւ մի՛ նորաձեւս ախորժել իմանալ ոչ եւ յայսպիսեաց հրաժարականաց եւ ի պարսաւ անկելոց յոլովս՝ ոչ ունողաց յարացոյցս: [2] Բայց, որպէս կարծեմ, զի զայլսն թողից, վասն երիցս այսոցիկ զգայթակղութիւնն ոչ անգիտանալով՝ զգուշանալ ոչ կամեցան, որք եւ զբազումս ըստերիւրեցին՝ իշխանութեանն
265ա // եւ ամբարտաւանութեան եւ ոչ խոկալոյ յերկիւղ Տեառն, ոչ փոքր ինչ եւ վասն չորրորդին համարձակութիւն առ Աստուած բերել՝ ի գիտակցութենէ մտացն ոչ վկայեալք, որ է մանաւանդ առաքելական պարծանք, առ այսոքիւք եւ յաչառանաց ոչ հեռիք իբր չլուեալք

բնաւ աչառանաւք՝ զհաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ունել՝ ոչ ուղիղ, այլ աչառս դատեցեալք, եւ ոմանք յերկիւղէ, ուր ոչ պարտ, երկուցեալք զհաստատուն ի վերայ վիմի ունող զհիմն չինուած հաւատոյն ի վայր արկեալ կործանեցին: [3] Ո՛հ այլ ընդ այլոյ եւ վրիպակաւ պատահմանն, զի անմտաբար ի վերայ աւազոյ չինեալքն եւ յապառաժի բոյսքն եւ ի մարդկային հեղեղաց եւ բքոց կործանեալքն եւ ի տապոյ չորացեալք զաւրեցին եւ զհակառակաւն չինուածս եւ բոյսս զուգեալ անձանց թշուառութեանն, վասն զի որ զայնպիսիսն չինէ, սովոր է ընտանեգունաւն, եւ անդր փչեաց գործեաւ եւ եթէ ի վայրկենի միանգամ զայս առնելով՝ տարագրել կարողացաւ զձեռին Աստուծոյ գործն ի սկսման, ուր երիս, որպէս ասի, աւուրս խորամանկեաց աշխատասիրաբար: [4] Ո՞չ արդեաւք զաւրէր, որ եւ ի միջոցի
անդ // ոչ սակաւս եւ փոքունս կացոյց, զոր այնու գործեաւն միայն, 265բ
այժմ ասեմ՝ դաւաճանութիւնս եւ զորս ամենեցունցն անգիտելի թողից ոչ միայն վասն ոչ գիտելոյ, այլ վասն զի եւ հանապազաւր յայտնի տեսիլս ամենայն ուրեք ի լրոյ եւ յակնտեսից իրաց ունիմք ներածուս: [5] Յայսոսիկ եւ զորս ի Գիրս, որպէս ի վերայ թռչելով, յիշեցից միայն զաղոյ արձանին Ծննդոց, առ արդար հայրն զաղախնական բարուցն արհամարհանս եւ հպարտութիւն ի վերայ ազատին եւ մեծի տիկնոջն, զտոհմայնոյն՝ առ տոհմակիցն, զդժնէին՝ առ բարիսն, ասեմ, յոլովից զժամանակացն դագ եւ աղուաբանիւքն պատրանս եւ յետ անհաւանութեանն զրպարտութիւն եւ բանդ զԱստուծոյ ուխտաւորին: [6] Եւ քան զամենեսեանն յաղագս զնչան ունելոյ ուխտին արիագունին եւ գեղեցկի զՍամսովնի ընդ խաւարմանն եւ տկարութեանն եւ տգեղութեանն, զանարգանացն ստրկութիւնն, թէպէտ եւ խաղ եղեն մահուամբն, որք խաղացինն ոչ առանց վրէժխնդրութեան մնացեալք: [7] Իսկ ի պատճառս նոցա յայլոց եղեալքն ոչ են դիւրաթուելիք, ոչ
վնասքն եւ ոչ հատուցմունքն առ ի Տեառնէ, այլեւ առ // ի միմեանց 266ա
կիրք պատերազմաց եւ դեղատուեաց եւ այլոց յոքնատեսակ թշուառութեանց, զորս ոչ միայն ի մերումս, այլեւ յարտաքնոցն է գտանել պատմութիւնս, զանցանեն ըստ չափով: [8] Բայց զմինն զայն, թէ եւ կամիցիմք, ոչ ընդունի բանս ոչ յիշել: [9] Եւ տեղոյս յարմարական գիտէք ամենեքեան, որպիսի ինչ վասն ի ծնունդս կանանց մեծին մարգարէի, միանգամայն եւ Մկրտչի, յԱւետարանսն պատմի, որք ինչ վասն աւետեացն եւ ծննդեանն եւ յանապատի բնակութեանն եւ պանդխտութեանն, յաղագս որոյ եւ մարգարէք յառաջագոյն մարգա-

ըէացան՝ զազգակիցն վասն գերազանցութեանն պատուելով ի ձեռն
չնորհին եւ զմեծն ասել, որ եւ յաստուածայինն գլուխն մերձենալ եւ
զնոյն ինքն մկրտել զմարդացեալն Աստուած՝ համարձակութիւն առ ի
նմանէ ընդունելով՝ արժանի եղեւ: [10] Զսա թովչութիւն կնոջն ոչ միայն
բանտարգել եւ կապանաւոր տայր առնել, այլեւ գլխատել յանդգնե-
ցուցանէր վասն զարդարն խաւսելոյ: [11] Ոչ բերէր եւ ոչ Յեզաբէլ
զնախանձն Եղիայի, եւ ոչ նորուն համաբարոյն՝ զընթացողին առաջի
Տեառն՝ զաւրութեամբ հոգւով Եղիայի: [12] Մի՛ տրտմեսցին պարկեշտ
266բ կանայք, // զի ոչ ազգն, այլ չարին եղեալքն ոմանք խորհրդակիցք
եւ գործաւնեայք են արժանի պարսաւանաց: [13] Եւ զի՞նչ պատահէր,
սակաւ մի չիջեալ կայծակունքն վերստին արծարծուին, ամբառնայր
բոցն առ հողմովն գտեալ եւ նիւթ եւ տակաւին ճշմարտութիւնն իբր
եւ գյաղթանակ ի մէջ եդեալ՝ կայր, զմանկունս հանդիսին՝ փորձե-
լով միանգամայն եւ յորդորելով ակնարկութեամբ իմն, որպէս թէ
ո՞յ առնուլ զնա կամ նովաւ պսակիլ արժանի առնիցի: [14] Ատեցեալ
եղեւ սիրելին, եւ երկնաւորաց փափագելին ի կարի յոյժ սակաւուց
թուով խորհրդականաց ընտրեցաւ, որք իբր ի դրժողաց յափշտա-
կեալ զբարւոք ճոխութիւնն՝ վտարական լինէին յաւտարութիւն, ոչ
ընդ բազումս յաւժարեալք լինել ի չարիս՝ գիտելով, թէ լաւ է մի, որ
առնիցէ զկամս Աստուծոյ, քան զբիւր անաւրէն, եւ սոքա այսպէս:
[15] Իսկ վատթարեալքն յերկիւղէ եւ յաչառանաց գողացեալք յայտնա-
պէս համարձակութեամբ աւտարացան ի մաւրէն, որ ծնաւն զնոսա
յԱւետարանէն: [16] Խաբեցան յարգանդէ, խաւսեցան սուտ*, զկանխաւ
դատապարտեալսն առ ի սրբոցն եւ յինքեանց զանաստուածն զայն
տաւմար եւ զ՚ըստ նմայն հայհոյիչս վերստին ընդունէին, անդէն
267ա դարձեալք // ի փսխածն եւ թաւալեալք ի տիղմն, ատելիք լինէին
մանաւանդ քան ողորմելիք: [17] Եւ այսպէս ջրհեղեղն երկրորդ ապա-
կանեաց զերկիր, եւ այլազգի հուրն եկէզ ոչ սակաւս քաղաքս եւ
նուազս ազգս, այլ փոքր ինչ եւ զամենայն տիեզերս, թէպէտ եւ
ապրեցան որք էին գրեալ ի կեանս, ոմանք տապանակաւ եւ ոմանք ի
լեառն փախստեամբ: [18] Եւ այսպէս վասն մարդկային աւանդութեանն
խոտեցին զաստուածայինն եւ մարդկան հաճոյք լինելով՝ հրաժարեցին
ի Քրիստոսի կոչելոյ ծառայս, զորոց ցրուեսցէ Աստուած զոսկերս†,

* Սաղմ. ԾԷ 4

† Սաղմ. ԾԲ 6

եւ որպիսիք ուրացութեանն բանք՝ զանազանութիւնս բնութեանց, այսինքն՝ աննմանս յետ միաւորութեանցն ի Տէր մեր Յիսուս Քրիս-տոս՝ խոստովանել մոլեգնելով աղճատեն: [19] Եւ զոչ այսպէս ասողսն դատապարտքն դատապարտէին եւ զասողսն դարձեալ անպարտս ոչ առնէին, թագաւորին խաբէութեամբ, զի մի՛ թուեսցին զանկելոյն գնալ ի տեղի իւր քարոզել, սակայն ծածկել ոչ կարացին, վասն զի ստութիւն ոչ միայն ճշմարտութեան, այլեւ անձին ասոխ է:

II. [1] Բայց արդ, դիտեսցուք զերկուց կողմանցն կարծիս եւ ձայնս, եթէ ո՞չ նոյնք իցեն կամ եթէ ա՞յլ ազգ ինչ ունիցին: [2] Եւ նախ համառաւտելով ասել՝ սոքա զտարբերութիւնս բնութեանցն եւ յետ միանալոյն պահեն, զի միումն յերկաքանչ//իւրոցն բնութեանց, զոր 267բ
ասեն, տացեն զմեծամեծսն, այսինքն՝ Աստուածութեանն զհրաշա-փառագոյնսն, եւ միւսումն՝ զմարդկաւրէնագոյնսն ամենայն հանդերձ չարչարանաւքն եւ մահուն: [3] Եւ այս ոչ յայտնապէս երկուս ցուցանէ դէմս, թէպէտ եւ բազում անգամ հակառակիցին, վասն զի այլ եւ այլս յանդիման կացուցանէ, այլ՝ զկրողն եւ այլ՝ զսքանչելագործն, եւ նոքա յարակցութեամբ յԱստուած զմարդն ասեն պատուեալ եւ յետ յարելոյն ե՛ւ մի, ե՛ւ անբաժանելի իմն, զի նոյնպէս զաստուածա-վայելուչսն Բանին տայցեն եւ զտկարութեան թուեցեալսն՝ մարդոյն: [4] Տեսանե՞ս զհամաձայնութիւն ամբարշտութեանն, եւ նոքա, թէպէտ եւ հաճութեամբ ասեն Բանին ոչ մարդ լինել ըստ ճշմարտութեան, այլ ի մարդ բնակել, զի յատկութիւնքն ամբողջ պահեսցին բնութեանցն, բայց եւ սոքա նմանապէս զառանձնաւորութիւնն ամբողջ պահելով եւ որոշելով բնութեանցն՝ ոչ են տարաձայնք, այլ տաճար Բանին զմարդկութիւնն, յորում բնակէ ամենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս, որում եւ քակել ինքն Բանն տայ հրաման, յորժամ ի հրէիցն վասն նշան ցուցանելոյ զրաբանեալ լինէր: [5] Հասարակ, ասեն, լինել երկոքին՝ զձայնս Գրոց բռնադատելով ձայնակցեալ շատա-խաւսութեանն իւրեանց, ի զաւակէ Դաւթ//ի եղելոյ մարդոյն, զոր 268ա
միայն Յիսուս անուանէ Նեստորիոս, յարմարական գոլ զամենայն մարդկայինսն ասէ եւ ոչ Բանին: [6] Սոքա եւ այս նոյնպէս, թեպէտ եւ զանունն որոշեն. եւ եթէ ուստի սկսեալ կամ յորոց ոմանց եւ կամ երբ այսպիսոյ ամբարշտութեան կարծեաց եհաս, սա այլում թողցուք տեղոյ եւ ժամանակ<ի>, կամաւքն Աստուծոյ:

<Է>

ԹԷ ՁԻՄՐԴ ՉԱՐՉԱՐԵԱԼ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵԱԼ ԵՒ ԱՆՉԱՐՉԱՐԵԼԻ ՄՆԱՑԵԱԼ ԵՒ ԿԱՄ ՈՐՊԷՍ ԴԱՐՁԵԱԼ ՁԱՅՆԱԿՑԵՆ ՉԱՐԱՓԱՌՔՆ

I. [1] *Նեստորիոս եւ ըստ նմայքն վարկանին ոչ զնոյն ինքն, որ յէութենէ Հաւր զԲանն՝ զՄիածին Որդին Աստուծոյ՝ չարչարեալ մարմնով վասն մեր մարդկաւրէն:* [2] *Որ եւ զանչարչարութիւն, ըստ որում իմանին, եւ է, Աստուած ունի յիւրում բնութեանն, այլ մարդ միայն եւ ըստ մասին՝ զ՚առ ի Կուսէն ծնեալն, եւ ապա նմա փառաց հետեւեցուցեալ չափ՝ ըստ ինքեանցն թուելոյ բարւոք գոլ, յարակից լինել ասեն, որ յԱստուծոյ Հաւրէ Բանին. եւ զյարակցութեանն պատմելով յեղանակ՝ պարգեւեալ նմա՝ ասեն զհաւասարութիւն պատուոյ, այսինքն՝ իշխանութեան, եւ զհամանունաբարն ասիլ Քրիստոս եւ*
268բ *Որդի եւ Տէր:* [3] *Իսկ եթէ ասիցի չարչարիլ նա, որ ի նմանէ // առեալն մարդ պարտ գոլ, ասեն, վերաբերիլ զայն, որ յԱստուծոյ Բանն, վասն ի նոյն յարելոյ ըստ հաւասարութեան պատուոյ եւ բնութեանց անջատեցելոց եւ իւրաքանչիւր ումեք գոլոյն**, *որ ինչ են առանձին, այսինքն՝ զքաղցնուլն եւ զաշխատել, զննջելն եւ զանգիտենալն, զզարհուրելն եւ զաղաւթելն, զգանն եւ զկապանսն եւ զապտակն ընդունել, զթուքն, զարբումն քացախին եւ լեղոյն եւ զտիգոյն վէրս, զմահ խաչին եւ զայլն ամենայն, զորոյ ապարասանութեան կրեաց հրէից եւ հեթանոսաց՝ ասեն մարդոյն, բայց վերաբերիլ ի դէմս ըստ ճշմարտութեանն Որդւոյ:* [4] *Արդ, տեսանե՞ս, զի զերկուսն ասողս բնութիւնս ոչ եւ միով իւիք գտանեմք տարաձայնեալս ի զայսոսիկ ասողացն:* [5] *Եւ զի՞նչ այլ, քան եթէ զայս ի տարբերն ասել զբնութիւնս կարասցեն յաւդել, նաեւ բազումք ի սոցանէ, ոչ պատրուակողովք հնարեալ բանիւք ծածկել զխարդախ իմացուածոցն զաւրութիւն, բացաւ գլխով յայտնապէս աղաղակեն զոչն ասացելոցդ հաղորդիլ կրից մարդկայնոց բնաւորականաց եւ արտաքուստ պատահելոց, որ ի Հաւրէ Բանին:* [6] *Եւ*

* *Բն՝ գոլայն*

նոյնպէս ի զանազանիցն ասացելոց յետ // միութեանցն բնութեանց 269ա
ժողովի՝ համանունաբարն ասիլ Քրիստոս եւ Որդի եւ Տէր, վասն զի
ուր զանազանութիւն, անդ եւ ոչ միով իւիք նմանութիւն. եւ եթէ
այս, ապա եւ բազմաց դրութիւն: [7] Եւ զոր յայսցանէ առասպելականն
թողից, բայց զհամանունաբարն ասիլ՝ տեսցուք. եւ է համանուն, որ
անուանի միայն, այլ ոչ եւ իրի տայ կցորդութիւն, որպէս զուարակ
ասի երկնայինն եւ որ ի յերկրի, կամ առիւծ եւ մարդ կենդանին եւ
այրաձեւն, եւ այսոքիկ զիա՞րդ ոչ աննմանք, կամ զի՞նչ յեղանակաւ
խառնումն այսպիսեացս ասասցի. ո՞չ ապաքէն քաջայայտ ունի
երկուս գոյ բնութիւնս, եւ զիա՞րդ ոչ երկու բնութեանցն երկու դէմք:
[8] Այլ խառնեալ ասեն, եւ եթէ խառնեցան՝ ըստ ճշմարտութեան, ապա
զիա՞րդ երկու, թէպէտ եւ անշփոթն մնացին ի Քրիստոս եւ անփո-
խադրելիք: [9] Վասն զի Աստուած էր մարմնացեալ, որում անհնար ոչ
ինչ է, եւ ըստ այսմ բանի, որ ի Հաւրէ Որդւոյն Աստուծոյ՝ չարչարիլ
իւրով մարմնովն վասն մեր, եւ ոչ սոքա ասեն, այլ նոյնպէս վերա-
բերութիւն, որպէս թէ մինչ այրաձեւն հարկանիցի զայրն, որոյ իցէ
համանուն պատկերի, ասիցէ ոք զվէրս ընդունիլ եւ ապա մարդ ոք
չարչարեցաւ՝ ըստ // նոցա, եւ ոչ Աստուած մարդացեալ, քանզի ի 269բ
բնութեանց անջատման միոյ իմանիլ՝ անտեղի է ամենեւին:

II. [1] Իսկ մեք հաւատամք որպէս ի մի Աստուած՝ Հայր ամենակալ,
ամենայն երեւելեաց եւ աներեւութից արարիչ, այսպէս եւ ի մի Տէր
Յիսուս Քրիստոս՝ Որդի նորա, ամենեւին հրաժարեալք յանջատելոյ
ի մարդ առանձին եւ յԱստուած առանձին՝ զ՚«ընդ մեզն Աստուած»
ուսեալք, եթէ՝ «Բանն մարմին եղեւ»*, այսինքն՝ ըստ մեզ ամենայնիւ,
բաց ի մեղաց: [2] Եւ նոյն ինքն չարչարեցաւ մարմնով, վասն զի էր
իւր մարմին, այլեւ զանչարչարութիւնն պահեմք նմին ինքեան, զի
Աստուած էր ըստ բնութեան, եւ է աստուածայինն ամենակատար եւ
ամենաբախտ բնութիւն, որ եւ երանելի: [3] Վասն որոյ կրից տրտմա-
կանաց եւ չարչարանաց անընդունակ է ամենեւին, որ գերաբարձ ոչ
քան ընդ զկրիւք բնութիւնս գոլով միայն, այլեւ քան զոչ բնաւորեալս
հնազանդել կրից, տի՛նա եւ ամենայնի Արարիչ: [4] Բայց զչարչարելին
միացուցանելոյ ընդ ինքեան բնութիւն եւ առաւել հանդերձ նովաւ
մի գոլոյ՝ զնոյն ինքն խոստովանիմք չարչարեալ // զանչարչարե- 270ա
լին, քանզի զամենայն իւրացուցանել ասեմք զիւրոյն մարմնոյ, եթէ

* Յովհ. Ա 14

չարչարանս եւ եթէ կիրս: [5] Եւ յոյժ յիրաւի, զի ոյր մարմինն նորա
եւ մարմնոյնքն եւ ասասցեն եւ եղիցին, սոյնպէս եւ մնացեալ առ
չարչարանաւքն եւ անչարչարելին, վասն զի ոչ փոխադրեցաւ կամ
յեղաւ ի բնութիւն մարմնոյ կրականի եւ չարչարելոյ: [6] Զի թէ զայս
ոք արդեաւք յանդգնեսցի ասել՝ եղեալ յերկինս զբերանն, զանչար-
չարելին ընդ չարչարանաւք արկանէ եւ ոչ կարելւոյն կարողութիւն
տայ լինել, քանզի յամենայնի կարողին անկարելի մանաւանդ է, յորմէ
ունին, յԱստուծոյ փոխադրիլ եւ յեղուլ բնութիւն՝ վասն անայլայլելին
գոլոյ եւ անփոփոխ, զի այսոքիկ լինելւոյ են բնութեան: [7] Նախ, զի ոչ
գոյք եղեն եւ ապա հետեւեալքն ամենայն այսպիսոյ յարմարականք
գոյացութեան, վասն զի ըստ սկզբանն պարտին եւ հետեւմունք գոլ
եւ ոչ անընտանիք, թէպէտ եւ ոմանք յեղելոց ունին զանփոխադրելին
եւ զանչարչարելին գոլ հանդերձ անեղծութեամբ, այլ այսպէս ինձ
թուի՝ ըստ Արարչին բաւականութեան եւ նախախնամութեան եւ ոչ
270բ եթէ վասն բնութեանն պատշաճողութեան: // [8] Արդ, ոչ է աստուա-
ծայինն ընդ փոփոխմամբ, ըստ որում ասացաւն, բնութիւն եւ ոչ
յեղլի, վասն որոյ եւ ոչ ընդ կրիւք, յայտ է, թէ եւ ոչ չարչարելի:
[9] Բայց վասն զի անեղն եղեւ՝ ըստ Պաւղոսի ձայնին, եւ որ ճոխն՝
նոյն ինքն աղքատացաւ, եւ կերպարան Հաւր ունայնացաւ*, ըստ
այսոցիկ՝ եւ անչարչարելին չարչարեցաւ, եւ որ կրից անընդունակն՝
մարմնով կրեաց զանըստգտանելի կիրսն, սակայն վասն զի իւր էր
եւ անչարչարելին գոլ ըստ բնութեան՝ իբրեւ Աստուծոյ, եկաց մնաց
անչարչարելի, եւ երկոքին միոյ եւ նորին ասին եւ են եւ ոչ այլ այլոյ,
վասն զի Աստուած գոլով՝ մարդ եղեւ, եւ է Աստուած, համանգա-
մայն եւ մարդ: [10] Իսկ որք զբնութիւնսն որոշեն եւ առանձնակս տան
երկաքանչիւրոցն յետ միանալոյն, ըստ ճշմարտութեան մարդ եղեալ
զԲանն ոչ խոստովանին. այլ ի մարդ բնակեալ եւ յարակցութեամբ
պատուել զնա եւ անուան կցորդութեամբ, եւ թէպէտ յետ այսորիկ
Աստուծոյ ասեն զամենայն, որ ինչ մարմնոյն կիրք եւ չարչարանք,
ո՛չ ճշմարտութեամբ, այլ վարկանելով միայն, որ է վերաբերութեամբն,
եւ է այս Նեստորի եւ որոց ըստ նմայց: [11] Եւ ըստ այսմ՝ սոսկ եւ
առանձին մարդոյ ասին չարչարանքն եւ այլն ամենայն ըստ մարմնոյ
271ա իմացեալքն, եւ զիա՞րդ, եթէ ոչ այսպէս կարծե//լն ամենեցուն հակա-
ռակ աշխատեցելոցն յառաջագունից վասն ճշմարտութիւնն յարմնե-

* Փլպ. Բ 6–7, Բ Կոր. Ը 8

լոյ խորհրդածուացն աշխարհի: [12] *Այլեւ դուք, ասեն, տեսանեմք, զի ասէք անչարչարելի զԲանն մնացեալ, ոչ եթէ ոչ ասեմք, որպէս եւ էն իսկ ըստ բնութեան զԲանն անչարչարելի, բայց նախ զմիանալն ըստ ճշմարտութեան ընդ չարչարականիս բնութեան անչարչարելոյ բնութեան Բանին իբրեւ հիմն հաստատուն ամենայն մերոց, որոց վասն մարմնով տնաւրէնութեան Միածնին խոստովանութեանցն դնեմք եւ ապա ասեմք՝ չարչարեալ զանչարչարելին իւրով մարմնովն, վասն զի իւր էր ոչ կարծեաւք, այլ ճշմարտութեամբ, եւ առանց չարչարանաց մնացեալ ըստ վայելուչ գոլոյ Աստուածութեանն, քանզի իւր եւ անչարչարութիւն էր:* [13] *Եւ է իրս յոյժ դժուարատես եւ նուրբ, մանաւանդ թէ անճառելի եւ առանց քննութեան, չարչարեալ ասել եւ անչարչարելի զնոյն եւ զերկոսեան առանց երկբայութեան, մի՛ յայսմիկ զմեզ բամբասիցէք, քանզի աստուածային է տեսչութեանս յեղանակ եւ ոչ մարդկան միայն, այլեւ իմանալի մաքուր բնութեանն վերնոցն բանականաց անհաս:* [14] *Բայց անջատելն զմին յերկուս յետ անպատմելի միաւորութեանն, քաջայայտ ունի զանբանութեան պարտաւորութիւնն, զի զլոկոյ // եւ միայնակ մարդոյ զամենայն, որ ինչ* 271բ
մարդկաւրինագոյնքն կրից եւ արտաքուստ պատահմանց, տան, եւ այս երկակի, որպէս թուի, բայց ըստ ուղիղ բանի՝ նոյն եւ մի կամ իբր յարակցելոյ եւ հոմանուան՝ ըստ Նեստորի, եւ կամ յերկուց բնութեանց միում, որ է այլ ինչ ոչ, քան զառաջինն: [15] *Քանզի յերկոցունց ժողովի մարդ միայն չարչարեալ եւ ընդ կրիւք, եւ ապա ոչ հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա, եւ ոչ զՄիածինն ետ վասն մեր, եւ ոչ Բանն մարմին եղեւ, եւ ոչ բնաւ այլոցն ինչ, յորոց կեանք եւ փրկութիւն եւ ազատութիւն Աստուծոյ, տակաւին ի նմին կամք ի մեզս:* [16] *Մարդոյ որոշեն առանձինն զփրկութեանն իրս, եւ յորժամ բռնադատիցին ինչ ի զաւրագոյն եւ ի ճշմարիտ բանից, կամ զի թագուսցեն զդժուարալուրն մեզ՝ Աստուծոյ ասեն զամենայն, այլ ըստ ճառեցեալ յեղանակդդ, իբր թէ անուանելոց:* [17] *Կոչեցաւ եւ Մովսէս «աստուած փարաւոնի»**, *եւ առ որս բանն Աստուծոյ եղեւ՝ աստուածք ամենեքեան ի Գրոց անուանին, Եղիա յերկինս շարժմամբ վերացաւ՝ զմահու փորձ բնաւ ոչ առեալ եւ նախ քան զայս աստուածային զքանչելագործութեամբք, մանաւանդ կրկին զհոգին ի ժամու ամբառնալոյն յերկինս իշխանաբար ի վերայ արկանելով աշակերտին՝*

* *Ելք է 1*

272ա անդր քան զմարդկայինս թուէր գոլ բնութիւն, // այլեւ <զ>մեռեալ
յարոյց եւ զբազումս մեռոյց՝ զոմանս հրով եւ զայլս սովոյ մատնելով
եւ զկէսն սրով, եւ աստուածազգեստք իսկ էին. «Բնակեցայց ի նոսա
եւ գնացից ի նոսա»*, ասէ, եւ որք ըստ այսմանէ: [18] Եւ արդ, զիա՞րդ
ոչ նոքա աստուածք, եւ կամ յորո՞ւմ, ըստ ձեզ, ոչ հասարակաց
մարդ Քրիստոս: [19] Մի՛ անուամբ, այլ իրաւք պայծառասցուք, մի՛
ստութեամբ, այլ ճշմարտութեամբ, մի՛ զմեր ինքեանց փրկութիւնն
գողասցուք՝ զանձինս նենգելով, մի՛ ստունգանելով զՃշմարիտն
խաւսողիւ եւ զկենդանական հաւրն ստութեան եւ սպանողին անսաս-
ցուք, մի՛ զմիաւորիչ Հոգւոյն յոքնատեսակ լեզուովքն ճառեցեալս՝
ապախտ արարեալք զմիով բռնաւորականաւ զաւրութեամբ աւձտողին
ի բազումս զմին՝ աղճատականսն ընտրեսցուք, ընդ աւգտաբար բա-
ժանումն նախանձեալ, եւ ընդ զուգաչափ միաւորութիւնն չարաչար
եւ վնասակար բաժանմամբ ժողովեսցի միաձայնութիւն ոչ ի Սէնսար,
այլ Բիւթանիայ: [20] Երկրորդ եւ չարագոյն խառնակութեամբ տեղի եւ
իր զՔաղկեդոն եւ զանդն աւանդութիւն ի ներքս զմուծեալ եւ ոչ ի
վերնատան, այլ ի հրապարակի, քանզի գիտէ նա չարութեամբ հա-
կառակել բարւոյ եւ այլ ազգ իրաւք նմանել: [21] Արդ, որ ի բարւոքն
272բ մեր հայի եւ աւրինաւոր կեանս // եւ տնաւրինէ մեծաւ իմաստու-
թեամբ եւ յոյժ անճառելեաւ՝ ի հեռաստանէ նկարելով, զի ըստ այնմ
գնասցուք եւ այնպէս կեցցուք, խորհեսցի ինչ, որպէս գիտէ եւ կամի՝
չար այսպիսոյ յարձակման եւ կամաց խրամատութիւն եւ արգել եւ
կործանեսցէ զընդդէմն ինքեան յարուցեալն ի մարդկանէ աշտարակ
եւ զհամարձակութիւն լեզուի եւ շրթան, զոր ոչ սիրէ, խափանեսցէ,
եւ զոր սիրէն, տացէ՝ ժողովելով ի մի զորդիս իւր զցրուեալս, զի որ-
պէս ի միոջէ փառաւորեսցի յամենեցունց:

* Բ Կոր. Զ 16

<Ը>

ՅԱՐԱՑՈՅՑՔ ՅԱՂԱԳՍ ՄԻ ԶՔՐԻՍՏՈՍ ԱՍԵԼՈՅ ԵՒ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ

I. [1]Խոստովանեալք զԸնութիւնն ունող անչարչարելի զԲանն իւրացուցանելովն չարչարեալ մարմնովն եւ մնացեալ անչարչարելի որպէս Աստուած, յարացուցիւք, թէպէտ եւ կարի յոյժ փոքումքք առ ճշմարտութիւնն, հաւատարմացուցանել անպատշաճ ոչ վարկանիմ: [2]Ոչ միայն յաստուածայնոց գիտացաք Գրոց, ըստ որում ի մեծէն առաքելոյ կրկին զմարդն ի հոգւոյ բանականէ եւ ի մարմնոյ, ոչ ի պակասից, այսինքն՝ յանկատարից, այլ ի կատարելոց գոլ կատարեալ եւ սակայն մի, այլ եւ ի բնախաւսից ոմանց հաւաստապատում արանց, [3]որք թէպէտ եւ վասն էութեան հոգւոյ եւ մտաց եւ նոցուն ընդ միմեանս եւ ընդ մարմնոյ խառնման // այլ եւ այլ կարծեաց յեղանակաւք հակառակս խաւսեցան: [4]Սակայն թէ մի է կենդանին, ամենեքեան վկայեն, այլ եւ զայն վասն անձին եւ մտաց, թէ անմարմնոց, թէ եւ իցեն կատարեալք, ոչ է անկարելի խառնմամբ մի գոլ ճշմարտապէս եւ ամբողջ մնալ՝ ըստ երկաքանչիւրոցն էութեանց՝ զմիոյ ունելով ներգործութեան եւ անուան զաւրութիւն եւ տեսութիւն ըստ մտածութեան եւ ճշմարտութեան՝ որպէս մարդ: [5]Ուստի եւ առին զսա ոմանք ասել «աշխարհ փոքր» յաղագս բերելոյ յինքեան զամենայն, որ ինչ յաշխարհի տեսակս, այսինքն՝ զերկնի եւ զերկրի եւ զորոց ի միջոցիդ կամ վասն նիւթոյ եւ տեսակի, որպէս կարծեմ, եւ այլ երկնային եւ երկրային, ժամանակեայ եւ անմահ, մարմին եւ հոգի: 273ա

II. [1]Արդ, վասն այսպէսն գոլոյ զմարդն, եւ զայս մի՞թէ արժան իցէ տրամատել, եւ ո՞յ հաւանեսցի. մի ամենեքին իմաստութեանն ջատագովք եւ ծանաւթք ախորժեցին ասել եւ միոյ՝ զ՚առ ի նմանէսն եւ զնորայսն գործս եւ կիրս՝ զբնաւորականս եւ զարտաքուստս, եւ նորին, որոց մանաւանդ է հաւանել արժան: [2]Այլ եւ ի նոցանէ ոմանք բաժանելով զմարդն ասացին ես եւ իմն եւ իմոյքն՝ նշանակելով զհոգի եւ զմարմին եւ զստածուացս երրորդն, բայց զեսն եւ զիմն ասելոյ ոչ ոք զմարդ բաժանէ, թէպէտ եւ // մտածութիւն իմն նկատէ, եւ ոչ ոք խորհեցաւ, թէ- 273բ

պէտ գիտէին ի զանազանից միացեալ եւ յաննմանից բնութեանց: [3]Նաեւ մարմին եւ ամենայն եւ մարդոյ ի բազմաց չարակայի, եւ ոչ ասին բազումք, զի մի՛ զուիմամանեայ եւ զեռամանեայ ասացեալ հոգին եւ զոչ յայսքանսն ասացից որոշեալ: [4]Ուրեմն, ոչ է արժան զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս, թէպէտ եւ ի զանազանից, յետ միութեանն բաժանել եւ ոչ զնորայսն կիրս եւ ներգործութիւնս, [5]վասն զի որպէս ինքն համանգամայն ասի եւ ոչ ըստ մասին մարդ եւ Աստուած, եւ նորայքն ասասցին միոյ Աստուծոյ, համանգամայն եւ մարդոյ: [6]Դարձեալ եւ զլուսոյս զգալւոյ էութիւն յառաջնումն ասել լինել աւուր աստուածային բանն, իսկ զարեգակնն եւ զայլսն, որ ի յերկրի լուսաւորս, ի չորրորդումն, [7]եւ անմարթ է կարծել, թէ եղծաւ յառաջնումն գոյացեալ միատեսակ լոյսն, եւ այլ ի չորրորդումն աւուր հաստատեցաւ քան զայն նոր, վասն զի այն ոչ եղծման, այլ արարչութեան էր ժամանակն: [8]Եւ զիա՞րդ զորոշիչ ժամանակի զլոյսն, որովք եւ այլքն ընտրեալ որոշին արարածք ի ժամանակի եղեալք, ընդ որս եւ աստեղք, լուսին եւ արեգակն, է՞ր վայելուչ անդէն ի սկսմանն եղծանել զվկայութեամբ գովեալն յԱրարչէն,
274ա թէ բարի է. ի դէպ ապա ճշմարիտ է ասելն, // թէ է տեսակ երիցագոյն, քան զնիւթն, թէպէտ ոչ հասարակաբար: [9]Թէպէտ եւ ամենայն տեսակաց նիւթոյն պարտ էր նախ ենթակայանալ, իսկ գեղեցկագունին էիցս տեսակաւն նախ պատուիլ, զի ցուցցի ոչ միայն սքանչելի արարչականին Բանի զաւրութիւն ի նորա գործելն, այլ եւ ի նախապատուութիւն գեղեցկին, որ է հրաշափառագոյն, [10]արդ, զնոյն լոյս կանխաւն եղեալ առանց նիւթոյ՝ ժողովեաց ի նիւթ արեգականդ ի չորրորդումն աւուր. [11]զի զմեծագունին լուսոյ եւ աննիւթականի եւ քան զամենայնս երիցագունի, մանաւանդ սկզբան ամենեցուն եւ պատճառի նկարագրեսցէ ի նիւթական միանալ բնութիւն ի լրման ժամանակաց: [12]Վասն որոյ եւ եղանիլ ի Գրոց ասի*, եւ ըստ որում ոք ասել ոչ կարասցէ այլ զլոյսն զկանխաւ եղեալն եւ այլ՝ զնիւթն յետ միաւորութեան, բայց մի արեգակն: [13]Այդպէս վարկանիմ ոչ ասել երկուս ումեք արժան գոլ զկնի անճառ միաւորութեանն ընդ մարմնոյ զՄիածին Որդին Աստուծոյ, եւ որպէս արեգական՝ իւր ասեմք զլուսոյն ճառագայթս եւ իւր դարձեալ, թէ կրեսցէ ինչ խաւարումն՝ որպէս ի պատուական խաչելութեանն աւուր,
274բ կամ գիշերաւ ծածկիլ ի ներքնումն գոլով կիսագնդին, կամ զխո//նարհիլն զմիջաւրեայ եւ զբարձրանալն ի սայլն կողմ: [14]Այսպէս եւ զսքան-

* Ծն. Ա 14

չելագործութիւնսն եւ զմարդկաւրէն կիրսն եւ զչարչարնսն միոյ ասել ուսաք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ոչ որոշել առանձին Աստուծոյ եւ առանձին մարդոյ բնութեան, վասն զի միացոյց անբաժանաբար ընդ ինքեան զմերս եւ անդստին յորովայնէ Բանն Աստուած:
15Ուստի եւ զչարչարանս եւ զանչարչարութիւն ըստ բնութեանցն միաւորութեան ի մի հաւաքեմք՝ ասելով նմա պահեալ զիւրոյն քան զամենայն գերազանցելոյ բնութեան զանչարչարութիւն՝ Աստուած ըստ բնութեան գոլով, եւ զնոյն ինքն չարչարեալ վասն իւրութեան չարչարականին բնութեան եւ զայն՝ կամաւորապէս, 16այսինքն չարչարեալ ճշմարտապէս իւրով մարմնովն եւ անչարչարելի մնացեալ՝ որպէս Աստուած ըստ բնութեան, զի Աստուածութեանն առաւելապէս իւր է անչարչարութիւն, զոր ամբողջ պահեալ խոստովանիմք: 17Սակայն զի զչարչարելին իւրացոյց ըստ ճշմարտութեան զբնութիւն, ըստ որում եւ զնորայսն ամենայն ստուգապէս իւրացուցանել հաւատամք առանց երկբայութեան՝ Աստուծոյ զամենայնն ասելով՝ ե՛ւ զխաչն, ե՛ւ զորս յառաջ քան զխաչն, 18որպէս եւ մարմնոյն զսքանչելիսն անբաժանաբար
ասեմք՝ Աստուած զմարդացեալ Բանն գիտելով, // որոշելով <ոչ> ուսեալք զմարմնագործութիւնսն Բանին միայն եւ զմարդկայինսն մարմնոյն եւեթ, քանզի մի է Քրիստոս. բազում անգամ զնոյն ասեմք կասկածելով ի քումմէդ դարանակալութենէ: 275ա

III. *1Զմարգարտէ ոմանք ասեն ի փայլակնէ եւ ի ջրոյ զգոյացութիւն ունել, եւ զկնի ոչ է ընտրութիւն ինչ ի միումն զանազանութեան. եւ եթէ ճշմարիտ իցէ այս, ոչ գիտեմ, սակայն յարացոյց ճշմարտութեան եթէ ոք առցէ, ոչ է անտեղի: 2Արդ, որպէս իւրաքանչիւր ուրուք ի մէնջ իւր է եւ ասի մարմինն, այսպէս եւ վասն մարմնացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ ոչ <յ>աստուածային բնութենէն ստեղծեցելոյ եւ կամ յայլմէ ուստեք, յորոց յերկինս, այլ ի Կուսէն: 3Վասն որոյ եւ մարդ լինել ասի, քանզի անտի զմարմինն կարծել ունելն՝ նախ զի յետ անտեղութեանն անբարշտութիւն է, եւ ապա մարմին, այսինքն՝ մարդ կատարեալ, Բանն ոչ իմասցի եւ ասասցի լինել, եւ ըստ որում մարդն եղեւ Աստուծոյ Բանն եւ այլն, այլ ոչ մարդն աստուածացաւ եւ ի Բանին հաւասարութիւն, որպէս ասեն ոմանք, վերացաւ: 4Ըստ այնմ եւ ճշմարտապէս չարչարեալ ասի եւ կրեալ զամենայն որ ինչ ըստ մեզ՝ առանց մեղաց, վասն զի այսպէս յարմարի, 5եւ եթէ ոչ մարդն պատուեցաւ շքով Աստուա-*
ծութեանն, այլ Բանն մարմին եղեւ, եւ ոչ ուն//այնն լցաւ, այլ լին ունայնացաւ չափով մարդանալոյն, եւ ոչ աղքատն փարթամացաւ, այլ 275բ

ճոխն աղքատացաւ, եւ ոչ ծառային կերպարան զԱստուծոյն առ կեր-
պարան, այլ Աստուծոյն՝ զծառայի: [6]Ցայտ է այսոքիւք եւ որովք ըստ
սոցունց, թէ անաչխատն աշխատեցաւ մարմնովն, եւ նոյն ինքն, որ
տայն կերակուր որոց ի նայն հային եւ յուսան աչք, քաղցեաւ, եւ որ
իմաստութիւնն Հաւր եւ զաւրութիւն է, անգիտացաւ եւ երկեաւ, նմա-
նապէս եւ անչարչարելին չարչարեցաւ, եւ անմահն մեռաւ, զամենայն
որ ինչ առեցելոյն՝ իւրացուցեալ եւ զիւրսն ոչ խափանեալ կամ այլայ-
լեալ, ոչ եւ զմարմինն ըստ բնութեան փոխարկեալ: [7]Վասն զի թէպէտ
եւ միութիւն եղեւ բնութեանցն ճշմարտապէս, այլ շփոթումն եւ խառ-
նակութիւն՝ ոչ, զի ոչ Բանն ի մարմնոյ փոխեցաւ արար եւ ոչ մարմինն
ի Բանին փոխադրեցաւ էութիւն, [8]այլ մնացին բնութիւնքն շփոթումն
ոչ կրեալք, սակայն միացեալ անիմանալի իմն եւ անհասանելի յեղանա-
կաւ, վասն որոյ «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» հարքն
ասացին: [9]Քանզի յետ միութեանն ոչ է իմանալ ամենեւին կամ ասել
զանազանութիւնս բնութեանց ի Քրիստոս,[10] որպէս եւ ի մեզ ինքեանս՝
ո՛չ վասն մին գոլոյ եւ ասելոյ զհոգին բանական մարմին կարծեմք շա-
276ա բադրական եւ ո՛չ դարձեալ զյոքնմասնակ//ան մարմինն՝ պարզ հոգի
բանական, այլ ի զանազանից կատարելոց գոյացութեանց՝ մի կենդա-
նի բանաւոր զմարդն: [11]Այսպէս իմա՛ ինձ զՔրիստոս՝ պահեալ զբնու-
թիւնսն անշփոթս եւ ստուգապէս միաւորեալս, մինչ զի ոչ ումեք կար
լինել յուղղակի խորհել սովորելոցն իմանալ առանձնականս երկաքան-
չիւրոցն ներգործութիւնս կամ կիրս, որպէս բազում անգամ ասացաւ:
[12]Թէպէտ եւ բազում անգամ ասեմք աստուածավայելուչս գործել եւ
խաւսել նմա երբեմն, իսկ երբեմն մարդկաւրինագոյնս եւ կրել եւ խաւ-
սել, զայս ոչ որոշելով յատկապէս ասեմք, այլ համանգամայն ըստ ին-
քեան, [13]զի որում զաստուածայինսն տալ պարտիմք, նմին եւ՝ զմարդ-
կայինսն, վասն զի կրկին էր ոչ այլ եւ այլ ոք, այլ նոյն ինքն՝ Աստուած
գոլով եւ մարդ միանգամայն, որում փառք յաւիտեանս. ամէն:

<Թ>

ՆՈՐԻՆ ՀԱԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՌԷՄ ԱՆԳԻՏԱԿԱՑ ՈՄԱՆՑ ՅԻՐՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ, ՈՐՔ ՍՏԱՅԱԻԴ ՃԱՌԻՒՔ ՀԱՒԱՆԵՑՈՒՑԻՆ ԶՈՄԱՆՍ Ի ՎԱՅՐԱԳԱՑ ԵՒ ՊԱՐԶԱՄՏԱՑ ՀԱՒԱՏԱԼ ԱՆՀԱՒԱՍՏԻ ԻՒՐԵԱՆՑ ԿԱՐԾԵԱՑ*

I. [1]Թէպէտ եւ զգիտաւորութիւն իրին առաջիկայի բազում անգամ ի մակագրութենէ բանին դիւրածանաւթապէս կարէ ոք ի միտ առնուլ համառաւտագոյն, սակայն առանց զժամ//անակն գիտելոյ եւ զտեղին 276բ
ոչ պահի աւրէն հաւաստութեանն յեղանակին եւ պատճառին հանդերձ դիմաւքն առաջի կացելոյ: [2]Յաղագս որոյ կամեցայ քեզ եւ զայս ընձեռել, սիրելի՛, եւ տալ տեղեկութիւն, թէ յորո՛ւմ արդեաւք ժամանակի կալաւ սկիզբն հայհոյութիւն ժողովոյն Քաղկեդոնի, եւ կամ ո՛յ նախահաւաք եւ գտիչ կորստականին այնորիկ ուսման, եւ ո՛յք աղանդապետացն այնոցիկ ընդդիմասացք յաւուրս իւրեանց ի սրբոցն, կամ զի՛նչպիսի յայտնութիւն զառաջինն յԱստուծոյ եղեւ առ իմանալ ամենեցուն զդառնութիւն հերձուածոյն ի մէջ այսոցիկ: [3]Զբաջաղկոտաց ոմանց խայտառակեսցուք զգիտութիւն եւ զառասպելական կարծիս՝ զճշմարտութիւն անդստին իսկ յանդիման ի Գրոցն կացուցանելով եւ զժամանակին հեռաւորութիւն ի ներքոյ դրոշմելով, անմոլար զխորհուրդս բազմաց ի հաւաստուոյն ուսմանէ կացուսցուք եւ զկնի այսոցիկ զհամաձայնութիւն միմեանց առ ստութիւնն հետեւողաց նոցին՝ Նեստորի ասեմ եւ Լեւոնի եւ ժողովոյն Քաղկեդոնի եւ այլոց ոմանց վատափառաց, զորոց քակտեալ կործանեսցուք զաւրութեամբ Աստուծոյ ի հարցն բանից եւ աւանդութեանց՝ զանաւրէն իմացմունս:

II. // [1]Բայց զարմանալ ինձ եւ կարի յոյժ, թէ զիա՞րդ ոչ զարհուրին ստութիւն ոմանք ի վկայութիւն ճշմարտութեան ի ներքս բերել եւ այն յոչ ունողացն փառս գիտութեան յիր եւ ի բան, յոր ձեռնարկել համարձակ եւ ոչ կատարելոցն անգամ է բոլորովիմբ գիտութեամբ, յորմէ եւ հրեշտակք սարսափին. [2]կամ զիա՞րդ անուամբ ուղղափառութեան 277ա

* *Բնագրում յատուկ անունները ներկայացուած են մի քանի զուգահեռ ձեւերով եւ տարբեր հնչիւնագրական աղաւաղումներով: Մենք բոլոր յատուկ անունները միօրինակացրել ենք՝ օտար անունների հայերէն հնչիւնագրութեան կանոնների համաձայն:*

պաճուճին խառնակ եւ տգէտ խոստովանութեամբ, մանաւանդ եթէ հերձուածողականաւ: [3]Վասն զի ոչ ժամանակացն միայն եւ զարանց, այլ եւ զհաւատոյն բան ստեն յանդգնութեամբ յաղագս անուանի բանիւ գոլ տալոյ կարծիս. [4]եւ եթէ յանդիմանեսցի ոք երբեք ուրեք, կամ տրտունջ յումեքէ այնպիսին կրեսցէ, որ յոչ եւեթ բանիւ, այլ եւ գրով արձան թերութեանն կանգնեաց, [5]բազումք սաստեն, եւ նա ըմբոստանայ յայտմանէ հպարտութեան, [6]վասն որոյ մեք մի՛ շրթամբք, այլ գրով տացուք արձան ընդդէմ արձանի եւ ճշմարտութեամբ ընդդէմ ստութեան: [7]Արդէն իսկ շնորհաւք ճշմարտութեանն միայնոյ եւ մեծի մերձ դիցուք ի գումարութենէ զ՚առ ի սրբոցն բանս. եւ նախ՝ թէ յո՞ր ժամանակս եւ կամ առ որո՞վ ողիմպիադաւ արտեմոնականն սկսաւ աղան-
277բ դոյ բոց // տոչորել, եւ ո՞յք ի ժամանակին թագաւորք եւ կամ քաղաքաց եպիսկոպոսք. եւ սկսցուք այսպէս:

III. [1]Առ Մխ ողիմպիադաւն՝ յառաջնումն ամի թագաւորէ Հռոմայեցւոց Կոմոդոս ամս ԺԳ, որ հինգետասաներորդ էր ի Յուղղեայ կայսերէ, յորմէ եւ ուստի կայսերք Հռոմայեցւոցն, որ ըստ նմանէ թագաւորք անուանեցան, որ զառաջին կալաւ միահեծան զՀռոմայեցւոց իշխանութիւնն ամս Դ եւ ամիսս Դ: [2]Սա եւ Գայիոս կոչէր եւ կայսր առաջին, զկնի որոյ՝ Օգոստոս, որ եւ Սեբաստոս Հոքտաւիոսն, թագաւորէ ամս ԾԶ եւ ամիսս Զ, յորոյ խԲ ամի ծնանի Որդին Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոս ի Բեղղեհէմ Հրէաստանի, եւ լինին աստի մինչեւ ի թագաւորեալն Կոմոդեայ ողիմպիադք խԶ, ուստի ժողովին ամք ՃՁԴ: [3]Ի սորա տասներորդ ամին յաջորդէ զեպիսկոպոսութիւն Եկեղեցւոյն Հռոմայեցւոց Բիկտոր, որ էր յառաքելոյն Պետրոսէ ԳԺ-աներորդ, ի սոյն աւուրս էր եւ Նարկէսոս սքանչելի, Լ-ներորդ ի Յակոբայ եպիսկոպոսէ Եկեղեցւոյն երուսաղէմացւոց: [4]<Եւ> կալեալ զեպիսկոպոսութիւն Եկեղեց<ւոյն> Հռոմայեցւոց Բիկտորի զամս ԲԺ-ան մինչեւ իններորդ ամն Սեւերեայ՝ Զեփիւրինոս կալաւ զկնի նորա զեպիսկոպոսութիւնն:
278ա [5]Եւ առնին ի ծննդենէ Փրկչին մինչեւ յամն իններորդ Սեւերեայ // եւ ցյաջորդել զեպիսկոպոսութիւնն Հռոմայեցւոց Զեփ<իւ>րինոսի ամք ՄԶ: [6]Եւ յայնմ ժամանակի Հերձուածոյն Արտեմոնի սկիզբն: [7]Եւ զի՞ւրդ ի ստոց ոմանց եւ յիրահամարձակաց արանց իշխի ասել աշակերտ Յովհաննու աւետարանչի գոլ Արտեմոն. եւ այն, զի ոչ նա, այլք ոմանք առ Բիկտոր. [8]եւ եղեն գլուխք այնր հայհոյութեան, զորս ընկէց Բիկտոր ի հաւասարութենէ Եկեղեցւոյ, թէպէտ եւ կրէ զրպարտութիւն առ ի նոցանէ զկամակցութեան աղանդոց, որպէս հնոյ եւ սկզբնականի

ուսման եւ առաքելականի եւ ի Զեփ<ի>ւրինոսէ միայն այնուհետեւ արհամարհեցելոյ, որպէս եւ ի գրոց անտի գոյ ուսանել: [9]Իսկ Արտեմոնի զկնի ուրեմն գոյ աշակերտեալ աղանդոյն մարդադաւանութեան զՔրիստոսէ այսր, քան զժամանակնն Բիկտորի, աճեցոյց զնոյն, որպէս Մարկիոն զԿարդոնին զնոյն իսկ զբանսն, որ զնոցանէ առընթեր եդից:

Եւսեբեայ Կեսարու «Յեկեղեցւոյ պատմութենէ»
ի հինգերորդ դպրութենէ*

Վասն այնոցիկ, որ եղեն ի սկզբանէ յաղանդոյ անտի Արտեմոնի, եւ որով աւրինակաւ էին նոքա, եւ թէ որպէս համարձակեցան նոքա եղծանել զԳիրս Սուրբս

IV. [1]Եւ յիմաստնոց աստի յայսցանէ, վասն որոց ասացաք մեք <ի> խաւսս, զոր եդեալ է // մեծաւ հոգաբարձութեամբ <ի միոջ ուրումն ի նոցանէն> ընդդէմ աղանդին Արտեմոնեայ. այն, որ հնարեցաւն նորոգել զնա ընդդէմ մեր, Պաւղ Սամոսատացի: [2]Գոյ ի նմա պատմութիւն, որ պիտոյ է այսմ ճառիցս, զոր արկեալ է մեր. զի այս աղանդ ասէ վասն Փրկչին մերոյ, թէ մարդ է դուզնաքեայ: [3]Բայց յանդիմանեալ՝ կշտամբէ զնա, թէ ոչ յառաջ քան զբազում ժամանակս սպառեաց յԵկեղեցւոյ: [4]Քանզի հպարտացեալ պարծէին այնոքիկ, որ վերակացուն են նորա, թէ կանխագոյն է նա: [5]Եւ եդ նա եւ այլ բազում վասն յանդիմանութեան սուտ բանից հայհոյութեան նոցա: [6]Պատմէ իսկ բանիւք իւրովք այսպէս. «Ասեն,— ասէ,— եթէ ամենայն առաջինքն եւ նոքա յառաքելոցն ընկալան եւ ուսան զսոյն զայս, զոր ասացաքս. [7]եւ պահեցաւ,— ասէ,— ճշմարտութիւնն մինչեւ ի ժամանակս Բիկտորի, որ էր նա եպիսկոպոս երեքտասաներորդ ի Հռոմ քաղաքի յետ Պետրոսի. ի Զէփրիանէ իսկ, այն, որ կալաւ զկնի նորա, գործեցաւ ստութիւն ի վերայ ճշմարտութեան»: 278բ

V. [1]Բայց այս թերեւս արժանի էր հաւանութեան, եթէ ոչ զի նախ Գիրք Սուրբք կան հակառակ ընդդէմ նոցա: [2]Բայց են եւ գիրք ոմանց յեղբարց մերոց, որ հին են եւ քան զժամանակս Բիկտորի,

* *Տես Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877 թ. (= ԵԿ), էջ 405–406: Հրատարակուած բնագրի հետ համեմատութեամբ՝ խմբագրական եւ ոճական բազմաթիւ տարբերութիւններ կան, որոնք չենք նշում: Բոլոր անհրաժեշտ ուղղումները եւ յաւելումները կատարուած են ըստ հրատարակութեան: Սակայն հարկ է նշել, որ շատ տեղերում Սարկաւագի բնագիրն աւելի հաւաստի է եւ աւելի է համընկնում յունարէնի հետ, քան հրատարակուածը:*

279ա որք գրեցին ընդդէմ հեթանոսաց վասն ճշմարտութեան // եւ ընդ-
դէմ աղանդից, որ էին յայնմ ժամանակի. [3]ասեմ իսկ Յուս<տ>ի-
անոսի եւ Միղատեդոսի եւ Տետիանոսի եւ Կղեմենտեայ եւ այլոց
բազմաց, զի ամենեքին սոքա ասեն վասն Աստուածութեանն Քրիս-
տոսի: [4]Իսկ զԻրենոսի եւ զՄեղիտովնի եւ զայլոց, ո՞վ է, որ ոչ գի-
տէ զգիրս նոցա, որ քարոզեն վասն Քրիստոսի, թէ Աստուած է եւ
մարդ: [5]Բայց վարդապետութիւնք եւ երգք, որ գրեցան ի հաւատա-
ցեալ եղբարց անտի ի սկզբանէ, փառաւորեն զՔրիստոս զԲանն Աս-
տուծոյ եւ ասեն վասն Աստուածութեան նորա: [6]Արդ, զիա՞րդ իբրեւ
յայս ամենայն ամս աւետարանի ճշմարտութիւն Եկեղեցւոյ, մարթ
ինչ է լինել այսմ, զոր ասեն նոքա, թէ մինչ ի ժամանակս Բիկտորի
քարոզէին այս միտք. [7]կամ զիա՞րդ ոչ ակն ածեն զրպարտել զԲիկ-
տոր այսուիկ, իբրու գիտեն ճշմարտութեամբ, եթէ Բիկտոր զԹէոդո-
տոս, որ էրն գլուխ եւ հայր այսր խոտորման, որ ուրանայ Աստու-
ծոյ, տարագրեաց զնա ի հաղորդութենէ կցորդութեան, որ նախ նա
ասէր վասն Քրիստոսի, թէ մարդ էր դուզնաքեայ: [8]Զի եթէ Բիկտոր,
որպէս ասեն, հաւատայր ըստ ուսմանն հայհոյութեան նոցա, զի-
ա՞րդ ընկենոյր նա զԹէոդոտոս, այն, որ նա եղեւ գտիչ այսր աղան-
դի: [9]Եւ զայս ասաց վասն Բիկտորի:

VI*. [1]Իսկ իբրեւ եկաց ի պաշտաման իւրում զԺ ամ, կալաւ զկնի
279բ նորա Զեփիւրինոս յամին Թ-երորդի <թագաւորութեան> Սեւերեայ: //
[2]Եւ յաւելու եւ ասէ. այն, որ եղ զայս խաւսս վասն այնորիկ, որ սկսաւ
յայս աղանդ, վասն որոյ ասացաք զնմանէն եւ այլ միւս եւս գործ, որ
եղեւ յամս Զեփիւրինոսի: [3]Եւ գրէ այսու բանիւք այսպէս. «Յիշեցու-
ցից,— ասէ,— եղբարց իրս մի, որ յաւուրս մեր գործեցաւ, այն, որ ակն
ունիմ, որ եթէ գործեալ էր ի Սոդոմ, թերեւս իմաստնացուցանէր զնա:
[4]Այր մի էր, զի անուն էր նորա Անտեղիոս, եւ էր նա խոստովանեալ,
բայց ոչ յառաջագոյն էր նա, այլ ի մեր ժամանակս: Զսա մոլորեցուցին
երբեմն Ասկղեպիդոտոս եւ Թէոդոտոս միւս եւս, եւ էր սա տրապիզիտ:
[5]Եւ էին իսկ երկոքին նոքա աշակերտք Թէոդոտոսի, այն, որ ասացաքն
զնմանէ յառաջագոյն, թէ վասն այսր մտաց յիմարութեան որոշեաց զնա
ի հաղորդութենէ կցորդութեան Բիկտոր եպիսկոպոս (որպէս կանխեցի

* Այս պարբերութեան սկզբում գրչագրի կողմից դրուած է ԺԲ պարբերութեան համարը, մինչդեռ ԵԿ-ու հրատարակուած բնագրում այն համապատասխանում է Է համարին:

ասացի), հաւանեցուցին իսկ զԱնտեղիոս, զի եղիցին նմա տալ յայտնի սակ եւ կոչեսցի եպիսկոպոս այնր աղանդի, եւ եղիցի նա առեալ ի նոցանէ հարիւր եւ տասն դահեկան: [6]Իսկ իբրեւ ընտանեցաւ նոցա, բազում ժամանակս ի ձեռն տեսլեան խրատեալ լինէր նա ի Տեառնէ իւրմէ: [7]Զի Աստուած ողորմած եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ կամեցաւ, թէ լիցի նա արտաքս // քան զԵկեղեցի եւ կորիցէ, քանզի եղեւ նա վկայ 280ա
չարչարանաց նորա: [8]<Բայց> քանզի լքեալ մտաւք հայէր նա ընդ տեսիլն քան զոր ասացեալ լինէր նա ի ձեռն գլխաւորութեանն որ առ նոսա եւ զաւշաքաղութեանցն, որ կորուսանէ զբազումս: [9]Իսկ ի յետոյ տանջեցաւ ի հրեշտակաց սրբոց եւ զամենայն <գիշերն> չարչարեցաւ մեծապէս: [10]Եւ նոյնժամայն կանխեաց ընդ առաւաւտն եւ զգեցաւ քուրձ եւ ցանեաց զիւրեւ մոխիր եւ բազում փութով պնդութեամբ եւ անգին արտասուաւք անկաւ առ ոտս Զեփիւրինոսի եպիսկոպոսի: [11]Եւ ընկենոյր զանձն իւր առաջի ամենայն մարդոյ, ո՛չ առաջի այնոցիկ միայն, որ էին յաշտիճանի անդ Եկեղեցւոյ, այլ եւ առաջի ժողովրդեանն, եւ հեղոյր նա զարտասուս <իւր եւ> առաջի ողորմած Եկեղեցւոյ Քրիստոսի <ողորմածի> եւ յոյժ աղաչէր եւ խնդրէր ի նոցանէ եւ ցուցանէր զկեղս վիրացն, զոր ընկալաւ, եւ հազիւ ետուն նմա զհաղորդութիւն կցորդութեան»:

VII. [1]Եւ ընդ այս բանս յարեալ են եւ այլ բանք սորին այս աւրինակագրի, զի են այսպէս. «Զ Գիրս,— ասէ,— Սուրբս աներկիւղ համարձակ եղծին, ապականեցին եւ զկանոնս զառաջին հաւատոցն զրկեցին եւ զՔրիստոս ոչ ճանաչէն եւ ոչ քննեն, եթէ զինչ ասեն Գիրք Աստուծոյ, այլ թէ որպիսի կեր//պարան մաքառման գտցեն, որ զրկէ զԱս- 280բ
տուածութիւնն Որդւոյ, եւ թեւակոխին ի նմա փութով պնդութեամբք: [2]Եւ եթէ ոք հարցանէ զնոսա բան ի Գրոց Աստուծոյ, նախ նոքա հարցանեն, թէ այս բանս զո՞րպիսի կերպարանս մաքառման կարէ առնուլ՝ խառնո՞ւմն, թէ՞ որոշումն: [3]Բայց թողին զ Գիրս Սուրբս Աստուծոյ եւ կրթեն եւ ուսանին զչափս երկրի, իբրու թէ որդիք իցեն երկրի եւ յերկրէ խաւսին. եւ զայն, որ եկն ի վերուստ, ոչ գիտեն: [4]Զի Աւկղիդէս առ ոմանս ի նոցանէ փութով պնդութեամբ ուսանի, Արիստատիղէս եւ Թէոփիրատոս յոյժ սքանչելի են առ նոսա, զի Գաղիոս առ ոմանս ի նոցանէ իբր այն թէ երկրպագելով երկրպագի: [5]Իսկ նոքա յարուեստգիտութիւնն այնոցիկ, որ ոչն հաւատան, պաշտին ի խորհուրդս աղանդին նոցա, եւ ի խորամանկութիւն այնոցիկ, որ առանց Աստուծոյն են, խառնեալ են ընդ պարզ հաւատսն Գրոց Աստուծոյ, իբր ոչ մերձենա-

լով մերձենային նոքա առ հաւատսն, զի՞նչ պիտոյ է մեզ ասել ի նոցանէ: [6]Վասն այսորիկ աներկեւղ համարձակ ձեռնամուխ եղեն ի Գիրս Աստուծոյ եւ ասեն բան՝ ուղղելով ուղղեմք զնոսա: [7]Եւ զի ոչ զրպարտելով զրպարտեմ ինչ զնոսա, այն որ կամին՝ կարէ ուսանել: [8]Եթէ ոք կամի հանել զաւրինակ զմիոյ միոյ ի նոցանէ եւ ընթեռնուլ զնոսա
281ա ընդ միմ//եանս, գտանէ զնոսա, զի երկմտեալ եւ բաժանեալ են ի միմեանց. զի բաժանեալ են Ասկղոպիդայն ի Թէոդոտոսեայն: [9]Բազում իսկ գտանին ի գրոց անտի նոցա, քանզի փութով պնդութեամբ գրեն զնոսա աշակերտք նոցա՝ զուղղեալսն միոյ միոյ ի նոցանէ, որպէս եւ նոքա կոչեն զնոսա, բայց են նոքա եղծեալք եւ ապականեալք: [10]Բայց դարձեալ Հերմապալլսին սոցա ոչ միաբանին, իսկ Ապողինիդեայն եւ ոչ նոքա նոցայնոցն միաբանին: [11]Զի եթէ ոք ընթերցցի զայնոսիկ, որ յառաջագոյն ուղղեցան ի նոցանէ, ընդ այնոսիկ, որ յետոյս ապականեցին, գտանէ, թէ ոչ միաբանին ընդ միմեանս: [12]Այլ թէ քա՛նի է ժպրհութիւն այսր մեղայ, թուի թէ եւ նոքա ճարտար գիտիցին. կամ թէ ոչ հաւատան, թէ ի Հոգւոյ Սրբոյ ասացան Գիրք Սուրբք, եւ են նոքա առանց հաւատոց կամ զանձինս իւրեանց համարին իմաստուն քան զՀոգին Սուրբ: [13]Զի՞նչ եւս այլ ինչ են նոքա, բայց եթէ դիւահարք, զի ոչ կարեն նոքա ուրանալ, եթէ չիցէ նոցա յայս ժպրհութիւն. իբրու ձեռաւք իւրեանց գրեն յայնցանէ, ուստի աշակերտեցան նոքա, ոչ ընկալան նոքա զգիրս այսպէս, եւ չիք նոցա ցուցանել, եթէ ուստի գրե-
281բ ցին նոքա զաւրինակսն իւրեանց: // [14]Իսկ ոմանք ի նոցանէ ոչ զի փոխելով փոխել զնոսա կամեցան միայն, այլ սպառսպուռ ուրացան յաւրինաց եւ ի մարգարէից ուսմամբն իւրեանց՝ այն, որ առանց ուսման աւրինաց եւ առանց Աստուծոյ է, եւ ի պատճառս մոլորութեան ընկեցան»: [15]Եւ վասն այսորիկ մինչ ցայս վայր»:*

VIII. [1]Արդ, այս յանուն Արտեմոնի անուանել աղանդ անագան է քան զժամանակս առաքելոցն՝ երկերիւր ամաւք սուղ ինչ նուազ, որպէս ճառեցաւդ վերագոյն, իսկ նոյն ինքն Արտեմոն եւս անագան եւ չիջեալ եղծաւ ի հաւատսէր եւ յառաքինի հովուաց Եկեղեցւոյ Քրիստոսի, եւ առաջին՝ ի Բիկտորէ Հռոմայեցւոյ մինչեւ ի ժամանակս Պաւղոսի Սամոսատացւոյ: [2]Արդ, լինին ի ծննդենէ Փրկչին մինչեւ յամն չորրորդ Կոմոդեայ կայսեր ամք ՄԴ, իսկ ի չարչարանաց եւ ի յարութե-

* *Այստեղ աւարտւում է Եւսեբիոս Կեսարացու «Պատմութեան» հինգերորդ գլուխը:*

նէ Տեառն մինչեւ ցնոյն ամ ՃՀԳ ամք եւ ցԲիկտոր եպիսկոպոս Հռոմայեցւոց, առ որով գլուխ եւ հայր մոլորութեան արտեմոնեացն Թէոդոտոս երեւէր, զոր մերժեաց <ի> կցորդութենէ Եկեղեցւոյ Բիկտոր, ամք ՃՁ, որ կալաւ եպիսկոպոսութիւնն մինչեւ ցիններորդ ամն Սեւերեայ, իսկ ըստ այլոց մինչեւ ցեւթներորդն, զկնի որոյ Զեփիւրինոս
կալաւ զեպիսկոպ//ոսութիւնն զերկոտասան ամ, զորոյ ամբաստանեն 282ա
արտեմոնեանքն՝ իբր թէ նա առաջին սկսաւ խոտել զուսումն նոցա:
[3]*Զի յետ երեքտասան ամին Կոմոդեայ թագաւորեաց Եղեւիոս Պերտինաքս ամ մի, եւ ապա Սեւերոս՝ ամս Ը առ տասամբ միով, յորոյ իններորդ ամի ասի զաթոռն ունել Հռոմայեցւոց Եկեղեցւոյն զեպիսկոպոսութեան նմա, այսինքն՝ երկերիւր քառասուն եւ հինգ ողիմպիադին կացին թագաւորք Հռոմայեցւոց Վաղերիանոս եւ Գաղղիենոս:* [4]*Եւ յերրորդ ամի անդ չոքաւ գերի ի Պարս Վաղերիանոս յաղագս յարուցանելոյ հալածանս ի վերայ քրիստոնէից:* [5]*Իսկ ի վեցերորդ ամին Գաղղիենոսի եկաց եպիսկոպոս հինգետասաներորդ յԵկեղեցւոջն անդիոքացւոց Պաւղոս Սամոստացի, որ զառողջ կանոնսն որոշեաց եւ զԱրտեմոնի հերձուածսն նորոգեաց եւ որպէս բանն է արտաքոյ Եկեղեցւոյ Աստուծոյ:* [6]*Խորհեցաւ ի վերայ Քրիստոսի խորհուրդ տնանկութեան եւ աղքատութեան, իբրեւ ի վերայ դուզնաքեայ եւ իջեալ յերկնից, եւ այս ոչ դուզնաքեաւք ասացաւ մարդոյ, ոչ կամի խոստովանել Որդի Աստուծոյ եւ ի նմանէ, այլ ի խաւսից անտի, զոր առաքեաց, ճանաչի, թէ քանիցս անգամ ասաց վասն Յիսուսի Քրիստոսի, թէ ի ներքուստ է, յաւելուն ի թղթի // անդ եւ ասեն:* [7]*Իսկ զայն, որ ճաղեցաւն զխորհուրդ* 282բ
Եկեղեցւոյ եւ խայտառակեաց զնա պիղծ աղանդովն Արտեմոնեայ, զի պիտոյ է ցուցանել զհայրն նորա, ոչ այսուհետեւ պիտոյ է յետ այսր ամենայնի պահանջել ի նմանէ զայս: [8]*Յայտ է, թէ վասն գործոցն պղծութեան ակնարկելով ասեն եւ դարձեալ, իբրեւ անկաւ Պաւղէ ի հաւատոց անտի ճշմարտութեանն եւ ընդ նմին եւ յեպիսկոպոսութենէ անտի, որպէս յառաջագոյն կանխեցաք ասացաք, Դոմնոս կալաւ զեպիսկոպոսութիւն Եկեղեցւոյն անդիոքացւոց:* [9]*Եւ երեւի չարին այնորիկ կալեալ Պաւղոսի զանուն եպիսկոպոսութեանն զէ ամ՝ ի Զ-երորդէն Գաղղիենոսի թագաւորութեանն մինչեւ ցերկոտասանն ՄԿԱ ողիմպիադին ցչորրորդ ամն, եւ լինին ի ծննդենէն Փրկչին ողիմպիադք ԿԷ, որ են ամք ՄԿԸ:* [10]*Իսկ ի տասներորդ ամէն Կոմոդեայ կայսեր, յորում Բիկտոր կալաւ զպաշտաւն Եկեղեցւոյն Հռոմայեցւոց, որ զԹէոդոտոն մերժեաց զնախնի աղանդոյն արտեմոնական, ողիմպիադք Ի պակաս մի-*

ով ամաւ, իսկ ամք ՀԹ, եւ ց Պաւղոսի հերետիկոսի զաթոռն եպիսկոպո-
283ա *սութեան սկիզբն ամք ՀԲ ի Բիկտորեայ: // [11]Առ Սամոստացովն զեկե-*
ղեցին հռոմայեցւոց Դիոնիսիոս հովուէր, որ քսաներորդ չորրորդ էր ի
Պետրոսէ առաքելոյ եւ կալաւ զեպիսկոպոսութիւն զԹ ամ:

IX. [1]Արդ, գրեցան սոքա ո՛չ վայրաբար ինչ, կամ ժամանակ, կամ
անուանք առաքինեաց արանց եւ վատթարաց, այլ եւ թագաւորաց
ոմանց՝ հանդերձ ողիմպիադեաւք, բայց զի գիտասցես, թէ կարի յոյժ ի
տգիտութենէ ստեն, ոյք ասեն զԱրտեմոնն զայն լինել աշակերտ աւե-
տարանչին Յովհաննու: [2]Եւ ծանիցես դարձեալ, թէ կանխագոյն է հեր-
ձուածդ երկաբնակաց եւ քան զժամանակս երանելւոյն Յուլեայ Հռոմայ
եպիսկոպոսի, որ առ Կոստանդնիւ կայսերբ լեալ ասի, քանզի ոմանք
անտի կարծեն եւ յայնմ հետէ զբաժանական հերձուածդ: [3]Հանդերձ
այսոքիւք, զի եւ զՆեստորի եւ զվարդապետաց նորա եւ զժողովոյն
Քաղկեդոնի իմասցիս զհերձուածապետս եւ զառաջնորդ<ս>, [4]քանզի
խմորն ապականագործ եւ չար՝ լռեալն ի զաւրութենէ յաւուրցն Բիկ-
տորի, զաւրութիւն վերստին սաստկագոյն առնոյր ի ձեռն Սամոստաց-
283բ *ւոյ գազանին եւ տարածանէր զժնդակապէս ի յոլովս եւ ըստ փ//ոխան-*
ցութեան կարգի արժանաւոր ժառանգաւք գայր հասանէր ի Նեստորիոս՝
մշակող որոմանն սերմանեցելոյ, զի ընդունել սմա ասեն յումեմնէ
Մոփսիեստացւոյ Թէոդորոս կոչեցելոյ, որ էր աշակերտ Դիոդորի: [5]Իսկ
ի տարագրիլ անարժանին Աստուծոյ Նեստորի սուղ ինչ ի վերայ ան-
ցելոյ ժամանակի Փղաբիանոս ոմն՝ համախոհ ի նորին եւ ծանաւթ չա-
բի նորայն աւանդութեան, ունի զաթոռ եպիսկոպոսութեան քաղաքին
Կոստանդինու: [6]Եւ ի լինիլ հակառակութեան Եւտիքի վանապետի քա-
ղաքին առ նա, վասն չառնլոյ յանձն ընդ նմա լինել դաւանակից եր-
կու բնութեանց ի վերայ Քրիստոսի եւ ոչ իւր ուղղապէս խոստովանե-
ցելոյ, քանզի առ աչաւք եւ ոչ ճշմարտապէս Բանին մարմին լինել դա-
ւանէր, եւ չար չարի ախոյան եւ ընդդիմամարտ պատահեալք՝ ոչ ի հա-
ւանակցութիւն միմեանց խոնարհէին: [7]Յաղագս որոյ եւ ժողով երկրորդ
յԵփեսոս եղեալ ի Թէոդոսէ արքայէ գլխաւորութեամբ մեծին Դէոսկո-
րոսի Աղեքսանդրացւոցն եպիսկոպոսի, որպէս քաջայայտ իսկ է, խո-
տեցան կողմանք երկոքին: [8]Բայց նախ քան զայս զպատճառն վիճա-
բանութեանն գրէ Փղաբիանոս առ ամբարիշտն Լէոն՝ առնելով վճիռ ի
284ա *նմանէ՝ խնդրելով // ի նահանջումն հակառակութեանցն զթոյնս կարճի՝*
աւձի կամեցեալ բժշկել թունիւք: [9]Իսկ նորա զախորժելին նմա գրեալ
հայհոյութիւն ի բաժանեալ չորեքտասան գլուխսն՝ առաքէ առ նա, զոր

նզովեցին աւանդողաւն եւ աւանդառուաւն հանդերձ ժողովեալքն յԵփեսոս: [10]Սակայն պահեցաւ կտակ չար ի չարաց աշխարհի ի գլորումն
կործանման, քանզի ժողով ամբարշտացն, որ ի Քաղկեդոնի բիւթենացուոց, քարոզեցին զանաւրէնութեանն եւ անաստուածութեան հաւատոյ
արձան, յորոց բանից եւ իմացուածոց հանդերձելոց ելանել ի մատեան գրոյդ համառաւտիւ ճանաչելոց ես զլրբութիւն յանդգնելոցն հակառակ Աստուծոյ եւ Աւծելոյ նորա եւ որոց Հոգին Սուրբ կարգեաց տեսուչս եւ վարդապետս Եկեղեցւոյ սրբոյ:

X. [1]Արդ, զիա՞րդ ոչ եւ չափաւորաց եւ պարզամտաց քաջայայտ
ամբարշտութեան ժողովոյն Քաղկեդոնի իցեն իրք, զի հարք նոցա կաշառաւք կամեցան գողանալ ճշմարտութիւնն, [2]որպէս երբեմն ծերք հրէից զբան յարութեանն եւ ի սքանչելի տեսլեանցն, որ առ կշտամբանս
անհաւանութեան նոցա խցին զդրունս աչաց եւ ականջաց, եւ միջինք
նոցա առ բան//իւք հայհոյութեանց ստգտեալ են եւ գործովք զազրու- 284բ
թեան: [3]Եւ նոքին ինքեանք ի պտղոյ անտի, այլ եւ յարմատոցն ճանաչին, ըստ որում ի սոցանէ՝ նոքա, քանզի յորդիս իւր ծանիցի այր, եւ
ծառ՝ ի պտուղ իւր, եւ զի նոյն կամք եւ ձայնակցութիւն ամենեցուն նոցա են, ոչ կարեն ստել, թէպէտ եւ կախարդական բանիւք եւ հաւանեցուցանողաւք, որպէս եւ են իսկ սովոր, բազում անգամ հնարիցին՝
մարդ ստորին եւ հասարակական Սամոստացին հայհոյելով համարձակապէս զՔրիստոս անուանել, նմանապէս եւ որք զկնի նորա՝ թէոդորիտեանքն եւ այլք նոցին համախոհք: [4]Որոց վարժեալ ուսմամբ Նեստորիոս, ընդարձակագոյն զհերձուածսն լնոյր, տարածանէր յոգիս բազմաց, իսկ Լէոնն այն, եթէ՛ ի սոցանէ ընկալեալ եւ եթէ՛ ի գրոց անտի
արտեմոնեանցն, որ ի քաղաքին, որ ի վաղնջուց արմատեցելոյ ի հասարակաց ամենեցուն նոցա հիմանէ եւ սկսմանէ, տաղաւար Բանին զմարմինն կոչէ եւ չորեքտասանեքումբք գլխովք մատենին իւրոյ հայհոյութեանն բաժանել զմիաւորութիւնն եւ քակտել նկրտի, [5]զոր ընկալեալ
զկնի ժամանակի դուզնաքոյ ժողովեալքն ի Քաղկեդոն արձան հաւատոյ անուանեցին՝ շինելով // ի վերայ այնր ապականիչ եւ հայհոյա- 285ա
կան հիման զնիւթ իւրեանց իմացուածոց, եւ աւարտեալ՝ կանգնեցաւ անագան ուրեմն աստուածամարտութեանն աշտարակ ի միաշուրթն ամբարշտաց: [6]Եւ ոչ ծիծաղելի չարաց եղեն, այլ եւ սուգ անբերելի եւ անհնարին բարեպաշտիկ աւանդութեանն եւ զԱստուած սիրողաց անձանց եւ ժողովոց ի վերայ տարածեցին մինչեւ ցայսաւր ժամանակի,
որոց ոչ դատարկասցի ի բնէ դատաստան:

<ԺԱ>*

ՆՈՐԻՆ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆՆ ԲԱՆԻ ԵՒ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ

I. [1] *Ճարտարեն բանիւք պակասեալք յարդեանցն ազնուականութենէ, քանզի այս սովորութիւն է անզեղջ եւ չարասէր ախորժակաց՝ ոչ ըստ բարեմտացն ապաշաւել յանգիտութենէ՝ զսխալանացն վնասս անամաւթաբար խոստովանելով, այլ մանաւանդ յաւելուլ յիմաստս եւ ի բանս եւ ի գործ<ս> ամբարշտութեանն, անյուսացեալք գոլ այցելու եւ վրէժխնդիր զոք եւ չափող ըստ արժանաւորութեան զիւրաքանչիւրոցն արդարապէս հատուցումն իրաց:* [2] *Զի այսպէս ասացից, ուստի եւ զմահու չափ զ'առ Աստուած մեղանացն ծանրութիւն փոքր եւ առ ոչինչ վարկուցեալք՝ բացաւ գլխով շեղջել աւր ըստ աւրէ զհայհոյու-*
285բ *թեանն չարապէս մթերս եւ յայնմանէ // զստուգակշիռ փոխարինացն բովանդակ հատուցմունս:* [3] *Ոչ դանդաղին հոմանունութիւն որդւոց երկուց ամենեքեան ի զանազան ժամանակս բուսեալք հերձուածք՝ զՔրիստոսէ ի ներքս մուծանեն եւ մի դէմն ստեղծաբանելով՝ գողանան զանվարժիցն միտս:* [4] *Քանզի եթէ յատկապէս ապրեցան էակցեալքն, որպէս ասեն, բնութիւնքն, եւ զիւրաքանչիւրսն ամբողջ պահեցին բնաւորական ներգործութիւնս եւ կիրս, այս է ըստ մասին եւ անխառն երկաքանչիւրոցն կացելոյ, ո՞ւր ապա միաւորութեանն Բան, եւ զի՞նչ Բանին մարմին լինել կամեսցի յայտնել:* [5] *Վասն զի չարայարութիւնն ասել եւ ըստ արժանաւորութեան միութիւն՝ յայտնապէս երկուց դիմաց ունի զեկուցումն, որպէս զի գոլ պարզաբար մարդ Քրիստոսի արժանաւորեալ լինել տաճար Բանին, քանզի ամենայն յեղյեղմունք բանից նոցա եւ բազմաւրինակ հանճարոյ դժնդակութիւնք յայսոսիկ առանց հակառակութեան ժողովին եւ զճշմարիտ միաւորութեանն բան կամակար մտաւք անգիտանան:* [6] *Ոչ հեռի ինչ յայսմանէ եւ զբնութեանցն տարբերութիւնս, զի այլ բնութիւն աստուածայինն, եւ այլ՝ մարդկային:*

286ա *II.* [1] *Բայց յորժամ զմարդասիրութեանն // անբաւութիւն առատապէս եհեղ ի մեզ ի ձեռն հաճելոյն մարդանալ, որ յԱստուծոյ ճշմարտէ՝*

---

* *Գրչագիրը որպէս այս գլխի համար է նշում ԺԱ՝ հաւանաբար առանձին գլուխ համարելով Եւսեբիոսի «Պատմութեան» հատուածը նախորդ գլխից, որի ենթավերնագիրն ընդօրինակուած է վերնագրային կարմրագրով:*

ճշմարիտն Աստուած, միացան զանազանութիւնք բնութեանցն անփոխադրապէս եւ առանց լուծման, որպէսզի խոստովանել մեզ զ'<ը>ստ բնութեամբ մարդկայինն աստուածային ըստ միաւորութեանն եւ զոլ զնոյն Աստուած, համանգամայն եւ մարդ: [2] Ոչ զոմն առ ոմն շարայարութեամբ հոմանունաբար որդի անուանեմք՝ ըստ Լեւոնի, կամ ունակական եւ զմիաւորութիւն ի զանազան բնութիւնս եւ տարայատուկս երկաքանչիւրոցն: [3] Քանզի ասէ ի հայհոյութեան իւրում տաւմարին, մինչդեռ երկախումբն ընդ միմեանս է եւ մարդոյն նուաստն, եւ մեծութիւն Աստուածութեանն, եւ զմիաւորութիւնն ծախումն ասել եւ զոլ կարծէ մարդկայնոյ բնութեանն: [4] Վասն որոյ ի վերայ բերէ, քանզի որպէս յողորմելն Աստուած յեղումն ոչ ընդունի, այսպէս մարդն մեծութեամբ աստուածայինն արժանաւորութեան ոչ ծախի, եւ ոչ զանգիտէ յանդգնաբար եւ յայտնապէս համարձակութեամբ հայհոյել՝ մարդն անուանելով սոսկ եւ արժանաւոր եւ զմեծութեանն աստուածայնոյ՝ ի թունից աւձի յինքն ամբարեալ զդժնդակութիւն ճահագործի Նեստորէ,
եւ որոց ըստ նմայք այդպիսիք // եւ եւս դաժանագունիւք: [5] Լի են 286բ
հայհոյութեամբ առ ի նոցանէ գրեալքն, զորս ընկալեալ ժողովոյն Քաղկեդոնի՝ եղծին զկանոնս առողջ հաւատոյ՝ ոչ իւիք ցուցանելով բնաւ զանազանութիւն հերձուածապետացն առաջնոց, զորոց կարող ես ճանաչել ի գրոց անտի զձայնակցութիւնն, այլեւ զճշմարտութեանն աւանդողաց հակառակ նոցա զուղիղ խոստովանութիւն, որք ոչ բաժանեն յերկուս զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ոչ կամս կամ գործս եւ կիրս երկուց բնութեանց ուրոյն ուրոյն յատկապէս բաշխեն, այլ զամենայն միոյ եւ նորին, որպէս եւ է, գիտեն եւ քարոզեն: [6] Զի եթէ Բանն մարմին եղեւ, ոչ ի մարդ բնակեաց՝ ըստ չարափառացն կարծեաց եւ բանից, եւ է մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ըստ ճշմարտութեան, ո՞ւր ունիցի տեղի երկատուութեանն բան եւ կամ զիա՞րդ ի միում զանազանութիւնք՝ ըստ մասին գործոց եւ կրից: [7] Զի թէպէտ եւ երեւի ճշմարտապէս վարեալ երկոքումբք՝ երբեմն աստուածավայելուչ գործովք զէականն իւր ցուցանելով իշխանութիւն եւ պատիւ, եւ երբեմն՝ մարդկայնով առանց մեզաց բանիւ եւ գործովք եւ զտնաւրէնութեանն ճշմարտութիւն յայտնապէս քարոզելով:
[8] Սակայն // ոչ այլ եւ այլ բնութեամբք եւ դիմաւք այսոքիկ լինէին 287ա
մատակարարեալք, այլ ինքն, որ յԱստուծոյ Հաւրէ Բանն, կրէր եւ խաւսէր զմարդավայելուչսն, վասն զի մարդ եղեւ՝ մնալով Աստուած ըստ էութեանն, եւ ոչ այլ է, որ ի զաւակէն Դաւթի՝ ըստ մարմնոյ, եւ

այլ՝ որ* ի Հաւրէ անժամանակական Ծնունդն: [9] Թէ յերկուս ոք անջատիցէ բնութիւնս եւ դէմս կամ այլ, որ զարմանալիսն եւ զմեծամեծս գործէր աստուածաբար, եւ այլ, որ զընտանեգոյնն մեզ բարբառէր եւ կրէր, այլ մի եւ նոյն, քանզի ի լրման ժամանակաց առաքմամբ Հաւր մարդ լինել յաղագս գերազանցեալ առ մեզ սիրոյն հաճեալ՝ յանձն առ: [10] Եւ զերկուց բնութեանցն միութիւն ըստ ճշմարտութեան հաստատէր առ ամենեսին, զի թէ աստուածաբար միայն գործեցեալ նմա՝ ոչ հաւատայր ոք ճշմարտի մարդեղութեան, վասն զի այլ ընդ այլոյ կարծել սովոր են մարդիկ եւ զմարդկայինն եւեթ ի նա տեսանելով՝ ուրանային յԱստուածութենէ նորա: [11] Նորագործ իմն եւ անընդել բնութեան եւ սովորութեան վարէր կարգաւք, քանզի եւ այնպիսի էր խառնումն եւ միաւորութիւնն նոր եւ սքանչելի, զորոյ ոչ նմա կարգաւոր եւ վայելուչ էր աւտարացուցանել զճշմարտութիւնն. զի եթէ ճշմարտութիւն է, ոչ երբեք ստեսցէ:

287բ III. [1] Արդ, էութեանն // գոյացութիւն ո՛չ յեղումն այլայլութեան ընկալաւ կամ կրեաց, քանզի անփոխադրելի եւ անայլայլելի է աստուածայինն է՛ւ ըստ մտածութեան, է՛ւ ըստ ազգման: [2] Եւ մարդկայինն թէպէտ եկաց մնաց, սակայն զի յատուկ նորա էր՝ ըստ ճշմարտի միաւորութեանն, ոչ այլ կամ այլոյ ասի, այլ Աստուծոյ, եւ Աստուած համանգամայն: [3] Որպէսզի իմասցիս եւ ասացես զնոյն եւ մի՝ Աստուած եւ մարդ՝ անժամանակ եւ ժամանակեայ, անչարչարելի եւ չարչարեալ, մեռեալ եւ անմահ, այլեւ կենագործակ եւ աղբիւր կենաց եւ անմահութեան, քաղցեալ եւ կերակրիչ, ծարաւի եւ արբումն կենաց եւ անմահութեան, աշխատեալ եւ հանգուցիչ բեռնաւորաց եւ տաժանեցելոց, երկուցեալ եւ քաջալերիչ՝ որպէս յաղթող աշխարհի, Հաւր իմաստութիւն եւ անգիտացեալ, Տէր եւ ծառայ, Որդի Աստուծոյ եւ Որդի մարդոյ, վերին եւ ստորին, ճոխ եւ աղքատ: [4] Քանզի բաժանել ըստ մասին զճշմարտապէս մին մեզ Տէր Յիսուս Քրիստոս, «որով ամենայն, եւ մեք՝ նովաւ»†, եւ յատուկս երկաքանչիւրում բաշխել բնութեան, ամբարշտութիւն է, ոչ ընդհատ ինչ ի մարդապաշտութենէ, եւ եւս առաւել, զի յամենակատար Երրորդութիւնն եւ ի միայն յա-
288ա ւելուած թուոյ աւտարոտուոյ առ//նէ բնութեան եւ անձին, քան զոր չիք ինչ անաւրինագոյն ի չարեաց, այլ ըստ գեղեցիկ աւանդութեանն,

* Բն.՝ եւ

† Ա Կոր. Ը 6

զոր ընկալաւ Եկեղեցի ի հարցն աւանդապահաց: [5] Ճշմարտութեամբ խոստովանեսցուք մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որոյ ամենայն, եթէ՛ բարձրագոյնք եւ եթէ՛ նուաստագոյնք անուանեալք, որովք կեցաք եւ ընդ որում փառաւորել արժանի լիցուք զՀայր եւ զՀոգին Սուրբ ճշմարիտ խոստովանութեամբ եւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

<ԺԱ>

ՆՈՐԻՆ, ԵԹԷ ԶԻՄԲՐԴ ԱՍԻ ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆՆ ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐՄՆԱՑԵԼՈՅ ԸՍՏ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

I. [1] Պարտ եւ վայելուչ էր խաղաղութեանն աշակերտաց ոչ պատերազմ առ միմեանց յարուցանել վասն նորին խաղաղութեանն, զի եթէ ի խաղաղութիւն կոչեցաք յորմէ, <որ> ոչ խռովութեան, այլ խաղաղութեան է Աստուած, ուրեմն ոչ զոր կամին, այլ զոր ոչն կամի, սիրեմք եւ գործեմք՝ բանակռիւ լեալք՝ յոչ ինչ պէտս ի կործանումն լսողաց բազում անգամ եւ անձանց իսկ: [2] Այլ թէպէտ եւ ոչ լռել է արժան, յորժամ ի հարկէ ձգիցիմք տալ պատասխանի եւ զհակառակորդսն կշտամբել, սակայն եւ ոչ կռուել դառնութեամբ սրտին շարժեցելոյ, վասն զի ծառայք Տեառն եմք: [3] Հարկ ասեմ՝ ոչ զայլոցն գ//րգռութիւն եւ բանաձգութիւն, այլ զճշմարտութեանն նշանակութիւն յոմանց, զի այսպէս ասացից, եւ յայնժամ ի հանդարտէ եղեալ պատերազմող՝ ըստ աւրինի մարտիցուք, ոչ միայն վասն զի պսակիցիմք քաջք եւ երեւեալք, այլ զի եւ զեղբարս պահիցեմք՝ հաւանական եւ կակուղ բանիւ զուղիղն վարդապետելով, զի լսիցեն՝ ախորժելով զհոգեւոր թովչութեանն զձայնս եւ զիմաստուն դեղատուութիւնն յաւժարեսցին ընդունիլ եւ մի՛ զնորին հակառակն խցցեն զլսելիս եւ ի բաց զդեղատուն մղեսցեն. զի ոչ խրտուցանել, այլ հանգուցանել ի մեզ զեղբարս հեզութեամբ եւ շահել առաք պատուէր, յետ որոյ ապա հրաժարել, եթէ ոչ ակնկալութիւն ինչ բարւոյ իցէ պտղոյ, եւ Տեառն այգւոյն թողուլ հատանել կամ դարմանել: [4] Դարձեալ, զի մի՛ զանիծանելն ասացից, վասն զի յայժմու աշխարհիս ժամանակի կենաց պարտ է ցանկ սպասել պտղոյ եւ հնարել ըստ կարի երկովք եւ առաւել քան զկարն:

288բ

II. [1] *Արդ, Միածինն Հաւր, վասն զի զմարդն եւ ոչ զմարմինն եւեթ*
կամէր կեցուցանել, զբովանդակն զգենու եւ լինի ամենայն ինչ մարդ,
289ա *բաց // ի մեղաց:* [2] *Ո՛չ ի մարդ բնակէ, այլ մարդ լինի, զի մարդն եղիցի*
Աստուած: [3] *Եւ թէպէտ ի զանազանից կատարելոց միաւորութիւնն*
եղեւ, սակայն ոչ վասն այնորիկ երկու պարտիցիմք ասել, զի եւ մարդ
կրկին է, այլ ոչ վասն այնորիկ երկու մարդք: [4] *Եւ այսմիկ ոչ միայն*
Մովսէս, այլ եւ յոլովք յարտաքնոցն գրեթէ ամենեքին իսկ վկայեն:
[5] *Եւ նախ Պղատոն, զի զուսմունս վերստին յիշեցումնս ասէ, եւ եթէ*
ոչ նախ քան ի մարմնին լինել էր բանականն էութիւն, զաւրութիւն,
որ ի մեզ, զիա՞րդ վերստին յիշեցմունք ուսմանց լինել հաւատար-
մասցի, եւ զի այսպէս է, ամենեքեան խոստովանին: [6] *Բայց ոչ ոք*
յերկուս զմի բանաւոր կենդանին՝ զմարդն անջատանէ. ոչ ի մերոց
եւ ոչ ի նոցանէ, զի թէպէտ եւ մեծն առաքեալ ներքին եւ արտաքին
*անուանէ մարդ**, *այլ ոչ վասն այնորիկ երկու մարդք:* [7] *Այսպէս եւ*
մի ուսաք ասել զՔրիստոս, վասն զի զամենայն աստուածային ասեմք
զմիտս եւ զհոգին եւ զմարմին ոչ ըստ բնութեան, այլ ըստ անճառ
միութեան, որպէս զի մի՛ եւ երկուս ասել իշխանականս, այլ մի միայն
զԲանն Աստուած: [8] *Քանզի որպէս ի մեզ առաջնորդականս՝ որպէս*
գործեաւ մարմնովն վարի, այսպէս եւ մտաւքն մարդկայնովք՝ Բանն,
289բ *սակայն ոչ // իբրեւ այլ քան զնա գոլով:* [9] *Ըստ որում արուեստագէտն*
եւ գործին անշունչ, վասն զի աստ եւ արուեստագէտն մահկանա-
ցու վայելչապէս, եւ գործին անշունչ եւ այլ քան զճարտարն, իսկ
անդ, վասն զի ի վեր քան զմիտս է, որ ի ձեռն մտացն եւ մարմնովն
առ ամենայն վարէր, յիրաւի մի եւ նոյն ասի: [10] *Արդ, մեղանչական*
միտն միացեալ ընդ անմեղ բնութեանն՝ գեր ի վերոյ մեղաց լինէր,
եւ չարչարելի եւ ապականացու բնութիւն մարմնոյն՝ խառնեալ ընդ
անչարչարականին եւ անապականին, ամենեւին ազատ յայսցանէ
լինէր: [11] *Թէպէտեւ հաճեցաւ մեռանել գերամբարձեալ տեսչու-*
թեանն, զի թէ ոչ էր միացեալ, որ այսպիսին էր ըստ բնութեան ընդ
Աստուածութեանն, յիրաւի ոք ասէր բնաւորապէս իմն մեղանչել
կամ մեռանել հարկաւորաբար: [12] *Բայց այժմ ոչ հարկաւորաբար, այլ*
կամաւ մեռանի, վասն զի Աստուած էր բոլորն, վասն որոյ ոչ ինչ է
առանձինն եւ յատուկ ասել երկաքանչիւրոցն բնութեանց, զի ըստ
որում միացան բնութիւնքն, եւ ամենայն տնտեսականքն միոյ եւ նո-

* *Հռոմ. Է 22, Բ Կոր. Դ 16*

բին ասասցին, այսինքն՝ Աստուծոյ եւ ոչ մարդոյ <լոկոյ>: [13] *Արդ,*
մի՛ ոք, վասն զի կարեն մեղանչել միտք մարդկայինք, ասասցէ վասն
այսորիկ փոփոխելի // զՔրիստոս գոլ, որպէս զի կարողն մեղանչել 290ա
միտս ունելով նորա՝ հնար լինել այսպէս զմտաւ ածել, քանզի ընդ
անփոփոխելոյն ճշմարտապէս միացեալ փոփոխելին նմանապէս էր
անփոփոխելի: [14] *Վասն զի միաւորութեանն եւ ոչ առանձնացելոյ է*
Յիսուս Քրիստոսդ անուն, եւ ի միանալն ամենայնք տկարութեանն
ի բաց բարձեալ լինին, զի ոչ է հնար կամ կար ումեք զանձնաւորն
զայն մարմին գտանել առանց Բանին Աստուծոյ: [15] *Յաղագս այսորիկ*
աստուածավայելչաբար ե՛ւ է, ե՛ւ ասի Քրիստոս անփոփոխելի, զի
համանգամայն անձնաւոր մարմինն Աստուծոյ Բանին, եւ ոչ յետոյ
բնակեալ ի նմա: [16] *Վասն զի զայս առ սուրբսն եւ ոչ առ Քրիստոս*
է ասել՝ ըստ ուղիղ բանի: [17] *Եւ ոչ է կարծել զայս անհնար կամ*
անկար, զի այսպէս մահկանացուս այս եւ ապականացուս, զգենլով
զապականութիւն եւ զանմահութիւն, ոչ մեռանի եւ ոչ ապականի:
[18] *Սոյնպէս աստուածացեալ նոյն միտք միաւորութեամբ Բանին ոչ*
փոփոխի, ապա ուրեմն ոչ փոփոխելի Քրիստոս: [19] *Եւ եթէ ոչ փոփոխե-*
լի, ոչ ապա ընդ հարկաւորաբար կրիւք եւ ոչ ընդ մահուամբ, թէպէտ
եւ կամաւ զայս ամենայն կրեաց: [20] *Եւ եթէ այս, մի բնութիւնն միոյն*
Քրիստոսի պարտիմք խոստովանել, զի երկուս ասել հակառակ բնու-
թիւնս ի վերայ միոյն հետեւումն ունի՝ յոլովից կարծեաց անտեղեաց:
[21] *Ըստ որում Նեստորն կարծեաց՝ ի մարդ զԲանն // բնակեալ, ուստի ի* 290բ
Կոյսն ոչ Աստուածածին, եւ ծնունդն ի յառաջադիմութենէ աստուա-
ծացեալ, եւ ապա՝ երկու աստուածք, քանզի այսպէս եւ քո վարեալ
հակառակ բնութեամբք, ըստ իրիք համանուանութեան զՔրիստոսն
եւ զՏէրն անուն, զի Բանին, որ յԱստուծոյ Հաւրէ, եւ մարդոյն, որ
ի զաւակէ Դաւթի, բաջազի զանուանս համանունաբար ասել, եւ
համանունք են, որոց անուանքն նոյնք իսկ բնութիւնք, այլ որպէս
մարդ ասի ե՛ւ կենդանին, ե՛ւ գրեալն, կամ ձի՝ ծովու եւ ցամաքի:
[22] *Այսոքիկ եւ այսպիսիք ամենեքեան անուան կցորդութիւն տալով՝*
զբնութիւնսն անջատեն ի միմեանց: [23] *Տեսանե՞ս, զի երկու բնութիւնդ*
ասել տարբերս յետ միաւորութեանն ի Նեստորէ սերմանեցաւ, եւ
որք այժմ, զնոյն ասելով, պատրուակաւ իմն այլազգաբար գողանան
զմիտս անուսմանց: [24] *Զի ոչ այլ ինչ է ասել երկուս բնութիւնս յետ*
միաւորութեանն զանազանս՝ զնոյն ունելով անուանս: [25] *Բայց հո-*
մանուանաբար կոչումն, որ է Նեստորի, մարդ լոկ ասել զՔրիստոս՝

հաղորդ ի Հաւրէ Բանին, որպէս եւ սուրբքն ամենեքեան, եւ ոչ միով
իւիք զանազանեալ, թէպէտ եւ կարի ոք հակառակեսցի: [26] Եւ ապա
291ա զիա՞րդ երկրպագելի մարդն եւ կամ թուակից Երրորդութեանն // եւ
աթոռակից: [27] Այլ զի առնուն ինչ ի ճշմարտութենէ՝ առնել ի մահ
ձգողի կարթին, մի՛ անբանաբար ի վերայ դիմեալ, կարծելով ստոյգ
կերակուր, վրիպեալք ի կենաց լիցուք, որպէս ի սկզբան հողածինքն
հաւանականաւն պատրեալ բանիւք լքին զկեանս:

III. [1] Արդ, ոչ եթէ մարդկութիւնն եղեւ ընդունակ Բանին՝ ըստ
Նեստորի, այլ Բանն ընկալաւ զմարդկութիւնն, ապա ուրեմն, որպէս
վայել էր ինքեան, այնպէս առնոյր զմերս, եւ ո՛չ՝ որպէս դատին չարա-
չար տկար միտք: [2] Եւ եթէ, ըստ որում ինքն կամեցաւ եւ ըստ որում
վայել էր ինքեան, խառնեցաւ եւ միացաւ ընդ մարմնոյ, զիա՞րդ կարէր
մնալ անդ ինչ տկար եւ ի մարդավայելուչ կարգաց եւ սովորութեանց,
եւ կամ զի՞նչ ունիցին տալ պատասխանի, որք ըստ մերոյս հետեւա-
նաց բնութեան եւ աւրինի զանճառն զայն միաւորութիւն ձեռնամուխ
լինին հարցափորձել: [3] Զի մեք ոչ մարդկաւրինագոյն, այլ որովք
Աստուծոյ պատշաճի, վարիմք քննութեամբ, յաղագս այնորիկ եւ մի
ասեմք բնութիւն եւ դաւանութեամբ, վասն<զի> դիւրին էր նմա զայս
գործել սակս գերագոյն իւրոյ բնութեան եւ կարողութեան: [4] Ուստի եւ
յետ միաւորութեանն ոչ է արժան անջատել զբնութիւնսն ի միմեանց,
քանզի յերկուս յորդիս հատանել է այս աննմանս միմեանց զմին եւ
զանբաժանելին: [5] Իսկ սուրբ հարքն մի ասացին բնութիւն մարմնա-
291բ ցելոյ Աստուծոյ Բանին, // վասն որոյ ոչ բաժանեմք յետ միաւորու-
թեանն, այլ ոչ՝ որպէս կարծեն զմէնջ հակառակորդքն, ասեմք մի գոլ
բնութիւնս՝ խառնակումն ամենայնիւ եւ չփոթումն ընկալեալ՝ որպէս
թէ տկարագունի մարդկայնոյն էութեան ծախումն ինչ ընկալեալ կամ
ի բացաբարձումն՝ իբր թէ յաղթահարեալ ի հզաւրագունէն, կամ որ-
պէս ոմանք՝ բնաւ չառեալ զմարդկային բնութիւն: [6] Արդ, զայլասէրսն
թիւս եւ զաննմանս մի խոստովանիմք Քրիստոս եւ մի Որդի՝ ըստ
Պաւղոսի ձայնին*՝ ոչ ուրանալով երկուս ասել բնութիւնս միաւորեալս:
[7] Այլ յետ միաւորութեանն ի բաց բառնիլ հատմանն յերկուս՝ ըստ
ճշմարտութեանն ուսաք, եւ հաւատամք մի գոլ Որդւոյ բնութիւն. զի
եթէ երկու իցեն, կարելի արդեաւք է լուծումն ընդունիլ: [8] Քանզի որ
զանազանս ունիցի բնութիւնս, հարկաւորապէս կրեսցէ եւ քակտումն.

* Եփես. Դ 5

այլ զայս ասել Մարկեղղի է Գաղատացւոյ: [9] Իսկ եթէ ասիցեն՝ նախ
քան զմահն եւ զյարութիւն կարելի գոլ զայս, իսկ յետ յարութեանն՝
անկար, որպէս զի անկատար ըստ մեզ նախ քան զյարութիւնն գոլ,
եւ յետ յարութեան լինել կատարեալ. թէ այդպէս իցէ, փոփոխելի
ուրեմն եւ այլայլելի է Քրիստոս: [10] Այլ մեք ո՛չ այսպէս հաւատամք,
քանզի մեք զայսոսիկ ընդունել բնաւորեալ եմք, իսկ Փրկիչն ըստ
որում յետ յարութեանն եւ նախ քան զյարութիւնն // էր կատարեալ 292ա
եւ անայլայլելի եւ անփոփոխելի: [11] Զի թէպէտ եւ մեռաւ, այլ կամաւ
եւ հաճութեամբ եւ ոչ վասն մարտի հակառակ բնութեանց կամ որա-
կութեանցն, այսինքն՝ զորակութիւնսն ունող հիւթոց մարմնոյն, որ
են խառնուածք տարերց, եւ մարտ ընդ միմեանս բնաւորապէս ունին.
եւ ի յաղթահարիլն ի միմեանց եւ ի յառաւելուլն կամ ի պակասել
քան զբարեխառնութիւնն եւ զչափաւորութիւնն՝ հարկ է վախճանել
կենդանւոյն: [12] Սակայն որպէս վերագոյնն ասացաւ, Քրիստոս ոչ ընդ
այսպիսեաւ եւ կամ բնաւ իսկ ընդ հարկաւ ինչ էր բնաւոր կրից մե-
ղոց, թէպէտ եւ զանանգոսնելիսն կրէր կամաւոր զկիրս:

IV. [1] Արդ, զի մի՛ եղծանելի թուեսցի Քրիստոս, որպէս՝ Մարկեղղի,
պարտ է խոստովանել եւ ոչ զանազանութիւն ընդդիմութեան Բանին
եւ մարմնոյն: [2] Զի թէ այսպէս իցէ՝ ըստ ոմանց կարծեաց, է ապա եւ
այժմ զանազանութիւն: [3] Եւ եթէ զանազանութիւն՝ աննմանութիւն,
եւ եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն, եւ եթէ ոչ պարզութիւն՝
ի բազմաց դրութիւն: [4] Եւ ապա, զի մի՛ այդպիսեաւք անտեղեաւք
Որդի վարկցի՝ ամբարձեալ յերկինս եւ եդեալ զմարմինն, որպէս
Գաղատացւոց Մարկեղղեայ թուեցաւ ասել, եւ այնուհետեւ գերեզման
յերկնի եւ ապականութիւն մարմնոյ եւ յարութիւն մարմնոյ եւ
երկրորդ առումն մարմնոյ: [5] Տեսանե՞ս, որպի//սիք ժողովին անբան 292բ
եւ անտեղի կարծիք ի զանազանս ասելոյ բնութիւնսն ի Քրիստոս՝
ճշմարտապէս ի զանազանից առ միմեանս եկեալ բնութիւնքն: [6] Սա-
կայն ո՛չ զանազանութիւն, ուր միութիւն, որպէս ի մարդոյն ծնեալն
մարդ ո՛չ է մարմին սոսկ՝ առանց անձին, սոյնպէս եւ ոչ՝ ծնեալն ի
Կուսէն առանց Բանին: [7] Զի եթէ առանց Բանին, ապա մարդ միայն
եւ յետոյ արժանաւորեալ տաճար գոլ Բանին Աստուծոյ: [8] Եւ որք
այսպէս դաւանեն, յիրաւի ըստ իւրեանց առաջարկութեանն՝ յերկուս
բաժանեն զմին եւ զանբաժանելին: [9] Բայց եթէ վասն զի անձնաւոր
եւ բանական ունէր մարմին Բանն, եւ վասն այնորիկ իբրեւ զերկուս
կատարեալս անջատեն ի միմեանց զբնութիւնսն եւ հարկ գոլ կարծեն՝

իբր յերկուց շարադրելոց գոյացութեանց երկուս ասել՝ ըստ այլոց ոմանց եղանակաց շարակացելոց եւ ոչ բնաւ խառնեալ ընդ այլում, ես ոչ գիտեմ՝ զինչ է բռնութիւն այդորիկ հարկի. զի ահա եւ բանականն ի մեզ ո՛չ ի մարմնոյ ծնանի եւ ոչ յանձնէ, թէպէտ եւ ասացին ոմանք եւ զանձինս յանձանց ծնանիլ, ըստ որում եւ մարմինք, այլ ո՛չ ասին երկու: [10] Եւ դարձեալ, ասեն ծերունիքն զանբանն, որ ի մեզ, անձն մասն գոլ բանականին, իսկ այլք՝ ըստ ինքեան կատարեալ
293ա *էութիւն եւ ո՛չ մասն բանականին ախորժեն գոլ զան//բանն: [11] Նախ՝ զի եւ յանբանսն կենդանիս կատարելաբար գտանի, եւ երկրորդ՝ զի անըմբռն վարկանին մասն գոլ զանբանն, բայց յերիս տարորոշել բնութիւնս զմարդ՝ ոչ ոք կամի: [12] Ասէ եւ Պղատոն՝ պահարան գոլ զմարմին բանականին անձին, եւ պիւթագորեանքն՝ ոչ ես զմարմին, այլ իմ՝ որպէս ստացուած ինչ: [13] Սակայն ոչ վասն այսորիկ պարտիմք յերկուս ասել մարդս: [14] Իսկ արդ, զի՞նչ դարձեալ հարկ յերկուս հատմանդ. արդեա՞ւք, զի ոչ կամիք զերկուս իշխանականսն մի ասել: [15] Այլ մի եւ ոչ երկու են իշխանականք ի Քրիստոս, քան որպէս ի մեզ միտք ամենայնի իշխեն եւ յաւրինեն ի նմա բանն, զի ըստ որում վերագոյնն ասացաւ, իբրեւ գործեաւ մտաւք վարէր Բանն, զի ինքն առաջնորդ մտացն:*

Յաղագս կամացն

V. [1] Արդ, ըստ որում ինքն Բանն իշխէր եւ առաջնորդէր մարդկութեանն, ըստ այսմ եւ կամքն նորին ինքեան եւ ո՛չ այլոյ ուրուք, ուստի եւ մի ասեմք կամս մարդացելոյն Աստուծոյ եւ ոչ երկուս, զի զայս կարծել կամ ասել աղճատանաց եւ լեզուագարութեան եւ ոչ ուղիղ դատողութեան է: [2] Քանզի եթէ նորա են միտքն, նորա ե՛ւ կամքն, ե՛ւ այլն ամենայն: [3] Վասն զի մտաւոր անձինն միջնորդութեամբ ընդ թանձրագունի մարմնոյն բնութեան միացաւ, որպէս ի
293բ *մեզ զբանականն՝ միջնորդութեամբ չնչոյն, զի եւ այսպէս իսկ // վայել էր զբովանդակն ապրեցուցանել, վասն որոյ եւ միտքն Աստուծոյ, եւ կամք մտացն Աստուծոյ: [4] Ո՞չ տեսանես զզաւրութիւն հրոյ. զիա՞րդ ուժգնապէս մտանէ ի թանձրութիւն եւ ի խստութիւն թանձրութեան երկաթոյ եւ այնքան զմիաւորութիւնն գործէ, մինչ զի ոչ երկաթ, այլ հուր տեսողացն երեւիլ եւ հրոյ եւ ո՛չ զերկաթոյ ունել առժամայն ազդմամբ զներգործութիւն: [5] Այսպէս եւ ես առաւել իմա՛ ինձ զԲանին Աստուծոյ առ իւրն մտաւոր անձն եւ մարմին զմիութիւն.*

յիրաւի ապա ամենայն աստուածայինք՝ ե՛ւ կամքն, ե՛ւ գործք, ե՛ւ
կիրքն մարդկաւրինագոյնք: [6] Զի եթէ մտաց են կամք, իսկ միտքն
առաջնորդաւ վարի Աստուծով, ո՞յր այլոյ ուրուք կամքն ասասցին:
[7] Այլ ասեն. «Ի դէմս աղաւթից ասէր առ Հայրն. «Ո՛չ իմս, այլ քոյդ
կատարեսցին կամք»*: [8] «Եւ զիա՞րդ զայդ իմասցիս, զմարդկայինն,—
ասէ,— յայտնէ կամս». պարտ էր ի բազմաց զայդ գեղեցկապէս
խնդրողաց եւ լուծողաց նախ քան զմեզ՝ ուսանել քեզ: [9] Բայց եւ այժմ
լուիցես, զի զնոցայսն՝ որպէս յամենայն ժամ եւ ամենայն ուրեք, եւ
ոչ զմեր ինչ նորոգ աւանդեմք տեսութիւնս: [10] Արդ, ոչ եթէ կամս
ինչ հակառակս յայտ առնէ զիւր եւ զՀաւր, այլ որպէս թէ ոչ իցէ,
զի բացասացութիւն եւ ոչ ստորասութիւն է բանդ. ոչ զէ է, այլ զոչէ
է. նշանակէ, զի չեն կամք այլ յիս, // բայց որ ի քեզդ: [11] Եւ եթէ ոչ 294ա
են եւ ոչ կատարեսցին, եւ որ Էնն աղաւթէ, լի է, զի կատարեսցին,
այսինքն՝ համակամութիւնն, որ է մարդկան փրկութիւն իւրով: [12] Ապա
թէ եւ այլ ազգ կամիցիս լսել՝ պարզաբար ասել կամելով զբանդ, եւ
ոչ այն ի բաց տանի զքեզ ի տեսութենէս: [13] Եթէ բարեպաշտաբար
եւ ուղիղ իմանայցես, որ է տնաւրինաբար աղաւթել՝ ուսուցանելով
զաշակերտսն, թէ առաւել աւգուտ է եւ վայելուչ զկամացն Աստուծոյ
խնդրել զլրումն յաղաւթսն, քան եթէ զինքեանց, քանզի ասասջիք՝
ասէ. «Հա՛յր մեր, սո՛ւրբ եղիցի անուն քո, եւ կատարեսցին կամք
քո»†: [14] Իսկ եթէ ասիցես ընաւոր կամս ունել Քրիստոսի մարդկա-
յինս, որ ընդդիմանայր կամացն Հաւր, զոր իւր կամս ասէր, եթէ
զԲանն ասիցես, որպէս եւ է իսկ, կամք նորա ոչ ընդդիմանայ Հաւր,
զի զայդ եւ դու խոստովանիս, իսկ եթէ մարդոյ միայն տաս, նախ՝
ո՞յր արդեաւք անցեալ մեկուսի կայր Բանն, զի սոսկ մարդն աղաւ-
թեսցէ, եւ ե՞րբ հաղորդեսցի մարդկութեանն, զի յայնժամ պագցուք
երկիր, քանզի մարդոյ միայնոյ պաշտաւն մատուցանել յիմարութիւն
է: [15] Եւ մա՞րդ ուրեմն չարչարեցաւ, եթէ խաւսեաց Բանն եւ տեղի
ետ փորձութեանն, եւ զիա՞րդ խաչն՝ երկրպագելի, կամ // խաչեալն՝ 294բ
Աստուած, եւ ծաղր՝ մեր փրկութիւնն, եւ վայրապար՝ հաւատքն:
[16] Խաբեցան, որ յարեան մեռեալքն, ի նանիր խաւարումն արեգականն
եւ երկրի տատանումն եւ վարագուրին հերձուլ եւ հարիւրապետին
վկայութիւնն, եւ որ բնաւն է անտեղի, զարհուրեալ ի չարչարանաց

* Ղուկ. ԻԲ 42

† Մատթ. Զ 10

անչարչարելին Աստուած, եւ մերթ խառնեալ ընդ մարմնոյն եւ մերթ՝ զատուցեալ, որպէս զի երբեմն մարդ եւ երբեմն Աստուած երեւեալ, այլ ոչ համանդամայն, որում տացին երբեմն եւ երբեմն ոչ տացին աստուածավայելուչքն: [17] *Այլ մեզ մի՛ լիցին աստուածք առժամայնք եւ մի՛ երկիր պագցուք աստուծոյ աւտարի**, *քանզի զի՞նչ աւտարագոյն աստուած, քան զոր այսպէսն իցէ:* [18] *Եւ դարձեալ, եթէ Բանին զաղաւթելն չկատարիլ զիւրոց մարմնակայնոց կամացն տացես, ոչ պարտ էր զիւր կամսն ասել, զի ոչ ընդդիմանայ կամացն Հաւր, այլ զիւրոյն, քանզի այսպէս արդեաւք վայել էր:*

VI. [1] *Արդ, որպէս ասր սպիտակ ներկանիցի ծիրանի եւ ոչ է երկգոյն, այլեւ ոչ նիւթն զէութիւնն իւր կորուսեալ, նոյնպէս եւ միտքն պայծառացեալ եւ աստուածացեալ մի է, եւ ոչ եւս երկուք առաջնորդականք, քանզի ոչ այլ ինչ կամի միտքն, եւ այլ ինչ՝ Բանն:*
295ա [2] *Եւ որպէս երաժշտ//ականն եւ գործին ո՛չ երկուք երաժշտականք, սոյնպէս Աստուածն Բան եւ միտք մարդկայինք ո՛չ երկուք իշխանականք, քանզի փոխանակ գործոյն՝ մարդկային մտաւքն վարէր Բանն, որպէս ի մեզ իշխանականն գործեաւ մարմնովն վարի, յոր ինչ կամի, այսպէս եւ Բանն մտաւքն վարի, յոր ինչ ի ձեռն մտացն կատարելութիւնս, ըստ որում եւ մի ասեմք կամս Քրիստոսի:* [3] *Ապա թէ այսոքիկ քեզ ոչ հաճելիք, ասա՛, դու զիա՞րդ կեղծաւորիս մի ասել զէմս Քրիստոսի կամ անձնաւորութիւն, ո՞չ ապաքէն այլ եւ այլ կամք եւ կիրք եւ ներգործութիւնք զայլ եւ այլ ցուցանեն զէմս եւ անձնաւորութիւնս, քանզի ի միում այսպէս եւ զայսոսիկ գոլ ոչ ոք հաւանեսցի:* [4] *Բայց գիտեմ՝ ուստի բռնադատիս ասել մի զՔրիստոս. ոչ ախորժելով, այլեւ յոյժ ի միտսդ դժուարելով, եւ որ թուի՝ սաստելով ասողին «մի Տէր»*† *զՅիսուս Քրիստոս, զի թէ մի ասել հարկաւորիս, ի բա՛ց տար զերկուսդ՝ զամենեւին աւտարագոյնդ միումն:* [5] *Վասն զի իւրաքանչիւրում թուով զանազանից կամ ոչ անցնիւրքն տացին միումն միայնավայելուչքն եւ երկուցն կամ յոլովից՝ ըստ նոցայքն, եւ ոչ ոք ասասցէ երկուս զմին կամ մի՝ զերկուսն, որպէս եւ ոչ տասն՝ զքսան կամ քսան՝ զտասնն, եւ որք ըստ այսմանէք, կամ դարձեալ՝ է*
295բ *եւ ոչ, // կամ զոչն՝ է կամ զէն՝ ոչ, որպէս մինչ ոք ասասցէ զտասն՝ քսան եւ տասն կամ ոչ տասն եւ զմարդն՝ ոչ մարդ, այսպէս ժողո-*

* *Սաղմ. Բ 10*

† *Եփես. Դ 5*

վի ի քումմէդ բաժանմանէ եւ միաւորելոյ: [6] Եւ եթէ զհաճելին քեզ զերկուսն ախորժեսցես, բա՛ռ զպատրուակ միաւորելոյդ եւ զկեղծաւորութեանդ ստեղծուած մերկացո՛, քանզի մերկ իսկ է եւ անծածուկ իմաստնոց մտաւք, նաեւ՝ չարափառաց, եւ շահ ինչ ոչ է գողանալ զդիւրահաւանսն ի վատթարագոյնսն. թերեւս ի բաց դնել զձեւանալդ՝ եւ զչարափառութիւնն ընդ նմին անկցի ի բաց՝ յառաջատելով ըստ զղջման եւ փոխանցելով ի բարեփառութիւն: [7] Քանզի զախտն ոչ ծածկել սկիզբն է առողջութեան, թէպէտ ոչ այսպէս կարծես, եւ քո ինքեան խորհուրդք գիտեն եւ ազդեն քեզ՝ խաբէութիւն գոլ զկամսն ծածկել բանիւք զմտաց եւ զանհետեւելին հետեւել ցուցանել անյարմարապէս, որ է միումն երկակս տալ:

*VII. [1] Արդ, քաջավայելուչ է հարցն սրբոց հետեւել խոստովանութեան եւ միոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ոչ ասել երկուս կամս եւ ներգործութիւնս եւ կիրս, այլ ըստ որում ոյր այսոքիկ՝ մի ասել կամս եւ զամենայն նորա՝ իւր՝ եթէ՛ աստուածայինք իցեն եւ եթէ՛ մարդկայինք, ներգործութիւնք եւ կիրք: [2] Քանզի ո՛չ մարդ էր միայն եւ ո՛չ Աստուած յատուկ, եթէ իւրաքանչիւրումն զիւրն // 296ա
առանձնապէս տացուք, այլ համանգամայն Աստուած եւ մարդ նոյն ինքն: [3] Ուստի պարտ եւ արժան էր երկոքումբք վարիլ նմին ինքեան, զի գիտասցուք, զոր ինչ էրն եւ եղեւ, եւ սքանչասցուք ընդ նորաձեւութիւնսն եւ սքանչացեալ փափագեսցուք նմա եւ փափագելով սրբեսցուք զմեզ ինքեանս յամենայն պղծութենէ հոգւոյ եւ մարմնոյ:*

Յաղագս ներգործութեան

VIII. [1] Երկուս կարծելով եւ ասելով անուամբ զմարդկայինն կիրս, իսկ զաստուածայինն ներգործութիւն ասելով ոչ ընդհատ ինչ՝ եւ դէմս երկուս քարոզեն առասպելաբանապէս, եւ որպէս Ղէոն՝ զմին ի միւսում թաքուցեալ ասելով, եւ հակառակս միմեանց գործել կամ կրել միւսումն ասացելոյ, այսինքն՝ մարդոյ լոկոյ առ Աստուած յարեցելոյ: [2] Եւ են այսոքիկ Նեստորի եւ համախոհից նորին, ընդ որ զարմանալ ոչ փոքր ինչ արժան է. նախ՝ զի անարժանս տնտեսութեանն իմանան Բանին եղելոյ մարմին, եւ երկրորդ՝ զի զինքն ասեն հակառակ ինքեան, որ է անտեղի եւ անբան ամենեւին: [3] Զի որ զանազանս եւ ընդդիմակս միմեանց գործէ եւ խորհի կամ կրէ, զիա՞րդ ոչ հակառակ ինքեան իցէ եւ կամ զիա՞րդ մի դէմ: [4] Եւ եթէ խռովութիւն եւ թշնամութիւն յինքեան ունիցի, ե՞րբ արդեաւք եւ կամ

ո՞րպէս զթշնամութիւն այլոց քակիցէ յիւրում մարմնի*, եւ եթէ այս,
296բ եւ ընդէ՞ր բնաւ եւ անու//անեսցի «խաղաղութիւն մեր» կամ տուիչ
խաղաղութեան†: 5 Ուրեմն ոչ զոր կամէրն, այլ զոր ոչն կամէր՝ կրեաց
կամ գործեաց. անաստուածի կարծիք են այսոքիկ: 6 Ասէ Պաւղոս
զհասարակական մարդոյ ի դէմս իւր. «Տեսանեմ այլ աւրէնս յանդամս
իմ՝ զինեալ հակառակ աւրինաց մտաց իմոց եւ գերեալ զիս աւրինաւք
մեղաց, որ են յանդամս իմ»‡, եւ այլուր, եթէ՝ «Մարմին ցանկայ հա-
կառակ հոգւոյ, եւ հոգի՝ հակառակ մարմնոյ»§. եւ զայսոսիկ՝ ոչ վասն
յերկուս անջատելոյ զմին կենդանի զմարդն, այլ յաղագս լծակցելոյ
տկարութեանն բնաւորականի ասէ, վասն զի հարկ է հողեղէն յարկս:
7 Արդ, կա՛մ ասասցեն մարդ հասարակական զՔրիստոս՝ երկուս բնու-
թիւնս ներհականս յաւելլով նմա ասել ունել, կա՛մ զԱստուած ի
մարդ բնակեալ՝ որպէս եւ կամինն իսկ. ասասցեն յերից զնա գոլ, եւ
երիս ըստ նոսին՝ եւ կամս եւ գործս եւ կիրս, զի զաւելին քան զայսո-
սիկ թողից: 8 Որքան զանազանութիւն բնութեանց է ի մարդ կամ
տարրական միաւորեալ, թէ արժան իցէ քակել ի պարզագոյնսն վերս-
տին կամ ի խառնուածի անդ զյայտնագոյնսն բաժանելով՝ իմաստա-
սիրել, կամ թէ հրաժարեսցեն յայսցանէ՝ անտեղի վարկանելով, հա-
ւանեսցին ճշմարտութեանն՝ նախ եւ ապա որոց պատմենն զայնոսիկ
297ա հաւաստագոյնս, ընդ որս եւ մեք՝ շնորհ//աւք Աստուծոյ: 9 Եւ է
այսպէս, զի թէ մարդ, երկուս կամս յինքեան բերելով՝ ըստ առաքե-
լոյ, ոչ ասի երկուս բնութիւնս, նմանապէս եւ ոչ վասն ներքինն եւ
արտաքինն անուանելոյ մարդս եւ ոչ վասն ի բազմացն գոլ նիւթոց
կամ բնութեանց, թէ ասասցէ ոք. եւ վասն ի յոքունց տեսանիլ զշա-
բադրեալն ի միութիւն՝ ասա՞ց ոք կամ անուանեա՞ց բազումս զմին
մարդ: 10 Զի՞նչ արդեաւք հաւանեցոյց զնոսա հարկաւորապէս երկուս
ասել զմարմնացեալն Բան, ուր զոր եւ ի միումն բաժանեալ կամս՝ եւ
զաւրութիւն խափանեաց ճշմարտապէս: 11 Քանզի «ոչ արար մեզս,
եւ ոչ գտաւ նենգութիւն ի շրթունս նորա»¶՝ յաղթելով աւրինացն
մեղաց եւ մահու յանդամս մեր զինեցելոյ եւ գործելով զոր կամէրն

* Եփես. Բ 14
† Եփես. Բ 14, Բ Թես. Գ 16
‡ Հռոմ. Է 23
§ Գաղ. Ե 173
¶ Ես. ԾԳ 9, Ա Պետ. Բ 22

եւ ոչ զոր ոչն կամէր, որ թուի ինձ՝ առաւել մի գոլ քան զմարդ՝ անխառնակ եւ անայլայլելի զէութեանն իւրոյ պահելով իսկութիւն եւ լինելն մարդ: [12] Արդ, եթէ զ՚առ ի միումն եբարձ ստուգապէս բաժանեալ կամս եւ տիրապէս գործեաց միաւորութիւն, զիա՞րդ յետ այսորիկ երկու իցէ մի: [13] Հակառակութիւն ի բարձիչն յարեսցեն հակառակութեան կամ երկատութիւն ի միաւորիչն եւ մի զձայնս Գրոց Սրբոց զտնաւրինաբար ասացեալս այլայլապէս բաժանեսցեն՝ պատշաճեցուցանելով ստութեամբ // երկուց բնութեանց եւ դիմաց՝ 297բ երկաքանչիւրս անուանելով երկաքանչիւրոց կամ միւս կցորդս միւսոյ. մեծ՝ փոքու, եւ փոքր՝ մեծի, ըստ նոսին, ե՛ւ գործս, ե՛ւ կիրս, յորոց յայտնապէս է տեսանել եւ դիմաց զանազանութիւնս: [14] Վասն զի տարբերաց տեսակաց զանազան բնութիւնք, եւ բնութեանց այլասէրից յատկացելոց դէմք, այլ մանաւանդ մեծի եւ փոքու, որպէս կամին իմաստասիրակել, քանզի առինչուն<ակ>իցն է մեծ եւ փոքր, եւ առանձնակի ըստ ինքեանս ոչ ասին սոքա, այլ ըստ առ այլ վերաբերութեանց: [15] Եւ եթէ յետ միաւորութեան երկու իցեն բնութիւնք ի Քրիստոս տարբերք, քաջայայտ ահա է ուրեմն մեծ գոլ աստուածայնոյն, իսկ մարդկայնոյն՝ փոքր, որ նշանակեն երկուս անձինս եւ դէմս: [16] Զի թէպէտ եւ բազում անգամ հնարիւք խաբէութեան մի դէմն ասելով՝ ջանասցեն պատրել զդիւրահաւան անձինս, ոչ կարասցեն հաստատել զկեղծաւորեալ խորամանկութիւնն, եւ ոչ է մեծի եւ փոքու մի դէմ՝ ուրումն, որ զբարձրագոյնսն սքանչելագործէ, եւ ուրումն՝ զխոնարհագոյնսն կրողի, քանզի առ միմեանս բաղդատութեան ընտրութիւն սոցա լինի եւ բաղդատութիւն միոյ առ ինքն ոչ լինի: [17] Բայց եթէ առ այլայլ ըստ ունակութեան առ ոմն, եւ ոչ գործաւք եւ կրիւք տարբերից բնութեանց յոյժ ի մի//մեանց զանազանե- 298ա ցելոց մին բացատրեսցի, երբեք եւ այլ ազգ եւս, եթէ մեծ եւ փոքր է, Քրիստոս, բնութեամբք եւ գործովք նոցին եւ կրիւք, եւ են սոքա առընչիցն, ընկալցի ըստ ձեզ եւ ներհակութիւն: [18] Քանզի է եւ սա յառինչւոջն, թէպէտ եւ ոչ յամենայնի առինչուն<ակ>իցն գոյ ներհական, զի թէ մակացութիւն է ներհական անգիտութեան, ո՞վ արդեաւք մակացու գեղեցիկ եւ ի վեր քան զԲան՝ կատարեալ ամենայնիւ գտանիցի՝ իբրեւ «զԲանն ի սկզբանէ», որ ե՛ւ «Աստուած», ե՛ւ «առ Աստուած», Հաւր իմաստութիւն եւ զնոյն ճանաչող հաւաս-*

* *Յովհ. Ա 1, Ա Կոր. Ա 24, 30*

տապէս գիտութեամբ: [19] Իսկ մարդոյ սխալական գիտութիւն եւ փոքր
ամենեւին եւ հազիւ զ՝առ ոտսն նկատէ, այլ եւ զյաւէտն եւ զնուազ
հարկաւորապէս ընկալցի ըստ ձերում լեզուագարութեան, զի թէ
նման յաւէտ եւ նուազ ասի, եւ է նմանն, որումն նման եւ անզու-
գագոյնն, որումն անզուգագոյն: [20] Եւ երկաքանչիւր ոք ի նոցանէ
առինչ է, եղիցի ինքն ինքեան նման եւ ինքն ինքեան անզուգագոյն,
քանզի եւ լուաք զայս յիմաստասիրելն ձերում, յորժամ ասէք պատ-
շաճ եւ դիպողագոյն գոլ Բանին մարմին եղելոյ, ոչ ըստ ձեզ, այլ ըստ
Յոհաննու, զսքանչելի գործսն, իսկ անպատկանաւոր եւ աւտար բնա-
ւին՝ զմարդկայինսն, վասն որոյ եւ երկուս առանձնակի եւ ըստ մա-
298բ սին բնութիւնս զկնի այն//որիկ յարակցեալս միմեանց աւտարապէս
բնախաւսել ձեռնարկէք, զորս ոչ է, եւ ոչ ասացաք, գտանել ի միում:
[21] Արդ, եթէ ի թիւս կրկնապատիկն ոչ ասի, յաւէտ եւ նուազ առըն-
չին գոլով, եւ ինքն, զիա՞րդ յետ առընչապէսն զՔրիստոս կարծելոյ
ձեր առաւել եւ նուազ զնա ասէք զմին եւ ընդունակ ներհակաց, այլ
ոչ տնտեսաբար եւ կամաւորութեամբ զմերսն կրեալ յաղագս գերա-
զանցեալ մարդասիրութեանն: [22] Այլ գոյացութիւն, թէպէտ եւ ընդու-
նակ ներհակաց է՝ ենթակայ գոլով, ներհակ նմա ոչ է, ոչ այլ ոք, եւ
ոչ ինքն ինքեան, եւ մանաւանդ առաւելեալ գոյացութեան: [23] Զի թէ
առաջինք եւ առաւել գոյացութիւնք ասին անհատք, վասն Բանին
մարմնացելոյ զի՞նչ պարտ է ասել, որում ներհակս որոշելով դնէք,
որ եւ ոչ ներհակաց հարկաւորպէս է ընդունական, թէպէտ եւ կրէ
տնտեսաբար եւ կամաւք. Կերակրիչն՝ զքաղց, Իմաստութիւնն՝ զանգի-
տութիւն, Զաւրութիւնն Հաւր տկարանայ մարմնով, եւ Հանգիստն
աշխատելոց վաստակէ ուղեւորեալ, ծարաւէ Աղբիւրն կենդանութեան,
այլեւ մեռանի Անմահն՝ յամենայն կամաւք եկեալ եւ ոչ ի հարկէ
իմեքէ: [24] Արդ, մի՛ մեզ վասն յառաջ ասացելոցդ զառինչուն<ակ>իցն
299ա յեղանակս ի վերայ միոյ Քրիստոսի // անպատշաճ գոլ ասողաց
զանմարմինն ընդդէմ բերցեն, որպէս թէ դոքա ի վերայ նիւթանա-
կանաց ասին եւ ոչ աննիւթից, քանզի մարմին եղեալ մեք զԲանն ի
Յովհաննէ ուսաք*, թէպէտ եւ յիւրմէն անփոփոխելի եկաց մնաց եւ
անայլայլելի յէութենէ Աստուածութեանն: [25] Եւ մի՛ դարձեալ
զ՝<ը>ստ հոմասեռիցն ասել մեծ եւ փոքր, եւ ոչ ըստ այլասերիցն
հակաբանեսցեն մեզ, քանզի ամբարշտին Արիոսի, թուի ինձ, յայդո-

* Յովհ. Ա 14

սիկ նայելով, գայթակղելի կորուստ առնելով ի վերայ Հաւր եւ Որդ-
ւոյ՝ զմեծն եւ զփոքր, յորմէ կարծեմ, իմանալ չարապէս զԱրարիչն
եւ զարարածն: [26] Բայց դուք զայլասերութիւն ի վերայ միոյ Քրիս-
տոսի ճարտարելով, այսինքն՝ Բանին մարմնացելոյ, առաւել քան զնա
ժանդանալ երեւիք, վասն զի նա ի վերայ յերկուց անձանց երկուս
բնութիւնս յոյժ մոլեգնաբար սահմանեաց, իսկ դուք ի վերայ միոյ
անձնաւորութեան եւ զիմի Որդւոյ Աստուծոյ մարդացելոյ՝ բնութեանց
երկուց զանազանութիւնս, եւ յետ միաւորութեանն անջատանայք՝
հակառակս ամենեւին հարցն խոստովանութեան խորհեցեալք, որք
ասացին մի գոլ բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ: [27] Այլ թե-
բեւս ասիցին ոչ գոլ ներհականս՝ զմեծն եւ զփոքրն՝ յիշելով
զասաց//եալն, թէ զոր ոչ է ինքն ըստ ինքեան առնուլ, այլ առ այլ 299բ
վեր<աբեր>եալս*, զիա՞րդ լիցի սմա ինչ ներհականս: [28] Արդ, գրեսցուք ոչ ներհակապէս ասել զմեծն եւ զփոքրն եւ այն, զի ոչ եւս ի վերայ միացելոյ կամ շարադրելոյ, որպէս վարկանին նոքա, սակայն ոմն զոմն ընդ ինքեան ի ներքս ածէ, եւ ցուցանին երկուք, զի թէպէտ եւ զմիմեանս, որպէս ներհականքն, ի բաց ոչ բառնալ երեւին, եւ վասն այնորիկ ոչ եւս ասասցին գոլ ներհականք, բայց յաղագս առ ինչիցն գոլոյ այլ առ այլ ասին: [29] Եւ զի՞նչ սոքա քեզ, եթէ ոչ երկուց գոլ թուեսցին բացերեւութիւնք իմն:

IX. [1] Պարտ էր ոչ ի հաւատս արուեստաբանութեամբ, այլ նովիմբ ինքեամբ եւ անմեղութեանն պարզութեամբ յառիլ եւ իմաստուն երեւիլ ո՛չ երկրաւոր ճարտարութեամբ եւ հանճարով, այլ երկնաւորաւն, զոր աշխարհս ոչ կարէ ընդունիլ: [2] Նա թէ եւ, յայսոսիկ վարժեալ եւ կրթեալ, սիրէաք բարեպաշտիկ մտաւք, եւ ոչ հակառակութեամբ արժան էր, բայց տեսանեմ զբազումս ոչ միայն զանգիտացեալսն վասն խորութեան մտացն եւ պատիպատ բանիցն իմացուածոց՝ յարտաքնոց անտի չարապէս բռնադատել, այլեւ զքաջայայտսն եւ առանց դժնդակ իրիք ծածկութեան՝ զՀոգւով Սրբով // բարբառեալսն, առ կամս 300ա
իւրեանց քարշելով: [3] Եւ զի՞նչ յայտնագոյն քան զոր աւետարանէն Յովհաննէս. «Բանն,— ասէ,— մարմին եղեւ»†, ո՛չ ի մարդ բնակեաց, ո՛չ մարդ ոք աստուածացաւ, եւ ո՛չ ասէ, թէ մարմին զգեցաւ, թէպէտ

* Սրբագրուած է ըստ [ԺԱ VIII 14]-ում գործածուած համանման արտայայտութեան:

† Յովհ. Ա 14

եւ զնոյն նշանակէր, զի մի՛ այլ բնակիչն՝ իբրեւ ի տաճարի, եւ այլ զբնակարանն իմասցի ոք, որպէս կարծեսն, այլ զճշմարիտ մարդեղութեան նորոյ յեղանակ ի ձեռն մարմին լինելոյն քարոզեաց, եւ որպէս զայս լսելով՝ ոչ կարծեմք ասել Բանին ի մարմնոյ յեղուլ բնութիւն եւ զէութեան իւրոյ փոփոխել կամ կորուսանել գոյացութիւն: [4] *Այսպէս եւ յորժամ ասէ ինքն. «Քակեցէ՛ք զտաճարս զայս»**, *ոչ պարտ է կարծել անմիաւոր զնա ընդ իւրում մարմնոյն, յայտ է, բանական անձն ունողի, այլ որպէս զառաջինն վասն հաւաստապէս եւ առանց կարծեաց մարդ լինելոյն գիտեմք եւ հաւատամք ասացեալ, նոյնպէս եւ զերկրորդն՝ յաղագս անփոփոխելի եւ անայլայլելի բնութեան Բանին պարտիմք իմանալ ասել:* [5] *Զայնակցէ այսմիկ եւ Պաւղոս. «Իբրեւ եկն լրումն ժամանակաց, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք»*†: [6] *Զեղելութիւն ոչ ոք յանդգնեսցի կարծել սկիզբն գոյութեան Բանին <եւ> ասել, այլ նմանապէս*
300բ *զանբաժանելի միաւորութիւն ընդ մարմնոյն ազդել եւ զ՚ըստ ճշմարտութեան մարդն եղանիլ:* [7] *Բայց տե՛ս ճշգրիտ, զիա՞րդ ասեն Բանին զլինելն մարմին եւ զեղանիլն ի կնոջէ. զգուշացեալք յառաջագոյն կանխագիտութեամբ Հոգւոյն Սրբոյ ի բաժանասիրացն յաւակնութենէ՝ սերմանեցին յոգիս մեր, զի ըստ որում զեղելութիւնն Անեղին ուսաք ասել եւ զմարմին լինել անմարմնոյ Բանին՝ ոչ այլ եւ այլ կարծելով զԲանն եւ զմարմինն կամ զեղեալն եւ զԱնեղն, եւ զայս ասեմ՝ ըստ միաւորութեանն, ո՛չ ըստ բնութեանցն:* [8] *Սոյնպէս եւ զկիրսն իմասցուք ամենայն ասել Գրոց, զպարագրութիւնն մարմնով Անպարագրելւոյն, զծնունդն ի կնոջէ Հաւր Ծննդոյն, զկերակրիլն եւ զսնունդ Կերակրողին եւ Կատարողի զամենայն զանարգանսն՝ գերագոյն քան զամենայն պատիւ, Անչարչարելոյն զչարչարանսն, եւ զմահն Անմահին:* [9] *Այսպէս եւ զաստուածային ճահագործութիւնսն ոչ այլոյ ուրուք, քան եթէ ծնիցելոյն ի Կուսէն Մարիամայ, որ եւ զամենայն ինչ կրեաց, զոր ինչ կամեցաւ, զմարդկան:* [10] *Եւ ոչ ըստ մասին բաժանեմք զմի Տէր մեր Յիսուս Քրիստոս կամ զգործս նորա եւ զկիրս, զի մի՛ սոսկ մարդ ոք փառակցեսցէ Աստուծոյ, եւ մի՛ յաւելուած թուոյ եւ*
303ա *բնու//թեան աւտարի Երրորդութիւն Սուրբ ընկալցի:* [11] *Քանզի իւր Բանին յատուկ էր մարմինն, որոյ եւ գործքն եւ կիրքն ըստ ճշմար-*

* *Յովհ. Բ 19*

† *Գաղ. Դ 4*

տութեան ասասցին: [12] Մի՛ անգիտասցիս եւ զբնութեանցն բան եւ զմիաւորութեանն՝ զոմն նախ մարմնանալոյն եւ զմիւսն զկնի, զի մի՛ երկուս ուրեք լսելով՝ գայթակղեսցիս, որպէս բազումք՝ կարծելով յետ մարմնանալոյ եւ միաւորութեանն զայն: [13] Քանզի զկնի մարդանալոյն Աստուծոյ չիք ի նմա զանազանութիւն բնութեանց յաղագս անճառելի միաւորութեանն: [14] Եւ մի՛, զմին բնութիւն լսելով Բանին Աստուծոյ մարմնացելոյ, համարեսցիս առ աչաւք զմարդկութիւնն եւ բնաւ ոչ առեալ մարմին, վասն զի երկուն լսի ըստ բնութեանց՝ աստուածայնոյն ասեմ եւ մարդկայնոյն, զի այլ է աստուածայինն եւ անեղանելի էութիւնն եւ այլ՝ մարդկայինս՝ եղականի վիճակեալ գոյութեան եւ մահկանացու: [15] Եւ այսոքիկ, որպէս ասացաք, իմասցին յառաջ քան զլինելն մարդ Բանին Հաւր, այլեւ մի՛ բնութեան Աստուածութեանն վարկցիս զմարմինն՝ մի լսելով բնութիւն Բանին մարմնացելոյ, քանզի <ի> մերոյ բնութենէ, վասն որոյ ոչ Հաւր կամ Հոգւոյն Սրբոյ ասեմք մարմին առեալ կամ ունել, զի թէ բնութեան Որդւոյ ասիցեմք զմարմինն, եւ ի սկզբանէ հարկ է, ապա եւ Հաւր // այնպիսի գոլ եւ 303բ
Հոգւոյն Սրբոյ, վասն զի մի է բնութիւն Երրորդութեանն:

X. [1] Արդ, հաւատամք մի գոլ բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ՝ ըստ ասացելում յեղանակիդ՝ զնոյն ինքն Աստուած եւ զնոյն մարդ, որ է համանգամայն, ոչ զայլ ոք ի Կուսէն ծնեալ, այլ՝ որ ի Հաւրէ անմարմնապէս եւ առանց ժամանակի ծնունդն է, համագոյակ եւ իսկակից Որդի, զոր եւ ասեմք Որդի մարդոյ, որում եւ զամենայն խոստովանիմք կրել եւ գործել: [2] Եւ ոչ ըստ վերաբերութեան, որպէս ասեն հերձուածողք, առյարեմք զմարդկայինսն Աստուծոյ Բանին, քանզի այս ի վերայ սրբոց եւ աստուածազգեցիցն յարմարի արանց. «Ոչ եթէ զքեզ,— ասէ,— այլ զիս անարգեցին, եւ որ զձեզ ընդունի, զիս ընդունի, եւ որ անարգէ զձեզ, զիս անարգէ»*: [3] Այլ ճշմարտապէս զանչարչարելի Բանն ասեմք չարչարեալ իւրով մարմնովն՝ զանչարչարութիւն ոչ ինչ վնասեալ, եւ մեռեալ մարմնով՝ ստուգապէս կալով մնալով յանմահութեանն բնաւորականի, ոչ սոսկ մարմին կամ մարդ լոկ խաչեալ, վասն զի ոչ Բանն անջատանի կամ անջատաւ երբեք յիւրմէ մարմնոյն: [4] Փոքրաբան իցէ յաղագս մեծամեծացն ասել, տեղի տալ Աստուածութեանն ի ժամանակի իրիք տկարութեան թուեցելոյ մարմնականի կամ չարչարանացն իսկ խաչի, որք ի միաւորութեանն

* Ղուկ. 16

304ա Բանի // յոյժ են անտեղեկագոյնք, որպէս եւ Նեստորն ասէ՝ ո՞ տկա-
բացաւ կամ զայն ամենայն կրեաց: [5] Հերձուածո՛ղդ, կամեցեալ կարծիս
տալ զինքենէ անուսմանց ոմանց՝ ուղիղ փառաւորել, հերձուածող
անուանէ զուղղափառսն՝ ի մեծն Կիւրեղ զակնարկութիւնն առնելով,
որում հետեւեալ ամենայնիւ չարասէր ծերունւոյն Ղեւոնն անուանե-
ցելոյ, որ զՀռովմայն ունէր զաթոռ: [6] Աւա՜ղ չարաբախտութեանն առ
որ ի Կոստանդինուպալիս եպիսկոպոսն եւ զնոյն խորհող Փղաբիանոս
գրէր պատճառու Եւտիքեայ վանապետի նորին քաղաքի, որ ասէր
առ աչաւք զմարմնոյն եւ ըստ այնմ մի գոլ բնութիւն՝ դեղով մահու
զառողջութիւն հնարեալ հիւանդութեանն, զոր ընկալեալ ամբարիշտ
ժողովոյն, որ ի Քաղկեդոն, թուի թէ առ աչաւք առաւել կամ առ
ահին Մարկիանոսի անաւրինի, քան թէ բարւոք զամենավատթարն
կարծելով՝ փոքր ինչ նուազ՝ զբովանդակ կործանեցին աշխարհս:
[7] Արձան յիրաւի ոչ քաջութեան, այլ ամբարշտութեան անուանեցին
զչարապէս առ յինքեանց սահմանեալն երկուց դիմաց, ըստ Նեստո-
րի եղեալ արձանացուցիչք, ի ձեռն երկուց զանազան բնութեանցն
304բ եւ ըստ նոսին գործոց եւ կրից աղճատաբանելով ի վերայ մի//ոյ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: [8] Եւ որ ի բիւր հաւանեցոյց չա-
րիս ի սկզբանէ զազգս մարդկան, նոյն եւ զկործանականն Եկեղեցւոյ
Աստուծոյ արձանագրութիւն կարծեցոյց բազմաց հաւատարիմ գոլ,
յորմէ, իբրեւ ի մահաբեր արմատոյ, բուսան յոքնատեսակ եւ անպա-
տում գործք ժպրհութեան առաւել քան ի հեթանոսս, յանուանեալ
քրիստոնէիցն եկեղեցիս: [9] Եւ խորհուրդն անաւրէնութեան արդէն
իսկ զաւրացաւ, թէպէտ եւ յայտնելոց է յիւրում ժամանակի, եւ եկաց
պղծութիւն աւերածոյ, ուր ոչն էր արժան: [10] Սակայն պահեցաւ նշխար
ի ջրհեղեղէն հաւատոյ, յուսամ թերեւս յաճումն համազգի ժողովրդոց,
քանզի թեթեւ է յաչս Աստուծոյ եւ դիւրին զաւրութեան անբաւելոյ՝
յարուցանել զաղքատս յերկրէ եւ յաղբեւաց՝ զտառապեալս բարձ-
բացուցանել եւ նստուցանել դարձեալ յերկնայնոցն իշխանութեան
աթոռ եւ զթախծեալն սգով մայր յամայութեան որդւոց վերստին
զուարճացուցանել, ի չորից ժողովել հողմոց զցրուեալս Իսրայիղի
եւ չինել զԵրուսաղէմ, յորում դիցէ զանուն իւր սքանչելի յամենայն
երկրի՝ ընդունելով փառս ընդ Քրիստոսի իւրում եւ երկրպագելի
Հոգւոյն Սրբոյ ի միում Աստուածութեան եւ բնութեան այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս. <ամէն>:

<ԺԲ>

ՆՈՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԶՍՆԱԶԱՆ ՀԵՐՁՈՒԱԾՈՅ ՅԱՅԼ ԵՒ ՅԱՅԼ ԺԱՄԱՆԱԿՍ ԱՐԱՆՑ ԲՂՋԱԽՈՀԱՅ

I. // [1]Ասի յոմանց հերձուածողաց, թէ ապականութիւն ի Քրիստոս էր: [2]Քաղցն եւ ծարաւ եւ աշխատութիւն եւ այլ մարդկային կիրք՝ զայդոսիկ ապականութիւն ասել յիմարաց է, որք ոչ գիտեն զ Գիրս եւ ոչ զզաւրութիւն Աստուծոյ բնաւ իսկ: [3]Զապականութիւն ասել է վերայ Քրիստոսի ամբարշտութիւն է, յիշել՝ եւ դառն հայհոյութիւն, անթողլի եւ յաւիտենական մեղք. կամաւոր կիրքն այնոքիկ վասն մերոյ փրկութեան ոչ են եւ ոչ ասին ապականութիւն: [4]Մի՛ խաբիր, սիրելի՛, եւ մի՛ կցորդ լինիր աւտար եւ անբժշկելի մեղացն այնոցիկ: [5]Փրկական կիրք են Աստուծոյ մարմնացելոյ եւ ճշմարտապէս մարդացելոյ եւ ո՛չ ապականութիւն, եւ ո՛չ ի հարկէ զայնոսիկ կրէր որպէս մարդ ոք հասարակական, այլ իւրովք կամաւք, որպէս մարդացելոյ Աստուծոյ վայել է: [6]Քանզի ինքն շարժէր զինքն յայսոսիկ, թոյլ տայր մարմնոյն զգալ բնաւորական կրիցն եւ անպարսաւ. վկայէ Աւետարանն, զի ասէ. «Ցետ քառասուն աւուր պահոցն ընլոյ՝ ապա քաղցեաւ»: [7]Քանզի յայնժամ կամեցաւ թէ քաղցնուցու, նոյնպէս եւ յամենայն կիրսն եւ ի չարչարանս խաչին: [8]Վասն որոյ ասէր ինքն. «Իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ եւ իշխանութիւն ունիմ առնուլ զսա»†, եւ եթէ՝ «Ոչ ոք կարէ հանել զնա յինէն»‡: [9]Ասեն հակառակողքն, թէ մինչեւ ցյարութիւնն ի գերեզ//մանէն իբրեւ զմի ոք էր ի մարդկանէ ապականացու: [10]Եթէ այնպէս իցէ, ապա գերեզմանն եւ ո՛չ կոյսն Մարիամ է աստուածածին, եւ ընդէ՞ր բնաւ լեզուաւ խաբէ զպարզամիտս ի մարդկանէ՝ Աստուածածին ասելով զսուրբ Կոյսն: [11]Կամ որո՞վ գտանի առաւելեալ Քրիստոս քան զմարդ հասարակական, վասն զի եւ մարդիկ փոփոխելոց են յանապականութիւն յետ յարութեանն, եւ «արդարքն ծագեսցին յայն-* 305ա 305բ*

* *Մատթ. Դ 2*

† *Յովհ. Ժ 18*

‡ *Յովհ. Ժ 18*

ժամ իբրեւ զարեգակն»,— ասէ ինքն Պարգեւիչն անապականութեան՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս: 12Դարձեալ, թէ յետ յարութեանն աստուածացաւ Քրիստոս, որպէս ասեն հայհոյիչքն, ապա այլայլելի եւ փոփոխելի է բնութեամբ, զոր եւ ոչ դեւք յանդգնին զմտաւ ածել ի վերայ անփոփոխելի եւ անայլայլելի բնութեանն: 13Քանզի ոչ եթէ աստուածազգեաց մարդ էր Քրիստոս, որպէս զՍամուէլ եւ զՄովսէս կամ զմի ոք զայլս ի սրբոցն, որպէս երեւի ասել այնպիսեաց հերձուածողաց, այլ Աստուած էր մարմնացեալ՝ ըստ Յովհաննու ձայնին, որ ասէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»†: 14Եւ եթէ՝ «<Ի> սկզբանէ էր Բանն եւ Աստուած էր նոյն ինքն Բանն»‡, եւ՝ «Ի լրման ժամանակաց առաքեալ ի Հաւրէ՝ եղեւ մարդ ի կնոջէ»§, որպէս ուսուցանէ ամէնիմաստն Պաւղոս, զիա՞րդ իշխեն ասել զնա ապականացու: 15Ո՛վ ամբարշտութեանն, ո՛վ անհամեմատ մոլեգնութեանն, այնպէս եւ պարսիկք կար-
306ա ծեն, որպէս եւ բազում անգամ լուայ ի // բերանոյ նոցա, եւ զիա՞րդ անուանեսցի բնաւ քրիստոնեայ այնպիսին: 16Ո՞չ Սամոստացին Պաւղոս վասն այնպիսի կարծեաց նզովեցաւ, զի նորոգեսցէ զհերձուածն Արտեմոնի, ո՞չ այդ բանք են Դիոդորի Տարսսացւոյ եւ Թէոդորիտայ՝ համախոհաց Նեստորի, զի զ՚առ ի Մարիամայ Կուսէ ծնեալն սոսկ մարդ համարելով՝ զայլ եւս բանս հայհոյութեան ի վերայ այնպիսի կարծեաց շինեցին: 17Բայց նոքա յորովայնի Կուսին զմիաւորութիւնն ասէին Բանին եւ մարմնոյն, թէպէտ եւ ըստ շնորհի եւ ըստ արժանաւորութեան աղճատաբանէին, իսկ սոքա յետ յարութեանն ի կատարումն եւ ի փառս յանապականութիւն փոխադրիլ ասեն, զոր եւ Թէոդորոտոս ոմն յաւուրս յետինս, բազում ամաւք զկնի ժողովոյն Քաղկեդոնի, այլ եւ Կոստանդինուպաւլսի հինգերորդին անուանեցելոյ՝ առ Աթանասիւ պատրիարգաւ Անտիոքայ, յայտնապէս յաւդէր անամաւթաբար: 18Քանզի ըստ երից ժամանակաց փոփոխումն ընդունել Քրիստոսի ասէր, որպէս թէ ի ծննդենէն մինչեւ ի մկրտութիւնն այլ ազգ ունել, իսկ ի մկրտութենէն մինչեւ ի խաչն՝ այլ ազգ, եւ ապա յետ յարութեանն զկատարեալագոյնն առնուլ, այսինքն՝ զփառս, զկատարելութիւն եւ զանապականութիւն: 19Առ որ ասասցուք, զիա՞րդ ժամանակաւ եւ ըստ յաւելման

* *Մատթ. ԺԳ 43*
† *Յովհ. Ա 14*
‡ *Յովհ. Ա 1*
§ *Գաղ. Դ 4*

կատարեալ յառաջատելով իցէ Աստուած, եւ կամ ո՞րպէս Եկեղ//եցի Աս- 306բ
տուծոյ անուանեսցի եւ եղիցի քրիստոնեայ՝ նոր եւ առժամայն «աս-
տուած» երկրպագելով եւ պաշտելով, ուր Դաւիթ հրաժարեցուցանէ՝
յերգելն ասելով. «Մի՛ եղիցին քեզ աստուածք առժամայնք եւ մի՛ եր-
կիր պագանիցես դու աստուծոյ աւտարի»*: [20]Ո՞չ ապաքէն աւտար է
յանկատարութենէ ի կատարումն եկեալն, եւ յապականութենէ՝ յանա-
պականութիւն եւ ի փառս՝ յանփառութենէ: [21]Աստուածք ապա ասին
ըստ էութեան Եղիա եւ Ենովք, քանզի են այժմ յանապականութեան
եւ ի փառս եւ ի կատարելութեան մինչեւ ի ժամանակն սահմանեալ:
[22]Եւ կամ նա ասասցի իբրեւ զսոսա, տակաւին կիսակատարումն մարդ,
թէպէտ եւ ստացեալ ժամանակաւ ունի զերեսին, այլ եւ երրորդութիւնն՝
չորրորդութիւն՝ զմարդն յաւելուած ընդունելով, եւ արարածն՝ թուա-
կից եւ պատուակից արարչացն, եղեալն՝ անեղ ի բնութեան, եւ ժամա-
նակեայն՝ անժամանակէին, փոփոխելին եւ այլայլելին ըստ նոցա՝ ան-
փոփոխելւոյն եւ անայլայլելւոյն, մարդն՝ Աստուծոյ ճշմարտի, պի-
տակն՝ իսկականի եւ էականի, մարմնականն ոմն եւ այլ քան զ՝«ի սկզ-
բանն»՝ անմարմնոյ եւ իսկականի: [23]Զի զհետեւողս սոցին յանտեղեաց
թողից ի կարգէ բանիս, զապականացուն, զանկատարն, զանփառաւորն՝
անապականի եւ կատարելոյ եւ գերազանցի փառաւորութեամբ եւ անի-
մանալի պատուոյ // առաւելութեամբ: [24]Դարձեալ, թէ յետ յարութեանն 307ա
ընկալաւ Քրիստոս զկատարելութիւն եւ զփառս եւ զանապականու-
թիւն, ըստ որում Թէոդոտոսն այն ասէր, զիա՞րդ Պաւղոս յ՚առ Եբրայեց-
ւոց թղթի անդ ասէ. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւի-
տեանս»†: [25]Երէկ կոչէ զանցեալն, իսկ այսաւր՝ զներկայն, եւ յաւիտեան՝
զապառնին՝ անվճար ժամանակ: [26]Զի այսպէս ասացից, քանզի երէկն
ասէ, մինչ դեռ ոչ էր զգեցեալ մարմին եւ ունէր զաստուածավայելուչ
փառսն եւ զանապականութիւն, սոյնպէս եւ այսաւր, յորժամ մարդ ըստ
ճշմարտութեան եղեւ, եւ ոչ ինչ ի բնութիւն վնասեցաւ եւ ոչ ապակա-
նութիւն զգեցաւ կամ անկատարութիւն կամ անփառութիւն, այլ եկաց
մնաց որ ինչ էրն ի զգենուլն մարմին. կացցէ եւ յաւիտեանս յաւիտե-
նից որպէս եւ Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ: [27]Քանզի մարդ-
վայելուչքն ի նմա տեսեալք ոչ է ապականութիւն, այլ կիրք կամաւո-
րականք, եւ ոչ է ըստ մեզ մարդ լոկ, թէպէտ եւ հաճեցաւ լինել մարդ,

* *Սաղմ. Զ 10*

† *Եբր. ԺԳ 8*

այլ է Աստուած մարմնացեալ: [28]Ո՛չ նախ ստեղծեալ մարմին կամ մա-
նուկ յարգանդի Կուսին եւ ապա բնակեալ, զի մի՛ աստուածազգեաց
մարդ ասասցի եւ եղիցի, այլ ինքն նախաժամանեալ ի Կուսին յարգանդ՝
խառնէ ընդ ինքեան զմարդկայինն բնութիւն, զորոյ խառնմանն յեղա-
307բ նակ ոչ ոք կարասցէ հաւաստապէս //ճառել: [29]Հաւատամք, զի ի Հոգ-
ւոյ Սրբոյ կազմութիւն մարմնագործութեան այնորիկ եղեւ՝ ըստ հրեշ-
տակին առ Կոյսն աւետեաց, այլ քննել եւ հետազաւտել անբարեպաշ-
տապէս ոչ իշխեմք եւ ոչ քան զգրեալսն աւելի իմանալ, որպէս ուսաք
ի Պաւղոսէ: [30]Լո՛ւր՝ զինչ ասէր առ աշակերտսն ինքն յարուցեալ ի մե-
ռելոց. «Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ»*: [31]Եւ չասաց, թէ այլ
եմ, զի փոխեցայ յանապականութիւն յապականացուէ, այլ թէ նոյն եմ՝
ըստ որում յառաջ քան զխաչն, որում տեղեակ իսկ էք դուք եւ գիտէք
առանց երկբայութեան: [32]Եկեր եւ արբ ընդ նոսա յետ յարութեան իւ-
րոյ, զի ուսցուք, թէ նոյն է եւ ոչ փոփոխեցաւ: [33]Պետրոս ասէ մեծն.
«Որք կերաք եւ արբաք ընդ նմա յետ յարութեանն»†, եւ յԱւետարանի
անդ յորժամ հարցանն ի Տեառնէ մանկունքն, թէ՝ «Ունի՞ք ինչ ուտե-
լոյ»‡, գրեալ է, թէ՝ «Ետուն նմա ձկան խորովելոյ մասն եւ խորիսխ մե-
ղու, զոր առեալ եկեր առաջի նոցա, զմնացորդսն ետ նոցա»§: [34]Արդ,
եթէ ուտելն եւ ըմպելն ապականութիւն է, որպէս ասեն, ընդէ՞ր զկնի
յարութեանն ուտէր եւ ըմպէր, զի յանապականութիւն փոփոխեալ էր
ըստ նոցայն կարծեաց: [35]Ապա թէ ոչ է ապականութեան գործ կամ կիրք
յետ յարութեանն ուտել եւ ըմպել նորա, յայտ է, թէ եւ ոչ նախ քան
308ա զյարութիւն, եւ եթէ ոչ ուտելն եւ ըմպել իցէ գործ ապակ//անութեան,
ոչ ապա եւ այլն ամենայն մարդկային կամաւոր կիրք, զոր ի փրկու-
թիւն մեզ տնաւրինաբար կրէր, ապականութիւն: [36]Մե՛զ տնկակից է եւ
ամենայն կենդանեաց եւ աճականաց, որոց եւ նուազելն շարժակցի:
[37]Իսկ որ ոչն ունի հայր ըստ մարմնոյ, քանզի ի Կուսէ միայնոյ ծնաւ,
զիա՞րդ կարասցէ ապականութիւն հետեւել այնր մարմնոյ: [38]Աղէ՛,
հարցցուք ցԹէոդոտոսն ցայն, թէ մարթ իցէ՞ յանապականէ ապակա-
նացու ծնանել, զի եթէ անապական էր Կոյսն նախ քան զծնունդն, քան-
զի զայր ոչ գիտէր, անապական եւ յետ ծննդեանն, վասն զի կուսու-

* Ղուկ. ԻԴ 39
† Գործ. Ժ 41
‡ Ղուկ. ԻԴ 42
§ Ղուկ. ԻԴ 43

թեանն կնիք անշարժ եւ անլոյծ եկաց մնաց: 39Ո՞րպէս արդեաւք Պտուղն իցէ ապականակիր, եւ այն, զի «Հոգի Սուրբ եկն ի նա,— ըստ հրեշտակին ձայնի,— եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի եղեւ նմա», այլ եւ զԾնեալն առ ի նմանէ սուրբ ասաց եւ Որդի Աստուծոյ†: 40Եթէ Որդի Աստուծոյ է, որ ի Մարիամայն կուսէ ծնեալ, քանզի «Բանն մարմին եղեւ»‡,— Յովհաննէս որոտաց, զիա՞րդ ոչ իցէ ամբարշտութիւն ասելն ապականացու զՈրդին Աստուծոյ, քանզի մի է Միածինն Հաւր, թէպէտ եւ մարդ եղեւ: 41Ապականութիւն արմատ ունի եւ ծնող զմեղս, իսկ «Նա մեղս ոչ արար, եւ ոչ գտաւ նենգութիւն ի շրթունս Նորա»§՝ ըստ կանխասացութեան մարգարէին եւ ըստ նորուն ինքեան Փրկչին եւ Կենարարի, թէ՝ «Ո՞ ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղայ»¶, եւ դարձեալ՝ «Գայ // իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ»**: 42Արդ, 308բ*
որոյ ծնունդն ի Հոգւոյն Սրբոյ է եւ ոչ ի սերմանէ առն, եւ որ արդարացաւ մարմնով, յայտ է, թէ միայն ի մարմնազգեաց բանականս, ապականութիւն հեռի փախուցեալ է ի նմանէ:

II. 1Աթանասիոս Աղեքսանդրի հայրապետն՝ ամենահռչակն եւ սուրբ, ասէ այսպէս. «Վասն զի մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ եւ առանց մեղայ էր, ոչ գտաւ ի նմա ապականութիւն, զի ոչ կարէ բնակել մահ ընդ կեանս, եւ ոչ ապականութիւն ընդ անապականութեան բնակէ»††: 2Զի թէպէտ եւ խաբելով զպարզամիտս եւ զանուսմունս՝ ասէր Թէոդոտէ. «Ոչ զ՚առ ի մեղացն եւ կամ ի դերեզմանի ընդունել զապականութիւն»‡‡: 3Սակայն ապականութիւն անուանելով զհոգեկան եւ զմարմնական կիրսն, զոր ի վերայ մեր առնուլ դիպողացոյն թերեւս իցէ, մարդ սոսկ եւ հասարակական զնա ասէ: 4Եւ թէ այնպէս իցէ ըստ նմա, ապա ի դերեզմանին եւ ամենայն ուրեք մերձ առդիցէ նմա զչարաչարն իմացեալ իւր ապականութիւն, քանզի այս հե-

---

* *Ղուկ. Ա 35*

† *Տես Ղուկ. Ա 35:*

‡ *Յովհ. Ա 14*

§ *Ես. ԾԳ 9, Ա Պետ. Բ 22*

¶ *Յովհ. Ը 46*

** *Յովհ. ԺԴ 30*

†† *Գարեգին վ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ. Երկասիրութիւնք Խոսրովկայ Թարգմանչի, Վաղարշապատ, 1899 թ. (= ԽԹ), էջ 118, 132. «Գանձասար» Բ, էջ 201*

‡‡ *ԽԹ, էջ 107, 116*

տեւել բնաւորեալ է մարդոյ հասարակականի: [5]Նաեւ ինքն իսկ Թէոդոտէ յայտնապէս զուրացութեանն խոստովանութիւնն զգայի՝ անփառ
եւ անկատար եւ ապականացու մինչեւ ցյարութիւնն զնա անուանե-
309ա լով, եւ ապա // փոփոխեալ ի հակառակն զնա՝ յանապականութիւն եւ ի
կատարելութիւն եւ ի փառաց ընդունակութիւն: [6]Զոր զամենիմաստն
Պաւղոս առնու ի վերայ բնութեան հասարակականի մարդկան, քան-
զի «սերմանի,— ասէ,— ապականութեամբ եւ յառնէ առանց ապակա-
նութեան, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զաւրութեամբ, սերմա-
նի անարգութեամբ եւ յառնէ փառաւք, սերմանի մարմին չնչաւոր, եւ
յառնէ մարմին հոգեւոր»*: [7]Եւ ո՞ւր իցէ առաւելութիւն Բանին Աստու-
ծոյ մարմնացելոյ եւ անուանեցելոյ Յիսուս Քրիստոս եւ «Ընդ մեզ Աս-
տուած», թէ եւ նա նմանապէս մեզ զկնի յարութեանն փոխադրեցաւ յա-
նապականութեան եւ յայլն ամենայն: [8]Եւ զիա՞րդ ոչ մարդապաշտ եւ
մարդադաւան Թէոդոտոսն իցէ. ահա եւ զԵրրորդութիւնն կատարեալ
յերից կատարելոց չորրորդութիւն անկատար ասող, վասն զի անկա-
տար ոմն մարդ, ժամանակաւ ի կատարումն եկեալ, թուակից կատարե-
լոց անժամանակ էիցն եղեւ: [9]Եւ նորաձեւութիւն ի սկզբանէ Աստուա-
ծութիւնն ի ներքս եմուտ եւ բաժին յանբաժանելի բնութիւնն, քան-
զի մարդ ոմն աւտարաբուն յերանելի ազգակցութիւն եկն յարեցաւ,
եւ երկրպագեն գերաշխարհիկ ամենայն զաւրութիւնք ընդ Երրորդու-
թեանն Սրբոյ պիտակի եւ նորոյ «աստուծոյ». արդարեւ զարմանք կա-
309բ լան զճշմարիտս ի վերայ այսոց//իկ: [10]Ասէ եւ զայս, որ զխոտորնական
վարդապետէ, թէ զկնի յարութեանն ի բաց բարձեալ եղեն ի փրկչական
մարմնոյն անուանք մարդկային բնութեանս: [11]Բայց տե՛ս ինձ աստա-
նաւր. եւ զխարդախութիւն կեղծաւորութեանն պարսաւէ, որպէս երե-
ւի նենգութեամբ զՅուլիոս Աղիկառնացի, որ ի ծննդենէ Փրկչին ուրա-
նայր զմարդկային անուանս ի վերայ նորա, վասն որոյ խոտեալ անար-
գեցաւ, որպէս առ աչաւք ասող զմարդեղութիւնն Տեառն. [12]եւ ինքն
յետ յարութեանն զնոյն ասէ, սակայն կարծիք երկոցունց չեն ի մի-
մեանց բաժանեալ, զի զկնի յարութեանն զայն իմանալ եւ ասել զայլ
ինչ ոչ, քան եթէ առանց ճշմարտութեան զմարդանալն նշանակէ կամ
երկնային ոմն ունիլ մարմին:

III. [1]Արդ, եթէ յետ յարութեան եղեւ միաւորութիւն Բանին ընդ
մարդոյն, որպէս ասեն, զիա՞րդ ոչ զՆեստորին խորհին, քանզի նա

* Ա Կոր. ԺԵ 42–44

մարդ սոսկ եւ առանձնակի զՔրիստոս ասէ, բայց ո՛չ յարէ զապականացուն, թէեւ կամի: [2]Այլ եւ ի ծննդենէն առյապա զնոյն արժանաւորութիւն ունել երկուցն ասէ, զոր ինքն իմանայ, զնոյն ճոխութիւն եւ պատիւ՝ ոչ ըստ միութեան եղելոյ, այլ ըստ արժանաւորութեան՝ ընդունայն խորհելով, սակայն գտանի հանդարտա//գոյն քան զԹէոդոտէ յամբարշտութեանն, քանզի սա ումեմն չնորհէ եւ զոմն կողոպտէ ի պատուոյ՝ հակառակ նմին: [3]Իսկ նա ի ծննդենէն մինչեւ յաւիտեան ըստ արժանաւորութեան մի գոլ զերկոսին ասէ, այսինքն՝ թէ արժանաւոր գտաւ ոմն մարդ ի պատիւ Բանին ելանել աւաղ թշնամանացն, սակայն Թէոդոտոս դժնդակագոյն քան զնա իւրովքն երեւի հայհոյութեամբ: [4]Այլ եւ առ այսոքիւք անգիտանայ զոր ինչ ասեն. զՄարիամ Աստուածածին ասէ եւ զԾնեալն ի նմանէ՝ անկատար եւ անփառաւոր եւ ապականացու մինչեւ ցյարութիւնն: [5]Եւ այսոքիկ մարդոյ լոկոյ յարմարին ճշմարտապէս, զի թէ Աստուած ըստ ճշմարտութեան է մարմնացեալ ի Մարիամայ, Բանն որ յԱստուծոյ Հաւրէ եւ առ նմին, ընդէ՞ր ապականացու եւ անկատար եւ անփառունակ հայհոյի, իսկ եթէ մարդ սոսկ է, որպէս ժողովի ի բանից նորա, վասն է՞ր Աստուածածին զՄարիամ անուանէ: [6]Եթէ յետ յարութեանն եղեւ միաւորութիւն Բանին եւ մարմնոյն, եւ տուաւ նմա անապականութիւն եւ կատարումն եւ փառաւորութիւն, զգերեզմանն ասասցէ «աստուածածին» եւ մի՛ զՄարիամ, եւ սուտ գտանի սուրբ զուարթունն Գաբրիէլ, որ ոչ գերեզմանին ետ զաւետիս՝ ծնանիլ զՈրդի Աստուծոյ, // այլ Մարիամու: [7]Հայեա՛ եւ ընդ 310ա 310բ
կրկնակի հայհոյութիւն ամբարշտին, թէ զիարդ եւ զԲանն իսկ ցուցանէ տկար, քանզի ի հարկէ եւ ի հոգոց ասէ պաղատանաւք զայնոսիկ ընկալեալ՝ խոստովան լինել զանձին անկարութիւն յաղագս միայնութեան. ի գերեզմանի ո՛չ ասեմ, ասէ, զապականութիւնն ընկալեալ մարմնոյն Քրիստոսի: [8]Եթէ ի գերեզմանի մեռեալ ըստ մարմնոյ գոլով՝ ոչ կարաց տիրել նմա ապականութիւն, զի՞նչ պատճառք իցեն նախ քան զմահն կրել նմա զապականութիւն: [9]Քանզի յապականացուէ գոյացելոյ հետեւի ապականութիւն եւ ի սերմանէ արուի սկիզբն կալելոյ. [10]իսկ այն յղութիւն ի Հոգւոյն Սրբոյ տնկագործեցաւ, որպէս ուսաք ի հրեշտակէն Գաբրիելէ՝ ասացեալ առ Կոյսն Մարիամ. «Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»*,*

* *Ղուկ. Ա 35*

եւ ցՅովսէփ, թէ՝ «Որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն Սրբոյ է». եւ Յով-
հաննէս «Բանն մարմին եղեւ»† ասէ: 11Եւ զիա՞րդ իշխեսցէ կամ զաւ-
րեսցէ ապականութիւն յայնպիսի ծնունդ մերձենալ, քանզի Աստուած
ըստ ճշմարտութեան է, եւ Ծնեալն մարմնով ի Մարիամայ Կուսէ՝ Բանն
Հաւր, եւ որպէս ծնաւն առանց բնութեան հարկի եւ իրիք բռնադատու-
թեան, այսպէս եւ կրեաց զմարդկային կիրս առանց մեղաց: 12Կամաւոր
311ա էր ծնունդն, կամ//աւոր՝ եւ կիրքն ամենայն. մի՛ ոք անուանել իշխես-
ցէ զկամաւորական կիրսն ապականութիւն, վասն զի ի փրկութիւն մեզ
զամենայն կրէր տնաւրինաբար, կարող էր ոչ կրել, վասն զի Աստուած
էր եւ հանդերձ մարմնովն, բայց զի ոչ առ աչաւք էր մարդեղութիւնն,
որպէս թուեցաւ մանիքեցւոց եւ Եւտիքեայ վանապետի: 13Կրել հաճե-
ցաւ, վասն այնորիկ իսկ եւ մարդ եղեւ, որ ի սկզբանէն Աստուած, զի
կրեսցէ վասն մեր, ընդ մեզ լինելով, զմերս: 14«Աստուած զՈրդին իւր
առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց, եւ դատա-
պարտեաց զմեղս ի մարմնի»‡,— ասէ առաքեալն: 15Արդ, որպէս դա-
տապարտեաց զմեղս՝ ոչ մեղանչելով, դատապարտեաց եւ զապակա-
նութիւն՝ ոչ կրելով զնա, եւ որպէս գնեաց զմեզ յանիծից աւրինացն՝
եղեալ վասն մեր անէծք՝ հեռի գոլով <յ>անիծից եւ բաշխիչ աւրհնու-
թեան, կամեցաւ յապականութենէ փրկել զմեզ՝ առ յոյս զիւրն տալով
մեզ առհաւատչեայ զանապականութիւն:

IV. 1Գիտել պարտ է եւ զայս, որում ճշմարտութիւնն է ցանկա-
լի եւ ոչ իցէ կամակար մտաւք յանցաւոր եւ նենգիչ բանին վարդա-
պետութեան, եթէ այլ է բնութեանն բան եւ տեսութիւն եւ այլ՝ միա-
ւորութեանն. 2քանզի այլ է աստուածայինն եւ այլ՝ մարդկայինն գո-
311բ յացութիւն ըստ ինքեան, քանզի է ոմն անեղանելի // եւ անվախճան
արարիչ ամենայնի, իսկ մարդկային բնութիւնս՝ արարած եւ մահկա-
նացու, որպէս ամենայն բուսականք եւ կենդանիք: 3Եւ ի խառնման
Բանին Աստուծոյ ընդ մարդկայնում էութեան, նորաձեւ եղեն բնու-
թիւնքն, այսինքն՝ ի Քրիստոս յՈրդի Աստուծոյ: 4Արդ, ի նմա զմիա-
ւորութիւնն ոչ է արժան յերկուս բաժանել, այլ զամենայն միոյ եւ նո-
րին ասել՝ եթէ՛ մարդկայինք իցեն եւ եթէ՛ աստուածայինք, 5եւ ճանա-
չել զհերձուածողացն թերաբանութիւն եւ զանմիաբանութիւն ընդ ճշ-

* *Մատթ. Ա 20*

† *Յովհ. Ա 14*

‡ *Հռոմ. Ա 3*

մարտութեանն եւ ընդ միմեանս եւ զուղիղն այսպէս խոստովանիլ ի
Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ եթէ էր ըստ բնութեան անմահ Բանն Աս-
տուծոյ, իսկ ըստ միաւորութեան տնաւրէնութեանն յանձն առ զմահ,
որ զբնութեամբ մահկանացու մարմինն իւրացոյց ի ձեռն առ ինքն մի-
աւորութեանն եւ արար անմահ եւ անապական: [6]Եւ որ անբովանդա-
կելին էր ըստ բնութեան, բովանդակեցաւ ըստ մարմնոյն միաւորու-
թեամբ, եւ զբովանդակելի ըստ բնութեան մարմինն անբովանդակե-
լի էութեանն արար հաղորդ՝ միաւորելովն ոչ փոփոխեալ կամ այլայ-
լեալ զբնութիւնսն, այլ ըստ անճառ եւ անպատմելի միաւորութեանն
խառնեալ զգոյացութիւնն: [7]Արդ, եթէ ոչ ճանաչ//իցեմք զյեղանակս 312ա
բնութեան եւ միաւորութեանն, զիա՞րդ կարասցուք իմանալ զանմա-
հին ասել մահ եւ զմահկանացուի մարմնոյն՝ անմահութիւն, անչար-
չարելւոյն՝ զչարչարանս եւ չարչարականին ըստ բնութեան՝ կենագոր-
ծակ եւ անչարչարելի գոլ: [8]Ոչ ինչ յանչարչարական բնութիւն Բանին
մերձեցեալ ի կրիցն եւ չարչարեալ ճշմարտապէս, անմահ մնացեալ եւ
մեռեալ՝ զմին ըստ բնութեան եւ զմիւսն ըստ միաւորութեան խորհելով
եւ ընդ միտ ածելով: [9]Եւ յորժամ ասիցեմք չարչարել Բանին Աստուծոյ,
ոչ ըստ բնութեան, այլ ըստ միաւորութեան զայն ասեմք, քանզի Արի-
ոսի եւ ձայնակցաց նորա է բնութեամբ չարչարելի զԲանն ասել վասն
արարած բաջաղելոյ, եւ Ապողինարի Ղաւոդիկեցւոյ զնորայսն խոր-
հողի, որ ոչ խոստովանի հոգի եւ միտս մարդկային ունել Քրիստոսի,
այլ փոխանակ այսոցիկ զԲանն դնէ, որպէս զի անզգայ ունելով մար-
մին յիւր բնութիւն, զԲանն Աստուծոյ ասասցէ ընդունել չարչարանս:
[10]Եւ յորժամ լսիցէ ոք զմարմին նորա անչարչարելի ասացեալ ըստ մի-
աւորութեանն եւ համարեսցի ըստ բնութեան այնպէս գոլ մարմնոյն,
յուղիանիտ է, իսկ զմիաւորութիւնն եթէ ըստ արժանաւորութեան // ոք 312բ
ասասցէ եւ ո՛չ ըստ բնութեան Բանին, Նեստորի է ձայնակից եւ դա-
տապարտակից: [11]Քանզի որ այսպէս կարծէ, մարդ սոսկ ասէ զՔրիս-
տոս եւ հաւասար ըստ բնութեան միայն սրբոց արանցն, որք ըստ ար-
ժանաւորութեան կոչեցան աստուածայինք եւ աստուածազգեացք, եւ
է այս Նեստորի: [12]Քանզի ասի դարձեալ ի վերայ Քրիստոսի մի բնու-
թիւն, ասի եւ երկուս. [13]եթէ ոք զմին ըստ բնութեան, այլ ոչ ըստ միա-
ւորութեան ասասցէ ի Քրիստոս, կա՛մ Արիոսի եղիցի դաւանակից, որ
զԲանն Աստուած արարած ըստ մարմնոյ ասէ եւ վասն այնորիկ ըստ մի-
ոյ գոլ բնութեան զԲանն եւ զիւրն մարմին՝ զմարդկային կազմածն, որ
ի հոգւոյ եւ ի մարմնոյ, բերեալ ապացոյց, կա՛մ եւտիքէանիտ եւ մանի-

քեցի կոչեսցի, քանզի Եւտիքէս, թէպէտ եւ անստացական զԲանն խոստովանի, սակայն առ աչաւք զմարդեղութիւնն ասէ եւ ո՛չ ճշմարտութեամբ եւ վասն այնորիկ միոյ բնութեան զՔրիստոս գոլ: [14]*Զնոյն եւ մանիքեցիք, դարձեալ երկուս ասելով բնութիւնս ի Քրիստոս, եթէ ըստ միաւորութեանն եւ ոչ ըստ բնութեանցն, ուստի եղեւն միաւորութիւն, ասասցէ, այլ անջատումն եւ որոշումն ի միաւորութիւնն մուծանելով,* [15]*եւ ոչ ըստ մտածութեան միայն Պաւղոսի Սամոստացւոյ եւ Դիոդո-*
313ա րի Տարսոնացւ//ոյ եւ Թէոդորիտեայ եղեւ համախոհ, որք մարդ դուզնաքեայ զՔրիստոս կարծելով՝ միայն յարակցութիւն եւ մերձաւորութիւն առ Բանն ունել ասացին՝ ոչ ուսեալք ի Յովհաննէ զԲանին լինիլ մարմին անշփոթաբար եւ առանց խառնակութեան եւ այլայլութեան:

V. [1]*Իսկ վասն երկուց կամաց եւ ներգործութեանց զնոյն է իմանալ եւ ասել, ոչ ի միաւորութեան, այլ ըստ բնութեան զկրկնակսն, որպէս զի մի՛ ընդ Գայիոսի, ուստի գայիանիտք, եւ մի՛ ընդ Թէոդոսի ոք գլորեսցի, որք անզգայ եւ անկրական ունել մարմին Քրիստոսի եւ առանց ներգործութեան, զոր ի Կուսէն ընկալեալ, յանդգնեցան ասել:* [2]*Ապա թէ ոք միաւորեցելումն եւ մի եղելումն՝ նմին ինքեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իշխեսցէ տալ երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս ըստ յատկութեան եւ առանձնաւորութեան, աւտար է ճշմարտութեանն եւ անծանաւթ բնաւին եւ դատապարտեալ ընդ Մաքսիմոսի չարափառի, որ զայնոսիկ ընկալաւ ասել:* [3]*Քանզի եթէ ճշմարտապէս մի Տէր մեր Յիսուս Քրիստոս յաստուածային էութենէն եւ ի բնութենէ մարդկայնոյ, ըստ որում Գիրք Սուրբք ուսուցանեն, զիա՞րդ մարթիցի յետ միաւորութեանն տալ նմա երկուց դիմաց եւ առանձնաւորութեանց յատուկս:* [4]*Քանզի իւր է Բանին Աստուծոյ մարմինն եւ մտաւոր մարդկային հոգի,*
313բ վասն որ//ոյ եւ կիրքն իւրոյ հոգւոյն մարդկայնոյ, այսինքն կամքն եւ տրտմութիւն եւ հոգք, եւ մարմնոյն իւրոյ՝ նորա ըստ միաւորութեան են եւ ասացան: [5]*Քանզի կրական մարմինն եւ խորհեցող միտք եւ կամեցող Բանին ըստ միաւորութեան եղեւ, քանզի ոչ եթէ ի նախաստեղծելում յարգանդի մանկան բնակեաց, որպէս այլ յայլում, եթէ առանձնասցին ի միմեանց կամաւք եւ ներգործութեամբ, եւ ոչ յարակցեաց իւրոյ մարմնոյն ինքն, որպէս ոմն ումեմն, եթէ բաժանեսցին ի վերայ նորա գրեալքն յԱւետարանս եւ յԱռաքեալս:* [6]*Այլ որպէս կամեցաւ ինքն եւ գիտէ, Բանն գոյացոյց իւր մարմին մարդկային յարգանդի Կուսին՝ ոչ առանց ինքեան երբեք մնացեալ, եւ գիտեմք եւ հաւատամք, զի ի Հոգւոյն Սրբոյ եկելոյ առ Մարիամ ըստ Գաբրիէլի ձայնին՝ մարմնա-*

*գործեցաւ փրկչականն, իսկ յեղանակ իրագործութեանն անհասանելի է մեզ եւ ամենայն արարածականի բնութեան: 7Արդ, զբովանդակն առնու մարդկային բնութիւն, այսինքն՝ հոգի եւ մարմին եւ միտս, բայց զի իւր է մարմինն, որ բնաւորեալն է ներգործել եւ կրել, նորա են կիրք եւ ներգործութիւնք մարդկայինք, որոյ մարմինն: 8Եւ զի իւր ինքեան Բանին է միացեալն ընդ նմա հոգի մարդ//կային, յորում կամելն բնաւո- 314ա
րեալ է, նորա եւ կամքն եղիցին եւ ասասցին, որոյ եղեւ մտաւոր մարդկային հոգին: 9Եւ այսր աղագաւ սահմանեցին ասել հարքն մի բնութիւն Բանին մարմնացելոյ ըստ ճշմարիտ միաւորութեանն, այլ եւ մի կամս եւ մի ներգործութիւն: 10Քանզի ինքն շարժէր եւ թոյլ տայր իւրոյ մարդկութեանն զկիրսն եւ զկամսն բնաւորականս, քանզի մի է իշխանական Բանն, որ մարդկայնովն՝ որպէս գործեաւ, տնաւրինէր զմարդկայինսն: 11Քանզի «վեհագունին յաղթելով», որպէս ասէ ոմն ի սրբոցն*, ոչ լինին երկու իշխանականք՝ ասացեալ ի միում դիմի եւ բնութեան: 12Ոչ ապա ըստ այսմ երկու կամք եւ ներգործութիւնք, այլ երաժշտապետաբար Բանն Աստուած զիւրոյ անձնաւոր մարմնոյն յաւրինէր եւ կազմէր զամենայն առ քաջահնչութիւն եւ գեղեցկաձայնութիւն, որպէս զի ամենայն ինչ տէրունեան մարմնոյն ինքեան Բանին ասասցին մարմնացելոյ եւ ո՛չ ուրումն մարդոյ առանձնակի տեսեցելոյ: 13Եւ բազում են վկայութիւնք հարցն սրբոց առ ի զայսպիսի բանս հաւատարմացուցանելոյ, զորոց եւ առաք իսկ զմիտսն: 14Բայց առ այժմ թողաք, մինչեւ քննիցէք զհամառաւտիւ գրեալսդ:*

*VI. 1Իսկ զՅուլիոս Աղիկառնացի, վասն զի յիշեցաք // յառաջա- 314բ
գոյն, ցուցցուք զհերձուածոյ նորա բանս եւ եթէ յորո՛ւմ ժամանակի երեւեցաւ, եւ կամ զիա՛րդ Սեւերոս Անդիոքացի հակառակ նմա եգիտ հերձուած: 2Զենոն եւ Անաստաս թագաւորք հռոմայեցւոց արարին գիր շրջաբերական ընդ ամենայն տիեզերս՝ ի բաց կալ եւ խոտել զժողովն Քաղկեդոնի, եւ իբրեւ հաստատեցաւ այս յաւուրս նոցա, եւ ընկալաւ խաղաղութիւն զԵկեղեցի Աստուծոյ, ոչ ոք իշխէր խորհել ընդդէմ հրամանաց նոցա: 3Իսկ Յուստիանոս թագաւորեալ՝ ետ հրաման քարոզել վերստին զսահման ժողովոյն Քաղկեդոնի: 4Եւ եթէ յեպիսկոպոսաց ոք ոչ հնազանդեսցի հրամանին, ի բաց կացցէ ի վիճակեալ նմա աթոռոյ իշխանութեան: 5Ընդ այլս ոմանս եւ Յուլիանէ Աղիկառնոս քաղաքի եպիսկոպոս եւ Սեւերոս, անհաւանեալ հրամանին, թողին զիւրաքան-*

---

* *Սբ Գրիգոր Աստուածաբան (խԹ, էջ 119)*

չիւր քաղաքս եւ չոգան յԵգիպտոս, բնակեցան մերձ առ Աղեքսանդր
քաղաքի: [6]Բայց հաւանեալքն հրամանաց թագաւորին ոչ խախտեցան
յաթոռոյ իւրեանց: [7]Եւ ժամանակի ինչ անցելոյ եղեւ հակառակու-
թիւն ի մէջ նոցա՝ Սեւերեայ Անդիոքացւոյ եւ Յուլեայ Աղիկառնաց-
ւոյ, յաղագս բանի հաւատոյ, եւ ճեղքեալ որոշեցան ի միմեանց հակա-
315ա ռակ դաւանութեամբք: //[8]Քանզի Յուլիանէ ասէր անչարչարելի զմար-
մինն Քրիստոսի եւ անմահկանացու՝ ի ծննդենէ Կուսին մինչեւ ցյաւի-
տեան, եւ յաւելոյր պատճառ այսպիսի՝ չարչարելի եւ մահկանացուն
ասել ապականացու զնա առնէ, ի ձեռն որոյ հարկաւորապէս ասացեալ
լինին ի Քրիստոս երկուս բնութիւնք: [9]Իսկ Սեւերոս ասէր հակառակ
նմին՝ չարչարելի եւ մահկանացու զմարմինն Քրիստոսի ի ծննդենէն
մինչեւ ցյարութիւնն, քանզի անչարչարելի եւ անմահկանացու ու-
նել մարմին Քրիստոսի մինչեւ ցյարութիւնն թէ ոք ասիցէ, սուտ առ-
նէ զմարդեղութիւն նորա եւ առ աչաւք: [10]Այսպէս երկոքին սոքա այս-
պիսի բանիւք մարտուցեալ ընդ միմեանս՝ ոչ եւ ճշմարտութեան հաւա-
նեցան, վասն զի ոչ կամեցան յառել ի Գիրս Աստուածայինս՝ առնուլ
լոյս մտաց աչացն, զի մի՛ ընդ խաւար գնայցեն: [11]Այլ իւրաքանչիւր
ոք ի նոցանէ, յանձնահաճութեան ամբարձեալ կառս, գտան անկեալք
ի ճշմարիտ խոստովանութենէ ուղղափառ հաւատոյ, եւ զնահապետա-
կան կամեցեալք առնուլ պատիւ եւ անուն՝ յիւրեանց զհաւանելոցն փո-
խադրեցին անուն կոչման յուլիանիտս եւ յասովրիտս՝ փոխանակ քրիս-
315բ տոնեայ անուան: [12]Եւ այսու անուանակոչութեամբ յոլովս անցուց//ին
ժամանակ, գրեթէ սուղ ինչ նուազ քան զերկերիւր ամ: [13]Բայց զՅակո-
բիկն անուն դարձեալ զի՞ եդին սոցա: [14]Մի՛ կարծեր զպատուականին
եւ սրբոյ իմաստնոյն Յակոբայ հայրապետին Մծբնայ, որպէս ինքեանք
այժմ համբաւեն: [15]Այլ է այսպէս. Յակոբ ոմն, զոր Աբդարայն անուա-
նեն, միաբանեալ ընդ Սեւերեայ Անդիոքացւոյ, ձեռնադրեցաւ եպիս-
կոպոս ի նմանէ՝ ոչ ի փրկութիւն ժողովրդոց, այլ յապականութիւն եւ
անուան Սեւերեայ ի սպասաւորութիւն տարածման: [16]Քանզի հրամա-
նաւ նորա, որպէս հրդեհ ինչ վաղվաղակի ընթացեալ ընդ ամենայն աշ-
խարհն ասորւոց, լնոյր քահանայիւք եւ սարկաւագաւք եւ եղեալ նո-
ցա հրաման՝ որպէս զհիմն ինչ խոստովանութեան հաւատոյ դաւանել
զՍեւերեայն հաւատ, բայց կոչել ի վերայ իւրեանց զանուն Յակոբայ.
եւ զայս նոցա ուսուցանել ամենեցուն, զորս մկրտիցեն եւ որոց քա-
րոզեսցեն: [17]Եւ այսու կոչմամբ խաբեալք՝ վարեցան մերձ յամս երկե-
րիւր կամ թէ եւս առաւելագոյն, ապա ընդ մեծին Գրիգորի Լուսաւոր-

չին հայոց նախանձեալք եւ յաւժարեալք, զի կոչեսցին յանուն նորա,
ի բաց կացին յառաջնոցն, ո՛չ յաղանդոյ, այլ յանուանց միայն, // [18]որ- 316ա
պէս զի պաճուճեալք վարդապետին ունողի զփառս՝ անուամբք թուեսցին ուղղափառք գոլ ըստ երկաշաւիղ սամարացւոցն ազգաց, ոյք երկրպագէին դիցն իւրեանց եւ երկնչէին ի Տեառնէ Աստուծոյ: [19]Պարտ էր սոցա ըստ անուանն Գրիգորի եւ զխոստովանութիւնն սիրել, բայց «ոչ կարէ ծառ չար պտուղ բարի առնել, եւ ոչ կարասցէ ոք ի փչոյ քաղել խաղող կամ ի տատասկէ՝ թուզ»:*

VII. [1]Բայց տեսցուք առ այսոքիւք, թէ վասն զի հակառակ միմեանց ունին բանք Յուլիանեայ եւ Սեւերեայ, ընդէ՞ր ապա հարքն սուրբք երկոքումք սոքաւք վարեցան հաւասարապէս յամենայն խոստովանութիւնս իւրեանց, ի ճառս հաւատոյ, [2]կամ թէ վասն զի՞նչ պատճառի Սեւերոս եւ Յուլիանէ զմի մի ի սոցանէ ընտրեցին ընդունել յանձինս եւ ոչ երկաքանչիւրք զերկոսին, կամ թէ մեզ պարտ իցէ՞ արդեաւք միում ումեք ի նոցանէ ձայնակցել, թէ՞ նմանապէս յերկոցունց հրաժարել, կամ թէ զերկոսին միանգամայն բարբառել: [3]Եւ արդ, եթէ առանձնաբար ասացեալ լինիցին այսոքիկ բառք, բազումս ունին վնասու եւ հայհոյութեան միտս եւ կարծիս, բայց հանդերձ միմեամբք ասել եւ իմանալ զասացելոցն զաւրութիւն՝ չինէ զլսողացն միտս, այսպէս եւ ըստ
այսմ աւրինակի ուղիղ համ//առաւտել զբանն: [4]Եթէ մարմինն Քրիս- 316բ
տոսի ոչ երկնային է ըստ բնութեան, քանզի ի Մարիամայ հաճեցաւ Բանն մարմին լինել, բայց վասն միաւորութեան Աստուածն Բանի ասի երկնային, եւ ոչ անմահ է ըստ բնութեան մարմինն, վասն զի ի մահկանացու էութենէ եղեւ անշփոթաբար խառնումն, սակայն յաղագս ընդ անմահականի գոյացութեան միաւորութեանն ասացեալ եղեւ ի հարցն անմահ: [5]Նմանապէս եւ այլն ամենայն, յորմէ ժողովին այսոքիկ. ըստ բնութեան երկրային՝ Տէրունականն մարմին, իսկ ըստ միաւորութեանն՝ երկնային, ժամանակեայ՝ ըստ բնութեան, իսկ ըստ միաւորութեան տնաւրինականի՝ անժամանակ, մահկանացուն՝ անմահ, եւ բովանդակելին՝ անպարագիր ըստ միաւորութեանն: [6]Քանզի ի վերայ անմարմին եւ անըմբռնելի Բանին եւ որքան ինչ է տեսանեմք զիւրոյ մարդկութեանն ասացեալ ի սրբոցն: [7]Լո՛ւր Աստուածաբանին Գրիգորի. «Անմարմինն մարմնանայ, Բան<ն> թանձրանայ, անչաւշափելին շաւշափի, անժամանակն սկսանի, անտանելին տարեալ լինի, Որդին որ-

* *Ղուկ. Զ 43*

դի լինի, այսինքն Աստուծոյն՝ մարդոյ»*: Եւ է մին ըստ բնութեան Բա-
317ա նին, իսկ միւսն՝ ըստ միաւորութեան // ընդ մարմնոյն, քանզի ի վերայ
Բանին մարմնացելոյ ոչ ինչ ըստ որոշման եւ առանձնաբար ի Գրոց
Սրբոց ասի: 8 Դարձեալ, նոյն ինքն հայրն սուրբ ի նմին բանի Տաւնա-
կանի ասէ. «Ո՛վ նոր խառնմանն, ո՛վ սքանչելի խառնուածին, որ էրն՝
լինի, եւ ստացիչն ստացանի, եւ անտանելին տարեալ լինի»†: 9 Քանզի
ի Յովհաննէ ուսաւ այսպէս ասել երանելին. «Որ էրն,— ասէ,— ի սկզ-
բանէ, զորմէ լուաք, որում ականատեսն իսկ եղաք, ընդ որ հայեցաք,
եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց»‡: 10 Տեսանե՞ս, զի
զմարմնոյսն ի վերայ Բանին առնու վասն անճառ միաւորութեանն.
«Եւ Կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյա-
ւիտենական կենացն, որ էրն առ Հաւր եւ երեւեցաւ մեզ»§: 11 Արդ, որ-
պէս մարմնականքն Քրիստոսի Բանին յարմարին ճշմարիտ միաւորու-
թեանն աղագաւ, այսպէս եւ որ ինչ Բանին է, մարմնոյ նորա լինին կար-
գաւորաբար ասացեալ վասն գեղեցկապէս եւ հաւաստի միաւորու-
թեանն. 12 ապա թէ ոչ, զիա՞րդ ինքն Տէր ասէ. «Ոչ ոք եկ յերկինս, եթէ
ոչ որ էջն յերկնից՝ Որդին Մարդոյ, որ էն յերկինս»¶: 13 Քանզի մարդ
յերկնից ոչ էջ, այլ Բան<ն> անմարմին, եւ Որդի Մարդոյ յերկինս ոչ
317բ էր յասելն զայս, այլ ընդ Նիկոդեմ//եայ յերկրի խաւսէր: 14 Իսկ եւ Պաւ-
ղոս զնոյն ստորին կողմ երկրի ասէ. «Որ էջն՝ նոյն է եւ որ ելն ի վերոյ
քան զամենայն երկինս»**. Եւ էջ Բան<ն> մերկ, բայց եկ մարմնով մարդ-
կայնով ըստ բնութեան: 15 Դարձեալ վասն մարմնոյն իւրոյ Տէրն. «Այս

---

* Ի Ծնունդն Քրիստոսի (ՄՄ N 946, թ. 177բ, N 948, թ. 177աբ. Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Ա, էջ 211–212): Տես St. Gregory Nazianzen, On the Theophany, or the Birthday of Christ, Nicean and Post-Nicean Fathers, Vol. 7, p. 345. Святитель Григорий Богослов, Слово 38, На Богоявление или на Рождество Спасителя; Собрание творений, т. 1, Свято-Троицкая Сергиева лавра, 1994, с. 522:

† Ի Ծնունդն Քրիստոսի (ՄՄ N 946, թ. 184ա, N 948, թ. 183բ): Տես St. Gregory Nazianzen, On the Theophany, or the Birthday of Christ, p. 349. Святитель Григорий Богослов, Слово 38, На Богоявление или на Рождество Спасителя, с. 529:

‡ Ա Յովհ. Ա 1

§ Ա Յովհ. Ա 2

¶ Յովհ. Գ 13

** Եփես. Դ 10

է հացն յերկնից իջեալ»: 16Այսպիսիք ամենեքեան զանպատմելի մի-
աւորութիւնն յայտ առնեն: 17Իսկ յորժամ մարդկաւրէնս ինչ բարբա-
ռիցի կամ կրիցէ՝ զ՚առ ի մարդկանէ ըստ բնութեան ունել մարմին եւ
հոգի եւ միտս: 18Եւ յորժամ աստուածաբար միայն հրամանաւ գործի-
ցէ՝ սաստելով ի դեւս կամ ասելով զբորոտն. «Կամի՛մ, սրբեա՛ց»† եւ
«Ղազարէ՛, ե՛կ արտաքս»‡, զբնութեամբ Աստուած գոլ Բանին ուսա-
նիմք: 19Ապա թէ զմեծամեծս եւ հրաշափառագոյնս գործակցութեամբ
մարմնոյն կատարեսցէ, որպէս մինչ ձեռն տալ զոքանչին Սիմովնի եւ
յարուցանել ի սաստիկ տապոյն կամ զնոյն ինքն զՊետրոս՝ հանդեր-
ձեալ ընկղմիլ ի սաստկութենէ ալեացն եւ հողմոյն, փրկել ձեռամբ եւ
զմատունսն արկանել ի խլացելոյն ականջս եւ զլեզուոյ համերն բուռն
հարկանել, եւ որքան սոցա իցեն ազգակիցք, զմիաւորութեան անքա-
կութիւն յայտնապէս ցուցանէ: 20Վասն որոյ ասէ երանելին Բասիլիոս
ի տրամաբանելն, // թէ՝ «Բնութեամբ է մարդկային մարմինն Քրիստո- 318ա
սի, իսկ միաւորութեամբ տնաւրէնութեան՝ աստուածային»§: 21Իսկ
իմաստունն Գրիգորիոս՝ «Ամենեքեան սոքա, որք մի անգամ երկնային
զտէրունական մարմինն անուանեն,— ասէ,— յաղագս առ Աստուածն
Բան միաւորութեանն ասեն»¶: 22Իսկ միաւորութիւնն այն ոչ շփոթու-
թիւն եւ լուծումն ընդունի: 23Որպէս վկայէ ձայնակցելով սրբոցն ամե-
նեցուն Ոսկեբերանն Յովհաննէս. «Մի՛ շփոթեսցուք եւ մի՛ անջրպետ
ի մէջ արկցուք, քանզի միութիւնն խոստովանիմ եւ ոչ քայքայումն
ինչ կամ լուծումն այսր բնութեան յայն կամ այնր՝ յայս, այլ միացեալ,
մի եղեալ»**: 24Քանզի թէպէտ եւ խոստովանիմք զԲանն մարմին եղեալ՝
ըստ Յովհաննու ձայնին, ոչ շփոթութիւն կրել Բանին իշխեմք ասել,
բայց միայն զիւրն ամբողջ ըստ բնութեան պահեալ էութիւն եւ անքա-
կաբար միացեալ ըստ ճշմարտութեան ընդ իւրումն մարդկութեան:
25Որպէս իմաստունն ասէ Կիւրեղ՝ հայրապետ Աղեքսանդրացւոց քա-
ղաքին ի խոստովանիլն իւրում, թէ՝ «Եղեւ Բանն մարմին, ոչ եթէ շփո-
թութիւն ասեմք բնութեանցն, այլ կացեալ մնացեալ անքակաբար եւ

* *Յովհ. Զ 50, 59*

† *Մատթ. Ը 3*

‡ *Յովհ. ԺԱ 43*

§ *Կնիք հաւատոյ ընդհանուր սբ Եկեղեցւոյ, Անթիլիաս, 1998 թ. (= ԿՀ), էջ 86–87. ԽԹ, էջ 125, 158*

¶ *ԽԹ, էջ 158*

** *ԽԹ, էջ 159*

318բ անշփոթապէս ի վեր քան զմիտս եղելոց»*: // [26]Եւ Պրոկղոս Կոստան-
դինու հայրապետն. «Ի միասին,— ասէ,— եկին բնութիւնք, եւ առանց
շփոթութեան եկաց միաւորութիւնն»†: [27]Եւ այլ բիւրք վկայութիւնք
են ի գիրս հարցն սրբոց անշփոթ եւ անայլայլելի ճշմարիտ միաւորու-
թեանն այնորիկ՝ անանջատականի եւ անքակելոյ, յորոց գոյ իմանալ
ուսումնասիրաց եւ ցանկացողաց ճշմարտութեանն, թէ ոյք են ըստ
բնութեան ասացեալքն եւ ոյք՝ ըստ միաւորութեան, որովք երկոքումբք
համանգամայն պարտ էր Սեւերեայ եւ Յուլիանեայ ուղեւորիլ ի միա-
սին առ հաւատոյն բան, յորմէ մոլորեալք եւ ըստարտուղեալք իւրա-
քանչիւր ոք ի նոցանէ՝ գտան հակառակ ճշմարտութեանն եւ միմեանց:
[28]Քանզի Սեւերոս, անգիտացեալ ամենեւին զեղանակ անճառելւոյ մի-
աւորութեանն, զհասարակականի մարդոյ իրս եւ իմաստս իշխեաց առ-
նուլ ի վերայ Տեառն՝ զմարմին նորա զկենարար փոփոխելի ասելով եւ
ապականացու մինչեւ ցյարութիւնն եւ զմարդկային կամաւորաբար եւ
անպարսաւ կիրսն ապականութիւն անուանէ որպէս Թէոդոտոսն, զորս
պարտն էր ասել տնտեսութիւն անճառելի եւ խորհուրդ սքանչելի ի
319ա փրկութիւն ամենայն հաւատացելոց՝ // ըստ առաքելոյ բանին‡: [29]Իսկ
Յուլիանէ ոչ իմացեալ զԲանին Աստուծոյ ի մարդկային բնութենէն Աս-
տուծոյ մարդեղութիւն՝ յանդգնեցաւ ասել մարմին հրեշտակական եւ
երկնային ունել նմա: [30]Զոչն է եւ զոչն անուանելի, քանզի ոչ միայն
ասաց անչարչարելի եւ անմահկանացու զՓրկչին մարմինն, այլ եւ
անեղ եւ անսկիզբն եւ անժամանակ՝ ոչ զգուշացեալ, եթէ պատճառս
տայ անպատճառ եւ հերձուածողական կարծեաց, վասն զի անեղ ասել
եւ անժամանակ կամ անսկիզբն՝ Աստուածութեան Երրորդութեանն
վայել է: [31]Իսկ վասն Բանին Աստուծոյ մարմնացելոյ ասէ առաքեալ
այսպէս. «Իբրեւ եկն լրումն ժամանակաց, առաքեաց Աստուած զՈր-
դին իւր, որ եղեւ ի կնոջէ եւ եմուտ ընդ աւրինաւք»§: [32]Զի թէ անսկիզբն
իցէ մարմինն եւ անեղանելի կամ առանց ժամանակի, այն, որ ի լրման
ժամանակաց գործեցաւ անճառելի տեսչութեամբ աստուածայնով, ապա
եղիցի չորրորդութիւն Երրորդութիւնն. [33]իսկ եթէ մարդ սոսկ իցէ ծնեալն
ի Մարիամայ Կուսէ սրբոյ եւ ապականացու մինչեւ ի յարութիւնն,

* ԽԹ, էջ 159
† ԽԹ, էջ 159
‡ Տես Հռոմ. Ա 16:
§ Գաղ. Դ 4

ապա ամենեքեան, որ յետ յարութեանն զգենլոց են զանապականութիւն, եղիցին քրիստոսք եւ յիսուսք: [34]Եւ ո՞ւր է Միածինն. եւ դարձեալ՝ ոչ // Բանն մարմին եղեւ, այլ ոմն մարդ աստուածացաւ, եւ ոչն 319բ
ըստ բնութեան «աստուածն» եղեւ աստուած ըստ շնորհի: [35]Եւ չորրորդութիւն դարձեալ պաշտիցի յեկեղեցւոջ՝ յերիցն ըստ բնութեան Աստուածոց անբնաւոր ոմն «աստուած» եւ պիտակ՝ եղեալ աթոռակից եւ համաստուած, շնորհաւք որդիացեալ որպէս մարդիկ եւ ոչ ըստ բնութեան, անուանեալ միայն եւ ոչ էապէս Աստուած, սկսեալ գոլ եւ անուանել «աստուած», եւ ոչ անեղանելի եւ ի բնէ Աստուած՝ ընդ ամենայն հաւատացեալս կոչելով ըստ շնորհի Հայր Աստուած եւ ոչ ըստ բնութեան, մարդ ոմն աստուածազգեաց ըստ Մովսէսի եւ Սամուէլի եւ այլոց սրբոցն, եւ ոչ Աստուած ըստ ճշմարտութեան, ոչ Տէր տանն, այլ ի տանէն ինքն որպէս Մովսէս, ոչ տանն արարիչ, այլ արարած ըստ տանն: [36]Ստեաց ապա Յովհաննէս՝ «Բանն մարմին եղեւ», քանզի պարտ էր ասել ըստ մոլորելոցն, թէ մարդն Աստուած եղեւ: [37]Զայսոսիկ Պաւղոս Սամոստացի, զայսոսիկ եւ Դիոդորոս Տարսսացի, եւ Մոփսուեստացին Թէոդորոս, զայս եւ ամբարիշտն Նեստորիոս: [38]Զի թէ ըստ աւրինակի այլոց էր ծնունդն՝ ի ցանկութենէ եւ ի քնոյ եղելոյ եւ ի կամաց մարմնոյ, այսինքն յամուսնութենէ, ասասցի ապականակիր, իսկ եթէ աւրէնք բնութեանն // քակտեցան ի ծննդեան նորա միայն, ո՞ւր երեւեսցի ի նմա հետ ապականութեան: [39]Լուա՞ր զԱթանասին, զի ասէ.* 320ա
«Մարմնանալն Քրիստոսի յանամուսնութենէ եւ առանց մեղաց էր, եւ ո՛չ գտաւ ի նմա ապականութիւն»†, քանզի Աստուած էր՝ մարմնացեալ ի Կուսէ, Քրիստոս: [40]Ասէ դարձեալ նոյն Աթանասիոս. «Զի թէ Այն, որ եկն նորոգել իւրով մարմնով զմարմինս մահկանացու, ըմբռնեցաւ յապականութենէ, իսկ զիա՞րդ կապեաց զհգաւրն եւ փրկեաց ի նմանէ զանձինս որդւոց մարդկան, եւ եթէ զմեղս աշխարհի ասաց բառնալ, որ է մայր ապականութեանն, իսկ զիա՞րդ ասիցեն մոլորեալքն, եթէ ապականացու էր մարմինն Քրիստոսի»‡: [41]Ասէ եւ Գրիգոր Սքանչելագործ՝ եպիսկոպոսն Նէոկեսարու. «Որ ոչ խոստովանի զնա անյեղլի հոգւով,

* *Յովհ. Ա 14*

† *ԽԹ, էջ 118, 132. «Գանձասար» Բ, էջ 201*

‡ *«Գանձասար» Բ, էջ 201*

անապականելի մարմնով, որպէս եւ գրեալ է, նզովեա՛լ եղիցի»: 42Եւ դարձեալ, զի ասէ. «Մարմին նորա ոչ ետես զապականութիւն»†: 43Եւ այդոքիկ սրբոցն:

VIII. 1Բայց տեսցուք եւ այսպէս, սիրելի՛, եթէ յետ յարութեա՞ն եղեւ անապական Քրիստոս: 2Ո՞ էր, որ նախ քան զչարչարանսն զապականեալ ի գերեզմանի մարմինն Ղազարու առանց ապականութեան
320բ այսրէն դարձոյց, եւ զի՞ թողից զայլն ամենայն մեծամեծս, // զոր առնէր յառաջ քան զյարութիւնն, անապական ասացեալ յոմանց Քրիստոս, եւ ըստ մերում դաւանութեան՝ Աստուած ճշմարիտ նոյն ինքն: 3Ո՞ դարձեալ, որ ի խաչին բեւեռեալ գոլով՝ զբազմաժամանակեայ ապականութեամբ հողացեալ մարմինս սրբոցն յարոյց, որք եւ յետ յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց: 4Բայց սքանչելին Պետրոս ոչ պատկառէր ասել «Որդի Աստուծոյ»‡: 5Այլ մեք խոստովանեսցուք զնա Աստուած ճշմարիտ անդստին յորովայնէ Կուսին նախ քան զխաչն եւ զյարութիւնն եւ մինչեւ յաւիտեանս յաւիտենից, վասն զի «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսաւր, նոյն եւ յաւիտեանս»§: 6Իսկ զկամաւորաբար մարդկային կիրսն՝ զքաղցն եւ զծարաւն եւ զայլն ամենայն մի՛ ոք իշխեսցէ անուանել ապականութիւն, այլ տնտեսութիւն փրկական, քանզի էր համանգամայն ե՛ւ Աստուած, ե՛ւ մարդ նոյն ինքն եւ ոչ երկու դէմք: 7Իսկ մարմին նորա թէպէտ եւ էր ըստ բնութեան մարդկային, այսինքն ի մերմէ մարդկային էութենէ եւ մահկանացու եւ ոչ երկնային մարմին ինչ կամ հրեշտակական, այլ ըստ միաւորութեանն եղեւ աստուածային, վասն զի իւրացոյց Բանն զոր ի Մարիամայն
321ա է//առ՝ մտաւոր եւ անձնական մարմին, եւ է իւր նորա յատուկ մարմինն, որպէս իւրաքանչիւր ուրուք մարդոյ իւր ասի մարմինն իւր: 8Քանզի ճշմարտապէս միաւորեաց Բանն ընդ ինքեան զմարդկութիւնն, եւ այսր աղագաւ ասացին հարքն. «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ»¶: 9Զի յերկուս անձնական բնութիւնս որոշել զՔրիստոս եւ յեր-

* «Գանձասար» Բ, էջ 198. Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հաւաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի, Ս. Էջմիածին, 1908 թ. (= ՏԿ), էջ 190

† Գործ. Բ 31, ԺԳ 35

‡ Մատթ. ԺԶ 16

§ Եբր. ԺԳ 8

¶ Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899 թ., Աթանասի ասացեալ արտադրութիւն առաքելա-

կուս կամս եւ ներգործութիւնս՝ երկուց դիմաց ունի նշանակութիւնս, որով լինի չորրորդութիւն երրորդութիւնն, որպէս վերագոյնն ասացաք: [10]Երկոքումբք սոքաւք վարել պարտ է միանգամայն՝ բնութեան իրաւք եւ միաւորութեան ի վերայ Քրիստոսի, զի էր մարմինն անձնաւոր մարդկային, քանզի մարդ էր Մարիամ, յորմէ մարմինն, իսկ ըստ միաւորութեանն՝ աստուածային, որպէս յոլովակի ցուցաւ: [11]Յապականացու բնութենէ առեալ՝ եղեւ անապական, ի մահկանացուէ՝ անմահ ըստ միաւորութեան տնաւրինականի, այլ մեռեալ ճշմարտապէս վասն մեր իւրովն մարմնով՝ կամաւ եւ ոչ ի հարկէ՝ Բանին յիւրն բնութիւն ըստ էութեան ոչ ինչ կրեալ վասն անչարչարականն գոլոյ ըստ էութեան: [12]Սակայն վասն իւրութեան մարմնոյն նորա ասին չարչարանքն եւ մահն եւ այլն ամենայն, զոր կրեացն մարմն//ով, քանզի մա- 321բ
հուամբ մարդոյ փրկութիւն լինել մարդկան անհնար էր: [13]Աստուծով փրկեցաք, քանզի Աստուած է խաչեալն եւ ի չարչարանսն անչարչարելի մնացեալ, եւ ոչ է պարտ զբանս Գրոց կամ զկիրս, զոր ինքն կրեաց, եւ զգործս, զոր գործեաց, յերկուս բաժանել եւ դնել զոմանս Աստուծոյ լոկոյ եւ զոմանս՝ մարդոյ առանձին, [14]այլ զամենայն՝ թէ՛ բարձրագոյնք իցեն եւ թէ՛ խոնարհագոյնք, Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որպէս յառաջնում քան զայս թղթին ցուցաք, ուր եւ զԿիւրղի զերկոտասան գլուխսն յաղագս այդորիկ գրեալ առ Նեստոր կարգեցաք: [15]Իսկ զի Եւտիքէս ասաց. «Խոստովանիմ զԲանն Աստուած՝ յարգանդի Կուսին կերպացեալ, տպաւորեալ ի պատկեր մարդոյ, այլ ոչ եթէ յարարածական բնութենէս յինքն խառնեաց, զի անխառն է Աստուածութիւնն եւ անյաւդական»†: [16]Ուրանայ սա յայտնապէս զմարդեղութիւն Բանին Աստուծոյ՝ առ աչաւք եւ նմանութեամբ իմն ասելով եւ իբրեւ ընդ ցնցուղ անցեալ ընդ Մարիամ, որպէս ջուր ի փողոյ կամ ոսկի ի կաղապարէ եւ այլ ինչ նոյնպիսի. ձեւ միայն եւ ոչ բնութիւն գոյացութեան առնու որպէս սահմանելով: [17]Սակայն զայսպիսի*
գործիս ուղղաւանն Գրիգոր Աստուած//աբան յառաջ քան զնա յո- 322ա
լովիւք ամաւք կշտամբեաց՝ ասելով այսպէս. «Եթէ ոք իբրեւ ընդ խո-

կան՝ յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանի (= Աթանաս), էջ 281

* *Ակնարկում է [ԺԴ XXIV 1 – XXVII 3], ուր Կիւրեղի որոշ նզովքներ բացակայում են՝ ըստ երեւոյթին ձեռագրական աղաւաղումների պատճառով:*

† *ԽԹ, էջ 174*

*զովակ անցեալ ասէ, այլ ոչ ի նմանէ ստեղծեալ իւր մարմին աստուածաբար, միանգամայն եւ մարդկաւրէն՝ աստուածաբար, զի առանց առն, եւ մարդկաւրէն, զի աւրինաւք ծննդեան, նզովեսցի»**: [18]*Արդ, պարտ է ոչ ուրանալ Բանին մարմնացելոյ՝ կրեալ զմերս տնաւրինաբար, բայց զապականութիւն մեր, որ ի կրիցն եղեալ ի մեզ, ոչ կրեաց անապականագործն Քրիստոս, որում փառք յաւիտեանս:*

<ԺԳ>

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ

I. [1]*Յառաջնում քան զայս զոր խնդրեցեր մատենի ըստ կարողութեան արարի, ըստ բանին հաւատոյ, ըստ սրբոց հարցն աւանդութեան, ժողովումն:* [2]*Բայց զի վասն չարափառացն դժնէութեան զվկայութիւն Սրբոց Գրոց, որ յաղագս խաչելութեանն փրկական Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրամայեցեր սակաւուք տալ առ ի յանդիմանութիւն անհանճարութեան նոցա, առաքեցի ձեզ համառաւտագոյն՝ մերձ եղեալ եւ զհարցն ուղղափառաց, որքան դիպողագոյն ժամուս եւ ձեր խնդրոյ էր բան:* [3]*Բայց կարեւոր է նախ զկարծեաց նոցա յայտնել դարձեալ զամբարշտութիւն, ոչ զի ջատագով աստուածայնոյն լինիցին բնութեան՝ ու-*
322բ *բանալ//ով զչարչարանսն, այլ զի յառանձնական մարդ զչարչարանսն, որպէս զբնաւ իսկ զտնօրինականսն կրթեսցեն եւ եղծանիցեն զփրկութեան մերոյ խորհուրդ, որ ի ձեռն չարչարանաց Որդւոյն Աստուծոյ, զսերմանեալն ի Նեստորէ եւ անպատկառապէս քարոզեալ ի ժողովոյն Քաղկեդոնի զերկակացն բան ի վերայ միոյն Քրիստոսի:* [4]*Յոյժ հռչակեցուցանեն յիմարաբար յարակցութիւն միայն մարդոյ առ Աստուածն Բան եւ ոչ Բանին մարմին լինել ըստ Յովհաննու խոստովանին:*

II. [1]*Արդ, զի բաւականապէս տուան ձեզ յաղագս երկուց բնութեանց յատկապէս ի նոցանէ ասելոյն լուծմունք եւ հակաբանութիւնք, ի հայցելին ձեզ եկեսցուք:* [2]*Ասեմք չարչարեալ զԲանն ոչ ըստ ինքեան եւ յիւր բնութիւն, այլ իւրով մարմնովն, եւ ոչ այլոյ ուրուք զմարմինն գիտեմք, այլ իւր Բանին, քանզի յատուկ նորա էր:* [3]*Զի թէպէտ եւ ան-*

* *ԽԹ, էջ 174*

չարչարել<ի> էր ըստ ինքեան Բանին բնութիւն, սակայն յաղագս անբաժանելի միաւորութեանն ընդ մարդկայնոյն բնութեան իւր ինքեան ասին ամենայն տնաւրինականքն կիրք: [4]Եթէ ոչ մարդացաւ Բանն ըստ ճշմարտութեան, այլ ի մարդ բնակեաց, ոչ ապա չարչարեցաւ: [5]Իսկ
եթէ անճառ միաւ//որութեամբ ճշմարտապէս մարդ եղեւ՝ զԱստուածու- 323ա
թեանն ոչ այլայլեալ բնութիւն ամենեւին, ուրեմն ինքն չարչարեցաւ՝ յանչարչարութիւն ոչ վնասեալ: [6]Եւ եթէ երկու իցեն որդիք՝ ոմն՝ յԱստուածոյ Հաւրէ եւ ոմն՝ ի Մարիամայ, ոմն՝ ըստ բնութեան եւ ոմն՝ ըստ շնորհի, որպէս ասեն նոքա, ապա ոչ Աստուծոյ են չարչարանքն, այլ մարդոյ միայն՝ առասութեամբ անուան որդւոյ պատուեցելոյ, որով ոչ եղիցի փրկութիւն: [7]Այլ վասն զի մի է Միածինն, թէ եւ մարմնացաւ, նորա չարչարանաւքն փրկեցաք: [8]Լո՛ւր նմին ինքեան, որ ասացն. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ». յայտ է, թէ ի չարչարանս եւ ի մահ խաչի: [9]Յորմէ ուսաւ եւ Պաւղոս. «Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա»†. [10]ոչ երկրորդ եւ ըստ շնորհաց որդւոյ, քանզի ոչ այնպէս գիտէ Պաւղոս եւ ոչ քարոզէ այսպէս, այլ Միածնի եւ ըստ բնութեան Որդւոյ՝ մարդ եղելոյ յԱստուածածնէն Մարիամայ, զորմէ ասէ վասն Հաւր, թէ՝ «Յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա»‡:*

III. [1]Զի՞նչ առ այսոսիկ կարասցեն ասել ոչ փրկեալքն կամ ո՞ւր դիցեն զասելն Յովհաննու վասն Բանին մարմնացելոյ եւ չարչարելոյ. «Սա է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենական»§: [2]Ո՞յր ի
// մարդկանէ մահ կարաց կամ կարասցէ տալ փրկութիւն աշխարհի: 323բ
[3]Եւ եթէ յանուն Քրիստոսի կոչիմք քրիստիանոսք, եւ նա է ծնեալն ի Կուսէ եւ չարչարեալն, որպէս ասէ մեծն Պետրոս. «Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր»¶, զիա՞րդ կոչեն զանուն նորա ի վերայ ինքեանց, թէ սոսկ մարդ իցէ, աւտարացեալքն ի Բանէն մարմնացելոյ, քանզի յանուն մարդոյ անուանեալքն ոչ են աստուածապաշտք: [4]Իսկ մեք Աստուծոյ խոստովանիմք զմահն, որպէս զամենայն գործս եւ կիրս նորա, եւ յանուն Աստուծոյ անուանիմք, վասն զի ուսաք ի Թովմայէ

* *Յովհ. Գ 16*
† *Հռոմ. Ե 10*
‡ *Հռոմ. Ը 32*
§ *Ա Յովհ. Ե 21*
¶ *Ա Պետ. Դ 1*

զբեւեռեալն ի խաչին եւ աշտէիւ խոցեալն Տէր եւ Աստուած խոստո-
վանել մեր*: [5]Զորմէ եւ Յովհաննէս աստուածաբանէ. «Որ էրն ի սկզ-
բանէ, զորմէ լուաքն, որում եւ ականատեսն իսկ եղաք, ընդ որ հայե-
ցաք, եւ ձեռք մեր շաւշափեցին ի վերայ Բանին կենաց»†: [6]Արդ, ո՞ր-
պէս ականատեսի անտեսանելին, եւ Բանն շաւշափիլ ձեռաւք ասի:
[7]Յաղագս ընդ մարմնոյ միանալոյն. այսպէս չարչարի Անչարչարե-
լին եւ մեռանի Անմահն, ոչ ինչ յիւրոցն եւ զիւր, զի այսպէս ասացից,
եւ զինքն այլայլեալ կամ փոփոխեալ. [8]զի որպէս ոչ յեղաւ այլայլեալ
մարմինն յանմարմնութիւն ըստ բնութեան, այլ աստուածացաւ միա-
324ա ւորութեամբն ընդ Բանին, այսպէս եւ Բանն ոչ փոփոխ//եցաւ յինքե-
նէ եւ յիւրոցն բնաւորականաց, թէպէտ եւ մարդ ըստ ճշմարտութեան
եղեւ եւ չարչարեցաւ: [9]Յաղագս այսորիկ ասեմք զնա Աստուած հա-
մանգամայն եւ մարդ զնոյն, անտեսանելի եւ տեսանելի, անշաւշա-
փելի եւ ըմբռնելի, անչարչարելի եւ չարչարելի, Հաւր իմաստութիւն
եւ զաւրութիւն՝ անգիտացեալ առ տկարանալովն, Որդի Աստուծոյ եւ
Որդի Մարդոյ, քաղցեալ եւ լցուցիչ քաղցելոց, ծարաւի եւ աղբիւր կե-
նաց, այլ եւ աղբիւրացուցիչ զծարաւիս: [10]Եւ ոչ ինչ ըստ մասին բա-
ժանելով դնեմք առանձին Աստուծոյ եւ առանձին մարդոյ, քանզի «մի
Տէր մեր Յիսուս Քրիստոս»‡: [11]Մի՞ արդեաւք անգիտացաւ Պաւղոս՝
«զՏէրն փառաց ի հրէից խաչեալ»§ ասելով, եւ ոչ զոր ի հրէից մարդ
նոքա անուանեն, եթէ Տէր փառաց է խաչեալն, ոչ է ապա մարդ յա-
տուկ: [12]Ասէ եւ երանելին Գրիգորիոս. «Արիւն Աստուծոյ եւ չարչա-
բանս լսելով՝ մի՛ անաստուածաբար ի վայր անկցիս, իբրեւ Աստուծոյ
ջատագով»¶: [13]Անաստուածութեան ուրեմն է գայթակղելն ի չարչա-
բանս Փրկչին: [14]Որոց դիւրին է, զոր ինչ կամիցին՝ ասել եւ զախորժակս
մտաց իւրեանց աւրէնս սահմանել հակառակ աւրինաց Հոգւոյն Սրբոյ
եւ հարցն աւանդութեան: [15]Լո՛ւր եւ միւսոյ բանի նորին առն սրբոյ՝
«Աստուած խաչեալ,— ասէ,— արեգակն խաւարեալ... արիւն եւ ջուր
324բ ի կող//ից հեղեալ. մին՝ իբրեւ մարդոյ եւ միւսն՝ առաւել քան զմար-

* Տես Յովհ. Ի 28:
† Ա Յովհ. Ա 1
‡ Ա Կոր. Ը 6
§ Ա Կոր. Բ 8
¶ Սբ Գրիգոր Աստուածաբան, Ի սուրբ Պասքայ, ՄՄ 946, թ. 116բ. ԿՀ, էջ 352 (որոշ խմբագրութեամբ). ՏԿ, էջ 142 (այլ խմբագրութեամբ)

դոյ»: [16]Յայտնապէս զանամաւթիւն նոցա խայտառակելով՝ ցուցանէ զՁարչարեալն Աստուած գոլ, զի ոչ զվայելչականն միայն մարդոյ զարիւնն, այլ եւ ջուրն հոսեալ ի կողից տեսանեմք, որով ցուցանի ճշմարտութիւն Աստուածութեան նորա: [17]Ոչ ասեմք չարչարելի զԱստուածութիւն ըստ բնութեան եւ ոչ մարդ սոսկ զՁարչարեալն, այլ զբովանդակն՝ Աստուած ճշմարիտ: [18]Քանզի անչարչարականի էութեան բնաւորապէս միացեալ ընդ չարչարականին՝ իւրացոյց զնորայն, վասն որոյ միոյ եւ նորին զամենայն խոստովանիմք եւ ըստ մասին ոչ ինչ բաժանեմք զՔրիստոսի ո՛չ գործս եւ ո՛չ բանս եւ ո՛չ կիրս, զի «մի է Տէր մեր Յիսուս Քրիստոս»†: [19]Վկայեն եւ տարերք անշունչք եւ մարմինք սրբոց յարուցեալք ի գերեզմանաց Աստուածութեան Խաչելոյն. [20]զի ի վեց ժամէ աւուրն խաւարեցաւ արեգակն մինչեւ յինն ժամն, երկիր շարժեցաւ, վէմք պատառեցան, վարագոյր տաճարին ցելաւ յերկուս, եւ յարուցեալքն ի գերեզմանաց յետ յարութեան նորա մտին ի քաղաքն եւ երեւեցան բազմաց, եւ յայտնութիւն կամաւոր եւ աստուածային չարչարանաց նորա, զոր ուրանան հերձուածողք: [21]Քանզի որպէս լսելոց ահա ի մաւտոյ էք զհայհոյութեան նոցա բարբառս համ// 325ա
առաւտիւ: [22]Զհակառակս խորհելով Գրոց Սրբոց եւ հարցն աւանդութեան եւ նախ առաջին՝ Աստուծոյ ինքեան՝ մարդ սոսկ չարչարեալ ասեն, զոր եւ տաճար Բանին եղեալ անուանեն եւ ոչ զԲանն մարմին եղեալ առանց յեղման եւ այլայլութեան եւ զՈրդին Աստուծոյ յՈրդի Մարդոյ խոստովանեն, զԱնսահմանելին՝ սահմանեալ եւ զԱնտանելին՝ տարեալ մարմնով, զնոյն ինքն չարչարեալ կամաւորութեամբ, թաղեալ եւ յարուցեալ եւ ամբարձեալ յերկինս եւ հանդերձեալ գալ՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս, որպէս ուսաք եւ հաւատամք:*

Հինգերորդ գլուխ հայհոյութեան ի թղթոյն Ղէովնեայ

IV. [1]*«Քանզի ներգործէ երկաքանչիւր կերպ ընդ միւսումն հաւասարութեամբ, որ յատուկ ընկալաւ, զի Բանին գործողի գայն, որ է Բանին, իսկ մարմնոյն կատարողի, որ է մարմնոյն, քանզի ոմն նոցա բացափայլէ սքանչելագործութեամբ, իսկ ոմն ընդ թշնամանաւք ստո-*

* *Սբ Գրիգոր Աստուածաբան, Ի սուրբ Պասքայ, ՄՄ 946, թ. 126ա. ԿՀ, էջ 353 (աննշան խմբագրութեամբ)*

† *Ա Կոր. Ը 6*

բանկի»: [2]Այս Ղէովն Հռոմայեցի՝ աշակերտ ուսմանն Նեստորի, զնորայն հաստատել կամելով, գրէ առ Փղաբիանոս աղանդակից իւր՝ եպիսկոպոս Կոստանդինուպալսի, զտասն եւ չորս գլուխ իւրոյ հայհոյութեանն, հակառակ Եւտիքոսի վանապետի, որ առ աչաւք զմարմնաւոր//թիւն Տեառն ասէր՝ զհայհոյութիւնն հայհոյութեամբ խափանել կամելով. [3]զոր ընթերցեալ յերկրորդ ժողովին Եփեսոսի՝ նզովեցին միաբան զթուղթն եւ զորս այնպէսն խորհին եւ լուծին ի պատուոյ քահանայութեան եւ զայլս ոմանս համախոհս նորին: [4]Իսկ յետ մահու թագաւորին Թէոդոսի ժողովեալքն ի Քաղկեդոն ընկալան զթուղթն կործանական եւ զլուծեալսն ի քահանայութենէ զԹէոդորիտոս եւ զՓղաբիանոս եւ զայլսն, քանզի աչառանաւք ամբարշտին Մարկիանոսի ուրացան զճշմարիտ Թագաւորն: [5]Եւ յոլովք յերկեղէ ըմբռնեալք սպառնալեաց գլորեցան ի ժողովոյն, բաժանեցին ըստ խոտեալ թղթոյն զմին Քրիստոս յերկուս, կերպ եւ կերպ՝ ըստ որոշման անուանելով եւ ի վերայ երկաքանչիւրոցն զանազանապէս բաժանելով զգործսն եւ զբանս եւ զոմն ումեմն կցորդելով, որպէս այլ այլուսմ: [6]Եւ տե՛ս՝ զիարդ ճայնակիցք են ամենեքեան մոլորեալքն յամբարշտութիւն:*

325բ

Նեստորի հերձուածողի վեցերորդ հայհոյութիւն

V. [1]«Զայս Յիսուս յարոյց Աստուած»†,— ասէ. զերեւելիս եւ զայս զտեսանելիս աչաց, զբեւեռեալն ի փայտի, զշաւշափեալն ի ձեռացն Թովմայի՝ զ՚առ նա աղաղակիչն: [2]«Շաւշափեցէք զիս եւ տեսէք, զի ոգի մարմին եւ ոսկերս // ոչ ունի, որպէս զիս տեսանէք ունել»‡: [3]Եւ այսոցիկ աշակերտն հաւանեալ ճայնից եւ շաւշափմամբ խաչեցելոյն մարմնոյ հաւանեալ յաղագս յարութեան՝ զսքանչելագործն փառաւորէր զԱստուած՝ «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ»§՝ ո՛չ զշաւշափեալն ասելով Աստուած, քանզի ո՛չ շաւշափմամբ գտանի Աստուած»¶: [4]Զսոյն զայս

326ա

* *ՏԿ, էջ 78 (աննշան խմբագրութեամբ. որ- որպէս (ՏԿ), կատարող- կատարել (ՏԿ))*

† *Գործ. Բ 32*

‡ *Ղուկ. ԻԴ 39*

§ *Յովհ. Ի 28*

¶ *ՏԿ, էջ 79: Թէպէտեւ տառացիօրէն հետեւում է ՏԿ-ին, սակայն խմբագրուած եւ մաքրուած է յունաբանութիւններից (բեւեռեալ- առբեւեռեալ (ՏԿ), շաւշափմամբ- որոնմամբ (ՏԿ), ասելով- առասելով (ՏԿ), սքանչելագործ- հրաշարար (ՏԿ)):*

եւ որ սոյնպիսիք իցեն սահմանեցին եւ ի Քաղկեդոն ժողովեալքն՝ առատքն ի չարութիւն:

Նորին Նեստորի յերրորդ մատենէն ի տասներորդ գլխոյն

VI. [1]«Արդ, եթէ միայն գոյր Աստուած, պարտ էր ասել Ապողինարիէ. «Զի՞ զիս խնդրէ<ք սպանանե>[*]լ՝ զԱստուած, որ զճշմարտութիւնն ձեզ խաւսեցայ»[†]: [2]Սա, որ զի փչոցն ընկալաւ պսակ, սա ասողն՝ «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր զիս ի բաց թողեր»[‡], սա երեքաւրեայ թաղմանն համբերեաց»[§]:*

Թեոդորիտեայ հերձուածողի ի հակաճառութենէ
ԲԺ-երորդ նզովիցն հայհոյութիւնք

VII. [1]«Կիրք կրելոյն յատուկ, քանզի <Ան>կրելին կրիցն է վերագոյն: [2]Կրեաց այսուհետեւ ծառային կերպ՝ ընդ նմա գոլով, յայտ է զի՝ Աստուծոյ կերպին»[¶]:

Եւ դարձեալ

VIII. [1]«Ուրեմն ո՛չ Աստուած ախտակրեալն, այլ ի մէնջ առեալն յԱստուծոյ մարդ, վասն որոյ երանելին Եսայիաս գոչէ. «Մարդ ի հարուածս»[**]: [2]Եւ ինքն Տէրն Քրիստոս առ հրեայսն ասէր. «Զի՞ զիս սպանանել խնդրէք՝ զմարդ, որ զճշմարտութիւն ընդ ձեզ խաւսեցայ»[††]: [3]Արդ, սպանանի ո՛չ ինքն կենդանութիւնն, այլ զմահկանացուն ունող բնութիւն: [4]Եւ զայս ուսուցանելով այլուր Տեառն՝ առ հրեայսն ասէր. «Քակեցէ՛ք զտաճարս // զայս եւ յերիր աւուր յարուցանեմ զդա»[‡‡]: 326բ

---

* *Ըստ ՏԿ-ի*

† *Յովհ. Է 20, Ը 40*

‡ *Մատթ. ԻԷ 46*

§ *ՏԿ, էջ 79: Տառացիօրէն հետեւում է ՏԿ-ին աննշան ուղղումներով (երեքաւրեայ- եռաւրեայ (ՏԿ)):*

¶ *ՏԿ, էջ 79–80: Տառացիօրէն հետեւում է ՏԿ-ին:*

** *Ես. ԾԳ 3*

†† *Յովհ. Ը 40*

‡‡ *Յովհ. Բ 19*

[5]Ուրեմն քակեցաւ ի Դաւթայն, իսկ յարոյց զսա զքակեալս ի Հաւրէ անախտաբար ծնեալն՝ նախ քան զյաւիտեանս ի Հաւրէ ծնեալն միածին Աստուածն Բան»:*

Ի սահմանէ ժողովոյն Քաղկեդոնի հայհոյութիւնք

IX. [1]«Զմին եւ զնոյն Քրիստոսն Յիսուսն՝ զՈրդին եւ զՏէրն, զՄիածինն յերկուս բնութիւնս անխառնաբար, անյեղաշէս, անբաժանաւորէն, անջատակի ծանուցեալ»: [2]Եւ արդ, տես՝ զիարդ ձայնակից են միմեանց ժողովն Քաղկեդոնի եւ Նեստոր, նմանապէս եւ այլքն հայհոյիչք: [3]Որպէս յորժամ ասէ Նեստոր. «Անորիշ է յերեւելոյն Աստուած, յաղագս այսորիկ որոշեցելոյն զպատիւն ոչ որոշեմ, զատուցանեմ զբնութիւնսն, այլ միաւորեմ զերկրպագութիւնն պատճառին», [4]եւ ժողովն Քաղկեդոնի զմի եւ զնոյն Քրիստոս Որդի եւ Տէր խոստովանել, եւ բաժանեն դարձեալ անմասութաբար յաւելուածով երկուց բնութեանցն՝ մարդ ասելով շարայարեալ Աստուծոյ Բանին եւ Որդի կոչեցեալ համանուանաբար, եւ արժանաւորութեամբ զունակական միաւորութիւնն ստացեալ, բայց որոշեալ բնութեամբ: [5]Որպէս զի մի՛ ըստ ճշմարտութեան մարդ եղեալ հաւատասցի Որդին Աստուծոյ՝ մնալովն Աստուած, քանզի թէ յերկուս բնութիւնս անջատանի մին Տէր Քրիստոս, զիա՞րդ երկաքանչիւրքն
327ա *կարասցէ մի գոլ կամ ասել: [6]Վասն զի // երկուցն եւ այլագոյիցն յատկապէս եւ զէմք երկու, որպէս եւ բնութիւնք: [7]Զ՚առ ի Նեստորէ ասացեալսն չինեն վերստին չարաչար՝ զՔրիստոսն եւ զՈրդին եւ զՏէրն անուն ի վերայ երկուց բնութեանցն սահմանելով եւ ոչ ուրեք Աստուած զԽաչեալն խոստովանելով՝ նորին դատապարտութեան եւ նզովից եղիցին արժանաւոր ժառանգորդք: [8]Քանզի ոչ ինչ ընդհատ Նեստորի եւ Թէոդորիտեայ սահմանեաց ժողովն ամբարշտեալ Քաղկեդոնի՝ զԼեւոնի† չար եւ դառնագոյնի ծերունոյն Դժ-ան գլուխս հայհոյութեանն ի սահմանն հաւատոյ ընդունելով: [9]Քանզի ձեւանան ասել մի Տէր եւ դառնան բաժանեն յերկուս առանձնացեալ բնութիւնս անխառնաբար,*

---

* *ՏԿ, էջ 80: Տառացի: Սուրբգրային վկայակոչութիւնները խմբագրուած են ըստ Աստուածաշնչի ընդունուած խմբագրութեան, մաքրուած են որոշ յունաբանութիւններ՝ բառեր եւ ոճական ձեւեր, օրինակ՝* միածին- մէնածին *(ՏԿ),* զբապին- զտաճար *(ՏԿ): Բնագրի «զի Հաւրէ» սխալ ձեւը ուղղուած «ի Հաւրէ»՝ ըստ ՏԿ-ի:*

† *Բնագրում առաւել յաճախ գործածւում է* Ղէովն *ձեւը:*

անյեղապէս, անբաժանաւրէն, անանջատակի ծանուցեալ, [10]*ըստ որում աւրինադրեաց նոցա Նեստորիոս յասելն իւրում այսպէս. «Ասա՛ զվերառողն թէ Աստուած՝ յաւել զվերառեալն թէ ծառայի կերպ, ի վերայ ա՛ծ յետ այսոցիկ զշարայարութեանն արժանաւորութիւնն, թէ երկուցն ճոխութիւն հասարակական, երկուցն նոյն արժանաւորութիւն բնութեանց մնացելոց. խոստովանեա՛ զարժանաւորութեանն միաւորութիւն»:* [11]*Եւ դարձեալ նոյն ինքն ասէ. «Ոչ իսկ դարձեալ այլ որդի եւ դարձեալ միւս. նոյն ինքն Որդի է կրկնապատ//իկ ո՛չ արժանաւորութեամբ, այլ բնու-* 327բ
թեամբ»: [12]*Եւ այլուր դարձեալ նոյն Նեստորիոս՝ «Զկրկնապատիկսն առ Քրիստոս զատուցանեմ բնութիւնս, քանզի կրկնապատիկք ահա բնութեամբ, իսկ արժանաւորութեամբ՝ միականք:* [13]*Քանզի բնութեանցն ճոխութիւն սակս շարայարութեան մի, բնութեանցն ահա ընտանի կարգաւորութեան յամենայն ժամ մնացելոց, իսկ արժանաւորութեանն յարակցելոյ առ ճոխութիւն՝ միական, որպէս ասացի»:* [14]*Զայսոսիկ զոյգսն անմիջոցաբար աւանդելով յիւրեանցն սահմանի՝ ժողովեալքն ի Քաղկեդոն յաւելելով ասեն այսպէս. «Ոչ ուրեք երկուց բնութեանց զանազանութեանց ի բաց բարձեցելոց յաղագս միաւորութեանն, այլ ապրեցելոյ մանաւանդ յատկութեանն երկաքանչիւրոց բնութեանց եւ ի մի դէմ եւ <ի> մի ենթակայութիւն* շարընթացելոց»:* [15]*Զայնակիցս այսոցիկ եւ ամբարիշտն Լէոն աղանդեաց՝ յ՚առ Փղաբիանոս թղթին ասելով. «Ապրեցելոյ այսուհետեւ յատկութեան երկաքանչիւրոց բնութեանցն եւ ի մի դէմ շարակցելոյ վերառեցաւ յԱստուածութենէն նուաստութիւն եւ ի զաւրութենէն՝ տկարն եւ յանմահէն՝ մահկանացուն»:* [16]*Զայսոսիկ եւ առաջնորդ ժողովոյն Քաղկ//եդոնի՝ վայրաքակեալն Թէոդորիտոս, յիւ-* 328ա
րում հայհոյութիւնսն արտադրեաց իմաստս եւ բանս, որք եւ ի սահմանի ապստամբութեան նոցա շարադրին, որք թէպէտեւ ընդ նմին ինքեան յԵփեսոս ի բաց կործանեցան, ի ժողովոյն Քաղկեդոնի ընկալեալ եղեն, որպէս եւ թուղթն Ղէովնի†:

---

* Ենթակայութիւն *բառը տառացի փոխադրութիւնն է յունարէն* ὑπόστασις *բառի: Ճիշտ թարգմանութիւնն է «անձ» կամ «անձնաւորութիւն»: Սա ցոյց է տալիս ՏԿ-ի թարգմանութեան որակը, սակայն տարօրինակ է, որ այն խմբագրուած չէ Սարկաւագի կողմից:*

† *IX պարբերութիւնը որոշ կրճատումներով եւ խմբագրութիւններով մէջբերուած է ՏԿ-ից, էջ 199–201:*

Թէոդորիտեայ հերձուածողի հայհոյութիւնք

X. [1]*«Եթէ այսուհետեւ ոչ եղեւ մարմին Բանն, այլ մարմին բանական էառ, ոչ ինքն բնութեամբ ի Կուսէ ծնանի՝ սաղմնացեալ եւ ստեղծեալ եւ կերպացեալ եւ սկիզբն անտուստ գոլոյն առեալ, որ նախ քան զյաւիտեանս էակն եւ Աստուած գոլով եւ ընդ Հաւր եւով եւ ընդ Հաւր ծանուցեալ եւ երկրպագեալ,* [2]*այլ իւր տաճար ի կուսական որովայնի ստեղծելով էր ընդ ստեղծեցելումն եւ սաղմնառեցելում եւ կերակրեցելում եւ ծնիցելում:* [3]*Որոյ աղագաւ եւ զսուրբն զայն Կոյս Աստուածածին առասեմք՝ ո՛չ իբրեւ զԱստուած բնութեամբ ծնող, այլ իբրեւ զմարդ՝ ստեղծողին զնա միաւորեալ Աստուծոյ»**:

Եւ յետ այլոց

XI. [1]*«Ո՛չ զմարդածին, այլ Աստուածածին զԿոյսն առասեմք, զոմն՝ ստեղծութեամբ եւ կերպութեամբ եւ միաւորութեամբ, իսկ զոմն միաւորութեան եդեալ առասութիւն»:* [2]*Առ այսոսիկ ասացաւ ի սահմանէ ժողովոյն Քաղկեդոնի՝ յետ ի բաց թուելոյ զՍուրբ զԵրրորդութիւնն*
328բ *եւ Տեառնն զներմարդութիւն, որք հաւատով ընդունին եւ առընթ//եր դնեն ո՛չ Աստուծոյ Բանին մարմնաւորութիւն, որպէս ի Նիկիայ սուրբ հարքն ասացին, այլ իբր մարդոյ Ստեղծողին զնա յարակցելոյ ունակաբար:* [3]*Այսպէս անգոսնեն եւ որք զաստուածային զձայնն խտրեն՝ ոչ որպէս զԱստուած ծնիչ զԿոյսն, այլ որպէս զմարդ բնակիչ ունելով եւ ընդ նմա գոլով զԱստուածն Բան:* [4]*Քանզի մարդ զչարչարեալն քարոզեն, որպէս թուեցաւ Թէոդորիտեայ եւ Նեստորի, եւ ոչ զմարմնացեալն Աստուած Բանն, որպէս քարոզեցին ի Նիկիա սուրբ հարքն*†:

Նորին Թէոդորիտէ

XII. [1]*«Ախտակրեաց այսուհետեւ ծառային կերպ՝ ընդ նմա գոլով, յայտ է, թէ Աստուծոյ կերպին»*‡: [2]*Եւ դարձեալ ասէ. «Ուրեմն ոչ է Աս-*

---

* *ՏԿ, էջ 54, 201: Էջ 54-ի եղծուած մասերը կարելի է լրացնել էջ 201-ից:*

† *ՏԿ, էջ 201–202: Հմմտ. էջ 54: Խմբագրութիւններ՝* յարակցելոյ- յարեցելոյ *(ՏԿ),* ընդ նմա գոլով- ընդ նմա ելով *(ՏԿ),* զչարչարեալն- ախտակրեալն *(ՏԿ):*

‡ *ՏԿ, էջ 202, 79–80*

տուած ախտակրեալ, այլ առ ի մէնջն յԱստուծոյ առեալ մարդն»: [3]*Եւ յետ սակաւուց՝ «Սպանանի ոչ ինքն Կենդանութիւնն, այլ զմահկանացուն ունող բնութիւն»*†:

Նորին‡

XIII. [1]*«Ո՞վ է այսուհետեւ երկովք առաքինութեանն կատարեալն եւ ոչ բնութեամբ կատարեալ գոլով:* [2]*Ո՞վ փորձիւ ուսաւ զհնազանդութիւնն զայս՝ անգիտանալով նախ <քան զ>փորձութեանն*§: [3]*Ո՛չ Աստուածն Բան՝ անախտակիրն, անմահն, անմարմինն, այլ ի սերմանէն Դաւթի, առեալն ի նմանէ մահկանացուն, չարչարելին, զարհուրեալն ի մահուանէ»:*

Դարձեալ

XIV. [1]*«Իսկ ի փորձութեան եղեւ մերոցն ախտակրութեանց առանց մեղաց՝ ի մէնջն յաղագս մեր առեալ բնութիւնն, ո՛չ այսորիկ առողն մերոյ սակս փրկութեան»: // Եւ առ այսոսիկ ասացին ի սահմանի ժողովոյն Քաղկեդոնի:* [2]*«Իսկ ոմանք խառնութիւն ի ներքս ածին եւ մի գոլ բնութիւն մարմնոյն եւ Աստուածութեանն վերաստեղծեն եւ ախտակրելի զՄիածնին զաստուածային բնութիւնն խառնմամբն ճոռոմաբանեն»:* [3]*Քանզի ո՛չ զմարմնացեալն Աստուած ծնաւ ասեն Կոյսն եւ ո՛չ Աստուած զչարչարեալն մարմնով վասն մեր պարտ վարկանին քարոզիչ, որքան ի բանս ամբարշտութեան նոցա է, այլ մարդ՝ զախտակրեալն ըստ մոլար վարդապետութեան ամբարշտին Թէոդորիտեայ:* [4]*Քանզի յայտնապէս զբանս եւ զիմաստս նենգութեան սահմանեաց ժողովն Քաղկեդոնի, որպէս եւ յաղագս յատկութեան երկուց բնութեանցն ցուցցի:* [5]*Քանզի ասաց այսպէս Թէոդորիտոս. «Ո՞րպէս արդեաւք ամբարշ-* 329ա

* *ՏԿ, էջ 202, 80, 137*

† *ՏԿ, էջ 202, 20–21*

‡ *ՏԿ, էջ 202, 137: Այս հատուածը ՏԿ-ի մօտ առկայ է երկու տարբեր խմբագրութեամբ: Սարկաւագն օգտւում է 202 էջի տարբերակից՝ որոշակի խմբագրութիւններ կատարելով, թէպէտ 137 էջի տարբերակն աւելի ստոյգ է իմաստային առումով: Տե՛ս տարբերթերցումները:*

§ *Ըստ ՏԿ 137 էջի*

տութիւն, որք գյատկութիւնս բնութեանցն բաժանեն զնախայաւիտենին Աստուծոյ եւ զ՚առ վերջնաւք աւուրքքս վերառեցելոյ մարդոյն»:

Նորին

XV. [1]*«Ապա ուրեմն հաւասարութեամբ անուանն վարեցեալք՝ իբր զմի Որդի երկրպագեմք զառողն եւ զառեալն, իսկ զբնութեանցն զանազանութիւնս ճանաչեմք»*†:

Նորին

XVI. [1]*«Ուրեմն երկաքանչիւրոյ բնութեանն գյատկութիւնսն ասելով՝ զՏէրն խոստովանիմք Քրիստոս»*‡:

329բ // Նորին

XVII. [1]*«Ոչ ի մարմնոյ բնութիւն անյեղլին յեղաւ բնութիւն, այլ մարդկային վերառեաց բնութիւն եւ զայս ի վեր, քան զհասարակական քահանայապետս կացոյց»*§:

Նորին

XVIII. [1]*«Մի, ահա, որպէս բազում անգամ ասացի, զփառաբանութիւնն մատուցանեմք Տեառն Քրիստոսի եւ զնոյն համանգամայն Աստուած եւ մարդ խոստովանեմք:* [2]*Քանզի զայս մեզ միաւորութեանն ուսոյց բան, իսկ զբնութեանցն յատկութիւնս ոչ խտրեմք ասել»*¶: [3]*Այսոքիկ եւ այսպիսիք հայհոյութիւնք ժողովոյն Քաղկեդոնի սակաւուք համառաւտեալ՝ թողլով զբազումս, որոց ոչ եւ մի ոք ի սրբոցն ճայնակցէ հարցն, այլ մանաւանդ դատապարտեալ նզովեն զասողսն եր-*

* *ՏԿ, էջ 202–203: Սարկաւագն օգտւում է՝ զգալիօրէն խմբագրելով: Սակայն երբեմն հետեւողական չէ. օրինակ՝ մէկ տեղում* ախտակրեալ*-ը դարձնում է* չարչարեալ*, իսկ մէկ այլ տեղում թողնում* ախտակրեալ:

† *ՏԿ, էջ 203, 65*

‡ *ՏԿ, էջ 203, 65*

§ *ՏԿ, էջ 203, 65*

¶ *ՏԿ, էջ 203*

կուս բնութիւնս յետ միաւորութեանն ի վերայ միոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: [4]Եւ քարոզեն «մի բնութիւն Աստուծոյ մարմնացելոյ», զնոյն ինքն խաչեալ եւ թաղեալ եւ յարուցեալ յերրորդ յաւուր եւ յերկինս համբարձեալ նովին մարմնով, որ եւ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս, յորժամ եկեսցէ միւս անգամ փառաւք Հաւր իւրոյ եւ հրեշտակաց իւրոց բազմութեամբ: [5]Յայնժամ ողորմեա՛ ինձ, Տէր:

<ԺԴ>

// ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅՆ, ԵԹԷ ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ Է ԲԱՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐՄՆԱՑԵԼՈՅ

330ա

Երանելին Յուղեայ՝ եպիսկոպոսապետին Հռովմայ
յ'առ Դիոնիսիոն թղթոյն*

I. [1]Զարմանամ՝ լսելով յաղագս ոմանց, խոստովանելով Աստուած ներմարմին† զՏէրն, բայց դեղեւելով ի հերձուած չարապէս ի պաւղիանոսացն ներծանիցելոցն: [2]Քանզի նոքա Պաւղոսի Սամոստացւոյ ծառայեալք՝ այլ զ'յերկնուստն ասեն՝ Աստուած խոստովանելով զնա, իսկ այլ՝ զ'յերկրէ մարդ ասեն. [3]զոմն՝ անստացական, իսկ զոմն՝ ստացական, զոմն՝ յաւիտենական, իսկ զոմն՝ երեկեան, զոմն՝ Տէր, իսկ զոմն՝ ծառայ՝ ամբարշտեալք, եթէ երկրպագեն զոր ասեն ծառայ եւ արարած, եւ եթէ ոչ երկրպագեն զ Գնողն զմեզ իւրով Արեամբն: [4]Իսկ որք զ'յերկնուստն Աստուած խոստովանին ի Կուսէ մարմնացեալ եւ մի գոլ մարմնովն, տարապարտ ամբոխին ի բանս նոցայն ամբարշտութեան արտաբերեալք,

---

* *ՏԿ, էջ 259–262, 186–187, 132, 8–10: Անանիա Սանահնեցի, «Գանձասար» Բ, էջ 207–209: Սարկաւագը հետեւում է ՏԿ 259–262 էջերի, իսկ Սանահնեցին աւելի մօտ է 186–187 էջերի խմբագրութեանը, սակայն ունի զգալի տարբերութիւններ:*

† *Ներմարմին բառը բացակայում է ՆԲՀԼ-ում, սակայն դատելով ՏԿ-ի խիստ յունաբան թարգմանութիւնից եւ համեմատելով Սանահնեցու բնագրի հետ՝ ներմարմինը կարելի է հասկանալ «մարմնի մէջ», այսինքն՝ «Տիրոջը խոստովանում են Աստուած մարմնի մէջ»:*

քանզի ասեն եւ սոքա երկուս բնութիւնս, որպէս լսեմ, եւ զայս Յով-
330բ հաննու հաւաստապէս մի ցուցեալ զՏէրն՝ ասելովն. // «Բանն մարմին
եղեւ»,* եւ Պաւղոսի՝ յասելն. «Մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամե-
նայն»†: 5Արդ, եթէ մի ի սրբոյ Կուսէն ծնեալն անուանեցաւ, եւ ինքն
է, որով ամենայն եղեւ, եւ մի բնութիւն է, վասն զի եւ դէմ մի, ոչ ու-
նել<ով> յերկուս բաժանումն, վասն զի եւ ոչ առանձին բնութիւն մար-
մինն եւ առանձին բնութիւն Աստուածութիւնն՝ ըստ մարմնա<նա>լոյն:
6Այլ որպէս մարդ մի բնութիւն է, այսպէս եւ ի նմանութիւն մարդկան
եղեալն Քրիստոս: 7Իսկ եթէ ոչ ճանաչեն զ՚ըստ միաւորութեան մին,
կարեն եւ ի բազումս բաժանել զմին եւ յոլով ասել բնութիւնս, վասն
զի յոքնատեսակ է մարմին՝ յոսկերաց եւ ի ջղաց եւ յերակաց եւ ի մսոյ
եւ ի մորթոյ, յեղնգաց իսկ եւ ի մազոյ եւ յարենէ եւ ի շնչոյ, որք ամե-
նայն<քն> զանազանութիւն ունին ի միմեանց: 8Բայց մի բնութիւն է,
որպէս զի եւ Աստուածութեանն ճշմարտութիւն հանդերձ մարմնովն
մի եւ յերկուս բնութիւնս ոչ բաժանի, քանզի եւ ոչ հնար իսկ էր զբո-
լորն Որդի Մարդոյ կոչել զիջեալն յերկնից եւ Որդի Աստուծոյ՝ ծնեալն
ի Կնոջէ, եթէ երկուց բնութեանց բաժանումն առընդունէր: 9Այլ ստո-
րիջեալն յերկնից կոչիւր արդեաւք Որդի Աստուծոյ եւ ոչ Որդի մարդոյ,
331ա // իսկ ծնեալն ի Կնոջէ կոչիւր արդեաւք Որդի Մարդոյ եւ ոչ Որդի Աս-
տուծոյ. եւ այս հետեւանայ պաւղիական հերձուածոյն: 10Իսկ զմեզ ու-
սուցանեն Աստուածային Գիրք յաղագս միոյ Տեառն խորհել ըստ յերկ-
նից իջանելոյն եւ ի Կնոջէ ծննդեանն: 11Որք այսուհետեւ այսպէս խոր-
հին, մի՛ ի հոմաձայնութիւն զամենայն ընդդէմ խորհողացն արտաքս
ելցեն, զի մի՛ մտաւք գովելով՝ բանիւքն հայհոյիցին: 12Քանզի հարկ է
նոցա երկուս ասելով բնութիւնս՝ միումն երկրպագել, իսկ միւսումն ոչ
երկրպագել, յաստուածականն մկրտել, իսկ ի մարդկայինն ոչ մկրտել:
13Իսկ եթէ ի մահն Տեառն մկրտիմք, մի խոստովանիմք բնութիւն անախ-
տակիր Աստուածութեանն եւ ախտակրի մարմնոյն, զի այսպէս յԱս-
տուած իցէ մկրտութիւնն մեր եւ ի մահն Տեառն կատարեալ: 14Քանզի
ոչ երկնչիմք ի զրպարտողացն՝ բաժանողաց յերկուս դէմս զՏէրն, եթէ
մեր զմիաւորութիւն խոստովանելով զհրեշտակական եւ առաքելական՝
հայհոյեն զմեզ՝ որպէս զմարմինն ասողս յերկնից, յորժամ ընթեռնումք
զԱստուածային Գիրս՝ Որդի Մարդոյ ասելով զ՚յերկնուստն, քանզի եւ

* Յովհ. Ա 14
† Ա Կոր. Ը 8

ոչ յորժամ ասեմք զՈրդին Աստուծոյ եղեալ ի Կն//ոջէ, կամիմք հայ- 331բ
հոյիլ՝ որպէս զԲանն յերկրէ ասելով եւ ոչ յերկնից: [15]Իսկ ասեմք զեր-
կախումբքն՝ ե՛ւ յերկնից զբոլորն վասն Աստուածութեանն, ե՛ւ ի Կնո-
ջէ զբոլորն վասն մարմնոյն՝ ոչ գիտելով բաժանումն միոյ դիմին եւ ոչ
ի բաց հատանելով յերկնայնոյն զերկրայինն եւ ոչ յերկրայնոյն՝ զերկ-
նայինն, քանզի ամբարիշտ է բաժանութիւնն: [16]Մի՛ այսուհետեւ պատ-
ճառս տայցեն բաժանողացն ասողքն երկուս բնութիւնս, քանզի եւ ոչ
մարմինն ըստ ինքեան բնութիւն, վասն զի եւ ոչ կենագործակ ըստ ին-
քեան եւ ոչ բաժանիլ կար գոլ առանց կենագործակին, եւ ոչ Բանն ըստ
ինքեան յիւրն բաժանի բնութիւն, զոր ունի ըստ անմարմնութեան: [17]Եւ
վասն զի ի մարմնի Տէրն եւ ո՛չ անմարմնաբար եկն յաշխարհ, ոչ զս-
տացական մարմինն զատուցանեմ յանստացական Աստուածութենէն,
թէ որոշեսցէ ոք բնութիւն ստացական, այլ եւ ոչ անստացական Բանն
եկն առանց մարմնոյ, թէ բաժանիցէ ոք անստացական բնութիւն: [18]Իսկ
եթէ մի երկաքանչիւրն է ըստ միաւորութեան՝ ե՛ւ ժողովն, ե՛ւ բարդու-
թիւն մարդատեսակն, մի եւ զանուն բարդեցելումն յարմար//իլ՝ յԱս- 332ա
տուածութենէն զանստացականն, իսկ ի մարմնոյն՝ զստացականն, եւ
յԱստուածութենէն՝ զանախտն, իսկ ի մարմնոյն՝ զախտակրելին: [19]Եւ
որպէս լուաք ի Պաւղոսէ զՔրիստոս ախտակիր, ո՛չ մասնաբար լուաք
եւ ո՛չ զԱստուածութիւնն ախտակրական կարծեցաք: [20]Այսպէս եւ արա-
բեալն եւ ծառայն ո՛չ մասնաբար ասի եւ ո՛չ զԱստուածութիւնն առ-
նէ եղանելի եւ ծառայական: [21]Եւ դարձեալ՝ անստացականն ո՛չ զմար-
մինն անեղ առնէ եւ ո՛չ ըստ մասին ի վերայ Աստուածութեանն միայ-
նոյ ասի: [22]Իսկ զայս այսպէս խորհեցողքն կացցեն ի լռութեան՝ յաւե-
լորդ խնդրոյ ի բաց խոտորեալք յաղանդոյն. ճայնակցեալ է եւ ճայ-
նակցաբար խոստովանեալ մարմինն ի Կուսէն, Աստուածութիւնն՝ յերկ-
նից, մարմինն՝ ստեղծեալ յորովայնի, Աստուածութիւնն՝ անստեղծ, յա-
ւիտենական, զի միաւորեցելոյ Բանին մարմնոյ անբաժանելի մնասցէ
Աստուածութիւնն: [23]Իսկ եթէ Գրոց սովորութիւն է զբոլորն աստուա-
ծաբանել եւ զբոլորն մարդաբանել, հետեւեսցո՛ւք եւ մեք բանիցն աս-
տուածայնոցն եւ մի՛ բաժանեսցուք զանբաժանելին եւ մի՛ զԱստուա-
ծութիւնն որոշեսցուք ի մարմնոյն՝ իբր առ բարեհամբաւութիւն, յոր-
ժամ մարմինն ստեղծեալ յոր//ովայնի ասա<ս>ցի, եւ մի՛ զմարմինն բա- 332բ
ժանելով յԱստուածութենէն, որպէս յաղագս խոստովանութեան Գալս-
տեանն, յորժամ Աստուածութիւնն անստացական փառաւորիցի: [24]Ո՞ր-
պէս արդեաւք չիցէ տրամական զայսոսիկ այսպէս բարւոքն խոստո-

վանողսն կամ խորհողս, որպէս եւ ընկալաք, հակառակել առ միմեանս բանիւքն, եթէ ոմանք մարմնոյն անուամբ վարին ի վերայ Բանին, որպէս Յովհաննէս մարմին ասաց եղանել զԲանն, իսկ ոմանք զԱստուածութեանն անուն առնուն ի վերայ բոլորի ծառայի, որպէս Պաւղոսն ասաց. «Երկրորդ Ադամ ի հոգի կենդանարար»[*]*: [25]Երկրպագելի խոստովանի Քրիստոս ըստ մարմնոյ զՀայր՝ ասելով. «Մեք երկիր պագանեմք՝ որում գիտեմքն»*[†]*, <եւ ոչ բաժանի աստուածութիւն. երկրպագի ըստ աստուածութեանն> եւ ո՛չ բաժանի մարմինն Աստուածութեանն երկրպագութեամբ: [26]Եւ ո՛չ որոշեմք զմարմինն, յորժամ երկրպագեմք, քանզի եւ ո՛չ կարելի է մարմնոյն ախտակրելն, եւ ո՛չ որոշի Աստուածութիւնն, քանզի միացեալ է, քանզի պարտ էր յաղթիլ մահու յԱստուծոյ, եւ յաղթեալ է:*

Նորին[‡]

II. [1]Ապա ուրեմն ապրեցուցանելն Աստուծոյ է եւ նորոգելն զաշխարհս՝ ո՛չ միւսոյ ուրումն, իսկ ապրեցուցանէ Ծնիցեալն եւ խաչեցեալն: // [2]Ո՛չ մարդ էր զոր ծնաւն Մարիամ, եւ ո՛չ մարդ զոր խաչեցին հրէայքն, այլ Աստուա՛ծ՝ ծնեալն ի Կնոջէ, Աստուա՛ծ՝ խաչեցեալն ի հրէից:

333ա

Երանելւոյն Աթանասի՝ հայրապետին Աղեքսանդրի[§]

III. [1]Խոստովանիմք զՈրդին Աստուծոյ զնախ քան զյաւիտեանս մշտնջենաբար ծնեալ ի Հաւրէ, իսկ ի վերջին աւուրս վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ, որպէս աստուածազան առաքեալն ուսուցանէ՝ ասելով. «Յորժամ եկն լրումն ժամանակաց, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղեւ ի Կնոջէ»[¶]*: [2]Եւ զոլ զնոյն Աստուած եւ Որդի Աստուծոյ՝ ըստ Հոգւոյ, իսկ Որդի Մարդոյ՝ ըստ մարմ-*

---

* *Ա Կոր. ԺԵ 45*

† *Յովհ. Դ 22*

‡ *ՏԿ, էջ 266 (տող 24–29)*

§ *ՏԿ, էջ 133, 269. Աթանաս, էջ 281: Միանշանակ օգտւում է ՏԿ-ի 269 էջի բնագրից, թէպէտ Աթանասի 281 էջի բնագրից տարբերութիւնները շատ չեն:*

¶ *Գաղ. Դ 4*

նոյ, ո՛չ երկուս բնութիւնս՝ զմին Որդի, զմին՝ երկրպագելի եւ զմին՝ աներկրպագելի, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ եւ երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով միով երկրպագութեամբ, այլ եւ ոչ երկուս որդիս:

Նորին*

IV. [1]Արդ, եթէ այլոյ է մարմինն, նորա՞ արդեաւք ասացին կիրքն, իսկ եթէ Բանին՝ մարմինն, քանզի «Բանն մարմին եղեւ», հարկ է եւ զմարմնոյն կիրս ասել նորին, իսկ որոյ ասին կիրքն, նորին եւ ճահագործութիւնն եւ չնորհն է:

Նորին†

V. [1]Ուստի եւ ծնիցելոյ մարմնոյն յԱստուածածնէն // Մարիամայ 333բ
ինքն ասի ծնանիլ՝ այլոց ծնելութեան առ ի գոլ տուիչն, զի զմերոյն յինքն փոխեսցէ ծնելութիւն:

Նորին‡

VI. [1]Զիա՞րդ իսկ եւ երկբայանալ համարձակեցան անուանեալ քրիստոնեայքն, եթէ ի Մարիամայ յառաջ եկեալ Տէրն: [2]Որդի ահա գոյացութեամբ եւ բնութեամբ Աստուծոյ է, իսկ ըստ մարմնոյ՝ ի զաւակէ Դաւթի եւ ի մարմնոյ՝ սրբոյն Մարիամայ: [3]Եւ ո՞յք արդեաւք այսպէս յանդգունք եղեն, իբր զի ասել զՔրիստոս՝ զմարմնով ախտակրեալն եւ խաչեցեալն, ոչ գոլ Տէր եւ Փրկիչ եւ Աստուած եւ Որդի Հաւրն: [4]Կամ զիա՞րդ կամիցին քրիստոնեայք անուանիլ ասացողքն ի մարդ սուրբ, որպէս առ մի ի մարգարէիցն եկեալ զԲանն եւ ո՛չ զնոյն մարդ եղեալ՝

---

* ՏԿ, էջ 83

† ՏԿ, էջ 76

‡ ՏԿ, էջ 76. ԿՀ, էջ 59 (այլ խմբագրութեամբ). Կիւրեղ Ալեքսանդրացի, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, 1717, էջ 493 (բոլորովին այլ խմբագրութեամբ). Աթանաս, էջ 327 (այլ, սակայն աւելի հաւաստի թարգմանութիւն): Սարկաւագը հետեւում է ՏԿ-ի բնագրին:

առնելով ի Մարիամայ զմարմինն, այլ միւս գոլ զՔրիստոսն եւ միւս՝ զԱստուծոյ Բանն զյառաջ քան զյաւիտեանս՝ Որդին ելով Հաւր:

Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի*

VII. [1]*Այսաւր որ էրն ծնանի եւ որ էրն եղանի, որպէս ոչն էր, քանզի գոլով Աստուած՝ եղանի մարդ՝ ոչ ի բաց կացեալ ի գոլոյն Աստուած:*

Երանելոյն Տիմոթէոսի՝ հայրապետի Աղեքսանդրի
ի Հակաճառականէ խոտեալ տոմարի ժանդին Լէովնի†

VIII. [1]*Քանզի «Որ էրն ի սկզբանէ,— ասէ երանելին Յովհաննէս*
334ա *Աւետարանիչ,— զորմէ լու//աք»*‡՝ *նշանակելով զնախ քան զյաւիտեանս Բանն Հաւր, «Սա,— ասէ,— եւ տեսաք աչաւք մերովք, եւ ձեռք մեր շաւշափեցին»*§: [2]*Եւ զի մի՛ ոք ի հերձուածողացն զրպարտեսցէ զ՚առ ի նմանէ աստուածաշնչաբար ասացեալսն, ցուցանէ հաւաստապէս մի դէմ մարմնացելոյ Աստուծոյ Բանին, ասէ ի վերայ Բանին կենաց եւ երկրորդէ զնոյնն՝ ասելով. «Եւ տեսաք եւ վկայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն»*¶: [3]*Զո՞ր, ասա՛ յայտնապէս, ո՛վ աւետարանիչ.* [4]*«Որ էրն,— ասէ,— առ Հաւր եւ երեւեցաւ մեզ»***. *եւ եռապատկէ զբանն յաղագս տեսանելոյ զմարմնացեալն անյեղապէս մի բնութիւն Բանին Աստուծոյ՝ ոչ ուրեք երկուս կերպս ուսուցանելով ի վերայ Քրիստոսի եւ ոչ երկուս դէմս, այլ մի եւ զնոյն:* [5]*Եւ նմա առբաշխեաց միումն Քրիստոսի զաստուածավայելուչսն եւ զմարդկայինսն, քանզի եւ ի կատարածի թղթին ուսոյց դարձեալ յաղագս Քրիստոսի՝ ասելով.* [6]*«Եւ գիտեմք, եթէ Որդին Աստուծոյ եկն եւ ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն Աստուած, եւ եմք ի ճշմարտի Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. սա՛ է ճշմարիտն Աստուած եւ կեանք յաւիտենական»*††: [7]*Իսկ եթէ Բանն*

* *Նորին յաղագս աստուածային ծննդեան, եւ ասէ վասն սրբոյ Կուսին, ՏԿ, էջ 28, 77*

† *ՏԿ, էջ 81–82*

‡ *Ա Յովհ. Ա 1*

§ *Ա Յովհ. Ա 1*

¶ *Ա Յովհ. Ա 2*

** *Ա Յովհ. Ա 3*

†† *Ա Յովհ. Ե 19–20*

գործէ զոր է իւր, որպէս նորումս Նեստորի թուի, աւտար Աստուածու-
թեանն եւ անարատ բն//ութեանն է տեսանիլ եւ շաւշափիլ, եւ յատուկ 334բ
առաւել մարդկայնոյն այն է բնութեան այսպիսիս. նմանապէս աւտար
է մարդոյ ասիլն Աստուած ճշմարիտ եւ է յատուկ միայնոյ Աստուծոյ:
8Իսկ արդեաւք ստեա՞ց աստուածազան աւետարանիչն Յովհաննէս.
քա՛ւ լիցի, այլ մանաւանդ հերձուածողացն ժողով լպրշաբար ընդդի-
մանան Աստուածաշունչ Գրոց, ոչ հաւատան, եթէ «յերկրի երեւեցաւ
Աստուած եւ ընդ մարդկան շրջեցաւ»՝ ըստ մարգարէին ձայնի*: 9Ո՛չ
հաւատան, եթէ «Բանն մարմին եղեւ»†՝ մնացեալ յանյեղլի բնութեան,
ո՛չ ընդունին զկամաւոր թափումն եւ զաղքատութիւն Աստուծոյ Բա-
նին, զտնաւրինաբար գործեցեալսն յաղագս մերոյ փրկութեան, ո՛չ ըն-
դունին Աստուածածին խոստովանել զսուրբ Կոյսն. 10բացափայլել կա-
մին զմի դէմն Քրիստոսի, այս է՝ զԱստուածն Բան, ո՛չ ներեն կենագործ
գոլ զպատուական Մարմինն Քրիստոսի. ո՛չ ընդունին զոր ի զաւակէն
Դաւթի թագաւորել ի վերայ տանն Յակովբայ ցյաւիտեանս, եւ թագա-
ւորութեան նորա վախճան ոչ գոլ՝ յանդգնաբար ընդդիմացեալք հրեշ-
տակին Գաբրիէլի: 11Քանզի ախտակրութեանն միայնում ստորանկեալ
զնա աւանդեն, եւ թէպէտ մարդոյ բնութեան աւտար է ամենեւին թա-
գաւոր//ել ընդ ձեռամբ անկելոյն յաւիտեանս, եւ է այս միայնոյ Աս- 335ա
տուծոյ յատուկ եւ յարմարական: 12Ապա ուրեմն եւ ո՛չ երկուս կերպս ի
վերայ Միոյ Քրիստոսի ի սրբոցն ուսաք ի ձեռն Աստուածաշունչ Գրոց
եւ ո՛չ ներգործութեամբ առանձնացեալս երկակաւք կերպիւքն եւ ո՛չ
ունակական հաւասարութիւն եւ կամ շարայարութիւն, զոր իւրաքան-
չիւր ոք ի մէնջ ունել ասի առ մերձաւորն, ո՛չ իւրաքանչիւր դէմ յա-
տուկ եւ առանձինն, ոմն բացափայլեալ սքանչելեաւքն, իսկ ոմն՝ ախ-
տակրութեան ի ներքոյ անկեալ, այլ մի բնութիւն Աստուծոյ Բանին
մարմնացելոյ անյեղապէս ե՛ւ ուսաք, ե՛ւ հաւատամք:

---

* Բար. Գ 38

† Յովհ. Ա 14

Սրբոյն Աթանասի*

IX. [1]Իսկ եթէ ոք քան զայս յԱստուածայնոց Գրոց ուսուցանէ՝ միւս ասելով զՈրդին Աստուծոյ եւ միւս՝ զ'ի Մարիամայն ըստ շնորհի որդի գործեցեալ՝ որպէս մեք, իբր զի գոլ երկուս որդիս, զմին՝ ըստ բնութեան Որդին Աստուծոյ՝ զ'յԱստուծոյն, եւ զմիւսն՝ ըստ շնորհի՝ զ'ի Մարիամայն մարդ, [2]կամ եթէ ոք զՏեառն մերոյ զմարմինն ի վերուստ է ասէ եւ ոչ ի կուսէն Մարիամայ կամ յեղեալ զԱստուածութիւնն ի մարմին կամ խառնակեալ կամ այլայլեալ կամ ախտակրելի զՏեառն զԱստուածութիւնն կամ անեկրպագելի զՏեառն մերոյ զմարմինն, որպէս մար-
335բ դոյ եւ ոչ երկր//պագելի, որպէս Տեառն եւ Աստուծոյ մարմինն, զնա նզովէ սուրբ եւ ընդհանրական Եկեղեցի՝ հաւանեալ առաքելոյ ասողի. «Եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր ընկալարուքն, նզովեա՛լ եղիցի»†:

Նորին ի Տաւնականէն մետասաներորդ‡

X. [1]Ուստի Փրկիչն, որք լայինն եւ հետեւէին նմա յերթեալն նորա ընդդէմ մահու, սաստէր՝ մի՛ լայք§: [2]Ասելով զայս՝ զայս ցուցանել կամեցեալ, զի ո՛չ սգոյ, այլ խնդութեա՛ն էր մահն Տեառն, եւ զի թէպէտ եւ վասն մեր մեռցի, կեցցէ, քանզի ոչ յոչէիցս, այլ ի Հաւրէ <է>:

Նորին յաղագս Խաչին¶

XI. [1]Քանզի եւ այս ոչ նոցա, այլ կախեցելոյ Փրկչին էր գործ, եւ զի կախեցեալ որպէս զմարդ՝ զիշխանութիւնս հալածէր, իսկ զբանսարկուն ըմբռնէր, զդահիճսն երկեցուցանէր՝ ոչ պատառել զպատմուճանն, զի այսորիկ մնացելոյ մնասցէ. եւ հրէիցն յանդիմանութիւն եւ յետ ոչ

---

* *ՏԿ, էջ 133 (գրեթէ տառացի հետեւում է): Տես Աթանաս, էջ 283: Այս ճառի թարգմանութիւնն աւելի ստոյգ է եւ զերծ յունաբանութիւններից, որոնք առկայ են ՏԿ-ի մօտ: Սարկաւագը միանշանակ օգտւում է ՏԿ-ից, եւ թէպէտ բնագիրը մաքրում է յունաբանութիւններից, սակայն դրանք ակնյայտօրէն մնում են:*

* *Գաղ. Ա 9*

‡ *ՏԿ, էջ 134*

§ *Ղուկ. ԻԳ 28*

¶ *ՏԿ, էջ 134. ԿՀ, էջ 346*

յոլովից եղեալ, զի վարագոյրն պատառեցաւ, իսկ պատմուճան Փրկչին եւ ոչ ի դահճացն բաժանեցաւ, այլ մնաց ամբողջ, քանզի մնաց Աւետարանն ամբողջ՝ ստուերացն բաժանելոց:

Նորին ի Տաւնականէ երկրորդում Դիոկղէտիանոսի*

XII. [1]*Քանզի կենդանութիւն գոլով՝ մեռաւ, զի զմեզ // կենագործեսցէ, Բան եղով՝ ի մարմնի եղեւ, զի զմարմին Բանիւն ազատեսցէ, աղբիւր գոլով՝ ծարաւեցաւ, զի զմերն ծարաւ արբուսցէ, զի այսուիկ եւ ի տաւնն յառաջ կոչեսցէ մեզ՝ ասելով. «Եթէ ոք ի ծարաւի է, եկեսցէ առ իս եւ արբցէ»†:* 336ա

Նորին ի Ե-երորդ տաւնականէն‡

XIII. [1]*Քանզի ոչ եւս ոչ ժողովուրդ Աստուծոյ եւ ոչ ազգ սուրբ, այլ իշխանք սոդոմացւոց եւ ժողովուրդ գոմորացւոց անուանին՝ յաղթելով յայսոսիկ եւ սոդոմականացն չարութեան, որպէս մարգարէն ասէ. «Արդարացաւ Սոդոմ ի Քէն»§:* [2]*Քանզի սոդոմականքն ի հրեշտակս յանդգնեցան, իսկ սոքա՝ ե՛ւ զՏէրն, ե՛ւ զԱստուած, ե՛ւ զԹագաւորն ամենայնի, ե՛ւ զամենեցուն հրեշտակացն Տէր սպանանել ձեռնարկեցին՝ ոչ գիտելով, եթէ կենդանութիւն է սպանեալն ի նոցանէ Քրիստոս, իսկ մեռան, որք նենգեցինն հրեայքն զՏէր:*

Նորին ի ԺԱ-երորդ տաւնականէն¶

XIV. [1]*«Ընդէ՞ր պանծացան իշխանք, եւ ժողովուրդք պարապեցին ունայնս»**, քանզի ունայն էր խորհուրդ հրէիցն՝ մտածողաց մահ զկենդանութենէն եւ խորհողացն անբանս զԲանէն Հաւր:*

---

* *ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 345*

† *Յովհ. Է 37*

‡ *ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 346*

§ *Ողբ Դ 6*

¶ *ՏԿ, էջ 140. ԿՀ, էջ 346*

** *Սաղմ. Բ 1*

Նորին*

XV. [1]*Փրկութիւն՝ արեամբն, իսկ մաքրութիւն՝ ջրովն, բայց այս ո՛չ*
336բ *ըստ կամաց բանսարկուին պատ//ահէր, քանզի զոր երկնչէր եղանելն մահ, մեռաւ Տէրն, եւ նա կողոպտեցաւ եւ կարծեալ ըմբռնիլ զՔրիստոս ի մահուանէ՝ յաւէտ ինքն ցուցաւ մեռեալ, եւ կարծեցեալ մարդ նենգել՝ արար ճանաչել Աստուած:* [2]*Քանզի համանգամայն մեռաւ, եւ ար<արա>ծք*† *անարեգակն եղեն, իսկ վարագոյր տաճարին ցելոյր, եւ երկիր սասանեցաւ, վէմք հերձան, զինաւորն հանդերձ <դռնատեսաւք>*‡ *դժոխոց դաւղեցին, յորոց էր տեսանել ոչ մարդ, այլ Աստուած ճշմարտապէս ի մարմնի. յաղագս որոյ եւ տեսողքն ասէին. «Ճշմարտապէս սա՛ է Որդի Աստուծոյ»*§*, քանզի եւ բազում չիրիմք բացան, եւ յարեան ի նոսա մեռեալքն:*

Երանել<ւոյն> Գրիգոր<ի> Նէոկեսար<իոյ> եպիսկոպոս<ի>¶

XVI. [1]*Եթէ ոք ասէ՝ այլ է չարչարեալն, եւ այլ՝ ոչ չարչարեալն, եւ ոչ խոստովանէ զնոյն անչարչարելի Աստուածն Բանն մարմնովն իւրով չարչարեալ, որպէս եւ գրեալ է, նզովեա՛լ լիցի:*

Նորին**

XVII. [1]*Սա է, որ վաղ երբեմն որպէս ոչխար զենեալ եւ յոչխարի նշանակեալ, իսկ յետոյ ապա ինքն զենեալ վասն մեր, «քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս»*††*:*

---

* *ՏԿ, էջ 141. ԿՀ, էջ 347*

† *Ուղղումը՝ ըստ ՄՄ N 6453-ի եւ 2751-ի:*

‡ *Ուղղումը՝ ըստ ՄՄ N 6453-ի: ՄՄ N 2751-ում՝* դռնատեալ*:*

§ *Մատթ. ԻԷ 54*

¶ *ՏԿ, էջ 141–142. ԿՀ, էջ 73*

** *ՏԿ, էջ 142*

†† *Ա Կոր. Ե 7*

Գրիգորի Աստուածաբանի*

XVIII. [1]*Եթէ ոք ոչ երկրպագեսցէ Խաչելոյն, նզովեա՛լ եղիցի եւ կարգեսցի ընդ աստուածասպանսն:*

Նորին Յաղագս առաքինութեան բանի†

XIX. // [1]*Այլ յորժամ տեսցեն զԱւրինադիրն զձեռս կարկառեալ,* 337ա
յայտ է զի խաչեցեալ վասն մեր, ի բաց վճարին ի չարին ընդակցութենէ:

Նորին‡

XX. [1]*Արիւն Աստուծոյ եւ չարչարանս լսելով եւ մահ՝ մի՛ ի վայր անկցիս անմտաբար իբր եւ Աստուծոյ ջատագով, այլ առանց ամաւթոյ եւ յերկուանալոյ կե՛ր զՀացն, ա՛րբ զԱրիւնն, եթէ կենաց փափագիցես:*

Նորին§

XXI. [1]*Կարաւտացաք Աստուծոյ մարմնանալոյ եւ մեռանելոյ:*

Նորին¶

XXII. [1]*Վասն այնորիկ մերով ախտիւս չարչարի Աստուած՝ եղեալ մարդ:*

Նորին**

XXIII. [1]*Ո՛վ Քրիստոս եւ Բան եւ չարչարանք Անչարչարելւոյն:*

---

* *ՏԿ, էջ 25, 142*
† *ՏԿ, էջ 142*
‡ *ՏԿ, էջ 142*
§ *ՏԿ, էջ 142*
¶ *ՏԿ, էջ 142*
** *ՏԿ, էջ 142*

Երանելւոյն Կիւրղի յ՚առ Նեստորիոս թղթոյն*

XXIV. [1]Այլ Աստուածազանն Գիր մարմին ասէ լինել զԱստուծոյ Բանն†, այս է՝ միանալ ի մարմնի անձն ունողի բանական: [2]Եւ հետեւեալ աւետարանական քարոզութեանց սուրբ եւ մեծ ժողովն զնոյն ասացին ի գոյացութենէն Աստուծոյ եւ Հաւր ծնեալ Միածին՝ զայն, յորում ամենայն եւ որով ամենայն‡, վասն մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան վայրաբուսեալ յերկնուստ, մարմնանալ եւ մարդանալ, չարչարել եւ յառնել, եւ զի ի ժամանակի եկեսցէ Դատաւոր, անուանէին զԱստուծոյ Բանն մի Տէր Յիսուս Քրիստոս:

Նորին§

337բ *XXV. [1]Եթէ ոք զմի Տէր // Յիսուս Քրիստոս բաժանեսցէ յերկուս դէմս յետ միանալոյն, եւ զնոյն մերձաւորութիւն յարելութեան ասիցէ իբրեւ պատուով եւ կամ ճոխութեամբ եւ զաւրութեամբ, եւ ոչ միութիւն բնութեամբ, նզովեա՛լ լիցի: [2]Դ. Եթէ ոք յերկուս երեսս եւ կամ յերկուս զաւրութիւնս զաւետարանչացն եւ կամ զառաքելոցն զգրեալսն եւ զբարբառսն բաժանիցէ եւ կամ զՔրիստոսի ասացեալսն սրբովք իւրովք եւ կամ զոր իւր իսկ վասն իւր էր ասացեալ, եւ զոմանս՝ իբրեւ զմարդոյ ուրոյն ի Բանէն Աստուծոյ, իբրեւ յարելութեամբ իմանայցէ եւ զոմանս դարձեալ՝ իբրեւ աստուածաբար միայն Բանին որ յԱստուծոյ Հաւրէ, նզովեա՛լ եղիցի: [3]Եթէ ոք ասիցէ իշխել աստուածազգեաց մարդ զՔրիստոս եւ ոչ յաւէտ Աստուած գոլ ըստ ճշմարտութեան, իբր Որդի մի բնութեամբ, ըստ որում եղեւ մարմին Բանն եւ հաւասարեաց նմանապէս մեզ արեան եւ մարմնոյ, նզովեա՛լ եղիցի: [4]Եթէ ոք ոչ խոստովանի զԲանն Աստուծոյ չարչարեալ մարմնով եւ խաչեալ մարմնով եւ*

---

* *Տկ, էջ 143*

† *Տես Յովհ. Ա 14:*

‡ *Տես Ա Կոր. Ը 6:*

§ *Տկ, էջ 165–167. Կշ, էջ 229–241. Գիրք պարապմանց, էջ 477–490: Սարկաւագը այլ՝ աղաւաղուած, վատ խմբագրուած կամ թարգմանուած բնագրից է օգտւում: Այստեղ բացակայում են որոշ նզովքներ, որոնց ամբողջական լինելու մասին ակնարկութիւն կայ [ԺԲ VIII 14]-ում: Ներկայացուած նզովքներն ունեն հետեւեալ յաջորդականութիւնը՝ Գ, Դ, Ե, ԺԲ:*

զմահ ճաշակեալ մարմնով եւ եղեալ անդրանիկ ի մեռելոց, ըստ որում կենդանութիւնն է եւ կենդանարար՝ իբրեւ զԱստուած, նզովեա՛լ եղիցի:

Նորին*

*XXVI. [1]Զի այսուհետեւ եւ ընդ//դէմ դարձուցանեն զտնաւրինութեանն բանս եւ տարագծեն զճշմարտութիւնն, ամենեցուն ընդդէմ յարուցեալք Աստուածաշունչ Գրոց, որք Աստուած գոլ ճանաչեն եւ ներմարդացեալ զՈրդին, մի զնա անուանեն ամենայն ուրեք, քանզի <յ>աշխարհարարութեանն մատենի գրեաց <Մով>սէս՝ որպէս անցոյց աստուածազանն Յակոբ ընդ հեղեղատն Յոբոկայ զմանկունս իւր, «եւ մնաց միայն, մարտնչէր ընդ նմա մարդ մինչեւ յառաւաւտն»†: [2]«Եւ կոչեաց Յակոբ զանուն տեղի այն տեսիլ Աստուծոյ»...‡ իսկ «Յակոբ կաղայր ի զիստէն իւրմէ»§: [3]Քանզի յառաջագոյն ցուցանէր հայրապետին Աստուած, զի եւ ներմարդասցի ի ժամանակի Բանն Աստուծոյ Միածին եւ հակամարտ կալցի զմեզ: [4]Եւ զի յաղագս նորա ոչ ուղղոտնեսցեն, կաղան շաւղաւք, որպէս Յակոբ կաղայր ի բարձիցն իւրոց: [5]Ըստ որում ասէ ինքն ի ձեռն երգողին քնարաւ. «Որդիք աւտարաց ստեցին ինձ, որդիք աւտարք հնացան եւ կաղացան ի շաւղաց իւրեանց»¶. քանզի զայս կարծեմ զեկուցանել առ ի խ<ոշ>տալն** Յակովբայ բարձիւքն իւրովք: Բայց զայն տես, մարդոյ մարտուցելոյ ընդ նմա՝ տեսանել զԱստուած դէմ յանդիման ասէ, եւ տեսիլ զնա // անուանեաց: [6]Քանզի մնաց Աստուծոյ Բանն եւ մարդ եղեալ ի կերպի Հաւր՝ ըստ իմանալւոյն ասեմ պատկերի եւ ըստ ամենայնի, որ ինչ անտար<ա>փոխաբար ունի, քանզի ասէ առ Փիլիպպոսն կ<ատարել>ութիւն†† էութեանն Հաւր զինքն ցուցանեալ է մարմնով՝ «Տեսողն զիս ետես զՀայր»‡‡:* 338ա 338բ

* *ՏԿ, էջ 134–135*
† *Ծն. ԼԲ 23–24*
‡ *Ծն. ԼԲ 30*
§ *Ծն. ԼԲ 31*
¶ *Սաղմ. ԺԷ 47*
** *Ըստ ՄՄ N 6453-ի եւ 2751-ի*
†† *Ըստ ՄՄ N 6453-ի: Ըստ ՄՄ N 2751-ի՝* նկարագրութիւն:
‡‡ *Յովհ. ԺԴ 9*

Նորին*

XXVII. [1]*Երանելի մարգարէն Եսայիաս, զներմարդացեալն Աստուած մարմնով ախտակրեալ գիտելով, ասէ յաղագս նորին. «Որպէս ոչխար ի զենումն ածաւ, իբրեւ գառն առաջի կտրչի անձայն կայ, այնպէս ոչ բանայ զբերան իւր:* [2]*Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ, եւ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա»*†*:* [3]*Եւ եթէ մարդ ոք էր առանձնաւորապէս իմացեալ Որդի եւ յարակցեալ Աստուծոյ, ըստ որում ասեն անսուրբ աղանդոց գտիչք, ո՞րպէս տակաւին դժուարագիւտ էր, որ զազգաւորութիւն նորա զրուցել կարիցէ, քանզի եղեւ ի սերմանէ Յեսսեայ եւ Դաւթի:* [4]*Իսկ զԱստուծոյ Բանին ծնունդ կամ զծննդեանն յեղանակ ո՞յ ասել կարիցէ, քանզի բառնայ յերկրէ կենդանութիւն նորա, այս է գոյութիւնն, քանզի <եդ փոխանակ գոյութեան զկենդանութիւնն ի բարձունս, ընթանայ եւ բարձրանայ քան զորս յերկրիս, քանզի անիմանալի է>*‡*:*

---

* *ՏԿ, էջ 135–136*

† *Եսայ. ԾԳ 7–8*

‡ *Ըստ ՄՄ N 6453-ի*

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

<Բ>

<IX>.8 *Բն. բանսարկուին + աւարին*
XVII.1 *Բն. գփրկիչն (1)*
<XVIII>.2 *Բն. տասնեկին + ծնո՞*

<Գ>

I.4 *Բն. ոչ + է*
III.4 *սովորութիւն*
V.3 *Բն. ամէն: + Աղաչե՛մ, զասացող բանից զերանելի վարդապետն՝ զՍարգաւագն եւ զհայցողն ի Նմանէ յիշեա՛:*

<Դ>

II.1 *Բն. Դանիէղելին*
II.4 *Բն. յաւրուցեալքն*
II.6 *Բն. մաքսաւորս փխ. զմաքրասէրս*
VI.10 *Բն. զապականութիւն / զանսուրբ / ասացեալն*
VI.11 *դիտաւորութեան*
VII.1 *Բն. յաւդոյ*
VII.2 *ժուժկալութեան*
VII.4 *Բն. դատապարտեմ իբրեւ զգործաւորս փխ. բամբասեմ որպէս զգործաւորս*
VII.6 *Բն. – մի՛ / – ի / զմեղանչականն / – միոյ / յանուանեալն*
VII.9 *Բն. չրջ. եւ ոչ / դիմեաց սպրդեալ / ամբարշտութեանս*
VII.11 *Բն. զսկիզբն*
VII.14 *Բն. տեղ*
VII.18 *Բն. սահմանս որոյ*
VIII.2 *Բն. – եւ (3) / ծիծաղելիոտս / զարբասէրս փխ. զարծաթասէրս*
VIII.3 *Բն. չարախօս փխ. շատախօս / ներքինիք փխ. ներքին*
VIII.4 *Բն. – եւ մաքուր*
VIII.5 *Բն. – եւ (2) / զհրամայեալսն / դու պատեալ / զսիրելիսն / թշնամանաւք*
IX.2 *Բն. – ինչ*
IX.3 *Բն. ոչ եւ չարասէրքն հրեայք / ի բարձրագոյնսն / արհամարհեալք / զհայհոյութիւն / հաւատարմաւ / խռովութիւնն*

IX.4 Բն. զձուկնն / պարուրանաց / պատրաստական է փխ. պատրաստ ես
IX.5 Բն. ոչ ինչ արտաքոյ աւրինացն / – եւ (2) / ոչ էր իշխանութիւն ումեք յիսրայիղի / յերեկոյուոջն / թէ
IX.6 Բն. ազգոյ
IX.7 Բն. – եւեթ / Տէր / – գործելով ինչ / աւրէնքն
IX.8 Բն. զչարախաւսութեան / Յուդա / կարասիցն / առնել փխ. առաւել
IX.9 Բն. Քրիստոս փխ. Յիսուս / – եւ (1)
IX.10 Բն. զատիկս
IX.11 Բն. – իսկ / յանձնոյը փխ. յանձն առնոյը
IX.12 Բն. հրամայեաց Տէր / – իսկ / առնեմ փխ. ուտեմ / տաւնին նուագեցուսցէ
IX.13 Բն. են փխ. էին / ճշմարտութիւն
IX.14 Բն. եւ ի բծոյ մեղաց
X.1 Բն. ամենեքումբք / ամբարշտել / կարկատէնն
X.2 Բն. գառինն / եղուն փխ. եւ դուն / հաղորդեալ / յանդգնիցի / ժանդութեամբ
X.4 Բն. թշնամեաց / ոչ փխ. ոչ եւ
X.9 Բն. յառաջնմէ իսկ
X.10 Բն. – խմորեալ / յիսրայէլէ
X.11 Բն. յառաջնմէ իսկ / յորում փխ. յորոյ / գառնն
X.13 Բն. յերեկոյեայ
X.14 Բն. մի՛ ուտիցիք փխ. մի՛ ուտիցի / – ուտիցէք
X.15 Բն. զլնուլ / զիա՞րդ նա / ՄՄ N 777 զաւրէն ազանց փխ. զաւրինազանց
XI.1 Բն. հասանեն
XI.2 Բն. բնակի
XI.3 Բն. շրջ. Սատակիչ յապականութենէ իսկ վարուց եկին / որոշեալ փխ. անջատեալ / Սրբոյ փխ. շնորհաց
XI.4 Բն. եւ ասէ Եսայի / շրջ. այլ որքան ինչ եւ
XI.5 Բն. ելեալ փխ. երթալ
XI.6 Բն. տկարութեան / կերակրոցն սրբոց / – յԱստուծոյ / կերակուրս + ամենայն / խորհելոյ փխ. խարելոյ / յանսուրբն իբրեւ
XI.7 Բն. – եւ (2) / լինիլ / զսքանչելեաց / մարմնոյ
XI.8 Բն. հրամայէ / գոչել փխ. գոլ / պարտութիւնն / յաղթէ / ինքեան
XI.9 Բն. ընդ նոսա փխ. զնոսա / – մերոյ
XI.10 Բն. շրջ. առ նա բերես / զսքանչելեաց
XI.11 Բն. – ի (2) / առողջութենէդ փխ. առաջարկութենէդ / նենգութիւն փխ. անիրաւութիւն
XI.12 Բն. պայթեցուցանել / մսեաց

XI.13 *Բն. նախամարգարէն / տալ նոցա փխ. լինել սոցա / զկերակուրս եւ զըմպելիս*
XI.16 *Բն. զայսպիսիս*
XI.17 *Բն. առաքեալքն / զեռնով*
XI.19 *Բն. դու փխ. դուն*
XI.20 *Բն. իմաստասիրիմ*
XI.22 *Բն. եթէ իբրեւ փխ. ապա թէ իբրու / – ինձ / քան փխ. որքան*
XI.23 *Բն. Տէրն / զչիւղ*
XI.24 *Բն. եթէ / – քո / ՄՄ N 777 գող եւ փխ. գովէի / Բն. ամբաստանութիւնդ / – կերակրոց*
XI.25 *Բն. զսուրբ / անիրաւութենէ*
XI.26 *Բն. թշնամանողք / զարքայութիւնն*
XI.27 *Բն. զայլոց / յորմէ + եւ*
XI.29 *Բն. ամբարշտութեան*
XI.30 *Բն. զպատասխանի*
XI.31 *Բն. – ինձ / թէ եւ փխ. եթէ / մերձենալ*
XI.32 *Բն. զվեր երեւալ / զհերձուածոյն / շրջ. առաւել խորշել / պարսաւանս առժամայն / զայս փխ. զոյս*
XII.1 *Բն. ազատաբար բառով փխ. ազատ բարբառով / հերձուածոց / ՄՄ N 777 դարժանավարուց փխ. զարժանաւոր վարուց / Բն. մաքրութիւն*
XII.2 *Բն. յայնոսիկ / խորշիլ / եթէ / յերկոքումբք*
XII.4 *Բն. առիթ ի փխ. առթի*
XII.5 *Բն. վարուց / զճշմարտութեան փխ. զճշմարիտ*
XII.6 *Բն. գաւթէ / հասանիլ*
XII.7 *Բն. կարէ կեալ փխ. կարել կալ / այս ոչ + որպէս*
XIII.2 *Բն. պահանջէ*
XIII.3 *Բն. – եւ (2) / անիրաւութենէ փխ. անիրաւութիւն է / հանգանակս / ջանի / դատախազութեան / – եւ մեծամեծս / նորայնոցն / ձեռս*
XIII.5 *Բն. տայցես / – առաջին*
XIII.6 *ՄՄ N 777՝ աճեսցէ*
XIII.7 *Բն. չէր փխ. լեր*
XIII.9 *Բն. շրջ. գթոյ սիրով / – եւ քարոզէ*
XIII.10 *ՄՄ N 777 տնաւրութեանն / Բն. մարմնոյն*
XIII.11 *Բն. մնացեալ փխ. մարմնացեալ*
XIII.12 *Բն. հաւատալով փխ. հետեւելով*
XIII.13 *Բն. ի փխ. ըստ / զմի*
XIII.14 *Բն. անճառելոյն / բիւր անգամ եւ բիւրս / քարոզս*
XIV.1 *Բն. ճախլեա փխ. ճաղեա*

XIV.2 Բն. սկզբնահոգ / աւանդութիւն / վերջնումն / յառաջնումն / որ քում փխ. սրբում / հրէայսն
XIV.3 Բն. – եւ (2)
XIV.4 Բն. հանդանակաւ
XIV.5 Բն. զարարից փխ. վարարից / կամ ձիոց փխ. եւ ձիոց / հաղորդիլ
XIV.6 Բն. շրջ. այպանել գոլ գիտելով / զանգիտելով պատկառեն
XIV.7 Բն. դատարկ / անիմաստք փխ. ունայնք / արհամարհել
XIV.9 Բն. զապականել
XIV.10 Բն. շարադրութեանդ / զի յոյժ փխ. զյոյժ / ընդունելոց / անցանել
XIV.12 Բն. առաքինեացն
XIV.14 Բն. փրկեցաւ փխ. փոքրկացաւ
XIV.15 Բն. բարի փառաց փխ. բարեփառաց
XIV.16 Բն. – ի
XIV.20 Բն. ստեղծեալ դրաւշուած / գործիով
XIV.21 Բն. որպէս թերութեան փխ. առանց թերութեան
XIV.22 Բն. պարանոց / երկաքանչիւրս / նորին + իրի
XIV.24 Բն. – եւ զորս ոչն անդ՝ երկրպագես
XIV.25 Բն. ամբարշտութեան
XIV.26 Բն. – եւ (1)
XIV.27 Բն. պատկեր
XIV.28 Բն. այդպիսի փխ. այդպէս
XIV.29 Բն. յայսոսիկ
XIV.30 Բն. տեղի փխ. անտեղի
XIV.31 Բն. բեւեռելով / շրջ. բեւեռք ի նմա
XIV.33 Բն. եւ դարձեալ եւ / Տեառն
XIV.35 Բն. հաւատացելոյ
XIV.37 Բն. Մի՛ + ամենեւին / բանք / արեան / շրջ. զաշակերտսն ի խորհուրդ / զգոհութիւն
XIV.40 Բն. ձեւ
XIV.42 Բն. թուչնոցդ / յանաւսրաթեւացն / պատենաւորեացն / անուանակոչելոցն
XIV.43 Բն. շրջ. ասիցես զմարդոյն / եռաւք / տարածելոյ / շրջ. իմացեալ եղեւ ձեւն / նոյն փխ. այն / յամենեսին / հնոցն / պաշտիցին
XIV.44 Բն. լոմայից / – եւ ասարաց / ոսկոց / շրջ. ի հրամանէ թագաւորաց բարեպաշտից զկնի Քրիստոսի
XIV.45 Բն. – վասն
XIV.46 Բն. զպատկեր փխ. զպատիւ / նիւթն
XIV.47 Բն. շնորհ
XIV.48 Բն. համբոյր փխ. յամբայր / ընկալաւ
XV.1 Բն. Սինայ / – եւ

XV.2 Բն. քերովբէիւքն փխ. եւ քրովբէիւքն / շրջ. աւծեալ լինէր
XV.5 Բն. լուսնի / առաջնոցն / կամ փխ. եւ կամ
XV.6 Բն. ի կենդանութեան փխ. կարաւտութեան / յանձրեւաց / ապականացուած
XV.7 Բն. առատութիւնն / աստուածային
XV.9 Բն. ըստ / բնութեան / բազում + անգամ
XV.10 Բն. հատելոյ / անջատելոյ / բնական
XV.12 Բն. շրջ. քարի եւ փայտի / յայլոյ / ի խորհրդոյն / աւծելոյ
XV.14 աւրէնսդիր
XV.15 Բն. շրջ. զատելութիւնն եւ զաւտարութիւն
XV.16 Բն. ինքնին / զաւծութիւնն
XV.17 Բն. զանուն
XV.18 Բն. – եւ (2)
XV.19 Բն. ընդունելութիւն
XV.20 Բն. կարճամտութիւնդ / ստորին փխ. սորին
XVI.1 Բն. առաքեալն
XVI.2 Բն. բան փխ. բանիւ
XVI.3 Բն. աւրէնդրութիւնդ / ծերոյ / անկելոյ
XVI.4 Բն. բոլորովիմբ / եղիցիս
XVI.6 Բն. պատկառեա
XVI.7 Բն. էապէս / բարւոյն / անդամանդեայ / հոգի եւ / մեծամեծացն / բարութեանց փխ. բարերարութեանց / զկնի փխ. եւ զկնի
XVI.8 Բն. զամենայնի / կարող փխ. կրաւղ / դու
XVI.9 Բն. եթէ
XVI.10 Բն. մոլորութեանն: Բն.՝ գրուած է եղել մոլորութեան, բայց յետոյ «որ»-ը ջնջուել է:
XVI.13 Բն. զձայնակցութիւնն
XVI.14 Բն. զհարազատաւք
XVI.15 Բն. համբիր
XVI.17 Բն. համարել
XVI.18 Բն. արտաքոյ ելով փխ. արտաքսելով
XVI.21 Բն. Քանզի + եւ / ի խոշտանկանաց
XVI.22 Բն. անընդունակք + գոլով / շրջ. կարծել ծածկեն
XVI.23 Բն. չարաբարիշաք փխ. չար ամպարիշաք / դսրովեն
XVI.24 Բն. զայնպիսիսն / լուաք փխ. լաւք
XVII.2 Բն. յաւիտենական / արժան փխ. արժէ / ոչ թշնամանեցան / կտուտս փխ. կտտանս
XVII.3 Բն. զվարուց / նմանութիւն / գոնէ / իրաց + ըստ
XVII.5 Բն. շրջ. պարսաւասէր շրթունք / սրբոց փխ. բարեաց / ճշմարտասէր փխ. ճշմարտից / անձանց / պատկական աւուրս փխ. պատկանաւորս

XVII.6 *Բն. սուտաւք* փխ. *սուտք / բնաւ*
XVII.7 *Բն. – մի՛ / մարդասիրի*
XVII.8 *Բն. չրջ. զմեզ քրիստոնեայս*
XVII.13 *Բն. չարաց*
XVII.14 *Բն. չրջ. պատիւ եւ պաշտաւն*
XVII.15 *Բն. աւտարացեալս* փխ. *հեռացեալս / բնակս / քաղաքակիցս* փխ. *մերձաւորս*

<Ը>

Վերնագիր *Բն. անբաժանելի: Թ* (ըստ երեւոյթին՝ Թ գլուխ, սակայն ինչու՝ պարզ չէ):

<Թ>

I.2 *Բն. նախահաւակ*
III.9 *Բն. եդից: + Մեղա՛ Տեառն Աստուծոյ:*
IV.1 *Բն. Շըմըշտացի* փխ. *Սամոստացի*
VI.3 *Եկ գոյ* փխ. *զրէ / Եկ իր* փխ. *իրս*
VI.4 *Բն. Ասկոպիդոտեա / Բն՝ Թէագոտոս / Բն՝ տրապիզոտ*
VI.8 *Բն. քանզի որ* փխ. *քան զոր*
VII.1 *Բն. կրէ* փխ. *զրկէ*

<ԺԲ>

VIII.2 *Բն. թողիցն*

<ԺԳ>

I.1 *Բն. արարի ըստ + բան*
VII.2 *Բն. ընդնմանելով* փխ. *ընդ նմա գոլով*, իսկ ՏԿ-ի մօտ՝ *ընդ նմա ելով:* ՆԲՀԼ-ն չունի *ընդնմանելով* բառը: *Ընդ նմա գոլով- ընդ նմա ելով* տարընթերցումը յաճախակի է հանդիպում, իսկ *ընդնմանելով- ընդ նմա ելով* տարընթերցումը՝ մէկ անգամ:
IX.12 *Բն. կրկնապատիկ քահանայութեամբ* փխ. *կրկնապատիկք ահա բնութեամբ* (ուղղուած ըստ ՏԿ-ի)
IX.14 *ՏԿ աղանդելով* փխ. *աւանդելով*
IX.15 *ՏԿ երգակիցս* փխ. *ձայնակիցս / ՏԿ կարութենէն* փխ. *զաւրութենէն / ՏԿ անկարելին* փխ. *տկարն*

XIII.1 *ՏԿ ելով (էջ 202)* փխ. *գոլով*

XIII.2 *ՏԿ զունկնդրութիւն եւ (էջ137)* փխ. *զհնազանդութիւնն* / *ՏԿ զլսաւորութիւն (էջ 202)* փխ. *զհնազանդութիւնն*

XIII.3 *ՏԿ զաւակէն (էջ137)* փխ. *սերմանէն* / *ՏԿ ախտանալին (էջ 137)* փխ. *չարչարելին* / *ՏԿ ախտակրելին (էջ 202)* փխ. *չարչարելին* / *ՏԿ երկուցեալն (էջ 137)* փխ. *զարհուրեալն*/ *ՏԿ սարսափեալն (էջ 202)* փխ. *զարհուրեալն*

XIV.2 *Բն. բնութիւն (1) + ի ներքս ածեն*

<ԺԴ>

I.1 *Բն. աստուածն էր մարմին* փխ. *ներմարմին* (ուղղումը՝ ըստ ՏԿ-ի) / *դե...ելով* փխ. *դեդեւելով*

I.3 *ՏԿ անարարելի (էջ 259)* փխ. *անստացական* / *ՏԿ անառնելի* փխ. *անստացական (էջ 186, նոյնը՝ Սանահնեցի)* / *ՏԿ արարելի (էջ 259)* փխ. *ստացական* / *ՏԿ առնելի (էջ 186, նոյնը՝ Սանահնեցի)* փխ. *ստացական*

I.4 *ՏԿ ծփին (էջ 259)* փխ. *ամբոխին* / *ՏԿ ապացուցեալ (էջ 260)* փխ. *ցուցեալ*

I.7 *Բն. զսա* փխ. *զ'ըստ* / *ՏԿ հագագէ (էջ 260)* փխ. *շնչոյ*

I.11 *ՏԿ Համաձայնութիւն (էջ 260)* փխ. *Հոմաձայնութիւն* (ՆԲՀԼ-ում այս բառը չկայ)

I.15 *Բն.՝ տարատութիւնն* փխ. *բաժանութիւնն (տարատութիւն* բառը չկայ ՆԲՀԼ-ում: Նոյնն է ՏԿ-ի մօտ եւ ՄՄ N 6453 ձեռագրում: ՄՄ N 2751 ձեռագրում այս հատուածը բացակայում է ամբողջութեամբ: Սակայն յաջորդ նախադասութեան մէջ ՏԿ-ի *տարատողաց* բառը Սարկաւագի մօտ ուղղուած է *բաժանողաց:* Հետեւաբար՝ ըստ Սարկաւագի՝ *տարատեմ=բաժանեմ):*

I.24 *Բն. եղանելի* փխ. *եղանել*

II.1 *Բն. որումն* փխ. *ուրումն*

VIII.6 *Բն. ճշմարիտ* փխ. *ճշմարտի*

XIII *Բն. ԱԾ* փխ. *ԺԱ*

XXV.1 *Բն. ճոխութեան եւ զաւրութիւն անել եւ* փխ. *ճոխութեամբ... ոչ*

XXVI.1 *Բն. Յաբովկայ* փխ. *Յոբոկայ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաւանութիւն հաւատոյ 7
Confession of Faith 15
Исповедание веры 20

Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր 25
Մուտք 25
Ա. Սկիզբ (Դ-Ե դդ.) 29
Բ. Ընտրութիւն 33
Գ. Անապականութիւն 43
Դ. Երեւութականութիւն 48

Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը 58
Մուտք 58
Մեր Մկրտութեան արարողութեան ընդհանուր ուրուագծերը 64
Պատրաստութիւն 66
Սկիզբ 72
Հրաժարում 76
Հաւատքի խոստովանութիւն 78
Ջրի օրհնութիւնը 83
Մկրտութիւն 89
Դրոշմ 95
Խաղաղութեան ողջոյն 107
Ձգեստաւորում 109
Սեղանի երկրպագութիւն եւ հաղորդութիւն 110
Արձակում 113
Յաւելուած: Ութ օր յետոյ 116

Ուղղափառ հաւատքի դաւանութիւնը որպէս հոգեւոր կեանքի հիմք 120
Մարդու հոգեւոր փնտրումների մասին 120
Քրիստոնէական ճանապարհի իսկութիւնը 122
Հաւատքի մասին 124
Ուղղափառ դաւանութեան մասին 136
Հայ Եկեղեցու դաւանութեան սկզբնաղբիւրները 139
Հայ Եկեղեցու դաւանութեան կառոյցը 141

Քրիստոսի Պայծառակերպութիւնը եկեղեցական
աստուածաբանութեան մէջ 145

Սուրբ Աթանաս Ալեքսանդրացի 156

Ալեքսանդրիայի եպիսկոպոսապետ սուրբ Աթանասի թուղթը
Որդու մարդեղութեան եւ Սուրբ Երրորդութեան մասին
(թարգմ. Մ. քհն. Արամեան եւ Սահակ սրկ. Ղազարեան) 160

Սբ Եւագր Պոնտացի, Աղօթքի մասին (թարգմանութիւն) 182

Սբ Յովհաննէս Օձնեցի 202

Սբ Յովհաննէս Օձնեցի, Ընդդէմ երեւութականների (թարգմանութիւն) 207

Պօղոս Տարօնացու «Դաւատքի խօսքն ընդդէմ հերձուածողների» 240

Երիցս երանեալ սուրբ վարդապետին Պաւղոսի Տարաւնացւոյ ասացեալ
բան հաւատոյ ընդդէմ հերձուածողաց (քննական բնագիր) 247

Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ
նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովածուն 275

Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի> հաւատոյ
նիկիականն ՅԺԸ-իցն (քննական բնագիր)
<Ա> Յովհաննու քահանայի յաղագս նշանակ<ի>
հաւատոյ նիկիականն ՅԺԸ-իցն 309
<Բ> Նորին Յովհաննու քահանայի ի խնդրոյ Գագկայ
կրաւնաւորի յաղագս քաղկեդոնականացն գլուխ ԺԸ 327
<Գ> Նորին վասն մասանց պատուոյ, յորում եւ վասն
պատկերաց դարձեալ 336
<Դ> Նորին Յովհաննու քահանայի առ որս պիղծ զմիս
վարկանին եւ զանձինս ոչ արգելուն 343
<Ե> Նորին յաղագս, եթէ ոչ է արժան ըստ մասին բաժանել
զաստուածայնոց ձայնս ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի եւ ոչ զ'առ ի յինքենէ գործս կամ կիրս 367
<Զ> Յաղագս, եթէ որք յետ միանալոյն երկուս ասեն բնութիւնս
ի Քրիստոս, ի հարկէ հետեւին նեստորականաց մտաց 378
<Է> Թէ զիմ՞րդ չարչարեալ Բանն մարմին եղեալ եւ անչարչարելի
մնացեալ, եւ կամ որպէ՞ս դարձեալ ձայնակցեն չարափառքն 382
<Ը> Յարացոյցք յաղագս մի զՔրիստոս ասելոյ եւ անբաժանելի 387
<Թ> Նորին հակաբանութիւն հնագիտական ընդդէմ
անգիտակաց ոմանց յիրս գիտութեան, որք ստայաւդ
ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց եւ
պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրեանց կարծեաց 391
<Ժ> Նորին յաղագս բնութեանն Բանի եւ միաւորութեան 400
<ԺԱ> Նորին, եթէ զիմ՞րդ ասի մի բնութիւնն Բանին Աստուծոյ
մարմնացելոյ ըստ ճշմարտութեան 403
<ԺԲ> Նորին յայտարարութիւն զանազան հերձուածոց
յայլ եւ յայլ ժամանակս արանց բղջախոհաց 419
<ԺԳ> Նորին դարձեալ 438
<ԺԴ> Վկայութիւնք սրբոցն, եթէ մի բնութիւն է
Բանին Աստուծոյ մարմնացելոյ 449
Տարընթերցումներ 463

Մեսրոպ քհն. Արամեան

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հատոր Ա

Խմբագիր՝ **Սեդա Ստամբոլցեան**

Տեխնիկական խմբագրումն ու
էջադրումը՝ **Աշոտ Մովսիսեանի**

Շապիկը՝ **Արմէն Քիւրքչեանի**